



ՏԱՐԵՎԱՆ ՁԵԿՈՒՅՑ

2005 թ.

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ
ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2006 թ.

.Անհրաժեշտ է օրենքի իշխանությամբ պաշտպանել մարդու իրավունքները, որպեսզի նա, որպես վերջին միջոց, հարկադրված չընդվզի բռնակալության ու ճնշման դեմ...

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության նպատակով և ի կատարումն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած պարտավորությունների՝ 2003թ. հոկտեմբերի 21-ին ընդունվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը, իսկ 2004թ. մարտի 1-ից հիմնվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 17-ի համաձայն՝ «Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը ՀՀ նախագահին, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններ է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում **իր գործունեության և երկրում մարդու իրավունքների և ազատությունների խախտման մասին զեկույց**, իսկ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի ընթացքում դա ներկայացնում է Ազգային ժողովի նիստում: **Պաշտպանը զեկույցը ներկայացնում է նաև զանգվածային լրատվամիջոցներին և համապատասխան հասարակական կազմակերպություններին**»:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված **գործունեությունը** «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի համաձայն **իր մեջ ներառում է՝** քաղաքացիների դիմում-բողոքների **քննարկումը**, հանրային մարմինների կողմից մարդու իրավունքների և ազատությունների **խախտումների բացահայտումը**, թույլ տրված խախտումը վերացնելու վերաբերյալ համապատասխան հանրային մարմիններին և պաշտոնատար անձանց **առաջարկներ ներկայացնելը**, իր միջնորդությանը չպատասխանած կամ միջնորդության պահանջները չկատարած հանրային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վերաբերյալ հատուկ **տեղեկության հրապարակումը**, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի **հոդված 12-ով սահմանված լիազորությունների իրականացումը**, երկրում մարդու իրավունքների և ազատությունների խախտմանը **գնահատական տալը** և օրենքով նախատեսված **այլ գործողությունների իրականացումը**:

Ձեկույցը նաև երկրում մարդու իրավունքների և ազատությունների վիճակի **գնահատականն է՝ տրված Պաշտպանի կողմից**, ինչպես նաև այդ իրավունքների և ազատությունների խախտումներ ծնող հիմնական **պատճառների վերհանումը**:

Ձեկույցը հիմնված է ստացված գրավոր և բանավոր **դիմում-բողոքների**, մարզեր ու առանձին բնակավայրեր **այցելությունների**, սեփական **նախաձեռնությամբ** և առանձին հասարակական կազմակերպությունների (**ՀԿ**) անցկացրած ուսումնասիրությունների, զանգվածային լրատվության միջոցների (**ՁԼՄ**) հրապարակած նյութերի, մարդու իրավունքներին վերաբերող **միջազգային կազմակերպությունների** և ՄԱԿ-ի համապատասխան կառույցներին երկրի կողմից **ներկայացվող զեկույցների** և դրանց վերաբերյալ համապատասխան անդրադարձների **վերլուծության** վրա:

Պաշտպանի մասին օրենքի հոդված 17-ից ուղղակիորեն հետևում է, որ իր գործունեության և երկրում մարդու իրավունքների և ազատությունների խախտման մասին զեկույցը միասնական մի փաստաթուղթ է, որն ամփոփում է 2005թ. գործող Պաշտպանի գործունեությունը երկրում մարդու խախտված իրավունքների և ազատությունների վերհանման և վերականգնման ուղղությամբ, հետևաբար, այն պետք է ներկայացվի առաջին Պաշտպանի կողմից:

Եվ չնայած ՀՀ նախագահի 04.01.2006թ. թիվ ՀՆ-1-Ա հրամանագրով հունվարի 5-ից առաջին Պաշտպանի լիազորությունները համարվել են դադարած և Պաշտպանի պաշտոնը՝ թափուր, իսկ ՀՀ կառավարության 12.01.2006թ. որոշմամբ կասեցվել է Պաշտպանի աշխատակազմի գործունեությունը, Պաշտպանը դիմել է Ազգային ժողովին առաջարկով՝ ըստ օրենքի պահանջի ներկայացնել 2005թ. Պաշտպանի զեկույցը:

Ի պատասխան՝ Ազգային ժողովը որոշումներ է կայացրել, համաձայն որոնց 2005թ. զեկույցն ընդգրկվում է ԱԺ նստաշրջանի օրակարգի մեջ, իսկ «ՀՀ նախկին Պաշտպանը» հրավիրվում է 2005թ. տարեկան զեկույցի քննարկմանը ոչ թե զեկույցը ներկայացնելու, այլ «ելույթ ունենալու իրավունքով» (համապատասխանաբար՝ թիվ L-728-3 և թիվ L-732-3 որոշումներ):

Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ հանրությունն իրավունք ունի իմանալու, թե Պաշտպանն 2005թ. տարվա ընթացքում ինչպիսի գործունեություն է իրականացրել, ինչպես է նպաստել մարդու իրավունքների և ազատությունների պահպանությանն ու պաշտպանությանը, որքանով է մարդը պաշտպանված հանրային մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կամայականություններից, պաշտոնական դիրքի չարաշահումներից, որքանով է պետական քաղաքականությունը մարդու իրավունքների ոլորտում համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը և միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին, հանրությանն է ներկայացվում 2005թ. ՀՀ Մարդու իրավունքների առաջին պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների և ազատությունների խախտման մասին տարեկան զեկույցը:

2005թ. զեկույցը ՀՀ Մարդու իրավունքների առաջին պաշտպանի յուրահատուկ ուղերձն է հասարակության լայն խավերին, որոնք հավատարիմ են ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության կայացման գաղափարին և անում են հնարավորը, որպեսզի իշխանության հետ երկխոսության և համագործակցության միջոցով քաղաքացիական համաձայնության հասնեն հիմնարար սկզբունքների և նպատակների շուրջ, որոնցից կարևորագույնն է մարդու իրավունքների պահպանությունն ու պաշտպանությունը:

Իսկ այն, որ իշխանությունները ընդունելի են համարել Պաշտպանի հաստատության գործունեության կասեցումն անորոշ ժամանակով, վկայում է միայն, որ իշխանության բարձրագույն մարմինների համար թե՛ մարդու իրավունքները որպես բացարձակ արժեք և թե՛ «մարդու իրավունքների պաշտպան» հասկացությունը դեռևս մնացել են համարժեքորեն չընկալված, և այս խնդրի լուծումը դեռևս օրակարգային է:

Անվիճելի է, որ մարդու իրավունքների խախտում նշանակում է երկրի պատվի ու արժանապատվության ոտնահարում, իսկ մարդու իրավունքների պահպանությունն ու պաշտպանությունը երկրի և ժողովրդի հզորության, անվտանգության և ապագա սերունդների բարգավաճման երաշխիքն են:

Մարդու իրավունքներն այն բացարձակ արժեքն են, առանց որի ցանկացած երկիր, այդ թվում և Հայաստանը, չի կարող կայանալ որպես ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն:

Ավելի քան երբևէ, այսօր արդիական են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի առաջին տողերը՝ «.Մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհի ազատության, արդարության և խաղաղության հիմքն է. »:

Լարիսա Ալավերդյան
ՀՀ Մարդու իրավունքների առաջին պաշտպան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

7

ԳԼՈՒԽ 1. ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ	12
1.1. Պաշտպանի հաստատության մասին	12
1.2. Պաշտպանի հաստատության սահմանադրաիրավական հիմքերը	14
1.3. Պաշտպանի հաստատության կայացման պայմաններն ու խոչընդոտները	15
ԳԼՈՒԽ 2. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	25
2.1. Դիմում-բողոքների և բողոքատուների հետ աշխատանք	26
2.1.1. Դիմում-բողոքների վիճակագրական վերլուծություն	26
2.1.2. Խորհրդատվություն	37
2.1.3. Ընդունելություն	37
2.1.4. Այցելություններ և ուսումնասիրություններ	38
2.1.5. Արագ արձագանքում	39
2.1.6. Ովքեր են դիմում Պաշտպանին	41
2.2. Մարդու իրավունքների վերականգնմանն ուղղված գործունեություն	42
2.2.1. Պաշտպանի հարաբերությունները հանրային մարմինների հետ	42
2.2.2. Դրական արդյունքներով ավարտված գործերի մասին	47
2.3. Օրենսդրության բարելավմանն ուղղված գործունեություն	51
2.4. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի զարգացում	52
2.5. Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն	58
2.6. Միջազգային համագործակցություն	60
2.7. Փորձագետների խորհուրդ	63
ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	65
ԸՍՏ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ	
3.1. Ոստիկանություն	67
3.2. Դատախազություն	73
3.3. Ազգային անվտանգության ծառայություն	82
3.4. Արդարադատության նախարարություն և դրա գերատեսչություններ	84
3.4.1. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն	84
3.4.2. Քրեակատարողական հիմնարկներ	89
3.5. Պաշտպանության նախարարություն	91
3.6. Դատական համակարգ	95
3.7. Պետական գույքի կադաստրի վարչություն	101
3.8. Կրթության և գիտության նախարարություն	103
3.9. Սոցիալական ոլորտի հարցեր և պատկան մարմիններ	106
3.9.1. Կենսաթոշակային հարցեր	107
3.9.2. Նպաստների տրամադրմանն առնչվող հարցեր	109
3.9.3. Աշխատանքային իրավունքներին առնչվող հարցեր	110
3.9.4. Աշխատանքային խեղման դիմաց փոխհատուցման հարցեր	111
3.9.5. Ավանդների վերադարձման հարցեր	111
3.10. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ	114
3.10.1. Աշխատանքային իրավունքների հետ կապված հարցեր	114
3.10.2. Բնակարանային հարցեր	119
3.10.3. Հողահատկացումների և կառուցապատման հարցեր	120
3.11. Կոռուպցիան որպես մարդու իրավունքների կոպիտ խախտում	128
ԳԼՈՒԽ 4. ԽՈՑԵԼԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԽՄԲԵՐ	133
4.1. Փախստականներ	133

4.2. Հատուկ կարիքներով անձինք	137
4.3. Բռնադատվածներ	141
4.4. Չեռնորիլյան աղետից տուժած անձինք	144
4.5. Երեխաներ	144
4.6. Ազգային փոքրամասնություններ	146
ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	150
5.1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ	152
5.1.1. Կյանքի իրավունք	152
5.1.2. Խոշտանգումների արգելում	157
5.1.3. Անճնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիություն	161
5.1.4. Հավասար պաշտպանության իրավունք և խտրականության արգելում	164
5.1.5. Արդար դատաքննության իրավունք	167
5.1.6. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք	171
5.1.7. Մտքի, խղճի և կրոնի ազատություն	175
5.1.8. Խոսքի և տեղեկատվության ազատություն	178
5.1.9. Հավաքների և միավորումների ազատություն	182
5.1.10. Պետական կառավարմանը մասնակցելու իրավունք	186
5.2. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ	190
5.2.1. Սոցիալական իրավունքների ապահովման և պաշտպանության ոլորտում Հայաստանի ստանձնած պարտավորությունները	191
5.2.2. Մեփականության իրավունք	198
5.2.3. Մշակութային իրավունքներ	200
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	203
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	210
Հավելված 1. Պաշտպանի դիմումը Սահմանադրական դատարան Սահմանադրությանը Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերին վերաբերող ՀՀ կառավարության որոշումների համապատասխանության առնչությամբ	210
Հավելված 2. Պաշտպանի հայտարարությունները	214
Հավելված 2.1. Պաշտպանի հայտարարությունը լրագրողների իրավունքների խախտումների մասին	214
Հավելված 2.2. Պաշտպանի հայտարարությունը կամերային երաժշտության տան հարակից տարածքի օգտագործման մասին	214
Հավելված 2.3. Պաշտպանի հայտարարությունը հեռախոսային կապի սակագները բարձրացնելու անթույլատրելիության մասին	214
Հավելված 2.4. Պաշտպանի հայտարարությունը երթևեկության վարձավճարը բարձրացնելու անթույլատրելիության մասին	215
Հավելված 2.5. Պաշտպանի հայտարարությունը հեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների սահմանադրական փոփոխություններով նախատեսված ձևավորման կարգի վերաբերյալ	216
Հավելված 3. Պաշտպանի որոշումները մարդու խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ առաջարկ ներկայացնելու մասին	217
Հավելված 4. Պաշտպանի նամակները	219
Հավելված 4.1. Պաշտպանի նամակը ՀՀ նախագահին Երևանի կառուցապատման ծրագրերի առնչությամբ	219

Հավելված 4.2. Պաշտպանի նամակը ՀՀ նախագահին սոցիալական քարտերի շուրջ ծավալված դժգոհությունների առնչությամբ	221
Հավելված 4.3. Պաշտպանի նամակը ՀՀ նախագահին ցմահ դատապարտված անձանց խնդիրների առնչությամբ	224
Հավելված 4.4. Պաշտպանի նամակը ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարին մի շարք հրատապ, հասարակական հնչեղություն ստացած խնդիրների առնչությամբ	224
Հավելված 4.5. Պաշտպանի նամակն ուղղված ՀՀ վարչապետին և ԱԺ նախագահին մինչև հաջորդ Պաշտպանի ընտրությունը գործող Պաշտպանի լիազորությունների շարունակելիության առնչությամբ	226
Հավելված 4.6. Պաշտպանի նամակն ուղղված ՀՀ գլխավոր դատախազին 2004թ. զեկույցի դիտողություններին ի պատասխան	227
Հավելված 4.7. Պաշտպանի նամակն ուղղված ՀՀ արդարադատության նախարարին 2004թ. զեկույցի դիտողություններին ի պատասխան	231
Հավելված 4.8. Պաշտպանի նամակն ուղղված ՀՀ ոստիկանության պետին	237
Հավելված 4.9. Պաշտպանի նամակն ուղղված ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալին սահմանադրության փոփոխությունների նախագծի առնչությամբ	239
Հավելված 5. Կարծիք թիվ 221(2000), Հայաստանի դիմումը Եվրոպայի խորհրդին անդամակցության համար	244
Հավելված 6. Լյուբլյանայի եզրակացությունները	248
Հավելված 7. «Հանուն հանդուրժողականության և ընդդեմ խտրականության ու քսենոֆոբիայի՝ միջազգային ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում (Կովկասյան տարածաշրջան)» բանաձև	250
Հավելված 8. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարգավիճակի տեսանկյունից «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագծի մասին ակնարկ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, 15.02.2005թ.	252
Հավելված 9. ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 20.12.1993թ. 48/134 բանաձևով ընդունված «Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ազգային հաստատությունների կարգավիճակին և գործունեությանը վերաբերող սկզբունքներ»	258
Հավելված 10. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Բանաձև (2004) 6 հանձնարարական-առաջարկությունը անդամ պետություններին «Իրավական պաշտպանության ներպետական միջոցների բարելավման մասին»	263
Հավելված 11. 2005թ. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց	270

2005թ. տարեկան զեկույցը 2004թ. զեկույցի համեմատությամբ ունի որոշակի առանձնահատկություններ՝ ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային առումներով:

1. Կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ եթե 2004թ. զեկույցում մարդու իրավունքների խախտումները վերլուծվել են **ըստ Սահմանադրությամբ** ամրագրված իրավունքների, ապա 2005թ. զեկույցում դրանք ներկայացվել են **ըստ հանրային մարմինների՝** ելնելով այդ մարմինների դեմ ներկայացված բողոքների բնույթից և բողոքների քննարկման արդյունքներից: Այնուհետև, մարդու իրավունքների խախտումներին անդրադարձ է կատարվել **ըստ մարդու իրավունքներն ու ազատությունները ամրագրող հիմնական միջազգային դաշնագրերի:**

2. Փորձելով վեր հանել մարդու իրավունքների խախտման խորքային **պատճառները**, ավելի շատ անդրադարձ է կատարվել բնագավառը կարգավորող **օրենքներում և այլ իրավական ակտերում** տեղ գտած բացթողումներին, հակասություններին, մարդու իրավունքների առումով անընդունելի ձևակերպումներին:

3. Չեկույցում նշված **դրական օրինակները** կապված են **հիմնականում իշխանության միջին օղակների, որոշ դեպքերում բարձրաստիճան պաշտոնյաների՝ Պաշտպանի հետ համագործակցելու** պատշաճ դրսևորումների հետ և դրա արդյունքն են հանդիսանում:

4. Չեկույցում հիշատակված են գործունեության այն ոլորտները, որոնք բերել են Պաշտպանի հաստատության **ճանաչմանը միջազգային համապատասխան կառույցների կողմից**, ինչը հաստատվել է նաև 2005թ. վերջում **ԵԱՀԿ հայաստանյան ներկայացուցչի արած հայտարարությամբ:**

4.1. 2005թ. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը **հայտ է ներկայացրել Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ազգային հաստատությունների ՄԱԿ-ի Միջազգային կոորդինացիոն կոմիտեին** անդամակցելու համար: Փաստաթղթերը կոմիտեի կողմից ընդունվել են, և **Պաշտպանի հաստատության անդամակցության հարցը** հավատարմագրման ենթակոմիտեի կողմից պետք է **քննարկվի 2006թ. ապրիլին:**

4.2. **Դրական արձագանք է ունեցել** «Հանուն հանդուրժողականության և ընդդեմ խտրականության և քսենոֆոբիայի՝ միջազգային ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում» թեմայով **միջազգային կոնֆերանսը**, որը կազմակերպվել և անցկացվել է **Երևանում 2005թ. մայիսին UNESCO-ի և ՀՀ կառավարության հովանավորությամբ:**

4.3. ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի կողմից **մշակված ձեռնարկը** պարունակում է Օմբուդսմաններին ուղղված հանձնարարականներ խտրականության հարցերին վերաբերող բողոքների հետ աշխատելու վերաբերյալ: **Ձեռնարկում բերված 12 օրինակներից 9-ը վերցվել են ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2004թ. տարեկան զեկույցից՝** որպես խտրականության դեպքերը բացահայտելու և նման բողոքների հետ աշխատելու մեթոդների ընտրության **դրական օրինակներ:**

5. Անդրադարձ է կատարվել նաև **Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կայացմանը խոչընդոտելու իշխանությունների գործողություններին և օրենսդրական նախաձեռնություններին**, որոնք վտանգում էին Պաշտպանի անկախության երաշխիքները:

5.1. Դեռ 2004թ. վերջից սկսվել էին Պաշտպանի աշխատակազմը քաղաքացիական ծառայության համակարգ ներառելու և դրանով Պաշտպանի անկախությունը սահմանափակելու գործընթացները:

5.2. 2004թ. տարեկան զեկույցի վերաբերյալ իշխանությունների որոշ ներկայացուցիչների ոչ համարժեք, նրանց կողմից Սահմանադրության և օրենքների կամայական մեկնաբանության արդյունք հանդիսացող, երբեմն էլ էթիկայի նորմերին չհամապատասխանող արձագանքները, դրանց հետևած ակնհայտորեն պատվիրված և երկրի համար ոչ պատվաբեր հեռուստատեսային արշավը (առաջին հերթին հանրային հեռուստատեսությամբ), ինչպես նաև դրանց զուգորդող ոչ օրինաչափ ուրիշ միջամտությունները, մասնավորապես, Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից, ուղղված էին ընդդեմ Պաշտպանի՝ օրենքով սահմանված անկախության երաշխիքների, և պատկան մարմինների կողմից այդպես էլ համարժեք գնահատականի չեն արժանացել:

5.3. **Ազգային ժողովի անհամաձայնության պայմաններում և առանց աշխատանքային քննարկումների՝ արդարադատության նախարարի նախաձեռնությամբ և վճռաբեկ դատարանի նախկին նախագահի միջոցով ՀՀ նախագահի դիմումով Սահմանադրական դատարանը որոշում է կայացրել** «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի հոդված 7-ի վերաբերյալ, որով Պաշտպանը զրկվել է յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքի և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի ապահովմանն ուղղված գործողություններ իրականացնելու հնարավորությունից, այն դեպքում, երբ միջազգային պրակտիկան ընթանում է օմբուդսման-դատական իշխանություն համագործակցության ընդունելի ձևերի ներդրման և զարգացման ճանապարհով, ինչը ծայրահեղ անհրաժեշտ է համարվում հետխորհրդային պետությունների, այդ թվում և Հայաստանի համար, ուր մարդու իրավունքներն ու ազատությունները դատական գործընթացներում այնքան հաճախ են խախտվում, որ դա հանգեցրել է դատական համակարգի նկատմամբ հասարակության չափազանց մեծ անվստահությանը (ըստ Պաշտպանին ուղղված գրավոր և բանավոր դիմումների և այլ կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքների):

5.4. ՀՀ կառավարության նիստերից մեկում Պաշտպանին **ելույթ ունենալու լիազորությունից զրկել են** այն դեպքում, երբ Պաշտպանի մասին օրենքի հոդված 7-ի մաս 3-ում միանշանակ ասվում է, որ Պաշտպանը իրավունք ունի ներկա լինել ՀՀ կառավարության նիստերին և **ելույթ ունենալ**, եթե քննարկվում են մարդու իրավունքներին վերաբերող հարցեր: Այդ առումով բնութագրական է, որ կառավարության նիստում, այն էլ ՀՀ նախագահի կողմից **Պաշտպանը զրկվել է օրենքով նախատեսված ելույթ ունենալու իրավունքից**, նույնիսկ այն դեպքում, երբ քննարկվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ի մաս 1-ով փոփոխություն կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծը:

5.5. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների ընդունումից հետո չեն ձեռնարկվել անհրաժեշտ քայլեր, որոնք կկանխեին **Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեության կասեցումը**, այսինքն՝ պատկան մարմինների անգործության արդյունքում ոտնահարվել է Պաշտպանին դիմելու մարդկանց իրավունքը (ՀՀ Սահմանադրություն, հոդված 18):

Այս ամենը վկայում է ոչ միայն **Պաշտպանի հաստատության դերի ու նշանակության, երկրի միջազգային հեղինակության անտեսման**, այլև իրավաբանական և իրավակիրառական պրակտիկայի այնպիսի դրսևորումների մասին, որոնք **կասկածի տակ են դնում իրավական պետության կայացման գործընթացի արդյունավետությունը**:

6. Սույն տարեկան զեկույցում փորձ է արվում վեր հանել **մարդու իրավունքների զանգվածային, համակարգային բնույթ ունեցող**, ինչպես նաև հնչեղություն չստացած, խորքային պատճառներ ունեցող խախտումները: Չեկույցում տրված գնահատականներն ու հետևությունները հիմնավորվել են գործերի առավել բնորոշ օրինակներով:

- Բանակում սպանություն կատարելու մեջ մեղադրվող **Ռազմիկ Մարգարյանի** գործը, որը երկարատև հացադուլի մեջ էր՝ որպես բողոքի նշան ընդդեմ անարդարացի մեղադրանքի և ոչ արդարացի ու կանխակալ դատաքնության (**տե՛ս՝ Գլուխ 3, 3.2. Դատախազություն, Օրինակ 14**):

- «**Ռայթ իրավաբանական ծառայություն**» ՍՊԸ տնօրեն **Վահե Գրիգորյանի** դեմ հարուցված քրեական գործը, ինչը հետևել է ԱԱ ծառայության աշխատակիցների ոչ օրինաչափ գործողություններին, մասնավորապես՝ **որպես Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակիցներ ներկայանալը**, կոպիտ վերաբերմունքը և օրենքով սահմանված կարգի խախտմամբ Վ. Գրիգորյանին ԱԱ ծառայություն բերման փորձ կատարելը (**տե՛ս՝ Գլուխ 3, 3.2. Դատախազություն, Օրինակ 15.1. և 3.3. Ազգային անվտանգության ծառայություն, Օրինակ 15.2.**):

- **Սոցիալապես անապահով խավերի ներկայացուցիչների** տարաբնույթ իրավունքների խախտումների վերաբերյալ գործերը (**տե՛ս՝ Գլուխ 3, 3.9. Սոցիալական ոլորտի հարցեր և պատկան մարմիններ**):

- **Արցախյան ազատամարտում զոհված կամ հաշմանդամ դարձած 28 անձանց ընտանիքներին** վարձակալության իրավունքով տրամադրված հողատարածքների վերաբերյալ գործը, որը բնութագրվում է օրենքով սահմանված կարգի խախտումով և ճիշտ այն սխեմաներով աճուրդով, որոնց կիրառման փաստը հաստատել է ՀՀ նախագահը՝ դրանց օգտագործման համար հրապարակայնորեն կշտամբելով Երևանի քաղաքապետին տարեկան հաշվետվությունը քննարկելու ժամանակ (**տե՛ս՝ Գլուխ 3, 3.10. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, 3.10.3. կետ, Օրինակ 81**):

- **Հրազդան գետի վարարման հետևանքով** Հրազդան փողոցի թիվ 29/1, 29/2, 29/3 տնատիրություններին պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հարցը, որով զբաղվել են Երևանի քաղաքապետը, տարածքային կառավարման նախարարը և կառավարության ներկայացուցիչները, այդպես էլ լուծում չտալով այդ հասցեներով բնակվող ընտանիքների խնդրին (**տե՛ս՝ Գլուխ 3, 3.10. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, 3.10.3. կետ, Օրինակ 82**):

- **Երևան քաղաքի կառուցապատման ծրագրերի** հետ կապված քաղաքացիների սեփականության հարկադիր օտարման վերաբերյալ բողոքներով գործերը (**տե՛ս՝ Հավելված 11՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2005թ. արտահերթ հրապարակային զեկույց, 2. Իրավունքի խախտումների վերաբերյալ բողոքներ**):

- **Խոցելի և հատուկ խմբերի ներկայացուցիչների** նկատմամբ խտրականության դրսևորումների վերաբերյալ գործերը (**տե՛ս՝ Գլուխ 4**):

- **Արդար դատավարության իրավունքի խախտման մասին** վկայող դեպքերը (**տե՛ս՝ Գլուխ 3, 3.6. Դատական համակարգ, Օրինակներ 38-41 և Հավելված 11՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2005թ. արտահերթ հրապարակային զեկույց, 7. Դատական պաշտպանության և արդար դատաքնության իրավունքի խախտումների օրինակներ**):

- **Խոսքի և տեղեկատվության ազատությանը** սահմանափակումների և լրագրողների իրավունքների խախտումների օրինակները (**տե՛ս՝ Գլուխ 5, 5.1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ, 5.1.7. կետ**):

7. Վերլուծելով մարդու իրավունքների և ազատությունների խախտման դեպքերը, ինչպես նաև օրենսդրության և իրավակիրառական պրակտիկայի համապատասխանությունը միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և

նորմերին, վեր են հանվել մարդու իրավունքների խախտման **հետևյալ հիմնական պատճառները:**

- Կառավարման համակարգում **վարչահրամայական մեթոդների կիրառումը** սահմանափակում է կարևորագույն իրավունքներից մեկը, այն է՝ **մասնակցել պետական գործերը վարելուն՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով:**

- Չնայած սահմանադրական որոշ բարեփոխումներին, դատական համակարգի կախվածությունը գործադիր իշխանությունից փաստորեն մնացել է անփոփոխ, քանի որ **դատավորների նշանակման և դատավորների լիազորությունների դադարեցման մասին վերջնական որոշում կայացնողը ՀՀ նախագահն է:** Դրա հետ միասին, արդեն իսկ ձևավորված պրակտիկան և դատական իշխանություն-գործադիր իշխանություն հարաբերությունները կասկածի տակ են դնում դատական համակարգում բարեփոխումների արդունավետությունը:

- Բազմաթիվ օրինակներ վկայում են, որ հանրային մարմինների անբարեխիղճ ներկայացուցիչների կողմից **վատ վարչարարության սխատեմատիկ բնույթ կրող** դրսևորումները, վերադաս մարմինների կողմից այդպիսի գործողությունների նկատմամբ հանդուրժողականությունը **հանգեցնում են մարդու իրավունքների նույնատիպ շարունակական խախտումների** և տանում են այդ երևույթի խորացմանը:

- Օրենքների և այլ իրավական ակտերի **անկատարությունը և մարդու իրավունքներին դրանց համապատասխանության փորձագիտության բացակայությունը** բերում են հասարակության այս կամ այն չափորոշիչներով միավորված խմբերի իրավունքների ոտնահարումներին:

- **Կոռուպցիան գնալով ավելի ու ավելի մեծ գործոն է դառնում անհատ-պետություն հարաբերություններում,** հանգեցնելով հասարակության մեջ օրենքի և իրավունքի հանդեպ մերժողական վերաբերմունքի ամրապնդման:

- Մարդու իրավունքների բազմապիսի խախտումներ թույլ տվող **պետական մարմինների ներկայացուցիչների հանդեպ չի կիրառվում համարժեք պատժելիության սկզբունքը,** հաճախ էլ այդ խախտումները քողարկվում են վերադասի հովանավորչությամբ:

- **Հանրային ծառայողների ցածր իրավագիտակցությունը,** մարդու իրավունքների ոլորտի և պետության կողմից այդ ոլորտը կարգավորող օրենքների ու հանրաճանաչ միջազգային նորմերի **չիմացությունը,** իսկ երբեմն էլ դրանց նկատմամբ **արհամարհանքը** համակարգային բնույթ են կրում և ուղղակի խոչընդոտում են թե՛ քաղաքացիական և քաղաքական, թե՛ սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանությանը:

- Մարդու իրավունքներին վերաբերող **միջազգային կոնվենցիաներով** Հայաստանի ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը, այն է՝ **օրենսդրության և, հատկապես, իրավակիրառական պրակտիկայի չներդաշնակեցումը** վերոհիշյալ փաստաթղթերով ամրագրված սկզբունքներին, և միջազգային հանրաճանաչ նորմերի ոչ բավարար տարածումը վկայում են այն մասին, որ մարդու իրավունքների խախտումները հաճախ պարտավորությունների չիմացության և դրանց կատարման նկատմամբ պետական վերահսկողության բացակայության հետևանք են:

8. Չեկույցում ասվածն առավել ակնառու դարձնելու նպատակով **որպես հավելվածներ** ներկայացվել են հանրային մարմիններին ուղարկված նամակների, միջնորդությունների, մարդու իրավունքների խախտումների մասին որոշումների օրինակներ, մասնավորապես՝ Սահմանադրական դատարան և Արաբկիրի առաջին

ատյանի դատարան ուղարկված դիմումները, ինչպես նաև 2004թ. գեկույցի վերաբերյալ արդարադատության նախարարի և գլխավոր դատախազի **նամակ-քննադատությունների պատասխանները**:

Նկատի ունենալով, որ 2004թ. գեկույցում անդրադարձ է եղել **Երևանի կառուցապատման ծրագրերով** քաղաքացիների գույքի հարկադիր օտարման ընթացքում թույլ տրվող իրավունքի խախտումներին, որ այդ խնդիրը վերջնականապես չի լուծված և մնում է օրակարգում, որ դրան առավել մանրամասն անդրադարձ կատարվել է 2005թ. արտահերթ հրապարակային գեկույցում, սույն գեկույցում կրկին այս հարցին մանրամասն չանդրադառնալու նպատակով որպես հավելված ներկայացվել է **ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2005թ. արտահերթ հրապարակային գեկույցը**:

9. 2004-2005թթ. Պաշտպանի հաստատության գործունեությունը ցույց է տվել, որ ինչպես հանրային մարմնի մի շարք ներկայացուցիչներ, այնպես էլ լայն հասարակությունը, առավել ևս քաղաքացիական հասարակության կազմակերպված խմբերը՝ ՁԼՄ-ներ, ՀԿ-ներ և այլն, ունեն անհրաժեշտ նախադրյալներ և ձգտում կառուցել իրավական պետության, և այստեղ գլխավոր խոչընդոտ է հանդիսանում իրական ժողովրդավարական մեթոդների նմանակեղծումը:

Չեկույցը գալիս է վկայելու, որ չնայած իր կայացման ճանապարհին հիմնականում կամայականության արդյունք հանդիսացող խոչընդոտներին, մարդու իրավունքների ազգային հաստատությունը, համագործակցելով հանրային մարմինների ներկայացուցիչների հետ և կիրառելով ազդեցության տարբեր միջոցներ, նպաստել է մարդու խախտված իրավունքների վերականգնմանը, իրավունքների խախտման կանխարգելմանը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության և մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատության մասին իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ու հաստատության զարգացմանը:

Ժողովրդավարական մեխանիզմների և անհրաժեշտ ինստիտուտների թուլության կամ բացակայության և կառավարման վարչահրամայական մեթոդների կիրառման պայմաններում Պաշտպանի հաստատությունը անշուշտ խոցելի է: Այնուամենայնիվ, կարելի է արձանագրել, որ հենվելով քաղաքացիական հասարակության, միջազգային կառույցների, ինչպես նաև հանրային մարմինների բարեխիղճ ներկայացուցիչների ակտիվ աջակցության վրա, Պաշտպանի հաստատությունը դրսևորել է իրեն որպես իրավական պետության կայացման կարևորագույն գործոն:

ԳԼՈՒԽ 1. Պաշտպանի հաստատության կայացման գործընթացը

1.1. Պաշտպանի հաստատության մասին

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը, որպես մարդու իրավունքների ազգային հաստատություն, ունի իր նախապատմությունը:

Մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում բուռն զարգացում է ապրել սկսած 1988 թվականից, շնորհիվ նորաստեղծ իրավապաշտպան հասարակական

կազմակերպությունների և դեռևս խորհրդային ժամանակներում իրենց գործունեությունը ծավալած առանձին անհատների և խմբերի:

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը նպատակ հռչակեց իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետության, քաղաքացիական հասարակության կայացումը: Այս սահմանադրական նպատակների իրականացմանն ուղղված իրավական, սոցիալ-տնտեսական, պետական կառավարման բարեփոխումների իրականացման փուլում էլ ավելի էր կարևորվում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխիքների ամրապնդման անհրաժեշտությունը:

1990-1995թթ. ՀՀ Գերագույն խորհրդում գործում էր Մարդու իրավունքների մշտական հանձնաժողով: Հենց այդ տարիներին էր, որ մեր հանրապետությունը վավերացրեց մարդու իրավունքներին վերաբերող մի շարք կարևոր միջազգային փաստաթղթեր:

Դրանից հետո Ազգային ժողովում կամ որևէ այլ պետական մարմնում նման հանձնաժողովի բացակայության պայմաններում, մի շարք հասարակական կազմակերպությունների գործունեությամբ առավել հստակեցվեցին մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության հիմնական ուղղությունները: Արժեքավոր էր նաև համագործակցությունը մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կազմակերպությունների և այլ երկրներում վաղուց ստեղծված փորձառու կառույցների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում նշանակալից երևույթ էր 1998թ. ապրիլի 27-ին ՀՀ նախագահին առընթեր Մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովի ստեղծումը (նախագահ՝ Պ. Հայրիկյան): Հանձնաժողովը հանդիսանում էր խորհրդակցական մարմին, որի հիմնական խնդիրներն էին մարդու իրավունքների և ազատությունների աջակցությունն ու պաշտպանությունը, մարդու իրավունքներին առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը, մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների առնչությամբ ՀՀ նախագահին ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերլուծությունը, մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների առնչությամբ ՀՀ նախագահի ստորագրմանը ներկայացված օրենքների և վավերացմանը ներկայացված կառավարության որոշումների մասին եզրակացություն տալը, մարդու իրավունքների խախտման վերաբերյալ ՀՀ նախագահին կամ հանձնաժողով ներկայացված զանգատների քննարկումը, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցերով անհրաժեշտ քարոզչության իրականացումը, Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ու վիճակի վերաբերյալ ամենամյա զեկույցի պատրաստումը և այլն:

Չնայած մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների կողմից ստեղծված հանձնաժողովների ծավալուն գործունեությանը, հասարակության մեջ հասունացել էր մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատության ստեղծման անհրաժեշտությունը:

Դա բացատրվում է նրանով, որ Պաշտպանի հաստատությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ հանրային մարմիններ) և դրանց պաշտոնատար անձանց ոսնձգություններից մարդու իրավունքների և ազատությունների (այսուհետ՝ մարդու իրավունքներ) պաշտպանության արտադատական արդյունավետ միջոց է հանդիսանում:

Այն օժտված է այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են անկախությունը, իրավունքների և ազատությունների պաշտպանության կարիք ունեցող քաղաքացիների համար մատչելիությունը, բողոքների քննարկման ձևական ընթացակարգերի, ծախսերի բացակայությունը, և իր գործունեությամբ լրացնում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության այլ կառուցակարգերը: Պետական մարմինների

համակարգում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը զբաղեցնում է հատուկ տեղ և իշխանության թևերից որևէ մեկի մարմին չի հանդիսանում:

Այս հաստատության անհրաժեշտությունը մեր հասարակությունում պայմանավորված է նաև վերադասության կարգով բողոքարկման մեխանիզմների անարդյունավետությամբ, ինչը հանգում է պետական համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց անկախության և անաչառության բացակայությանը, քաղաքական նեղ գերատեսչական նկատառումների կիրառմանը:

Դատարանների նկատմամբ ձևավորված անվստահությունը, որը պայմանավորված է գործադիր իշխանության մարմիններից դատավորների փաստացի կախվածությամբ, դատական ընթացակարգերի ժամանակատարությամբ և ծախսատարությամբ, հատկապես հաշվի առնելով, որ հանրապետության բնակչության գրեթե կեսը գտնվում է աղքատության շեմից ցած, հաճախ դատարանը վերածում է պաշտպանության անարդյունավետ միջոցի:

Թեև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը հանդիսանում է ՀՀ բոլոր պետական մարմինների սահմանադրական պարտականությունը, այնուամենայնիվ մարդու իրավունքների պաշտպանության հատուկ մեխանիզմների ստեղծման անհրաժեշտությունը մեր հասարակությունում 90-ական թվականների վերջերին արդեն օրակարգային խնդիր էր դարձել:

Դա էր պատճառը, որ 1998թ. ՀՀ նախագահին առընթեր Մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովում նախաձեռնություն ցուցաբերվեց Օմբուդսմանի հաստատության վերաբերյալ արտասահմանյան փորձը ուսումնասիրելու վերաբերյալ: Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքն ուղարկվեց ՀՀ կառավարություն և կառավարությունը հանդես եկավ համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ: Օրենքի նախագիծը ներառվեց ԱԺ նստաշրջանի օրակարգի մեջ, սակայն օրինագծի քննարկման աշխատանքները հետաձգվեցին:

2001թ. հարցի հնչեղությունն արդիականացավ Եվրոպայի խորհրդին Հայաստանի անդամակցությամբ: Սկսվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի՝ իրար հաջորդող տարբեր նախագծերի մշակման և քննարկումների երկարատև գործընթացը, զուգահեռ քննարկվում էին նաև սահմանադրական փոփոխությունները, որոնց կարևոր տարրերից մեկը Սահմանադրությամբ Պաշտպանի հաստատության ամրագրումն էր: Ենթադրվում էր, որ համապատասխան օրենքը կընդունվի սահմանադրական փոփոխությունների ընդունումից հետո, այնուամենայնիվ, 2003թ. մայիսի 25-ի սահմանադրական հանրաքվեի ձախողումից հետո Եվրոպայի խորհրդի դրդմամբ Պաշտպանի մասին օրենքի ընդունման գործընթացը արագացվեց:

«Մարդու իրավունքների մասին» ՀՀ օրենքը ընդունվեց 2003թ. հոկտեմբերի 21-ին և ուժի մեջ մտավ 2004թ. հունվարի 1-ին: Օրենքի անցումային դրույթներով սահմանված կարգով (հոդված 27)՝ ԱԺ խմբերի և խմբակցությունների հետ խորհրդակցելով, ՀՀ նախագահի 2004թ. փետրվարի 19-ի թիվ 23-Ա հրամանագրով նշանակվեց ՀՀ Մարդու իրավունքների առաջին պաշտպանը, որից հետո Մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովը դադարեցրեց իր գործունեությունը: 2004թ. մարտի 1-ից սկսվեց Պաշտպանի հաստատության գործունեությունը:

1.2. Պաշտպանի հաստատության սահմանադրաիրավական հիմքերը

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնարար սկզբունքների սահմանադրական ամրագրումը հանդիսանում է դրա իրավական կարգավորման կայունության կարևորագույն երաշխիքը: Կարգավորման կայունությունը իր հերթին երաշխավորում է գործունեության անկախությունն ու արդյունավետությունը:

Դեռևս 1995թ. ընդունվելիք ՀՀ առաջին Սահմանադրության շուրջ ծավալված քննարկումների ժամանակ հասարակական իրավապաշտպան կազմակերպությունները բազմիցս բարձրացնում էին օմբուդսմանի հաստատության սահմանադրորեն ամրագրելու հարցը: Սակայն այդ առաջարկությունը չընդունվեց Սահմանադրական հանձնաժողովի կողմից:

2001թ. ՀՀ նախագահի կողմից ներկայացված Սահմանադրության փոփոխությունների նախագծում Մարդու իրավունքների պաշտպանին նշանակելու լիազորությունը վերապահված էր Ազգային ժողովին: Սահմանված էր նաև Պաշտպանի պաշտոնավարման հինգ տարվա ժամկետ, իսկ Պաշտպանի լիազորությունների դադարեցման հիմքերի սահմանումը նախագծով թողնված էր օրենքի կարգավորմանը:

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի ընդունումը 2003թ. մայիսի 25-ին կայացած հանրաքվեի ժամանակ ձախողվեց, որի հետևանքով սահմանադրական ամրագրում չստացավ նաև Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը:

Սահմանադրական հստակ կարգավորման բացակայությունը հնարավորություն է տալիս ընթացիկ օրենքներով, քաղաքական, խմբակային շահերից ելնելով փոփոխել Պաշտպանի հաստատության կազմակերպման և գործունեության օրենսդրական հիմքերը, ինչը կարող է անթույլատրելի խոչընդոտ հանդիսանալ Պաշտպանի ինքնուրույն և անկախ գործունեության իրականացման ընթացքում:

Պաշտպանի հաստատության սահմանադրական կարգավորման բացակայությունը այս հաստատության ստեղծման գործընթացում առաջ բերեց նաև մի շարք դժվարություններ և հակասություններ: Դրանք առաջին հերթին պայմանավորված էին այն իրողությամբ, որ Սահմանադրությունը չէր նախատեսում օրենսդիր մարմնի կողմից Պաշտպանին նշանակելու որևէ իրավական հնարավորություն, ինչն ընկալվում էր որպես այս հաստատության անկախության ոչ լիարժեք երաշխիք:

Խորհրդարանի կողմից Պաշտպանի ընտրելիության սկզբունքը՝ որպես նրա անկախության կարևորագույն երաշխիք, բխում է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 20.12.1993թ. 48/134 բանաձևով ընդունված Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ազգային հաստատությունների կարգավիճակին և գործունեությանը վերաբերող սկզբունքներից (Փարիզյան սկզբունքներ)¹: Մինչդեռ, Սահմանադրությամբ սահմանված էր Ազգային ժողովի լիազորությունների սպառիչ ցանկ, որը չէր նախատեսում Ազգային ժողովի կողմից այլ պետական պաշտոնատար անձ նշանակելու որևէ հնարավորություն:

Հարկ է նշել նաև, որ որոշ փորձագետներ համարում էին, որ Ազգային ժողովի կողմից Պաշտպանի նշանակման հնարավորությունը չէր բացառվում նաև նման սահմանադրաիրավական կարգավորման պայմաններում: Մասնավորապես, նշվել է, որ թեև Ազգային ժողովի՝ Սահմանադրությամբ սահմանված լիազորությունները սպառիչ են, և Պաշտպանին նշանակելու լիազորություն Ազգային ժողովը չունի, սակայն Սահմանադրությունը չի սահմանում պատգամավորների լիազորությունների սպառիչ ցանկ, ուստի օրենքում կարելի էր նախատեսել, որ պատգամավորների ձայների որոշակի քանակ հավաքած անձը միայն կարող է ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել Պաշտպան: Սա կապահովեր ԱԺ պատգամավորների ավելի ռեալ մասնակցությունը Պաշտպանի ընտրության գործընթացում՝ միաժամանակ սահմանափակելով ՀՀ նախագահի դերը:

Փոխարենը օրենքով նախատեսվեց Ազգային ժողովի կարծիքը հաշվի առնել խորհրդակցելու միջոցով և ըստ էության համաձայնություն ստանալու ճանապարհով: Իրականում, առաջին Պաշտպանի թեկնածությանը հավանություն է տվել ԱԺ պատգամավորների 3/5-ը, որոնք միավորված են 5 խումբ-խմբակցություններում՝ «Հայաստանի հանրապետական կուսակցություն», «Օրինաց երկիր», «Հայ հեղափոխական դաշնակցություն», «Միավորված աշխատանքային կուսակցություն», «Ժողովրդական պատգամավոր»:

2004թ. վերսկսվեց սահմանադրական բարեփոխումների գործընթացը և ամռանն ու աշնանը խորհրդարան ներկայացվեցին սահմանադրական փոփոխություններ և լրացումներ առաջարկող օրենքի երեք նախագծեր: 2005թ. մայիսի 11-ին Ազգային ժողովը հիմք ընդունեց խորհրդարանական կոալիցիայի նախագիծը: 2005թ. նոյեմբերի 27-ին «ՀՀ

¹ Տե՛ս՝ Հավելված 9՝ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 20.12.1993թ. 48/134 բանաձևով ընդունված «Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ազգային հաստատությունների կարգավիճակին և գործունեությանը վերաբերող սկզբունքներ»:

Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը ընդունվեց հանրաքվեի միջոցով:

Սահմանադրության փոփոխություններով սահմանվեց Մարդու իրավունքների պաշտպանի կարգավիճակը: Մասնավորապես, **հոդված 83.1-ով** սահմանվել են Պաշտպանին ընտրելու Ազգային ժողովի լիազորությունը, նրա պաշտոնավարման ժամկետը և անփոփոխելիության սկզբունքը, պաշտոնին առաջադրվող պահանջները, Պաշտպանի առաքելությունն ու կարգավիճակը, Պաշտպանի հետ համագործակցելու հանրային մարմինների պարտականությունը և Պաշտպանի անկախության երաշխիքները*: Սահմանադրության **հոդված 18-ով**՝ «...Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով եւ կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը»... Հոդված **101-ի կետ 8-ով** սահմանվել է Պաշտպանի՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը **հոդված 100-ի կետ 1-ում**** թվարկված նորմատիվ ակտերի՝ **Սահմանադրության գլուխ 2-ի՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները», դրույթներին** համապատասխանության հարցերով: Այսպիսով, 2005թ. դեկտեմբերի 6-ից ուժի մեջ մտած սահմանադրական փոփոխություններով ամրագրվեց Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության սահմանադրական կարգավիճակը:

1.3. Պաշտպանի հաստատության կայացման պայմաններն ու խոչընդոտները

Պաշտպանի հաստատությունը, որակապես նոր ինստիտուտ լինելով ՀՀ պետաիրավական համակարգում, իր գրեթե երկամյա աշխատանքային գործունեության ընթացքում հանդիպել է բազմաթիվ խոչընդոտների, որոնք անվիճարկելիորեն վկայում են իրավական պետության կայացման գործընթացներին հատուկ դժվարությունների և արհեստական արգելքների առկայության մասին:

- Օրենսդրության հակասելիությունն ու անկատարությունը

Պաշտպանի հաստատության հիմնադրման առաջին իսկ օրերից «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում առկա ներքին հակասությունները հաստատության գործունեության ընթացքում առաջացրել են բազմաթիվ անհարկի խոչընդոտներ:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը այդպես էլ **չներդաշնակեցվեց** նրա կիրառման հետ անմիջականորեն առնչվող օրենքներին և այլ իրավական ակտերին: Մասնավորապես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքից բխող **անհրաժեշտ փոփոխություններ չկատարվեցին** ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում, Քրեական դատավարության օրենսգրքում, Քրեական օրենսգրքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում, «Ազգային

* «Ազգային ժողովը մարդու իրավունքների պաշտպանին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ վեց տարի ժամկետով: Մարդու իրավունքների պաշտպան կարող է ընտրվել հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող անձը, որը համապատասխանում է պատգամավորին ներկայացվող պահանջներին: Մարդու իրավունքների պաշտպանն անփոփոխելի է: Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք համագործակցում են մարդու իրավունքների պաշտպանի հետ: Մարդու իրավունքների պաշտպանն օժտված է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիությամբ: Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության այլ երաշխիքները սահմանվում են օրենքով»:

** «Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով՝ որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը»:

ժողովի կանոնակարգ» օրենքում, ՀՀ կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին ՀՀ նախագահի հրամանագրում, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում և այլ իրավական ակտերում:

Մարդու իրավունքների պաշտպանի արդեն առաջին զեկույցում առանձին ենթազխում ներկայացված էին նկատառումներ օրենսդրական որոշ փոփոխությունների անհրաժեշտության վերաբերյալ: Այս կապակցությամբ 2005թ. ևս Պաշտպանի կողմից բանավոր և գրավոր առաջարկներ են արվել, որոնք, սակայն, ինչպես և նախորդ տարում, պատկան պետական մարմիններում այդպես էլ քննարկման առարկա չեն դարձել՝ սահմանադրական փոփոխություններից անմիջապես հետո դրանց անդրադառնալու պատճառաբանությամբ:

Նման իրավական չկարգավորվածության պայմաններում բազմաթիվ անհարկի բարդություններ են ստեղծվել Պաշտպանի՝ օրենքով ամրագրված լիազորություններն իրականացնելիս:

- **Իրավակիրառական պրակտիկան**

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ կառավարության նիստերին մասնակցելու, մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող քննարկվող հարցերի վերաբերյալ **Էլույթ ունենալու**, նիստերի քննարկմանը օրենքով սահմանված հարցեր ներկայացնելու վերաբերյալ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով (հոդված 7, մաս 3*) սահմանված դրույթները «Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ նախագահի հրամանագրում չամրագրելու արդյունքում **Պաշտպանին նույնիսկ արգելվել է Էլույթ ունենալ** 2005թ. փետրվարի 10-ին կայացած կառավարության նիստին, որտեղ քննարկվում էր «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի անհամաձայնության պայմաններում և առանց աշխատանքային քննարկումների, **արդարադատության նախարարի նախաձեռնությամբ** և վճռաբեկ դատարանի նախկին նախագահի միջոցով, ՀՀ նախագահի դիմումով **Սահմանադրական դատարանը որոշում է կայացրել** «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ի վերաբերյալ, որով **Պաշտպանը զրկվել է յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքի և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի ապահովմանն ուղղված գործողություններ իրականացնելու հնարավորությունից:**

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու վերաբերյալ կառավարության կողմից առաջարկված օրենքի նախագծով նախատեսվել էր օրենքի հոդված 7-ի մաս 1-ի 2-րդ պարբերությունից հանել դատաքննության մեջ գտնվող ցանկացած գործի մասին տեղեկություններ պահանջելու և քաղաքացիների դատավարության իրավունքի պատշաճ ի կատար ածումը երաշխավորելու նպատակով դատարան առաջարկներ ներկայացնելու Պաշտպանի իրավունքը ամրագրող դրույթը: **Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից վերը նշված օրենքի նախագծին դրական եզրակացություն չէր տրվել:**

Այնուհետև, 25.02.2005թ. ՀՀ Դատարանների նախագահների խորհրդի նախագահ Հ. Դանիելյանը (որը այնուհետ նշանակվեց Սահմանադրական դատարանի դատավոր) նամակով դիմել էր ՀՀ նախագահին, որում նշվում էր, որ ««Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի նշված դրույթը իրավունք է վերապահում Պաշտպանին

* «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 3՝ «Պաշտպանն իրավունք ունի ներկա լինել Հայաստանի Հանրապետության կառավարության, ինչպես նաև պետական այլ մարմինների նիստերին և էլույթ ունենալ, եթե քննարկվում են մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող հարցեր, ինչպես նաև այդ նիստերի քննարկմանը ներկայացնել այդ կամ դրանց ենթակա մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև սույն օրենքի պահանջների խախտման վերաբերյալ հարցեր»:

ուղղակի ձևով միջամտելու ցանկացած գործի դատաքննությանը, որը դատարանի անկախության սահմանադրական սկզբունքի կոպիտ ոտնահարում է»: Նամակով հայցվել էր ՀՀ նախագահի աջակցությունը «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու գործում:

Դրան հաջորդել էր ՀՀ նախագահի դիմումը (07.04.2005թ.) ՀՀ Սահմանադրական դատարան՝ Պաշտպանի մասին օրենքի հոդված 7-ի մաս 1-ի 2-րդ պարբերության 2-րդ նախադասությամբ ամրագրված դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:

2005թ. մայիսի 6-ի որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը որոշեց՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ի կետ 1-ի 2-րդ պարբերության 2-րդ նախադասությամբ ամրագրված դրույթը նման խմբագրությամբ՝ **Պաշտպանի՝ դատարաններից տեղեկություններ պահանջելու և դատարաններին առաջարկներ ներկայացնելու իրավունքի մասով, պայմանավորված չէ անկախ և անկողմնակալ արդարադատություն իրականացնելու անհրաժեշտությամբ, ստեղծում է ներօրենսդրական հակասություն, հաշվի առնելով նաև իրավակիրառական պրակտիկան՝ միջամտություն է դատական իշխանության գործառնություններին և չի համապատասխանում Սահմանադրության հոդված 39-ի և հոդված 97-ի մաս 1-ի դրույթներին: Միաժամանակ նշվեց, որ Պաշտպանի՝ դատարաններից տեղեկություններ պահանջելու իրավունքը օրենքի համապատասխան հոդվածների դրույթների կիրառելիության ապահովման հետ, ենթակա է բավարարման, եթե դա միջամտություն չէ դատական վարույթին՝ չի առնչվում կոնկրետ գործով արդարադատության իրականացմանը, չի վերաբերում դատարանի վարույթում գտնվող գործի քննության նյութական և դատավարական բնույթի հարցերին:**

Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմամբ Պաշտպանը փաստորեն զրկվեց յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքի և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի ապահովմանն ուղղված գործողություններ իրականացնելու հնարավորությունից, այն ժամանակ, երբ միջազգային պրակտիկան ընթանում է օմբուդսման-դատական իշխանություն համագործակցության ընդունելի ձևերի ներդրման և զարգացման ճանապարհով:

Հատկանշական է, որ դատարանի հետ արդյունավետ համագործակցության մեխանիզմների ներդրումը առանձնակի կարևորվում է հենց հետխորհրդային պետությունների համար², որոնց թվում է և Հայաստանի Հանրապետությունը, որտեղ մարդու իրավունքները և ազատությունները դատական գործընթացներում խախտվում են այնքան հաճախ և այնպիսի ակներև եղանակներով, որ դա հանգեցրել է դատական համակարգի նկատմամբ հասարակության չափազանց մեծ անվստահությանը (ըստ Պաշտպանին ուղղված գրավոր և բանավոր դիմումների և այլ կազմակերպությունների կողմից անցկացված հետազոտությունների արդյունքների):

Մարդու իրավունքների առաջին պաշտպանը մնում է այն դիրքորոշմանը, որ Պաշտպանի կողմից դատարաններին կամ դատավորներին ներկայացվող առաջարկությունները, արդեն իսկ ըստ իրենց բնույթի, չեն կարող դիտվել որպես ոտնձգություն դատարանների անկախության նկատմամբ և երբևէ չէին կարող ազդել նրանց անկախության վրա: Իսկ դատարաններից պահանջվող տեղեկությունների շրջանակը մեկնաբանելիս, պետք է դրանք տարբերակել հենց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով սահմանված պարզաբանումներից:

Նախ և առաջ պետք է նշել, որ դատարանների անկախություն հասկացությունը ենթադրում է անկախություն իշխանության մյուս ճյուղերից, բացի այդ, դատարանին կամ դատավորին կարծիք կամ առաջարկություն ներկայացնելը չի կարող դիտվել որպես ոտնձգություն նրա անկախության նկատմամբ (այդ դեպքում նաև դատական գործընթացի ցանկացած կողմի կարծիքը կամ առաջարկությունը ևս պետք է դիտվի որպես այդպիսին, օրինակ՝ դատապաշտպանին): Ավելին, զարգացած ժողովրդավարական երկրների փորձը գալիս է ապացուցելու, որ հենց Օմբուդսմանի, ինչպես նաև հասարակական իրավապաշտպան կազմակերպությունների կողմից՝ որպես դատարանի

² Տե՛ս՝ Հավելված 6 Լյուբլյանայի եզրակացությունները:

խորհրդակցանքների, դատարաններում կարծիքներ և առաջարկություններ ներկայացնելն է մեծավ մասամբ նպաստել այդ երկրներում անկախ դատական համակարգի կայացմանը, ըստ այդմ անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքի ապահովմանը:

- **Քաղաքացիական ծառայության ներդրման փորձերը**

Դեռևս 2004թ. վերջերից փորձեր են արվել նաև սահմանափակել Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության անկախությունը՝ աշխատակազմում քաղաքացիական ծառայություն ներդնելու միջոցով:

ՀՀ կառավարությունը հանդես է եկել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծով, որով, ի թիվս այլ փոփոխությունների, նախատեսվել էր նաև, որ Պաշտպանի աշխատակազմի վրա պետք է տարածվեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին օրենսդրության դրույթները: Նշված օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004թ. հոկտեմբերի 25-ին, սակայն նոյեմբերի 20-ին ՀՀ նախագահը օրենքը վերադարձրել է ԱԺ քննարկմանը՝ անհրաժեշտ համարելով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության ներդնելը և առաջարկելով նախաձեռնել նոր օրենքի ընդունում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում քաղաքացիական ծառայություն նախատեսելու նպատակով: 2004թ. դեկտեմբերի 6-ին Ազգային ժողովը որոշում ընդունեց նշված օրենքի վերաբերյալ առարկությունները ընդունելու մասին:

Ժամանակին դեռ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) փորձագիտական եզրակացություն է ներկայացրել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ՝ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության աշխատակազմի իրավական կարգավիճակի տեսանկյունից³:

Եզրակացությամբ գնահատվել է նախագծի համատեղելիությունը մարդու իրավունքների ազգային հաստատության անկախության և անկողմնակալության սկզբունքների հետ և չի խրախուսվել Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներին քաղաքացիական ծառայողի կարգավիճակ տալը: Եզրակացության մեջ նշվել է, որ Պաշտպանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության ներդնելը էապես կվտանգի Պաշտպանի հաստատության անկախության երաշխիքները:

Աշխատակազմի ձևավորման իրավունքը Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեության անկախությունն ապահովող կարևորագույն երաշխիքներից մեկն է հանդիսանում, խնդիրն այն է, որ Պաշտպանի աշխատակազմը, բացի վարչական օժանդակություն ցուցաբերելուց, ինքնուրույն իրականացնում է նաև մարդու իրավունքների պաշտպանության հետ անմիջականորեն կապված մի շարք գործառնություններ: Իրենց վերապահված լիազորություններն իրականացնելիս Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների կախվածությունը այլ պետական մարմիններից հավասարապես կվտանգի Պաշտպանի անկախությունը:

«.Աշխատակազմի աշխատակիցներին արտաքին ճնշումներից պաշտպանելը նույնքան կարևոր է, որքան Օմբուդսմանի և նրա տեղակալի պաշտպանությունը⁵»:

Ներկայումս այդ գործընթացը կասեցվել է:

- **Պաշտպանի անձեռնմխելիության դեմ ուղղված գործողությունները**

Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները, առանց Պաշտպանին տեղյակ պահելու, օրենքով նախատեսված կարգի խախտմամբ, մուտք են գործել

³ Տե՛ս՝ Հավելված 8՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարգավիճակի տեսանկյունից «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագծի մասին ակնարկ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, 15.02.2005թ.:

գրասենյակ և առգրավել համակարգիչը, որում պահվում էին գրասենյակ դիմած քաղաքացիների կոնֆիդենցիալ բողոքները: Նշված գործողություններով կոպտորեն խախտվել են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 19-ով նախատեսված պահանջները: Մասնավորապես, օրենքի հոդված 19-ի համաձայն՝ Պաշտպանն իր լիազորությունների ողջ ժամկետի ընթացքում օժտված է անձեռնմխելիությամբ, Պաշտպանը, նրա բնակարանը չեն կարող խուզարկվել առանց ՀՀ ԱԺ համաձայնության, Պաշտպանի անձեռնմխելիությունը տարածվում է նաև նրա ուղեբեռների, նամակագրության, օգտագործած կապի միջոցների, ինչպես նաև նրան պատկանող փաստաթղթերի վրա:

Խախտվել է խուզարկություն և առգրավում կատարելու վերաբերյալ Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգը: Առիթ է ծառայել 2005թ. մայիսին Ազգային անվտանգության ծառայության կողմից Պաշտպանի աշխատակազմի գիտավերլուծական կենտրոնի աշխատակցի ձերբակալումը:

Դրան հաջորդել է ԱԱԾ երկու աշխատակիցների այցը «Ռեյթ իրավաբանական խումբ» փաստաբանական ՍՊԸ՝ ներկայանալով որպես Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներ: ԱԱԾ աշխատակիցների կողմից ոչ վայելուչ ձևով պահանջվել են ընկերություն դիմած որոշ անձանց վերաբերյալ տվյալներ:

Կատարվածը Պաշտպանի կողմից գնահատվել է որպես հաստատությունը վարկաբեկելու փորձ: Դրա մասին տեղյակ է պահվել նաև ԱԱ ծառայությունը, սակայն համարժեք գնահատական իրենց աշխատակիցների վարքագծին նրանց կողմից չի տրվել:

- 2004թ. տարեկան զեկույցի արձագանքները

2004թ. տարեկան զեկույցի վերաբերյալ իշխանությունների որոշ ներկայացուցիչների ոչ համարժեք, նրանց կողմից Սահմանադրության և օրենքների կանայական մեկնաբանության արդյունք հանդիսացող, երբեմն էլ էթիկայի նորմերին չհամապատասխանող արձագանքներին հետևեց դեռևս **2004թ. դեկտեմբերից սկսված երկրի համար ոչ պատվաբեր հեռուստատեսային արշավի ակտիվացումը, առաջին հերթին՝ հանրային հեռուստատեսությամբ:** (Այդ ընթացքում այլ հեռուստաընկերություններ պարբերաբար հրավիրում էին Պաշտպանին եթեր, իսկ մի քանի ժամ անց տարբեր պատրվակներով ետ էին վերցնում հրավերը):

Ապատեղեկատվություն պարունակող նպատակաուղղված հեռուստաարշավը և միաժամանակ Պաշտպանին հեռուստաեթեր չտրամադրելը երկար ժամանակով **զրկեց բնակչությանը ինչպես իրենց իրավունքների պաշտպանության միջոցների, այնպես էլ երկրում մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակի մասին արժանահավատ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից:**

Ավելին, քանի որ մարզերում հիմնականում հեռարձակվում է հանրային հեռուստատեսությունը, մարզերի բնակչությունը, մայրաքաղաքի բնակչությունից ավելի, գտնվում էր ապատեղեկատվության ազդեցության ներքո շուրջ մեկ տարի:

Պատահական չէ, որ Պաշտպանին ուղղված բանավոր դիմում-բողոքների թիվը գնալով ավելանում էր, իսկ գրավոր դիմումներինը՝ պակասում, և ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր դիմումատուների ճնշող մեծամասնությունը մտավախություն էր հայտնում բողոքի արդյունքում ինչպես իրենց, այնպես էլ իրենց հարազատներին հնարավոր ճնշումների ենթարկելու վերաբերյալ (**տես՝ Գլուխ 2, 2.1. Դիմում-բողոքների և բողոքատուների հետ աշխատանք, 2.1.1. Դիմում-բողոքների վիճակագրական վերլուծություն**):

Անհրաժեշտ է արձանագրել, որ այս իրավիճակն աննախադեպ էր միջազգային պրակտիկայում, այդ թվում՝ ԱՊՀ երկրների համար: Որոշ հեղինակավոր միջազգային կազմակերպություններ իրենց զեկույցներում նշել են, որ Հայաստանում խոսքի և տեղեկատվության ազատությունը վերջին մեկ տարում խիստ սահմանափակումների է ենթարկվում:

- ՀՀ նախագահի 2006թ. հունվարի 4-ի թիվ 1-Ա հրամանագիրը

Սահմանադրական փոփոխությունների ընդունումը պետք է հաստատեր Հայաստանի նվիրվածությունը ժողովրդավարական արժեքներին և իրավական պետության կառուցմանը, մասնավորապես, մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը պետական մակարդակով, ինչը ենթադրում է հարգանք Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ամրապնդման և զարգացման համընդհանուր սկզբունքների նկատմամբ:

Անտարակույս, այդպիսի սկզբունքներից են Մարդու իրավունքների պաշտպանի ազգային սահմանադրական հաստատության գործունեության անընդհատությունն ու շարունակականությունը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 27-ի համաձայն՝ ՀՀ առաջին պաշտպանի պաշտոնավարման ժամկետը լրացել է 2006թ. հունվարի 5-ին:

Հայտնի է, որ՝

- **ն՛չ** Սահմանադրությամբ, **ն՛չ** Պաշտպանի մասին և **ն՛չ** էլ որևէ այլ օրենքով սահմանված չէ Պաշտպանի լիազորությունների դադարեցման և պաշտոնից նրան ազատելու կարգը,

- **ՀՀ** օրենսդրությունը չի տրամադրում ՀՀ նախագահին որևէ լիազորություն Պաշտպանի լիազորությունների դադարեցման և պաշտոնից նրան ազատելու վերաբերյալ,

- **ն՛չ** Պաշտպանի մասին և **ն՛չ** էլ որևէ այլ օրենքով նույնացված չեն «պաշտոնավարման ժամկետ» և «լիազորությունների ժամկետ» հասկացությունները,

- Պաշտպանի մասին օրենքը (հոդված 6, մաս 1), չի կապում լիազորությունների դադարեցումը պաշտոնավարման ժամկետի լրանալու հետ*:

Սահմանադրական փոփոխություններով պետությունը պարտավորվել է ապահովել սահմանադրական դարձած Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեության անընդհատությունն ու շարունակականությունը, ինչը հնարավոր էր իրականացնել՝

- մինչև առաջին Պաշտպանի պաշտոնավարման ժամկետը լրանալը՝ Ազգային ժողովի կողմից նոր Պաշտպանի ընտրությամբ,

- օրենսդրական նորմի ընդունմամբ, որի համաձայն գործող Պաշտպանի լիազորությունները կշարունակվեին մինչև հաջորդ Պաշտպանի ընտրությունը⁴,

- վերոնշյալ երկու դրույթների անհրաժեշտության դեպքում՝ առաջին Պաշտպանի լիազորությունների շարունակմամբ մինչև հաջորդ Պաշտպանի ընտրությունը, ինչը չի հակասում ՀՀ Սահմանադրությանն ու օրենքներին և համապատասխանում է նման հաստատությունների վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքներին և պրակտիկային:

Այնինչ, Պաշտպանին պարտականությունների և լիազորությունների կատարումից ազատելու մասին որևէ իրավական ակտի բացակայության պայմաններում, ՀՀ նախագահի 04.01.2006թ. թիվ 1-Ա «Մարդու իրավունքների առաջին պաշտպանի պաշտոնավարման ժամկետը լրանալու կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կառավարումն իրականացնող ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին» հրամանագրով ստեղծվել է Պաշտպանի աշխատակազմի կառավարման ժամանակավոր հանձնաժողով:

Հրամանագրով և դրան հաջորդող գործողություններով Պաշտպանն առանց ձևակերպման ազատվել է պարտականությունների և լիազորությունների կատարումից, Պաշտպանին պարտադրվել է հանձնել հաստատության կնիքը և փաստաթղթերը, կնքվել

* «Պաշտպանի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից»:

⁴ Տե՛ս՝ Հավելված 4.5.՝ Պաշտպանի նամակն ուղղված ՀՀ վարչապետին և Ազգային ժողովի նախագահին մինչև հաջորդ Պաշտպանի ընտրությունը գործող Պաշտպանի լիազորությունների շարունակելիության առնչությամբ:

են Պաշտպանի և նրա տեղակալի աշխատասենյակները, արգելվել է Պաշտպանի, նրա տեղակալի և աշխատակազմի աշխատակիցների մուտքը հաստատության վարչական շենք: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Պաշտպանի աշխատակազմը ինքնուրույն կերպով, առանց Պաշտպանի կողմից տրվող լիազորությունների, գործունեություն իրականացնելու իրավասություն չի կարող ունենալ, հրամանագրի գործողության արդյունքում, փաստորեն, դադարեցվել է Պաշտպանի հաստատության գործունեությունը: Դրանով իսկ խախտվել է Սահմանադրության հոդված 18-ի մաս 3-ը, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը»: Այս սահմանադրական նորմը պարտավորություն է ստեղծում պետության համար ոչ միայն ստեղծելու Պաշտպանի հաստատություն, այլև ապահովելու նրա բնականոն գործունեությունը:

Հրամանագրի գործողության արդյունքում ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք զրկվել են Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու, նրա աջակցությունը ստանալու հնարավորությունից: Իսկ ՀՀ Սահմանադրության հոդված 44-ի համաձայն՝ իր իրավունքների և ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու մարդու իրավունքը սահմանափակման ենթակա չէ:

ՀՀ նախագահի հրամանագիրը հակասում է նաև ՀՀ Սահմանադրության հոդվածներ 5-ին և 55-ին: Համաձայն ՀՀ Սահմանադրության հոդված 5-ի մաս 2-ի՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: ՀՀ Սահմանադրության հոդված 55-ով Պաշտպանի իրավասություններն այլ անձի հանձնելու լիազորություն ՀՀ նախագահին չի տրված: Համաձայն ՀՀ Սահմանադրության հոդված 56-ի՝ «Հանրապետության նախագահը հրապարակում է հրամանագրեր և կարգադրություններ, որոնք չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին»:

Ժողովրդավարական ավանդույթների բացակայության պայմաններում իրավական պետության հաստատությունների կայացումը վտանգվում է օրենքի նմանօրինակ կամայական մեկնաբանություններով և ոչ իրավաչափ գործողություններով:

Չնայած խոչընդոտներին, Պաշտպանի հաստատությունն ի վերջո հասել է կառուցողական հարաբերությունների հաստատման ինչպես հանրային մարմինների, այնպես էլ քաղաքացիական հասարակության և միջազգային հասապատասխան կառույցների հետ:

Պաշտպանի հաստատության կայացման պայմաններն ընդհանուր առմամբ կարելի է բնութագրել որպես հակասական: Մի կողմից հանրային մարմինների ու դրանց ներկայացուցիչների որոշակի մասը հնարավորինս աջակցել է Պաշտպանին և նրա աշխատակիցներին մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված գործունեության ընթացքում, մյուս կողմից Պաշտպանն ու նրա աշխատակիցները գործունեության սկզբից ի վեր պարբերաբար բախվել են հանրային մարմինների անտարբերությանը և դրանց կողմից ծառայված արհեստական խոչընդոտներին:

Ասվածը հավասարապես վերաբերում է նաև քաղաքացիական հասարակության կազմակերպված խմբերի՝ զանգվածային լրատվական միջոցների, հասարակական կազմակերպությունների և դրանց ներկայացուցիչների կողմից Պաշտպանի հաստատության նկատմամբ դրսևորված վերաբերմունքին: Ստեղծված իրավիճակի կարևորագույն պատճառն այն է, որ ի սկզբանե հաստատությունը ոչ համարժեք է

ընկալվել ինչպես հանրային մարմինների, այնպես էլ լայն հասարակության ներկայացուցիչների, և մինչև անգամ որոշ միջազգային կառույցների կողմից*:

Հանրային կառավարման մարմինների կողմից այն դիտվել է որպես հերթական հասարակական կազմակերպություն, և Պաշտպանի բացահայտումներն ու առաջարկները գնահատվել են նույն մոտեցումներով, ինչն ինքնին խիստ բացասական է բնութագրում հանրային մարմիններին, որոնք պարտավոր են մեծ ուշադրություն դարձնել ինչպես հասարակական կազմակերպությունների, այնպես էլ զանգվածային լրատվական միջոցների կարծիքին ու գնահատականներին և համագործակցել նրանց հետ քաղաքացիական հասարակության շահերի պաշտպանության գործում:

Քանի որ **Պաշտպանը չունի վարչական ներգործության որևէ իրավասություն**, հանրային կառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց մոտ ի սկզբանե եղել է այն նախապաշարմունքը, որ Պաշտպանի կողմից իրենց ուղղված առաջարկը կամ իրենց հասցեին արված քննադատությունը կարող է անտեսվել, թողնվել անպատասխան և քննադատվողի համար հետևանք չունենալ:

Նման նախապաշարմունքների փարատմանն ու անհիմն կարծրատիպերի կանխարգելմանն էին ուղղված Պաշտպանի ամենօրյա աշխատանքն ու ջանքերը՝ նպատակ ունենալով ստեղծել և ամրապնդել այն համոզմունքը, որ Պաշտպանը, չհանդիսանալով իշխանության որևէ թևի բաղկացուցիչ մաս, պետականորեն լիազորված է մարդու իրավունքներին առնչվող հարցերում գնահատականներ տալ հանրային մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության վերաբերյալ, և Պաշտպանի առաջարկները ենթակա են պարտադիր կատարման, իսկ չկատարողը պարտավոր է իր անհամաձայնությունը հիմնավորել բացառապես մարդու իրավունքների ոլորտում միջազգային սկզբունքների ու նորմերի շրջանակներում:

Այս առումով հատկանշական է Պաշտպանի 2004թ. տարեկան զեկույցը, իր հակասական արձագանքներով հանդերձ, որը զգալի դեր խաղաց Պաշտպանի հաստատության կայացման ճանապարհին՝ հաստատության ճանաչման և ապա ոչ միայն հանրային կառույցների շարքում իր տեղը գտնելու, այլև որպես յուրահատուկ և բացառիկ կառույց դրանցից առանձնանալու հարցում:

Չեկույցում իրենց հասցեին արված քննադատությունը հիվանդագին ընդունեցին արդարադատության նախարարությունը, վճռաբեկ դատարանը, նաև դատախազությունը, ինչը սակայն չխանգարեց այդ կառույցների ղեկավարների հետ անցկացված քննարկումների միջոցով հետագայում համատեղ լուծել բարձրացված որոշ խնդիրներ:

Անհիմն նախապաշարմունքների և արմատացած մոտեցումների հաղթահարմանը հնարավոր է եղել հասնել հիմնականում հանդիպումների և համատեղ քննարկումների, համագործակցության ընդհանուր եզրեր առաջարկելու ճանապարհով:

Արգելքը որոշ չափով հաղթահարվել է. **հանրային կառավարման մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք հաշվի են առնել Պաշտպանի**, որպես ազգային հաստատության, առաջարկները, բացառությամբ այն դեպքերի, երբ վերադասի կողմից «կարգադրությունների» տեսքով խոչընդոտներ են ստեղծվել: Սուբյեկտիվ բնույթ կրող խոչընդոտների պայմաններում անգամ, հանրային մարմինների և դրանց պաշտոնատար անձանց մոտ ամրապնդվել են Պաշտպանի հաստատության նկատմամբ կառուցողական մոտեցումները:

Այս հանգամանքը ևս թույլ է տալիս պնդել, որ այսօր առկա են ժողովրդավարական և իրավական պետության կայացման, ինչպես նաև այդ գործընթացի կարևորագույն պայման հանդիսացող Պաշտպանի հաստատության արդյունավետությունն առավելագույնս բարձրացնելու համար անհրաժեշտ նախադրյալները:

* Տե՛ս, օրինակ՝ ԵԽԽՎ թիվ 1361 (2004) բանաձևը, կետ 11, ուր, մասնավորապես, ասված է՝ «...Վեհաժողովը... վստահ է, որ նախատեսված նշանակման մեթոդը բավարար երաշխիքներ չի ապահովում օմբուդսմենի անկախության համար»:

Պաշտպանի հաստատության կայացման պայմանների առումով խիստ կարևորվել է նաև հանրային իրազեկության խնդիրը: Մարդու իրավունքների պաշտպանի դերը բնակչության կողմից ընկալվել է Պաշտպանի իրական նշանակությանն անհամապատասխան և խիստ լայն առումով: Առկա էր այն համոզմունքը, որ «մարդու իրավունքները» գործում են ոչ միայն անհատ-պետություն, այլև անհատ-անհատ իրավահարաբերություններում, ըստ այդմ Պաշտպանը դիտվում էր որպես յուրօրինակ փաստաբան, և յուրաքանչյուր ոք, ով իր իրավունքը խախտված կամ շահն անտեսված էր համարում, անկախ խնդրի բնույթից, դիմում էր Պաշտպանին՝ հոգուտ իրեն միջամտության ակնկալիքով: Դիմումատուների հետ տևական աշխատանքի, զանազան դասընթացների, բնակչության հետ հանդիպումներում, մամուլում արված պարզաբանումների, ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակված հաղորդումների շնորհիվ զգալիորեն պակասել է հորիզոնական իրավահարաբերությունների առնչությամբ բողոքների թիվը:

Պաշտպանի հաստատության կայացման պայմաններին անդրադառնալիս նախ և առաջ անհրաժեշտ է նշել այն կարևորագույն պայմանը, որ հաստատությունն իր գործունեության և, առավել ևս, կայացման ուղին սկսել է զրոյից՝ առանց երկրում նախադեպերի կամ նմանատիպ օրինակների փորձն ու գործունեության արդյունքները ժառանգելու, ինչն ուղղակիորեն մատնանշում է ոչ միայն «արտաքին», այլև «ներքին» կայացման խնդրի առկայությունը: Ներքին կայացման համար անհրաժեշտ պայմանն իհարկե տարբեր ռեսուրսների ապահովումն ու ավելացումն է, այն է՝ մարդկային ռեսուրսների կազմավորում և կարողությունների հզորացում, կազմակերպչական, տեխնիկական և նյութական բավարար ռեսուրսների ձեռքբերում:

Եթե հաստատության կազմակերպչական և նյութական ռեսուրսները 2004-2005թթ. ընթացքում կարելի է համարել բավարար, ապա տեխնիկական համալրումը խիստ անբավարար էր: Մեծ ջանքեր են պահանջվել, որպեսզի 2006թ. Պաշտպանի հաստատության բյուջեում նախատեսվի հաստատության տեխնիկական, մասնավորապես, համակարգչային համալրում:

Չնայած բազմաթիվ հիմնավորումների, 2005թ. Պաշտպանի աշխատակազմի աշխատավարձային ֆոնդը մնացել է անփոփոխ, ինչը հնարավորություն չի տվել ընդլայնել մարդկային ռեսուրսները:

Նախկինում նման հաստատության բացակայության պայմաններում, Պաշտպանի հաստատության կայացման և զարգացման գործընթացները նախ և առաջ հիմնված են եղել ինչպես ազգային հասարակական և միջազգային կազմակերպությունների, այնպես էլ զարգացած ժողովրդավարական պետությունների՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ձեռքբերված փորձի վերլուծության վրա:

Հայաստանյան իրականության համար առավելագույնս նպատակահարմար գործելակերպի ձևավորման, ինչպես նաև միջազգային փորձի կիրառելիության հնարավորությունները վերհանելու նպատակով, անցկացվել են բազմաթիվ դիտարկումներ և ուսումնասիրություններ: Կազմվել է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 2005-2008թթ. ռազմավարական ծրագիրը:

Պաշտպանի հաստատության կայացման գործընթացի բարենպաստ պայմաններին անդրադառնալիս նախ և առաջ պետք է նշել Պաշտպանի հաստատության նշանակության և գործունեության նկատմամբ հասարակական կազմակերպությունների և տպագիր մամուլի վերաբերմունքի դրական տեղաշարժի մասին: 2005թ. էլ ավելի է զարգացել Պաշտպանի հաստատության համագործակցությունը զանգվածային լրատվական միջոցների և հասարակական կազմակերպությունների հետ, ինչն արդյունք էր հաստատության հետևողական աշխատանքի:

Պաշտպանին բարոյական աջակցություն են ցույց տվել միջազգային կազմակերպությունների հայաստանյան գրասենյակների և դիվանագիտական կառույցների ներկայացուցիչները: Անհրաժեշտ է շեշտել ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի և ԵԱՀԿ գրասենյակների աշխատանքը, որոնք, երբեմն ի հակառակ նախագահի կողմից

նշանակված պաշտպանի անկախության վերաբերյալ մտահայեցողական եզրակացությունների, անընդմեջ տեխնիկական, խորհրդատվական և բարոյական աջակցություն են տրամադրել Պաշտպանի հաստատությանը: Մեծ ուշադրություն է դարձվել հաստատության աշխատակիցների գիտելիքների համալրմանն ու նոր հմտությունների ձեռքբերմանը, ինչն իրականացվել է միջազգային կազմակերպությունների աջակցության շնորհիվ:

Անհրաժեշտ է ընդգծել Պաշտպանի հաստատության կայացման գործընթացի բարենպաստ պայմանները, որոնք ստեղծվել են նաև հանրային մարմինների որոշ ներկայացուցիչների աջակցության շնորհիվ:

Չնայած մարդու իրավունքների հիմնախնդիրների հանդեպ պատգամավորների ճնշող մեծամասնության անտարբերությանը (բավական է հիշել, որ Պաշտպանի 2004թ. տարեկան զեկույցի քննարկմանը ներկա էր ընդամենը յոթ պատգամավոր), այնուամենայնիվ, մի քանի պատգամավորներ զգալի աջակցություն են ցուցաբերել Պաշտպանի հաստատությանը 2004թ. և 2005թ. բյուջետային քննարկումների ժամանակ:

Նրանք հավանություն չեն տվել նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ մտցնելուն, քանի որ դրանք ուղղված էին Պաշտպանի լիազորությունների կրճատմանը, ինչպես նաև ակտիվ մասնակցություն են ունեցել Պաշտպանին ուղղված խմբակային դիմում-բողոքներում բարձրացված որոշ հարցերի համատեղ քննարկումներում:

Հաստատության կայացման գործում իրենց գիտելիքներով, փորձով և խորհուրդներով զգալի ներդրում ունեն նաև նախարարությունների և զերատեսչությունների, կազմակերպությունների և հաստատությունների առանձին ներկայացուցիչներ, որոնք իրենց ամենօրյա աշխատանքով հաստատում են երկրում իրավական պետության կայացման նախադրյալների առկայությունը:

Պաշտպանի հաստատության կայացման գործընթացի բարենպաստ պայմանների շարքում իր ուրույն տեղն ունի հասարակության վստահությունը Պաշտպանի հաստատության հանդեպ, որի աճը մեծապես նպաստել է հաստատության կայացմանը:

Անհնարին է գերազնահատել անկեղծ շնորհակալական խոսքերի նշանակությունը հիմնականում երիտասարդ մասնագետներից կազմված հաստատության համար, չնայած, հաշվի առնելով Պաշտպանի աշխատակազմի համար սահմանված լիազորությունների շրջանակները, նրանց ոչ միշտ է հաջողվել աջակցել իրենց իրավունքների խախտմանը հանգեցրած գործողություններին արդարացի գնահատական ստանալու հույսը բոլորովին կորցած մարդկանց:

ԳԼՈՒԽ 2. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդու իրավունքների պաշտպանը ինքնուրույն և անկախ պաշտոնատար անձ է, որը ՀՀ Սահմանադրության և օրենքների, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի համաձայն իրականացնում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք, հոդված 2

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղղություններից կարևորագույնն է դիմում-բողոքների և դիմումատուների հետ աշխատանքը՝ ուղղված հանրային մարմինների և դրանց ներկայացուցիչների կողմից մարդու իրավունքների խախտումների վերհանմանն ու իրավունքի վերականգնմանը: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում մանրամասնված են Պաշտպանի լիազորություններն ու գործունեության մեթոդները:

Բացի այդ, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ի կետ 2-ով թվարկված են Պաշտպանի գործունեության իրավաբանական, կազմակերպչական, գիտական-վերլուծական, տեղեկատվական և այլ ուղղությունները: Դիմում-բողոքների և դիմումատուների հետ աշխատանքին զուգահեռ իրականացվող գործունեության այլ ուղղությունները կարևորվում են այն առումով, որ մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ միայն խախտված իրավունքների վերականգնում, այլև խախտումների կանխարգելում, վարչարարության և օրենսդրական դաշտի բարելավում, ընդհանուր առմամբ իրավագիտակցության բարձրացում: Գործունեության այս բոլոր ուղղությունները միասին ծառայում են հոդված 2-ում սահմանված նպատակին:

Պաշտպանի հաստատության աշխատանքի բաղկացուցիչ մասն են կազմում նաև իրավական ակտերի վերլուծություններն ու դրանց հետ կապված առաջարկների ներկայացումը, սեմինարների և խորհրդակցությունների կազմակերպումը, մասնակցությունը կազմակերպված թեմատիկ միջոցառումներին, այցելությունները մարզեր և առանձին բնակավայրեր, անագատության կամ սահմանափակ ազատության վայրեր, դատական նիստերի դիտարկումները և այլն:

Միջազգային պրակտիկան գալիս է ապացուցելու, որ հետզհետե ավելի ու ավելի է կարևորվում Պաշտպան-հասարակական կազմակերպություններ և Պաշտպան-զանգվածային լրատվական միջոցներ համագործակցությունը, քանի որ քաղաքացիական հասարակության այս խմբերն են ապահովում Պաշտպանի յուրահատուկ դերակատարությունը քաղաքացիական հասարակություն-պետություն հարաբերություններում:

Պաշտպանի գործունեության կարևորագույն մասն է կազմում նաև Պաշտպանի մասին օրենքի հոդված 26-ով նախատեսված աշխատանքը խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով ստեղծված փորձագետների խորհրդի շրջանակներում:

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 20.12.1993թ. 48/134 բանաձևով ընդունված «Մարդու իրավունքների խթանումը և պաշտպանությունը՝ Ազգային հաստատությունների կարգավիճակին վերաբերող սկզբունքներ» (Փարիզյան սկզբունքներ) փաստաթղթի «լիազորություններ և գործառույթներ» մասում սահմանված են մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատության կողմից իրականացվող գործառույթները:

Համաձայն դրանց ազգային հաստատությունը մասնակցում է այն զեկույցների նախապատրաստմանը, որոնք, ի կատարումն իրենց պայմանագրային պարտավորությունների, պետությունները պետք է ներկայացնեն ՄԱԿ-ի մարմիններին, կոմիտեներին և տարածաշրջանային հաստատություններին, անհրաժեշտության դեպքում ներկայացնում է իր կարծիքը, համագործակցում է ՄԱԿ-ի և այդ համակարգի կազմակերպությունների հետ, այլ երկրների մարդու իրավունքների խթանման և պաշտպանության իրավասու տարածաշրջանային և ազգային հաստատությունների հետ, հրապարակայնացնում է մարդու իրավունքների բնագավառում տիրող իրավիճակը:

Վերոնշյալ ուղղություններով 2005թ. իրականացված գործունեությունը կրել էր նպատակաուղղված բնույթ, քանի որ այն իր արտացոլումն է գտել դեռևս 2004թ. մշակված ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 2005-2008թթ. ռազմավարական ծրագրում:

Ռազմավարական ծրագիրը ներառում է յոթ հիմնական ռազմավարություններ՝

- **հաստատության անկախության երաշխավորում,**
- **մարդու իրավունքների պաշտպանություն և հանրային մարմինների կողմից մարդու իրավունքների պահպանման օժանդակություն,**
- **մարդու իրավունքների ոլորտում հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացում և հաստատության մատչելիության ապահովում,**

- հաստատության գործունեության արդյունավետության բարձրացում,
- օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հետ համագործակցության

	ընդամենը		միջին ամսական			
	2004թ.	2005թ.	2004թ.	2005թ.	տարբերություն	% հարաբերություն
ընդամենը	1800	2640	180	220	+40	122%
այդ թվում՝ գրավոր	1294	1551	129	129	0	100 %
մարզերից	710	998	71	83	+12	116%
այդ թվում՝ գրավոր	501	573	50	48	-2	96%

զարգացում,

- մարդու իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմների խթանում և հզորացում,
- միջազգային կապերի հաստատում և զարգացում, հաստատության ինտեգրում միջազգային համապատասխան ինստիտուտներին:

2.1. Դիմում-բողոքների և բողոքատուների հետ աշխատանք

Դիմում-բողոքների և մարդկանց հետ Պաշտպանի աշխատանքը ներառում է ստացված բանավոր և գրավոր դիմում-բողոքների ուսումնասիրությունն ու դրանցում արժարժված խախտված իրավունքների վերականգնումը, ինչպես նաև մարդկանց հետ աշխատանքը, այսինքն՝ խորհրդատվությունը, մարդկանց ընդունելությունը, այցելություններն ու ուսումնասիրությունները, արագ արձագանքումը, զանգվածային լրատվական միջոցներով լուսաբանված հասարակական հնչեղություն ստացած գործերով և մարդու իրավունքների զանգվածային խախտումների առնչությամբ սեփական նախաձեռնությունները:

2.1.1. Դիմում-բողոքների վիճակագրական վերլուծություն

2005թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է **2640 դիմում-բողոք 4264 անձանցից**, որոնցից **1551-ը՝ գրավոր**, իսկ մարզերից ստացված բողոքների թիվը կազմում է **998**, որից **573-ը՝ գրավոր**:


Աղյուսակ 1-ում բերվում է **2004թ. և 2005թ. Պաշտպանին ուղղված բողոքների քանակական համեմատությունը համաձայն միջին ամսական թվերի**, քանի որ 2004թ. Պաշտպանի աշխատանքը տևել է 10 ամիս (մարտ-դեկտեմբեր), իսկ 2005թ.՝ 12 ամիս (հունվար-դեկտեմբեր):

Աղյուսակ 1. 2004թ. և 2005թ. դիմում-բողոքների քանակական համեմատությունը

Այս համեմատությունը ցույց է տալիս, որ 2005թ. Պաշտպանին ուղղված բողոքների ընդհանուր թիվը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 22%-ով, այն դեպքում, երբ գրավոր դիմումների թիվը մնացել է անփոփոխ, իսկ մարզերի կտրվածքով գրավոր դիմումների թիվը 4%-ով նվազել է: Պատճառները վերհանելու նպատակով աղյուսակ 2-ում բերված է **2005թ. ստացած բողոքների շարժը երկամսյա կտրվածքով**:

Աղյուսակ 2. Դիմում-բողոքներն ըստ երկամսյակների

Ժամանակահատված	ընդհանուր	գրավոր	մարզերից	գրավոր
հունվար-փետրվար	400	239	110	94
մարտ-ապրիլ	440	348	211	141
մայիս-հունիս	510	262	214	108
հուլիս-օգոստոս	490	277	180	108
սեպտեմբեր-հոկտեմբեր	380	189	123	53
նոյեմբեր-դեկտեմբեր	420	236	160	69
ընդամենը	2640	1551	998	573



Ընդհանուր առմամբ ամենաշատ դիմում-բողոքները ստացվել են մայիս-հունիս ամիսներին (510 դիմում, այդ թվում մարզերից՝ 214), իսկ գրավորների ամենամեծ քանակը գրանցվել է մարտ-ապրիլ ամիսներին (348 դիմում-բողոք, այդ թվում մարզերից՝ 141): Այսինքն թե՛ Երևանից, թե՛ մարզերից այդ ամիսներին ստացվել են ամենամեծ թվով դիմումներ:

Սեպտեմբեր-հոկտեմբերին ցուցանիշները կտրուկ իջել են, ընդ որում մարզերինը՝ գրեթե 3 անգամ: Պատճառները պետք է փնտրել Պաշտպանի հաստատության հեղինակագրկման նպատակով ապատեղեկատվական քաղաքականության մեջ, որը մեծավ մասամբ անցկացվում էր հանրային հեռուստատեսությամբ, ինչպես նաև այլ հեռուստաալիքներով:

«Ինչ գիտենք մենք մարդու իրավունքների մասին» 2004թ. համազգային հարցման* համաձայն՝ Հայաստանում մարդու իրավունքների մասին տեղեկատվության հիմնական աղբյուր է հանդիսանում հեռուստատեսությունը (63.8%), որը կազմում է նույն ընտրանքի իրազեկվածների 80%-ը: Ընդ որում, հարցվածների կեսից ավելիի համար այդպիսի աղբյուր է ծառայում հանրային հեռուստատեսությունը, իսկ մարզերում՝ ճնշող մեծամասնությունը, քանի որ այն հիմնականում մենաշնորհային ծածկույթ ունի:

Անդրադառնալով դիմում-բողոքների շարժին ամսական կտրվածքով, հիշեցնենք, որ 2005թ. փետրվար-մարտ ամիսներին հեռուստատեսությամբ, այդ թվում և մարզային հեռուստաալիքներով, հեռարձակվում էր սոցիալական տեսահոլովակ**, որի նպատակն էր բնակչությանը ծանոթացնել Պաշտպանի հաստատությանը, այդ թվում՝ Պաշտպանի լիազորություններին և նրան դիմելու կարգին, ինչն իր ազդեցությունն է գործել մարտ-ապրիլ ամիսներին դիմում-բողոքների թվի աճի վրա:

Հանրային հեռուստատեսության կողմից իրականացվող և այլ հեռուստաալիքների կողմից օժանդակվող ապրիլ ամսից սկսված ապատեղեկատվական արշավը ոչ միայն

* «Ինչ գիտենք մենք մարդու իրավունքների մասին» 2004թ. համազգային հարցում՝ Հայաստանում, Երևան 2005թ.:

** Տեսահոլովակը պատրաստվել էր ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի օժանդակությամբ և ֆինանսավորմամբ, ՀՀ Ազգային ժողովի և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

բնակչության տեղեկատվություն ստանալու իրավունքի զանգվածային ոտնահարման փայլուն օրինակ հանդիսացավ, այլև հանգեցրեց պետության հանդեպ անվստահության խորացման և համատարած խուսափողական վերաբերմունքի:

	մարզի անվանում	քանակ	%
1.	Երևան	974	62.9
2.	Շիրակ	106	6.8
3.	Լոռի	104	6.7
4.	Կոտայք	67	4.3
5.	Արարատ	66	4.2
6.	Գեղարքունիք	64	4.1
7.	Արմավիր	57	3.7
8.	Սյունիք	34	2.2
9.	Տավուշ	31	2.0
10.	Վայոց Ձոր	22	1.4
11.	Արագածոտն	21	1.4
12.	Այլ	5	0.3

Հատկանշական է, որ գրավոր դիմումների թվի անկմանը զուգահեռ բանավոր դիմումների քանակի անկում չի եղել, հակառակը՝ հեռուստաարշավի ակտիվ փուլի ժամանակ գրանցվել է բանավոր բողոքների աճ: Այնուամենայնիվ, սեպտեմբեր-հոկտեմբերին գրանցվել է թե՛ բանավոր, թե՛ գրավոր դիմումների թվի կտրուկ


անկում, հատկապես մարզերից, որոնք, ինչպես արդեն ասվել է, համատարած գտնվում են հանրային հեռուստատեսության ազդեցության ներքո, և ուր այդ ժամանակահատվածում Պաշտպանի և նրա ներկայացուցիչների այցելությունները համեմատաբար քիչ էին:

Հեռուստաարշավի «թեժ» փուլն ընթանում էր Պաշտպանի և նրա աշխատակիցների՝ մարզեր կատարած բազմաթիվ այցելություններին զուգահեռ: Մարզային քաղաքներում և գյուղերում հանդիպումների ժամանակ բնակիչները մտահոգություն էին հայտնում իրենց բողոքների ներկայացման արդյունավետության կապակցությամբ, քանի որ Պաշտպանի դեմ ուղղված հեռուստատեսային ապակողմնորոշիչ քաղաքականությունն ակնհայտորեն վկայում էր խախտված իրավունքների վերականգնման հարցում իշխանությունների դժկամության մասին: Միշտ էլ տարածաշրջանների բնակչությունն ավելի զգայուն է տեղեկատվական ձեռնածությունների նկատմամբ, և քանի որ մարզերում այդպես էլ չիմնվեցին Պաշտպանի հաստատության մասնաճյուղեր, ուր մարդիկ կարող էին ստանալ հավաստի տեղեկատվություն և անմիջական խորհրդատվություն, նրանք գտնվում էին հանրային հեռուստատեսության անընդմեջ բացասական ազդեցության ներքո: Պաշտպանի հաստատության մատչելիության առջև նման խոչընդոտների ծառայումը հանգեցրեց արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքի երկարաժամկետ սահմանափակման:

Դիմում-բողոքների թվաքանակի տարածքային կտրվածքով համեմատությունը ցույց է տալիս, որ չնայած նախորդ տարվա համեմատությամբ մարզերից ստացվող բողոքների ընդհանուր քանակի ավելացման, այնուամենայնիվ գերակշռում են Երևանից ստացվող բողոքները: Աղյուսակ 3-ում բերված է 2005թ. Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների քանակական և տոկոսային պատկերը տարածքային կտրվածքով:

Աղյուսակ 3. Դիմում-բողոքները տարածքային կտրվածքով

ընդամենը	1551	100
----------	------	-----



Բացի հանրապետության մարզերից, աղյուսակ 3-ում տեղ են գտել նաև այլ բնակավայրերից (ՌԴ, ԱՄՆ, Ֆրանսիա, Ավստրալիա) ստացված դիմում-բողոքները:

Մարզերից ստացվող դիմում-բողոքների համեմատաբար փոքրաթվության կարևորագույն պատճառներից է վերջին տարիներին մարզերում փաստացի բնակչության թվի կտրուկ անկումը: Պաշտոնական տվյալներով* հարապետությունում փաստացի բնակվողների 63.7%-ը բնակվում է մարզերում, սակայն իրականում այդ թիվն ավելի փոքր է: Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ զգալի է նաև ներքին՝ մարզեր-մայրաքաղաք տեղաշարժը, բացի այդ, մարզերից աշխատանքային արտագաղթն ավելին է, քան մայրաքաղաքից:

Պաշտպանի և նրա աշխատակազմի մարզեր կատարած այցելությունների և ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ մարզերից և, առավել ևս, հեռավոր բնակավայրերից ստացվող դիմում-բողոքների փոքրաթվությունը մայրաքաղաքից ստացվող դիմումների համեմատությամբ խոսում է ոչ թե մարդու իրավունքների պաշտպանվածության ավելի բարձր մակարդակի, այլ բնակչության մերժողական վերաբերմունքին հանգեցրած մարդու իրավունքների պահպանության և պաշտպանության հանդեպ հանրային մարմինների անտարբերության ու ձևական վերաբերմունքի, իրազեկվածության ու իրավագիտակցության ցածր մակարդակի և Պաշտպանի հաստատության դժվարամատչելիության մասին: Այս ամենը ուղղակիորեն մատնանշում է մարզերում Պաշտպանի հաստատության մասնաճյուղերի ստեղծման անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով նաև, որ ի տարբերություն մարզերի, Երևանից ստացված դիմում-բողոքների մեծամասնությունը քաղաքացիները ոչ թե ուղարկում են փոստով, այլ բերում են անձամբ՝ ունենալով դրա անհամեմատ ավելի լայն հնարավորությունները:

Փորձը ցույց է տվել, որ Պաշտպանի և նրա ներկայացուցիչների հաճախակի և երկարաժամկետ այցելությունները արդյունավետ են ինչպես տեղում խորհրդատվություն տրամադրելու, այնպես էլ խախտված իրավունքների վերականգնման, և մինչև իսկ իրավունքների խախտումները կանխարգելելու տեսանկյունից: Անհրաժեշտ է, որպեսզի վերջապես մարզերում ստեղծվեն Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցչություններ՝ Պաշտպանի հաստատության մատչելիության մակարդակը բարձրացնելու նպատակով, ինչը, ինչպես ցույց են տալիս աղյուսակ 3-ում բերված վիճակագրական տվյալները, մյուս բոլոր հավասար պայմաններում ուղղակի երկու անգամ կավելացնի Պաշտպանին դիմելու մարդկանց հնարավորությունը: **Որևէ հիմնավորում չի կարող արդարացնել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատության մատչելիության ապահովման անտեսումը:**

Մարզերի կտրվածքով ինչպես 2004թ., այնպես էլ 2005թ. զգալի թիվ են կազմում աղետի գոտուց ստացված բողոքները, որոնք հիմնականում վերաբերում են բնակարանային խնդիրներին: Ընդհանուր առմամբ մարզերից ստացված բողոքները

* 2001թ. ՀՀ մարդահամար:


հիմնականում վերաբերում են սոցիալական ապահովման և աշխատանքային իրավունքներին, գյուղական համայնքներում՝ հողի սեփականության իրավունքի, խտրական մոտեցման, պաշտոնական դիրքի չարաշահման, ինչպես նաև սոցիալական քարտերի վերաբերյալ խնդիրներին:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի համաձայն՝ Պաշտպանը ծանոթանում է բոլոր դիմում-բողոքների հետ և ուսումնասիրության արդյունքների հիման վրա մեկամսյա ժամկետում որոշում է ընդունում՝ բողոքը քննարկման ընդունելու մասին, դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին, բողոքը ներկայացնողի համաձայնությամբ բողոքը այն պետական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար այն անձին փոխանցելու մասին, որի իրավասությանն է պատկանում բողոքի ըստ էության լուծումը, կամ բողոքը չքննարկելու մասին:

Աղյուսակ 4-ում բերված են 2005թ. ստացված գրավոր դիմում-բողոքների առնչությամբ ընդունված որոշումների, ինչպես նաև դիմումատուի խնդրանքով քննարկումը դադարեցված և ուսումնասիրության ընթացքում գտնվող դիմում-բողոքների վիճակագրական տվյալները:

Աղյուսակ 4. Դիմում-բողոքների առնչությամբ ընդունված որոշումները

	որոշում	քանակ	%
1.	ընդունված են քննարկման	534	34.4
2.	ներկայացվել են պաշտպանության հնարավորությունները	188	12.1
3.	փոխանցված են այլ մարմինների	159	10.2
4.	քննարկման չի ընդունվել	548	35.3
5.	քննարկումը դադարեցվել է դիմումատուի խնդրանքով	46	3.0
6.	ուսումնասիրության ընթացքում են	76	5.0
	ընդամենը	1551	100



Բողոքի քննարկման մերժումը ևս հիմնավորվում է օրենքի համաձայն և դիմողին բացատրվում է բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգը: Պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով և որոնք իր կարծիքով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերականգնման պահանջ չեն ներկայացնում:

Եթե բողոքում բարձրացված հարցն իր բնույթով կարող է լուծել նաև պետական այլ մարմինը կամ պաշտոնատար անձը, և եթե այդ անձը նախապես չի քննարկել տվյալ գործը, Պաշտպանը բողոքը ներկայացնողի համաձայնությամբ կարող է բողոքը քննարկման նպատակով փոխանցել նրան:


Բողոքը հանրային մարմինն փոխանցելիս Պաշտպանը վերահսկողություն է սահմանում դրա քննարկման նկատմամբ, ինչը, ինչպես ցույց տվեց հաստատության 2004-2005թթ. աշխատանքային փորձը, խիստ ցավազին է ընդունվում հանրային մարմինների կողմից, հատկապես՝ գլխավոր դատախազության:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ի համաձայն՝ քննարկված բողոքի արդյունքների հիման վրա Պաշտպանն առաջարկություններ է ներկայացնում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց, որոնց որոշումների կամ գործողությունների (անգործության) մեջ առկա է մարդու իրավունքների և ազատությունների խախտում, թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ՝ նշելով իրավունքի վերականգնման համար անհրաժեշտ և կատարման ենթակա հնարավոր միջոցառումները: Պաշտպանն իրավասու է նաև պատկան պետական մարմիններին առաջարկել կարգապահական կամ վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել այն պաշտոնատար անձանց, ովքեր իրենց որոշումներով կամ գործողություններով (անգործությամբ) խախտել են մարդու իրավունքները և կամ սույն օրենքի պահանջները: Բացի այդ, Պաշտպանը կարող է դատարան հայց ներկայացնել մարդու իրավունքները խախտող հանրային մարմնի և պաշտոնատար անձի՝ օրենքին և այլ իրավական ակտերին հակասող ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ, ինչպես նաև մարդու իրավունքների խախտման հարցերով դիմել Սահմանադրական դատարան:

Աղյուսակ 5-ում բերված են քննարկման ընդունված գրավոր դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքների վիճակագրական տվյալները:

Աղյուսակ 5. Գրավոր դիմում-բողոքների քննարկման արդյունքները

	արդյունք	քանակ
1.	վերականգնվել է իրավունքը	208
2.	իրավունքի խախտում բացակայել է	62
3.	սահմանադրական դատարան է դիմել	126
4.	դատարան հայց է ներկայացվել	1
5.	տույժի է ենթարկվել	4
6.	քննարկումը դադարեցվել է	54
7.	քննարկումը շարունակվում է	79



Աղյուսակ 5-ի 1-ին կետով նշված «վերականգնվել է խախտված իրավունքը» տողում տեղ են գտել այն դիմում-բողոքները, որոնցում նշված խախտված իրավունքները վերականգնվել են ինչպես Պաշտպանի կողմից իրավունքի խախտման մասին որոշում ընդունելուց առաջ՝ պատկան մարմիններին հարցումներ և առաջարկություններ

ներկայացնելու փուլում, այնպես էլ նման որոշում ընդունելուց հետո, երբ այն ներկայացվել է պատկան մարմնի՝ իրավունքի խախտում թույլ տված ներկայացուցչին, հաճախ նաև նրա վերադասին:

Աղյուսակ 5-ի 2-րդ կետում նշված են այն դիմում-բողոքներով քննարկման արդյունքները, որոնցում տեղ գտած հանգամանքների ուսումնասիրության ընթացքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում չի բացահայտվել:

Գրավոր դիմում-բողոքների քննարկման արդյունքում Պաշտպանի կողմից որոշում է կայացվել 126 խմբակային դիմում-բողոքներում արժարժված իրավունքների խախտումների կապակցությամբ դիմել Սահմանադրական դատարան Երևանի կառուցապատմանն առնչվող ՀՀ կառավարության որոշումների սահմանադրականությունը որոշելու նպատակով⁵:

Աղյուսակ 5-ի 6-րդ կետով նշված «քննարկումը դադարեցվել է» բաժնում տեղ են գտել այն դիմում-բողոքները, որոնց քննարկումը դադարեցվել է դիմումատուի կողմից դատարան դիմելու պատճառով կամ ուղղակի նրա խնդրանքով: Աղյուսակում գետնեղված է նաև այն դիմում-բողոքների թիվը, որոնցով քննարկումը 2005թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ դեռևս ավարտված չէր:

Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների 41%-ը կազմում են բանավորները: Բանավոր դիմումների-բողոքների զգալի մասը ստացվում է մարզեր, ազատագրկման վայրեր, զորամասեր և սահմանափակ ազատության այլ վայրեր կատարած Պաշտպանի այցելությունների ընթացքում, ինչպես նաև Պաշտպանի աշխատակիցների կողմից ընդունված հեռախոսազանգերով:

Բանավոր դիմում-բողոքների թվում առանձնանում են արագ արձագանքման գործողությունների արդյունքում արձանագրվածները: Նման դեպքերում, երբ ահազանգին ի պատասխան Պաշտպանի ներկայացուցիչները մեկնում են համապատասխան վայր, որպես կանոն, դիմողները պահանջում են տեղում լուծել խնդիրը, առանց իրենց պահանջը որպես բողոք գրանցելու: Հաճախ է պատահում, որ ինչ-ինչ հանգամանքներից դրդված արագ արձագանքման կարգով Պաշտպանի աջակցությանն են դիմում ոչ թե իրավունքի խախտումից անմիջական տուժողները, այլ նրանց հարազատները, հարևանները կամ այլոք:

Բանավոր դիմումների թվում զգալի մաս են կազմում բողոքներն ուղղված այսպես կոչված դժվարորսելի օրինագանցությունների և իրավախախտումների դեմ՝ կոռուպցիա, խտրականության դրսևորում, մասնավորապես սոցիալական ապահովության ոլորտում, դիմորդների ընդունելության մերժում կամ հետաձգում, ընդհանուր առմամբ դիմորդների նկատմամբ անտարբեր, անհարգալից, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորում:

Բանավոր բողոք ներկայացնողների ճնշող մեծամասնությունը ոչ միայն խուսափում են գրավոր դիմումներ ներկայացնելուց, այլև խնդրում են ուղղակի չարձանագրել բողոքը, ինչը մեծապես բացատրվում է այն մտահոգությամբ, որ իրենց կողմից դիմում ներկայացնելը (անգամ բանավոր) կարող է բացասաբար անդրադառնալ թե՛ իրենց և թե՛ իրենց հարազատների վրա:

Բանավոր բողոքների ներկայացման և արձանագրման նկատմամբ դիմումատուների կողմից ցուցաբերվող նման վերաբերմունքը ցույց է տալիս, որ մտավախությունն ու մերժողական վերաբերմունքն իշխանությունների հանդեպ զնալով էլ ավելի են խորանում:

⁵ Տե՛ս՝ Հավելված 1՝ Պաշտպանի դիմումը Սահմանադրական դատարան:

Հանրային մարմինների բարձրաստիճան ներկայացուցիչները տարեկան զեկույցներով հանդես գալիս բերում են օրինակներ իրենց օրինազանց և իրավախախտ աշխատակիցների նկատմամբ կիրառված պատիժների, ինչպես նաև օրինազանցության

Հանրային մարմնի անվանում	Քանակ
--------------------------	-------

կան իրավախա

խտման դեպքերում տվյալ մարմնի կողմից անհապաղ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ, այն դեպքում, երբ անգամ ակնհայտ օրինազանցությունն ու իրավախախտումը շատ անգամ չեն պատժվում: Հանրային մարմինների ներկայացուցիչների կողմից թույլ տրված իրավախախտումները հնարավորինս քողարկվում են, իսկ «ծայրահեղ» դեպքերում՝ քողարկման անհնարինության պայմաններում, նման գործողությունների համար պատիժն անընդհատ ձգձգվում է: Պաշտպանի հետ հանդիպումների ժամանակ բնակիչները բերում են հանրային մարմնի իրավախախտ ներկայացուցչի անպատիժ մնալու բազմաթիվ օրինակներ: Դրանց թվում քիչ չեն նաև հասարակական լայն հնչեղություն ստացած դեպքերը:

Ակնհայտ խախտումների դեպքում իրավունքի շուտափույթ չվերականգնումը, և, ընդհանուր առմամբ, իրավունքի յուրաքանչյուր բացահայտված խախտման դիմաց չվերականգնված իրավունքը և խախտում թույլ տված պաշտոնյայի անպատիժ մնալն ապացուցում են մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ հանրային մարմինների դժկամ վերաբերմունքը:


«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի կետ 4-ի համաձայն՝ «Պաշտպանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ սկսել հարցի քննարկում, հատկապես այն դեպքերում, երբ տեղեկություն կա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի բացառիկ հասարակական նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործել իրենց պաշտպանության իրավական միջոցները»:

Մամուլում տեղ գտած և հասարակական հնչեղություն ստացած գործերի, հասարակական և հասարակական-քաղաքական կազմակերպությունների կողմից հայտարարությունների ձևով ներկայացված, ինչպես նաև մարդու իրավունքների ոլորտում իրավիճակի և Պաշտպանի հաստատության գործունեության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող նյութերի վերլուծության արդյունքում 2005թ. ընթացքում Պաշտպանի կողմից սեփական նախաձեռնությամբ 16 ուսումնասիրություններ և հետաքննություններ են իրականացվել, որոնք հիմնականում առնչվել են մշակութային, ընտրական և անձի անձեռնմխելիության իրավունքներին:

Չկա այնպիսի հանրային մարմին, որի դեմ բողոք արձանագրված չլինի: Աղյուսակ 6-ում ներկայացված վիճակագրական տվյալները վկայում են, որ ստացված գրավոր դիմում-բողոքների շարքում շարունակում են քանակապես գերակշռել բողոքները հետևյալ մարմինների դեմ՝ ոստիկանություն՝ 192, դատարաններ՝ 166, դատախազություն՝ 94, արդարադատության նախարարություն և իր գերատեսչություններ՝ 93, պաշտպանության նախարարություն՝ 72, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն և սոցիալական ապահովության այլ մարմիններ՝ 179, տարածքային կառավարման մարմիններ՝ 205 (այդ թվում Երևանի քաղաքապետարան՝ 132), տեղական ինքնակառավարման մարմիններ՝ 153 (այդ թվում Երևանի քաղապետարաններ՝ 72):

Աղյուսակ 6. Դիմում-բողոքներն ըստ հանրային մարմինների

1.	Ոստիկանություն	192
2.	Դատարաններ	166
3.	Աշխատանքի և սոցապահովության նախարարություն	141
4.	Երևանի քաղաքապետարան	132
5.	Դատախազություն	94
6.	Արդարադատության նախարարություն	93
7.	Մարզպետարաններ	73
8.	Երևանի քաղապետարաններ	72
9.	Պաշտպանության նախարարություն	72
10.	Քաղաքապետարաններ (բացի Երևանից)	55
11.	Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	50
12.	Միգրացիայի և փախստականների վարչություն	49
13.	Սոցիալական ապահովության պետական հիմնադրամ	38
14.	Գյուղապետարաններ	26
15.	Կրթության և գիտության նախարարություն	22
16.	Առողջապահության նախարարություն	19
17.	Ջրային տնտեսության պետական կոմիտե	19
18.	Տրանսպորտի և կապի նախարարություն	12
19.	Առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	9
20.	Հարկային պետական ծառայություն	9
21.	Կառավարություն	8
22.	Քաղաքաշինության նախարարություն	6
23.	Արտաքին գործերի նախարարություն	5




ՀՀ նախագահի աշխատակազմի, Ազգային ժողովի, ազգային անվտանգության ծառայության, էներգետիկայի, ֆինանսների և էկոնոմիկայի, բնապահպանության, գյուղատնտեսության, մշակույթի և երիտասարդության հարցերով նախարարությունների, ինչպես նաև մաքսային պետական կոմիտեի, պետական գույքի կադաստրի վարչության, արտակարգ իրավիճակների վարչության, արժեթղթերի հանձնաժողովի, քաղաքացիական ծառայության խորհրդի, հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի դեմ **գրանցվել են 1-4 դիմում-բողոքներ**: Այլ և միաժամանակ մի քանի մարմինների դեմ Պաշտպանը **ստացել է 161 գրավոր դիմում-բողոք**: Դիմում-բողոքներում արտացոլված մարդու իրավունքների խախտումներն ըստ հանրային մարմինների մանրամասն վերլուծվում են Գլուխ 3-ում:

Անհրաժեշտ է նշել, որ չկա այնպիսի իրավունք, որի խախտման առնչությամբ բողոք արձանագրված չլինի: Աղյուսակ 7-ում ներկայացված վիճակագրական տվյալները վկայում են, որ ստացված գրավոր դիմում-բողոքների շարքում քանակապես գերակշռում են բողոքները հետևյալ իրավունքների խախտման առնչությամբ՝ պաշտպանության արդյունավետ միջոց՝ 738, սոցիալական ապահովություն՝ 180, կենսամակարդակի և բնակարանի իրավունք՝ 171, արդար դատաքննության իրավունք՝ 162, աշխատանքի իրավունք՝ 109, սեփականության իրավունք՝ 60:

Աղյուսակ 7. Դիմում-բողոքներն ըստ խախտված իրավունքների

	իրավունքի կամ ազատության անվանում	քանակ
1.	պաշտպանության արդյունավետ միջոց	738
2.	սոցիալական ապահովություն	180
3.	կենսամակարդակի և բնակարանի իրավունք	171
4.	արդար դատաքննության իրավունք	162
5.	աշխատանքի իրավունք	109
6.	սեփականության իրավունք	60
7.	խոսքի և տեղեկատվության ազատություն	19
8.	մտքի, խղճի և կրոնի ազատություն	15
9.	առողջության պահպանում	13
10.	կրթության իրավունք	13
11.	տեղաշարժի ազատություն	11
12.	խոշտանգումներից ազատություն	9
13.	ազատություն և անձեռնմխելիություն	5
14.	բնակարանի անձեռնմխելիություն	5



Կյանքի, օրենքով հավասար պաշտպանվածության, իրավաբանական օգնության, անձնական կյանքի հարգանքի, ընտանիքի պաշտպանության, խաղաղ հավաքների, հանգստի, մշակութային և այլ իրավունքներին, ինչպես նաև անմեղության կանխավարկածին, պատիժ բացառապես օրենքի հիման վրա սկզբունքին, ազգային փոքրամասնություններին, խտրականության արգելմանն անմիջականորեն առնչվող դիմում-բողոքները թվով 1-4-ն են: Այնուամենայնիվ, այս իրավունքների և սկզբունքների խախտումները մեծավ մասամբ ուղեկցում են այլ իրավունքների խախտումներին: Ընդհանուր առմամբ, մարդու իրավունքների խախտումները հաշվառելիս հիմք է ընդունվել դիմում-բողոքներում առկա գերակա իրավունքը: Օրինակ՝ անմիջականորեն խտրականության արգելման սկզբունքի և օրենքով հավասար պաշտպանված լինելու իրավունքի ոտնահարման առնչությամբ ստացված են քիչ թվով դիմում-բողոքներ, մինչդեռ, օրինակ, աղյուսակ 7-ում բերված բոլոր իրավունքների խախտումները հիմնականում տեղի են ունենում խտրական մոտեցման արդյունքում և օրենքի առջև հավասար լինելու իրավունքի ոտնահարման պայմաններում:

Դիմում-բողոքներում առավել հաճախ հիշատակվող հանրային մարմինների կողմից պարբերաբար խախտվող իրավունքների վերլուծությունն առավել իրազնական դարձնելու նպատակով աղյուսակ 8-ում բերված է հանրային մարմին-իրավունքի խախտում ընդհանուր սխեմատիկ պատկերը:

Աղյուսակ 8. Հանրային մարմին-իրավունքի խախտում ընդհանուր պատկերը

Հանրային մարմնի անվանում	Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ						
	ճշգրիտ կրթություն	ազատություն և անձեռնմխելիություն	խոշտամբումներից րսակցման արտադրություն	արժանապատիվ	քննակարգի անձեռնմխելիություն	տեղաշարժի ազատություն	ցուցման անվտանգություն
Ոստիկանություն							
Դատախազություն							
Արդարադատության նախարարություն							
Պաշտպանության նախարարություն							
Դատարաններ							

Հանրային մարմնի անվանում	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ				
	ազատություն և անձեռնմխելիություն	կենսամակարդակի և բնակարանի իրավունքներ	սեփականության իրավունք	աշխատանքի իրավունք	ցուցման անվտանգություն
Կառավարություն					
Աշխատանքի և սոցապահովության նախարարություն					
Երևանի քաղաքապետարան					
Երևանի թաղապետարաններ					
Մարզպետարաններ					
Քաղաքապետարաններ (քաղաքի Երևանից)					
Գյուղապետարաններ					
Դատարաններ					

2.1.2. Խորհրդատվություն

Ինչպես և 2004թ., 2005թ. ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության նամակների և քաղաքացիների ընդունելության բաժինն իրականացրել է քաղաքացիների ամենօրյա ընդունելություն: Ընդունելությունների ընթացքում աշխատակազմի ներկայացուցիչները ոչ միայն բողոքներ են ընդունել քաղաքացիներից, այլև խորհրդատվություն են տրամադրել նրանց: Քաղաքացուն խորհրդատվություն տրամադրելն ամենևին կապված չէ նրա կողմից դիմում-բողոք ներկայացնելու հետ՝ մայրաքաղաքից և նրան մոտ գտնվող վայրերից բնակիչների առնվազն 25%-ն այցելել են Պաշտպանի հաստատություն նախնական խորհրդատվություն ստանալու նպատակով, որից հետո միայն նրանք ներկայացել են համապատասխան փաստաթղթերով իրենց խնդրի առնչությամբ դիմում-բողոք ձևակերպելու նպատակով:

Օրը միջին թվով 6-8 այցելու ստացել է խորհրդատվություն ամենատարբեր խնդիրների շուրջ, որոնք մեծավ մասամբ վերաբերել են անմիջականորեն մարդու իրավունքների պաշտպանությանը և ընդհանուր առմամբ օրենսդրական դաշտին: Տարվա ընթացքում ամիսն առնվազն 3 անգամ Պաշտպանի աշխատակազմի իրավաբաններն այցելություններ են կատարել հանրապետության տարբեր բնակավայրեր, ուր զբաղվել են ստացված դիմում-բողոքներով վերհանված հարցերով և խորհրդատվություն տրամադրել բնակիչներին: Խորհրդատվություն է տրամադրվել նաև ազատագրկման և սահմանափակ ազատության վայրերում գտնվողներին:

Ինչպես անմիջական դիմումատուները, այնպես էլ այլ անձինք, նաև արտերկրից, օգտվել են նաև հեռախոսով խորհրդատվություն ստանալու հնարավորությունից, ինչը մեծապես նպաստել է Պաշտպանի հաստատության և մարդու իրավունքների մասին իրազեկության բարձրացմանն առավել հեռու բնակավայրերում: Խորհրդատվությունը հեռախոսով խիստ կարևոր է նաև այն անձանց համար, ովքեր տեղաշարժվելու դժվարություններ ունեն, օրինակ՝ ծերերը, հատուկ կարիքներով անձինք և այլն: Որոշ դեպքերում հեռախոսով խորհրդատվություն տրամադրելուն հետևել են իրավաբանների այցելությունները տեղաշարժվելու սահմանափակ հնարավորությամբ անձանց բնակության վայրեր:

Խորհրդատվության տրամադրումը, այդ թվում հեռախոսով, մեծապես նպաստել է Պաշտպանի հաստատության մատչելիության բարձրացմանը: Ավելի քան 6000 անմիջական և հեռախոսային խորհրդատվություն է տրամադրվել, որոնցից մոտ 300-ով դիմում-բողոք է ձևակերպվել: Խորհրդատվությունը կարևորվում է նաև այն իմաստով, որ անձը կողմնորոշվում է իրեն հուզող խնդիրների և իրավունքների պաշտպանության հնարավորությունների հարցում, ինչը նպաստում է նրա կողմից իր իրավունքների ապահովմանը հետագայում հետամուտ լինելուն, բացի այդ, կանխվում է օրենքով Պաշտպանի իրավասության շրջանակներում չգտնվող խնդիրների շուրջ դիմում-բողոքներ ներկայացնելը:

2.1.3. Ընդունելություն

Պաշտպանը կամ նրա բացակայությամբ Պաշտպանի տեղակալը 2005թ. ընթացքում ամեն շաբաթ ընդունելություն են իրականացրել՝ հիմնականում հանդիպելով այն անձանց հետ, ում կողմից ներկայացված էր դիմում-բողոք: Ընդունելությունն իրականացվել է գործի հետագա ուսումնասիրության համար լրացուցիչ և վերջնական պարզաբանումներ ստանալու նպատակով: Շաբաթական ընդունելության է եկել միջին թվով 15-20 անձ: Գրեթե ամեն օր կատարվել է արտահերթ ընդունելություն հանրապետության հեռավոր բնակավայրերից եկած անձանց համար:

2005թ. ընթացքում Պաշտպանն ընդունելություն է կազմակերպել հանրապետության 24 բնակավայրերում, այդ թվում բոլոր մարզկենտրոններում:

Մարզերում կազմակերպված յուրաքանչյուր ընդունելության եկել է ավելի քան 30 մարդ: Ընդունելություններն ուղեկցվել են իրավաբանների մանրամասն խորհրդատվությամբ և ուսումնասիրություններով մարդու իրավունքների

պաշտպանությանն անմիջակորեն առնչվող ինչպես անհատական, այնպես էլ համակարգային և զանգվածային բնույթ կրող տարբեր խնդիրների վերաբերյալ:

Մարզեր այցելություններն ու տեղերում ընդունելությունների կազմակերպումը կարևորվել են նաև տեղերում բազմաթիվ խնդիրների լուծման և իրավունքների վերականգնման առումով:

Ընդհանուր առմամբ տարվա ընթացքում Պաշտպանը հանդիպել է ավելի քան 1700 հոգու: Հանդիպումների և բանավոր շփումների ընթացքում է, որ դիմումատուներն անկաշկանդ արտահայտվել և իրենց բողոքներն են ներկայացրել իշխանական օղակներում արմատացած և, այսպես կոչված, դժվարորսելի երևույթների դեմ, ինչպիսիք են կոռուպցիան և մի շարք իրավունքների զանգվածային խախտումները: Նման իրավունքների շարքին են դասվում, մասնավորապես, անձի անձեռնմխելիության և ազատ արտահայտվելու իրավունքները, ինչպես նաև ժամանակակից ըմբռնմամբ կյանքի և, մեծավ մասամբ, արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքները: Ցավոք, պետական և քաղաքացիական ծառայողների արհամարհական վերաբերմունքը, ինչպես օրինակ՝ քաղաքացիների ընդունելությունների հետաձգումը, ընդունելության մերժումը, օրենքով նախատեսված պարտականությունների անբարեխիղճ կատարումը կամ դրանց անտեսումը, հաճախ նաև էթիկայի նորմերից դուրս վարքագիծը ինքնին հանդիսանում են մարդկային արժանապատվության նվաստացման օրինակներ, անկախ այն հանգամանքից՝ դրանք միտումնավոր են, թե ոչ:

Հատկանշական է, որ երբ հանդիպումներն ու ընդունելություններն անց են կացվել հասարակական կազմակերպությունների գրասենյակներում, այսինքն՝ չեզոք տարածքում, գրանցվել է այցելուների թվի կտրուկ աճ, ի տարբերություն այն դեպքերի, երբ դրանք անց են կացվել հանրային ցանկացած մարմնի, անգամ տեղական ինքնակառավարման մարմնի շենքում:

2.1.4. Այցելություններ և ուսումնասիրություններ

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի կետ 1-ի ենթակետ 1-ի համաձայն՝ բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանը բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով իրավասու է անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ՝ զորամիավորումներ և անձանց հարկադրական պահման վայրեր: Իր լիազորությունների շրջանակում Պաշտպանն օգտվում է հանրային մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև կազմակերպությունների ղեկավարների և այլ պաշտոնատար անձանց, հարկադրական պահման վայրերի վարչակազմի մոտ անհետաձգելի ընդունելության իրավունքից:

2005թ. ընթացքում Պաշտպանն ու իր աշխատակիցները բազմաթիվ այցելություններ և ուսումնասիրություններ են իրականացրել ամենատարբեր խնդիրների կապակցությամբ:

Հատկապես անհրաժեշտ է անդրադառնալ ծնողագուրկ և դժվար իրավիճակներում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանվածության խնդիրների վերհանման նպատակով իրականացված այցելություններին և ուսումնասիրություններին:

Պաշտպանն ու իր աշխատակիցներն այցելել են Երևանի «Մանկանի տուն», «Հատուկ տիպի մանկատուն» և «Չատիկ» մանկատուն, «Գյումրու տուն-ինտերնատ» և Շիրակի «Հույս» մանկատուն, ինչպես նաև կյանքի դժվար իրավիճակներում հայտնված երեխաների՝ Երևանի թիվ 1, 3, 8 և 18 հատուկ տիպի դպրոցներ:

Անցկացվել են հանդիպումներ հաստատությունների ղեկավարների և աշխատակիցների հետ, ինչպես նաև երեխաների կյանքի և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովվածության դիտարկումներ: Պաշտպանն իր զննահատականներն է ներկայացրել ՁԼՄ ներկայացուցիչներին:

Առանձնահատուկ պետք է նշել սեփական նախաձեռնությամբ և դիմում-բողոքների հիման վրա Պաշտպանի և նրա աշխատակազմի անդամների կողմից ազատագրված

վայրեր կատարած պարբերական այցելությունները: Ակնհայտ ծեծի հետքերի մասին Պաշտպանի բազմաթիվ դիմումներին քրեակատարողական հիմնարկների ղեկավարությունը տվել է միայն բացասական և իրողությունը մերժող պատասխաններ: Անվերականգնելի իրավունքների, օրինակ՝ խոշտանգումներից և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից և պատժից ազատ լինելու իրավունքի, խախտումների կանխարգելման և «վերականգնման» միակ միջոցը պատժելիության սկզբունքի կիրառումն է, այն է՝ քրեակատարողական հիմնարկների յուրաքանչյուր աշխատակից պետք է համարժեք պատիժ ստանա վերոնշյալ իրավունքի խախտման դիմաց, ինչը սակայն դժվար իրագործելի է, քանի որ առանց համապատասխան փաստաթղթերի նման իրավախախտումներն ու օրինազանցություններն անապացուցելի են:

2.1.5. Արագ արձագանքում

Պաշտպանի հաստատության գործունեության առաջին իսկ օրերից որպես առանձին կառուցվածքային ստորաբաժանում ստեղծվել է արագ արձագանքման խումբը, որի գործունեության հիմնական ուղղություններն են՝ անհապաղ միջամտություն պահանջող դեպքերի վերաբերյալ ահազանգերին անմիջապես արձագանքելը, առանց զգուշացման պարբերական այցելությունները ազատագրկման ու սահմանափակ ազատության վայրեր և մարդու իրավունքների պահպանման և պաշտպանության տեսակետից առավել ռիսկային այլ վայրեր:

Արագ արձագանքումը և՛ որպես բողոքն անմիջականորեն ընդունելու, և՛ որպես իրավունքի ոտնահարումը կանխարգելելու, և՛ որպես խախտված իրավունքը տեղում վերականգնելու միջոց, ինչպես դեռևս 2004թ., այնպես էլ 2005թ. գործունեության ընթացքում կրկին ապացուցեց իր արդունավետությունը մարդու իրավունքների պաշտպանության գործում:

Արագ արձագանքման խումբը աշխատակազմի իրավաբանների հետ յուրաքանչյուր շաբաթ առնվազն 2 անգամ մեկնել է օպերատիվ կանչերով: Բացի այդ, արագ արձագանքման խումբն իրականացրել է նաև պլանային այցելություններ, մասնավորապես, այնպիսի հիմնարկներ, ինչպիսիք են դպրոց-ինտերնատները, մանկատները, ծերանոցները, ինչպես նաև ինքնուրույն տեղաշարժվելու սահմանափակ հնարավորություններով անձանց բնակության վայրեր:

Որպես ահազանգին ի պատասխան արագ արձագանքման այցելության օրինակ կարող է հանդիսանալ Պաշտպանի աշխատակիցների մեկնումը Նոր Հաճն, ուր «Շողակն» ՓԲԸ մոտ 200 աշխատողներ գործադուլ էին հայտարարել: ՓԲԸ ղեկավարության և գործադուլավորների հետ հանդիպման արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն այն մասին, որ գործադուլավորների ներկայացուցիչը և ՓԲԸ ղեկավարն առանձին հանդիպումով կքննարկեն իրավիճակից դուրս գալու հնարավոր ելքերը:

Իրավունքի խախտման տեսակետից խիստ ուշագրավ է ահազանգին ի պատասխան արագ արձագանքման խմբի այցելությունը Երևանի Բուզանդի փողոց հասցեով: Տվյալ հասցեով փաստացի բնակվող և գրանցված փախստականներին դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակիցները, առանց այդ անձանց վտարելու մասին դատարանի որոշման, վտարում էին այդ տարածքից:

Այցելության արդյունքում պարզվեց, որ կա դատարանի որոշում, որտեղ նշված են այդ տարածքից վտարման ենթակա կոնկրետ անձանց անունները, սակայն, բացի այդ, որոշման մեջ կա նաև «այդտեղ բնակվող այլ անձանց» արտահայտությունը, որն էլ փախստականներին վտարելու հիմք է հանդիսացել: Դատարանների կողմից որոշումներում «այլ անձինք» բառակապակցության օգտագործումը և ԴԱՀԿ ծառայության կողմից նման որոշումների հիման վրա գործողություններ կատարելը կարելի է որակավորել որպես անպատասխանատու և արհամարհական վերաբերմունք մարդու համապատասխան իրավունքների պահպանության հանդեպ:

Ահազանգին ի պատասխան արագ արձագանքման խմբի այցելության դրական արդյունքներից է նաև Երևանում գտնվող վթարային շենքերից մեկի շուրջ առաջացած խնդրի լուծումը: Բնակիչների դուրս գալուց հետո շենքը վերածվել էր կրծողների կացարանի և աղբանոցի, ինչը, բնականաբար, սանիտարահիգիենիկ նորմերից ելնելով խիստ վտանգավոր էր շրջակայքում ապրողների համար: Պաշտպանի միջամտությամբ շենքն ամբողջովին քանդվեց, իսկ այդ տարածքը մաքրվեց:

Արագ արձագանքման օպերատիվ գործողությունների շնորհիվ խափանվել է նաև արտառոց մի օրինազանցություն, երբ Երևանի կենտրոնում ցանկանում էին կառուցել բեռնատար ավտոմեքենաների լվացման կետ:

Առավել ուշադրության են արժանի ազատագրկման և սահմանափակ ազատության վայրեր՝ քրեակատարողական հիմնարկներ, զորամիավորումներ և ՀՀ ներքին գործերի նախարարության բաժանմունքներ կատարած ինչպես պլանային, այնպես էլ արտահերթ՝ հանկարծակի և կանչին ի պատասխան, այցելությունները:

Պաշտպանի լիազորությունն անարգել այցելել նշված վայրեր սահմանված է Պաշտպանի մասին օրենքի հոդված 8-ի մաս 1-ի 2-րդ պարբերությամբ*։ Ավելին, հոդված 8-ի մաս 1-ի 4-րդ պարբերությամբ** երաշխավորվում է նշված վայրերում գտնվող անձանց հետ Պաշտպանի կամ նրա ներկայացուցչի առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու հնարավորությունն առանց միջամտության և գաղտնալսման:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ փորձեր են արվել խոչընդոտել Պաշտպանի նշված լիազորությունները կատարելուն: Պաշտպանության և Ներքին գործերի նախարարությունների տարբեր ներկայացուցիչներ թե՛ բանավոր և թե՛ անգամ նամակներով պարբերաբար հայտարարել են, որ այցելությունների մասին Պաշտպանը պետք է նախօրոք տեղեկացնի այն մարմնի կամ հիմնարկի ղեկավարությանը, ուր պատրաստվում է այցելել, ինչը բառացիորեն հակասում է և՛ Պաշտպանի մասին օրենքին, և՛ միջազգային իրավական նորմերին: Այս լիազորությունների առնչությամբ ցանկացած սահմանափակում կարող է նախատեսվել միայն օրենքով կամ այլ իրավական ակտով, ինչը սակայն կհակասի մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներին:

Չնայած նման խոչընդոտներին, Պաշտպանը յուրաքանչյուր անգամ այցելություն է կատարել առանց նախազուշացման և նրան հաջողվել է մտնել և հանդիպումներ անցկացնել անազատության կամ սահմանափակ ազատության վայրերում գտնվող անձանց հետ: Սակայն առայժմ հարցն օրակարգում է՝ նման ցանկացած մարմին կամ հիմնարկ պետք է ներքին հրահանգով սահմանի այն դրույթը, որ Պաշտպանն անարգել կարող է այցելել հաստատություն, և ցանկացած աշխատակից անմիջապես պետք է ներս հրավիրի Պաշտպանին:

Պաշտպանին ներս թողնելու առնչությամբ զանգահարելն ու ղեկավարությունից թույլտվություն հարցնելն արդեն իսկ նման հիմնարկների աշխատակիցների կողմից իրավախախտում է: Առավելագույնս նրանք կարող են տեղյակ պահել հաստատության ղեկավարությանը Պաշտպանի այցելության մասին, այն էլ նրան ներս հրավիրելուց հետո միայն:

Արագ արձագանքում պահանջող ահազանգերի պարբերաբար գրանցվող քանակական աճն ինքնին վստահության մեծ քվե է բնակչության կողմից Պաշտպանի

* Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչն իրավունք ունի իր նախաձեռնությամբ անարգել այցելել զորամիավորումներ, ձերբակալման վայրեր, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներ, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրեր՝ դրանցում գտնվող անձանց դիմումներն ընդունելու համար:

** Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչը պետք է երաշխավորվի զորամիավորումներում, ձերբակալման վայրերում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձանց հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու հնարավորությամբ: Պաշտպանի կամ նրա ներկայացուցիչների, այդ անձանց հետ խոսակցությունները ենթակա չեն միջամտության և գաղտնալսման:

հաստատության նկատմամբ՝ ի հակառակ մինչ օրս հասարակության որոշ խմբերի մոտ առկա մարդու իրավունքների պաշտպանության հանդեպ մերժողական վերաբերմունքի:

Նման վստահություն ձեռք է բերվել դեռևս 2004թ., երբ բազմաթիվ ահազանգերին ի պատասխան արագ արձագանքման խմբի համապատասխան աշխատակիցներն ու աշխատակազմի մասնագետները անմիջապես մեկնում էին իրավունքի խախտման դեպքերի վայրեր և իրականացնում իրավունքների պաշտպանությանն ուղղված կոնկրետ գործողություններ՝ խախտման կանխարգելումից մինչև իրավունքի վերականգնում: 2005թ. արագ արձագանքումն էլ ավելի լայնածավալ էր: Այն ևս մեկ անգամ ապացուցեց, որ սա գործունեության այն ձևն է, որը նպաստում է հասարակության և Պաշտպանի հաստատության միջև վստահության խորացմանը:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Պաշտպանի և հանրային մարմինների միջև հարաբերություններում ևս արագ արձագանքումը գործուն մեթոդ է, որի միջոցով, որպես կանոն, անհրաժեշտաբար ստեղծվում է աշխատանքային համագործակցության մթնոլորտ:

2.1.6. Ովքեր են դիմում Պաշտպանին

Համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 8-ի՝ Պաշտպանին կարող է դիմել **ցանկացած ֆիզիկական անձ**՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից ու գործունակությունից: Ուրիշի իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին կարող են դիմել միայն այդ **անձանց ներկայացուցիչները**, ինչպես նաև **մահացած անձանց ընտանիքների անդամներն ու ժառանգները**: Պաշտպանին **օրենքով նախատեսված դեպքերում** կարող են դիմել նաև **իրավաբանական անձինք**, իսկ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից՝ **խնամակալության և հոգաբարձության մարմինները**: **Պաշտոնատար անձինք** իրավունք ունեն Պաշտպանին դիմել միայն իրենց՝ **որպես ֆիզիկական անձանց** խախտված իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության նպատակով:

2005թ. ընթացքում Պաշտպանը ստացել է 2640 դիմում-բողոք 4264 անձանցից, որոնցից 1551-ը՝ գրավոր: Գրավոր դիմում-բողոքների մի մասը **խմբակային բողոքներ են**՝ բազմաբնակարան շենքի բնակիչներից, միևնույն աշխատանքային կոլեկտիվի անդամներից, ընդհանուր շահի շուրջ համախմբված անձանցից, գյուղական համայնքներից և այլն: **Դիմումատուների հիմնական մասը կանայք են**: Կանանց մասնակցությունը իրավունքի պաշտպանության խնդիրներում վկայում է, որ կանայք **առավել զգայուն և անհանդուրժող են** իրավունքների խախտման նկատմամբ: Բողոքատուների **ավելի քան 85%-ը սոցիալապես անապահով խավի ներկայացուցիչներ են**, իսկ **կեսից ավելին ունի բարձրագույն կրթություն**: Մեփականության, սոցիալական ապահովության և անձի անձեռնմխելիության իրավունքների խախտումներից բողոքող դիմումատուները հիմնականում հանդիսանում են յուրահատուկ խոցելի խմբերի ներկայացուցիչներ, ինչպիսիք են՝ **միայնակ, տարեց և սեփական իրավունքները պաշտպանելու անկարող մարդիկ, վերասոցիալիզացման կարիք ունեցող նախկինում ազատագրված անձինք, հոգեկան հիվանդությամբ տառապող անձինք**, որոնք բոլորից առավել են զգում պետության հոգածության և պաշտպանության կարիքը:

Բողոքատուների թվում զգալի մաս են կազմում նաև այնպիսի **խոցելի և հատուկ խմբերի ներկայացուցիչներ**, ինչպիսիք են՝ **հատուկ կարիքներով անձինք**, ինչպես նաև խորհրդային ժամանակաշրջանում **բռնադատվածները**:

Առանձնահատուկ տեղ են գրավում **զինված բախման արդյունքում տուժած անձինք**՝ պատանդները, ռազմագերիները, անհայտ կորածները, բռնի տեղահանվածները, փախստականները, հաշմանդամ դարձած ազատամարտիկները և նրանց ընտանիքների անդամները, զոհված ազատամարտիկների ընտանիքները:

Պետության կողմից անուշադրության մատնված վերոնշյալ խոցելի և հատուկ խմբերի կողքին պետք է նշել նաև **բնակտարացքից զուրկ՝ անտուն, մարդկանց**, որոնց բողոքները հիմնականում առնչվում են անձնագրային խնդիրներին:

Մարդու իրավունքները հանդիսանում են ուղղահայաց՝ անհատ-պետություն իրավահարաբերությունների առարկա, ըստ այդմ մարդու իրավունքների խախտման մասին խոսելիս ի նկատի են առնվում հանրային մարմինների ներկայացուցիչների կողմից անհատների նկատմամբ այդ ոլորտում թույլ տրված իրավախախտումներն ու օրինագանցությունները: **Այնինչ, հաճախ հանրային մարմինների ներկայացուցիչներն իրենք են տուժում իրենց իրավունքների խախտումներից, որոնք թույլ են տրվում ինչպես վերադասի և այլ հանրային մարմինների ներկայացուցիչների կողմից, այնպես էլ ուղղակիորեն բխում են մի շարք օրենսդրական թերություններից:**

Քանի որ մարդու իրավունքի խախտումները վերլուծելիս հիմնականում անդրադարձ է արվում հանրային մարմինների ներկայացուցիչների կողմից թույլ տրված խախտումներին և որպես բողոքատուներ մանրամասնորեն ներկայացվում են անհատներն իրենց տարբեր կարգավիճակներով, ստորև ներկայացված են **պետական ծառայողների իրավունքների պահպանման ու պաշտպանության վերաբերյալ ուսումնասիրությունների որոշ եզրակացություններ:**

Առաջնահերթ լուծում են պահանջում պետական ծառայողների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների սոցիալական պաշտպանվածության խնդիրները: Հանրային մարմինների աշխատակիցների վարձատրության ավելացումը և նրանց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացումն ընդհանուր առմամբ կնպաստեն թե՛ մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը և թե՛ կոռուպցիայի մակարդակի իջեցմանը:

Ժամկետային զինծառայողների իրավունքների պաշտպանությանը վերաբերող ուսումնասիրություններին զուգահեռ ուսումնասիրվել են հրամանատարական անձնակազմի իրավունքներին վերաբերող խնդիրները: Մասնավորապես, արձանագրվել է, որ **հրամանատարական անձնակազմին վերաբերող մի շարք սոցիալական խնդիրներ մնում են չլուծված՝** աշխատավարձ, բնակարանային խնդիրներ, տրանսպորտային դժվարություններ և այլն:

Հատուկ ուշադրության են արժանի **քրեակատարողական հիմնարկների ծառայողների խնդիրները՝** բավարար վարձատրություն, ծառայության վայրում հանգստի պայմաններ, ծառայության հատուկ պայմանների դիմաց փոխհատուցում և այլն: **Քրեակատարողական հիմնարկների** հակասանիտարական և, ընդհանուր առմամբ, **խիստ անբավարար ֆիզիկական պայմանները հավասարապես վտանգավոր են** ինչպես հիմնարկներում գտնվող ազատազրկված անձանց, այնպես էլ աշխատակիցների առողջության համար:

Քաղաքացիական ծառայողների իրավունքների պաշտպանության նպատակով ստեղծվել է Քաղաքացիական ծառայության խորհուրդ: Նման խորհուրդ է անհրաժեշտ նաև **հատուկ ծառայությունների՝** ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, մաքսային և հարկային տեսչությունների **ծառայողների իրավունքների պաշտպանության նպատակով:**

Չնայած դատարանների նյութական վիճակի բարելավման և դատավորների աշխատավարձերի բարձրացման, **դատարանների տեխնիկական սպասարկումն ու ֆինանսավորումը, ինչպես նաև դատավորների վարձատրությունը մնում են անբավարար:**

Եզրակացությունները հիմնված են ընդհանուր դիտարկումների և ուսումնասիրությունների, ինչպես նաև այցելությունների և հանրային մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում անցկացված հարցումների վրա:

Նման բնույթի գրավոր դիմում-բողոքների բացակայությունը բացատրվում է այդ խնդիրների լուծմանն ուղղված համակարգային և օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտությամբ, ինչը գիտակցվում է նաև պետական ծառայողների կողմից:

Հանրային մարմինների ներկայացուցիչներից ստացված դիմում-բողոքները հիմնականում վերաբերում են աշխատանքից ազատման, աշխատանքի դիմաց չվարձատրելու խնդիրներին, որոնք վերադասի կամայականության արդյունք են հանդիսանում: Բավական է մատնանշել ոստիկանության երկու աշխատակիցների լիազորությունների անհիմն կասեցման առնչությամբ դիմում-բողոքը (տե՛ս՝ Գլուխ 3, 3.1. Ոստիկանություն, Օրինակ 13), որով ներկայացված դեպքը վերադասի կամայական մոտեցումներից հանրային մարմնի ներկայացուցչի լիակատար անպաշտպանության բնորոշ օրինակ է: Նման հիմքերով բողոքները այլ հանրային մարմինների ներկայացուցիչների կողմից նույնպես զգալի թիվ են կազմում:

2.2. Մարդու իրավունքների վերականգնմանն ուղղված գործունեություն

2.2.1. Պաշտպանի հարաբերությունները հանրային մարմինների հետ

Իշխանության ներկայացուցիչների հետ համագործակցությունն իր մեջ ներառում է մի շարք գործողություններ, որոնցից առաջնայինն է աշխատանքը դիմում-բողոքների առնչությամբ:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի համաձայն՝ բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանը բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով իրավասու է հանրային մարմիններից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել և ստանալ բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր, բողոքի ուսումնասիրման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, իրավասու հանրային մարմիններին հանձնարարել բողոքի ուսումնասիրության ընթացքում պարզելու ենթակա հարցերի վերաբերյալ անցկացնել փորձագիտական հետազոտություններ և պատրաստել եզրակացություններ, ծանոթանալ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ դատավճիռները, վճիռները, որոշումներն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է գործերի հարուցումը, ծանոթանալ բողոքին առնչվող ցանկացած նյութի և փաստաթղթի:

Հանրային մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են իրենց իրավասությանը վերաբերող պահանջվող նյութեր և փաստաթղթեր, ինչպես նաև բողոքը քննարկելու համար անհրաժեշտ ցանկացած տեղեկություն ներկայացնել Պաշտպանին անվճար և անարգել: Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը կամ տեղեկությունները պետք է ուղարկվեն Պաշտպանին հնարավորինս արագ:

Դիմում-բողոքը քննարկման ընդունելուց հետո, որպես կանոն, Պաշտպանի կողմից հարցում է ուղղվում համապատասխան հանրային մարմին, կամ Պաշտպանի ներկայացուցիչներն այդ մարմին են այցելում բողոքում բերված տվյալները համադրելու և ստեղծված իրավիճակի մանրամասները ճշտելու նպատակով:

Անհրաժեշտ է նշել, որ նման այցելությունների և հանդիպումների արդյունքում ոչ միայն պարզաբանվում են դիմումատուների բողոքներում նկարագրված իրավունքների խախտման շուրջ ստեղծված իրավիճակների մանրամասները, այլև վերհանվում են պետական ծառայողների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների իրավունքների պաշտպանվածության մակարդակը և, ընդհանուր առմամբ, տվյալ հանրային մարմնի և դրա ներկայացուցիչների կողմից մարդու իրավունքների խախտման խորքային պատճառները:

Այն դեպքերում, երբ հարցումները, այցելություններն ու հանդիպումները չեն հանգեցնում խախտված իրավունքների վերականգնմանը, Պաշտպանը, ամփոփելով իրավիճակի ուսումնասիրությունն ու համապատասխան իրավական ակտերի վերլուծությունը, նամակով դիմում է հանրային մարմնին՝ գնահատական տալով իրավունքի խախտում թույլ տված հանրային մարմնի ներկայացուցչի գործողություններին և նշելով խնդրի լուծման եղանակները: Եթե այս դեպքում ևս հարցը չի լուծվում կամ անտեսվում են նամակում շարադրված առաջարկները, Պաշտպանը հանրային մարմնի կողմից իրավունքի խախտման մասին որոշում է կայացնում⁶, որը տրամադրվում է ինչպես համապատասխան հանրային մարմնի ներկայացուցչին, այնպես էլ բողոքատուին:

2005թ. ընթացքում Պաշտպանը բազմաթիվ հանդիպումներ է ունեցել հանրային մարմինների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են ինչպես առանձին դիմում-բողոքների անընդհատ ձգձգվող լուծումներին առնչվող խնդիրներ, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ընդհանուր առմամբ առավել հաճախ արժարժվող և բողոքներում բարձրացվող հիմնահարցեր: Նման հանդիպում-քննարկումների արդյունքում բարձրացել է Պաշտպանի հաստատության և հանրային մարմինների միջև նամակագրության մշակույթի և կարգապահության մակարդակը:

Հաճախ անհրաժեշտ է լինում հանդիպել ոչ միայն իրավունքի խախտում թույլ տված հանրային մարմնի ղեկավարի, այլև նրա վերադասի հետ: Այդ առնչությամբ նախօրոք պատրաստած հարցերի շրջանակներում հանդիպումներ են կայացել ինչպես գերատեսչությունների ղեկավարների և նախարարների, այնպես էլ ՀՀ վարչապետի հետ, որոնց ընթացքում Պաշտպանի կողմից բարձրացվել և առաջարկություններ են ներկայացվել ինչպես օրենսդրական փոփոխությունների, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայի հիմնահարցերի առնչությամբ: Չնայած հասարակական հնչեղություն ստացած և խմբակային դիմում-բողոքներով ներկայացված գործերով հիմնականում չի հաջողվել հասնել դրական արդյունքների, նման հանդիպում-քննարկումների ընթացքում լուծվել են զգալի թվով առանձին գործեր և մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող մի շարք հիմնահարցեր:

Ստացված խմբակային դիմում-բողոքների հիման վրա հասարակական հնչեղություն ստացած և հրատապ լուծում պահանջող սոցիալական քարտերի և Երևանի կառուցապատման շուրջ ծավալված խնդիրների կապակցությամբ Պաշտպանը նամակներ է հղել ՀՀ նախագահին⁷, ակնկալելով նրա միջամտությունը դրական լուծում ստանալու նպատակով, սակայն ստացվել են բացասական պատասխաններ: 2005թ. ընթացքում Պաշտպանը գրավոր և բանավոր դիմել է ՀՀ նախագահին մի շարք հրատապ լուծում պահանջող խնդիրների առնչությամբ հանդիպման ակնկալիքով: Հանդիպման անհրաժեշտությունը հիմնավորելու և քննարկվելիք հարցերի շրջանակը ներկայացնելու նպատակով հանդիպում է կազմակերպվել ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի հետ, այնուամենայնիվ, ՀՀ նախագահի հետ հանդիպում չի կայացել:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ նախագահին առընթեր վերահսկիչ հանձնաժողովի հետ համագործակցության շնորհիվ **Արցախյան ազատամարտում զոհված կամ հաշմանդամ դարձած 28 անձանց ընտանիքներին** վարձակալության իրավունքով տրամադրված հողատարածքների վերաբերյալ գործը մասնակիորեն լուծում է ստացել (**տե՛ս՝ Գլուխ 3, 3.10. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, 3.10.3. կետ, Օրինակ 81**):

2005թ. ընթացքում Պաշտպանը հանդիպել է Ազգային ժողովի խումբ-խմբակցությունների ղեկավարների և առանձին պատգամավորների հետ՝ ինչպես դիմում-բողոքներում արժարժված, այնպես էլ ընդհանուր առմամբ մարդու իրավունքների

⁶ Տե՛ս՝ Հավելված 3՝ Պաշտպանի որոշումները մարդու խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ առաջարկ ներկայացնելու մասին:

⁷ Տե՛ս՝ Հավելվածներ 4.1. և 4.2.՝ Պաշտպանի նամակները ՀՀ նախագահին սոցիալական քարտերի շուրջ դժգոհությունների և Երևանի կառուցապատման ծրագրերի առնչությամբ:

պաշտպանության ոլորտում եղած խնդիրների քննարկման նպատակով: Բացի այդ, հանդիպումների ընթացքում Պաշտպանի կողմից առաջարկություններ են ներկայացվել օրենսդրական բարեփոխումների անցկացման կապակցությամբ, մասնավորապես, խոցելի խմբերին վերաբերող, ինչպես նաև սահմանադրական փոփոխությունների տարածման, լայն հասարակության իրազեկման և մարդու իրավունքների մասին դրույթների կատարելագործման ուղղությամբ:

Հասարակական հնչեղություն ստացած և Պաշտպանին ուղղված խմբակային դիմում-բողոքներով ուսումնասիրված երկու գործերով՝ Նորքի այգիներ 227 հասցեով գտնվող նախկին ՀԿԿ Կենտկոմի բարձրագույն դպրոցի շենքում բնակվող փախստականների տասնյակ ընտանիքների բնակարանային խնդրի և նախկինում մահապատժի դատապարտված, իսկ այժմ պատժի փոխարինմամբ ցմահ ազատազրկված անձանց նկատմամբ մարդասիրական սկզբունքների կիրառման խնդրի առնչությամբ, Պաշտպանի կողմից կազմակերպվել են համատեղ քննարկումներ, որոնց մասնակցել են ինչպես բողոքատուները, ՀԿ-ների և Պաշտպանի գլխավորությամբ հաստատության ներկայացուցիչներ, այնպես էլ պատկան հանրային մարմինների՝ ԱԺ, կառավարության և դրան առընթեր միգրացիայի ու փախստականների հարցերով վարչության, արդարադատության նախարարության և դրա գերատեսչությունների, գլխավոր դատախազության և այլ կառույցների պաշտոնատար անձինք: Ուշագրավ է այն, որ համատեղ քննարկումների ընթացքում հանրային մարմինների ներկայացուցիչները անընդմեջ փաստարկներ էին բերում այն մասին, որ իրենց գործողությունները օրենքի շրջանակներում են: Սակայն արդյունքում նրանք ստիպված էին ընդունել, որ իրենց գործողությունների արդյունքում խախտվել և խախտվում են մարդկանց իրավունքներ: Պաշտպանի դերը, մասնավորապես, կայանում էր նրանում, որպեսզի վերհանի այն ցավալի փաստը, որ պետությունն այս երկու դեպքերում չի կարողացել պաշտպանել կոնկրետ խմբերի ներկայացուցիչների իրավունքները, և առաջարկի լուծման տարբերակներ հօգուտ մարդու իրավունքների պաշտպանության:

Պաշտպանի հաստատության կողմից կազմակերպված՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի հիմնախնդիրներին վերաբերող միջոցառումներին՝ սեմինարներ, կոնֆերանսներ, կլոր սեղաններ և այլն, մասնակցել են նաև հանրային մարմինների ներկայացուցիչներ: Բացի այդ, Պաշտպանի կողմից կազմակերպվել են հանդիպումներ հանրային մարմինների և այլ երկրների օմբուդսմանների, նրանց ներկայացուցիչների և Պաշտպանին այցելած օտարերկրյա մասնագետների միջև:

Պաշտպանի և հանրային մարմինների միջև համագործակցություն է ծավալվել միջազգային հանդիպումներին Պաշտպանի մասնակցության, ելույթների և զեկույցների, ինչպես նաև այլ անհրաժեշտ նյութերի նախապատրաստման և ներկայացման շուրջ:



Մասնավորապես, հակահետևանքալիցանային խնդիրներին նվիրված միջազգային հանդիպմանը նախապատրաստվելիս Պաշտպանին աջակցել են ՀՀ արտաքին և ներքին գործերի նախարարությունները, միջազգային ահաբեկչության խնդրին նվիրված կոնֆերանսի համար անհրաժեշտ նյութերը տրամադրվել են ՀՀ ոստիկանության և գլխավոր դատախազության կողմից, զինված բախումներից տուժած անձանց իրավունքներին նվիրված միջոցառման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախարարության և կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների հարցերով վարչության կողմից և այլն:

2005թ. ընթացքում Պաշտպանի և հանրային մարմինների ներկայացուցիչների միջև ծավալվել է ակտիվ նամակագրություն: Հանրային մարմիններին ուղղված, նրանց կողմից պատասխանված, չպատասխանված և ընթացիկ նամակների վիճակագրական պատկերը ներկայացված է աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Պաշտպանի նամակներն ուղղված հանրային մարմիններին, նրանց կողմից պատասխանված, չպատասխանված և ընթացիկ նամակները

	Հանրային մարմնի անվանում	Ուղարկված	Պատասխանված	Չպատասխանված	Ընթացիկ
1.	Երևանի քաղաքապետարան	141	63	32	46
2.	Ոստիկանություն	102	46	13	43

3.	Երևանի թաղապետարաններ	100	43	18	39
4.	Մարզպետարաններ	89	42	21	26
5.	Դատախազություն	85	24	23	38
6.	Պաշտպանության նախարարություն	72	24	17	31
7.	Քաղաքապետարաններ (բացի Երևանից)	68	32	18	18
8.	Արդարադատության նախարարություն	62	22	15	25
9.	Աշխատանքի և սոցալաիտվության նախարարություն	58	13	8	37
10.	Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	56	22	13	21
11.	Սոցիալական ապահովության պետական հիմնադրամ	36	9	2	25
12.	Կրթության և գիտության նախարարություն	32	7	11	14
13.	Սիզրագիայի և փախստականների վարչություն	31	3	6	22
14.	Գյուղապետարաններ	25	12	10	3
15.	Ջրային տնտեսության պետական կոմիտե	23	10	4	9
16.	Դատարաններ	18	4	9	5
17.	Առողջապահության նախարարություն	15	6	6	3
18.	Քաղաքաշինության նախարարություն	10	5	4	1
19.	Հարկային պետական ծառայություն	9	1	3	5
20.	Կառավարություն	8	4	3	1
21.	Մշակույթի և երիտասարդության նախարարություն	7	2	3	2
22.	Տրանսպորտի և կապի նախարարություն	5	1	2	2
23.	Արտակարգ իրավիճակների վարչություն	4	1	3	0
24.	Պետական գույքի կառավարման վարչություն	4	2	2	0
25.	Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	4	1	3	0
26.	ՀՀ նախագահի աշխատակազմ	3	2	1	0
27.	Ազգային ժողով	3	1	2	0
28.	Բնապահպանության նախարարություն	3	1	2	0
29.	Էներգետիկայի նախարարություն	3	1	1	1
30.	Տարածքների կառավարման նախարարություն	3	0	3	0
31.	Ազգային անվտանգության ծառայություն	2	2	0	0
32.	Գյուղատնտեսության նախարարություն	2	0	2	0
33.	Առևտրի և տնտեսության զարգացման նախարարություն	2	2	0	0
34.	Արտաքին գործերի նախարարություն	2	1	1	0
35.	Մաքսային պետական կոմիտե	1	0	1	0
36.	Այլ	42	7	23	12
Ընդամենը		1130	416	288	429



2.2.2. Դրական արդյունքներով ավարտված գործերի մասին

Պաշտպանի հաստատության գործունեության դրական արդյունքների մասին խոսելիս նախ և առաջ պետք է նշել, որ զգալի մաս են կազմում նաև այն դեպքերը, երբ **հանրային մարմինը ինչ-ինչ պատճառներով հրաժարվում է վերականգնել իր իսկ կողմից խախտված իրավունքը**, և այդպիսով խնդիրը հոգուտ դիմումատուի չի լուծվում: Այնուամենայնիվ, նման դեպքերում պակաս կարևոր չէ **հանրային մարմնի ներկայացուցչի զգաստացումը**, դիմումատուի ընդունելության պատշաճ կազմակերպումն ու անցկացումը, խնդրի լուծման հեռանկարների վերաբերյալ պարզաբանումների տրամադրումը և, ընդհանուր առմամբ, դիմորդի նկատմամբ վերաբերմունքի դրական փոփոխությունը:

Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, երբ ոստիկանությունը չի կատարում ընտանիքին՝ իրենց հարազատի բերման ենթարկելու մասին տեղյակ պահելու պարտականությունը, սակայն բերման ենթարկվածի հարազատներն **անմիջապես ահազանգում են Պաշտպանին և պահանջում նրա միջամտությունը**, կամ երբ ԴԱՀԿ ծառայության աշխատակիցների կողմից վտարման հետ կապված կատարողական գործողություններ կատարելիս վտարվողը պահանջում է Պաշտպանի կամ նրա ներկայացուցչի մասնակցությունը, իսկ իրավունք հայցողը **հանրային ծառայողին զգոնացնում է Պաշտպանին դիմելու սպառնալիքով**: Այս և նման այլ օրինակներ արդեն իսկ վկայում են դրական արդյունքների մասին:

Այսպիսով, Պաշտպանն իր միջամտություններով ոչ միայն հասնում է խախտված իրավունքի վերականգնմանը, այլև հանրային ծառայողների կողմից դիմորդների նկատմամբ պատշաճ վերաբերմունք դրսևորելու մշակույթի ձևավորմանը:

Անշուշտ դրական է դիմում-բողոքի այնպիսի լուծումը, երբ ոտնահարված իրավունքը վերականգնվում է պատկան մարմնի կողմից՝ խախտում թույլ տված ներկայացուցչի կամ նրա վերադասի գործողություններով՝ ի պատասխան Պաշտպանի միջամտության:

Որպես կանոն, դիմումատուն բողոքում նշում է ոչ թե մեկ, այլ մի քանի ոտնահարված իրավունք: Դիմում-բողոքի ուսումնասիրության և քննարկման ընթացքում պարզվում է, որ կարելի է վերականգնել նշված խախտված իրավունքներից մեկը կամ մի քանիսը, այսինքն՝ բողոքին տալ մասնակի դրական լուծում, քանի որ մնացած առումներով դրական լուծումն անհնարին է՝ օրինակ, դատարան դիմելու ժամկետն է անցել կամ վարչական լուծում արդեն չի կարող տրվել:

Դրական լուծման օրինակներ են նաև այն դեպքերը, երբ դիմում-բողոքի քննարկման ընթացքում իրավունքի վերականգնման շուրջ գտնվում է «փոխզիջումային» կամ միջանկյալ լուծում: Օրինակ, երբ դիմումատուն պահանջում է վերականգնել իրեն նախկին աշխատանքին, սակայն այդ աշխատատեղն արդեն զբաղեցված է ուրիշի կողմից, գործատուն նրան տրամադրում է այլ աշխատանք:

Շատ դեպքերում դիմումատուները բողոքում են մասնավոր սեկտորի ներկայացուցիչներից, այլ ոչ թե հանրային մարմիններից, ինչի կապակցությամբ Պաշտպանն իրավասու չէ դիմում-բողոքներ ընդունելու և կամ առաջարկություններ ներկայացնելու մասնավոր սեկտորի ներկայացուցիչներին: Նման դեպքերում հիմնականում տրվում է խորհրդատվություն և բացատրվում են իրավունքի պաշտպանության հնարավորությունները:

Այնուամենայնիվ, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը չի արգելում Պաշտպանին դիմում-բողոքում բարձրացված խախտումների առնչությամբ միջնորդության նամակով դիմել մասնավոր իրավաբանական անձին: Այստեղ կարելի է վկայակոչել «Էլեկտրացանցեր» ՓԲԸ դեմ ուղղված դիմում-բողոքները, որոնցից գրեթե բոլորով լուծման դրական արդյունք է գրանցվել, այն դեպքում, երբ Պաշտպանի կողմից, բնականաբար, առաջ չի քաշվել դրական լուծում պարտադրող օրենքի որևէ դրույթ:

Պաշտպան-մասնավոր սեկտոր համագործակցության դրական արդյունքները բազմաթիվ են, և դրանց հաջողվել է հասնել Պաշտպանի աշխատանքի և մասնավոր անձի կամ կազմակերպության բարի կամքի դրսևորման շնորհիվ:

Խնդրի դրական լուծման օրինակներ են գրանցվել նաև հորիզոնական իրավահարաբերություններում, մասնավորապես, սեփականության առնչությամբ, որոնց միջամտելու թե՛ իրավասություն և թե՛ արգելք նույնպես սահմանված չէ Պաշտպանի մասին օրենքով: Օրինակ կարող են հանդիսանալ, մասնավորապես, այն դեպքերը, որոնցում տեղ գտած հարաբերությունները կամ դրանց արդյունքում առաջացած խախտումների վերացման կարգը անմիջականորեն սահմանված չեն օրենքով: Նման դեպքերում գտնվել են փոխզիջումային լուծումներ՝ դատարանի փոխարեն Պաշտպանին որպես միջնորդ դիմելու արդյունքում:

Պաշտպանը միջնորդել է նաև որոշ վարչական խախտումների վերացման ժամանակ: Օրինակ, դիմումատուն բողոք ուներ իր վերադասի դեմ, և խնդրի լուծման

նպատակով դատարան դիմելու փոխարեն, նա դիմել էր Պաշտպանի միջամտությանը: Վարչական դատարանների բացակայության պայմաններում Պաշտպանը փորձել է այս և նման մի շարք բողոքների լուծումը գտնել միջնորդության միջոցով, հիմնականում փոխզիջումների տարբերակների վերաբերյալ կողմերի հետ համատեղ քննարկումների ժամանակ: Նման դեպքերով գրանցվել են օրինակներ, երբ վերադասը պատրաստ է եղել տրամադրել իրավունքի վերականգնման որոշակի հնարավորություններ, իսկ ստորադասը չի համաձայնվել այդ պայմաններին: Այսպիսի օրինակները համարվում են մասնակի դրական լուծման օրինակներ, քանի որ այս դեպքերում իրավունքի խախտողը համաձայն է վերականգնել իրավունքը, այն դեպքում, երբ բողոքատուի պահանջներն ավելի բարձր են:

Պաշտպանի միջամտությամբ լուծում են տրվել նաև այնպիսի բողոքների, որոնք որպես այդպիսիք մարդու իրավունքների խախտում չեն պարունակել, սակայն ծավալվել են կոնկրետ խնդրի շուրջ: Պաշտպանը միջնորդել է, որպեսզի նման խնդիրները լուծվեն հասարակական կազմակերպությունների միջոցով, որոնց հետ Պաշտպանի հաստատությունն ունի համագործակցության պայմանագրեր: Անհրաժեշտ է նշել նաև, որ Պաշտպանի և մարզային հասարակական կազմակերպությունների միջև սերտ համագործակցության շնորհիվ ակտիվացել է մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մարզային ՀԿ-ների գործունեությունը, և դրանով իսկ ավելացել է դրական արդյունքներով լուծված Պաշտպանի փոխանցած զանազան խնդիրների շուրջ եղած բողոքների թիվը, ինչը նաև նախապայման է մարզերում Պաշտպանի հաստատության ներկայացուցչություններ հիմնադրելու համար:

Դրական լուծումներն արձանագրվել են դիմում-բողոքների հետ աշխատանքի տարբեր փուլերում: Երբ դիմումն արդեն ընդունված է քննարկման, առաջին քայլը պատկան մարմնի հարցումն է դիմումատուի կողմից ներկայացված փաստարկների և փաստաթղթերում նկարագրված իրավունքի խախտման իսկությունը ստուգելու, ինչպես նաև հակափաստարկներ և գործին առնչվող այլ փաստաթղթեր ստանալու նպատակով:

Այնուհետև, երկկողմանի ներկայացված փաստարկների և փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա տրվում է նախնական գնահատական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ: Շատ հաճախ հարցման արդյունքում և դրան ի պատասխան՝ մինչ Պաշտպանի կողմից իրավունքի խախտում արձանագրելը, կամ դիմումատուից կամ էլ պատկան մարմնի կողմից ստացվում է տեղեկություն այն մասին, որ դեպքի կապակցությամբ կատարվել է ուսումնասիրություն, և իրավիճակը շտկվել է, այսինքն՝ իրավունքը վերականգնվել է:

Դրական արդյունքներ գրանցվում են նաև դիմում-բողոքի ուսումնասիրության երկրորդ փուլում՝ մինչ Պաշտպանի կողմից իրավունքի խախտման մասին որոշում ընդունելը, երբ հարցման պատասխանից կամ այցելության արդյունքում պարզվում է, որ իրապես տեղի է ունեցել իրավունքի խախտում, և պատկան մարմնին Պաշտպանի կողմից գրավոր կամ բանավոր առաջարկություն ներկայացնելու արդյունքում իրավունքը վերականգնվում է:

Վերոնշյալ երկու դեպքերում վերջնականորեն ամրագրվում է, որ մարդու իրավունքների խախտում չի հայտնաբերվել, քանի որ պատկան մարմինը խոստովանում է իր ներկայացուցչի անբարեխիղճ գործողությունները և տեղում շտկում է սխալը՝ անհապաղ վերականգնելով խախտված իրավունքը՝ մինչ այդ մասին Պաշտպանի կողմից որոշման ընդունումը:

Եվ վերջապես, դրական արդյունքներ են գրանցվում նաև իրավունքի խախտման մասին Պաշտպանի կողմից որոշում ընդունելուց հետո, երբ որոշումը գրավոր տեսքով տրամադրվում է դիմումատուին և պատկան մարմնին: Իր կողմից խախտում կատարելու մասին որոշումն ունենալով՝ հանրային մարմնի ներկայացուցիչը վերականգնում է խախտված իրավունքը, հաճախ նաև վերադասի միջամտությամբ, որը նույնպես տեղեկացվում է իրավունքի խախտման մասին:

Դրական լուծումներ են արձանագրվել նաև, երբ Պաշտպանը հայտարարությամբ դիմել է հանրությանը, ինչպես օրինակ, կամերային երաժշտության տան շրջակայքում սրճարան կառուցելու շուրջ ծավալված խնդրի դեպքում:

Այնուամենայնիվ, զգալի թիվ են կազմում նաև այն դեպքերը, որոնցով, չնայած Պաշտպանի կողմից իրավունքի խախտման արձանագրմանը, որոշման տրամադրմանը դիմումատուին ու խախտում թույլ տված հանրային մարմնի ներկայացուցչին, այդ գործերի հասարակական հնչեղությանը, իրավունքները չեն վերականգնվել:

Պատճառները խորքային են՝ նախ և առաջ տարբեր իրավական ակտեր պարունակում են մարդու իրավունքների խախտումներ կամ թերությունների պատճառով նման խախտումների տեղիք են տալիս, երկրորդ՝ և դա ամենացավալին է, երբ ինչ-ինչ նյութական շահերից դրդված, իշխանության բարձր ատյանների կողմից թույլ են տրվում և հովանավորվում են իրավունքի խախտումներ՝ անհատական և զանգվածային մակարդակներով:

Որպես դրական լուծում ստացած՝ կարելի է վկայակոչել հետևյալ գործերը:

- Դեռևս 2004թ. քննարկվում էր **Երևանի Նորագավիթ քաղամասի 70 ընտանիքների** բողոքը «Էրեբունի» օդանավակայանի կարիքների համար իրենցից վերցված հողատարածքների դիմաց փոխհատուցում չստանալու վերաբերյալ: 2005թ. ընթացքում Պաշտպանի հաստատության կողմից իրականացված աշխատանքի, մի շարք բանակցությունների և քննարկումների արդյունքում, ինչպես նաև պաշտպանության նախարարի անմիջական միջամտությամբ խնդիրը ստացել է դրական լուծում՝ 70 ընտանիքների դիմում-բողոքում արժարժված պահանջները բավարարված են:
- Երևանի **Նորքի այգիներ 227** հասցեում գտնվող նախկին **ՀԿԿ Կենտկոմի բարձրագույն դպրոցի հանրակացարանում** բնակվող **22 փախստական ընտանիքներ, որոնք Ադրբեջանից մազապուրծ փախել են և դեռևս 1990թ.** տեղավորվել նշված հասցեով, դատախազության նախաձեռնությամբ հայտնվել էին վտարվելու սպառնալիքի տակ, այն դեպքում, երբ դատարանի որոշմամբ փախստականներին թույլատրվել է սեփականաշնորհում կատարել բնակության հասցեով: Երկարատև աշխատանք է պահանջվել նման վերաբերմունքի ապօրինությունը պատկան մարմիններին ապացուցելու համար: Արդյունքում ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել ՀՀ քաղաքացիություն ստացած այդ փախստական ընտանիքներին սեփականատերեր ճանաչելու մասին:
- Եզակի չեն գործերը՝ կապված **միայնակ մարդկանց սեփականության իրավունքի զանազան ոտնահարումների** հետ, երբ բարեկամները կամ հարևանները ցանկացած գնով որոշում են տիրանալ միայնակ ազգականի կամ էլ հարևանի ունեցվածքին, ինչը տեղի է ունենում հանրային մարմինների ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ կամ հովանավորությամբ: Նման կարգի մի շարք դիմում-բողոքներով Պաշտպանի հետևողական միջամտությունների արդյունքում ստացվել են դրական լուծումներ:
- Հաճախ են ստացվում նաև դիմում-բողոքներ **ընդհանուր շքամուտքերի կամ շենքերից դեպի փողոց ելքերի ապօրինի փակման ու միանձնյա օգտագործման** վերաբերյալ: Նման մի շարք դիմում-բողոքներով ևս ստացվել են դրական արդյունքներ:
- **Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի կառավարման խորհուրդը երեք դեպքերով գույքային իրավունքների պետական գրանցման անթույլատրելիության մասին իր որոշումները վերացրել է և դիմորդների իրավունքները վերականգնվել և գրանցվել են:**
- **Երևանի քաղաքապետն անվավեր է ճանաչել** նախկինում փախստականի կարգավիճակ ունեցող քաղաքացու՝ Դարաբաղ 88 հասցեի տան նկատմամբ սեփականության իրավունք տրամադրելը մերժելու մասին իր որոշումը: Մեծ ջանքեր են պահանջվել ապացուցելու իրավունքի տրամադրումը մերժելու անօրինականությունը:
- **Արցախյան ազատամարտում զոհված և հաշմանդամ դարձած 28 անձանց ընտանիքների՝** իրենց օգտագործմանը տրամադրված Երևանի Սեբաստիա-Կուրդինյան փողոցներին հարող հատվածում գտնվող հողակտորները **քաղաքապետարանի կողմից**

օտարելու վերաբերյալ բողոքով հնարավոր է եղել հասնել նրանց հողօգտագործման իրավունքի պահպանմանը:

- Պաշտպանի միջամտությամբ դրական լուծում է ստացել նաև զինակոչից խուսափելու համար **դատապարտված երկու անձանց անձնագրային խնդիրը**: Պատիժը կրելուց հետո նրանք չին կարողացել անձնագիր ստանալ, քանի որ **զինկոմիսարիատը չէր ցանկացել նրանց վերցնել հաշվառման**:

- Արտաշատի **զինկոմիսարիատը փորձել է ժամկետային զինծառայության գորակոչել փախստականի կարգավիճակ ունեցող անձին** և նույնիսկ նյութեր է նախապատրաստել նրան **քրեական պատասխանատվության** կանչելու: Հետապնդումը դադարեցվել է Պաշտպանի միջամտությամբ:

- Ռուսաստանի **Դաշնության քաղաքացին իր կամքին հակառակ տարվել է զինվորական ծառայության**, և ծառայության վայրը լքելու պատճառով նրա նկատմամբ **հարուցվել է քրեական հետապնդում**, որը դադարեցվել է Պաշտպանի միջամտությամբ:

- Արաբկիրի ոստիկանությունում **քաղաքացուն անազատության պայմաններում ապօրինի պահելու վերաբերյալ Պաշտպանի ներկայացրած միջնորդության հիման վրա բաժնի պետը տույժի է ենթարկվել**: Մա այն եզակի դեպքերից է, երբ ոչ միայն **վերականգնվում է խախտված իրավունքը**, այլև **մեղավորը ենթարկվում է պատասխանատվության**:

- Աշխատանքից ապօրինի ազատման դիմում-բողոքներով դրական լուծման հասնելն ավելի բարդ է, քանի որ դիմումատուները հիմնականում բաց են թողնում դատական կարգով աշխատանքից ազատումը բողոքարկելու մեկամսյա ժամկետը, իսկ գործատուն պնդում է խնդիրը դատական կարգով լուծելու անհրաժեշտությունը:

Դիմումատուի կողմից ներկայացված բողոքի և հավելյալ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում **աշխատանքից ազատման ակնհայտ ապօրինություն** հայտնաբերելու դեպքում Պաշտպանի կողմից իրավունքի խախտման մասին որոշում է կայացվում: Նման որոշումներ կայացվել են Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի նորընտիր գյուղապետի կողմից գյուղապետարանի **բոլոր աշխատողներին** աշխատանքից ազատելու վերաբերյալ դիմում-բողոքով: Նման որոշումներ են կայացվել նաև Լոռու մարզի Ալավերդի քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի տնօրենի կողմից դպրոցում աշխատանքի ընդունելու մասին Կրթության և գիտության նախարարության հանձնարությունը չկատարելու կապակցությամբ, Լոռու մարզի Եղեգնուտ գյուղի դպրոցի տնօրենի կողմից կրճատումների անվան տակ ուսուցչին աշխատանքից ապօրինի ազատելու առնչությամբ, Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 8 միջնակարգ դպրոցի տնօրենի կողմից աշխատանքից ապօրինի ազատված ուսուցչին աշխատանքում վերականգնելու մասին դատարանի վճռի կատարմանը ձևական մոտեցում ցուցաբերելու մասին դիմում-բողոքներով: **Թվարկված գործերով ստացվել են դրական արդյունքներ**:

- Աշխատավարձը ժամանակին չվճարելու, աշխատանքից ազատելուց հետո ժամանակին վերջնահաշվարկ չկատարելու և նման բնույթի այլ դիմում-բողոքներով **նույնպես գրանցվել են դրական լուծումներ**:

- Դեռևս 2004թ. պարբերաբար բողոքներ են ստացվել «Նաիրիտ» գործարանի նախկին և ներկայիս աշխատակիցներից՝ աշխատավարձի պարտքերը գործարանի կողմից չմարելու, ինչպես նաև հարկադիր կատարողների կողմից այդ հարցով դատարանների վճիռները չկատարելու մասին: 2005թ. ընթացքում միավորումը ձեռնարկել է պարտքերի մարում, իսկ հարկադիր կատարման ծառայությունում վերսկսվել են բոլոր կասեցված կատարողական վարույթները: **Աշխատավարձի պարտքերը հիմնականում մարված են, ինչը Պաշտպանի հետևողական միջամտության արդյունքն է**:

- Ինչպես արդեն նշվել է վերևում, մի շարք խնդիրներ տեղում լուծվել են Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խմբի անմիջական միջամտությամբ, ինչպես նաև **մարզեր կատարած Պաշտպանի այցելությունների ընթացքում** տեղի ղեկավարության հետ քննարկումների միջոցով:

Դրական արդյունքներով ավարտված գործերի տարբեր օրինակներ բերված են նաև Գլուխ 3-ում՝ ըստ հանրային մարմինների մարդու իրավունքների խախտումները վերլուծելիս:

2.3. Օրենսդրության բարելավմանն ուղղված գործունեություն

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված յուրաքանչյուր դիմում-բողոք պարունակում է ոչ միայն դիմումատուի իրավունքի կամ շահի ոտնահարում, այլև համապետական և ընդհանրական լուծում պահանջող որևէ խնդիր: Սրանով է պայմանավորված դիմում-բողոքների զգալի մասով դրական լուծման հասնելու նպատակով ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայում համակարգային փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: Պաշտպանի կողմից խիստ կարևորվել են օրենսդրական դաշտի ուսումնասիրմանն ու փոփոխությունների վերաբերյալ առաջարկներ ներկայացնելուն ուղղված աշխատանքները:

Ուսումնասիրությունները հանգեցրել են այն եզրակացության, որ օրենքներ և այլ իրավական ակտեր մշակելիս և ընդունելիս հաճախ կարևորվում են դրանցով գործառույթներ իրականացնող հանրային մարմինների և դրանց ներկայացուցիչների իրավասությունն ու լիազորությունները, այլ ոչ թե այն անձանց իրավունքները, որոնց ծառայելու համար կոչված են այդ մարմինները:

Օրինակ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը չի նախատեսել փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում, եթե որակավորման քննությունների բարեհաջող հանձնման պայմաններում ի հայտ է գալիս պատշաճ որակավորման բացակայություն: Անտեսվում է այն, որ փաստաբանական ծառայությունից օգտվողները միայն ծառայություն ստանալու ընթացքում կարող են կարծիք կազմել իրենց ընտրած փաստաբանի որակավորման մակարդակի մասին: Փաստորեն, փաստաբանական ծառայությանը դիմողը կատարում է պատահական ընտրություն և ենթակա է իր օրինական շահը պատշաճ կարգով պաշտպանելու հնարավորությունից զրկվելու վտանգին: Փաստաբանության դաշտը պետք է հնարավորինս զերծ լինի պատշաճ որակավորում չունեցող փաստաբաններից, ինչը չի ապահովվում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման» և «Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մասին» ՀՀ օրենքներով կատարողական վարույթի մասնակիցների իրավունքները սահմանված են հպանցիկ, իսկ հարկադիր կատարողի համար չեն սահմանված այդ իրավունքների իրականացումն ապահովելու կարգն ու պարտավորությունը: Օրինակ՝ վարույթն իրականացնող հարկադիր կատարողի համար չի սահմանված կատարողական վարույթի մասնակիցներին պարտադիր կարգով իրենց իրավունքներին ու պարտականություններին ծանոթացնելու պարտականություն:

Նման բնույթի բացթողումներ կարելի է հանդիպել նաև այլ օրենքներում: Առավել պաշտպանության կարիք ունեն սպառողները, տարբեր ծառայություններից օգտվողները՝ այլընտրանքային իրավիճակներում առաջությունը նրանց իրավունքներին տրամադրելու համար:

Ուսումնասիրություններին զուգահեռ իրականացվել են նաև օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների մշակման, քննարկման և ներկայացման աշխատանքներ: Մի շարք առաջարկություններ են ներկայացվել սահմանադրական փոփոխությունների, ինչպես նաև հասարակության տարբեր խմբերին վերաբերող օրենսդրական բարեփոխումների առնչությամբ:

Մասնավորապես, վերանայման անհրաժեշտության, եղած անորոշությունները և հակասությունները վերացնելու նպատակով փոփոխությունների և լրացումների որոշ առաջարկներ են ներկայացվել «Ձինձառայողների և նրանց ընտանիքների անդամների

սոցիալական ապահովության մասին», «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական տուրքի մասին», «Փախստականների մասին», «Բռնադատվածների մասին», «Քաղաքացիության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Կարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև այլ իրավական ակտերի առնչությամբ, որոնց անդրադարձ է կատարվել Գլուխ 3-ում՝ ըստ հանրային մարմինների մարդու իրավունքների խախտումները վերլուծելիս:

2004-2005թթ. ընթացքում օրենսդրության բարելավմանն ուղղված գործունեության կարևորագույն մաս են կազմել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի կատարելագործմանն ուղղված աշխատանքները՝ վերլուծությունը, թերությունների վերհանումը, բարելավման համար անհրաժեշտ դրույթների մշակումն ու ներկայացումը:

2.4. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի զարգացում

Համաձայն 2005թ. տարեսկզբին հաստատված ռազմավարական պլանի՝ հասարակայնության հետ կապերի ամրապնդումը ենթադրում էր գործունեություն հետևյալ հիմնական ուղղություններով:

- **Աշխատանք զանգվածային լրատվության միջոցների հետ**, որի նպատակն էր ապահովել Պաշտպանի և նրա աշխատակազմի գործունեության առավելագույն թափանցիկությունը: Աշխատանքն իրականացվել է տեղեկատվական նյութերի ու մամուլի հաղորդագրությունների պատրաստման և տարածման, մամուլի ասուլիսների կազմակերպման, սեփական նախաձեռնությամբ կամ մամուլի ներկայացուցիչների խնդրանքով տպագրության համար նախատեսված տարբեր նյութերի պատրաստման միջոցով: Հուլիս ամսից սկսած հատուկ տեղ է հատկացվել **Պաշտպանի պաշտոնական կայքի վրա աշխատանքին**:

- Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատության կայացում և զարգացում, ինչպես նաև միջազգային և տեղական հասարակական ու իրավապաշտպանական շրջանակներում հեղինակության ամրապնդում:

- Չանգվածային լրատվական միջոցների հետ համագործակցության զարգացում, մամուլի ոլորտում հասարակական կազմակերպությունների ու զանգվածային լրատվական միջոցների հետ համագործակցության համակարգում:

- Մարդու իրավունքների և Պաշտպանի գործունեության ոլորտում հանրային իրազեկության բարձրացում՝ բուկլետների, գրքույկների և այլ տպագիր նյութերի տարածման միջոցով:

- Խոսքի ազատության, տեղեկատվության մատչելիության և լրագրողների իրավունքների ոլորտում **իրավիճակի մոնիտորինգ**:

- Պաշտպանի գործունեությունը լուսաբանող, ինչպես նաև Հայաստանի ու արտերկրի մամուլում մարդու իրավունքներին առնչվող հրապարակումների **տվյալների բազայի ստեղծում**:

- **Մասնակցություն** Հայաստանում, տարածաշրջանում ու արտերկրում կազմակերպված **տարբեր միջոցառումների**՝ նվիրված մարդու իրավունքներին, քաղաքացիական հասարակության զարգացմանը, ՉԼՄ-Պաշտպանի հաստատություն հարաբերություններին՝ **հասարակության հետ կապերի մակարդակի բարձրացման նպատակով**:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի զարգացմանն ուղղված գործունեության կարևորագույն մաս է կազմել մամուլում տեղ գտած և հասարակական հնչելություն ստացած գործերի, ինչպես նաև մարդու իրավունքների ոլորտում իրավիճակի և Պաշտպանի հաստատության գործունեության տեսանկյունից հետաքրքրություն

ներկայացնող նյութերի վերլուծությունը: Իրականացվել է նաև տպագիր մամուլի և հեռուստատառադիոհաղորդումների, իրավապաշտպանական և տեղեկատվական ինտերնետային կայքերի **ամենօրյա մոնիտորինգ**:


Ստեղծվել է Պաշտպանի հաստատությանն առնչվող հրապարակումների, ինչպես նաև մարդու իրավունքների խախտումների կամ Պաշտպանի կողմից քննարկվող գործերի վերաբերյալ **տեղեկատվություն պարունակող նյութերի բազա**: Արագ արձագանք են ստացել այն հրապարակումները, որոնք, համաձայն «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի, կարիք ունեին պարզաբանումների կամ հերքման:

2005թ. ընթացքում Պաշտպանի և Պաշտպանի հաստատության գործունեության մասին տպագիր մամուլում ընդհանուր առմամբ տպագրվել է տարբեր ժանրերի 331 նյութ, էլեկտրոնային տարբերակով ներկայացվել են բազմաթիվ ամփոփ հաղորդագրություններ, հեռարձակվել են մոտ 80 հեռուստատեսային ու ռադիոռեպորտաժներ, հարցազրույցներ, ինչպես մայրաքաղաքային, այնպես էլ մարզային հեռուստաալիքներով, և մարդու իրավունքների միջազգային օրվան նվիրված թոք-շոու:

Աղյուսակ 10-ում ներկայացված են 2005թ. ընթացքում հաստատության գործունեությանն առավել հաճախ անդրադարձող տպագիր մամուլում տեղ գտած հրապարակումների վիճակագրական տվյալները:

Աղյուսակ 10. Հաստատության վերաբարյալ հրապարակումների վիճակագրությունը

	Թերթի անվանում	Քանակ
1.	Առավոտ	80
2.	Հայաստանի Հանրապետություն	48
3.	Հայկական ժամանակ	44
4.	Գոլոս Արմենիի	35
5.	Հայոց աշխարհ	27
6.	Իրավունք/Իրավունք հետաքննություն	26
7.	Ազգ	25
8.	Այբ-Ֆե	20



2005թ. ընթացքում ՉԼՄ-ներն առավել մեծ հետաքրքրություն են ցուցաբերել Պաշտպանի 2004թ. տարեկան զեկույցի, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և այդ առնչությամբ ՀՀ Սահմանադրական դատարանում կայացած քննության, Պաշտպանի արտահերթ զեկույցի և ընդհանուր առմամբ Երևան քաղաքի կառուցապատման գործընթացում սեփականության իրավունքների պաշտպանության ուղղությամբ իրականացվող գործունեության, ինչպես նաև մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների տեսանկյունից **սահմանադրական փոփոխությունների** նկատմամբ:

Անհրաժեշտ է նշել, որ մեծ ուշադրություն է դարձվել միջազգային, առավել ևս Հարավային Կովկասում գործող զանգվածային լրատվամիջոցների հետ աշխատանքին:

2005թ. ընթացքում Պաշտպանը 15 հարցազրույց է տվել օտարերկրյա լրատվամիջոցներին:

Բարձր գնահատելով ՉԼՄ դերակատարությունը մարդու իրավունքների ոլորտում քարոզչական գործունեության և իրազեկվածության բարձրացման հարցերում, մեծ նշանակություն է տրվել Պաշտպան-ՉԼՄ հարաբերությունների համակարգմանը:

Պաշտպանը հատուկ քննարկում է անցկացրել լրատվամիջոցների ղեկավարների հետ Պաշտպան-ՉԼՄ համագործակցության հետագա զարգացման հնարավորությունների շուրջ՝ Պաշտպանի և Պաշտպանի հաստատության գործունեության մասին հանրային իրազեկության բարձրացման և Հայաստանում մարդու

իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությանն ու պահպանությանը նպաստելու նպատակով:

Անցկացվել են մի շարք հանդիպումներ մարդու իրավունքների ոլորտում մասնագիտացող լրագրողների հետ, որոնց ընթացքում քննարկվել են մարդու իրավունքների առավել տիպիկ ու հաճախ հանդիպող խախտումներին վերաբերող դեպքերի լուսաբանմանը և առանձին դիմում-բողոքների շուրջ համատեղ հետաքննություն անցկացնելու առնչվող հարցեր:

Մամուլի հետ հարաբերություններում ձևավորվել է կոնկրետ ռազմավարություն և մարտավարություն, քանի որ Պաշտպանի գործունեությունը չի կարող հաջողված լինել առանց հասարակայնության պարբերական իրազեկման:

Փորձը ցույց է տվել, որ մարդու իրավունքների պահպանության ու պաշտպանության հարցում ՁԼՄ-ները հանդիսանում են Պաշտպանի ամենասկսիվ գործընկերներն ու դաշնակիցները:

Մամուլի ասուլիսները Պաշտպանի գործունեության առավել կարևոր ուղղություններին հասարակայնության ուշադրությունը հրավիրելու միջոց են: **2005թ. ընթացքում կազմակերպվել է 6 մամուլի ասուլիս` 2004թ. տարեկան զեկույցի ներկայացում,** արտակարգ ասուլիս` կապված Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների հետ, սեփականության իրավունքի զանգվածային խախտումների մասին արտահերթ զեկույցի ներկայացում, Էստոնիայի Արդարադատության կանցլերի հետ համատեղ ասուլիս, Մարդու իրավունքների միջազգային օրվան նվիրված ասուլիս և սահմանադրական փոփոխություններից հետո Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեության շարունակականության ապահովմանը նվիրված ասուլիս:

Յուրաքանչյուր ասուլիսի համար նախապատրաստվել են մամուլի հաղորդագրություններ, վիճակագրական տվյալներ և այլ նյութեր, որոնք լրագրողներին հնարավորություն են տվել առավել հստակ և լայնածավալ լուսաբանել իրադարձությունները:

Պաշտպանի բոլոր ասուլիսներն ակտիվորեն լուսաբանվել են տպագիր մամուլում և նորությունների ինտերնետային էջերում: Պակաս ակտիվություն են դրսևորել ռադիոընկերությունները:

Պաշտպանի ասուլիսների նկատմամբ հեռուստաընկերությունների կողմից ցուցաբերվել է խիստ պասիվություն, ինչը կապված էր Պաշտպանի դեմ ուղղված հանրային հեռուստատեսության կողմից անցկացվող և մի շարք հեռուստաընկերությունների կողմից աջակցվող ապատեղեկատվական հեռուստաարշավի և Պաշտպանի` հեռուստաէկրաններին հայտնվելու որոշակի արգելքների հետ, որոնք ձևավորվեցին 2004թ. տարեկան զեկույցի ներկայացումից հետո և հաստատության կայացման ճանապարհին արհեստականորեն ծառայված խոչընդոտների արդյունքում:

Պաշտպանի տեղեկատվական և հասարակայնության հետ կապերի գործունեության սկզբունքն էր **Պաշտպանի և աշխատակազմի գործունեության առավելագույն քափանցիկությունն ու մատչելիությունը:** Սկզբունքին համահունչ կերպով մամուլին ու հասարակայնությանը պարբերաբար տրամադրվել է համակարգված ու ամբողջական տեղեկատվություն Պաշտպանի և աշխատակազմի գործունեության վերաբերյալ:

Մշակվել ու մամուլին են տրամադրվել հաղորդագրություններ Պաշտպանի ու աշխատակազմի գործունեության վիճակագրական տվյալները, տեղեկատվություն հանդիպումների, ընդունելությունների, էլույթների, այցելությունների, գործուղումների, հաստատության կազմակերպած միջոցառումների ու ակցիաների մասին, ինչպես նաև տարբեր առիթներով Պաշտպանի ուղերձները, հայտարարություններն ու կոչերը: **Տեղեկատվությունը հայերեն և ռուսերեն լեզուներով տարածվել է ՁԼՄ-ների էլեկտրոնային հասցեներով:**

2005թ. պատրաստվել ու տարածվել է ավելի քան 100 հաղորդագրություն: Դրանք հրապարակվել են առնվազն մեկ լրատվամիջոցում, տեղադրվել են Պաշտպանի ինտերնետային կայքի նորությունների կամ համապատասխան այլ բաժիններում:

ԶԼՄ-ների և հասարակայնության համար Պաշտպանի և նրա աշխատակազմի մատչելիությունն ապահովելու սկզբունքի հետևողական իրագործման հետ մեկտեղ հաստատությունը ձգտել է օժանդակել ԶԼՄ-ների կողմից Պաշտպանի ու մարդու իրավունքների ոլորտի լուսաբանման առավելագույն հավաստիությանն ու արհեստավարժությանը:

Պաշտպանի տեղեկատվական և հասարակայնության հետ կապերի գործունեության արտացոլման կարևորագույն մաս է կազմում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինտերնետը օրեցօր ստանում է ավելի ու ավելի մեծ նշանակություն նաև Հայաստանում, խիստ կարևորվում է Պաշտպանի հաստատության մասին տեղեկատվության տարածումը ինտերնետով:

Պաշտպանի պաշտոնական կայքի* նախապատրաստական աշխատանքները սկսվել են 2005թ. հունվարից: Կայքը սկսեց գործել 2005թ. հուլիսի 7-ից: Նախ մշակվեց հայեցակարգը՝ կայքը պիտի լիներ առավելագույնս ինֆորմատիվ, մատչելի ու պարզ գործածության համար, համապարփակ տեղեկատվություն տար Պաշտպանի հաստատության նպատակների, գործառույթների, լիազորությունների, Պաշտպանին դիմելու, դիմումների քննարկման կարգի մասին, անմիջական կապի հնարավորություն տար հարց ու պատասխանի միջոցով, նորություններ պարունակեր հաստատության աշխատանքների մասին:

Շնորհիվ գրագետ ծրագրավորման ստեղծվել է «գործիք»՝ կայքը պաշտպանելու համար: Ստեղծվել են կայքի արագ թարմացման, սեփական ուժերով սպասարկման, հետադարձ կապի ապահովման հնարավորություններ:

Կայքի այցելուների համար ներկայացվել են **հաստատության նպատակներն ու խնդիրները**, տրվել են Պաշտպանի և Պաշտպանի տեղակալի **կենսագրական տվյալները**, **աշխատակազմի կառուցվածքը:**

Կայքի նորությունների բաժինը թարմացվել է ամեն օր, և այստեղ տեղադրվել են Պաշտպանի և աշխատակազմի ամենօրյա գործունեությանը վերաբերող տեղեկատվություն, ինչպես նաև հաղողագրություններ հանդիպումների, նախաձեռնությունների, այցելությունների մասին և այլ տեղեկատվություն:

Կայքի հայտարարությունների բաժնում տեղադրվել են Պաշտպանի կողմից արված հայտարարությունները⁸ որոշակի առիթների հետ կապված՝ հասարակական հնչելություն ստացած իրադարձություններ, մարդու իրավունքների զանգվածային խախտումներ, հանրության շահերին սպառնացող վտանգներ և նման այլ դեպքեր:

Կայքում տեղադրվել են նաև մարդու իրավունքներին վերաբերող գիտաժողովների ու քննարկումների ընթացքում հնչած **Պաշտպանի ելույթները:**

Հաճախ տրվող հարցերի բաժնում ընթերցողին հնարավորություն է ընձեռվել ստանալ Պաշտպանի և հաստատության լիազորությունների, Պաշտպանին դիմելու կարգի և նման այլ հարցերով ամբողջական ու մատչելի տեղեկատվություն:

Մանրամասն նկարագրվել է, թե ով, երբ, ինչպես և ինչ հարցերի շուրջ կարող է դիմել Պաշտպանին, ինչ որոշումներ է ընդունում Պաշտպանը, ինչպես կարելի է հանդիպել Պաշտպանին և այլն:

Կայքի հատուկ բաժնում տեղադրվել են ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2004թ. տարեկան զեկույցը և 2005թ. արտահերթ հրապարակային զեկույցը:

Կայքի օրենսդրական բաժնում տեղադրվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև տրվել են մարդու իրավունքներին վերաբերող միջազգային բոլոր փաստաթղթերին ծանոթանալու հղումներ:

Կայքի այցելուներին հնարավորություն է ընձեռվել Պաշտպանին ու հաստատությանն առնչվող ցանկացած հարց և նույնիսկ բողոք ուղղել **Պաշտպանին էլեկտրոնային փոստով:** Այս նամակները տրամադրվել են աշխատակազմի

* ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքի հասցեն է www.ombuds.am:

⁸ Տե՛ս՝ Հավելված 2՝ Պաշտպանի հայտարարությունները:

համապատասխան բաժիններին՝ հարցերին մասնագիտական պատասխաններ մշակելու և բողոքներին հետագա ընթացք տալու նպատակով:

Սեպտեմբերից սկսել է գործել **կայքի «Գործ #.» բաժինը**, որտեղ տեղադրվել են Պաշտպանի կողմից քննության առնված մի շարք գործեր, որոնց վերաբերյալ եղել են Պաշտպանի կողմից ընդունված որոշումներ: Գործերը տեղադրվել են դիմումատուների համաձայնությամբ: **Այս բաժինը նպատակ էր հետապնդում Պաշտպանի գործունեության մասին տեսական տեղեկատվությունից բացի ներկայացնել կոնկրետ բողոքները, դրանց հետ աշխատանքի բնույթն ու ձևերը, արձանագրված արդյունքները:**

Բացի այդ, Պաշտպանի գործունեության կարևորագույն մաս հանդիսացող գործերը տեղեկատվության լավ աղբյուր են ոլորտում մասնագիտացած լրագրողների համար, և կարող են հիմք ծառայել սեփական լրագրողական հետաքննության համար: ՁԼՄ-ների պարբերաբար հաղորդագրություններ են ուղարկվել բաժնի թարմացման և գործերի համառոտ բովանդակության մասին, իսկ գործերով հետաքրքրվող լրագրողներին բողոքների վերաբերյալ տրամադրվել է հավելյալ տեղեկատվություն՝ փաստաթղթեր, նամակներ: Նրանց համար կազմակերպվել են նաև հանդիպումներ համապատասխան իրավաբանների հետ պարզաբանումներ ստանալու նպատակով:

Հաստատության աշխատանքի առավել թափանցիկություն ապահովելու նպատակով Պաշտպանը որոշում է ընդունել **կայքի «Պաշտոնական նամակներ» բաժնում** տեղադրել հասարակական հնչեղություն ունեցող հարցերի շուրջ հանրային մարմինների ղեկավարների հետ իր նամակագրությունը: Պաշտպանը նախօրոք հանդես է եկել հայտարարությամբ, ինչպես նաև նամակով դիմել է բոլոր հանրային մարմինների ղեկավարներին՝ տեղեկացնելով իր մտադրության մասին: Այս նախաձեռնությունը լուրջ փորձություն էր թե՛ աշխատակազմի, թե՛ հանրային մարմինների համար:

Պաշտպանի նախաձեռնությունն ունեցավ դրական արձագանք, և բազմաթիվ կառույցների ղեկավարներ, ողջունելով այն, համագործակցության պատրաստակամություն հայտնեցին:

Մի շարք պետական և ոչ կառավարական կառույցների, ինչպես նաև լրատվական միջոցների առաջարկվել է իրենց ինտերնետ կայքերում **տեղադրել Պաշտպանի կայքի հասցեն**, այսինքն՝ հղում Պաշտպանի կայքին: Առաջարկին արձագանքել են ՀՀ կառավարությունը, Մահմանադրական դատարանը, Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունը, ինչպես նաև մի շարք հասարակական կազմակերպություններ ու լրատվական միջոցներ:

Պաշտպանի կայքը հաջողված է, ինչի մասին է վկայում կայքի հանդեպ ցուցաբերված մեծ հետաքրքրությունը: Ըստ այցելությունների վիճակագրության վերլուծության՝ կայքի հանդեպ հետաքրքրություն է ցուցաբերվել հատկապես միջազգային կազմակերպությունների, տեղական ու միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների և զանգվածային լրատվական միջոցների կողմից:

Կայքը գործելուց արդեն մեկ ամիս անց կայքի այցելուների թիվը անցել էր 3 հազարը, միջին օրական այցելուների թիվը՝ 95-ը, ինչը զգալի արդյունք է նորաստեղծ կայքի համար: Կայքի գործելու սկզբից մինչև տարեվերջ՝ 2005թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին, կայքն ունեցել է ավելի քան 26 հազար այցելու, միջին օրական այցելուների թիվը կազմել է 171:

ՀՀ Ազգային ժողովի և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի կողմից համատեղ իրականացվող «Հայաստանում մարդու իրավունքների խթանման և Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման» ծրագրի շրջանակներում ծավալվել է հաստատուն համագործակցություն Պաշտպանի հաստատության և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի միջև:

Այդ ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի ազգային փորձագետի հետ համատեղ մշակվել և պատրաստվել են բուկլետներ, պաստառներ, հեռուստատեսային սոցիալական հոլովակներ, կազմակերպվել է Պաշտպանի կայքի շնորհանդեսը:

Փետրվար-մարտ ամիսների ընթացքում մի շարք հեռուստաընկերություններ հեռարձակել են Պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններին և նրան դիմելու կարգին վերաբերող սոցիալական գովազդային հոլովակները, ինչի արդյունքում զգալիորեն ավելացել է Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների թիվը:

Յուրաքանչյուր ամիս թարմացվել է բուկլետը, որը պարունակում էր Պաշտպանի գործունեության մասին վիճակագրական և այլ տվյալներ: Պաստառներն ու բուկլետները տարածվել են մարզային այցելությունների ընթացքում, նամակներ են ուղղվել տարբեր կառույցների՝ պաստառների տարածմանն աջակցելու խնդրանքով:

Նախապատրաստվել են Պաշտպանի գործունեության մասին և մարդու իրավունքների բնագավառում բնակչության իրազեկության մակարդակի բարձրացմանն ուղղված առաջարկություններ ու նախագծեր 2006թ. համար, համապատասխան նամակներ են ներկայացվել ՄԱԿ-ի Չարգացման ծրագրին:

Մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատության գործունեության մասին հանրային իրազեկության մակարդակի բարձրացմանն ուղղությամբ 2005թ. ընթացքում Պաշտպանը հանդիպումներ, քննարկումներ և դասախոսություններ է անցկացրել ուսանողների և դպրոցականների հետ:

Խոսքի ազատության, տեղեկատվության մատչելիության և լրագրողների իրավունքների ոլորտում 2005թ. ընթացքում իրականացվել է իրավիճակի ամենօրյա մոնիտորինգ, ստեղծվել է թեմային վերաբերող տվյալների էլեկտրոնային բազա:

Մոնիտորինգի շրջանակներում ուսումնասիրվել է տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվությունը, ակտիվ համագործակցություն է հաստատվել խոսքի ազատության և լրագրողական դաշտում գործող ոչ կառավարական կազմակերպությունների հետ, Պաշտպանի տարեկան զեկույցի և ազգային այլ փաստաթղթերի համար մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ պատրաստվել են հաշվետվություններ:

Ուշադրության կենտրոնում է եղել խոսքի ազատության և տեղեկատվության մատչելիության բնագավառում Հայաստանի կողմից Եվրոպայի Խորհրդի առջև ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, կապ է պահպանվել Եվրոպայի Խորհրդի համապատասխան կառույցների ու կազմակերպությունների հետ:

Պաշտպանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի խմբի աշխատակիցները մասնակցել են ՉԼՄ-ների ինքնակարգավորման, արտակարգ իրավիճակներում և ահաբեկչության դեմ պայքարում լրագրողների իրավունքների, այդ հարցերին վերաբերող օրենսդրական դրույթների և սահմանադրական փոփոխությունների խնդիրների քննարկմանը նվիրված միջոցառումներին:

Պատրաստվել և տարածվել է Պաշտպանի հայտարարությունը հեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների, մասնավորապես հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի՝ սահմանադրական փոփոխություններով նախատեսված ձևավորման կարգի վերաբերյալ⁹:

Մարդու իրավունքների միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է հարցում՝ առաջատար փորձագետների և հասարակական կազմակերպությունների շրջանում, որի նպատակն էր պարզապես երեք լրագրողի, ովքեր առավել ակտիվ ու հետևողական են լուսաբանել Հայաստանում մարդու իրավունքների ոլորտին առնչվող իրադարձությունները: Հարցման արդյունքում հաղթող լրագրողները ստացել են Պաշտպանի կողմից սահմանված մրցանակներ:

⁹ Տե՛ս՝ Հավելված 2.5.՝ Պաշտպանի հայտարարությունը հեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների սահմանադրական փոփոխություններով նախատեսված ձևավորման կարգի վերաբերյալ:

Պաշտպանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի խմբի աշխատակիցները 2005թ. ընթացքում ակտիվորեն մասնակցել են **ազգային, տարածաշրջանային և միջազգային տարբեր միջոցառումների**՝ սեմինարների, կոնֆերանսների, հանդիպումների, ուսուցողական դասընթացների, ճանաչողական ու աշխատանքային այցելությունների: Հարկ է շեշտել հատկապես մասնակցությունն այնպիսի քննարկումներին, որտեղ արծարծվում էին ոչ միայն մարդու իրավունքների տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող հարցեր, այլև երկրում անկախ ու ազատ ՁԼՄ-ների ձևավորմանն ու լրագրողների կողմից իրենց մասնագիտական պարտքն առանց խոչընդոտների կատարելուն ուղղված միջոցների ապահովմանը, ՁԼՄ-ների ընկերակցության ստեղծմանը, տեղեկատվության մատչելիության և լրագրողների իրավունքների հարգմանը նվիրված հարցեր:

Խմբի աշխատակիցները մասնակցել են նաև **մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը, նոր հմտությունների ու գիտելիքների ձեռքբերմանը**, մարդու իրավունքների այլ հաստատությունների աշխատանքին ծանոթանալուն և **փորձի փոխանակմանն** ուղղված ուսուցողական սեմինարների:

2.5. Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն

Կարևորագույն որոշումների ընդունման գործընթացներում հասարակական կազմակերպությունների և այլ ոչ կառավարական խմբերի և դրանց միավորումների ներգրավման անհրաժեշտության մասին խոսելիս սովորաբար ընդգծվում է բուն մասնակցության գործընթացի նշանակությունը, որը թույլ է տալիս արդյունավետ իրագործել որոշումների ընդունումը: Նման մոտեցումը հիմնված է ինչպես միջազգային փորձի, այնպես էլ մասնակցության գործընթացի հայեցակարգի վրա, որը հիմնված է հանրային մարմինների և հասարակական կազմակերպությունների (ՀԿ) շահերի և դիրքորոշումների տարբերությունների դեպքում կոնսենսուսի հասնելու վրա: Դա նշանակում է, որ անձանց որոշակի խմբերին և հասարակության շերտերին վերաբերող ծրագրերի և որոշումների մշակման և ընդունման մակարդակում անհրաժեշտ է հաշվի առնել նրանց մոտեցումները: Անշուշտ, նման մոտեցումը տարբերվում է իշխանական խավի և հասարակության մնացած մասի միջև փոխհարաբերությունների վարչահրամայական կարգավորումից:

Միջազգային և, հատկապես, ԱՊՀ երկրների պրակտիկան ցույց է տալիս, որ ժողովրդավարական և իրավական պետություն հռչակած երկրների օմբուդսմանների համար հատուկ նշանակություն է ձեռք բերում համագործակցությունը հասարակական, մասնավորապես, իրավապաշտպան, սոցիալական հարցերով, խոցելի և հատուկ խմբերի խնդիրներով զբաղվող կազմակերպությունների հետ:

Անհրաժեշտ է շեշտել, որ հենց հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով է հնարավոր առավելապես հրապարակային դարձնել Պաշտպանի և նրա աշխատակազմի գործունեությունը, հստակեցնել առկա հասարակական պահանջարկը, ինչպես նաև հասարակության լայն շերտերին իրազեկել Պաշտպանի հաստատության հնարավորությունների և գործունեության մասին: Բացի այդ, մարդու իրավունքների խախտման տեսանկյունից ինչպես ընդհանուր առմամբ բնակչությունը, այնպես էլ, մասնավորապես, խոցելի խմբերը, հեշտությամբ վստահում և հաղորդակցվում են հենց հասարակական կազմակերպությունների հետ:

Պաշտպանի հաստատության և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության առավել արդյունավետ ձևերն են՝

- իրավական կամ սոցիալական օգնության ակնկալիքով դիմող անձանց վերաբերյալ տեղեկատվության փոխանակությունը,
- ՀԿ ներկայացուցիչների ներգրավումը Պաշտպանի հաստատության փորձագետների խորհրդում,
- մարդու իրավունքների խախտումների առավել ցայտուն դրսևորումների, պաշտպանության մեթոդների, ինչպես նաև օրենսդրության կատարելագործման վերաբերյալ համատեղ քննարկումները,
- մասնակցությունը ՀԿ-ների և Պաշտպանի հաստատության կողմից կազմակերպված տարբեր միջոցառումներին,
- փոխադարձ աջակցությունը մարզերում բնակչության հետ հանդիպումների կազմակերպման հարցում՝ մարդու իրավունքների խախտումները վերհանելու և խախտված իրավունքները վերականգնելու նպատակով,
- փոխադարձ աջակցություն մարդու իրավունքների ոլորտում տեղ գտած հիմնահարցերն ու խնդիրները համապատասխան հանրային մարմիններին հասցնելու գործում,
- համատեղ միջոցառումները՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում համակարգային բնույթ կրող բացասական երևույթների հաղթահարման նպատակով ընդհանուր մոտեցումների և անհրաժեշտ քայլերի մշակմանը,
- համատեղ գործողությունները՝ ուղղված ինչպես առանձին դիմումատուների, այնպես էլ հասարակական հնչեղություն ստացած գործերի լուծմանը և ընդհանուր առմամբ մարդու իրավունքների պաշտպանությանը:

Բարձր գնահատելով հասարակական կազմակերպությունների դերն ու նշանակությունը քաղաքացիական հասարակության կառուցման և մարդու իրավունքների պաշտպանության դժվարին գործում, Պաշտպանի հաստատությունը արդյունավետ կերպով համագործակցել է հասարակական կազմակերպությունների հետ վերոնշյալ բոլոր ձևերի շրջանակներում, ինչն իր դրական ազդեցությունն է ունեցել հաստատության գործունեության վրա:

Այսպես, 2005թ. ընթացքում Պաշտպանը և նրա ներկայացուցիչները մասնակցել են ազգային ՀԿ-ների կողմից կազմակերպված ավելի քան 80 միջոցառումների, իսկ ՀԿ-ների ներկայացուցիչները մասնակցել են Պաշտպանի հաստատության կողմից կազմակերպված բոլոր միջոցառումներին:

Պաշտպանի հաստատության փորձագետների խորհրդի 18 անդամներից 12-ը հանդիսացել են հասարակական կազմակերպությունների կամ դրանց միավորումների ղեկավարներ:

Տեղեկատվության փոխանակություն և համատեղ քննարկումներ են կազմակերպվել «Գործընկերություն հանուն բաց հասարակության նախաձեռնության» խորագրի ներքո միավորված մի շարք ՀԿ-ների հետ: Արդյունավետ համագործակցություն է ծավալվել կանանց, հատուկ կարիքներով անձանց, ազգային և կրոնական փոքրամասնությունների և էկոլոգիական խնդիրներով զբաղվող կազմակերպությունների և դրանց միավորումների հետ: Անհրաժեշտ է շեշտել Պաշտպանի հաստատության արդյունավետ տեղեկատվական համագործակցությունը ՀՀ արդարադատության նախարարությանն առընթեր քրեակատարողական հիմնարկների և մարմինների հասարակական դիտորդական խմբի և պաշտպանության նախարարությանն առընթեր հասարակական կազմակերպությունների խորհրդի հետ:

Պաշտպանը նպաստել է ՀԿ-ների կողմից իրականացվող մարդու իրավունքների տարածմանն ուղղված քարոզչական աշխատանքներին և իրավապաշտպանության նոր ուղղությունների ներմուծման գործընթացին:

Կարելի է վստահաբար պնդել, որ Հայաստանում հասարակական սեկտորը՝ ի դեմս ակտիվ գործող ՀԿ-ների և դրանց միավորումների, զանգվածային լրատվական միջոցների հետ համատեղ գտնվում են պայքարի առաջնային գծում՝ Հայաստանը որպես իրավական և ժողովրդավարական պետություն կայացնելու գործընթացում:

Մարդու իրավունքների պաշտպանության դժվարին գործում որոշակի հաջողությունների հասնելով հանդերձ՝ ՀԿ-ները միաժամանակ երկրի զարգացման ճանապարհին ծառայած օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտների ոչ թե ձևական, այլ իրական հաղթահարման մեջ շահագրգիռ կողմերի լայն աջակցության կարիքն ունեն:

2.6. Միջազգային համագործակցություն

Համաձայն մշակված ռազմավարարական ծրագրի, Պաշտպանի հաստատությունը 2005թ. ընթացքում կապեր է հաստատել մարդու իրավունքներով զբաղվող մի շարք միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև այլ երկրների մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների հետ՝ ինչպես փոխադարձ ինստիտուցիոնալ և մեթոդաբանական աջակցության, այնպես էլ համատեղ գործունեություն ծավալելու նպատակով:

Պաշտպանի հաստատությունն անդամագրվել է միջազգային այնպիսի հեղինակավոր կազմակերպությունների, ինչպիսիք են Օմբուդսմանների միջազգային ինստիտուտը և Օմբուդսմանների եվրոպական ինստիտուտը:

Պաշտպանի պատվիրակությունը մասնակցել է Արևմտյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների օմբուդսմանների նորաստեղծ հաստատությունների 5-րդ և 6-րդ կլոր սեղաններին: Վերջինիս ընթացքում ներակայացվել է Ավստրիական օմբուդսմանի ինստիտուտի կողմից մշակված ձեռնարկը, որում ներառված են Պաշտպանի 2004թ. տարեկան զեկույցից բերված 9 օրինակներ՝ որպես խտրականության դեպքերը բացահայտելու և նման բողոքների հետ աշխատելու մեթոդների ընտրության դրական օրինակներ:

2005թ. համագործակցության հուշագրեր են ստորագրվել ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի, Լիտվայի Սեյմի օմբուդսմանների գրասենյակի և Լեհաստանի օմբուդսմանի գրասենյակի հետ, որոնց համաձայն Պաշտպանի հաստատության երկու աշխատակից երկշաբաթյա ճանաչողական այցով մեկնել են Լիտվա, իսկ երկուսը՝ Լեհաստան:

Լիտվայի Սեյմի օմբուդսմանների գրասենյակի երկու մասնագետ պատասխան երկշաբաթյա այցով ժամանել են Հայաստան և ծանոթացել Պաշտպանի հաստատության աշխատանքներին, ինչպես նաև այցելել Երևանի քաղաքապետարան, քրեակատարողական հիմնարկներ, տեղական ինքնակառավարման մարմիններ:

Լեհաստանի Մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամի հետ համագործակցության հուշագրի շրջանակներում Պաշտպանի աշխատակազմի երկու մասնագետներ մասնակցել են մարդու իրավունքների պաշտպանության միջազգային դպրոցի ձմեռային և ամառային դասընթացներին:

Պաշտպանի աշխատակազմը հյուրընկալել է Էստոնիայի Արդարադատության կանցլերին և նրա գրասենյակի տնօրենին, որոնք ժամանել էին համագործակցություն հաստատելու նպատակով: Աշխատանքային այցելության ընթացքում կազմակերպվել են

նաև հանդիպումներ Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի, կառավարության և գլխավոր դատախազության ղեկավարների հետ:

Արձագանքելով 21-րդ դարի նոր մարտահրավեր հանդիսացող միջազգային ահաբեկչությանը, դեռևս 2004թ. Պաշտպանի կողմից UNESCO-ի Փարիզյան և Մոսկովյան գրասենյակների հետ համաձայնություն էր ձեռք բերվել Երևանում «Հանուն հանդուրժողականության և ընդդեմ խտրականության ու քսենոֆոբիայի՝ միջազգային ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում (կովկասյան չափում)» թեմայով միջազգային կոնֆերանս կազմակերպելու վերաբերյալ: UNESCO-ի Մոսկովյան գրասենյակի և ՀՀ կառավարության ներդրումները հանդիսացան կոնֆերանսի ֆինանսավորման աղբյուրները:

Որպես անցկացվելիք կոնֆերանսի յուրօրինակ նախաբան 2005թ. մարտի 22-ին կազմակերպվեց կլոր սեղան՝ նվիրված ռասայական խտրականության վերացման միջազգային օրվան, որին հրավիրվեցին ազգային փոքրամասնությունների համայնքների ղեկավարներ, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող ՀԿ-ների ներկայացուցիչներ, պետական պաշտոնյաներ, միջազգային իրավունքի մասնագետներ: Կայացավ ազգային փոքրամասնությունների կարիքների և հիմնախնդիրների վերհանմանն ուղղված գործնական քննարկում, որին մասնակցեց Ռուսաստանի Սվերդլովսկի մարզի Մարդու իրավունքների հանձնակատարը:

Կոնֆերանսի մասին ազդարարվել է նախապատրաստված երկլեզու ռադիոռեպորտաժով՝ «Գործենք ընդդեմ ռասիզմի» եվրոպական ակցիայի շրջանակներում, որը կազմակերպվել էր ընդդեմ ազգայնամոլության, ռասիզմի, ֆաշիզմի և միգրանտների ու փախստականների աջակցության UNITED համաեվրոպական ցանցի կողմից, որին հարում են 560 կազմակերպություն 46 եվրոպական երկրներից:

Կոնֆերանսը կայացավ 2005թ. մայիսին, մասնակիցեցին 60 հոգի Ավստրիայից, Ռուսաստանից, Վրաստանից, Ադրբեջանից, անցկացվեցին քննարկումներ, ներկայացվեց 7 զեկույց, ընդունվեց բանաձև (Երևանյան բանաձև)¹⁰:

Ինչպես բանաձևը, այնպես էլ ընդհանուր առմամբ կոնֆերանսը արժանացել են Եվրոպայի Խորհրդի հավանությանը, և Պաշտպանը հրավիրվել է մասնակցելու Եվրոպայի Խորհրդում բարձր մակարդակով կազմակերպված «Մարդու իրավունքների պաշտպանությունը միջազգային ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում» թեմայով կլոր սեղանին:

Բարձր գնահատելով միջազգային կոնֆերանսի կազմակերպման մակարդակը, UNESCO-ի Մոսկովյան գրասենյակն իր 2006թ. ծրագրերում ընդգրկել է «Էթիկայի և մարդու իրավունքների սկզբունքների վրա հիմնված մոտեցումների ինտեգրումը կրթական քաղաքականության մեջ և ուսումնական ծրագրերում» թեմայով միջազգային կոնֆերանսի կազմակերպումը Երևանում, որի իրականացումը ևս վստահվելու է Պաշտպանի աշխատակազմին, այս անգամ Արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցված:

2005թ. հոկտեմբերին Պաշտպանի հովանավորությամբ ԱՊՀ անդամ պետությունների էթիկայի կոմիտեների համաժողովի շրջանակներում և UNESCO-ի Մոսկովյան գրասենյակի հետ համատեղ Երևանում անցկացվեց նիստ «Էթիկայի կոմիտեների համագործակցությունը խնամառուների հետ կենսաբժշկական

¹⁰ Տե՛ս՝ Հավելված 7՝ «Հանուն հանդուրժողականության և ընդդեմ խտրականության ու քսենոֆոբիայի՝ միջազգային ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում (Կովկասյան տարածաշրջան)» բանաձև:

հետազոտություններ անցկացնելիս» թեմայով: Պաշտպանի աշխատակազմն աջակցել է նաև ֆորումի կազմակերպչական աշխատանքներին:

2005թ. շարունակվել է Ազգային ժողովի և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի հետ համատեղ «Հայաստանում մարդու իրավունքների խթանման և Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման» ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպվել են ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի կողմից Շվեդիայից հրավիրված միջազգային փորձագետի աշխատանքային հանդիպումները Պաշտպանի և նրա աշխատակազմի հետ: Պաշտպանի աշխատակազմի և հանրային մի շարք մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ **անցկացվել են եռօրյա դասընթացներ՝ նվիրված «Մարդու իրավունքներ, լավ կառավարում, իրավունքի գերակայություն. Մարդու իրավունքների պաշտպանի դերն ու կարևորությունը» ուսումնական ձեռնարկի ուսումնասիրմանը**, որը կազմվել է Պաշտպանի հաստատության և Շվեդիայից հրավիրված փորձագետների կողմից:

Հատուկ նշանակություն է տրվել Վրաստանի Ժողովրդական պաշտպանի հաստատության հետ համագործակցությանը, որի ընթացքում լուծվել են մարդու իրավունքներին խախտումներին առնչվող մի շարք խնդիրներ՝ կապված Հայաստանում գտնվող Վրաստանի քաղաքացիների և Վրաստանում գտնվող Հայաստանի քաղաքացիների հետ, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների իրավունքներին և մշակութային ժառանգությանը վերաբերող որոշ հիմնախնդիրներ, որոնց լուծմանն ուղղված առաջարկությունները Վրաստանի Ժողովրդական պաշտպանի կողմից արտացոլվել են 2005թ. տարեկան զեկույցում և ներկայացվել Վրաստանի խորհրդարանին: Ի պատասխան 2004թ. Վրաստանի Ժողովրդական պաշտպանի Հայաստան կատարած այցի՝ 2005թ. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանն այցելել է Վրաստան, ուր հանդիպում-քննարկումներ են կազմակերպվել հայկական գյուղերի բնակիչների հետ, որոնց արդյունքում որոշ օրհասական խնդիրներ դրական լուծում են ստացել:

Պաշտպանի և Վրաստանի Ժողովրդական պաշտպանի արդյունավետ համագործակցությունը ևս մեկ անգամ մատնանշում է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում տարածաշրջանային համագործակցության անհրաժեշտությունը:

2005թ. Մարդու իրավունքների Վոլենբերգյան ինստիտուտի նախաձեռնությամբ Շվեդիա են հրավիրվել կովկասյան երեք հանրապետությունների Օմբուդսմանները մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ձեռքբերված փորձի փոխանակման և համագործակցության ընդհանուր ուղղություններ մշակելու նպատակով:

Առաջիկայում անհրաժեշտ է տարածաշրջանային հանդիպումներ կազմակերպել մարդու իրավունքների ոլորտում առկա ընդհանուր պրոբլեմների առնչությամբ՝ օմբուդսմանների միջամտությամբ այդ խնդիրների կարգավորման նպատակով:

2005թ. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ազգային հաստատությունների Միջազգային կոորդինացիոն կոմիտեին անդամակցելու հայտ է ներկայացրել: Կոմիտեի կողմից սահմանված ընթացակարգային կանոններին համապատասխան Պաշտպանը ներկայացրել է անդամակցության ամբողջական փաթեթ, այդ թվում Փարիզյան սկզբունքներին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի համապատասխանության վերաբերյալ մանրամասն վերլուծություն: Փաստաթղթերը կոմիտեի կողմից ընդունվել են, և **Պաշտպանի հաստատության անդամակցության հարցը հավատարմագրման ենթակոմիտեի կողմից կքննարկվի 2006թ. ապրիլին:**

2005թ. ընթացքում միջազգային ինստիտուտների հետ համագործակցության շրջանակներում Պաշտպանի կողմից իրականացվել են ծավալուն աշխատանքներ

տարաբնույթ **ձեռնարկների, ժողովածուների, համեմատական հետազոտությունների և ինստիտուցիոնալ մոտեցումների մշակման բնագավառներում:** Պաշտպանը ակտիվորեն մասնակցել է այս կազմակերպությունների կողմից **առանձին հարցերի շուրջ դիրքորոշման մշակմանն ու արտահայտմանը, հանձնարարականների կազմմանը և այլ նախաձեռնությունների՝** մասնավորապես ուղղված ԱՊՀ երկրներում մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների կայացմանն ու զարգացմանը: Պաշտպանի ղեկավարության ներքո իրականացվել է միջազգային և տարածաշրջանային հանդիպումների, մարդու իրավունքների պաշտպանության գծով մասնագիտացված դպրոցների, զարգացած ժողովրդավարական երկրների մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցներում և միջազգային իրավապաշտպան հասարակական կազմակերպություններում մասնագիտական վերապատրաստման վերաբերյալ **տեղեկատվության ուսումնասիրում և վերլուծություն: Վերլուծվել և գնահատվել են Հայաստանի վերաբերյալ միջազգային զեկույցները, քանաձևերը և այլ փաստաթղթեր,** ապահովվել է Պաշտպանի հաստատության հետ համագործակցող մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ նամակագրությունը:

Պաշտպանի հաստատության աշխատակիցները մասնակցել են մի շարք **միջազգային հանդիպումների, միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված դասընթացների, մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը,** նոր հմտությունների ու գիտելիքների ձեռքբերմանը, մարդու իրավունքների այլ հաստատությունների աշխատանքին ծանոթանալուն և փորձի փոխանակմանն ուղղված **ուսուցողական սեմինարների:**

2.7. Փորձագետների խորհուրդ

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 26-ի համաձայն՝ Պաշտպանը խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով ստեղծել է փորձագետների խորհուրդ՝ կազմված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ ունեցող անձանցից:

Փորձագիտական խորհուրդը 2005թ. ընթացքում անց է կացրել 14 նիստ: Խորհրդի քննարկմանն են դրվել խնդիրներ, որոնց կապակցությամբ որոշում ընդունելու համար անհրաժեշտ է եղել մասնագիտական կարծիքների ստացում և համադրում, խնդիրներ, որոնք ունեցել են հասարակական հնչելոթյուն, նաև այնպիսիք, որոնք վերաբերել են Պաշտպանի հաստատության լիազորությունները օրենսդրորեն սահմանափակելուն:

1. 2005թ. հունվարի նիստում քննարկվել է Պաշտպանի աշխատակազմը քաղաքացիական ծառայության համակարգի մեջ ներառելու հարցը: Լսվել է իրավաբան մասնագետների կարծիքը, հնարավորություն է տրվել նիստին հրավիրված քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահին հիմնավորելու օրենքի նախագծի տեսքով կառավարությանը ներկայացված իրենց առաջարկը:
2. Փետրվար և մարտ ամիսների նիստերում քննարկվել են Պաշտպանի 2004թ. տարեկան զեկույցում ներառվելիք հարցերը, խորհրդի անդամների ներկայացրած առաջարկները, ընթացիկ այլ հարցեր:
3. Մարտ-ապրիլ ամիսներին արդեն ընթանում էր ապատեղեկատվական հեռուստաարշավը՝ ուղղված Պաշտպանի հաստատության դեմ: Բացի այդ, Արդարադատության նախարարի կողմից արդեն բարձրացվել էր Պաշտպանի մասին օրենքի հոդված 7-ի սահմանադրականությունը Սահմանադրական դատարանում

վիճարկելու հարցը: Այս երկու կարևորագույն խնդիրները քննարկվել են փորձագիտական խորհրդի նիստում:

4. Սահմանադրական դատարանի որոշումից հետո, որով հակասահմանադրական է ճանաչվել Պաշտպանի մասին օրենքի հոդված 7-ի մաս 1-ի 2-րդ պարբերության 2-րդ նախադասությունը*, խորհրդի մայիսյան նիստում քննարկվել է դատարանների հետ Պաշտպանի հետագա հարաբերությունների խնդիրը:

5. Մայիս-հունիս ամիսներին ստացվել են հանրային մարմինների արձագանքները Պաշտպանի 2004թ. տարեկան զեկույցին, որոնք նույնպես դրվել են խորհրդի քննարկմանը: Պաշտպանի պատասխանները տրվել են համաձայն խորհրդի որոշումների:

6. Հետագա նիստերում քննարկվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ «Սոցիալական քարտերի մասին» ՀՀ օրենքի հետ կապված դժգոհությունները, այդ օրենքի սահմանադրականության հարցը որոշելու նպատակով ՀՀ նախագահին դիմելու հարցը, նախկինում մահապատժի դատապարտվածների պատիժը ցմահ ազատազրկմամբ փոխարինելու խնդիրը, Չեռնոբիլյան աղիտի հետևանքների վերացմանը մասնակցած անձանց և խորհրդային բանակից զորացրված սպաների սոցիալական խնդիրները, բռնադատվածների և նրանց առաջին հերթի ժառանգների խնդիրները և այլն:

7. Օգոստոս-նոյեմբեր ամիսներին հրավիրված բոլոր նիստերում պարտադիր քննարկվել են Սահմանադրական փոփոխությունների հետ կապված առաջարկներն ինչպես խորհրդի անդամների, այնպես էլ այլ մասնագետների հետ համատեղ:

8. Օրենսդրական փոփոխությունների առաջարկներ ներկայացնելու կապակցությամբ խորհրդի կողմից քննարկվել են «Պետական կենսաթոշակների մասին», «Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Բռնադատվածների մասին», «Փախստականների մասին» ՀՀ օրենքների և հոդվածների օրենսգրքի թերությունները:

9. Խորհրդի վերջին նիստը հրավիրվել է 2005թ. դեկտեմբերի վերջին: Քննարկվել են 2005թ. տարեկան զեկույցում ներառվելիք նյութերը:

ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 3

Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

* Պաշտպանը կարող է տեղեկություններ պահանջել դատաքննության մեջ գտնվող ցանկացած գործի մասին և առաջարկներ ներկայացնել դատարան՝ երաշխավորելով քաղաքացիների՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի նորմերով նախատեսված դատավարության իրավունքի պատշաճ ի կատար ածումը:

Երկրում անցկացվում են բազմազան բարեփոխումներ, ընդունվում և իրականացվում են ծրագրեր, որոնք կոչված են նպաստել իրավական պետության կայացմանը, ընդունվում և փոփոխվում են օրենքներ և այլ իրավական ակտեր, որոնք հռչակում են պետական մարմինների վճռականությունը զգալիորեն բարեփոխելու իրավիճակն ինչպես կառավարման և տնտեսության, այնպես էլ իրավական ոլորտում: Այնուամենայնիվ, Պաշտպանի կողմից ստացված բողոքների էությունը և հանրապետության տարբեր բնակավայրեր բազմաթիվ այցելությունների, ինչպես նաև բնակչության տարբեր խմբերի ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում ստացված տվյալներն այն մասին են վկայում, որ վերոնշյալ բարեփոխումներով, ծրագրերով և օրենսդրական փոփոխություններով դրված խնդիրները հաճախ հասանելի չեն նրանց, ում համար դրանք առավել կարևոր են, իսկ երբեմն էլ բերում են հակառակ արդյունքի:

Այս ամենի խորքային պատճառներից է հանրային մարմինների և նրանց ներկայացուցիչների կողմից ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների հարգման, պահպանման, ապահովման և պաշտպանության պարտավորությունների անտեսումը:

Վերլուծելով մարդու իրավունքների և ազատությունների խախտման դեպքերը, ինչպես նաև օրենսդրության և իրավակիրառական պրակտիկայի համապատասխանությունը միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին, վեր են հանվել մարդու իրավունքների խախտման հետևյալ խորքային պատճառները:

- Դատական համակարգի կախվածությունը գործադիր իշխանությունից և դատական իշխանություն-գործադիր իշխանություն հարաբերությունների ձևավորված պրակտիկան:

- Հանրային մարմինների անբարեխիղճ ներկայացուցիչների կողմից սխառեմատիկ բնույթ կրող վատ վարչարարության դրսևորումները, վերադաս մարմինների կողմից այդպիսի գործողությունների նկատմամբ հանդուրժողականությունը:

- Անհատ-պետություն հարաբերություններում կոռուպցիայի խորացումը և դրա հետևանքով հասարակության մեջ օրենքի և իրավունքի հանդեպ մերժողական վերաբերմունքի ամրապնդումը:

- Հանրային ծառայողների ցածր իրավագիտակցությունը, մարդու իրավունքների ոլորտի և այդ ոլորտը կարգավորող օրենքների և հանրաճանաչ միջազգային նորմերի չիմացությունը:

- Հանրային մարմինների աշխատակիցների ոչ պատշաճ պաշտպանվածությունը:

- Օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայի անկատարությունը և սահմանադրական կարգի հիմունքներից մեկի՝ մարդու իրավունքներով պետության սահմանափակված լինելու անտեսումը:

-

- Մարդու իրավունքներին վերաբերող միջազգային կոնվենցիաներով ՀՀ ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը, այն է՝ օրենսդրության և, հատկապես, իրավակիրառական պրակտիկայի համապատասխանեցման գործընթացների ոչ լիարժեքությունն ու անհիմն վերապահումները:

- Մարդու իրավունքների խախտումներ թույլ տվող հանրային մարմինների ներկայացուցիչների հանդեպ պատժելիության սկզբունքի չկիրառումը, խախտում թույլ տվող աշխատակիցների նկատմամբ վերադասի հովանավորչությունը:

Ձեկույցում ներկայացված վիճակագրական տվյալները վկայում են, որ ստացված գրավոր դիմում-բողոքների շարքում շարունակում են քանակապես գերակշռել բողոքները հետևյալ մարմինների դեմ՝ ոստիկանություն՝ 192, դատարաններ՝ 166, դատախազություն՝ 94, արդարադատության նախարարություն և իր գերատեսչություններ՝ 93, պաշտպանության նախարարություն՝ 72, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն և սոցիալական ապահովության այլ մարմիններ՝ 179, տարածքային

կառավարման մարմիններ՝ 205 (այդ թվում Երևանի քաղաքապետարան՝ 132), տեղական ինքնակառավարման մարմիններ՝ 98 (այդ թվում Երևանի քաղապետարաններ՝ 72):

Որոշ մարմինների դեմ ներկայացված համեմատաբար փոքրաթիվ, իսկ երբեմն էլ եզակի բողոքները վերաբերում են մարդու իրավունքների խախտման լայն հասարակական հնչեղություն ստացած դեպքերին (օրինակ՝ բողոքներն ընդդեմ ազգային անվտանգության ծառայության, մշակույթի և երիտասարդության հարցերով նախարարության, կրթության և գիտության նախարարության, տրանսպորտի և կապի նախարարության և այլն):

Նկատի ունենալով, որ իրավական պետության կայացումը մեծապես կախված է երկրում օրինականության և արդարադատության վիճակից, զեկույցում նախ և առաջ մանրամասնվել են այն երևույթները, որոնք բացասաբար են անդրադառնում թե՛ մարդկանց իրավական պաշտպանվածության և թե՛ **նստիկանության, դատախազության և ազգային անվտանգության ծառայության** նկատմամբ լայն հասարակայնության մերժողական վերաբերմունքի խորացման վրա:

Այս մարմինների իրավասություններն ու գործառույթները կապվում են մարդու հիմնարար այնպիսի իրավունքների ու ազատությունների հետ, ինչպիսիք են՝ **հավաքների և միավորման ազատությունը, տեղաշարժի ազատությունը, ազատության և անձնական անձեռնմխելիության, կյանքի իրավունքները, բռնություններից և դաժան ու արժանապատվությունը նսենացնող վերաբերմունքից, ազատության անօրինական սահմանափակումից ազատ լինելու, անմեղության կանխավարկածից օգտվելու իրավունքները:**

Քրեական հետապնդման մարմինների կողմից մարդու իրավունքների խախտումները դիտարկվել են այդ մարմինների՝ մարդու իրավունքների պահպանության ու պաշտպանության նկատմամբ օրենսդրությամբ ամրագրված պարտականություններից ելնելով:

Քրեական հետապնդումն անձի դեմ կարող է սկսվել օրենքով նախատեսված հիմքերի և առիթների առկայությամբ միայն, քրեական հետապնդման ենթարկվողի իրավունքների և ազատությունների սահմանափակումները պետք է լինեն օրենքի շրջանակներում և օրենքով նախատեսված կարգով:

Երբ քրեական հետապնդում սկսելու հիմքերի և առիթների վերաբերյալ հաղորդումները չեն ընդունվում, ընդունված հաղորդումներին պատշաճ ընթացք չի տրվում, նման հիմքերի և առիթների առկայության պայմաններում քրեական հետապնդում չի հարուցվում կամ հարուցված քրեական գործով օբյեկտիվ ու բազմակողմանի քննություն չի իրականացվում, խախտվում են տուժողի՝ օրենքով պաշտպանվող մի շարք իրավունքները և շահերը. տուժողը զրկվում է դատական պաշտպանություն ստանալու, խախտված իրավունքները վերականգնելու, հանցագործությամբ պատճառված վնասի դիմաց փոխհատուցում ստանալու և նման բնույթի այլ իրավունքներից:

Տուժողի այդ իրավունքները խախտվում են, օրինակ, սպանության, մարմնական վնասվածքների, ծեծի և խոշտանգման, մարդու առևանգման և անձի դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերով, եթե հանցագործությունը չի բացահայտվել կամ բացահայտվել է ոչ ամբողջովին:

Նման հանցագործությունների բացահայտումը և հանցավորի նկատմամբ օրենքով սահմանված համարժեք պատժի կիրառումը ոչ միայն տուժողի իրավունքների վերականգնում է, այլ նաև հասարակական կյանքում անձի՝ օրենքով պաշտպանված լինելու, օրինականության սկզբունքների հաստատումն է: Նույնը տեղի ունի նաև սեփականության, անձի պատվի և արժանապատվության, աշխատանքային, ընտրական և այլ իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով: Տուժողի խախտված իրավունքների վերականգնմանն ուղղված քրեական հետապնդում հարուցելու և իրականացնելու ընթացքում է, որ հատկապես կարևորվում է օրինականության ապահովումը, ինչը ենթադրում է գործով անցնող բոլոր անձանց և հատկապես

կասկածյալի և մեղադրյալի դատավարական իրավունքների պահպանումը և այդ իրավունքներից նրանց օգտվելու հնարավորությունների լիարժեք ապահովումը:

3.1. Ոստիկանություն

Ոստիկանության գործունեությունը հիմնվում է օրինականության, անձի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության և հրապարակայնության սկզբունքների վրա:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, հոդված 3

Ոստիկանությունը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պաշտպանել մարդու կյանքը, առողջությունը, պատիվը, արժանապատվությունը, իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը հանցավոր և այլ ռոնձգություններից:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, հոդված 10

Ոստիկանությունում ծառայությունն իրականացվում է օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության և հրապարակայնության պահպանմամբ, միանձնյա ու կենտրոնացված ղեկավարման միջոցով:

«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 2

2005թ. ընթացքում ոստիկանության դեմ ստացվել է 192 դիմում-բողոք:

Ոստիկանությունը հանրային այն ծառայությունն է, որի հետ քաղաքացիներն առնչվում են առավել հաճախ և առավել բազմաբնույթ խնդիրներով՝ **անձնագրավորման, հաշվառումների, վիզաների և թույլտվությունների տրամադրման, զանազան տեղեկանքների ստացման և, որ ամենակարևորն է՝ իրավախախտումների վերաբերյալ հաղորդումների ընդունման, հաշվառման, օրենքով նախատեսված կարգով դրանց ընթացքի լուծման հարցերով:**

Եթե 2004թ. ոստիկանության դեմ տրված բողոքներում զգալի թիվ են կազմել ապօրինի բերման ենթարկելու, անազատության մեջ ապօրինի պահելու, վարչական իրավախախտում վերագրելու, ազատ տեղաշարժի իրավունքը սահմանափակելու վերաբերյալ բողոքները՝ կապված ներքաղաքական իրադրության զարգացումների հետ, ապա 2005թ. ընթացքում նման բնույթի բողոքների թիվը կտրուկ նվազել է՝ դարձյալ պայմանավորված ներքաղաքական իրադրությամբ, ինչը սակայն չի վկայում նման երևույթների բացակայության մասին:

Այդ են վկայում Պաշտպանին հղված բողոքները և լրատվամիջոցներում զետեղված հաղորդագրությունները:

Օրինակ 1. Սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ սպասվելիք հանրաքվեի կապակցությամբ «Արդարություն» դաշինքի կողմից Արմավիրում ուսուցողական հավաքների կազմակերպումն ու անցկացումը տեղի ոստիկանության միջամտությամբ խափանվել է:

Օրինակ 2. «Նոր ժամանակներ» կուսակցությունը մի քանի անգամ դիմել է Պաշտպանին՝ բողոքելով ՊԱՏ միջամտություններից, որոնց հետևանքով խափանվել է կուսակցության կողմից Երևանում կազմակերպված երթը: Իսկ Սևանում ապրիլի 20-ին կուսակցության կազմակերպած հավաքի ժամանակ, որն ի դեպ նախատեսված շենքի հոսանքազրկման պատճառով ստիպված անց էր կացվում փողոցում, մի խումբ ոստիկաններ քաշքշուկ են սկսել հանրահավաքի մասնակիցների հետ, որի արդյունքում կուսակցության երիտասարդ անդամներից մեկը հրազենային վնասվածք է ստացել հանրահավաքը խանգարողներից մեկի կրակոցից:

Օրինակ 3. Ընդդիմության կողմից սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի դեմ կազմակերպված բողոքի ակցիաների մասնակիցներին ոստիկանությունը ծեծել է, տեղափոխել ոստիկանական բաժանմունքներ, արգելել է հանդիպել փաստաբանների հետ և մի քանի ժամ անհիմն պահելուց և արձանագրություններ կազմելուց հետո միայն ազատ արձակել, իսկ ավտոտեքստի մասնակցող մեքենաների վարորդներին ծեծել են և մեքենաները տեղափոխել են տուգանային հրապարակ:

Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի անցկացումից հետո ընդդիմության նախատեսվող հանրահավաքների կապակցությամբ ընդդիմության մի շարք ակտիվիստներ կանչվել են ոստիկանության բաժիններ և նախազգուշացվել, իսկ այնուհետև անցկացվող հանրահավաքների ընթացքում արձանագրվել են ոստիկանության կողմից ցուցարարների ավտոմեքենաների տուգանային հրապարակ ապօրինի տանելու, հանրահավաքի մասնակիցների նկատմամբ բռնության փորձ կատարելու դեպքեր, արվել են նաև վարչական կալանք կիրառելու փորձեր: Արձանագրվել է բռնության փորձ լրագրողի նկատմամբ անմիջականորեն ոստիկանության աշխատողի կողմից:

Վերոնշյալ անօրինական միջամտությունների կապակցությամբ ինչպես անմիջական բողոքատուների, այնպես էլ Պաշտպանի կողմից դատախազությանը տրվել են հաղորդումներ, որոնց ընթացքը չի կարող պատշաճ համարվել, դեռ ավելին՝ ոստիկանության ապօրինի գործողություններն արդարացնելու միտումով դատախազության կողմից հղումներ են արվում ազգային օրենսդրության բացերին: Օրինակ, «Ժողովներ, հավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում ամրապնդվում են ոչ թե հանրահավաքների ազատության երաշխիքները, այլ հրապարակային միջոցառումների կազմակերպման և անցկացման սահմանափակումները: Ըստ այդմ դատախազության կողմից տրվում են պատասխաններ այն մասին, որ ոստիկանության ձեռնարկած միջոցները չեն հակասում օրենքով նախատեսված դեպքերին ու կարգին: Սա գալիս է ևս մեկ անգամ ապացուցելու, որ ազգային օրենսդրության նկատմամբ միջազգային սահմանադրորեն ամրագրված գերակայության սկզբունքն այս ոլորտում շարունակ անտեսվում է:

Վերոհիշյալ դեպքերը վկայում են, որ հակառակ սահմանադրական այն սկզբունքի, որ զինված ուժերը չպետք է միջամտեն երկրի քաղաքականությանը, այնուամենայնիվ, զինված ուժերի բաղկացուցիչ մաս հանդիսացող ոստիկանությունը ներքաղաքական իրավիճակի սրման դեպքերում ծառայեցվում է իշխանությունների քաղաքական շահերին:

Ոստիկանության կողմից շարունակվում է վարչական կալանքի կիրառումն այս կամ այն հանցագործությունը բացահայտելու նպատակով: Առկա են դեպքեր, երբ հանցագործության դեպքով կասկածվողը կամ ենթադրյալ ակտիվ վկան բերման է ենթարկվել, կազմվել է կեղծ արձանագրություն տվյալ անձի կողմից իբր հասարակական կարգի խախտում թույլ տրված լինելու մասին, ներկայացվել է դատարան, և դատարանը, չնկատելու տալով արձանագրության ակնհայտ անհիմն լինելը, սահմանել է վարչական կալանք:

Օրինակ 4. 2005թ. օգոստոսի 22-ին Մալաթիա-Մեբաստիա համայնքի ոստիկանության աշխատողների կողմից բաժին բերման է ենթարկվել 4 քաղաքացի՝ տարբեր ժամերի, տարբեր փողոցներից, և, ըստ բերման ենթարկելու մասին արձանագրությունների և բերման ենթարկող ոստիկանների զեկուցագրերի, այդ չորսից երեքը առանձին-առանձին փողոցում կանգնած անհասցե հայհոյելիս են եղել, ոստիկանները մոտեցել և նախազգուշացրել են, նրանք չեն ենթարկվել, «զազրախոսել են ոստիկանների հետ»: Չորրորդ անձը, ըստ զեկուցագրի և բերման արձանագրության՝

«Մպանություն կատարելու կասկածանքով Երևան քաղաքի դատախազություն նախաքննության ներկայացնելիս՝ վերջինս ավտոմեքենայի մեջ սկսել է զագրախոսել, չկատարել մեր օրինական պահանջները, վիճաբանել մեզ հետ, ինչը տեղի է ունեցել Սեբաստիա փողոցի վրա»: Բառացի նույն ձևակերպումներն են, ինչպիսիք եղել են 2004թ. անցկացվող հանրահավաքների մասնակիցների նկատմամբ կազմված տասնյակ վարչական իրավախախտումների գործերով:

Այս չորս գործն էլ նույն օրը լսվել են նույն դատավորի կողմից և նրանցից երեքի նկատմամբ սահմանվել է կալանք՝ 5 օր ժամանակով, մեկի նկատմամբ 3 օր՝ **«Քույլ են տվել Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի հոդված 82-ով նախատեսված իրավախախտում»** ձևակերպումով:

Ուշագրավ է այն, որ այս չորս «իրավախախտում» էլ խոստովանել են իրենց մեղքը: Մեջբերենք նրանց «խոստովանությունները»՝ պահպանելով բնօրինակների ուղղագրությունը:

«Ես զայրացած տանից դուրս եկա: Ծիշտն ասած ես շատ էի զայրացած վերացական բնույթի հայհոյանքներ սկսեցի տալ»: «Գտնվելով Օգանով փողոցի մոտակայքում, քանի որ ճղայնացած էի և նեռվայնացած ինքս ինձ բարձրաձայն դժգոհություն էի հայտնում և անհիմն զոռզոռում անցորդների հետևից»: «Գտնվում էի մեր շենքի բակում և նեղված իմ դժվար ապրելակերպի՞մ նոռնալ աշխատանք չունենալուց պահի ազդեցության տակ բարցրաձայն տալիս էի վերացական բնույթի հայհոյանքներ»: «Ոստիկանության Մալաթիայի բաժնից դատախազություն տանելիս՝ ճանապարհին ես սկսեցի զագրախոսել ոստիկանության աշխատակիցների հետ՝ քանի որ չէի ուզում գնալ դատախազություն և ասում էի թե ինչու ես պետք է դատախազությունում ցուցմունք տամ»:

Իրականում այս չորս անձինք անցնելիս են եղել Երևան քաղաքի դատախազությունում քննվող սպանության գործով և ոստիկանությանն անհրաժեշտ են եղել նրանց հետ **«աշխատանք տանելու համար»**: Նրանցից մեկն այնուհետև սպանության այդ գործով դարձել է մեղադրյալ: Այս պայմաններում է, որ պաշտպանության կողմն իրավացիորեն վիճարկում է մեղադրանքի հիմքում դրված ապացույցների ձեռք բերման օրինականությունը:

Այսպիսի դեպքերը, որոնք պետք է դասել պաշտոնական հանցագործությունների շարքին, վկայում են, որ ոստիկանությունը չի փոխում իր գործելակերպը, այստեղ շարունակում են հաշվի չնստել մարդու իրավունքների և ազատությունների հետ՝ չխորշելով նաև ոչ իրավաչափ մեթոդներից:

Օրինակ 5. Թիվ 1-1304 գործով հաստատվել է դիմումատուի բողոքն այն մասին, որ ինքը տարվել է Արաբկիրի ոստիկանության բաժին և 24 ժամ ապօրինի պահվել է բաժնում:

Օրինակ 6. Թիվ 1-0122 գործով դիմումատուն բողոքել է, որ Շենգավիթի ոստիկանության աշխատակիցները պարբերաբար անհանգստացնում են իր որդուն՝ հանցանք կատարելու մեջ կասկածելով: **Նման վերաբերմունքը դադարեցվել է Պաշտպանի միջամտությունից հետո:**

Օրինակ 7. Թիվ 1-1040 գործով դիմումատուն բողոքել է, որ իր բնակարանից կատարված գողության փաստով հարուցված քրեական գործի վարույթը Մալաթիայի ոստիկանության քննիչի կողմից կասեցվել է, սակայն ինքը որպես տուժող այդ մասին գրավոր չի տեղեկացվել, չի կարող գնահատական տալ կասեցման հիմնավորվածությանը:

Օրինակ 8. Թիվ 1-1017 գործով դիմումատուն բողոքել է, որ իր տղայի էլեկտրահարման գործով Արմավիրի մարզի քննչական մարմինները չեն ապահովում

գործով քննության լրիվությունը, որի արդյունքում մեղավորներն ի հայտ չեն գալիս, վնասի հատուցում ստանալ չեն կարող:

Օրինակ 9. Էրեբունի և Նուբարաշեն համայնքի ոստիկանության հերթապահ մասում ապօրինի անազատության պայմաններում պահվող քաղաքացու փաստաբանը փորձել է հանդես գալ նրա շահերի պաշտպանությամբ և, ի պատասխան, ոստիկանության աշխատակիցները նրան վիրավորել են և, նույնիսկ, նրան հերթապահ մաս տանելու և պահելու փորձ են արել:

Օրինակ 10. Ոստիկանության ոչ իրավաչափ գործելակերպի առումով բնութագրական է հասարակական հնչեղություն ստացած «Ռեքո Ռեքորդս» ՍՊԸ վերաբերյալ գործը: Այստեղ խուզարկություն է կատարվել առանց դատարանի որոշման, կատարվել է ձայնագրման միջոցների և ձայնասկավառակների զանգվածային առգրավում, արգելվել է ՍՊԸ-ի գործունեությունն առանց բավարար հիմնավորման:

Այս և նման բնույթի այլ բողոքների վերաբերյալ Պաշտպանի միջամտության արդյունքում մեծավ մասամբ արձանագրվել են դրական արդյունքներ, այն է՝ դադարեցվել է քաղաքացուն անհիմն անհանգստացնելը, ազատ է արձակվել անազատության պայմաններում ապօրինի պահվողը, դատախազության կողմից վերանայվել է կասեցված քրեական գործը, տուժողին ուղարկվել են համապատասխան փաստաթղթերը, տրվել են անհրաժեշտ տեղեկություններ:

Նման գործերով կա նաև օրենսդրության հստակեցման խնդիր: Այսպես, քրեական դատավարությունը նախատեսում է տուժողի իրավունքը՝ ծանոթանալ գործի նյութերին նախաքննության ավարտից հետո: Նախաքննության ավարտ է համարվում քրեական գործի վարույթի կարճումը կամ մեղադրական եզրակացություն կազմելու համար ապացույցները բավարար համարելը:

Գործի վարույթի կասեցումը՝ հանցավորի ով լինելը պարզված չլինելու կամ մեղադրյալի գտնվելու վայրը հայտնի չլինելու պատճառով, չի համարվում նախաքննության ավարտ, և այդ պատճառաբանությամբ տուժողին գործի նյութերը չեն տրամադրվում, նա հնարավորություն չի ունենում տեղեկանալու, թե որքանով է ապահովվել քննության լրիվությունը, և զրկվում է քննչական մարմնի անգործությունը կամ ոչ օբյեկտիվ քննությունը բողոքարկելու հնարավորությունից այն դեպքում, որ քրեական դատավարությունը տուժողին վերապահել է քննիչի որոշումը բողոքարկելու իրավունք:

Քրեական գործի վարույթի կասեցման որոշումը տուժողը հարկադրված է բողոքարկել կուրորեն՝ դժգոհելով մեղադրյալի ով լինելը կամ գտնվելու վայրը պարզված չլինելու հանգամանքներից, չունենալով նաև կասեցման որոշման օրինակը:

Մինչդեռ, կասեցման որոշմանը և գործի նյութերին ծանոթանալու դեպքում հնարավոր է, որ նա բավարարվեր քննության լրիվությամբ և նման բողոք չներկայացներ, կամ քննության նկատմամբ հսկող դատախազի ուշադրությունը հրավիրեր քննության այն կոնկրետ բացթողումների վրա, որոնց կատարումը կարող էր նպաստել հանցագործության բացահայտմանը կամ մեղադրյալի հայտնաբերմանը:

Զգալի թիվ են կազմում բողոքները, որոնց հեղինակները, ցանկանալով մնալ անհայտ կամ հայտնելով իրենց տվյալները, խնդրում են գրավոր չձևակերպել քննության սկզբնական փուլում ոստիկանություն բերման ենթարկվելու պայմաններում բռնությամբ խոստովանություններ կորզելու վերաբերյալ իրենց բողոքները: Խնդիրը նրանում է, որ նման բողոքներ մեղադրյալների, նրանց հարազատների, պաշտպանների կողմից տրվում են այն ժամանակ միայն, երբ արդեն խափանման միջոցը կիրառվել է կալանք և նախաքննությունը հասցվել է որոշակի աստիճանի, երբեմն նաև երբ արդեն իսկ գործն ուղարկված է դատարան:

Նման պայմաններում Պաշտպանը հնարավորություն չունի բացահայտելու՝ հաստատելու կամ ժխտելու, թույլ տրված ապօրինությունը: Այդպիսի հաղորդումներն ուղարկվում են դատախազություն, որտեղ սակայն դեռևս որևէ բողոք, որքան էլ տարօրինակ է, հաստատում չի ստացել: Դրա վկայությունն են նաև վերևում մեջբերված վարչական կալանքի գործերը, որոնց առկայության մասին քրեական գործը քննող մարմինը չէր կարող չիմանալ, և իմանալով հանդերձ, քննության առարկա չի դարձրել:

Այն, որ նման բողոքները շրջանցվում են նաև դատարանների կողմից, և ոչ մի մարմին դրանով չի զբաղվում, նշանակում է, որ կա խնդիր՝ ստեղծելու նման բողոքները քննող անկախ պետական մարմին, օրինակ՝ վարչական գործեր քննող դատարան:

Մեծ թիվ են կազմում ոստիկանության դեմ բողոքները՝ կապված անձնագրերի տրամադրման, հաշվառումների, ելքի թույլտվությունների հետ: Այդպիսի խնդիրների առաջացման հարցերում մեծ դեր ունի անձնագրային համակարգի մասին օրենքի բացակայությունը: Առայժմ այն կարգավորվում է ՀՀ կառավարության հաստատած «ՀՀ անձնագրային համակարգի մասին» կանոնադրությամբ: Կանոնադրության համաձայն, 16 տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է ունենալ ՀՀ անձնագիր: Սա քաղաքացու համար սահմանված պարտականություն է, որը սակայն քաղաքացին չի կարողանում կատարել, եթե չունի մշտական կամ ժամանակավոր բնակության վայր:

Օրինակ 11. Թիվ 1-0338 գործով դիմումատուն գանգատվել է, որ ապրում է վարձով բնակարանում, ունի 6 տարեկան երեխա: ՀՀ անձնագիր չի կարողացել ստանալ, քանի որ չունի հաշվառում, առկա է խորհրդային անձնագիրը: Աշխատում է, սակայն իրեն աշխատավարձ չեն վճարում, քանի որ չունի սոցիալական քարտ, իսկ սոցիալական քարտ ստանալ չի կարողանում, որովհետև չունի ՀՀ անձնագիր: Պաշտպանի միջամտությունից հետո է միայն, որ նրան անձնագիր տրվել է փաստացի բնակության վայրի ոստիկանությունից, ինչը կարող էր արվել նաև ավելի վաղ:

Օրինակ 12. Մեկ այլ գործով դիմումատուն գանգատվել է, որ իր երեխային անձնագրավորելը անձնագրերի և վիզաների վարչության կողմից մերժվել է «նպատակահարմար չլինելու» պատճառաբանությամբ:

Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ երեխայի հայրը հետախուզվում է որպես մեղադրյալ: Ոստիկանությունը սահմանափակում է երեխայի իրավունքը՝ հորը ներկայանալ հարկադրելու նպատակով, ինչն ակնհայտորեն անօրինական է:

Ոստիկանությունում նման գործողությունները համարում են այնքան սովորական և ընդունելի, որ ըստ ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի հայտարարության՝ երեխաների անձնագրավորման նման մերժումները հասնում են տասնյակների:

Ոստիկանության այսպիսի գործողությունները ոչ միայն անհարիր են երեխաների նկատմամբ հայաստանյան հոգեկերտվածքին, այլև խախտում են «Երեխայի իրավունքների մասին» միջազգային կոնվենցիան, որին Հայաստանը ևս միացել է:

Ոստիկանության դեմ իրավունքների խախտման վերաբերյալ դիմում-բողոքներ են ստացվել նաև ոստիկանության գործող և նախկին աշխատակիցների կողմից:

Օրինակ 13. Ոստիկանության կողմից կասեցվել են ոստիկանության երկու աշխատակիցների լիազորություններն այն հիմնավորմամբ, որ ՀՀ դատախազությունում քննվող քրեական գործով իրենք նույնպես կարող են մեղադրվել որպես մասնակիցներ: Ոստիկանների բողոքը հիմնված էր այն փաստերի վրա, որ դեպքից անցել էր 6 ամիս, հանցագործությունը չէր բացահայտվել: Գործի վարույթը կասեցված է, իրենց նկատմամբ որևէ մեղադրանք չի ներկայացվել, իրենց չեն ազատել աշխատանքից, սակայն չեն

վերականգնում իրենց լիազորությունները, ինչպես նաև չի տրամադրվում դրամական բավարարում:

Բողոքի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ ոստիկանությունն այս երկու աշխատակցի աշխատանքի թողնել կամ չթողնելու հարցի լուծումը պայմանավորել է դատախազությունում քննվող քրեական գործով ընդունվելիք վերջնական որոշմամբ, սակայն դատախազությունում քրեական գործի վարույթը կասեցվելիս ոստիկանության այս երկու աշխատակիցների վերաբերյալ գործով որևէ որոշում չի կայացվել, քանի որ նրանք ունեցել են վկայի կարգավիճակ:

Պաշտպանը խնդրի կապակցությամբ պարզաբանումներ է պահանջել, ինչին ի պատասխան ոստիկանությունից հաղորդել են, որ ոստիկաններն ազատվել են ծառայությունից՝ ծառայողական քննության տվյալների հիման վրա: Իրավունքի վերլուծության և գործի մանրամասն ուսումնասիրության արդյունքում եզրակացվել է, որ ոստիկանության ծառայողների նկատմամբ անհիմն է եղել նրանց լիազորությունների կասեցումը: Ծառայությունից ազատված ոստիկանների վարքագիծն այս գործի տեսանկյունից ամենևին էական չէ, քանի որ այստեղ կարևորագույն խնդիր է ծառայողական հարաբերություններում վարչական մարմնի կողմից օրենքի տառի պահպանումը, ինչը նշանակում է կամայականության բացառում:

Սա բնորոշ օրինակ է վերադասի կամայական մոտեցումներից հանրային մարմնի ներկայացուցչի լիակատար անպաշտպանության: Չգալի թիվ են կազմում նման հիմքերով բողոքները նաև այլ հանրային մարմինների ներկայացուցիչների կողմից:

Բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում ձեռքբերված տվյալները հիմք են տալիս հանգելու այն հետևությանը, որ ոստիկանությունն իր ստորաբաժանումներով պահպանողական է մարդու իրավունքների խախտմանը հանգեցնող իր գործելակերպում: **Դա հատկապես վերաբերում է հանցագործության բացահայտման նպատակների անվան տակ անձին ապօրինի բերման ենթարկելուն, ապօրինի անազատության պայմաններում պահելուն, ձևական արձանագրությամբ վարչական կալանք կիրառելուն, քննությանը խորթ մեթոդների գործադրմանը, բնակարանի ապօրինի խուզարկությունը զննության արձանագրությամբ քողարկելուն և նմանաբնույթ այլ խախտումներին:** Դրան նպաստում է նման խախտումների նկատմամբ դատախազական մարմինների հանդուրժողականությունը, ինչը երբեմն արդարացվում է հանցագործության բացահայտման շահերով: Դա բերել է նույնիսկ նրան, որ նման երևույթների նկատմամբ հաշտվողական տրամադրություններ են ստեղծվել նաև հասարակության և անհատների մտածելակերպում:

3.2. Դատախազություն

Երկրում օրինականության ապահովման և մարդու իրավունքների պաշտպանության հարցերում դժվար է գերազնահատել դատախազական մարմինների դերը: Սահմանադրությամբ դատախազությունը չի դիտվում որպես ընդհանուր հսկողություն իրականացնող մարմին: Սակայն քրեական հետապնդում հարուցելու, հետաքննության և նախաքննության, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու, պետական շահերի պաշտպանությամբ հանդես գալու իրավունքները բավարար չափով ընդգրկում են և ներառում են հենց այն հիմնական բնագավառները, որտեղ տեղ ունեն մարդու իրավունքների խախտումները:

Գործող օրենսդրությամբ դատախազության պարտականություններից են՝ պարտադիր արձագանքել զանգվածային լրատվամիջոցներով կատարված կամ նախապատրաստվող հանցագործության մասին տրված հաղորդումներին, պատշաճ կարգով պարտադիր ստուգել հետաքննության կամ նախաքննության մարմինների դեմ տրված բողոքները, լուծել տրված բացարկների հետ կապված խնդիրները և ապահովել հետաքննության և նախաքննության ընթացքում դատավարության մասնակիցների իրավունքների իրականացումը, դատարանում հրաժարվել չհիմնավորված մեղադրանքը

պաշտպանելուց, քաղաքացիական հայց ներկայացնել դատարան, երբ առկա է պետական շահերի պաշտպանության անհրաժեշտություն:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման վայրերում օրինականության ապահովման նկատմամբ հսկողությունը դատախազության առանձնահատուկ խնդիրներից է և պահանջում է ամենօրյա և հետևողական աշխատանք ոչ միայն անհատական բողոքներով, այլև ընդհանուր և սիստեմատիկ ստուգայցերով, ընդհանուր ուսումնասիրությունների իրականացման, անհատական հանդիպումների և գրույցների ճանապարհով տեղ գտած խախտումները, թերացումներն ու բացթողումները վեր հանելու, դրանք վերացնելու պահանջ ներկայացնելու ճանապարհով:

2005թ. ընթացքում դատախազության դեմ ստացվել է 94 դիմում-բողոք: Ներքոբերյալ օրինակները դիտարկում են մարդու իրավունքների խախտումները դատախազության, այդ թվում և զինվորական դատախազության, ներկայացուցիչների կողմից օրենքով նախատեսված իրենց պարտականությունների անբարեխիղճ կատարման կամ անգործության տեսանկյունից:

Օրինակ 14. Հասարակական լայն հնչեղություն ստացած **Ռ-ազմիկ Սարգսյանի** հացադուլը (սպանության գործով ամբաստանյալ) տևել է ավելի քան 5 ամիս (հացադուլը դադարեցվել է 2005թ. դեկտեմբերի վերջին): Դեռևս նախաքննության ընթացքում ՀՀ դատախազությունը տեղյակ է պահվել, որ տվյալ գործով անցնող անձանց նկատմամբ **զինվորական դատախազությունը թույլ է տալիս** դատավարական իրավունքների խախտումներ՝ որպես վկա անցնող զինվորականներին **զինվորական ոստիկանությունում ապօրինի պահելը, նախնական կալանքի վայր չհամարվող ոստիկանության արգելատանը կալանավորին պահելը** և այլն: Առկա են եղել նաև գործով անցնող անձանց և նրանց պաշտպանների բողոքները՝ զինվորական դատախազությունում քննությանը խորթ մեթոդներ կիրառելու մասին: Այդ բողոքների քննարկումը հանձնարվել է զինվորական դատախազությանը, որտեղ բնականաբար գերակայել է գերատեսչական շահը, և բողոքները պատշաճ ընթացք չեն ստացել:

Ընդհանրապես անընդունելի է ՀՀ դատախազության այն գործելակերպը, երբ դատախազության, այդ թվում և զինվորական դատախազության, ստորաբաժանման քննիչի՝ դատախազի դեմ նրանց վարույթում քննվող քրեական գործով բողոքն ուղարկվում է նույն ստորաբաժանման քննարկմանը: Այս կերպ է վարվել դատախազությունը նաև տվյալ բողոքի հետ:

Դատախազությունը չի միջամտել և իր վրա չի վերցնել խնդրի լուծումը նաև այն ժամանակ, երբ վերաքննիչ դատարանը դատական նիստեր է նշանակել ամբաստանյալի մասնակցությամբ այն դեպքում, երբ նրա առողջական վիճակի կտրուկ վատթարացման պատճառով նիստերի դահլիճ շտապ օգնություն է հրավիրվել:

Ուշագրավ է, որ այս գործով առկա են իրարամերժ բժշկական եզրակացություններ: Բացի այդ, ՀՀ արդարադատության նախարարությունը չի իրականացրել **համարժեք գործողություններ՝** հաճախակի և սիստեմատիկ բժշկական հետազոտություններ, որոնք նախատեսված են նման դեպքերի համար: Ավելին, բժշկական հետազոտություն անցկացնելու Պաշտպանի առաջարկը արդարադատության նախարարությունը մերժել է՝ հիմնավորելով, որ հետազոտություն անց է կացվել «ընդամենը» 10 օր առաջ:

Չենց այն պատճառով, որ հացադուլավորի բողոքն առաջին հերթին վերաբերում է զինվորական դատախազության գործողություններին՝ զինվորական դատախազի օգնականի մասնակցությանը դատաքննությանը որպես մեղադրող և նրա շահագրգիռ լինելուն, **դատախազությունը պետք է հարուցեր և իրականացներ առանձին վարույթ, ինչը չի արվել:**

Նախաքննության ընթացքում քննության խորթ մեթոդներ կիրառելու վերաբերյալ բողոքները, եզակի բացառություններով, դատախազության կողմից թողնվում են

անհետևանք, ինչը սովորության համաձայն և բոլորովին անհիմն պատճառաբանվում է դատաքննությանը իրականությունը լիարժեք ստուգելու և վերհանելու անհնարինությանը: Նման բողոքները պատշաճ կարգով քննության առարկա չեն դարձվում նաև դատաբաններում:

Անհրաժեշտ է, որպեսզի դատախազությունը հետևողական լինի և վերհանի իրականում տեղ գտած քննությանը խորթ մեթոդների կիրառությունը՝ հաղթահարելով այն պատճենը, որը ստեղծվում է նման մեթոդներ կիրառող հետաքննության աշխատակիցների կողմից, որոնք, բնականաբար, անցնելով որպես գործով վկաներ, օգտվում են սեփական անձի դեմ չվկայելու իրավունքից:

Օրինակ 15.1. ԱԱ ծառայության նախաձեռնությամբ (տե՛ս՝ 3.3. Ազգային անվտանգության ծառայություն, Օրինակ 15.2.) հարուցված քրեական գործերից ուշագրավ է «Ռայթ իրավաբանական ծառայություն» ՍՊԸ-ի տնօրեն **Վահե Գրիգորյանի** դեմ հարուցված քրեական գործը, որը ՀՀ դատախազությունը չի կարողանում հասցնել տրամաբանական ավարտի: Փաստաբանը **պետական և դատական համակարգի բացահայտ կամայականություններից** պաշտպանել է Երևանի Բուզանդի փողոցի բնակիչներին նրանց սեփականության հարկադիր օտարման գործերով: Նշված գործերից երկուսով, սպառելով ներպետական իրավական պաշտպանության բոլոր միջոցները, Վ. Գրիգորյանը իր վստահորդների գանգատները ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Վ. Գրիգորյանի կալանավորումը հասարակական հնչեղություն է ստացել որպես **փաստաբանի հետապնդում**: Նրան վերագրված է մեղադրանք յուրացման և փաստաթղթերի կեղծման համար, սակայն նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումից չի երևում, թե ում ունեցվածքն է նա յուրացրել, և կա արդյոք գործով տուժող կողմ:

Վ. Գրիգորյանի նկատմամբ **հարուցվել է քրեական գործ**, իսկ 2005թ. հոկտեմբերի 7-ից **փաստաբանը գտնվում էր կալանքի տակ**: Ի դեպ, մեղադրանքը կառուցվել է նույն գործով անցնող մեկ այլ մեղադրյալի **կեղծ ցուցմունքների հիման վրա**, ինչի վերաբերյալ այդ անձը **դիմել է Պաշտպանին**: Պաշտպանի միջամտությունը խափանման միջոցը փոխելու վերաբերյալ **մերժվել է**, իսկ ի պատասխան գլխավոր դատախազին ուղղված վերը շարադրված փաստերի մասին նամակի՝ ստացվել է պատասխան այն մասին, որ Պաշտպանը գերազանցել է իր լիազորությունները:

Ուշագրավ է, որ Վ. Գրիգորյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց երկու անգամ էլ ընտրվել է հենց դատախազության պահանջով: 2005թ. դեկտեմբերի 30-ից Վ. Գրիգորյանը **տեղափոխվել և պահվում էր ազգային անվտանգության ծառայության մեկուսարանում**: 2006թ. փետրվարին Վերաքննիչ դատարանի որոշմամբ առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանվել է, և Վ. Գրիգորյանը դատարանի դահլիճից ազատ է արձակվել: Վերաքննիչ դատարանի որոշման մեջ **հաստատվել են բոլոր այն փաստարկները՝** չկան քննությունից խուսափելու, քննության վրա ազդելու սպառնալիք կամ խափանման միջոցը կալանք ընտրելու այլ հիմքեր, որոնց կապակցությամբ Պաշտպանը առաջարկ է ներկայացրել դատախազություն և որոնց կապակցությամբ մերժում է ստացել:

Օրինակ 16. Հասարակական հնչեղություն ստացած թիվ 1-0719 գործով Երևանի Պոռչյան 19 հասցեի բնակիչը հայտնել է, որ **կեղծ փաստաթղթերի միջոցով** կտակ, կտակագրի համաձայնություն և լիազորագիր, **իրենից հափշտակել են** նշված հասցեում գտնվող 960 ք/մ հողամասը և բնակարանը: Դիմումատուն ներկայացրել է բողոքում շարադրվածի մասին վկայող մի շարք փաստաթղթեր:

Խնդրով զբաղվել է նաև ՀՀ նախագահի վերահսկողական ծառայությունը, որի կազմած տեղեկանքը ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն: Կայացվել է որոշում նյութերով քրեական գործ չհարուցելու մասին՝ նկատի ունենալով, որ այն ենթակա է լուծման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տեղեկանքը և ներկայացված փաստաթղթերը վկայում են, որ դիմումատուն նշված հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել ՀՀ օրենսդրության համաձայն, ինչը չի կարելի ասել օտարերկրյա քաղաքացի Գ. Դնգիկյանի կամ նրա ներկայացուցչի կողմից այդ իրավունքը ձեռք բերելու հիմքերի մասին, որոնց ուսումնասիրության դեպքում անգեն աչքով նկատելի է, մեղմ ասած, օրենքի պահանջներին դրանց անհամապատասխանությունը, ինչի մասին գրավոր տեղեկություններով վկայել են նաև համապատասխան հանրային մարմիններն ու անձինք: Այդ փաստաթղթերի հիման վրա ճանաչվել են օտարերկրյա քաղաքացու սեփականության իրավունքը նշված հասցեում գտնվող տան մի մասի և 960 ք/մ հողամասի նկատմամբ: Դատարաններն իրենց հերթին անհիմն մերժել են նման ապօրինի գործողությունների դեմ բերված դիմումատուի բողոքները և կայացրել են կողմնակալ վճիռներ:

Անտեսվել է, որ ՀՀ Սահմանադրության և օրենսդրության համաձայն՝ Գ. Դնգիկյանը, որպես **օտարերկրյա քաղաքացի, Հայաստանում չի կարող լինել հողի սեփականատեր**, որ հողատարածքը հատկացվել է բնակարան կառուցելու նպատակով, և ՀՀ հողային օրենսգրքի հողված 9-ի համաձայն 1991 թ. **սեփականության իրավունքով անհատույց թողնվել է** ՀՀ քաղաքացիներին, որոնց իրավահաջորդն է հանդիսանում դիմումատուն, որ օրենքի ուժով այդ հողամասն արդեն **դարձել է նշված հասցեում բնակվող քաղաքացիների սեփականությունը**:

Օտարերկրյա քաղաքացին չունի նաև այդ հողամասից օգտվելու իրավունք, որովհետև չունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագիր՝ ինչպես պետության, այնպես էլ սեփականատեր քաղաքացիների հետ:

Բողոքում նշված փաստերը, այն է՝ կեղծ փաստաթղթերի միջոցով ուրիշի գույքին տիրանալը, պաշտոնատար անձի կողմից զբաղեցրած դիրքի օգտագործմամբ դրան նպաստելը, պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի հողված 178-ով նախատեսված հանցագործության հատկանիշներ, որոնք հաստատելու կամ հերքելու նպատակով անհրաժեշտ է հարուցել քրեական գործ:

ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկված գրությունը մնացել է անպատասխան, իսկ մեղավորներին պատասխատվության կանչելու փոխարեն, ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիայի բաժնի պետ Մ. Մինասյանը «խորհուրդ» է տվել քաղաքացիներին դիմել դատարան՝ հանցագործության տարրի բացակայության պատճառով:

Դեռևս 2004թ. զեկույցում փորձ է արվել դատախազության և դատարանների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ խափանման միջոցը կալանք ընտրելիս հաճախակի նախնական կալանքի անհրաժեշտությունը հիմնավորված չի լինում բավարար չափով, իսկ երբեմն նաև բավարար հիմնավորված չի լինում մեղադրանքը:

Դիտարկումներն ու առանձին գործերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ որոշակի դրական տեղաշարժ տեղի ունեցել է, և քրեական հետապնդման մարմինները խափանման միջոցը կալանք ընտրելու անհիմն միջնորդություններ ավելի քիչ են ներկայացնում, դատարաններն ավելի հաճախ են մերժում նման միջնորդությունները, և որ ամենակարևորն է՝ դատարանները խափանման միջոցը կալանք ընտրելու հարցը քննարկելիս անդրադառնում են նաև մեղադրանքի բավարար չափով հիմնավորված լինել կամ չլինելու խնդրին:

Օրինակ 17. Բողոքներից մեկում նշվում է, որ երկու անչափահաս երեխաների մայր հանդիսացող կալանավորվածը **մեղադրվում է որպես սպանության դրդիչ**: Չմիջամտելով գործի քննության ընթացքին, **Պաշտպանը դիմել է դատախազին՝ խափանման միջոց կալանքը ընտրելու հանգամանքը վերանայելու խնդրանքով**:

Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով մեղադրյալին կալանքի պայմաններում պահելու աննպատակահարմարությունը, մերժել է նրան կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումը:

Դատախազությունը չի համաձայնվել և ներկայացրել է վերաքննիչ բողոք: Հենց այն, որ ընդամենը 24 ժամվա ընթացքում, որպես բացառիկ դեպք, վերաքննիչ դատարանը հասցրել է պահանջել գործը, վերանայել և երկարացնել կալանքի տակ պահելու ժամկետը, վկայում է, որ առկա է դատախազության անմիջական ազդեցությունը դատարանի վրա:

Ի դեպ, նույն անձը, մինչև դատարանի կողմից կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումը, **24 ժամ պահվել է կալանքի տակ ապօրինի կերպով**, ինչն այնուհետև օրինականացվել է դատարանի հետագա որոշմամբ:

Այս դեպքը վկայում է, որ **դատարանը կատարել է դատախազության թելադրանքը, քրեակատարողական հաստատությունը նույնպես անձին ապօրինի պահել է անազատության մեջ դատախազության պահանջով:** Դատարանը հաճախակի կաշկանդված է լինում դատախազության կամքով, քրեակատարողական հաստատությունն անձին ապօրինի պահում է անազատության մեջ նույնպես դատախազության պահանջով: **Հետևաբար, ակնհայտ է այդ մարմինների կախվածությունը դատախազությունից:** Հաշվի առնելով դատախազության դերն ու նշանակությունն իրավապահ մարմինների համակարգում, մարդու իրավունքների պահպանման և պաշտպանության խնդիրների բարելավումը պետք է պայմանավորել առաջին հերթին դատախազության գործունեության բարելավմամբ:

Երևան քաղաքում ֆիզիկական անձանց գույքի հարկադիր օտարման ընթացքում իրավունքի խախտումների դեպքերը ևս կապված են դատախազության անբարեխիղճ աշխատակիցների ոչ օրինաչափ գործունեության հետ:

Օրինակ 18. Իրացնողի կողմից բազմաբնակարան շենքի մի մասը պայմանագրով վերցնելուց հետո, երբ բնակիչներ են եղել դեռևս չվերցված բնակարաններում, ձեռնարկվել է ամբողջ շինության քանդումը՝ քանդվել է տանիքը, անօգտագործելի է դարձվել ճանապարհը, կտրվել է ջուրը, էլեկտրաէներգիան և այլն: Այս կապակցությամբ դիմում է ներկայացվել Կենտրոնի դատախազին՝ իրացնողի գործողությունները զնահատելով որպես ինքնիրավչություն: Դատախազության կողմից քաղաքացու բողոքը չի դիտվել որպես հաղորդում կատարված հանցագործության մասին և առաջարկվել է դիմել դատարան քաղաքացիական հայցի կարգով խնդիրը լուծելու:

Նման մոտեցման հետ Պաշտպանի անհամաձայնությունից հետո, դիմումն ուղարկվել է ոստիկանություն՝ նրանց միջոցով հաղորդումն ստուգելու: Այստեղ նույնպես ցույց է տրվել ձևական մոտեցում, և բողոքը պատշաճ ընթացք չի ստացել՝ դիմումատուին դարձյալ ցույց է տրվել քաղաքացիական հայցի կարգով դատարան դիմելու ճանապարհը:

Օրինակ 19. ՀՀ դատախազությունում դեռևս 21.06.2005թ. առկա է քաղաքացու դիմում՝ Պուշկինի փողոցում իր օրինական շինությունը «Ֆլեշ» ընկերության կողմից **քանդվելու**, իրեն նյութական վնաս պատճառելու և օրինական կարգով իրեն հատկացված տարածքը զավթելու վերաբերյալ:

Ի պատասխան **Պաշտպանի 13.09.2005թ. հարցմանը ՀՀ դատախազությունից 03.10.2005թ. հայտնել են**, որ դիմումի հետագա ընթացքի լուծման համար անհրաժեշտ է պարզել շինության քանդման արդյունքում դիմումատուին պատճառված վնասի չափը: **Նշանակվել է շինարարատեխնիկական փորձաքննություն**, և արդյունքում պարզվել է, որ դիմումատուի նյութական վնասը կազմում է 5.295 հազար դրամ:

ՀՀ դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունից, դիմումը ստանալուց վեց ամիս անց՝ 19.12.2005թ. դիմումատուին և 22.12.2005թ. Պաշտպանին հայտնել են, որ քաղաքացու շինությունը քանդվել է «այդ տարածքը մաքրելու անհրաժեշտությունից ելնելով», իր վնասը գանձելու նպատակով դիմումատուն կարող է դիմել դատարան, «պատճառված վնասի հատուցման հարցի լուծումը դուրս է դատախազության իրավասության շրջանակներից»:

Քանի որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինակները չեն ուղարկվել ո՛չ դիմումատուին և ո՛չ էլ Պաշտպանին, ենթադրվում է, որ նման որոշում չի կայացվել:

Փորձագետի եզրակացության և դիմումով նախապատրաստված նյութերի պատճենները տրամադրելու մասին դիմումատուի խնդրանքը մերժվել է, ինչով դիմումատուն գրկվել է դատախազության գործողությունները դատական կարգով բողոքարկելու հնարավորությունից:

Օրինակ 20. Պաշտպանի կողմից ՀՀ դատախազություն են ուղարկվել նյութեր «Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքները քաղաքապետարանի կողմից ապօրինի տնօրինելու վերաբերյալ: Ըստ նյութերում եղած տվյալների, քաղաքապետարանի կողմից տվյալ տարածքն ապօրինի տնօրինելու արդյունքում ոչ միայն խաթարվել է ինստիտուտի գործունեությունը, այլ նաև հենց նման գործարքներով սեփականատեր դարձած քաղաքացիները կառուցումներ են կատարել ինստիտուտին հարող պայթյունավտանգ և թունավոր նյութերի արտանետման գոտիներում:

ՀՀ դատախազությունը նյութերով հանցագործության հատկանիշներ չտեսնելով հանդերձ, չի տեսել նաև պետական շահերի պաշտպանությամբ հանդես գալու խնդիր:

Պետական ունեցվածքի վերաբերյալ իրականացված գործարքներում թույլ տրված չարաշահումներն ու ապօրինությունները դատախազության կողմից չստուգելը և չվերհասնելը հանգեցնում են ոչ միայն պետական ունեցվածքի վատնման, այլև հաճախ կոնկրետ անձանց իրավունքների խախտման: Քաղաքապետի կողմից իրականացվող հողահատկացումները, քաղաքային հողերի աճուրդով կամ ուղիղ վաճառքի ձևով իրացումները, շինարարության թույլտվությունները հաճախակի պարունակում են նաև իրավունքի այնպիսի խախտումներ, որոնց դատախազությունն իրավասու է միջամտել և միայն դատախազության իրավասություններով է, որ կարելի է դրանք ի հայտ բերել:

ՀՀ քրեական նոր օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո (2003թ. օգոստոսի 1) և առ այսօր նախկինում մահապատժի դատապարտվածները, որոնց մահապատժն այնուհետև փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ, բողոքում են քրեական օրենքի մարդասիրական սկզբունքներն իրենց նկատմամբ անարդարացիորեն չկիրառելու հանգամանքից:

Նրանք, մասնավորապես, գտնում են, որ իրենց վերագրվող հանցանքի կատարման պահին ցմահ ազատազրկումը որպես պատժատեսակ քրեական օրենսգրքով նախատեսված չի եղել, նոր քրեական օրենսգրքով սահմանված այդ պատժատեսակն իրենց նկատմամբ կիրառելի չէ: Նման դատապարտյալներից մի քանիսը վիճարկում են նաև դատավճիռների հիմնավորվածությունը, ներկայացնելով ուշադրության արժանի փաստեր:

Օրինակ 21. «Պատժի առավելագույն չափ» հասարակական կազմակերպությունը դիմել է Պաշտպանին՝ շարադրելով իրավական և իրավաբանական հիմքերը, որոնցով նախագահի հրամանագրով մահապատժի բոլոր դատապարտվածների պատիժը ցմահ բանտարկությամբ փոխարինելը դիտարկվում է որպես ներման բուն գաղափարին ոչ համահունչ: Դիմում-բողոքով Պաշտպանին խնդրվել է պատկան մարմինների մասնակցությամբ բազմակողմանի քննարկումներ կազմակերպել հարցին լուծում տալու նպատակով: Միաժամանակ, ինչպես «Պատժի առավելագույն չափ» ՀԿ-ն, այնպես էլ առանձին դատապարտյալներ նույն խնդրանքով դիմել են նաև ՀՀ նախագահին, ԱԺ նախագահին և գլխավոր դատախազին, վերջինիցս ակնկալելով կոնկրետ գործողություններ հարցին դրական ընթացք տալու համար: Այս բողոքներին սպառիչ և

համոզիչ պատասխան դատախազությունը չի տվել: Խնդրի առնչությամբ Պաշտպանը նամակով դիմել է ՀՀ նախագահին¹¹:

Ուշադրության արժանի խնդիր կա կապված ՀՀ նախկին այն քաղաքացիների հետ, որոնք մինչև զինակոչի տարիքի հասնելը կամ ընդհանրապես մինչև զորակոչվելն ընդունել են այլ երկրի քաղաքացիություն՝ շրջանցելով «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով քաղաքացիությունից դուրս գալու սահմանված կարգը: Այսպիսի անձինք մնացել են զինկոմիսարիատների և ոստիկանության անձնագրային բաժինների հաշվառումներում:

Չինկոմիսարիատների ներկայացմամբ դատախազությունում նրանք դիտվում են որպես զորակոչից խուսափողներ, հարուցվել և հարուցվում են քրեական գործեր, և հայտարարվել ու հայտարարվում է հետախուզում: Այլ երկրի քաղաքացի լինելու վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը հիմք չեն ընդունվում, և քրեական գործերը չեն կարճվում:

Անտեսվում են հետևյալ հանգամանքները՝ այլ երկրի քաղաքացիություն ընդունած ՀՀ նախկին քաղաքացին ենթակա չէ զինակոչի ՀՀ զինված ուժեր, օրենքի խախտումով այլ երկրի քաղաքացիություն ընդունած անձի ՀՀ քաղաքացիությունը ենթակա է դադարեցման, եթե նա չի ցանկանում հրաժարվել այլ երկրի քաղաքացիությունից, ՀՀ քաղաքացին, որը փոխել է քաղաքացիությունը մինչև զինակոչի տարիքի հասնելը, ենթակա չէ քրեական պատասխանատվության որպես զորակոչից խուսափող, քանի որ զինված ուժերում ծառայելը ՀՀ քաղաքացու պարտականությունն է, իսկ այդպիսի պարտականությունը ծագում է զորակոչի տարիքի հասնելուց հետո:

Այս խնդրի լուծումը չափազանց կարևորվում է այն տեսակետից, որ այլ երկրներում բնակվող մեր հայրենակիցները, հատկապես հետխորհրդային երկրներում, հետապնդվում են որպես հետախուզվողներ, պարբերաբար տարվում են ոստիկանության բաժիններ և պահվում՝ մեր իրավապահ մարմիններին հարցում կատարելու անվան տակ:

Օրինակ 22. Պաշտպանին բանավոր կարգով դիմել է նման իրավիճակում գտնվող զինակոչիկի հայրը, բողոքելով, որ ի պատասխան իր և իր որդու դիմումին հարցին օրինական լուծում տալու խնդրանքով պատկան մարմնի ներկայացուցիչը պահանջել է որոշակի գումար: Խուսափելով հետևանքներից՝ դիմորդը խնդրել է չգրանցել իր դիմումը:

Հայաստան ժամանած Ռ-Դ տարբեր բնակավայրերի հայ համայնքների ներկայացուցիչներ համոզիչ փաստեր են ներկայացրել Պաշտպանին այն մասին, որ նման իրավիճակում են գտնվում Հայաստանում ծնված, իսկ այժմ Ռ-ուսաստանում բնակվող հարյուրավոր երիտասարդներ, և խնդրել են պետական մակարդակով լուծում տալ հարցին:

Պաշտպանի կողմից հարցը բարձրացվել է Ռ-Դ տարածքային օմբուդսմանների հետ հանդիպումների ընթացքում: Հարցի մանրամասն ներկայացման նպատակով Պաշտպանը հանդիպել է պաշտպանության նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի հետ:

«Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքով այդ խնդիրը կարծես թե լուծվում է: Սակայն «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքում «ՀՀ քաղաքացիության մասին օրենսդրության խախտումով այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելը» (հոդված 25, կետ 3) տեղիք է տալիս տարաբնույթ մեկնաբանությունների, որի արդյունքում փորձ է արվում մինչև զորակոչային տարիքի հասնելն այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերած քաղաքացիների վրա նույնպես տարածել «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքով սահմանված գանձումները: Հենց այս հիմնավորմամբ է, որ հարուցված քրեական գործերը չեն կարճվում, հետախուզումները շարունակվում են: Տարօրինակ է, որ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին»

¹¹ Տե՛ս՝ Հավելված 4.3.՝ Մարդու իրավունքների պաշտպանի նամակն ուղղված ՀՀ նախագահին:

ՀՀ օրենքի հոդված 6-ի մաս 2-ով պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու կարգը թողնվում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանելուն, այն դեպքում, որ Քրեական դատավարության օրենսգիրքն ամրագրել է քրեական գործով վարույթի կարգը և դրա պարտադիր լինելը դատարանների, հետաքննության, նախաքննության և դատախազության մարմինների, ինչպես նաև դատավարության մասնակիցների համար (հոդված 1, մաս): Հետևաբար ՀՀ կառավարության որոշմամբ դատավարության առանձին կարգ սահմանվել չի կարող:

Նման խառն իրավիճակն ակնհայտ վկայում է կոռուպցիոն ռիսկերի մասին, և իրականում տարբերակված է դատախազության վերաբերմունքը նույն իրավիճակում գտնվող գորակոչային տարիքի երիտասարդների հանդեպ:

Մեծ է նաև դատախազության դերը զինկոմիսարիատների գործունեության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու առումով: Երբ դատախազությունը չի մերժում զինկոմիսարիատներից ստացված նյութերով քրեական գործի հարուցումը կոնկրետ անձանց գորակոչն անհիմն լինելու դեպքերում, չի պահանջում այդ հիմքերով անձանց հանել զինվորական հաշվառումից, զինկոմիսարիատները շարունակում են հաշվառման մեջ պահել պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու ոչ ենթակա անձանց՝ այդտեղից բխող հետևանքներով:

Չինվորական դատախազությունը ոչ միայն չի արգելում զինկոմիսարիատների նման մոտեցումները, այլև հաճախակի նաև խրախուսում է՝ մատուցելով զինկոմիսարիատներին օրենքի կամայական մեկնաբանություններ կոնկրետ դեպքերով:

Օրինակ 23. Թիվ 1-0593 գործով փախստականի կարգավիճակ ունեցող դիմումատուները հայտնել են, որ Արտաշատի զինկոմիսարիատը փորձում է իրենց որդուն գորակոչել պարտադիր զինվորական ծառայության:

Չինկոմիսարիատից պարզաբանում ստանալու նպատակով հարկ է եղել կատարել կրկնակի հարցում և ապա ընդունել որոշում զինվորական կոմիսարի գործողություններում իրավունքի խախտում տեսնելու մասին:

Ի վերջո, Արտաշատի զինվորական կոմիսարից ստացվել է հետևյալ պատասխանը՝ «Պատասխանում եմ, որ համաձայն ՀՀ զինվորական դատախազի 09.06.2005թ. թիվ 1164 գրության և ՀՀ Չինվորական կոմիսարի 20.06.2005թ. 2/3988 կարգադրության անձը ենթակա էր գորակոչի 2005թ. գարնանային գորակոչի ընթացքում, սակայն մեր բազմաթիվ կանչերին զինակոչիկը խուսափել է ներկայանալ զինվորական կոմիսարիատ»:

Չինվորական դատախազի գրությամբ ասված է եղել, որ դիմումատուն ընտանիքով 1989թ. Ադրբեջանից տեղափոխվելուց հետո բնակություն է հաստատել Արարատի շրջանում և ստացել է 4.9 հազար ք/մ հող, որն այնուհետև կադաստրում գրանցվել է որպես ընտանիքի ընդհանուր սեփականություն: Այստեղից հետևություն է արվել, որ դիմումատուի որդին ՀՀ քաղաքացի է, քանի որ համաձայն ՀՀ Սահմանադրության հոդված 28-ի՝ այլ երկրների քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք Հայաստանում չեն օգտվում հողի սեփականություն ունենալու իրավունքից:

Օրենքի այսպիսի յուրօրինակ մեկնաբանությամբ փորձ է արվել փախստականի կարգավիճակ ունեցող անձին գորակոչել բանակ պարտադիր զինվորական ծառայության, զինկոմիսարիատից նույնիսկ նյութերն ուղարկվել են Արտաշատի դատախազություն՝ զինակոչից խուսափելու համար նրան քրեական պատասխանատվության կանչելու նպատակով: Արտաշատի դատախազությունը նյութերը վերադարձրել է՝ ելնելով տվյալ անձի փախստականի կարգավիճակ ունենալու հանգամանքից:

Օրինակ 24. Մեկ ուրիշ դեպքով Արաբկիրի զինվորական կոմիսարիատը պարտադիր զինվորական ծառայության է գորակոչել Ռուսաստանի քաղաքացուն այն հիմնավորմամբ,

որ նա Հայաստանում է գտնվել ուսումը շարունակելու նպատակով: Նախապես նրանից վերցվել է անձնագիրը քաղաքացիությունը պարզելու անվան տակ, իսկ երբ նա ներկայացել է անձնագիրը հետ ստանալու նպատակով, նրան հարկադրաբար տարել են կենտրոնական հավաքակայան և ապա ուղարկել գորամաս:

Դիմումատուն 3-4 օր անց լքել է գորամասը, թողնելով գրություն՝ «Ես Ռ-Դ քաղաքացի եմ, և ՀՀ նկատմամբ որևէ պարտավորություն չունեմ» բովանդակությամբ: Նա նաև դիմել է ինչպես զինվորական դատախազին, այնպես էլ միջազգային տարբեր կազմակերպությունների: Պաշտպանն այնուհետև զինվորական դատախազության կողմից տեղեկացվել է, որ տվյալ անձի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է, միջնորդություն է ներկայացվել նրան գորացրելու վերաբերյալ:

Անձին ապօրինի բանակ գորակոչելու համար մեղավորների պատասխանատվության հարցի վերաբերյալ զինվորական դատախազի գրությամբ ոչինչ չի ասված: Այդ առումով հատկանշական է զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի արտահայտությունը՝ «Ես չեմ որոշում անձի քաղաքացիության հարցը, առկա է զինվորական դատախազի գրությունը, հետևաբար պետք է գորակոչենք բանակ»:

Պաշտպան-դատախազություն հարաբերություններում ծագել են նաև այնպիսի խնդիրներ, որոնք կապված են օրենսդրական բացերի կամ դատախազության կողմից համապատասխան օրենքների կամայական մեկնաբանության հետ:

Այսպես, օրինակ, երբ Պաշտպանը դիմել է դատախազություն ծանոթանալու գործերից մեկով ԱԱ ծառայության նախապատրաստած նյութերին՝ առկա բողոքի ընթացքը լուծելու համար, Պաշտպանի հարցումներին հետևել է ՀՀ գլխավոր դատախազի չափազանց կոշտ պատասխանը. «Դուք Ձեզ վերագրել եք գործառույթներ, ինչի իրավունքը չունեք, և առաջարկում եմ այսուհետ գործեք օրենքով Պաշտպանին վերապահված լիազորությունների սահմաններում»: Ըստ գլխավոր դատախազի, քրեական դատավարության օրենսգիրքն արգելում է նախաքննության տվյալներով Պաշտպանին տեղեկություններ տրամադրելը:

Առկա է չափազանց վտանգավոր միտում, ըստ որի Պաշտպանի պահանջը, առաջարկը մերժող պաշտոնատար անձինք վկայակոչում են օրենքի այս կամ այն կետը՝ այն մատուցելով օրենքի ընդհանուր համատեքստից դուրս:

Այսպես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ը թվարկում է Պաշտպանի կոնկրետ իրավասությունները: Գլխավոր դատախազը մեջբերում է օրենքի հոդված 12-ի մաս 1-ի կետ 5-ը, որով ասված է՝ «Բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանը բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով իրավասու է՝ ...ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական, տնտեսական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ դատավճիռները, վճիռները, որոշումներն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է քրեական գործերի հարուցումը»:

Եթե հոդվածի կետ 5-ը առանձնացվում է հոդվածի տեքստից, հասկացվում է, որ Պաշտպանը կարող է ծանոթանալ միայն այդ կետում թվարկված կարգով ավարտված գործերին և նյութերին: Մինչդեռ նույն հոդվածի մաս 1-ի 2, 3 և 6 կետերով սահմանված Պաշտպանի իրավասություններն առավել հստակ և ընդարձակ են: Այսպես, կետ 2՝ «ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել և ստանալ բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր և փաստաթղթեր», կետ 3՝ «պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից կամ դրանց պաշտոնատար անձանցից և պետական ծառայողներից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ բողոքի ուսումնասիրման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ», կետ 6՝ «ծանոթանալ բողոքին առնչվող ցանկացած նյութի և փաստաթղթի»:

Այս կետերում թվարկված իրավասությունները հավասարապես տարածվում են նաև դատախազության վրա, քանի որ բացառությունն արված է միայն դատարանների և դատավորների համար, և դատախազությունն այդ բացառությունների շարքում չի թվարկված:

Հոդվածի մաս 1-ի կետ 5-ով հատուկ կարևորվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ավարտված գործերին կամ քրեական հետապնդման մարմնի որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժված նյութերին ծանոթանալու Պաշտպանի իրավունքը, ինչը չի բացառում 2, 3, 6 կետերով սահմանված իրավունքներից օգտվելը:

Նույն հոդվածի մաս 2-ով ասված է՝ «Պետական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկություններին Պաշտպանը կարող է ծանոթանալ օրենքով սահմանված կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 201-ով սահմանված է առանց քննիչի թույլտվության նախաքննության տվյալների հրապարակումն արգելելու կարգը:

Պետք է ընդունել այն անառարկելի ճշմարտությունը, որ իրավունքի և ազատությունների խնդիր շոշափող պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի և դրանց պաշտոնատար անձանց ցանկացած գործողություն կամ անգործություն չի կարող դուրս դրվել Պաշտպանի իրավասության շրջանակներից: Միակ բացառությունը դատարաններն ու դատավորներն են, որոնց գործողություններին Պաշտպանը չի միջամտում, գործերով պարզաբանումներ չի պահանջում, սակայն ինքնուրույն դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքներով գնահատականներ է տալիս ուժի մեջ մտած դատական ակտերին՝ օգտվելով օրենքի հոդված 12-ի մաս 1-ի կետ 5-ով սահմանված իրավասությունից:

Անհրաժեշտ է նաև անդրադառնալ Պաշտպանի 2004թ. տարեկան զեկույցի կապակցությամբ գլխավոր դատախազի կողմից արված գրավոր դիտողություններին, որոնք համարժեք չեն զեկույցի բովանդակությանը և պարունակում են իրավաբանական վրիպումներ, ինչի մասին Պաշտպանը հատուկ նամակով¹² և իր նախաձեռնությամբ կազմակերպված աշխատանքային քննարկմամբ փորձել է հաղթահարել այն մերժողական վերաբերմունքը, որը խոչընդոտել է համագործակցության կայացմանը:

3.3. Ազգային անվտանգության ծառայություն

Ազգային անվտանգության ծառայությունն անմիջականորեն առնչվում է քաղաքացիների հետ կոնկրետ հանցագործության հարցերով, կապված ոչ միայն ազգային անվտանգության, այլ նաև այլ, հատկապես՝ տնտեսական, բնույթի գործերի հետ:

Օրինակ 15.2. ԱԱ ծառայության նախաձեռնությամբ հարուցված քրեական գործերից ուշագրավ է «Ռայթ իրավաբանական ծառայություն» ՍՊԸ-ի տնօրեն **Վահե Գրիգորյանի** դեմ հարուցված քրեական գործը (տե՛ս՝ 3.2. Դատախազություն, Օրինակ 15.1): Այս դեպքով ԱԱ ծառայության աշխատակիցները դեռևս 2005թ. մայիս ամսին Պաշտպանի կողմից քննադատվել են տվյալ ՍՊԸ աշխատակիցներին **որպես Պաշտպանի աշխատակիցներ ներկայանալու**, կոպիտ վերաբերմունքի և ընկերության տնօրենին օրենքի խախտումով ԱԱ ծառայություն բերման փորձ կատարելու համար: Այս գործով Պաշտպանը նախաձեռնել է աշխատանքային քննարկում ԱԱ ծառայության ղեկավարի հետ: Վերոնշյալ փաստերով ծառայության անբարեխիղճ աշխատակիցների գործողություններին համարժեք գնահատական տալու Պաշտպանի առաջարկը մերժվել է, իսկ նման գործողությունների կատարումը հերքվել: Պաշտպանի նկատառումն առ այն, որ այս բնույթի գործերով ԱԱ ծառայության միջամտությունը հասարակության կողմից դիտվում է որպես քաղաքական հետապնդում մասնագիտական գործունեության, այն է՝

¹² Տե՛ս՝ Հավելված 4.6.՝ Մարդու իրավունքների պաշտպանի նամակն ուղղված ՀՀ գլխավոր դատախազին:

մարդու իրավունքների պաշտպանության հիմքերով, չի արժանացել համարժեք արձագանքի, դեռ ավելին՝ հետաքննության սկզբնական փուլում գտնվող գործով կասկածյալի նկատմամբ չի պահպանվել անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Օրինակ 25. Հատուկ ուշադրության են արժանի **Պաշտպանի անձեռնմխելիության դեմ ուղղված Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների գործողությունները**, որոնք առանց Պաշտպանին տեղյակ պահելու, օրենքով նախատեսված կարգի խախտմամբ, մուտք են գործել Պաշտպանի վարչական շենք, կարգադրել գործադիր իշխանության այլ մարմնի ներկայացուցիչ հանդիսացող ՀՀ ոստիկանության պետական պահպանության վարչության պահակախմբի հերթապահ աշխատակիցներին՝ հանձնել շենքի գլխավոր մուտքի բանալիները, որոնք պահվում էին Պաշտպանի կողմից կնքված ծրարում: Ենթում անցկացնելով անորոշ ժամանակահատված և կատարելով մինչ օրս էլ անհայտ գործողություններ՝ նրանք առգրավել են համակարգիչներից մեկը և միաժամանակ կարգադրել պահակներին միջադեպի մասին չտեղեկացնել Պաշտպանին: Այս ամենը Պաշտպանի կողմից զնահատվել է որպես Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից լիազորությունների գերազանցում և Պաշտպանի անկախության երաշխիքների ոտնահարման կոպիտ դրսևորում: Պաշտպանը դիմել է ԱԱ ծառայության պետին, և չնայած հանդիպման ընթացքում ճանաչվել է նման գործողությունների անհամապատասխանությունն օրենսդրությանը, այնուամենայնիվ ոչ մի միջոց չի ձեռնարկվել անօրինական գործողությունների կատարողներին պատժելու ուղղությամբ:

Առկա են բողոքներ այս կամ այն անձի մուտքը հանրապետություն մերժելու մասին «ոչ նպատակահարմար» լինելու հիմնավորմամբ: Մերժումը թեկուզ և տրվում է ոստիկանության կողմից, սակայն նման մերժման հիմքում ԱԱ ծառայության եզրակացությունն է:

Օրինակ 26. ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը ազգությամբ հայ, Ֆրանսիայի քաղաքացու Հայաստանի Հանրապետություն ժամանակավոր բնակության ժամանելը մերժել է «նպատակահարմար» չլինելու պատճառաբանությամբ:

Թիվ 2-0340 գործով դիմումատուն հայտնել է, որ, չնայած իր և որդու՝ ՀՀ բնակչի բազմաթիվ հայցերին, 2002թ. ի վեր իր մուտքը ՀՀ, առանց որևէ բացատրության, կտրականապես արգելում են:

2005թ. մայիսի 27-ին և սեպտեմբերի 25-ին կրկին անգամ, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից, առանց բացատրության, մերժվել է նաև որդու դիմումը՝ իրեն ՀՀ հրավերի փաստաթղթեր ձևակերպելու վերաբերյալ:

Դիմումատուին նախկինում ՀՀ կրթության և գիտության, ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությունների միջնորդությունների հիման վրա երկու անգամ տրվել են ՀՀ կացության սովորական և ժամանակավոր կարգավիճակներ: Չնայած այն հանգամանքին, որ առկա են անձին առաջնահերթ կացության սովորական կարգավիճակ տալու հիմքեր, այն է՝ ՀՀ նախկին քաղաքացի կամ ՀՀ քաղաքացու մերձավոր ազգական լինելը, 2002թ. ի վեր դրա տրամադրումը առանց հիմնավորման մերժվում է նպատակահարմար չլինելու պատճառաբանությամբ:

Այդ կապակցությամբ Պաշտպանը նամակ է ուղարկել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետին՝ առաջարկելով վերանայել դիմումատուին կացության կարգավիճակ տրամադրելու հարցը և, եթե այն ենթակա է մերժման,

քաղաքացուն ներկայացնել մերժման օրենսդրական հիմքերը: **Պաշտպանի առաջարկի կապակցությամբ վարչության պետն իր դիրքորոշումը չի արտահայտել:**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56 և 57 հոդվածների համաձայն՝ **վարչական ակտը պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի, դրա բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում:** Մինչդեռ այս դեպքում վարչությունը քաղաքացուն զրկելով ՀՀ ժամանակավոր բնակչության ժամանելու հնարավորությունից **չի ներկայացրել մերժման օրենսդրական հիմքերը:** Իսկ քաղաքացուն դրանք ներկայացնելու վերաբերյալ (եթե այդպիսիք կան) Պաշտպանի առաջարկին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը չի արձագանքել, ինչով խախտվել են նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Խիստ անհանգստացուցիչ է ազգային անվտանգության ծառայության շենքում գտնվող քնչական մեկուսարանի խնդիրը: Չնայաց մեկուսարանը գտնվում է ՀՀ արդարադատության նախարարության իրավասության ներքո, այն փաստացի կախվածության մեջ է ԱԱ ծառայությունից, ինչն առաջացնում է նաև բողոքատուների, ինչպես նաև դատապաշտպանների դժգոհությունը, քանի որ նրանք ստիպված են տեսակցության «թույլտվություններ» հայցել ԱԱ ծառայությունից: Մինչ օրս այս խնդրի լուծման ուղղությամբ պատկան հանրային մարմինները քայլեր չեն ձեռնարկել:

Բոլոր այս օրինակները գալիս են ապացուցելու, որ չնայած ազգային օրենսդրության ազատականացմանը և միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների ավելացմանը, իրավակիրառական պրակտիկան մնում է պահպանողական, ինչը զգացնել է տալիս այս մարմինների գործունեության քաղաքացիության և նրանց նկատմամբ քաղաքացիական հասարակության վերահսկողության պակասը:

3.4. Արդարադատության նախարարություն և դրա գերատեսչություններ

Արդարադատության նախարարությանն առնչվող բողոքներն ուղղված են ինչպես նախարարության և նախարարության տարբեր ենթակառույցների, այնպես էլ հանրային այլ մարմինների դեմ:

Մարդու իրավունքների պաշտպանվածության հայեցակարգում դժվար է գերազնահատել արդարադատության ոլորտի զարգացումներն ու բարեփոխումները, և այդ առումով Պաշտպանի հաստատություն-արդարադատության նախարարություն համագործակցությունը:

Միջազգային պրակտիկան ապացուցում է, որ արդարադատությունն ապահովող մարմինների և օմբուդսմանի արդյունավետ համագործակցությունն է արտացոլում առանձին անձանց ու հասարակության ընկալումները և ընդհանուր առմամբ երկրի տրամադրվածությունը մարդու իրավունքների ապահովման նկատմամբ:

Հայաստանում հասարակության անվստահությունը դատական համակարգի նկատմամբ մեծապես բացատրվում է գործադիրից դատարանների կախվածության հանգամանքով, ինչը միջնորդվում է Արդարադատության նախարարության կողմից:

2005թ. ընթացքում արդարադատության նախարարության և նրա գերատեսչությունների դեմ ստացվել է 93 դիմում-բողոք: Արդարադատության նախարարության դեմ ուղղված դիմում-բողոքների մեծամասնությունը վերաբերում է Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության և քրեակատարողական հիմնարկների վարչության գործունեությանը, նրանց աշխատանքներում բողոքների

ուսումնասիրությունների և անմիջական այցելությունների ընթացքում բացահայտված թերություններին:

3.4.1. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն

Դատական ակտերի հարկադիր կատարման (ԴԱՀԿ) ծառայության գործունեությունը սերտորեն առնչվում է մարդու դատական պաշտպանության իրավունքների իրականացման հետ: Երբ դատական ակտը չի կատարվում կամ կատարվում է ոչ պատշաճ, դատական ակտով բավարարում ստացած անձի համար այդ իրավունքը մնում է չիրականացված: Երբ դատական ակտի պահանջների կատարումը հանձնված է հարկադիր ծառայությանը, ապա դրա պատշաճ կատարումը պայմանավորվում է հանձնարությունն ստացած հարկադիր կատարողի սուբյեկտիվ մոտեցումներով, պարտաճանաչությամբ, նաև ծառայության ղեկավարի հետևողականությամբ:

Դեռևս 2004թ. տարեկան զեկույցում խոսվել է այս ծառայության կողմից դատարանների վճիռների սիստեմատիկաբար չկատարելը պրակտիկա դարձած լինելու մասին: Նման բողոքներով իրավունքի խախտման մասին որոշումներ ընդունելը, ծառայության ղեկավարության հետ հանդիպումները և բողոքներով անցկացված քննարկումները նպաստել են այդ ծառայության աշխատանքներում որոշակի դրական տեղաշարժի: Դրա վկայությունն է այն, որ 2005թ. ավելի քիչ են եղել հարկադիր կատարողի մեղքով վճիռների չկատարման, կատարողական վարույթի անհիմն կասեցման վերաբերյալ բողոքներ: Կասեցումից հանվել են և կատարվում են, օրինակ, 2003 և 2004 թթ. կասեցված կատարողական վարույթները «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ից աշխատավարձի բռնագանձման վերաբերյալ, լուծվել են «Դ-վին» հյուրանոցի նախկին աշխատողներին չվճարված աշխատավարձերի բռնագանձման խնդիրները:

Չնայած ԴԱՀԿ ծառայության աշխատանքներում տեղի ունեցած որոշակի դրական տեղաշարժի, այնուամենայնիվ դարձյալ կան ծառայության մեղքով դատական ակտերի չկատարման դեպքեր, հատկապես, երբ պարտապանն այս կամ այն պետական մարմինն է՝ կադաստր, քաղաքապետ, նախարարություն: Հարկադիր կատարողը խուսափում է այս կամ այն ազդեցիկ պաշտոնատար անձին զգուշացում հայտարարելուց, իր իրավասության շրջանակներում տույժի միջոցներ կիրառելուց, որի արդյունքում դատական ակտը մնում է չկատարված:

Առկա են եղել դատական վճիռներ այս կամ այն քաղաքացու Երևան քաղաքի օտարման գոտում ներառված անշարժ գույքի պետական գրանցմանը կամ պետական գրանցման մեջ փոփոխություններ կատարելուն կադաստրին պարտադրելու մասին: Հարկադիր կատարողը որոշում է կայացրել վճռի կատարմանը կադաստրի ստորաբաժանմանը պարտավորեցնելու մասին՝ չնշելով կոնկրետ պաշտոնատար անձի: Կադաստրում նման վճիռները և հարկադիր կատարողի որոշումն անառարկելիորեն կատարելու փոխարեն ուղարկվել են Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի (ԾԻԳ) կառավարման խորհրդի քննարկմանը:

Այս խորհուրդը, որը ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել է Երևանի քաղաքապետարանին կից և քաղաքապետի նախագահությամբ, բոլոր նման դեպքերում որոշում է կայացրել չգրանցելու, այսինքն՝ դատարանի վճիռը չկատարելու մասին, չնշելով, թե որ օրենքով է ղեկավարվում: Այդպիսի որոշումների հիման վրա կադաստրը մերժել է գրանցումը, հարկադիր կատարողը լռել է և դատարանների վճիռները մնացել են չկատարված:

Այս խնդրում դժվար է հարկադիր կատարողին կամ կադաստրի ստորաբաժանման ղեկավարին մեղադրելը, քանի որ հիշյալ կառավարման խորհրդի անդամներ են նաև գլխավոր հարկադիր կատարողը և կադաստրի պետական կոմիտեի նախագահը: Հետևաբար այստեղ տեղ ունի օրենքի, իրավունքի հարմարեցումը կամ զոհաբերումը իշխանական լծակներ ունեցողների խմբակային շահերին:

Նման դեպքերով Պաշտպանի կողմից կայացվել են որոշումներ իրավունքի խախտման մասին, և կառավարման խորհուրդը վերանայել ու վերացրել է նման որոշումների զգալի մասը:

Զգալի թիվ են կազմել բողոքները հարկադիր կատարման ծառայության գործողություններից՝ կապված Երևան քաղաքի օտարման գոտիներում ներառված քաղաքացիներին դատարանների վճիռներով իրենց բնակարաններից վտարելու հետ: Նման բողոքներով քաղաքացիները դժգոհ են եղել դատարանների վճիռներից և հենց այդպիսի դժգոհություններն են, որ տեղափոխել են հարկադիր կատարողների վրա՝ նրանց կողմից հարկադրանքի կիրառումը համարելով անօրինական, հատկապես, երբ հարկադիր կատարողը վտարմանը մասնակից է դաձրել նաև ոստիկանությանը:

Նման դժգոհություններն արդյունք են նաև այն հանգամանքի, որ հարկադիր կատարողները հաճախակի ժամանակ չեն տրամադրել բնակարանը կամավոր ազատելու համար կամ չեն տեղեկացրել կատարողական գործողությունների իրականացման ժամանակի մասին: Եղել են դեպքեր, երբ անտեսվել են կատարողական գործողությունը կասեցնելու մասին դատարանների որոշումները:

Դատական պաշտպանության իրավունքը համարվում է լիարժեք իրականացված, եթե դատական ակտի պահանջը լրիվ կատարված է: Սակայն պետք է նշել, որ քաղաքացիների իրավունքների պաշտպանության առումով ԴԱՀԿ ծառայության գործունեության մեջ առաջընթաց չի գրանցվում, ինչի վկայությունն է նաև բողոքների քանակի ավելացումը:

Եթե երբեմն կարելի է արդարացնել գույքի անբավարարության հետևանքով պարտապան քաղաքացիների կողմից դատարանի վճռի պահանջները կատարելու անկարողությունը, ապա նույն պատճառաբանությամբ պարտապան-իրավաբանական անձ և պարտապան-պաշտոնատար անձ պարագայում պարտապանի նկատմամբ դատարանի վճռի պահանջները չկատարելը ոչնչով չի արդարացվում և պարզապես դատապարտելի է:

Օրինակ 27. Թիվ 1-0066 գործով «Չիֆտ-Բարթալ» ընկերության ներկայացուցիչ ղիմումատուն Պաշտպանին դեռևս 2004թ. ներկայացրած ղիմումով հայտնել էր, որ առկա են տարբեր ատյանների դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռներ և որոշումներ, որոնց համաձայն «Արարատ Լադա» ընկերության տարածքում գտնվող այլադացը պետք է վերադարձնել պահանջատիրոջը, սակայն հարկադիր կատարողների ոչ հետևողական գործողությունների արդյունքում հետագայում պարզվել է, որ արգելանքի տակ դրված գույքն անհետացել է նշված տարածքից:

Պաշտպանի գրություններից հետո միայն հարկադիր կատարողը՝ արդարադատության մայր Գ. Սարգսյանը, գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին որոշում է կայացրել: Այնուհետև, Պաշտպանի առաջարկությամբ ԴԱՀԿ ծառայությունը նյութերն ուղարկել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ քննություն անցկացնելու համար:

Մամուլում տպագրված մի շարք հրապարակումներից ու ղիմումատուի փաստարկներից հետևում է, որ այլադացը չվերադարձնելու պատճառներից ամենագլխավորը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի ակտիվ միջամտությունն է:

2004թ. տարեկան զեկույցը ԱԺ քննարկմանը ներկայացնելիս, Պաշտպանը շոշափել է նաև խնդրի այս կողմը, սակայն՝ ապարդյուն:

Մոտ 10 ամիս անց պարզվել է գույքի գտնվելու վայրը: Պաշտպանը ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի հետ աշխատանքային հանդիպման ժամանակ հայտնել է այդ մասին, ինչից հետո կատարողական վարույթը վերսկսվել է: ԴԱՀԿ ծառայության շուրջ 15 աշխատակիցներ և Պաշտպանի ներկայացուցիչը եղել են գույքի գտնվելու վայրում, տեղում կազմվել է արձանագրություն, ֆիքսվել գույքի առկա լինելու հանգամանքը, իսկ տարածքի սեփականատերը հայտնել է, որ այրադաջը գնել է տրանսպորտի և կապի նախարարից: Այսքանից հետո անգամ հարցը չի գտել իր վերջնական լուծումը:

Այս և նմանօրինակ փաստերն հասարակության մեջ անվստահության և անպատժելիության մթնոլորտ են ձևավորում: Այս գործողությունները հակասում են Սահմանադրությամբ նախատեսված կարգին և քաղաքացիական դատավարության օրենսդրությանը: Չնայած այս և նման այլ նորմերի առկայությանը, երբեմն ԴԱՀԿ ծառայությունը պաշտոնատար անձ-պարտապանին վճռով նախատեսված պահանջները կատարելուն պարտավորեցնելու փոխարեն, վճռի կատարման նպատակահարմարությունը թողնում է, ասենք, Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման գրասենյակի հայեցողությանը, ինչի հետևանքով խախտվում են ՀՀ Սահմանադրության և օրենքների մի շարք դրույթներ:

Օրինակ 28. Թիվ 1-1310 գործով պարտապանը ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն է, որից հոգուտ պարտատիրոջ պետք է բռնագանձել 182.720 դրամ՝ որպես կերակրողին կորցնելու դիմաց հասանելիք փոխհատուցում:

2004թ. հոկտեմբերին հարուցված կատարողական վարույթն առ այսօր չի կատարված, հարկադիր կատարողը չի համարձակվում իր իրավասության սահմաններում միջոցներ ձեռնարկել պարտապան նախարարության դեմ:

Օրինակ 29. Թիվ 1-0171 գործով դիմումատուն հայտնել է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից 14.06.2004թ. տրված թիվ 2-794 կատարողական թերթի համաձայն, պետք է պարտավորեցնել Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (ԱԳԿՊԿ) Կենտրոն տարածքային ստորաբաժանմանը՝ կատարելու ՀՀ վճարելի դատարանի 20.07.2001թ. թիվ 569 որոշման և ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 24.01.2002թ. թիվ 03-288 վճռի պահանջները և դատական ակտերից ծագող հայցվորի անշարժ գույքի իրավունքները ենթարկել պետական գրանցման:

Սակայն, ԴԱՀԿ ծառայությունում Երևանի ստորաբաժանման կողմից հարուցված կատարողական վարույթը համարել են ավարտված, ինչը հակասում է օրենսդրությանը:

Պաշտպանի բազմաթիվ գրություններին ի պատասխան (23.03.2005թ., 09.08.2005թ., 31.08.2005թ., 23.09.2005թ.) նախ հայտնվել է, որ կատարողական գործողությունների ընթացքում 17.06.2004թ. հարկադիր կատարողի կողմից որոշում է կայացվել պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին և 22.06.2004թ. գրություն է ուղարկվել ԱԳԿՊԿ Կենտրոն տարածքային ստորաբաժանման դեկավար Ա. Պետրոսյանին՝ դատարանի վճիռը կատարելու համար:

Մի շարք գրավոր հիշեցումներից հետո 12.11.2004թ. Ա. Պետրոսյանը թիվ Ել-7289 գրությամբ հայտնել է, որ Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմաններում կառուցապատման ծրագրերի իրականացման նպատակով պետական կարիքների համար հողագոտիներում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ ստորաբաժանմանը ներկայացվող ցանկացած դիմում՝ տեղեկատվություն, պետական գրանցման հարցեր, ներկայացվում են Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման գրասենյակի կառավարման խորհրդի քննարկմանը:

Գրությամբ նշվել է նաև, որ վերոհիշյալ խորհրդի քննարկմանն է ուղարկվել նաև Կոնդ 37 հասցեում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ ներկայացված պետական գրանցման դիմումը, և խորհուրդն իր որոշումով արգելել է կատարել նշված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ ԱԳԿՊԿ Կենտրոն տարածքային ստորաբաժանման ղեկավարը դատական ակտը չի տարբերակում մյուս սովորական դիմումներից:

Անշարժ գույքի պետական կադաստրի Կենտրոն տարածքային ստորաբաժանումը կոչված է իրականացնել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում: «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 19, 23 և 24 հոդվածների համաձայն, գույքի նկատմամբ բոլոր տեսակի իրավունքները ենթակա են պետական գրանցման և պետական գրանցումն իրականացնելու համար փաստաթղթերի ցանկում նշված են նաև դատարանների վճիռներն ու որոշումները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 14-ի համաձայն՝ «Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց ու քաղաքացիների համար ու ենթակա է կատարման ՀՀ ամբողջ տարածքում»:

Օրենսդրությամբ որևէ մարմին իրավունք չունի դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի պահանջները չկատարելու, ավելին՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 353-ը քրեական պատասխանատվություն է առաջացնում պաշտոնատար անձի կողմից օրինական ուժի մեջ մտած դատական ակտը դիտավորությամբ չկատարելու կամ դրանց կատարմանը խոչընդոտելու համար:

Ալենհայտ է, որ պաշտոնատար անձը միտումնավոր կերպով չի կատարել դատական ակտը, և ԴԱՀԿ ծառայությունը նման պայմաններում պետք է գործեր իր լիազորությունների սահմաններում և իրականացներ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 71 և 72 հոդվածներով նախատեսված պահանջները:

Պաշտպանի գրություններից մեկին ի պատասխան, 15.09.2005թ. թիվ Եվ-1698 գրությամբ վարչության պետ Հ. Նավասարդյանը հայտնել է, որ ԱԳԿՊԿ Կենտրոն տարածքային ստորաբաժանման ղեկավար Ա. Պետրոսյանին 07.04.2005թ. թիվ Եա 10078/02 գրությամբ կրկին անգամ պարտավորեցվել է կատարել հարկադիր կատարողի 17.06.2004թ. որոշման պահանջները և դիմումատուի իրավունքները ենթարկել պետական գրանցման: Նշել է նաև, թե որոշման պահանջները չկատարելու դեպքում ստորաբաժանման ղեկավարի պատասխանատվության հարցը կլուծվի «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 71 և 72 հոդվածներով նախատեսված կարգով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ի համաձայն, կատարողական գործողությունները պետք է կատարվեն երկամսյա ժամկետում: 2004թ. հունիսից մինչ օրս անցել է շուրջ 18 ամիս, սակայն քաղաքացու իրավունքները չեն գրանցվել և մեղավոր անձի պատասխանատվության հարցը չի լուծվել, չնայած կարծում են, որ այդ ժամկետը բավարար էր հարցն ըստ էության լուծելու համար:

Ալենհայտ է, որ մարդու իրավունքները խախտվել են ոչ միայն ԱԳԿՊԿ Կենտրոն տարածքային ստորաբաժանման պաշտոնատար անձի կողմից, այլև ԴԱՀԿ ծառայության համապատասխան աշխատակցի կողմից:

Չնայած բազում առաջարկներին, ԴԱՀԿ ծառայությունը մատնացույց է անում ԾԻԳ խորհուրդը և հայտնում, որ ՀՀ կառավարության 01.08.2002թ. թիվ 1151-Ն որոշմամբ Կոնդ թաղամասը նույնպես ընդգրկված է Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման նպատակով պետության կարիքների համար վերցվող հողամասերի ցանկում, ուստի սահմանափակված է այդ

տարածքներում գույքի իրավունքների պետական գրանցում կատարելը, եթե չկա ԾԻԳ խորհրդի համաձայնությունը:

Ստացվում է, որ մի շարք պետական պաշտոնատար անձինք, այն է՝ Երևանի քաղաքապետը, ԱԳԿՊԿ Կենտրոն ստորաբաժանման ղեկավարը և հարկադիր կատարողը, անտեսելով Սահմանադրության 5, 8, 28, 38 և 39 հոդվածների, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6 և 13 հոդվածների և 20.03.1952թ. արձանագրության հոդված 1-ի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 14-ի պահանջները, իրենց գործողությունները հիմնավորել են ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ, ինչն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն, չի կարող գերակա լինել թվարկվածների նկատմամբ:

Սա ըստ էության ամենացայտուն օրինակներից մեկն է, որը բնորոշ է բոլոր այն դեպքերին, երբ խնդիրը վերաբերել է Երևանի կառուցապատման ծրագրերով օտարման գոտի ճանաչված տարածքներում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ իրավունքների գրանցման կամ գրանցված իրավունքի փոփոխման մասին դատական ակտի կատարմանը: Սակայն նմանատիպ դեպքերը, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, կրում են մշտական բնույթ և մինչև այժմ որևէ մեկը նման քայլի համար պատասխանատվության չի ենթարկվել:

Նման հարցերով գրասենյակի կառավարման խորհուրդը, եթե դատական ակտը վերաբերել է իրավունքի գրանցմանը կամ փոփոխմանը, որն իրացնողի համար փոխհատուցման լրացուցիչ պարտավորություն է առաջացնելիս եղել, կադաստրի ստորաբաժանմանն առաջարկել է մերժել նման գրանցումը, այսինքն՝ չկատարել դատական ակտը:

ԴԱՀԿ ծառայության նման գործողությունների կամ անգործության վերաբերյալ բոլոր բողոքներով կայացվել է որոշում իրավունքի խախտման մասին և իրավունքի խախտում արձանագրվել է ոչ միայն հարկադիր կատարողի, այլև կադաստրի մարմնի, հիշյալ կառավարման խորհրդի մոտեցումներում:

3.4.2. Քրեակատարողական հիմնարկներ

Պաշտպանի և նրա աշխատակիցների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ **քրեակատարողական հիմնարկներում** պահման պայմանները, սպասարկող անձնակազմի վերաբերմունքը զգալի դրական տեղաշարժ ունեցել են: Չկա նախկին այն իրավիճակը, երբ խցերում պահվող անձանց թիվն անցնում էր մեկ տասնյակից, երբ բնական կարիքները պետք է հոգային խցում և անհարմար պայմաններում, երբ խոսք չէր կարող լինել սանիտարահիգիենիկ պայմանների, արտաքին աշխարհի հետ կապի և մարդու այլ հիմնարար պահանջմունքների բավարարման, անօտարելի իրավունքների իրականացման մասին:

Ներկայումս վերանորոգման, վերակառուցման աշխատանքներ են իրականացվում բոլոր քրեակատարողական հիմնարկներում, որոշակի միջոցներ են ձեռնարկվում նման հիմնարկները միջազգային ստանդարտներին համապատասխան դարձնելու ուղղությամբ: Արդարադատության նախարարության կողմից կազմակերպվող սեմինարները, ուսուցումները և անձնակազմի հետ անցկացվող նման այլ միջոցառումները հույս են ներշնչում, որ այդ հաստատությունները լիովին կապահովվեն մարդու իրավունքները հարգող և օրինապաշտ կադրերով:

Սակայն այսօր դեռևս առկա են որոշ անընդունելի պայմաններ և երբեմն հանդիպող անթույլատրելի վերաբերմունք, արձանագրվել են **դաժան վերաբերմունքի** դեպքեր, նկատվել են **ոչ կանոնակարգային հարաբերությունները քողարկելու** միտումներ, **չի կիրառվում համարժեք պատժելիության սկզբունքը:**

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այստեղ չեն ձեռնարկվում անհրաժեշտ բոլոր գործողությունները իրավիճակը շտկելու և բարելավելու ուղղությամբ:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձինք պահման պայմանների, սպասարկող անձնակազմի դեմ բողոքներ եզակի դեպքերում են ներկայացնում: Նրանցից

ստացված բողոքները վերաբերում են հիմնականում իրենց նկատմամբ եղած քրեական գործի քննությունից կամ դատավճռից ունեցած դժգոհությանը և ազատագրվման ընթացքում բարեկամների կողմից իրենց բնակարանների սեփականացմանը: Անձնական հանդիպումների ընթացքում պարզվել է, որ դա բացատրվում է նրանով, որ **տվյալ հաստատություններում պահվող անձինք երաշխիք չունեն**, թե հաստատության պայմաններից կամ անձնակազմից բողոքելու դեպքում չեն ենթարկվի **անօրինական սահմանափակումների**:

Օրինակ 30. Անազատության մեջ գտնվող երկու անձանց հարազատները, խնդրելով չարձանագրել բողոքները, խոստովանել են, որ **Պաշտպանին դիմելուց հետո ճնշումներ են գործադրվել** անազատության մեջ գտնվող իրենց հարազատների նկատմամբ, ինչը հաստատվել է հետագայում՝ քրեակատարողական հիմնարկում այդ անձանց հետ Պաշտպանի հանդիպման ընթացքում: Նման երևույթի դեմ պայքարը դժվար է, քանի որ անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ նման վերաբերմունքին ձևական առումով տրվում է օրինական տեսք: Այդպիսի մեկ օրինակը բավական է, որպեսզի քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ գտնվողի մոտ արմատավորվի չափազանց զգուշավոր, թերահավատ, շատ հաճախ նաև մերժողական վերաբերմունք իր իսկ իրավունքների հնարավոր պաշտպանվածության նկատմամբ:

Կոռուպցիան այստեղ լայն տարածում և խոր արմատներ ունի, ինչը ծնում է նաև որոշ անընդունելի պայմաններ և անթույլատրելի խտրական վերաբերմունք անազատության մեջ պահվողների նկատմամբ: Ի հայտ են գալիս արտոնյալներ, որոնք ուզած ժամանակ կարող են տեսակցություններ ունենալ հարազատի, բարեկամի, ընկերոջ կամ ցանկացածի հետ, հեռախոսով կապվել դրսի աշխարհի հետ, խցում ունենալ ռադիո, հեռուստացույց, իրենց հայեցողությամբ հանձնուք ստանալ և ազատորեն օգտվել այլ իրավունքներից: Այդ ամենը նրանց տրվում է **ոչ անհատույց կերպով**:

2005թ. ընթացքում անցկացված սիստեմատիկ բնույթ կրող այցելությունների և դիտարկումների ընթացքում խնդիր է դրվել վերհանել առանձին քրեակատարողական հիմնարկների ինչպես ֆիզիկական պայմաններին, այնպես էլ ընդհանուր մթնոլորտին առնչվող խնդիրներ:

- **Նուրբարաշենի** քրեակատարողական հիմնարկում անբավարար է քննչական և տեսակցության սենյակների քանակը, եղածները հակասանիտարական վիճակում են: Դեպի խցեր տանող մուտքի մի կողմում բժշկի ընդունելության սենյակն է, որը բժշկի սենյակ է միայն այնքանով, որ այնտեղ սեղանին եղած արկղում առկա են հիվանդության պատմություններ: Մնացած առումներով այն կարող է ավելի շուտ լքյալ շինություն հիշեցնել:

Օրինակ 31. Այցելություններից մեկի ժամանակ հացադուլավորը, որն ի վիճակի չէր քայլել, հանդիպման սենյակ **բերվեց պատգարակով և դրվեց ուղղակի հատակին**: Մենյակում հիվանդին հետազոտելու համար որևէ հարմարություն չկա, աթոռներն ու սեղանը օգտագործման պիտանի չեն: Աթոռները ներս են բերվում այս ու այն տեղից՝ ըստ անհրաժեշտության:

- **Վարդաշենի** քրեակատարողական հիմնարկում նույնպես պատշաճ քննչական և տեսակցության սենյակներ ունենալու, համապատասխան սանիտարա-հիգիենիկ պայմաններ ապահովելու հարցը չի լուծված: Նման ֆիզիկական պայմաններն ինքնին համարվում են արժանապատվությունը նսեմացնող:

- **Գորիսի** քրեակատարողական հիմնարկում պահվող դատապարտյալները զանգատվում են առավոտյան լվացվելու համար ջուրը մեծ ուշացումով տալու կամ ընդհանրապես չտալու հանգամանքից: Գտնվեցին նաև դատապարտյալներ, որոնք

գանգատվեցին, որ **Պաշտպանին հասցեագրած իրենց բողոքներն ադմինիստրացիան չի ուղարկում**: Դ-ա հնարավոր չեղավ ապացուցել, քանի որ բողոքողները ցանկացան մնալ անանուն: Նրանցից դիմում ընդունելու միակ ճանապարհը այդ հաստատություններ այցելությունները հաճախակի դարձնելն է, դատապարտյալների հետ հանդիպումն ու նրանց գրավոր բողոքներն անմիջականորեն իրենցից ընդունելը: Սակայն այս տարբերակի դեպքում էլ վերոշարադրյալը ցույց է տալիս, որ անազատության մեջ գտնվողը ճնշումների ենթարկվելու անհանգստության առիթ ունի Պաշտպանին անմիջական բողոք ներկայացնելու դեպքում:

- **Երևանի «Կենտրոն»** քրեակատարողական հիմնարկում չի ապահովված հեռախոսային կապն արտաքին աշխարհի հետ, հեռուստացույց չի թույլատրվում: Այս հիմնարկությունը շարունակում է մնալ Ազգային անվտանգության ծառայության շենքում, ինչը ինքնին հանգեցնում է հաստատության վրա այդ ծառայության ազդեցությանը:

- **Վանաձորի** քրեակատարողական հիմնարկի անմխիթար վիճակը պահպանվում է: Այստեղ վիճակը բարելավելու ուղղությամբ ոչինչ չի արվում այն նկատառումով, որ շուտով շահագործման պետք է հանձնվի նոր հաստատությունը, և հիմնարկը տեղափոխվելու է: Այս հանգամանքն անշուշտ չի սփոփում այսքան տարիներ նման պայմաններում գոյատևող թե՛ անազատության մեջ գտնվողների և թե՛ հիմնարկի աշխատակիցների համար:

Առ այսօր կանոնակարգված չեն քրեակատարողական հիմնարկում պահվող դատապարտյալի, կալանավորի հացադուլ հայտարարելու հետ կապված խնդիրները: Նուբարաշենի քրեակատարողական հիմնարկի ղեկավարությունը կոնկրետ հացադուլ հայտարարած կալանավորի հարցով ղեկավարվում էր **նախկին ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարի 13.04.1984թ. թիվ 0138 հրամանով՝ «Ազատագրկման վայրերում սնունդ ընդունելուց հրաժարվող անձանց պահման պայմանների և հարկադիր կերակրման կարգը հաստատելու մասին»**:

Փաստորեն քրեակատարողական հիմնարկների պետերը իրենց նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ պետք է լուծեն հացադուլավորներին պահելուն առնչվող խնդիրները:

Չնայած քրեակատարողական հիմնարկների տեղափոխմանը ՀՀ ներքին գործերի նախարարության ենթակայությունից արդարադատության նախարարության ենթակայության ներքո, չի նվազել խոշտանգումների և դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի կիրառությունը (ծեծ, հոգեբանական ճնշումներ, նվաստացումներ), ինչը բազմիցս արձանագրվել է **Պաշտպանի** և Արդարադատության նախարարությանն առընթեր քրեակատարողական հիմնարկների **Հասարակական դիտորդական խմբի** կողմից:

Օրինակ 32. Պաշտպանի հետ Հասարակական դիտորդական խմբի հանդիպումներից մեկի ընթացքում Պաշտպանը տեղեկացվել է, որ 2005 թ. մայիսի 4-ին Հասարակական դիտորդական խումբը ահազանգի հիման վրա այցելել է քրեակատարողական հիմնարկ, ուր բռնության էր ենթարկվել դատապարտվածներից մեկը: Պաշտպանի, Հասարակական դիտորդական խմբի, ԲՀԿ պետի, անվտանգության գծով պետի տեղակալի, սոցիալ-հոգեբանական ծառայության պետի, բուժառայության պետի և դատապարտվածի մասնակցությամբ հանդիպման ընթացքում հիմնարկի պետը հաստատել է հատուկ միջոց, այն է՝ ռետինե մահակ կիրառելու իր հրահանգը ի պատասխան հիմնարկի աշխատակցին դատապարտվածի կողմից ցույց տրված դիմադրության: Տեղում պարզվեց նաև, որ դաժան վերաբերմունք ցուցաբերելու ողջ ընթացքում դատապարտվածը ձեռնաշղթայված է եղել:

Այս միջադեպի առնչությամբ թե՛ քրեակատարողական հիմնարկի ղեկավարությունը և թե՛ Արդարադատության նախարարությունը համարժեք գործողություններ չեն ձեռնարկել միջադեպի մեղավոր աշխատակիցներին պատժելու ուղղությամբ՝ գնահատելով նման վերաբերմունքը որպես համաչափ գործողություններ:

Օրինակ 33. Պաշտպանի և դատախազության բարձրաստիճան ներկայացուցչի մասնակցությամբ ամբաստանյալներից մեկի մոտ արձանագրվել են դաժան վերաբերմունքի արդյունքում առաջացած ակնհայտ երևացող վնասվածքներ: Անգամ մեկուսարանում է արձանագրվել ոստիկանության կողմից ամբաստանյալի նման ընդունելությունը: **Այդքանից հետո անգամ դատախազությունը եզրակացություն է կազմել, որ այդ անձի հանդեպ դաժան վերաբերմունք չի եղել:**

Դաժան վերաբերմունքի դեպքերի մասին հաղորդումները չեն ստանում համարժեք արձագանք, այլ ընդհակառակը՝ նկատվում է դրանք քողարկելու միտում, ինչը վկայում է, որ արդարադատության նախարարության կազմի մեջ ներառնելուց հետո էլ նման դեպքերում չի կիրառվում համարժեք պատժելիության սկզբունքը:

Արդարադատության նախարարության հետ Պաշտպանի առնչությունները գալիս են ապացուցելու, որ այդպես էլ չկայացավ Պաշտպան-արդարադատության նախարարություն համագործակցությունը հոգուտ մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակի բարձրացման:

Նախարարի կողմից արված բանավոր և գրավոր դիտողությունները 2004թ. տարեկան զեկույցի կապակցությամբ համարժեք չեն զեկույցի բովանդակությանը և պարունակում են իրավաբանական վրիպումներ, ինչի մասին Պաշտպանը հատուկ նամակով¹³ հայտնել է և իր նախաձեռնությամբ կազմակերպված աշխատանքային քննարկմամբ փորձել է հաղթահարել այն մերժողական վերաբերմունքը, որը խոչընդոտել է համագործակցության կայացմանը:

2005թ. նախարարի օրենսդրական փոփոխության նախաձեռնությունը ևս, առանց որևէ նախնական մասնագիտական և աշխատանքային քննարկման, վկայում է ընդհանուր առմամբ մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատության հետ արդյունավետ համագործակցության բացակայության մասին: Այս ուղղությամբ միջազգային պրակտիկայի ավելի խորքային և մանրակրկիտ ուսումնասիրության և վերլուծության անհրաժեշտություն կա՝ նպատակ ունենալով հայաստանյան իրականության մեջ միջազգային դրական փորձի ներդրումը և արդարադատության համակարգում բարեփոխումների դժվարագույն գործընթացներում Պաշտպանի, որպես մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատություն, դրական դերակատարության ընկալումը:

3.5. Պաշտպանության նախարարություն

Հայկական բանակի կայացումն ու հզորացումը մեզ համար կենսական խնդիր համարելով հանդերձ, հարկ է արձանագրել, որ բանակը շարունակում է մնալ այն տեղը, ուր մարդու անօտարելի մի շարք իրավունքների ու ազատությունների պահպանումն ու պաշտպանությունը ցանկալի մակարդակի չեն հասցված:

Զգալի աշխատանք է կատարվել սպայական կազմը զինվորական կրթություն ստացած կադրերով ապահովելու, զինձառայողների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման, բանակում կարգապահության բարձրացման, կանոնադրային հարաբերությունների ապահովման և այլ ուղղություններով, և դրական արդյունքը շոշափելի է:

Այդ ամենին զուգահեռ, առկա են այնպիսի դեպքեր, ինչպիսիք են սպանությունը, մարմնական վնասվածք հասցնելը, զինվորի արժանապատվության նսեմացումը,

¹³ Տե՛ս՝ Հավելված 4.7.: Մարդու իրավունքների պաշտպանի նամակն ուղղված ՀՀ արդարադատության նախարարին:

անհոգատար վերաբերմունքը և այլն, որոնք բացառելու ուղղությամբ անելիքները դեռ շատ են:

2005թ. ընթացքում Պաշտպանության նախարարության դեմ ստացվել է 72 դիմում-բողոք: Ինչպես ստացված դիմում-բողոքներում վերհանված խնդիրների, այնպես էլ որոշ ընդհանուր հիմնահարցերի ուսումնասիրման նպատակով Պաշտպանը և հաստատության մասնագետները մի շարք այցելություններ են կատարել զորամասեր, որոնց ընթացքում հանդիպել են զորամասերի ղեկավարության հետ, քննարկել ստացված դիմում-բողոքներում արժարժված, ինչպես նաև համակարգային բնույթ կրող խնդիրների հնարավոր լուծման տարբերակները: Բացի այդ անցկացվել է զորամասերի ընդհանուր ֆիզիկական վիճակի, սանիտարահիգիենիկ պայմանների, ինչպես նաև սննդի և մարդու առողջությանն անմիջականորեն առնչվող այլ պարագաների դիտարկում և գնահատում: Ինչպես Պաշտպանի հաստատության, այնպես էլ մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից անցկացված դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքներով պետք է շեշտել, մասնավորապես, կյանքի և առողջության պահպանման միևնույն պայմանների ապահովման համար խիստ հրատապ խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Հիմնականում ձեռնարկված են աշխատանքներ զինծառայողների ուսուցման, ծառայության անցկացման, կենցաղի, հանգստի, բուժապասարկման պատշաճ պայմանների ստեղծման ուղղությամբ: Կառուցվում և վերակառուցվում են զորանոցները, սննդի օբյեկտները, ուսումնական մասերը, սպայական կազմի առանձնասենյակները և այլ անհրաժեշտ շինություններ: Աշխատանքներ են տարվում կարգապահության բարձրացման, կանոնագրքային հարաբերությունների պահպանման ուղղությամբ:

Սակայն դեռևս առկա է այսպես կոչված «դեղով շինա» երևույթը, որը բերում է «հին» և «նոր» ծառայողների միջև անթույլատրելի խտրականության, նաև անմարդկային և հանցավոր սովորույթների արմատավորման: Սպայական կազմի առաջնային խնդիրներից է նման երևույթների դեմ պայքարը: 2005թ. ընթացքում պաշտոնական տվյալների համաձայն բանակում գրանցվել է մահվան 135 դեպք, ինչը վկայում է դաժան վերաբերմունքի դրսևորումների մասին: Միաժամանակ, չեն պատժվում պատասխանատու սպաները, և, ընդհանրապես, նման դեպքերի նկատմամբ չի կիրառվում համարժեք պատժելիության սկզբունքը: Սպանության դեպքերի վերաբերյալ նախաքննական և հետաքննական գործողությունների նկատմամբ տուժող կողմի անվստահությունը, ինչը պայմանավորված է դրանց ընթացքում կեղծ ցուցմունքներ կամ խոստովանություն ստանալու նպատակով դաժան վերաբերմունքի կիրառմամբ, հետագայում տարածվում է նաև դատարանների վրա:

Խնդիրներ կան կապված ռազմաբժշկական հանձնաժողովների գործունեության հետ: Այս հանձնաժողովների ոչ օբյեկտիվ, ոչ հոգատար մոտեցումների արդյունքում երբեմն պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում նաև առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի անձինք: Այսպիսիների առողջական վիճակը ծառայության վայրում պայմանների փոփոխման պատճառով ավելի է վատանում, և նման անձինք զորացրվում են արդեն առավել տևական բուժում պահանջող վիճակում:

Չորամասային բժշկական մասերում նույնպես երբեմն ցուցաբերվում է անհետևողականություն հիվանդների ապաքինման հարցերում՝ հիվանդությունից լիովին չապաքինված զինվորը դուրս է գրվում բուժմասից, ինչը պատճառ է դառնում հիվանդության կրկնվելուն և երբեմն նաև առավել խորանալուն:

Օրինակ 34. Չորամասերից մեկում ընդամենն առաջին ամիսը ծառայող զինվորը գանգատվել է իր առողջական վիճակից: Բուժմասում ախտորոշվել է «ճողվածք սեռական օրգանների շրջանում», և զինվորը ենթարկվել է վիրահատման:

Նա դուրս է գրվել ընդամենը մեկ շաբաթ անց և վերադարձել է զորամաս, երբ լիովին ապաքինված չի եղել: Այստեղ ներգրավվել է ծառայության, որի **արդյունքում հիվանդությունը ոչ միայն կրկնվել, այլև ավելի խորացել է:** Այս դեպքը վկայում է, որ **ռազմաբշկական հանճնաժողովն անտեսել է զորակոչիկի մոտ հիվանդության առկայությունը և թույլատրել է զորակոչել առանց բուժման**, զորամասի բուժական տեղամասից նա ծառայության է ուղարկվել **ոչ լրիվ բուժված**, հրամանատարության կողմից ծառայության է ներգրավվել՝ անտեսելով նրա առողջական վիճակը:

Օրինակ 35. Մեկ այլ դեպքում բանակ զորակոչված երիտասարդն առողջական վիճակից գանգատվել է զորակոչվելուց մեկ ամիս անց: Տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ նրա մոտ հայտնաբերվել է **չարորակ ուռուցք: Հետագայում վիրահատության է ենթարկվել, ապա մահացել է:**

Պարզվել է, որ երիտասարդի մոտ հիվանդության ախտանիշներն առկա են եղել մինչև բանակ զորակոչվելը, այնուամենայնիվ, **ռազմաբշկական հանճնաժողովը նրան ճանաչել է ծառայության համար պիտանի:**

Այս ամենն **արդյունք է մարդու վիճակի, նրա ճակատագրի նկատմամբ հոգատարության, սրտացավ վերաբերմունքի բացակայության, մասնագիտական պարտականությունների անբարեխիղճ կատարման:**

Չկարգավորված է մնում նախկին ԽՍՀՄ բանակից զորացրված հայաստանաբնակ քաղաքացիներին բնակարանով ապահովելու խնդիրը:

«Ձինծառայողներին, զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիներին և նրանց ընտանիքի անդամներին Անկախ պետությունների համագործակցության պետություններում բնակելի տարածքով ապահովելու մասին» ԱՊՀ անդամ պետությունների համաձայնագրի ստորագրությամբ, Հայաստանը պարտավորվել է իր տարածքում բնակվող նախկին ԽՍՀՄ զինծառայողներին ապահովել բնակելի տարածքով իր օրենսդրությամբ սահմանված կարգով:

Իրականում խնդիրը մնում է չլուծված: Պաշտպանության նախարարությունը գտնում է, որ հարցը պետք է լուծեն կոնկրետ անձի բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ վերջիններս վկայակոչում են բնակարանային ֆոնդ չունենալը և կամ ընդհանուր հերթագրման անհրաժեշտությունը:

Օրինակ 36. Թիվ 1-1320 գործով դիմումատուն Խորհրդային բանակից զորացրվել է 1990թ. սպայի կոչումով և 1991թ. հաշվառվել է Երևան քաղաքում որպես բնակարանի կարիք ունեցող: Այնուհետև, մինչև բնակարան ստանալը, զինվորական ծառայության է անցել հայկական բանակում, որտեղից զորացրվել է 2001թ. և առ այսօր բնակարան չի ստացել:

Երևանի քաղաքապետարանից հայտնում են, որ դիմումատուին բնակարանով ապահովելու հարցը կլուծվի ազատ բնակտարածություն առաջանալու դեպքում ըստ նրա ունեցած հերթի:

Օրինակ 37. Թիվ 1-0517 գործով դիմումատուն հայտնվել է առավել անորոշ վիճակում: Ունենալով 22 տարվա զինվորական ծառայության ստաժ, 1995թ. զորացրվել է հաստիքների կրճատման պատճառով: Դեռևս 1993թ. դիմել է ՀՀ զինվորական

կոմիսարիատ՝ բնակարանով ապահովելու խնդրանքով: 2002թ. դիմումատուն տեղեկացել է, որ իր անձնական գործը, դրա հետ նաև բնակարան տրամադրելու վերաբերյալ դիմումը կորել են: Այնուհետև, 2004թ. պաշտպանության նախարարությունից նրան հայտնել են, որ ինքը չկա բնակարանի կարիք ունեցողների ցուցակում, այն դեպքում, երբ նա բնակարան կամ համարժեք փոխհատուցում պետք է ստանար դեռևս 1993-1994թթ.:

Պաշտպանի հարցմանը պաշտպանության նախարարությունից պատասխանել են, որ դիմումատուի բնակարանային խնդիրները ենթակա են լուծման իր բնակավայրի՝ Աբովյան քաղաքի տեղական ինքնակառավարման մարմնի միջոցով:

Դիմումատուն Աբովյան քաղաքի բնակիչ է և ունի նաև մարզպետի աշխատակազմի ղեկավարի գրությունը՝ «Վարչապետին հասցեագրված Ձեր դիմումն ուսումնասիրվել և քննարկվել է Աբովյանի քաղաքապետարանում: Համաձայն քաղաքապետի 30.04.2004թ. գրության, Դուք Աբովյան քաղաքի բնակիչ չեք համարվում և քաղաքապետարանը չի կարող Ձեր բնակարանային պայմանների ապահովման հարցը լուծել»:

Խնդիր է նաև բանակի սպայական անձնակազմի սոցիալ-կենցաղային պայմանների բարելավումը: Լուծում են պահանջում հատկապես զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման, բնակարանով ապահովման, աշխատավարձի բարձրացման հարցերը: Մարտական հերթապահություն իրականացնող, ծառայության առավել ծանր պայմաններ ունեցող պայմանագրային զինծառայողների վարձատրությունը ենթակա է տարբերակման, ինչն առայժմ չի արված:

Մեծ նշանակություն տալով այս խնդրին, Պաշտպանին առընթեր փորձագիտական խորհրդի նիստերից մեկը նվիրվել է «Ձինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի քննարկմանը:

Ձինծառայողները սոցիալապես խիստ խոցելի են, քանի որ ամբողջովին գտնվում են պետական հոգածության ներքո: Նրանց սոցիալական պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է անցկացնել օրենսդրական բարեփոխումներ:

Ստորև բերվում են «Ձինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու որոշ առաջարկներ:

Օրենքի հոդված 31-ը, մասնավորապես, ասում է, որ զինավարժությունները, մարտական հրաձգությունները և մարտական հերթապահություններն անցկացվում են շաբաթվա ցանկացած օր՝ առանց աշխատաժամանակի ընդհանուր տևողության սահմանափակման: Չի նշված, թե ինչ արտոնություններից կարող է օգտվել զինծառայողը կիրակի, տոն և ծառայության գրաֆիկից դուրս օրերին և ժամերին մարտական հերթապահության և զորավարժությունների անցկացման ամբողջ ժամանակահատվածի դիմաց: Անհրաժեշտ է, որպեսզի այս պայմաններում ծառայություն իրականացնող զինծառայողները ստանան լրացուցիչ վարձատրություն, քանի որ նման ծառայությունն իրականացվում է զինվորական քաղաքացու հանգստի հաշվին:

Ձինծառայողների և նրանց ընտանիքների անդամների անվճար բժշկական սպասարկումը սահմանող հոդված 33-ը անդրադառնում է նաև զինծառայողի առողջարանային բուժմանը, որը պետք է փոխհատուցվի համապատասխան մարմինների կողմից: Այստեղ անհրաժեշտ է ավելացնել նաև զինծառայողների ընտանիքների անդամների կողմից առողջարանային բուժման անվճար ուղեգրեր ստանալու մասին դրույթ:

Ձինծառայողների տրանսպորտային սպասարկման առնչությամբ հոդված 36-ում նշվում է, որ զինծառայողները ՀՀ տարածքում անվճար օգտվում են քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից՝ անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից): Անհրաժեշտ է նշել, որ «տաքսի» հասկացողության տակ չի մտնում

երթուղային տաքսին, ինչը հողվածում պետք է հատակեցվի, իսկ եթե «տաքսի» ասելով հասկանում ենք նաև երթուղային տաքսի, ապա դա նույնպես պետք է նշվի հողվածում, իսկ երթուղային տաքսուց օգտվելու գումարը փոխհատուցվի զինծառայողին: Այս արտոնությունից պետք է լիարժեքորեն օգտվեն նաև զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների և նրանց հավասարեցված անձանց ընտանիքների անդամները:

3.6. Դատական համակարգ

Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 19

2005թ. ընթացքում դատարանների դեմ ստացվել է 166 գրավոր և ավելի քան 500 բանավոր դիմում-բողոք: Քանի որ գրեթե բոլոր բանավոր դիմում-բողոքներն ուղղակիորեն վերաբերել են դատական քննության առարկա հանդիսացող հարցերին կամ արդեն իսկ ընդունված դատական որոշումներին/վճիռներին, դրանք հիմնականում քննարկման չեն ընդունվել:

Դատարանների դեմ ուղղված դիմումներով բողոքատուները հիմնականում դժգոհել են դատարանների կողմից կայացված վճիռներից, ինչպես նաև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի իրականացմանը խոչընդոտելուց: Բողոքները մեծավ մասամբ վերաբերել են քաղաքացիական գործերին՝ դատաքննության անհիմն ձգձգումներին, հայցադիմումը և մյուս փաստաթղթերը, գործով կայացված որոշումը/վճիռը ժամանակին չուղարկելուն, պատշաճ կերպով չժամկետացված պատասխանողի բացակայությամբ վճիռ կայացնելուն և նմանաբնույթ այլ խախտումների:

Դատարաններից դժգոհության հաջորդ պատճառն այն է, որ հիմնականում քաղաքացիների միջնորդությունները չեն բավարարվում՝ առանց հիմնավոր պատճառաբանությունների:

Զգալի թիվ են կազմել բողոքները հատկապես դատավարության կողմերի համար մրցակցության անհավասար պայմանների, պաշտպանության կողմի միջնորդությունների անհիմն մերժումների, օրենքի խախտումներով ձեռք բերված ապացույցների օգտագործման, անմեղության կանխավարկածի սկզբունքի ոտնահարումների և նման այլ հանգամանքների վերաբերյալ, սակայն քանի որ նման խնդիրները ենթակա են քննարկման և լուծման միայն գործի վերաքննության կամ վճռաբեկության կարգով, դիմումատուներին տրամադրվել է խորհրդատվություն:

Դատարանի կողմից դատավարության մասնակիցների իրավունքների լիարժեք իրականացումը չապահովելու, կողմերի հավասարության իրավունքը խախտելու բնորոշ օրինակ են հետևյալ դեպքերը:

Օրինակ 38. Արմավիրի մարզի 1-ին ատյանի դատարանը, քննելով առևանգման վերաբերյալ քրեական գործ, առևանգում կատարելու մեջ մեղադրվողին հանցավոր է ճանաչել և դատապարտել է առանց տուժողին լսելու այն դեպքում, երբ ամբաստանյալը պնդել է, որ աղջկան (տուժողին) փախցրել է ամուսնանալու նպատակով և նրա համաձայնությամբ: Տուժողին հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունը մերժվել է առանց բավարար հիմնավորման:

Օրինակ 39. Դատարանի 24.12.2003թ. վճռով (նախագահող դատավոր՝ Հ. Հովհաննիսյան) բավարարվել է ԾԻԳ կազմակերպության հայցը՝ Պուշկինի փողոցի 11/4 հասցեով բնակվող ընտանիքի պայմանագիր կնքելուն հարկադրելու և 92.3 ք/մ տարածքի դիմաց 23.660 ԱՄՆ դոլարին համարժեք փոխհատուցմամբ վտարելու մասին:

Ընտանիքը պահանջել է կառավարության թիվ 950 որոշմամբ խոստացված կարգով իրեն տրամադրել այլ տարածք վերցվողի փոխարեն, սակայն իրացնողն այդ պահանջը չի բավարարել: Դատարանը չի քննարկել մերժման պատճառները և վճռել է հարկադրել պայմանագիր կնքելու գնահատման ակտի համաձայն՝ «պատասխանողներին և տարածքն զբաղեցնող **այլ անձանց** վտարել Պուշկինի 11, բնակարան 4-ից»:

«Վճռեց» մասի ձևակերպումը նույնությամբ վերցված է հայցադիմումից և վճռում չի ասված, թե ովքեր են այդ «այլ անձինք», ինչու դատաքննության մասնակից չեն դարձվել, ինչու է դատաքննությանը մասնակից չդարձված անձանց իրավունքներին վերաբերող վճիռ կայացվում:

Նույնը կրկնվել է վերաքննիչ դատարանում: Վճիռն անփոփոխ է թողնվել նաև վճռաբեկ դատարանի որոշմամբ: **Ընտանիքը 11 անդամներով վտարվել է տարածքից, զրկվելով նաև 14.820 դոլարին համարժեք դրամի խրախուսման գումարից:**

Օրինակ 40. Կառուցապատման ծրագրերով վերցվող տարածքների սեփականատերերի առարկությունները՝ առաջարկվող հատուցման գնի ոչ համարժեք լինելու մասին, որևէ գործով չեն ընդունվել, փոխհատուցման չափը որոշելու համար փորձաքննություն նշանակելու մասին այդ անձանց միջնորդությունները բոլոր դեպքերում մերժվել են:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 26.12.2003թ. վճռով (նախագահող դատավոր՝ Ռ. Ներսիսյան) բավարարվել է ԾԻԳ կազմակերպության հայցն ընդդեմ Պուշկինի փողոցի 11/4 հասցեի տան սեփականատերերի՝ գույքը պետական կարիքների համար վերցնելու մասին պայմանագիր կնքելուն հարկադրելու և տարածքից վտարելու վերաբերյալ:

Պատասխանողները դատարանին հայտնել են, որ համաձայն են ազատել տարածքը և հայցվորին տրամադրել իրենց սեփականությունը, սակայն պահանջում են, որ Կենտրոն համայնքի սահմաններում իրենց տրամադրվի բնակարան՝ համաձայն ՀՀ կառավարության 05.10.2001թ. թիվ 950 որոշման 5-րդ կետի, որով ասված է. «Իրացվող բնակարանի նկատմամբ իրավունք ունեցող քաղաքացիների՝ **այլ բնակտարածությամբ փոխհատուցում ստանալու ցանկությունը կիրականացվի** ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափով բնակտարածության հատկացմամբ, սեփականատերերին՝ Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմաններում, օգտագործողներին և վարձակալներին՝ Երևան քաղաքի վարչական տարածքում»:

Պատասխանողները նաև վիճարկել են առաջարկվող փոխհատուցման չափը, որը ներկայացվել է ըստ «Արթին Էնթերփրայս» կազմակերպության գնահատման, պահանջել են վերագնահատում անկախ գնահատողի միջոցով:

Պատասխանողների ոչ մի պահանջ չի բավարարվել, ընտանիքը 9 անդամներով վտարվել է բնակարանից: Դատարանն անտեսել է, որ կառավարության որոշման միանշանակ խոստումը բնակտարածությամբ փոխհատուցման վերաբերյալ՝ «կիրականացվի», մերժվել է: Դատարանը չի անդրադարձել նաև գնահատման ճշտությանը՝ այն վիճարկելու բավարար հիմք չի տեսել:

Դատարանի այս վճռով սեփականատերերը զրկվել են նաև նախատեսվող խրախուսման 9.850 ԱՄՆ դոլարին համարժեք գումարից: Վճիռն անփոփոխ է թողնվել վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից:

Հասարակական հնչեղություն ստացած՝ Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման ընթացքում և հետևանքով թույլ տրված՝ սեփականության, արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների խախտումների մասին Պաշտպանը 2005թ. ներկայացրել է արտահերթ հրապարակային զեկույց¹⁴: Պաշտպանին բողոք ներկայացրած սեփականատերերը և օգտագործողները, հանդիսանալով պատասխանողներ, դատարանում առարկել են ինչպես ՀՀ կառավարության որոշումների սահմանադրականության, այնպես էլ հայցվորի կողմից իրենց իրավունքների խախտումների դեմ, նշելով տարածքն ամբողջապես հաշվարկում չներառելը, շուկայական գինը ճիշտ չհաշվարկելը, գնահատողի կողմնակալ լինելը, սեփականատիրոջը որպես օգտագործող դիտելը, այլ օգտագործողների իրավունքներն անտեսելը և նման այլ հարցեր:

Չզալի թիվ են կազմում այն գործերը, որոնցով ներկայացվել են հակընդդեմ հայցեր սեփականության իրավունքը կամ բնակօգտագործման իրավունքը ճանաչելու մասին, միջնորդություններ՝ վերցվող գույքը չեզոք գնահատողի միջոցով վերագնահատելու կամ ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու և այլ պահանջների մասին:

Դատարանները չեն անդրադարձել կառավարության որոշումների սահմանադրականությունը վիճարկելու հարցին՝ չեն օգտվել քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 106-ի կետ 2-ով սահմանված՝ դատարանների նախագահների խորհրդին դիմելու իրավունքից:

Որպես կանոն, դատարանները չեն բավարարել չեզոք գնահատողի միջոցով վերցվող գույքը վերագնահատելու կամ ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունները, անտեսել են իրացնողի կողմից Պաշտպանին բողոք ուղարկած անձանց սեփականության միակողմանի գնահատման վերաբերյալ նրանց առարկությունները, նրանց հետ պատշաճ բանակցություններ չվարելը:

Հակընդդեմ հայցերը՝ սեփականության իրավունքը ճանաչելու մասին, մերժվել են այն հիմքով, որ այդ իրավունքը **պետական գրանցում չի ստացել**:

Բոլոր գործերով իրացնողի հայցերը բավարարվել են՝ սեփականատերերի, օգտագործողների առարկությունները որակվել են որպես անհիմն, ընդունվել է իրացնողի այն պնդումը, որ պատասխանողները խոչընդոտում են կառուցապատման ծրագրերի իրականացմանը: Դատարաններն այդ ծրագրերը սեփականատերերի, օգտագործողների սահմանադրական իրավունքների նկատմամբ դիտել են որպես առաջնային, և պատասխանողներին վճռով պարտավորեցրել են պայմանագիր կնքել իրացնողի առաջարկած պայմաններով առանց խրախուսման գումարի, և զբաղեցրած տարածքից վտարել են ինչպես նրանց, այնպես էլ տարածքն զբաղեցնող **այլ անձանց**:

Առաջին առյանի դատարանի այդպիսի վճիռները թողնվել են անփոփոխ ինչպես վերաքննիչ, այնպես էլ վճռաբեկ դատարաններում:

Դատարանների նման մոտեցումները Պաշտպանին դիմած սեփականատերերին, օգտագործողներին բերել են այն համոզման, որ դատական պաշտպանության դիմելու դեպքում նրանք կկորցնեն նաև, այսպես կոչված, **խրախուսանքի** ձևով տրվող գումարները, որ իրացնողի նպատակն է այդ գումարից իրենց գրկելու համար հիմքեր ստեղծելը: Ուստի հարկադրված են եղել ստորագրել իրացնողի կազմած և ներկայացրած պայմանագիրը: **Կառավարության որոշումներով նախատեսված խրախուսանքի գումարը ծառայեցվել է որպես պայմանագիր կնքելուն հարկադրելու միջոց**, և պայմանագիր չստորագրած անձինք գրկվել են խրախուսման գումար ստանալու իրավունքից: Իրացնողն ինքը նույնպես սեփականատիրոջը մղել է պայմանագիր կնքելուց հրաժարվելուն, հատկապես

¹⁴ Տե՛ս՝ Հավելված 11՝ 2005թ. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը:

այն դեպքերում, երբ խոսք է եղել որպես խրախուսանք առավել մեծ գումար վճարելու մասին: Այսպիսով, անընդունելի պայմաններ առաջարկելով՝ իրացնողը հարկադրել է կողմին հրաժարվել պայմանագիր կնքելուց, ապա դատարանի միջոցով կողմին գրկել է տրվելիք խրախուսման գումարներից:

Պայմանագրերը հիմնականում անվանվել են «առուվաճառքի», թեև սեփականատերերից գույքը վերցվել է նրանց կամքին հակառակ, և խոսք կարող էր լինել միայն փոխհատուցման մասին, որից եկամտահարկ պահվել չէր կարող, համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ի «դ» և «ե» կետերի: Տրվող գումարներից եկամտահարկ հաշվարկվել և պահվել է ոչ միայն նման պայմանագրերով, այլ նաև այն պայմանագրերով, որոնք անվանված են «փոխհատուցման»: **Դատարաններն այս հարցը նույնպես չեն քննարկել, պայմանագրերի «առուվաճառք» անվանումները սխալ չեն համարել, եկամտահարկ հաշվարկելը չեն գնահատել որպես անօրինական:**

Զգալի թիվ են կազմել հատկապես դատավորի անհարգալից վերաբերմունքի, ընդհանուր առմամբ դատավարական իրավունքների խախտումների և նման այլ հանգամանքների վերաբերյալ բողոքները, որոնցով դիմումատուները հայցել են Պաշտպանի ներկայացուցիչների կողմից դատական նիստերի դիտարկումների անցկացում:

2005թ. ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչներն անցկացրել են դատական նիստերի մոտ քսան դիտարկում: Ինչպես 2004թ., այնպես էլ 2005թ. դատարաններում անցկացված դիտարկումների ընթացքում արձանագրվել են նշանակված ժամին դատական նիստը չսկսելու, նիստը դատավորի աշխատասենյակում անցկացնելու, դատարանի կողմից կայացվելիք դատավճռին դատախազների անուղղակի միջամտության, դատավորների կոպիտ վերաբերմունքի և ընդհանուր առմամբ էթիկայի նորմերից դուրս վարքագծի դրսևորման դեպքեր: Արձանագրվել է նաև այնպիսի դեպք, երբ դատավորը չի ձեռնարկել որևէ միջոց դատարանի դահլիճում ամբաստանյալների նկատմամբ տուժողի ներկայացուցիչների կողմից բռնությունը կանխելու համար:

Վերոնշյալ թերություններն առկա են հատկապես առաջին ատյանի դատարաններում, ինչը դատավորները բացատրում են հիմնականում ծանրաբեռնվածության, աշխատանքի անբավարար պայմանների և այլ նման հանգամանքներով:

Ուշագրավ են նաև Պաշտպանի ղեկավարությամբ հաստատության մասնագետների կողմից անցկացված տարբեր ատյանների դատարանների կողմից կայացված դատավճիռների ուսումնասիրությունները:

Օրինակ 41. Անչափահասը վիճաբանել է իր հասակակցի հետ՝ արդյունքում նրան պատճառելով մարմնական վնասվածք: Կատարած հանցանքը ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում նրա կողմից ամբողջությամբ ընդունվել է: Այս կապակցությամբ 2005թ. մարտի 3-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը հաշվի առնելով ամբաստանյալի առողջական վիճակը (նա տառապում է խրոնիկ թոքաբորբ հիվանդությամբ), նրա ընտանիքի սոցիալական ծանր պայմանները, վերջնական պատիժ է նշանակել 2 տարի ազատազրկում: Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 29.03.2005թ. որոշմամբ, դատապարտյալն ազատ է արձակվել պայմանական վաղաժամ (1 տարի 3 ամիս 2 օր), ստորագրությամբ, Էրեբունու անչափահասների վարչություն ներկայանալու պայմանով: Վեց ամիս անց, դատախազության կողմից բողոք է ներկայացվել վերադաս դատարան՝ նշանակված պատիժը խստացնելու և կատարած արարքի ծանրության աստիճանին

համապատասխան պատիժ նշանակելու պահանջով, որը դատարանի կողմից բավարարվել է:

Կարելի է եզրակացնել, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատավճիռն ընդունելի կլիներ դատախազության համար այն դեպքում, եթե անչափահասն իր պատիժն ամբողջությամբ կրեր քրեակատարողական հիմնարկում, և անընդունելի է համարվել նրա վաղաժամ ազատումը, թեև դատապարտյալն իր կալանքը կրելու ընթացքում իրեն դրսևորել է լավագույն կողմերով: Նման իրավիճակում ակնհայտ է դատախազության անընդունելի ազդեցությունը դատարանի վրա, ինչը հանգեցրել է մարդու իրավունքների կոնկրետ խախտման:

Դատական համակարգի ներկայիս կառուցվածքը՝ առաջին ատյանի դատարաններ, վերաքննիչ դատարաններ և վճռաբեկ դատարան, ինչպես նաև առանձին տնտեսական գործերով դատարան, կոչված է ապահովելու արդար դատաքննության միջոցով դատական պաշտպանություն ստանալու իրավունքի իրականացումը յուրաքանչյուրի համար և յուրաքանչյուր դեպքում: Այնուամենայնիվ, առկա օրենսդրական բացերը և իրավակիրառական պրակտիկայի արատավոր դրսևորումները շարունակ հանգեցնում են դատավարական իրավունքների էական խախտումների:

Շարունակվում են դատական համակարգին վերաբերող օրենսդրական փոփոխությունները, որոնք առաջին հայացքից կարծես դրական են և առաջարկվում են ի շահ մարդու իրավունքների, սակայն հակասում են մարդու իրավունքի սկզբունքներին:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 376-ը չի նախատեսել հանրային մեղադրանքի գործերով դատավճիռը մեղադրանքի մասով վերաքննիչ դատարան բողոքարկելու տուժողի իրավունքը: Դա համապատասխանել է քրեական դատավարության սկզբունքներին, քանի որ նման գործերով մեղադրանքի ետևում դատախազական մարմինն է որպես մեղադրող, որը համաձայն քրեական դատավարության օրենսգրքի հոդված 35-ի մաս 4-ի, հոդված 54-ի մաս 1-ի կետ 9-ի, հոդված 306-ի 3 և 4 մասերի իրավունք ունի դատավարության ցանկացած փուլում հրաժարվելու մեղադրանքից, որի դեպքում դատարանը պարտավոր է կարճել գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը:

2004թ. փետրվարին ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով փոփոխություն է կատարվել օրենսգրքի հոդված 376-ում, որով տուժողը, նրա ներկայացուցիչը և իրավահաջորդը իրավունք են ստացել առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու նաև մեղադրանքի մասով:

Օրենքում նման փոփոխությամբ օրենսդիրը չի լուծել այն հարցը, թե ինչպես վարվել այն դեպքերում, երբ դատախազը որպես մեղադրող համաձայն է արդարացման դատավճռի հետ և բողոք չի բերում, իսկ տուժողն այն բողոքարկում է: Հետևաբար, արդարացնող դատավճռի դեմ բողոք չբերած դատախազն իրավունք չպետք է ունենա վերաքննիչ դատարանում միանալու տուժողի բերած բողոքին:

Այս դեպքում էլ, երբ մեղադրողը չի միացել տուժողի բողոքին, վերաքննիչ դատարանը պարտավոր է դա դիտել որպես մեղադրանքից մեղադրողի հրաժարում և կարճել գործի վարույթը: Այստեղ է, որ օրենքի նման լրացումը թվում է տուժողի իրավունքի վերականգնում, սակայն իրականում նման մոտեցումը նշանակում է քրեական գործով հանրային մեղադրանքի մասնավորեցում և դատախազական մարմնի նկատմամբ տուժողի անվստահության ամրագրում:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված մի շարք փոփոխություններով չի կարգավորվել այն հարցը, թե ինչպես վարվել որպես դատավարության կողմ առաջին ատյանի դատարանում չներգրավված երրորդ անձին

վերաքննիչ դատարանում ներգրավելու հարցի հետ, եթե վճռաբեկ դատարանը վճիռը բեկանել է հենց այդ հիմքերով, իսկ օրենքն արգելում է վերաքննիչ դատարանում երրորդ անձ ներգրավելը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 215-ի, հոդված 227-ի կետ 2-ի ենթակետ 3-ի):

Այս և դատավարական մի շարք այլ չլուծված խնդիրներ նույնպես զգալի դեր և ազդեցություն ունեն արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վրա:

Դատական համակարգում գործադիրի դերակատարության, հետևաբար և դատարանի անկախության չապահովվածության, դատական պրակտիկայի միասնականության բացակայության, դատական գործունեության նկատմամբ պատշաճ վերահսկողության բացակայության, ՀՀ քրեական և հատկապես քաղաքացիական դատավարության օրենսգրքերում տեղ գտած հակասություններն ու բացթողումներն են հանդիսանում արդար դատաքննության իրավունքի զանգվածային խախտումների խորքային պատճառները:

ՀՀ Սահմանադրության փոփոխություններով փորձ է արված մասամբ լուծել այս խնդիրները. արդարադատության խորհրդի կազմում չեն լինելու ՀՀ արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը, խորհուրդը չի նախագահելու ՀՀ նախագահը, խորհուրդը կազմված է լինելու հիմնականում դատավորներից:

Ընդարձակվում են խորհրդի իրավասությունները դատավորների նշանակման, կարգապահական տույժի ենթարկելու հարցերում, ինչը կբերի որոշակի դրական փոփոխությունների «Արդարադատության խորհրդի մասին», «Դատարանակազմության մասին», «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներում:

Սահմանադրությամբ շեշտվում է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ բարձրագույն դատական ատյան լինելու հանգամանքը, և օրենքների միատեսակ կիրառումն ապահովելու պարտականությունը, ինչը նշանակում է, որ վճռաբեկ դատարանը ձեռք է բերում վերահսկողական լիազորություններ ստորադաս դատարանների նկատմամբ, ինչպես նաև այն, որ ներդրվում է դատական նախադեպի կիրառման սկզբունքը, ինչը դատարանների գործունեության նկատմամբ հսկողության յուրահատուկ և առավել արդյունավետ ձև է:

Վճռաբեկ դատարանն իրեն առընթեր ստեղծել է իրավական փորձաքննության վարչություն, որի գործունեության ձևերն առայժմ փորձարկվում են: Դիշտ է դատական բարեփոխումների շեշտը վճռաբեկ դատարանի բարեփոխման վրա դնելը: Եթե ապահովված լինի վստահությունը վճռաբեկ դատարանի նկատմամբ՝ հանձինս նրա պալատների, առաջին ատյանի, տնտեսական և վերաքննիչ դատարաններից դժգոհությունը լուծելի կլինի: Այս դատարանները չեն կարողանա չվերանայել իրենց մոտեցումները՝ անհիմն դատական ակտը վճռաբեկ դատարանի կողմից բեկանելու սպառնալիքի առկայությամբ:

Դրական փոփոխություն է նաև դատավորի վարքագծի կանոնագրքի ընդունումը:

ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում կատարված են մի շարք էական փոփոխություններ, որոնք անմիջականորեն վերաբերում են դատավարության մասնակիցների դատավարական իրավունքների իրականացումն ապահովելուն: Նման այլ փոփոխությունների վերաբերյալ օրենքների նախագծերը Ազգային ժողովի քննարկմանը կներկայացվեն 2006թ. ընթացքում:

Վերաքննիչ դատարաններում ներդրվել են դատական նիստերի ձայնագրման և դատական նիստերի արձանագրման նպատակով համակարգիչների կիրառման հնարավորություններ, ինչը նպաստում է այդ արձանագրությունների թերի լինելու

վերաբերյալ զգալի թիվ կազմող դժգոհությունների վերացմանը, դրականորեն փոխում է նիստերին դատավորների վարքագիծը:

Բոլոր թվարկված փոփոխությունները դեռևս պետք է անցնեն ժամանակի և արդյունավետության «փորձաքննություն», ինչը հատկապես վերաբերում է մարզերին, ուր ապահովված չեն դատարանների կենսագործունեության անգամ նվազագույն պայմանները:

3.7. Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն և նրա ստորաբաժանումները զգալի աշխատանք են կատարում բնակավայրերի, դրանց հատկացված հողատարածքների քարտեզագրման, հաշվառման և համայնքների սահմանների ճշտման, ինքնակամ կառույցների հայտնաբերման, հաշվառման և օրենքի պահանջներին համապատասխանող ինքնակամ կառույցների օրինականացման ոլորտներում, ինչը էապես պարզեցրել և հեշտացրել է անշարժ գույքի հետ կապված սեփականատիրական իրավունքների իրականացումը, սեփականության իրավունքների պաշտպանությունը:

Սակայն այստեղ ևս տեղ ունեն **վատ վարչարության, բյուրոկրատիզմի և քաշքշուկի, խտրական մոտեցման արդյունքում մարդու իրավունքների խախտման դեպքեր**: Առկա են իրավունքի գրանցումն անհիմն մերժելու, գրանցված իրավունքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելն օրենքով չնախատեսված գործողությամբ պայմանավորելու, տեղեկատվության տրամադրումն անհիմն մերժելու կամ ոչ լիարժեք տրամադրելու և նման այլ դեպքեր:

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի դեմ ստացված դիմում-բողոքները հիմնականում վերաբերում են ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ինքնակամ գրադեցրած հողատարածքների օրինականացման գործընթացներին:

Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման, գրանցված իրավունքում փոփոխություններ կատարելու մասին քաղաքացիների դիմումների անհիմն մերժման դեպքերը հիմնականում վերաբերել են Երևան քաղաքի կառուցապատման ծրագրերով օտարման գոտիներում ներառված անշարժ գույքի սեփականատերերի իրավունքներին: Եղել են դեպքեր, երբ չի կատարվել նույնիսկ իրավունքի գրանցման կամ փոփոխման վերաբերյալ դատարանի վճիռը:

Օրինակ 42. Կադաստրի Կենտրոն տարածքային ստորաբաժանման կողմից մերժվել է Արամի փողոցի թիվ 68 տան և հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման մասին դատարանի վճռի կատարումն այն հիմնավորմամբ, որ նման գրանցման հետ չի համաձայնվել Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի կառավարման խորհուրդը:

Օրինակ 43. Գրանցման հետ Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի կառավարման խորհրդի անհամաձայնության հիմնավորմամբ մերժվել է Ամիրյան 4 շենքում միևնույն ընտանիքի անդամների անուններով առանձին-առանձին գրանցված տարածքների միավորման գրանցումը:

Եղել են նաև նույնաբնույթ այլ բողոքներ, և բոլոր դեպքերում դատարանի վճռի չկատարումը պատճառաբանվել է ԾԻԳ կառավարման խորհրդի որոշմամբ: Նման դեպքերով կառավարման այդ խորհրդի արձանագրություններով կադաստրի ստորաբաժանումներին առաջարկված է մերժել գրանցումը և հարկ չի համարված հիմնավորելու նման մերժումը:

«Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենքի հոդված 43-ով սպառնիչ թվարկված են գրանցումը մերժելու հիմքերը, և կարծես թե տեղ չի թողնված

սուբյեկտիվ մոտեցումների համար: Այդ պայմաններում նույնպես սուբյեկտիվիզմի առկայությունն ինքնին վատ վարչարարության վկայություն է:

«Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը տեղիք է տալիս սուբյեկտիվ գնահատականների համար, ինչի արդյունքում օրենքի կիրառման ընթացքում դրսևորվում է խտրական մոտեցում:

Օրինակ 44. Դիմումատուին մերժվել է դեռևս 1987թ. կառուցած ավտոտնակի օրինականացումն այն հիմնավորմամբ, որ մոտ է գտվում էլեկտրական տրանսֆորմատորային ենթակայանին, այն դեպքում, երբ նույն ենթակայանին ավելի մոտ գտնվող այլ ավտոտնակներ օրինականացվել են:

Օրինակ 45. Բողոքատուին մերժվել է բազմաբնակարան շենքի բակին հարող տարածքի հողի օգտագործման օրինականացումն այն հիմնավորմամբ, որ զբաղեցրած հողակտորն ընդհանուր օգտագործման տարածք է, սակայն նույն տարածքում այլոց զբաղեցրած հողակտորների օգտագործումն օրինականացվել է:

Սուբյեկտիվ գնահատականներով մերժվել են կից շինությունների, ձեղնահարկերի ավելացումների և նման այլ բնույթի կառույցների օրինականացման վերաբերյալ դիմումներ: Մի շարք մերժումներ Պաշտպանի միջամտության արդյունքում վերանայվել են, սակայն երևույթի առկայությունն ինքնին անհանգստացնող է:

3.8. Կրթության և գիտության նախարարություն

ՀՀ կրթության և գիտության նախարարության կանոնադրության համաձայն՝ նախարարությունը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը կրթության և գիտության բնագավառներում: Նախարարության նպատակների և խնդիրների շարքում են կրթության և գիտության համակարգի բնականոն գործունեության ապահովումը, ինչպես նաև կրթության և գիտության բնագավառների պահպանման ու զարգացման ապահովումը՝ որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն: Նախարարության գործառույթների թվում են կրթության և գիտության բնագավառների վերաբերյալ ՀՀ իրավական ակտերի նախագծերի և պետական քաղաքականության մշակումը, կրթական հաստատությունների գործունեության և արդյունավետ աշխատանքի կազմակերպման խթանումը, դրսևկության ձևով հանրակրթության, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության կազմակերպման կարգի սահմանումը, կրթական հաստատությունների ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների գծով իր ենթակայությանը հանձնված կազմակերպությունների գործունեության համակարգումն ու վերահսկումը:

Կրթության և գիտության նախարարությունը, որը համարվում է կրթության ոլորտի լիազոր մարմինը, դպրոցի տնօրենների գործողությունների նկատմամբ չունի վերահսկողական լիազորություններ և իրավունք չունի որևէ կերպ միջամտել նրանց գործողություններին: Նման հարցերի կարգավորումը վերապահված է Երևանի քաղաքապետարանի և մարզպետարանների կրթության վարչություններին, որոնք հաճախ գործում են իրենց հայեցողությամբ՝ համարժեք գնահատականներ չտալով դպրոցների տնօրենների ոչ իրավաչափ գործողություններին: Այս առումով անհրաժեշտ է վերանայել դպրոցների տնօրենների նշանակման կարգը և կրթության և գիտության նախարարությանը՝ որպես կրթության ոլորտի լիազոր մարմնի, տրամադրել դպրոցների տնօրենների ոչ իրավաչափ գործողություններին միջամտելու անհրաժեշտ լիազորություններ:

2005թ. ընթացքում Պաշտպանի հաստատությունը մի շարք այցելություններ և դիտարկումներ է իրականացրել ինչպես Երևանի, այնպես էլ մարզերի հանրակրթական դպրոցներում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոցների մեծ մասի ֆիզիկական վիճակը, հատկապես մարզերում, անբավարար է, բացի այդ, լուծված չէ ջեռուցման ապահովման խնդիրը, այդ թվում և ցածր դասարաններում, ինչը ոչ միայն երեխաների կրթության իրավունքի ոտնահարում է, այլև ուղիղ սպառնալիք նրանց առողջության պահպանմանը: Աշակերտների և նրանց ծնողների հետ հանդիպում-քննարկումների ընթացքում վերհանվել են նաև մի շարք հրատապ լուծում պահանջող այլ խնդիրներ, ինչպիսիք են տարբեր նպատակներով, օրինակ՝ շաբաթօրյակների, անհրաժեշտ պարագաների և պիտույքների, տոների և ատեստատների համար, գումարների հավաքումը, ուսուցիչներին և դպրոցի ղեկավարությանը տարբեր առիթներով շնորհավորական նվերները, ինչպես նաև ուսուցիչների արտաժամյա վճարովի պարապմունքները հանրակրթական դպրոցում իրենց մոտ անվճար ուսուցանվող աշակերտի հետ, այսինքն՝ ընդհանուր առմամբ, դպրոցական տարիքից երեխայի «վարժեցումը» կոռուպցիային:

Օրհասական է նաև դպրոց չհաճախող երեխաների խնդիրը, ինչը խտրականության դրսևորման ամենատուր և ակնհայտ դեպքերից է, և որը չնայած հասարակական լայն հնչեղության, ևս չի գտել իր լուծումը:

2005թ. ՀՀ կրթության և գիտության նախարարություն դեմ ստացվել է 22 դիմում-բողոք: Բարձրագույն ուսումնական հաստատությունների 2005թ. ընդունելության քննությունների կապակցությամբ ստացված բողոքները բնութագրական են և վկայում են համակարգային լուծում պահանջող խնդրի առկայության մասին:

Օրինակ 46. Թիվ 1-1134 գործով դիմումատուն հայտնել է, որ ընդունելության քննություններին հավաքել է 45 միավոր և դուրս մնալով իր հայտի 1-3 կետերում նշված բաժիններն ընդունվելու մրցույթից, ընդունվել է 4-րդ կետով նշված բաժինը:

Սակայն, այնուհետև պարզել է, որ իր կողմից առաջնահերթ նշված ԵՊՀ ֆակուլտետում անցողիկ է եղել 40-45 միավորը, ինչն իրականացվել է լրացուցիչ մրցույթով:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարը պարզաբանել է, որ ՀՀ պետական բուհերի 2005թ. առկա ուսուցման ընդունելության կանոնների 22-րդ կետի պահանջներին համապատասխան դիմորդը ընդունելության մրցույթին մասնակցում է տվյալ մասնագիտության համար մրցութային քննություններից հավաքած միավորների գումարով և իր ընտրած հաջորդականությամբ դիմում-հայտում նշված որևէ մասնագիտությամբ ընդունված դիմորդն այլևս չի մասնակցում հայտագրված հաջորդ մասնագիտությունների մրցույթին: Դիմորդն իր հավաքած միավորներով ընդունվել է իր կողմից չորրորդը հայտագրված մանկավարժական համալսարանի հայոց լեզու և գրականություն մասնագիտության վճարովի բաժինը: Ավելի ցածր միավորներ հավաքած և անվճար ու վճարովի համակարգի մրցույթից դուրս մնացած դիմորդները կարող են մասնակցել վճարովի լրացուցիչ տեղերի մրցույթին: ԵՊՀ հայոց լեզու և գրականություն մասնագիտության լրացուցիչ մրցույթի անցողիկ միավորը եղել է 40-ը: Սակայն լրացուցիչ մրցույթով ընդունվածները համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 28-ի մաս 9-ի պահանջի չեն կարող օգտվել նույն հոդվածի մաս 6-ով նախատեսված ուսման տարեկան վարձի փոխհատուցում ստանալու արտոնությունից: Քանի որ դիմորդը մրցույթից դուրս չի մնացել, այլ հիմնական մրցույթով

ընդունվել է իր նշած հայտերից մեկում, ապա համաձայն ընդունելության կանոնների, նա լրացուցիչ մրցույթի մասնակցել և այլ հայտով ընդունվել չէր կարող:

Պատասխան գրությամբ Պաշտպանը Կրթության և գիտության նախարարին հարցում է ուղղել այն մասին, թե որոնք են եղել ԵՊՀ հայոց լեզու և գրականություն մասնագիտության վճարովի և անվճար համակարգի հիմնական մրցույթի անցողիկ միավորները, ինչպես նաև, երբ և ինչ չափանիշներով է անցկացվում լրացուցիչ տեղերի մրցույթը, ովքեր են ձեռք բերում դրան մասնակցելու իրավունք, տեղեկացվում են արդյոք դիմորդներն այդ մասին: Մակայն պատասխան չի ստացվել:

Փաստորեն նախարարի պատասխանից կարելի է եզրակացնել, որ ավելի ցածր միավոր հավաքելը որոշ առումով ավելի ձեռնտու է, քանի որ դուրս կմնաս հիմնական մրցույթից և ցածր միավորներով կմասնակցես վճարովի լրացուցիչ տեղերի մրցույթին, թեկուզ գրկվելով ուսման տարեկան վարձի փոխհատուցում ստանալու արտոնությունից:

Այսպես, դիմորդը ընդունելության քննությունների հայտում առաջինը նշել է իր ցանկացած ֆակուլտետի անվճար և վճարովի համակարգերը, այսինքն՝ ակնհայտ է, որ նա ցանկանում է սովորել հենց այդ ֆակուլտետում, միաժամանակ նշում է նաև այլ ֆակուլտետներ՝ դուրս մնալու մտավախությունից դրդված: Քննությունների արդյունքում իր հավաքած միավորները ցածր են իր կողմից առաջինը նշած ֆակուլտետի վճարովի կամ անվճար համակարգը ընդունվելու համար, միաժամանակ այնքան ցածր չեն, որ նա կարողանա մասնակցել լրացուցիչ մրցույթին, մինչդեռ լրացուցիչ մրցույթին կարող են մասնակցել իրենից ավելի ցածր միավորներ վաստակած և հիմնական մրցույթից դուրս մնացած դիմորդներ:

Բոլոր դեպքերում չպարզաբանված են մնում այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ երբ և ինչ չափանիշներով է անցկացվում լրացուցիչ մրցույթը, ովքեր են ձեռքբերում մասնակցելու իրավունք, տեղեկացվում են արդյոք դիմորդներն այդ մասին պատշաճ կերպով:

Օրինակ 47. Թիվ 1-1252 գործով Արարատ քաղաքի բնակչուհին հայտնել է, որ դիմել է Երևանի պետական համալսարան և, քննությունների արդյունքում վաստակելով ընդամենը 54.4 միավոր, 0.1 միավորի տարբերությամբ չի ընդունվել իրավաբանական ֆակուլտետ, այլ երկրորդ հայտով ընդունվել է միջազգային հարաբերությունների ֆակուլտետ: Մակայն նա պարզել է, որ իրավաբանական ֆակուլտետ են ընդունվել ավելի ցածր միավորներով դիմորդներ:

ՀՀ կրթության և գիտության նախարարը վերոնշյալ հարցերի վերաբերյալ պարզաբանել է, որ 2005թ. ընդունելության քննությունների արդյունքով Երևանի պետական համալսարանի իրավագիտություն մասնագիտության անվճար համակարգի անցողիկ միավորը եղել է 57.5, իսկ վճարովի համակարգինը՝ 54.5 միավոր: Անցողիկից ցածր միավորներ հավաքած մեծ թվով դիմորդներ, այդ թվում նաև դիմումատու, համաձայն իրենց կողմից լրացված հայտերի, ընդունվել են այլ մասնագիտությունների բաժիններ: Նրանցից մի քանիսը, որոնք ընդունվել են տարկետման իրավունքով վճարովի համակարգ, մինչև սեպտեմբերի 15-ը դիմել և տեղափոխվել են իրավագիտություն մասնագիտության առանց տարկետման իրավունքի վճարովի համակարգ:

Դիմումատուն ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերություններ մասնագիտության բաժինը և այդպիսի դիմում չի ներկայացրել: Քանի որ առաջին կիսամյակը մոտենում է ավարտին, ապա դիմումատուի տեղափոխման հարցը հնարավոր է քննարկել կիսամյակի ավարտից հետո:

Պատասխան գրությամբ Պաշտպանը դիմել է կրթության և գիտության նախարարին հայցելով տեղեկատվություն «տարկետման և առանց տարկետման իրավունքի վճարովի համակարգ» շրջանակների և դրանց առնչվող հարցերի իրավական կարգավորման

աղբյուրների, և միաժամանակ, տարկետման իրավունքով վճարովի համակարգից առանց տարկետման իրավունքի վճարովի համակարգ տեղափոխվելու գործընթացի առնչությամբ, մասնավորապես՝ ուլքեր, ինչ պայմաններում և ժամկետներում, ինչպիսի ակտի հիման վրա և որ մասնագիտությունների դեպքում կարող են տեղափոխվել և նման գործընթացների մասին տեղեկացվել:

Օրինակ 48. Թիվ 1-1285 գործով Հայաստանում ֆրանսիական համալսարանի միջազգային հարաբերություններ ֆակուլտետի շրջանավարտը հայտնել է, որ դիմել է «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի ռեկտորին՝ խնդրելով իրեն տրամադրել իր դիպլոմային աշխատանքը գնահատող հանձնաժողովի գնահատման հիմնավորումները, իր բողոքի հիման վրա վերանայել միջազգային ֆինանսներ առարկայի գնահատականը, իրեն տրամադրել իր գրավոր աշխատանքների պատճենները: Համալսարանի ռեկտորը որևէ պատասխան չի տվել, պատճառաբանելով, որ պահանջը չի համապատասխանում համալսարանի կանոնադրությանը: **Պաշտպանի նամակը նույնպես մնացել է անպատասխան:**

Ակնհայտ է առանձին դիմորդների նկատմամբ խտրական վերաբերմունքը, ինչը վկայում է կոռուպցիայի այն դրսևորումների մասին, որոնք կապված չեն գումարային գործարքների հետ:

Կրթության և գիտության նախարարի հետ հանդիպման ընթացքում Պաշտպանի կողմից բարձրացվել են հրատապ համակարգային լուծում պահանջող բոլոր վերոնշյալ խնդիրները:

3.9. Սոցիալական ոլորտի հարցեր և պատկան մարմիններ

2005թ. ընթացքում սոցիալական հարցերով զբաղվող մարմինների դեմ **ընդհանուր ամամբ ստացվել է 228 դիմում-բողոք**, որոնց հիմնական մասը վերաբերում է **համապետական լուծում պահանջող խնդիրներին:**

Ստացված բողոքներով անցկացված քննարկումները բերել են այն հետևության, որ տնտեսության զարգացմամբ պայմանավորված համապետական լուծում պահանջող սոցիալական խնդիրներին զուգահեռ, առկա են նաև այնպիսիք, որոնք արդյունք են բնագավառը կարգավորող **օրենսդրական բացերի, վատ վարչարարության, խտրական մոտեցումների և կարող են կարգավորվել հաճախ առանց լրացուցիչ նյութական ծախսերի:**

Սոցիալական ոլորտին վերաբերող ազգային օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում մարդու սոցիալական իրավունքների պաշտպանության միջազգային նորմերին:

Կառավարության թիվ 1821 14.11.2002թ. որոշմամբ հաստատվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության կանոնադրությունը, համաձայն որի նախարարությունն իր առջև դրված նպատակների և խնդիրների լուծման ուղղությամբ իրականացնում է հետևյալ գործառույթները՝ սոցիալական ոլորտում պետական ծրագրերի և քաղաքականության մշակում և իրականացում, օրենսդրության և պետական ծրագրերի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում, դրանց ներդրման կազմակերպում և կատարման մոնիտորինգ, կենսաթոշակների և նպաստների նշանակման, վերահաշվարկման և վճարման մեթոդական ղեկավարում, նպաստների, հատուցումների, պատվովճարի, դրամական օգնության նշանակման և վճարման օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության

իրականացում, և ի վերջո, սոցիալական պաշտպանության բնագավառին վերաբերող ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների իրականացում:

Այսպիսով, սոցիալական պաշտպանության բնագավառի խնդիրների լուծման վերջնական պատասխանատվությունը դրված է ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության վրա:

Վերոնշյալից ելնելով, նպատակահարմար է ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունը զուգորդել բնագավառին վերաբերող իրավական ակտերի վերլուծությանը:

3.9.1. Կենսաթոշակային հարցեր

Բոլոր կատեգորիաների կենսաթոշակառուներից ստացվող բողոքները հիմնականում վերաբերում են տրվող **կենսաթոշակի անհամապատասխանությանը կենսապահովման նվազագույն պահանջներին**: Խնդիրն առավել սուր է **Հայրենական պատերազմի մասնակիցների, պատերազմի հաշմանդամների, Արցախյան ազատամարտում զոհված ազատամարտիկների ընտանիքների** համար: Դժվար է չհամաձայնվել այնպիսի հիմնավորումների հետ, որոնք կատարվում են պարզ թվաբանական հաշվարկով՝ կենսաթոշակի չափը համեմատվում է մեկ անձի նվազագույն սպառման հաշվով էլեկտրաէներգիայի, ջրի, աղբի, գազի դիմաց կատարվող պարտադիր վճարների հետ, չհաշված չերևացող այնպիսի վճարումները, որոնք կատարվում են բնակելի շենքի զանազան տեխնիկական սպասարկումների դիմաց՝ վերելակի սպասարկում, սանիտարական հանգույցի խափանումների վերացում, տանիքի վերանորոգում, ընդհանուր սպասարկման միջոցներ և այլ խափանումներ:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հետ կապված բողոքների ուսումնասիրությունները հիմք են տալիս պնդելու, որ օրենքի հոդված 56-ով նախատեսված սահմանափակումները՝ լիազորագրով կենսաթոշակի վճարումը վեց ամսից ոչ ավելի ժամանակաընթացքում և վճարումը կասեցված կենսաթոշակի լիազորագրով վճարումն անբույլատրելի լինելը, հանգեցնում են **կենսաթոշակառուների սոցիալական ապահովության իրավունքների խախտման**:

Անձին կենսաթոշակ նշանակվում է նրա աշխատանքային վաստակի, կատարած սոցիալական վճարումների հիման վրա: Հետևաբար, կենսաթոշակ ստանալու իրավունքն անձը վաստակել է, պետք է հետ ստանա տարիների ընթացքում ներդրածը: Նրա ներդրածը պետք է հավասարեցվի ի պահ հանձնած սեփականության, որի ետ ստանալուն ուղղված ցանկացած սահմանափակում անօրինական է: Սեփականատիրոջ կողմից սեփականությունն իր հայեցողությամբ տնօրինելը սահմանադրական իրավունք է, և եթե չկան ՀՀ քաղաքացիական օրենսգրքով հատուկ նախատեսված հիմքերը, այդ իրավունքը ենթակա չէ սահմանափակման: **Չի հիմնավորված** օրենքի այն սկզբունքը, որ կենսաթոշակառուն պարտավոր է անձամբ ստանալ կենսաթոշակը, որ այն ստանալու համար այլ անձի չի կարող լիազորել վեց ամսից ավելի ժամանակով, որ վճարումը կասեցված լինելու դեպքում վճարումը վերսկսելու համար այլ անձի լիազորել չի կարող:

Կենսաթոշակների վճարման **օրենքի այդպիսի սահմանափակումներն** անընդունելի են մեր բնակչության համար այն պատճառով, որ հաճախ ընտանիքի միակ կերակրող կենսաթոշակառուն լրացուցիչ վաստակի հույսով մեկնում է հանրապետությունից դուրս, հանրապետությունում մնացող ընտանիքի միակ եկամուտը մնում է մեկնածի

կենսաթոշակը, իսկ դա չի թույլատրվում վճարել լիազորագրով **6 ամսից ավելի ժամանակահատվածի համար:**

Օրինակ 49. Թիվ 1-1230 գործով՝ դիմումատուի մայրը գտնվել է ԱՄՆ-ում և իրեն հասանելիք կենսաթոշակը 6 տարի չի ստացել: 2005թ. ներկայացել և դիմել է վերսկսելու իրեն հասանելիք կենսաթոշակի վճարումը: Վրա է հասել օրենքի մեկ այլ արգելք՝ վճարման ենթակա է միայն նախորդ երեք տարիներին չվճարված կենսաթոշակը: Օրենսդիրը ելել է այն տրամաբանությունից, որ պահանջի նկատմամբ պետք է գործի երեք տարվա վաղեմությունը: Կենսաթոշակառուին երեք տարվա կենսաթոշակի վճարումը խոստացել են մեկ ամիս անց, և քանի որ նա պետք է հետ վերադառնար ԱՄՆ, կենսաթոշակը ստանալու լիազորագիր է տրվել տղային: Սակայն վերջինիս մերժվել է մոր երեք տարվա կենսաթոշակի լրիվ վճարումն այն հիմնավորմամբ, որ լիազորագրով չի կարող վճարվել կենսաթոշակ վեց ամսից ավելի ժամանակի համար:

Օրինակ 50. Մեկ այլ բողոքով դիմումատուին մերժվել է ծնողներին հասանելիք կենսաթոշակի վճարումն այն հիմնավորմամբ, **որ կասեցված կենսաթոշակի վերսկսում լիազորագրով չի թույլատրվում:** Խնդիրն այստեղ այն է, որ սոցիալական վճարում կատարող մարմինները պայմանագրեր են կնքել վճարման ծառայությունն իրականացնող **խնայբանկի հետ**, որով բանկը պարտավորվել է փոխանցված գումարը կենսաթոշակառուի հաշվին մուտքագրել **կենսաթոշակառուի ներկայանալուց հետո** միայն: Մինչդեռ կենսաթոշակառուն տվյալ բանկում ունի ավանդալից հաշիվ, և տրամաբանական էր, որ փոխանցված գումարը մուտքագրվեր նրա ավանդալից հաշվում, և վերջինս ոչ միայն չզրկվեր հետագայում այն ստանալու իրավունքից, այլև ստանար նաև բանկային տոկոսներ՝ անցած ամբողջ ժամանակահատվածի համար:

Օրինակ 51. Թիվ 1-1377 գործով բողոքի ուսումնասիրությամբ հաստատված է, որ հաշմանդամության կենսաթոշակառու դիմումատուն 1998թ. ՌԳ-ում դատապարտվել է ազատազրկման: Հենց նույն ժամանակ էլ դիմել է սոցիալական ապահովության հիմնադրամի Մալաթիա-Մեքսստիա համայնքների տարածքային կենտրոն՝ հասանելիք կենսաթոշակը խնայբանկի իր անձնական հաշվին փոխանցելու խնդրանքով:

Դիմումատուի խնդրանքը չի կատարվել, կենսաթոշակը կասեցվել է, իսկ դիմումատուն 2005թ. պահանջել է նախորդ տարիների իրեն հասանելիք կենսաթոշակը, երբ նրան վճարվել է միայն վերջին երեք տարվա համար:

Վիճահարույց է նաև **օրենքի հոդված 53-ով** կենսաթոշակի հաշվառման կարգին վերաբերող սկզբունքը, ըստ որի՝ տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակառուն նշանակված կենսաթոշակի վերահաշվարկի իրավունք ունի կենսաթոշակի նշանակման պահից առնվազն երկու տարի աշխատելուց հետո՝ այն դեպքում, երբ նույն **օրենքի հոդված 16-ը** սահմանում է, որ կենսաթոշակի հաշվարկման համար հիմք է ընդունվում ապահովագրական ստաժի մեկ տարվա գումարը:

Օրինակ 52. Գործ թիվ 1-0966՝ դիմումատուն գանգատվել է, որ տարիքային կենսաթոշակ իրեն նշանակվել է 2000թ., այնուհետև շարունակել է աշխատել պայմանագրային հիմունքներով: Կենսաթոշակի վերահաշվարկի ժամանակ 01.05.2003-01.02.2005թթ. ժամանակահատվածը չի ներառվել ստաժի մեջ երկու տարուց պակաս լինելու պատճառով:

Օրինակ 53. Գործ թիվ 1-1023՝ դիմումատուն աշխատել է որպես ուսուցիչ և նրան տարիքային կենսաթոշակ նշանակվել է մինչև աշխատանքից ազատվելը: 2003թ. ապրիլից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածի նրա ստաժը չի հաշվարկվել:

Եղել են նաև նույնաբնույթ այլ բողոքներ: Այդպիսի բողոքներով դիմումատուներին բացատրվել է օրենքի իմաստը և սահմանված սահմանափակումները: Միաժամանակ

սոցիալական մարմինների ուշադրությունն է հրավիրվել **օրենքի հոդված 53-ով նախատեսված այդ սկզբունքի հիմնավորված չլինելու հանգամանքին**:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում 11.11.2005թ. **կատարված փոփոխությունների հոդված 53-ում** ասված է, որ տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց հետո կենսաթոշակառուն կենսաթոշակը վերահաշվարկելու իրավունք ունի 2 տարին 1 անգամ, առնվազն 6 ամիս աշխատած լինելու դեպքում:

Վերահաշվարկը կատարվում է դիմումը տալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

Բացի այդ, հոդված 53-ում ավելացվել է մաս 3, համաձայն որի աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով աշխատանքային գործունեությանը զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչված անձի կենսաթոշակը վերահաշվարկվում է ՀՀ Կառավարության սահմանած կարգով:

Դեռևս 2004թ. **տարեկան զեկույցում** խոսվել է այն մասին, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի **հոդված 47-ը** պարտադիր սոցիալական վճարումները կատարած լինելը հաստատելու պարտականությունը թողնում է աշխատողի վրա նաև այն դեպքում, երբ գործատուն, որի մոտ աշխատողն աշխատել կամ աշխատում է, սոցիալական ապահովության մարմնում գրանցված է որպես ապահովադիր և սոցիալական վճարների մասով պարտք է մնացել հիմնադրամին: Օրենքում այս հարցով փոփոխություններ չեն կատարվել, խնդիրը մնում է չլուծված:

Օրինակ 54. Վկայակոչվել է «Նաիրիտ» գործարանի օրինակը, որը պարտք է ոչ միայն հիմնադրամին, այլ հենց իր աշխատողներին աշխատավարձի գծով: Այստեղից կենսաթոշակի անցնող աշխատողների ապահովագրական ստաժը պակասեցվում է գործարանի կողմից հիմնադրամին չվճարած և պարտք մնացած տարիների հաշվով, ինչն անտրամաբանական է, քանի որ գործարանն իր պարտքը վերջ ի վերջո մարելու է, և աշխատողը չպետք է կրի ապահովադրի անբարեխղճության հետևանքները:

3.9.2. Նպաստների տրամադրմանն առնչվող հարցեր

Մեծ թիվ են կազմել բողոքները՝ կապված **աղքատության նպաստների տրամադրման հետ**, հատկապես 2005թ. հունվարի 1-ից սկսած, երբ բազային կենսաթոշակի և ապահովագրական ստաժի դիմաց տրվող վճարի ավելացմամբ, որը բոլոր դեպքերում պակաս է եղել մինչ այդ տրվող նպաստի չափից, փոխվել է կենսաթոշակառուների ընտանիքի կարիքավորության միավորը, և ընտանիքը գրկվել է նպաստ ստանալու իրավունքից:

Օրինակ 55. Լոռու մարզպետարանի աշխատակազմի Թումանյանի տարածքային գործակալությունը 2005թ. հունվարից դադարեցրել է քաղաքացուն ընտանեկան նպաստ վճարելն այն հիմնավորմամբ, որ կենսաթոշակի չափի փոփոխման արդյունքում նրա ընտանիքի անապահովության միավորը դարձել է 29.97, որը ցածր է ՀՀ կառավարության 2000թ. թիվ 350 որոշմամբ սահմանված 34.00 սահմանային մեծությունից:

Օրինակ 56. Լոռու մարզի Վանաձոր քաղաքի 76-ամյա բնակչուհուն տրվող նպաստի վճարումը դադարեցվել է այն հիմքով, որ նրա անապահովության միավորը 43.08-ից իջել է 33.94-ի՝ կենսաթոշակի չափը փոխվելու պատճառով: Դիմումատուն գրկվել է 6 հազար դրամ ստանալու իրավունքից հազար դրամով կենսաթոշակն ավելացված լինելու պատճառով:

Պաշտպանի միջամտությամբ խնդիրը վերանայվել է և Վանաձորի տարածքային գործակալությունը սոցիալական խորհրդի առաջարկությամբ 2005թ. երկրորդ եռամսյակից նշանակել է դրամական միանվագ օգնություն 6000 դրամի չափով:

Օրինակ 57. Մեկ այլ դեպքում Տավուշի մարզի Վերին Կարմրաղբյուր գյուղի աշխատանքային հաշմանդամություն ունեցող բնակչին տրվող նպաստը դադարեցվել է՝ հաշմանդամության կենսաթոշակը հազար դրամով ավելացվելու պատճառով:

Օրինակ 58. Դիմումատուն այրի է և երկու երեխաների հետ բնակվում է ամուսնու ծնողների տանը: Թաղապետարանում հաշվառված է որպես բնակարանի կարիք ունեցող ընտանիք: Դիմումատուն բոլոր առումներով առանձին ընտանիք է և առանձին չի ապրում այն պատճառով միայն, որ չունի բնակարան: Սակայն սոցիալական ծառայության տարածքային մարմինները նրան որպես առանձին ընտանիք չեն դիտել և գրկել են ընտանեկան նպաստից այն հիմնավորմամբ, որ սկեսրայրի անվամբ կա հաշվառված ավտոմեքենա:

Ոչ մի նշանակություն չի տրվում այն հանգամանքին, որ ավտոմեքենան փաստացի գոյություն չունի՝ այն լիովին արժեզրկված է, չի օգտագործվում, և անկախ հաշվառման մեջ լինելուց կարող է տեղում ուսումնասիրվել և գնահատվել:

Օգտագործման համար ոչ պիտանի ավտոմեքենաների առկայության հանգամանքները հաճախ անձին ընտանեկան նպաստից գրկելու պատճառ դառնում, քանի որ հիմք է ընդունվում միայն պետավտոտեսչության տեղեկանքը մեքենայի առկայության մասին, մեքենայի փաստացի վիճակը չի ստուգվում:

Նման բողոքներով որոշումներ են կայացվել իրավունքի խախտման բացակայության մասին, նկատի ունենալով, որ պաշտոնատար անձանց գործողությունները՝ ընտանեկան նպաստների վճարման դադարեցումները, եղել են օրենքի շրջանակներում: Սակայն արձանագրվել է նաև օրենքով, իրավական ակտերով տրված լուծումների անտրամաբանական լինելու հանգամանքը, որի արդյունքում ոտնահարվում են առավել խոցելի սոցիալական խմբերի շահերը:

Որպես դրական երևույթ է արձանագրվել այն, որ շատ դեպքերում սոցիալական ծառայության տարածքային գործակալությունները նման կարգով նպաստից գրկված առավել կարիքավորներին տրամադրել են միանվագ դրամական օժանդակություններ:

3.9.3. Ավանդների վերադարձման հարցեր

Մի շարք դիմումատուներ պահանջել են Պաշտպանի միջամտությունն իրենց ավանդների վերադարձման խնդրին՝ զանազան կոմունալ վճարումների և պարտքերի վճարման իրենց հնարավորությունները կապելով հենց ավանդների վերադարձման հետ:

Հարցը բողոքատուների համար շատ բնական հարթության վրա է, այն է՝ ֆիզիկական անձը, որը կոմունալ ծառայությունների կողմից դիտարկվում է որպես պարտապան, միաժամանակ հանդիսանում է ավանդատու, այսինքն՝ պետության պարտատեր: Ավանդատուների պատկերացմամբ պետությունն իր ավանդատուների զանազան վճարումների առնչությամբ պետք է պայմանագրային հարաբերությունների մեջ մտնի այն իրավաբանական անձանց հետ, ում հանդեպ ավանդատուները հանդիսանում են պարտապան: Այս հարցի հրատապ լուծման անհրաժեշտության ծանրակշիռ փաստարկներ են այն դեպքերը, երբ քաղաքացին, չկարողանալով ստանալ իր ավանդներն ու կատարել կոմունալ վճարումներ, ստիպված լքում է իր բնակարանը, դրանով իսկ համալրելով սոցիալապես անապահովների շարքերը, իսկ հաճախ նաև մնալով առանց հիմնական բնակության վայրի:

Ասվածը մեծավ մասամբ վերաբերում է պատերազմի վետերաններին և թոշակառուներին, որոնք ցանկանում են վերադարձնել իրենց ավանդները կենդանության օրոք: Անհրաժեշտ է նաև նշել, որ նման իրավիճակը հանդիսանում է արտագաղթի հիմնական դրդապատճառներից մեկը:

Անձը հայտնվում է անհավասար պայմաններում պետության և կոմունալ ծառայությունների առջև, իսկ հաճախ նաև անելանելի իրավիճակում, երբ իր վրա ճնշում են գործադրում մի կողմից պետությունը, որի վրա անձը չունի իր ավանդները ստանալու՝ օրենքով նախատեսված պարտադրող որևէ լծակ, իսկ մյուս կողմից կոմունալ ծառայությունները, որոնք ունեն օրենքով նախատեսված պարտադրող լծակներ:

Հարցն առավել է արդիականացել, երբ սկսած 2003թ. Ազգային ժողովի ընտրությունների ընտրաբաշխվի ժամանակ «Օրինաց երկիր» կուսակցությունն իր ծրագրի մեջ է ընդգրկել ավանդների վերադարձման խնդրի լուծումը, ինչն ավանդատուների մոտ հույս է արթնացրել հարցի շուտափույթ լուծման կապակցությամբ:

3.9.4. Աշխատանքային իրավունքներին առնչվող հարցեր

Սոցիալական իրավունքների հետ սերտորեն կապվում են նաև **աշխատանքային իրավունքներին առնչվող հարցերը**: Իրավունքի այնպիսի խախտումները, ինչպիսիք են աշխատանքից ապօրինի ազատումները, աշխատավարձի ժամանակին կամ ընդհանրապես չվճարելու դեպքերը, խտրականությունն աշխատանքի ընդունելիս, աշխատանքի անվտանգ պայմաններ չստեղծելը և նման այլ խախտումներն առաջին հերթին հանգեցնում են աղքատության խորացմանը:

Օրինակ 59. Թիվ 1-1160 գործով քաղաքացին հայտնել է, որ մինչև 2002թ. հունվարի 1-ը աշխատել է «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ում: Աշխատանքից ազատվելիս իր հետ վերջնահաշվարկ չի կատարվել, ինչի հետևանքով հիմնարկը իրեն պարտք է մնացել 510 հազար դրամ:

Օրինակ 60. Թիվ 1-0356 գործով քաղաքացին հայտնել է, որ 1983թ.-ից աշխատել է Մերգելյան ինստիտուտի պահակային ծառայությունում, որպես պահակ: 1995թ.-ից իրեն աշխատավարձ վճարվել է մասնակիորեն:

Ըստ դիմումատուի, հաշվապահությունից դուրս գրված աշխատավարձի ընդհանուր գումարը անհամաչափ է բաշխվել պահակների միջև, ընդ որում իրեն վճարվել է 1000-2000 դրամ (կամ էլ չի վճարվել ընդհանրապես) և տարիների ընթացքում իր աշխատավարձի պարտքը կուտակվել է և այժմ կազմում է 129.911 դրամ:

Քաղաքացու դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ «Երևանի մաքենատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ տնօրեն Ա. Թառոյանն իր 13.05.2005թ. թիվ 1/36 գրությամբ պարզաբանել է, որ ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ ձեռնարկում է միջոցառումներ մոտակա ժամանակահատվածում աշխատավարձի պարտքերի մարման գործընթացը սկսելու ուղղությամբ: Դիմումատուի իրավունքները վերականգնելու հարցը բողոքի քննության ընթացքում դրական լուծում է ստացել, և նա ստացել է իր աշխատավարձի պարտքի գումարը:

Օրինակ 61. Թիվ 1-1339 գործով քաղաքացին հայտնել է, որ ինքը 1996-2005թթ. աշխատել է Աջափնյակ համայնքի «Մանմաքրում» ՓԲԸ-ում որպես պահակ: 2001թ. տեղի է ունեցել ընկերության կազմակերպահրավական կարգավիճակի փոփոխություն, և այն վերածվել է «Մաքրություն» ՍՊԸ-ի: 2005թ. ապրիլին ինքն ազատվել է աշխատանքից և մինչև օրս չի կարողանում ստանալ վերջնահաշվարկ:

Պաշտպանի կողմից հարցում է արվել Աջափնյակ համայնքի «Մաքրություն» ՍՊԸ-ի տնօրենին, վերոնշյալ հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու ակնկալիքով: Սակայն որևէ պատասխան չի ստացվել:

3.9.5. Աշխատանքային խեղճան դիմաց փոխհատուցման հարցեր

Չլուծված են մնում աշխատանքային պարտականությունների հետ կապված խեղճան, մասնագիտական հիվանդության և այլ վնասվածքների հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման հարցերը, երբ իրավաբանական անձը լուծարվել կամ սնանկ է ճանաչվել:

Անձինք բյուրոկրատական քաշքշուկների են հանդիպում նախ հաշմանդամության խմբի որոշման, ապա նաև **հաշմանդամության խումբը փոխելու խնդիրներ** ունենալիս: Բժշկասոցիալական փորձաքննական գործակալության և տարածքային հանձնաժողովների մոտեցումները նման խնդիրներին ու դրանց տրված գնահատականները հաճախ հեռու են օբյեկտիվությունից:

Օրինակ 62.1. Թիվ 1-1352 գործով քաղաքացին հայտնել է, որ ինքն աշխատել է Արմավիր մարզի Ծաղկունք գյուղի պլաստմասսայի գործարանում և 1985թ. աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ ստացել է խեղճում՝ ուսի կոտրվածք, և ճանաչվել երրորդ խմբի հաշմանդամ: Դիմումատուն հայտնում է, որ 1998թ. կոտրվել է նրա մյուս ուսը, և նրա երկու ձեռքերն էլ հաշմվել են, և նա դարձել է անաշխատունակ: Սանկտ-Պետերբուրգում և Երևանում նա դիմել է վիրաբույժների՝ վիրահատական միջամտություն իրականացնելու համար, սակայն վերջիններս խորհուրդ չեն տվել վիրահատվել, և հայտնել են, որ նա երկրորդ խմբի հաշմանդամ է դարձել:

Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության Արմավիրի հանձնաժողովը մերժել է նրա հաշմանդամության 3-րդ խումբը 2-րդի փոխելը (տե՛ս՝ Գ-լուխ 4, 4.2. Հատուկ կարիքներով անձինք, Օրինակ 62.2):

Նկատի ունենալով, որ հիվանդության առաջացումը ծառայության հետ կապելու դեպքում հաշմանդամության խումբ ունեցողն օգտվում է որոշակի արտոնություններից, բժշկական հանձնաժողովները պատճառական կապի վերաբերյալ հաճախ տալիս են բացասական եզրակացություններ՝ առանց բավարար չափով հիմնավորման: **Ստեղծվում են արհեստական արգելքներ օրենքով հասանելիք արտոնությունը տրամադրելու ճանապարհին:**

Օրինակ 63. Թիվ 1-0817 գործով դիմումատուն 2002թ. գորակոչվել է զինվորական ծառայության՝ անցնելով ռազմաբժշկական հանձնաժողովների բոլոր ստուգումները, ճանաչվելով առողջ և զինվորական ծառայության համար պիտանի: Ծառայության ընթացքում հիվանդացել է և 2003թ. նոյեմբերին ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից ճանաչվել է զինվորական ծառայության համար ոչ պիտանի, որի հիման վրա և զորացրվել է: Տավուշի մարզի բժշկասոցիալական հանձնաժողովի կողմից տրված տեղեկանքով հաստատվել է դիմումատուի հիվանդության պատճառական կապը զինվորական ծառայության հետ:

Սակայն, երբ արդեն դիմումատուն փորձել է թոշակավորվել որպես զինվորական ծառայության ընթացքում 3-րդ խմբի հաշմանդամություն ստացած անձի, սկսվել է նման դեպքերի համար բնորոշ քաշքշուկը՝ պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը նրա հիվանդությունը որակել է որպես ընդհանուր բնույթի և զինվորական ծառայության հետ կապ չունեցող: Հետագայում խնդրի լուծումը թողնվել է ՀՀ ոստիկանության ներքին գորքերի ռազմաբժշկական հանձնաժողովի որոշմանը՝ նկատի ունենալով, որ դիմումատուն ծառայել է ներքին գորքերում:

Այստեղ խնդիրը նրանում է, որ քաղաքացու համար ստեղծվում են արհեստական արգելքներ օրենքով նրան հասանելիք արտոնությունը տրամադրելու ճանապարհին: Եթե հիվանդությունն ընդհանուր էր և կապ չուներ զինվորական ծառայության հետ, ապա պետք է դրվեր ռազմաբժշկական այն հանձնաժողովների պատասխանատվության հարցը, որոնք այդ «ընդհանուր» հիվանդությունը գորակոչիկի մոտ չեն հայտնաբերել և նրան ճանաչել են զինվորական ծառայության համար պիտանի:

Լուծարված կամ անվճարունակ ճանաչված իրավաբանական անձանց ունեցած պարտավորությունները աշխատանքային խեղում կամ մասնագիտական հիվանդություն ստացած նախկին աշխատողներին փոխհատուցում տրամադրելու առնչությամբ մնում են չկատարված:

ՀՀ կառավարության 15.11.1992թ. թիվ 579 որոշման կետ 16-ով սահմանված էր՝ «կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ **սոցիալական ապահովման մարմինը՝ պետական բյուջեի հաշվին**»:

Որոշման կետ 16-ով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 22.07.2004թ. թիվ 1094-Ն որոշմամբ: Դրա փոխարեն կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1086-ը, որով սահմանվում է՝ «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում համապատասխան հատուցում վճարելու պարտականությունը կրում է նրա իրավահաջորդը»: «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման դեպքում համապատասխան վճարներն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կանոններով կապիտալացվում են՝ դրանք տուժողին վճարելու համար»:

«Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքի հոդված 82-ով քաղաքացիների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման նպատակով գումարների հատկացումը և կապիտալացումը նախատեսվում է պահանջների բավարարման 10-րդ հերթում, երբ կարող է մնան գումար ընդհանրապես չլինել: Ստացված բողոքների քննարկումներով ձեռք բերված տվյալները վկայում են, որ իրոք որևէ անվճարունակ ճանաչված իրավաբանական անձի միջոցներից մնան նպատակներով գումար չի կապիտալացվել:

Օրինակ 64. «Հայկական ավիատոլիներ» ՓԲԸ լուծարման հետևանքով 2004թ. առ այսօր որևէ վճարում չեն ստանում աշխատանքային խեղում կամ մասնագիտական հիվանդություն ստացած օդաչուները, գյուղատնտեսության նախարարության՝ «Ախուրյանի ջրային տնտեսության» ՓԲԸ լուծարված աշխատանքային խեղում ունեցող նախկին աշխատակցին տրվող փոխհատուցումը դադարեցվել է ընկերության լուծարման պահից, թիվ 1 հացի գործարանի լուծարված լինելու պատճառով այստեղի նախկին աշխատողները նույնպես նույն հիմքերով հասանելիք փոխհատուցումը չեն ստանում:

3.10. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ

2005 թ. ստացվել է տարածքային կառավարման մարմինների դեմ՝ 205 (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի դեմ՝ 132), տեղական ինքնակառավարման մարմինների դեմ՝ 153 (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանների դեմ՝ 72) դիմում-բողոք: Բողոքների հիմնական մասը վերաբերում է աշխատանքային, բնակարանային, հողահատկացումների և կառուցապատման խնդիրներին:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների դեմ ուղղված բողոքների գերակշիռ մասը բաժին է ընկնում Երևան քաղաքին: Դա պայմանավորված է ոչ միայն նրանով, որ հեռավոր բնակավայրերի բնակիչները քիչ են հնարավորություն ունեն Պաշտպանին դիմելու կամ քիչ են տեղեկացված իրենց այդ իրավունքի մասին, այլև նրանով, որ մայրաքաղաքում առավել բուռն են ընթանում տնտեսական վերափոխումները, ազգային ունեցվածքի վերաբաշխման գործընթացները, հանգեցնելով առավել մեծ թվով և բազմաբնույթ շահերի բախման:

3.10.1. Աշխատանքային իրավունքների հետ կապված հարցեր

ՀՀ աշխատանքային օրենսգիրքն ուժի մեջ է մտել 2005թ. հունիսի 21-ից: Օրենսգրքի հողված 3-ում ամրագրված են աշխատանքային հարաբերությունների կարգավորման սկզբունքները, այն է՝ աշխատանքի ազատությունը, ցանկացած ձևի հարկադիր աշխատանքի արգելումը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը, յուրաքանչյուր աշխատողի համար արդարացի պայմանների իրավունքի ապահովումը, աշխատողների իրավունքների և հնարավորությունների հավասարությունը և մի շարք այլ կարևորագույն սկզբունքներ:

Մինչդեռ, ինչպես նոր աշխատանքային օրենսգրքի ընդունումից առաջ, այնպես էլ հետո, գործատուների կողմից շարունակվում են վերը նշված սկզբունքներին և առհասարակ աշխատանքային օրենսդրությանը հակասող գործողությունները և գործելակերպը:

Առավել տարածված աշխատանքային իրավունքների խախտումներն են աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելիս վերջնահաշվարկ չկատարելը և վերջնահաշվարկի գումարը չվճարելը, աշխատանքից ազատման մասին պատշաճ ձևով չծանուցելը և ազատման հիմքերի մասին տեղյակ չպահելը, աշխատանքի ընդունելիս՝ անձնական դրոշմապատճառներից ելնելով քեկնածուների նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերելը:

Օրինակ 65. Թիվ 1-0938 գործով Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի բնակչուհին հայտնել է, որ 1996թ. նոյեմբերից մինչև 2003թ. հունվարի 30-ը աշխատել է Գավառի քաղաքապետարանում, սկզբում որպես աշխատակազմի քարտուղար, ապա աշխատանքի և սոցիալական հարցերի բաժնի պետ:

2002թ. ընտրություններից հետո, ըստ դիմումատուի, քաղաքապետն անհիմն ազատել է իրեն աշխատանքից՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 28-ի հիման վրա, իսկ Գավառի զբաղվածության տարածքային կենտրոնը որպես գործազուրկ իրեն չի գրանցել՝ պատճառաբանելով, որ ինքն ազատվել է վերոնշյալ հոդվածի հիման վրա:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ Գեղարքունիքի մարզպետը պատասխանել է, որ զբաղվածության կենտրոնն անձին գործազուրկ է ճանաչում, երբ նա աշխատանքից ազատվում է համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի, և որ Գավառի քաղաքապետի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ դիմումատուի աշխատանքային գրքույկում որպես աշխատանքից ազատման հիմք՝ հղում կատարել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքին, որից հետո նա կարող է ստանալ գործազուրկի նպաստ:

Դիմումի քննարկման կապակցությամբ, տրամադրության տակ եղած նյութերի և կատարված հարցման պատասխանի ուսումնասիրության արդյունքում Պաշտպանը եկել է այն եզրահանգման, որ նախ խախտվել է քաղաքացուն աշխատանքից ազատելու աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգը: Բացի այդ, Գավառի զբաղվածության տարածքային կենտրոնի կողմից թույլ է տրվել դիմումատուի իրավունքների ոտնահարում, այն է՝ անհիմն պատճառաբանությամբ չեն ընդունվել ներկայացված փաստաթղթերը, ինչի հետևանքով չեն ապահովվել նրա՝ որպես գործազուրկի, պետության կողմից օրենքով տրված սոցիալական պաշտպանության երաշխիքները:

Հիմք ընդունելով դիմումի քննարկման տվյալները, նպատակ ունենալով վերականգնել դիմումատուի իրավունքները, Պաշտպանն առաջարկել է Գավառի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրենին՝ «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան լուծել դիմումատուին գործազուրկի կարգավիճակ տալու հարցը:

«Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքը գործազուրկի կարգավիճակ ստանալու հարցը կախման մեջ չի դնում այն բանից, թե աշխատողն ինչ հիմքով է ազատվել աշխատանքից, այդպիսի դրույթ սահմանված չէ նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքով: «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ի համաձայն՝ գործազուրկ են համարվում աշխատանքային տարիքի, աշխատանք փնտրող, աշխատունակ, այն չզբաղված անձինք, որոնք չեն ստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ, ունեն առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, աշխատանքի տեղավորման նպատակով դիմել են զբաղվածության պետական ծառայություն և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Ինչպես 2004թ. այնպես էլ 2005թ. ընթացքում աշխատանքից **ապօրինի ազատման վերաբերյալ բողոքներ շատ են ստացվել հատկապես մանկավարժներից:**

Կրթության ոլորտում անցկացվող բարեփոխումները, երբ ուսումնական հաստատություններին տրվել է որոշակի ինքնուրույնություն, երբ համայնքների տարրական և միջնակարգ կրթության ընդհանուր կառավարումը հանձնվել է մարզպետներին, և կրթության և գիտության նախարարությունը մի կողմ է կանգնել այդ կառավարումից, հաճախ դպրոցների տնօրենների կամայականությունները, սուբյեկտիվ և խտրական մոտեցումները հանգեցնում են մանկավարժների աշխատանքային իրավունքների բավականին լուրջ խախտումների և մնում են անպատիժ:

Օրինակ 66. Գործ թիվ 1-0470՝ դիմումատուն Ալավերդու թիվ 5 միջնակարգ դպրոցի տնօրենի հրամանով ազատվել է աշխատանքից «հաստիքների կրճատման պատճառով», այն դեպքում, երբ ունի բարձրագույն մանկավարժական կրթություն, 18 տարվա

մանկավարժական աշխատանքի ստաժ, նրա խնամքին են հիվանդ մայրը և անչափահաս մեկ երեխան, երբ աշխատանքի են թողնված կենսաթոշակային տարիքի հասած, ինչպես նաև մանկավարժական կրթություն չունեցող անձինք:

Բողոքի քննարկման տվյալներով արձանագրվել է ՀՀ աշխատանքային օրենսդրության և ՀՀ կառավարության 2002թ. թիվ 2047-Ն որոշմամբ հաստատված «Լոռու մարզի ռազմավարության պլանի» սկզբունքների խախտում:

Պաշտպանի ներկայացրած առաջարկի հիման վրա դիմումատուին վերականգնվել է աշխատանքում:

Օրինակ 67. Գործ թիվ 1-1186՝ Տավուշի մարզի Ներքին Գոշ գյուղի 8-ամյա դպրոցի տնօրենի անօրինական գործողություններից զանգատվել են դպրոցի ուսուցիչները, աշակերտների ծնողները:

Տնօրենն իր պաշտոնական դիրքն օգտագործում է գյուղապետի թեկնածու առաջադրված իր ամուսնու օգտին ձայն չտված ծնողներից վրեժ լուծելու համար՝ նրանց երեխաների նկատմամբ զանազան հարկադրանքներ, սահմանափակումներ կիրառելու միջոցով: Աշակերտների մի մասը դուրս է եկել դպրոցից և հարկադրված են օրական անցնել 9 և ավելի կիլոմետր՝ հարևան գյուղերի դպրոցներ հաճախելու համար, մի մասն ընդհանրապես դպրոց չի հաճախում: Նույն պատճառով տնօրենը հալածանք է իրականացնում նաև իրեն չօժանդակած մանկավարժների նկատմամբ:

Համայնքի ավագանին հաստատված է համարել բողոքներով ներկայացված փաստերը և մարզպետին առաջարկել է լուծել դպրոցի տնօրենին պաշտոնից ազատելու հարցը, սակայն խնդիրը մնացել է չլուծված:

Պարզվել է, որ նույն տնօրենը կատարել է նաև դպրոցի նյութական միջոցների վատնում և յուրացումներ, ինչը հաստատվել է նաև Տավուշի դատախազությունում նախապատրաստված նյութերով, սակայն տնօրենի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ «հանցավորի գործուն գղջալու և համաներման ակտի հիման վրա»:

Տավուշի մարզի դատախազը հաստատված փաստերով միջնորդություն է ներկայացրել մարզպետին: Չնայած դատախազության միջնորդությանը, դպրոցի տնօրենը ոչ թե ազատվել է աշխատանքից, այլ մարզպետի կողմից նրան առաջարկվել է «շտապ կարգով ձեռնարկել համապատասխան քայլեր, առաջնահերթ ապահովել դպրոցահասակ երեխաների կրթություն ստանալու երաշխավորված իրավունքը»:

Տնօրենի հետագա գործողությունները վկայում են, որ նա հակված չէ ինքն իրեն վերափոխելու և հարազատ է մնում իր գործելակերպին: Ակնկալվում է, որ մարզպետը կփոխի իր մոտեցումները նման տնօրենների նկատմամբ:

Օրինակ 68. Գործ թիվ 1-0235՝ Լոռու մարզի Եղեգնուտ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրենի կողմից դպրոցի երկու ուսուցիչներին և լաբորանտին աշխատանքից ազատելը ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթական վարչության կողմից զնահատվել է որպես անհիմն և առաջարկվել է քննարկել աշխատանքում նրանց վերականգնելու հարցը:

Մարզպետի կողմից առաջարկը թողնվել է անհետևանք, տնօրենի համար հետևանքներ չեն առաջացրել նաև նույն վարչության կողմից արձանագրված այլ խախտումները:

Պաշտպանի հարցմանը Լոռու մարզպետը պատասխանել է ոչ ըստ էության, չի ուղարկել նաև պահանջված փաստաթղթերը: Լրացուցիչ հարցմանը պատասխան չի ստացվել:

Օրինակ 69. Թիվ 1-0408, 1-0419 գործերով բողոքները եղել են Գյումրի քաղաքի թիվ 32 միջնակարգ դպրոցի տնօրենի կողմից մի քանի ուսուցիչների աշխատանքից ազատելու և այլ խախտումներ թույլ տված լինելու կապակցությամբ:

Այս հարցով եղել է կրթության և գիտության նախարարության ակտիվ միջամտությունը: Կատարված ստուգումներով հաստատվել են տնօրենի դեմ ներկայացված բողոքներում շարադրված փաստերը, որի արդյունքում դպրոցի կառավարման խորհուրդը նրան

անվստահություն է հայտնել և մարզպետի 05.10.2005թ. որոշմամբ նա ազատվել է պաշտոնից:

Օրինակ 70. Թիվ 1-1301 գործով դիմումատուին, որն ունի քիմիա-կենսաբանություն մասնագիտությամբ մանկավարժական բարձրագույն կրթություն, Արմավիրի մարզի Արմավիր գյուղի միջնակարգ դպրոցի տնօրենը մերժել է այդ առարկաների դասավանդման ժամեր տրամադրելն այն դեպքում, երբ դպրոցում այդ առարկաները դասավանդում են ոչ մասնագետներ՝ քիմիա առարկան դասավանդում է դռնապանը:

Օրինակ 71. Թիվ 1-0599 գործով դիմումատուն աշխատել է Վանաձորի թիվ 8 միջնակարգ դպրոցում և տնօրենի հրամանով ազատվել է ինֆորմատիկա առարկայի ուսուցչի և համակարգչային օպերատորի պաշտոններից: Այդ ազատումը դատարանը ճանաչել է անհիմն և դպրոցի տնօրենին պարտավորեցրել նրան վերականգնել նախկին աշխատանքում:

Դատարանի վճիռը կատարած ցույց տալու նպատակով, տնօրենը դիմումատուին վերականգնել է աշխատանքի որպես «պատմություն» առարկայի ուսուցչուհի, այն դեպքում, որ դիմումատուն պատմության մասնագետ չէ: Չնայած դիմումատուի պնդումներին, որ դատարանի վճիռի պահանջները չեն կատարված, դատական ակտերի հարկադիր կատարողը ավարտված է համարել կատարողական թերթով հարուցված վարույթը: Դիմումատուն այս անգամ հարկադրված է եղել դատական կարգով վիճարկել հարկադիր կատարողի գործողությունները:

Թվարկված և նման բնույթի այլ բողոքները հիմք են տալիս եզրակացնելու, որ հանրակրթական դպրոցների ուսուցիչների աշխատանքային իրավունքները պատշաճ մակարդակով պաշտպանված չեն, ինչն անդրադառնում է կրթության որակի, դպրոցահասակ երեխաների անվճար կրթություն ստանալու իրավունքների իրականացման վրա: Կա խնդիր դպրոցների տնօրենների գործունեության նկատմամբ դպրոցների կառավարման խորհուրդների հսկողությունն ու վերահսկողությունը բարձրացնելու հարցում: Հարկ է արձանագրել, որ այդ խորհուրդներն առայժմ իրենց որևէ ձևով զգացնել չեն տալիս:

Աշխատանքային իրավունքների խախտումներին առնչվող նյութերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ **համայնքի կողմից հիմնադրված ընկերություններն** իրենց գործունեության ընթացքում թույլ են տալիս ՀՀ օրենսդրության մի շարք կոպիտ խախտումներ:

Օրինակ 72. Արագածոտնի մարզի Արագածավան գյուղի երկու բնակիչ Պաշտպանին ներկայացված դիմումով հայտնում են, որ նրանք աշխատել են Արագածավանի առողջության կենտրոնում, սակայն ազատվել են աշխատանքից աշխատանքային օրենսդրության պահանջների կոպիտ խախտումներով: Բացի այդ, դիմումատուներին չի վճարվել 2003-2004թթ. ընթացքում գոյացած աշխատավարձի պարտքը:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «Արագածավան առողջության կենտրոն» ՓԲԸ կառուցվածքում ստեղծվել է ծառայություն, որը չունի բուժառայությունների մատուցման լիցենզիա, ինչն առաջացնում է օրենքով սահմանված վարչական և քրեական պատասխանատվություն:

Ընկերության գործունեության ընթացքում գործադիր տնօրենի կողմից խախտվել են նաև աշխատանքային օրենսդրության մի շարք այլ դրույթներ: Ընկերության տնօրենի 21.03.2005թ. թիվ 12 հրամանի համաձայն դիմումատուները աշխատանքից ազատվել են ընկերության խորհրդի և ընկերության բուժանձնակազմի փակ գաղտնի քվեարկության արդյունքում:

Նախկին աշխատանքային օրենսգրքի հոդված 36-ի համաձայն աշխատանքային պայմանագիրը կարող էր լուծվել միայն կազմակերպության ադմինիստրացիայի, այսինքն՝ ընկերության գործադիր տնօրենի կողմից:

Միաժամանակ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ ընկերության աշխատակիցներին աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու իրավասությունը պատկանում է ընկերության գործադիր տնօրենին, իսկ ընկերության խորհուրդը կամ աշխատակազմը նման իրավասություն ունենալ չեն կարող:

Նախկին ՀՀ աշխատանքային օրենսգրքի նույն հոդվածի համաձայն ձեռնարկության աշխատողների թվի կամ հաստիքի կրճատման դեպքում աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը կարող էր լուծվել միայն աշխատանքային օրենսգրքով սահմանված մի շարք պահանջների պահպանմամբ (հոդվածներ 36, 37, 38), ընդ որում, հաստիքի կրճատման դեպքում պետք է պահպանված լիներ աշխատանքային օրենսգրքով հստակորեն սահմանված՝ հաստիքի կրճատման դեպքում աշխատանքում թողնելու նախապատվության իրավունքը, աշխատանքային պայմանագրի լուծումը պետք է պարտադիր կերպով համաձայնեցվեր արհմիութենական կոմիտեի հետ:

Միաժամանակ նախկին աշխատանքային օրենսգրքի հոդված 42-ի կետ 2-ում սահմանվում էր առաջիկա ազատման մասին առնվազն 2 ամիս առաջ աշխատողին անհատապես նախազգուշացնելու գործատուի պարտականությունը, ինչը նույնպես չէր իրականացվել գործադիր տնօրենի կողմից:

Աշխատանքային օրենսդրության պահանջների նման կոպիտ խախտումները հետևանք են պաշտոնատար անձի կամայականության, որի արդյունքում խախտվում են դիմումատուների այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են՝ օրենքի առջև հավասար լինելու և օրենքով հավասար չափով պաշտպանված լինելու, կամայականությունից ազատ լինելու, աշխատանքի դիմաց համարժեք վարձատրություն ստանալու իրավունքները:

Ելնելով վերոգրյալից, Պաշտպանը դիմել է Արագածավանի գյուղապետին, առաջարկելով քննարկել «Արագածավան առողջության կենտրոն» ՓԲԸ գործադիր տնօրենի լիազորությունների դադարեցման հարցը, ինչպես նաև միջամտել է դիմումատուներին նախկին աշխատանքում վերականգնելու հարցում, սակայն պատասխան այդպես էլ չի ստացվել:

Օրինակ 73. Թիվ 1-1036 գործով դիմումատուները զանգատվել են Արագածոտնի մարզի Արագածավան գյուղի «Արագածավան առողջության կենտրոն» ՓԲԸ տնօրենի ապօրինի գործողություններից:

Բողոքի քննարկմամբ պարզվել է, որ տնօրենի կողմից թույլ են տրվել ոչ միայն աշխատանքային օրենսդրության կոպիտ խախտումներ, այլև խախտվել են «Լիցենզավորման մասին» օրենքի պահանջները:

Առողջապահության նախարարության ձեռնարկած ստուգումներով պարզվել է, որ առողջության կենտրոնի կառուցվածքում ստեղծվել է «Կանանց կոնսուլտացիա» ծառայություն առանց լիցենզիայի, և նման ապօրինի գործունեության արդյունքում բուժաշխատողները կամայականորեն ազատվել են աշխատանքից կամ տեղափոխվել իրենց մասնագիտությանը ոչ համապատասխան այլ աշխատանքի:

Քանի որ տվյալ ՓԲԸ-ն համայնքային ենթակայության կառույց է, դրա գործունեության վերաբերյալ պարզաբանումներ են պահանջվել գյուղապետից, և չնայած

կրկնակի կատարված հիշեցմանը, Արագածավանի գյուղապետը հարկ չի համարել պատասխանել:

Օրինակ 74. Ըստ թիվ 1-0046 դիմումի՝ Գեղարքունիքի մարզի Ողջի գյուղի նորընտիր գյուղապետն աշխատանքից ազատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի բոլոր աշխատակիցներին և նրանց փոխարեն նշանակել նորերին: Դրդապատճառը եղել է զուտ անձնական ընտրությունների ժամանակ նրանք իր կողմում չեն եղել:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 28-ի մաս 3-ը, ըստ որի՝ «Համայնքի ղեկավարն ինքնուրույն ու սեփական պատասխանատվությամբ է իրականացնում կադրային քաղաքականությունը և ձևավորում համայնքի ղեկավարի աշխատակազմը, ինչպես նաև իր ներկայացմամբ և ավագանու համաձայնությամբ նշանակում է համայնքային բյուջետային հիմնարկների ղեկավարներին», **տեղ է թողնում համայնքի ղեկավարի նման կամայականությանը, և առկա են դեպքեր, երբ հենց օրենքի այդ հոդվածի վրա հենվելով ազատվել են** նույնիսկ գյուղապետարանի շենքի պահակը, հավաքարարը, տեխնիկական այլ աշխատողներ:

Գյուղապետարանների և ընդհանրապես տեղական ինքնակառավարման մարմինների դեմ եղած բողոքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը ցույց են տալիս, որ տեղերում իրավիճակը հիմնականում պայմանավորվում է ղեկավարների գործնական և բարոյական անձնական հատկանիշներով: Այդ պայմաններում, երբ ղեկավարի ընտրության հարցում մեծ դերակատարում ունեն հարազատական, ընկերական, կլանային կապերը, որոնք արգելք են արժանի ղեկավար ընտրելու ճանապարհին, առաջանում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության հատուկ կարգ և թեկնածուների համար լրացուցիչ ցենզեր օրենքով սահմանելու խնդիր:

3.10.2. Բնակարանային հարցեր

Զգալի թիվ են կազմում բողոքները բնակարանային խնդիրների վերաբերյալ, մասնավորապես, աղետի գոտու բնակիչներից՝ բնակարանների անարդարացի բաշխման, հաշվառումներից դուրս թողնելու, ընտանիքի անդամների թվի փոփոխությունը հաշվի չառնելու առնչությամբ:

Օրինակ 75. Թիվ 1-0245 գործով դիմումատուին՝ Վանաձորի բնակիչ, 1995թ. հատկացվել է երկու սենյականոց բնակարան համապատասխան օրդերով: Հետագայում պարզվել է, որ նույն բնակարանի նկատմամբ օրդեր տրվել է նաև մեկ ուրիշին:

Մարզպետարանից պարզաբանել են, որ բնակարանները հատկացնելիս դրանք համարակալված չեն եղել, բնակիչները զբաղեցրել են դրանք մոտավոր կողմնորոշմամբ: Համարակալելուց հետո պարզվել է, որ դիմումատուն զբաղեցրել է ոչ այն բնակարանը, որն իրեն հատկացված է:

Սակայն իրականությունն այն է, որ դիմումատուն իր զբաղեցրած բնակարանն ազատելու դեպքում, հայտնվում է փողոցում, քանի որ նրան չի առաջարկվում այն բնակարանը, որն ըստ համարակալման, նրան է հատկացված եղել:

Օրինակ 76. Աղետի գոտուց ստացված բողոքներից բնութագրական է Գյումրի քաղաքի բնակչուհու բողոքը՝ իր ընտանիքը բնակարան ստանալու իրավունք ունեցողների ցուցակից դուրս թողնված լինելու մասին:

Բողոքի քննարկմամբ պարզվել է, որ դիմումատուն իր ընտանիքով՝ ամուսնու և երկու երեխաների հետ, մինչև երկրաշարժը, չունենալով բնակարան, ժամանակավորապես ապրել է հոր բնակարանում, սակայն հաշվառված է եղել որպես առանձին ընտանիք, աշխատանքի վայրում 1987թ. հերթագրված է եղել որպես բնակարանի կարիք ունեցող:

Հայրը 1996թ. ստացել է բնակարան իր չորս անձից բաղկացած ընտանիքի համար՝ դիմումատուն, նրա ամուսինը և երկու երեխան չեն դիմել որպես բնակարան ստացողի ընտանիքի անդամ և բնակարանի հատկացման օրդերում չեն նշվել:

2002թ. դիմումատուի ընտանիքին հատկացվել է երկու սենյականոց բնակարան, սակայն մարզպետարանը վիճարկել նրա ընտանիքի այդ իրավունքը՝ ելնելով այն հանգամանքից, որ մինչև երկրաշարժը բնակվել են հոր տանը, որի դիմաց հայրը 1996թ. ստացել է երեք սենյականոց բնակարան: Ստացվում է, որ դիմումատուն դատապարտված է ողջ կյանքում իր ընտանիքն ինչ-որ կերպ տեղավորել իր հոր բնակարանում:

ՀՀ կառավարության «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում՝ երկրաշարժի հետևանքով բազմաբնակարան շենքերի անօթևան մնացած բնակիչներին բնակարանների (բնակելի տների) զննման համար անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» 06.06.2002թ. թիվ 831-Ն որոշմամբ նախատեսված է եղել մեկ սենյականոցի շուկայական արժեքի չափով ֆինանսական աջակցություն տրամադրել այն անձանց, որոնց ընտանիքի անդամների մի մասը երկրաշարժի հետևանքով քանդված բնակարանի դիմաց ստացել է բնակարան:

Կառավարության այս որոշմամբ նման խնդիրները մասնակիորեն կլուծվեին. լուծումը մասնակի կլիներ, քանի որ հաշվի չէր առնվում ընտանիքի անդամների թիվը, և անկախ դրանից, ֆինանսական աջակցությունը նախատեսվում էր մեկ սենյականոց բնակարանի շուկայական արժեքի չափով: Այդ մասնակի լուծումն այժմ նույնպես չի գործում, քանի որ ՀՀ կառավարության 24.02.2004թ. թիվ 309 որոշմամբ թիվ 831-Ն որոշումը ուժը կորցրած է ճանաչվել:

Գյումրի քաղաքում հաշվառված են նման կարգավիճակ ունեցող 154 ընտանիք, որոնց բնակարանով ապահովելու կամ բնակարան ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն տրամադրելու խնդիրը մնում է անորոշ: Գյումրիի քաղաքապետը հայտնում է, որ խնդրին լուծում տալու համար դիմել է ՀՀ կառավարությանը, առայժմ լուծում չի առաջարկվել:

Դիմումատուի բնակարանային խնդրի չլուծված մնալը, նրա ընտանիքին արդեն իսկ հատկացված երկու սենյականոց բնակարանից մարզպետի կողմից զրկելը, երբ դրա փոխարեն այլ լուծում չի առաջարկվել, չի արդարացնում իրավական ակտի տառացի ընկալումը:

3.10.3. Հողահատկացումների և կառուցապատման հարցեր

Երևանի քաղաքապետարանի դեմ ուղղված բողոքների շարքում զգալի թիվ են կազմում կառուցապատման ծրագրերի իրականացման, հողահատկացումների, շինարարության թույլտվությունների, ինքնակամ կառույցների հետ կապված բողոքները:

Երևանի մասին առանձին օրենքի բացակայության արդյունքում շատ դեպքերում անհնար է դառնում սահմանազատել քաղապետարանների և քաղաքապետարանի պատասխանատվությունն այս կամ այն իրավախախտման համար, հատկապես, երբ

խոսքը վերաբերում է ինքնակամ կառույցների արգելմանը, քանդմանը և դրանց հետևանքների վերացմանը:

Առկա է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 37-ը, որի կետ 10-ը վերաբերում է համայնքի ղեկավարի գործունեությանը քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում: Հոդվածի այդ կետով ասված է՝ «Կանխում և կասեցնում է ինքնակամ հողագավթումը և շինարարությունը, իր որոշմամբ անմիջապես ձեռնարկում է համապատասխան գործողություններ և մեկամսյա ժամկետում, օրենքով սահմանված կարգով, ապահովում է դրանց հետևանքների վերացումը»:

Օրենքի այս պահանջի առկայության պայմաններում, երբ բազմաբնակարան շենքերը և շինությունները, բացի ամբողջովին մասնավորեցվածներից, գտնվում են թաղային համայնքների տնօրինության տակ, անընդունելի է, որ թաղապետարանները ժամանակին չեն արձագանքում բնակիչների այնպիսի բողոքներին, որոնք վերաբերում են բազմաբնակարան շենքի նկուղային հարկի լիցքը դատարկելուն և ամբողջ շինության հիմքը խարխլելուն կամ ընդհանուր շենքի օգտագործման այս կամ այն տարածքը բնակչի կողմից լրացուցիչ կառուցապատման միջոցով զավթելուն, ընդհանուր մուտքը փակելուն կամ նեղացնելուն, բակային տարածքը կառուցապատելու հետևանքով երեխաներին խաղահրապարակից զրկելուն և այլն:

Այսպիսի գործողությունները բնակիչների համար ստեղծում են բնակության անհավասար պայմաններ, խախտում են շենքի մյուս բնակիչների՝ իրենց բնակարանի օգտագործման համար բավարար օժանդակ տարածք, ազատ մուտք, իրենց և իրենց երեխաների համար անհրաժեշտ շրջակա միջավայր ունենալու իրավունքները, չխոսելով դեռևս այն մասին, որ շինությունն ամբողջապես կարող է դառնալ վթարային:

Քանի դեռ համատիրությունները վերջնականապես չեն կայացել և իրենց ձեռքը չեն վերցրել բազմաբնակարան շենքերի կառավարումն ամբողջապես, Երևան քաղաքի թաղապետարաններն իրավունք չունեն մի կողմ կանգնելու և չմիջամտելու ընթացող պրոցեսներին:

Այն, որ **հողահատկացումները, շինարարության թույլտվությունները** տրվում են քաղաքապետարանի կողմից, բոլորովին չի նշանակում, որ նման հատկացումներին ու թույլտվություններին թաղապետարաններն իրավասու չեն միջամտելու, հայտնելու իրենց կարծիքը, նաև առարկելու, երբ նման թույլտվությունը կամ նման հողահատկացումը գտնում են ոչ տեղին, քանի որ քաղաքապետարանի, քաղաքաշինության նախարարության համապատասխան մասնագետները նման հարցերով դրական կարծիք ներկայացնելիս, հաճախակի անտեսում են թաղային համայնքի շահերը, այն **հետևանքները, որոնք կարող են առաջանալ նման հատկացումներով կամ թույլտվություններով:**

Օրինակ 77. Թիվ 1-0746 գործով դիմումատուն Ավանի թաղապետարանին գանգատվել է, որ հարևանը շենքի ընդհանուր օգտագործման հարթակի հաշվին մեծացրել է իր բնակարանը, որով նույն հարթակի բնակիչներին զրկել է բնական լուսավորությունից: Թաղապետարանի ներկայացուցիչը, հաստատելով հանդերձ, որ բողոքը համապատասխանում է իրականությանը, վարչական իրավախախտման մասին ակտ չի կազմել, ինքնակամ կառույցը վերացնելու ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկել:

Օրինակ 78. Թիվ 1-1363 գործով Մոլդովական փողոցի բնակիչ, 2-րդ խմբի հաշմանդամ դիմումատուն գանգատվել է հարևանի կողմից ընդհանուր օգտագործման

միջանցքը զավթելու և խորդանոց կառուցելու հանգամանքից: Փաստը հաստատված է նաև քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության մասնագիտական եզրակացությամբ: Տեսչությունն իր եզրակացությունն ուղարկել է Նոր Նորքի թաղապետին: Թաղապետարանի կողմից խնդիրը չի կարգավորվել:

Օրինակ 79. Թիվ 1-0867 գործով դիմումատուն, որը Մաշտոցի պողոտայի բնակիչ է, տեղեկացրել է Կենտրոնի թաղապետին և Երևանի քաղաքապետին, որ իրենց շենքի 1-ին հարկի բնակիչը հիմնովին վերակառուցում է իր բնակարանը՝ քանդել է բոլոր միջնապատերը, քանդել է հատակը և սկսել է քանդել հիմնապատերի լիցքը, որտեղից հանել և տեղափոխել է մոտ 40 ավտոմեքենա հող: Քաղաքապետարանի ներկայացուցիչները տվյալ բնակչին տուգանել են 50 հազար դրամ, սակայն միջոցներ չեն ձեռնարկել հետևանքները վերացնելու ուղղությամբ: Մեկուկես տարի անց տվյալ անձը վերսկսել է իր այսպես կոչված «կառուցապատումը», սկսել է քանդել հիմնապատերը: Պարզվում է, որ քաղաքապետարանից նրան տրվել է շինարարության թույլտվություն:

Օրինակ 80. Թիվ 1-1244 գործով փախստական դիմումատուին 1989թ. փախստականների պետական կոմիտեի միջամտությամբ հատկացվել է Միսակյան 22 շենքի թիվ 45 բնակարանը, սակայն նա զբաղեցրել է թիվ 48 բնակարանը, քանի որ թիվ 48 բնակարանի բնակիչը զբաղեցրել էր թիվ 45 բնակարանը: Երկու ընտանիքները շարունակել են ապրել և ապրում են նման փոխանակմամբ, սակայն հաշվառված են ըստ հատկացման հասցեների: Փաստացի բնակության և հաշվառման հասցեների տարբերության պատճառով խնդիր է առաջացել ջրամատակարարման պայմանագիր կնքելիս՝ մեկի պարտքը հաշվառվում է մյուսի վրա:

Խնդիրը կարգավորելու համար այս երկու ընտանիքները դիմել են Աջափնյակի թաղապետին՝ իրենց հատկացված բնակարանների համարներում փաստացի բնակությանը համապատասխան փոփոխություն կատարելու խնդրանքով:

Թաղապետը մերժել է այն հիմնավորմամբ, որ շենքը 4-րդ կարգի վթարային է և հաշվառում չի թույլատրվում, նույնպիսի պատասխան թաղապետը տվել է նաև Պաշտպանի հարցմանը:

Այսպիսի մոտեցումը գնահատվում է որպես ձևական օրինապաշտություն, որը տվյալ դեպքով ընդհանրապես ընդունելի չէ, քանի որ խոսքը ոչ թե վթարային ճանաչված շենքում նոր հաշվառման մասին է, այլ եղած հաշվառումը փաստացի իրավիճակին հարմարեցնելուն, որով երկու բնակիչներին որևէ արտոնություն կամ նոր իրավունք չի տրամադրվում:

Նման լուծելի խնդիրները բնակիչների համար անլուծելի են դառնում համապատասխան մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կամայականությունների, անհիմն գնահատականների, մարդկանց խնդիրների նկատմամբ ցուցաբերվող անտարբերության և անգործության կամ մի խոսքով՝ վատ վարչարարության արդյունքում: Այն, որ **տարածքային կառավարման մարմինների դեմ** տրված բողոքների շարքում մեծ թիվ են կազմում Երևանի քաղաքապետարանի դեմ ուղղված բողոքները, կապված է Երևանի վարչական սահմաններում ներառված **տարածքների բաշխման և վերաբաշխման հետ:**

Այս գործընթացներում կարելի է տեսնել կոռուպցիա, խտրական մոտեցում, պայմանագրից բխող իրավունքների խախտում, կանաչ տարածքների անթույլատրելի նվազեցում, բակային խաղահրապարակների վերացում, շինարական նորմերի անտեսման հետևանքով հարևաններին բնական լուսավորությունից զրկում և այլն:

Օրինակ 81. Արցախյան ազատամարտում զոհված կամ հաշմանդամ դարձած 28 անձանց ընտանիքների բողոքը վերաբերել է նախկին Շահումյանի շրջագործկոմի

որոշմամբ Կուրդինյան-Մեքաստիա փողոցներին հարող տարածքից 1994թ. վարձակալման իրավունքով իրենց տրամադրված հողատարածքները մինչև վարձակալության ժամկետի լրանալը՝ 2003թ., **քաղաքապետի կողմից աճուրդով այլ անձանց վաճառելուն:**

Պաշտպանը քաղաքապետի գործողություններում տեսել է խտրական մոտեցում և այդ 28 ընտանիքների տնտեսական իրավունքների կոպիտ խախտում: Քաղաքապետը, գտնելով, որ խախտումը տեղի է ունեցել իր նախորդի օրոք, Պաշտպանին ցույց է տվել դատարանի ճանապարհը՝ թող վարձակալները հարցը վիճարկեն դատարանով:

Պահանջվել է ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության և ՀՀ կառավարության աշխատակազմի անմիջական միջամտությունը, որից հետո միայն **խնդրին տրվել է մասնակի լուծում՝ գնորդներին առաջարկվել է այլ տարածք, իսկ նշված վարձակալների հետ կնքվել է վարձակալման նոր պայմանագիր՝ «Պատերազմի ժամանակ տուժածների կենտրոն» հասարակական կազմակերպության միջոցով:**

Այնուամենայնիվ, այս խնդիրը դեռևս սպասում է իր վերջնական լուծմանը:

Մասնակի լուծմանը հասնելու ճանապարհին եղել են բազմաթիվ ընդհարումներ, այդ թվում ֆիզիկական բռնություններ բողոքատուների նկատմամբ, ոստիկանության միջամտություն, ամենօրյա անպտուղ այցելություններ տարբեր վարչական մարմիններ և նրանց կողմից արհամարհական վերաբերմունքի ցուցադրում:

Օրինակ 82. 2004թ. մարտի 6-ին Հրազդան գետի վարարման հետևանքով Հրազդան փողոցի թիվ 29/1, 29/2, 29/3 տները ենթարկվել են ողողումների և դարձել են վթարային, բնակիչներին պատճառվել է նաև այլ գույքային վնաս: Տները ներկայումս գտնվում են անմխիթար վիճակում, հիմքերը թուլացել են, առաստաղները դեֆորմացված են, զգացվում է խոնավության առկայությունը:

Տարերային աղետի հետևանքով վնաս կրած այդ բնակիչները համապատասխան փոխհատուցում առ այսօր չեն ստացել: Քաղաքապետարանից հայտնում են, որ հեղեղումներով պատճառված վնասը փոխհատուցելու, հետևանքները վերացնելու և հետագա հեղեղումները կանխելու նպատակով անհրաժեշտ է 110.7 միլիոն դրամ, այդ թվում 43.7 միլիոն՝ հենապատի կառուցման, 35 միլիոն՝ գոյություն ունեցող շենքի ուժեղացման, 30 միլիոն՝ 2-րդ հարկի կառուցման և 2 միլիոն՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար:

Պաշտպանի նամակները՝ ուղղված ՀՀ տարածքային կառավարման նախարարին, ՀՀ վարչապետին, արդյունք չեն տվել:

Նշված հարցով Երևանի քաղաքապետին ուղղված Պաշտպանի նամակին ի պատասխան հայտնվել է, որ 2005թ. պետական բյուջեում ներառվել են միայն Հրազդան փողոցի թիվ 29/1, 29/2, 29/3 տների հենապատերի կառուցման ծախսերը, որ այդ աշխատանքներն իրականացվում են և մինչև տարվա վերջը կավարտվեն: Այն, որ քաղաքապետարանին անհրաժեշտ ամբողջ գումարը բյուջեով չի նախատեսվել և չի հատկացվել, այլ հարց է: Խնդիրը նրանում է, որ իրականությանը չի համապատասխանում գրությամբ արված այն հայտարարությունը, թե թվարկված երեք տների հենապատերի կառուցման աշխատանքներն իրականացվում են:

Օրինակ 83. Թիվ 1-0264 գործով դիմումատուն ունի փախստական կարգավիճակ և 13 տարի ապրում է Դարաբաղ 88 հասցեի տանը: Տվյալ տունը իրեն որպես սեփականություն տրամադրելու նրա դիմումը քաղաքապետարանի կողմից մերժվել է այն հիմնավորմամբ, թե իբր տունը գտնվում է դպրոցին պատկանող տարածքում:

Անցկացված ստուգումներով և հարցումներով պարզվել է, որ դպրոցը կապ չունի տվյալ շինության հետ և շինությունը դիմումատուին հատկացնելու համար որևէ արգելք չկա: Այդ տվյալներ տրամադրվել են քաղաքապետին, և նա վերացրել է իր նախկին որոշումը, սակայն պաշտոնատար անձը, որը քաղաքացու դիմումի ստուգման ընթացքում

թույլ է տվել եթե ոչ կեղծիք, ապա անփութություն, ինչը պատճառ է հանդիսացել քաղաքապետի սխալ որոշման և քաղաքացու դիմումի անհիմն մերժման, չի պատժվել:

Օրինակ 84. Թիվ 1-0818 գործով Երևանի Կորյունի փողոցի թիվ 7, 7/1 շենքերի բնակիչները բողոքել են, որ իրենց շենքերից ընդամենը 3 մետր հեռավորության վրա գտնվող հողատարածքը, որը նաև ծառայում է որպես Կորյունի 4-րդ նրբանցքի թիվ 4 տան, Աբովյան փողոցի 40, 42, 43, 48 շենքերի ընդհանուր օգտագործման տարածք և բնակիչների ուժերով բարեկարգվել ու դարձել է կանաչ գոտի և երեխաների խաղահրապարակ, քաղաքապետարանի կողմից հատկացվել է մասնավոր անձի՝ բարձրահարկ շենք կառուցելու նպատակով: Անտեսվել են ոչ միայն հողակտորի ընդհանուր օգտագործման տարածք լինելը, այլև այն հանգամանքը, որ կվերացվի կանաչ տարածքը, կփակվի ընդհանուր օգտագործման ճանապարհը, կխախտվի շենքերում բնական լուսավորությունը, երեխաները կզրկվեն խաղալու համար որևէ ազատ տարածք ունենալուց:

Շինարարություն իրականացնելու նպատակներով հողահատկացումների գործընթացներին ծանոթանալիս ակնառու է դառնում, որ ընդհանրապես անտեսվում է բակային ազատ տարածքներ թողնելու անհրաժեշտությունը, որ նախկինում կառուցված բնակելի շենքերի բակային տարածքները, հատուկ նախատեսված խաղահրապարակները տրվում են զանազան կառուցապատողների՝ ավտոտնակներ, առևտրի և այլ օբյեկտներ կառուցելու թույլտվությամբ:

Նկարագրված դեպքով քաղաքապետարանից հաստատել են հողատարածքն այլ անձի հանձնաժողովին փաստը: Դրականն այն է, որ քաղաքապետը պատրաստակամություն է հայտնել վերանայել հողահատկացման որոշումը և տվյալ անձին տարածք հատկացնել մեկ այլ վայրում:

Օրինակ 85. Թիվ 1-0865 գործով Տիգրան Մեծի թիվ 51 շենքի բնակիչները զանգատվել են բնակիչներից մեկի կողմից շենքի շքամուտքը քանդելու և իր նպատակների համար կառուցապատելու փաստից:

Բնակիչների 28.12.2004թ. բողոքին քաղաքապետարանից երեք ամիս անց պատասխանել են, որ իբր քաղաքապետարանի աշխատակիցները բազմիցս եղել են բողոքում նշված հասցեում և իբր չեն կարողացել հանդիպել ապօրինի կառույցի հեղինակին, այն դեպքում, երբ բնակիչները վկայում են, որ տվյալ անձը մշտապես տանն է կամ այդ ինքնակամ կառույցում:

Հետագայում պարզվել է, որ Երևանի քաղաքապետի 21.04.2005թ. թիվ 850-Ա որոշմամբ բնակիչների բողոքից 4 ամիս անց շքամուտքը որպես սեփականություն հատկացվել է նույն ինքնակամ կառույց իրականացնողին:

Խնդրի կապակցությամբ Պաշտպանի հարցմանը քաղաքապետը պատասխանել է, որ իր որոշմամբ ճանաչվել է քաղաքացու սեփականության իրավունքը կցակառույցի նկատմամբ, շքամուտքի վերաբերյալ հայտ չի ներկայացվել: Մա դարձյալ դեպք է, երբ կեղծվում է իրականությունը, երբ ոչինչ չասող դարձվածքներով փորձ է արվում քողարկել ակնհայտ ապօրինությունը:

Հողահատկացումների առնչությամբ անմխիթար իրավիճակ է տիրում նաև մարզերում, ինչի փայլուն օրինակ են հանդիսանում ներքոհիշյալ երկու դեպքերը:

Օրինակ 86. Շիրակի մարզի սահմանամերձ և փախստականներով բնակեցված **Ողջի գյուղի** բնակիչների բողոքը վերաբերում էր գյուղապետի թույլ տված չարաշահումներին և գյուղապետարանի անգործության մատնված լինելուն: Խնդիրն ուսումնասիրվել է գյուղ այցելելու և համայնքի բնակիչների, ապա նաև գյուղապետի հետ հանդիպելու միջոցով:

Տեղում պարզվել է հետևյալը՝ գյուղապետարանը, որպես այդպիսին, չի գործում, բնակիչների վկայությամբ, տարվա ընթացքում բացվում է 1-2 անգամ: Համայնքի բնակիչների հողատարածքները չեն քարտեզագրված և սահմանները չեն ճշտված:

Բնակիչների հողատարածքների մեծ մասը գտնվում է սահմանային գոտում, և գյուղապետի կողմից ժամանակին անցագրերի համար համապատասխան պահանջագիր չներկայացնելու հետևանքով այդ հողատարածքներում գարնանային աշխատանքներ իրականացնելը դառնում է անհնար: Պարզվել է, որ գյուղապետը խռովել է ավագանու անդամներից, իր դեմ բողոքող բնակիչներից, և չի կատարում գյուղապետի իր պարտականությունները, զբաղված է սեփական հողատարածքներով և անասունների խնամքով: Դա չթաքցրեց նաև գյուղապետն ինքը:

2005թ. փետրվարին Շիրակի մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի անցկացրած **ստուգումներով գյուղապետարանում արձանագրվել են մի շարք էական խախտումներ ու չարաշահումներ**, որոնց վերաբերյալ նյութերն ուղարկվել են Շիրակի մարզի դատախազություն:

Համայնքի ավագանին համաձայնվել է **գյուղապետին պաշտոնանկ անելու վերաբերյալ մարզպետի ներկայացրած որոշման նախագծի հետ**: Ողջի գյուղի համայնքապետին պաշտոնանկ անելու վերաբերյալ իր առաջարկը և ավագանու որոշումը մարզպետն ուղարկել է ՀՀ տարածքային կառավարման նախարարություն՝ կառավարության քննարկմանը ներկայացնելու համար, ինչը սակայն այդպես էլ չի արվել: Շիրակի մարզի դատախազությունում քրեական գործ հարուցվել է միայն 13.06.2005թ., որի քննությունը ձգձգվել է այնքան, մինչև նույն գյուղապետը կրկին վերընտրվել է, ապա նրա մասով քրեական հետապնդումը դադարեցվել է նույն հիմքով:

Օրինակ 87. Թիվ 1-1291 գործով Արմավիրի մարզի համայնքներից մեկի համայնքապետն աճուրդի է դրել համայնքի բնակիչներից մեկի հողատարածքն այն դեպքում, երբ վարձակալման պայմանագրի ժամկետը լրացած չի եղել, դադարեցված չի եղել վարձակալման պայմանագիրը:

Օրենքի էական խախտումներով անցկացված աճուրդը դատարանով ճանաչվել է անվավեր: Վարձակալն առաջարկել է աճուրդում ձևավորված գինը: Գյուղապետը մերժել է այդ գնով հողատարածքը նրան տրամադրելը, նշանակել է նոր աճուրդ:

2005թ. հունվարի 1-ից ուժի մեջ է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համաձայն վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով մերժել անձանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են (հոդված 5): Վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով (հոդված 6, մաս 2):

Ինքնակամ կառույցների օրինականացման, հողօգտագործման իրավունքի, շինարարության թույլտվությունների տրամադրման պրակտիկայի ուսումնասիրությունները բերում են այն համոզման, որ նման հարցերի լուծման բնագավառում գերակայում է կամայականությունը: Եթե վերևում բերված օրինակում օրինականացվել է ինքնակամ այնպիսի կառույցը, որը կատարվել է ի հաշիվ բազմաբնակարան շենքի շքամուտքի, ապա մեկ ուրիշ դեպքում քաղաքացուն կարող է մերժվել իր իսկ բնակարանի ներսում անհրաժեշտ և աննշան ձևափոխումների օրինականացումը՝ պատշգամբը փակելը, միջնապատը տեղափոխելը և այլն:

Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ,

ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար (հոդված 10):

Այս առումով բնութագրական են Երևանի քաղաքապետարանի մոտեցումները՝ կապված բռնադատվածներին և նրանց առաջին հերթի ժառանգներին անհատական բնակարանային շինարարության համար անհատույց հողամաս տրամադրելու խնդիրներին: Գրանցվել են դեպքեր, երբ նման իրավունք ունեցող անձինք դիմել և համապատասխան փաստաթղթեր են ներկայացրել դեռևս 2003թ., իսկ քաղաքապետարանը, ներկայացված տվյալները ստուգելու, համապատասխան եզրակացություններ ստանալու անվան տակ հարցի լուծումը ձգձգել է մինչև 2004թ. կեսերը և ապա պահանջը մերժել այն հիմնավորմամբ, որ նման հողատարածք տրամադրելու համար նախատեսված երկամյա ժամկետը լրացել է:

Օրենքը պարտադիր է համարում նաև քաղաքացիների դիմում-բողոքներով վարչական վարույթի կազմումը և վարույթով որոշում կայացնելը, ինչն առայժմ չի կատարվում: Վարչական վարույթ կազմելը և վարույթի տվյալներով որոշում կայացնելը կհարկադրի վարչական մարմնին, դրա պաշտոնատար անձին պատասխանատու լինել որոշման հիմնավորվածության համար:

Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման հետ կապված հարկադիր կարգով օտարվող բնակարանների և տարածքների սեփականատերերի, բնակարանի կամ տարածքի օգտագործման իրավունք ունեցողների իրավունքների խախտումների մասին ասվել է 2004թ. տարեկան զեկույցում և 2005թ. արտահերթ հրապարակային զեկույցում:

Չեկույցներում առաջարկվել է Երևանի կառուցապատման ծրագրերին վերաբերող ՀՀ կառավարության որոշումները գնահատել որպես հակասահմանադրական, վերանայել քաղաքացիների սեփականության հարկադիր օտարման վերաբերյալ գործարքները և վերականգնել օտարված անշարժ գույքի սեփականատերերի և օգտագործողների խախտված իրավունքները:

Բարձրացված խնդիրներին որևէ արձագանք չի տրվել իշխանությունների կողմից՝ չի արձագանքել ՀՀ նախագահը, կառավարությունը, խնդրին չի անդրադարձել նաև Ազգային ժողովը: Երևանի քաղաքապետի հետ խնդիրը քննարկվել է: Նրա գնահատմամբ օտարման պայմանագրերի վերանայումը հնարավոր կլիներ, եթե լինեին համապատասխան ֆինանսական միջոցներ:

Նշված զեկույցների դրական ազդեցություն պետք է համարել միայն այն, որ Կոնդ քաղամասի կառուցապատման ծրագրերի իրականացում նախատեսելով, քաղաքապետարանը ձեռնարկել և իրականացնում է սեփականատերերի և օգտագործողների թվաքանակի ճշտում, իրավունքների հստակեցում և պետական գրանցում, նախնական բանակցությունների վարում և նման այլ անհրաժեշտ միջոցառումներ: Դա հենց այն է, ինչը չի նախորդել «Հյուսիսային պողոտա և կասկադ», «Գլխավոր պողոտա» ծրագրերի իրականացմանը, ինչի մասին ասվել է Պաշտպանի զեկույցներում:

2005թ. արտահերթ հրապարակային զեկույցից հետո ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը որոշում է ընդունել քաղաքացիների անշարժ գույքի հարկադիր օտարմանը վերաբերող վեճերով ուսումնասիրել և ամփոփել դատական պրակտիկան և դատարաններին տալ անհրաժեշտ պարզաբանում՝ օրենքի կիրառման միասնականությունն ապահովելու նպատակով:

Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման հետ կապված մարդկանց իրավունքների խախտման հիմքում ՀՀ կառավարության՝ տվյալ բնագավառին առնչվող որոշումներն են, և քանի դեռ Սահմանադրական դատարանը չի անդրադարձել դրանց սահմանադրականության հարցին, այդ բողոքները մնալու են չլուծված:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում 10.01.2006թ. առանց քննության է թողնվել Պաշտպանի դիմումը Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի աշխատանքային խորհրդին՝ մի ընտանիքի բնակության իրավունքի դիմաց աջակցություն չտրամադրելու մասին որոշումը բողոքարկելու վերաբերյալ:

Դեռևս 2005թ. հունվարին, փորձելով դատարանների ուշադրությունը հրավիրել ՀՀ կառավարության նման որոշումների սահմանադրականության հարցի քննարկման անհրաժեշտության վրա, Պաշտպանը դիմել է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի նախագահ Հ. Դանիելյանին՝ քաղաքացիների անշարժ գույքի հարկադիր օտարմանը վերաբերող վեճերով դատական պրակտիկան ամփոփելու, տեղ գտած բացթողումները վեր հանելու և նման հարցերով դատարաններին անհրաժեշտ պարզաբանումներ տալու առաջարկով: Դատարանների նախագահների խորհուրդը՝ նորանշանակ նախագահ Հ. Մանուկյանի գլխավորությամբ, սեպտեմբերին որոշում է կայացրել հարցն ուսումնասիրելու և քննարկելու վերաբերյալ, սակայն մինչև տարեվերջ հարցի քննարկման վերաբերյալ որևէ տեղեկություն չի ստացվել:

Հոկտեմբերին, Պաշտպանը ՀՀ նախագահին նամակ է ուղղել ՀՀ կառավարության նշված որոշումների սահմանադրականության հարցը Սահմանադրական դատարան ներկայացնելու ակնկալիքով: ՀՀ նախագահի իրավաբանական ծառայությունից ստացվել է պատասխան այն մասին, որ հիմքեր չկան կառավարության այդ որոշումների սահմանադրականությունը վիճարկելու համար:

Ավելին, հղում կատարելով Սահմանադրության հոդված 5-ի 2-րդ պարբերությանը, այն է՝ «պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով», ՀՀ նախագահի իրավաբանական ծառայությունն իր պատասխանում նշել է, որ՝ **Մարդու իրավունքների պաշտպանն իրավասու չէ ՀՀ նախագահին ներկայացնել նման առաջարկ:**

ՀՀ նախագահի իրավաբանական ծառայության կողմից օրենքի «յուրօրինակ» մեկնաբանությամբ **ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին «արգելվում» է ՀՀ նախագահի ուշադրությունը հրավիրել** իրավական ակտով մարդու իրավունքների սահմանափակումների անհիմն կամ հակասահմանադրական լինելու վրա:

Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո, Պաշտպանն իրավունք է ստացել մարդու իրավունքները խախտող իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու առնչությամբ դիմելու Սահմանադրական դատարան: Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացմանը վերաբերող ՀՀ կառավարության որոշումների սահմանադրականությունը որոշելու նպատակով Պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան. վերջինս ղեկտեմբերին որոշում է կայացրել դիմումը քննարկման ընդունելու մասին:

Քաղաքացիների սեփականության հարկադիր օտարման գործընթացով խախտված իրավունքների վերականգնման նպատակով Պաշտպանն օգտագործել է օրենքով ընձեռած բոլոր հնարավորությունները:

3.11. Կոռուպցիան որպես մարդու իրավունքների կոպիտ խախտում

Միջազգայնորեն ընդունված է կոռուպցիան սահմանել որպես՝ պաշտոնատար անձի կողմից անձնական շահերից դրդված պաշտոնական դիրքի չարաշահում: Կոռուպցիայի ցանկացած դրսևորում քրեորեն պատժելի է: ՀՀ քրեական օրենսգիրքը 308 և 311-314 հոդվածներով պատասխանատվություն է սահմանում համապատասխանաբար պաշտոնական դիրքի չարաշահման, կաշառք ստանալու, կաշառք տալու, կաշառքի միջնորդության, պաշտոնեական կեղծիքի համար: Քրեորեն պատժելի հանցագործություն հանդիսանալուց բացի, կոռուպցիան նաև մարդու իրավունքների ուղիղ և կոպիտ ոտնահարում է:

Մարդ անհատն իրավունք ունի ապրելու այնպիսի հասարակությունում, որը կառավարվում է արդարության և ազնվության սկզբունքներով: Արդարությունը և ազնվությունը ենթադրում են՝ հավասարություն օրենքի առջև և օրենքով ամրագրված իրավունքներից անարգել օգտվելու հնարավորություն, մարդ անհատի արժանապատվության նկատմամբ հարգանք և այդ արժանապատվության պաշտպանվածություն:

Մարդու արժանապատվությունը, որպես նրա իրավունքների և ազատությունների ամբողջություն, նվաստացվում, ոտնահարվում է այնտեղ, որտեղ տեղ ունի կոռուպցիան՝ իր ցանկացած դրսևորմամբ:

Կոռուպցիան, որը սահմանվում է որպես անձնական կամ այլ շահադիտական նպատակներով պաշտոնեական դիրքի չարաշահում, մշտապես տեղի է ունենում ի վնաս մարդու իրավունքների: Եթե «վերևների» կոռուպցիան (քաղաքական, այսպես կոչված՝ «մեծ», կոռուպցիան) իրականացվում է ի հաշիվ հասարակական շահերի, և անհատի շահը, անհատի իրավունքը խախտվում են անուղղակի ճանապարհով, ապա ներքևների կոռուպցիան անմիջականորեն առնչվում է անհատի կամ անհատների խմբի իրավունքներին և ազատություններին:

Հանրահայտ է, որ բյուրոկրատիզմը, քաշքշուկը, օրենքով, իրավական ակտով ամրագրված նորմի անորոշությունը, երկիմաստությունը, նաև երկրնտրանքը կոռուպցիոն նպատակների իրականացման հիմք և նախապայման են: Պետական մարմիններում վատ վարչարարությունը, բյուրոկրատիզմն ու քաշքշուկը վիրավորում, նվաստացնում են իրավունք հայցող մարդ անհատի արժանապատվությունը, ինչը վերականգնելու և պաշտպանելու նպատակով նա հարկադրված է լինում կատարել անօրինական վճարումներ (եթե ի վիճակի է):

Առանձնահատուկ պետք է նշել, որ ընդունվում են խիստ կանխատեսելի կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենքներ և այլ իրավական ակտեր, ինչը կոռուպցիայի համակարգային բնույթի հիմնական պատճառներից է:

Կոռուպցիան հանրային սպասարկման ոլորտում առավել մեծ տարածում ունի և առնչվում է ավելի մեծ թվով քաղաքացիների իրավունքներին ու շահերին: Երբ պատշաճ ծառայություն ստանալու համար պարտադիր են լրացուցիչ անօրինական վճարումները, նման ծառայություն ստանալն անհասանելի է դառնում նյութապես անապահով խավին, որով արմատանում և խորանում է սոցիալական անհավասարությունը, խախտվում է սոցիալական արդարությունը:

ՀՀ կառավարության հաստատած հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրով ճիշտ է արձանագրված, որ հանրային սպասարկման ոլորտում անօրինական վճարներ զանձվում են հիմնականում մատուցվող ծառայությունների դիմաց վճարի անվան տակ: Վճարովի ծառայություն են անվանում նաև այնպիսի ծառայությունները, որոնց մատուցման համար սահմանված է պետական տուրք և տուրք վճարողը ծառայությունը պետք է ստանա առանց լրացուցիչ վճարի:

Օրինակ՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ի երկինաստ ձևակերպումները հնարավորություն են տվել նոտարներին պետական տուրքից դուրս գանձումներ կատարել իրենց ցանկացած գործողության համար որպես վարձատրություն ծառայության մատուցման համար: Սովորական լիազորագիր հաստատելու համար սահմանված է պետական տուրքի չափը, այդ լիազորագիրը հաստատելու համար նոտարները գանձում են նաև ծառայության վճար, բացի այդ լիազորագիրը պատրաստողին ևս վճար է տրվում:

Նոտարական գործողությունների համար, համաձայն «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ի մաս 2-ի, նոտարը գանձում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով: Նույն հոդվածի մաս 3-ով սահմանվում է, որ նոտարը մատուցում է նաև վճարովի ծառայություններ, և թվարկվում են այդ ծառայությունները, ինչից ենթադրվում է, որ այն ծառայությունները, որոնց մատուցման համար տուրք է նախատեսված, մատուցվում են առանց ծառայության դիմաց վճարումների: Մակայն հոդվածի մաս 3-ի 2-րդ պարբերությունը մեկ այլ սկզբունք է սահմանում է, որ օրենքի հոդված 36-ով նախատեսված նոտարական գործողությունների իրականացման համար գանձվում է նաև վճար նոտարի կողմից մատուցվող ծառայությունների համար՝ նոտարի սահմանած կարգով և ժամկետներում:

Հոդված 36-ով սահմանված են նոտարական այն գործողությունները, որոնց համար պետական տուրք է գանձվում, և որոնք, հետևաբար չեն կարող հավասարեցվել մնացած վճարովի ծառայություններին՝ խորհրդատվություն, փաստաթղթի կազմում և այլն: Այս դրույթը մեկնաբանված է հոգուտ նոտարի և լայնորեն օգտագործվում է կամայական գանձումներ կատարելիս: Այդ գանձումները հիմնականում որևէ տեղ ցույց չեն տրվում և չեն հարկվում:

Այդ ամենին զուգահեռ թիվ 1 նոտարական գրասենյակում, որի մենաշնորհն է ժառանգության վկայականի տրամադրումը, կարելի է տեսնել, թե խնդրատուների ինչպիսի հերթեր են առաջանում: Այստեղ խոսք չի կարող լինել մարդու արժանապատվության ապահովման մասին, և յուրաքանչյուրը, ով հարկադրված է հերթերում սպասել նոտարի խորհրդականի, մեքենագրուհու, ապա նաև հենց նոտարի մոտ մտնելու համար, պատրաստ է ցանկացած վճարում կատարել նման վիճակից հնարավորինս շուտ դուրս գալու համար:

Ծառայությունների մատուցման անվան տակ անօրինական գանձումները հատկանշական են և այլ ոլորտների համար:

- Այսպես, օրինակ, կադաստրի մարմինների կողմից գույքի նկատմամբ իրավունքների գրանցումը հաճախ մերժվում է զանազան ձևական հիմքերով: Դրան զուգահեռ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման բացակայության մասին տեղեկանք տրամադրելիս, անհիմն պարտադրվում է անշարժ գույքի լրացուցիչ զննում, ինչն իրականացվում է որպես վճարովի ծառայություն, այսինքն՝ դիմորդից գանձվում է լրացուցիչ գումար:

- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում փաստաթղթերի կրկնօրինակներ տրամադրելու, տրված փաստաթղթում տեղ գտած ուղղումը կատարելու և այլ գործողությունների համար ստեղծվում են արհեստական արգելքներ, տրվում են անհիմն մերժումներ, և դիմորդը հարկադրված է լինում գնալ անօրինական վճարումների:

- Բնակարանների գազաֆիկացման գործընթացը կոռուպցիայի բացահայտ և տեսանելի օրինակ է: Թույլատվություններ տվող, նախագծող և մոնտաժող կազմակերպություններից յուրաքանչյուրը թելադրում է իր կամքը, ցուցաբերում է իր կամայական մոտեցումը և կարողանում է բնակչից ստանալ իր ակնկալիքը:

Մոնոստող կազմակերպությունները խողովակներն իրացրել և իրացնում են ինքնարժեքը մի քանի անգամ գերազանցող գնով՝ դարձյալ ծառայությունների մատուցման անվան տակ: Նույն անվան տակ, որ իբր սպասարկում են իրականացնելու բնակարանում տեղադրված գազօգտագործման յուրաքանչյուր կետի համար առանձին, զազամատակարարը սահմանել է ծառայությունների դիմաց պարտադիր վճար՝ անկախ ծառայության մատուցումից:

Առանձին քննարկման թեմա է **կոռուպցիան դայրոցներում**, որտեղ զանգվածաբար խախտվում է անվճար տարրական կրթություն ստանալու իրավունքը: Տարածում ունի հատկապես արտադասարանային լրացուցիչ պարապմունքներ անցկացնելու անվան տակ ծնողներից գումարներ ստանալը, նվերների անվան տակ տնօրենին, դասուցելին, ուսուցիչներին վճարումներ կատարելը: Դա ոչ միայն հարվածում է ծնողների գրպանին, այլև աճող սերնդի համար կոռուպցիան դառնում է սովորական և ընդունելի երևույթ:

Առողջապահության ոլորտում կոռուպցիայի ամենատարածված դրսևորումներից են ծառայությունների դիմաց անօրինական և հարկադիր բնույթ կրող վճարումները. նույնիսկ անվճար բուժում ստանալու իրավունք ունեցողը չի դիմում բժշկի կամ բուժհաստատություն, եթե չունի որոշակի գումար: Ստացիոնար բուժման համար հիվանդը հարկադրված է բուժող բժշկից բացի վճարել նաև ողջ սպասարկող անձնակազմին:

Բարվոք չէ վիճակը նաև հանրային սպասարկման այլ ոլորտներում: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության ծրագրերով նախատեսված են և իրականացվում են միջոցառումներ, որոնք կարող են և պետք է բերեն դրական տեղաշարժի:

Իրավապահ մարմինները՝ ոստիկանություն, ազգային անվտանգության ծառայություն, դատախազություն, և **դատարանները**, կոչված լինելով ապահովելու մարդու իրավունքների և ազատությունների պահպանությունն ու պաշտպանությունը, առավել քան ենթակա են կոռուպցիոն ռիսկերի: Մի դեպքում պատասխանատվությունից խուսափելու նպատակով հանցավորն է խրախուսում պաշտոնյայի շահամոլությունը, մեկ ուրիշ դեպքում կոռումպացված պաշտոնյան անձի իրավունքի ապօրինի սահմանափակմամբ՝ ապօրինի բերման ենթարկելու, անազատության պայմաններում ապօրինի պահելու, մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելու և նման այլ ճանապարհներով, հասնում է իր կոռուպցիոն նպատակներին:

Իրավապահ մարմինների համակարգային կառուցվածքն այնպիսին է, որ թվում է, թե ապահովված է փոխադարձ վերահսկողությունը՝ հետաքննական մարմնի գործողությունները կարող են վերստուգվել և վերահսկվել նախաքննական մարմնի կողմից, դատախազությունն ինքնուրույն վերահսկող մարմին է հետաքննության և նախաքննության նկատմամբ: Դատարանները, որպես գործադիր իշխանության նշված մարմիններից անկախ մարմիններ, կոչված են ապացույցները ստուգելու և վերջնական գնահատականների միջոցով իրականացնելու արդար և անաչառ դատավարության անփոխարինելի գործառույթը: Այս պայմաններում կոռուպցիան, կարծես, տեղ չպետք է ունենար, իսկ տեղ ունենալու դեպքում էլ՝ հեշտությամբ ի հայտ բերվեր:

Այլ է իրականությունը: Հետաքննությունն ու նախաքննությունն իրականացվում են նույն կառույցի, նույն գերատեսչության տարբեր ստորաբաժանումների կողմից, և երբ ոստիկանության քննչական մարմինը բախվում է ոստիկանության հետաքննիչի խախտումներին, նաև կոռուպցիային, գերատեսչական շահը խանգարում է դրանք բացահայտելուն:

Դատախազությունը հակված է շրջանցելու և հնարավորության դեպքում քողարկելու ոստիկանության մարմիններում տեղ գտած խախտումները՝ օրինականությունը զոհաբերելով համակարգային, հաճախ նաև՝ ուղղակի անձնական շահին: Դատարանները ձեռնպահ են մնում քրեական հետապնդման մարմինների խախտումները վերհանելուց, ինչը գործադիրից՝ հատկապես դատախազությունից, դատական համակարգի կախվածության հետևանք է:

Հետաքննության և նախաքննության որակի բարելավումը, այդ մարմիններում քրեական գործերով անցնող անձանց իրավունքների ապօրինի սահմանափակումները,

դատավարական կոպիտ խախտումները կարող են տեղ չունենալ, եթե դատարաններն անհանդուրժող լինեն նման երևույթների նկատմամբ, եթե ապահովված լինի արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքը:

Սահմանադրական փոփոխություններով դատական համակարգի վերաբերյալ առաջարկվող փոփոխությունները կոչված են առաջընթաց ապահովել հատկապես կոռուպցիոն ռիսկերի կրճատման առումով, թեև որոշ վերլուծաբանների գնահատականներով այդ փոփոխությունները թերի են և չեն կարող ապահովել դատարանների անկախությունը, որը ոչ թե ինքնանպատակ է, այլ արդար դատավարության երաշխիք է հանդիսանում: Հաշվի առնելով դատարանների բացառիկ դերակատարումը կոռուպցիայի դեմ պայքարում, անհրաժեշտ են այնպիսի հակակոռուպցիոն միջոցառումներ, որոնք կոռուպցիոն ռիսկերը դատական համակարգում կհասցնեն նվազագույնի: Այդպիսի միջոցառումների թվին են պատկանում նախադեպային իրավունքի ներդրումը կամ միևնույն օրենքի տարատեսակ մեկնաբանությունները բացառող մեխանիզմի ստեղծումը, օրենսդրական փոփոխություններով փաստաբանության ծառայության կայացմանը նպաստելը, դատավորների նշանակման, լիազորությունների դադարեցման, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու և պաշտոնական առաջխաղացման կարգի խորքային փոփոխությունները, դատավորների միջև գործերի բաշխման պայմանների և կարգի օրենսդրական սահմանումը, դատավորների և դատարանների մյուս աշխատակիցների աշխատավարձերի բարձրացումը, ինչպես նաև քննության հետ կապված ծախսերի հատուցումը, դատավորներին հետ կանչելու ժողովրդավարական արդյունավետ կարգի սահմանումը*, և, վերջապես, լայնածավալ աշխատանքները՝ ուղղված ոլորտում լայն հասարակության իրազեկվածության բարձրացմանը, ինչպես նաև պետության հաշվին անվճար իրավաբանական օգնության տրամադրումը:

Օրենքով նախատեսված իրավունքի իրականացման անհիմն մերժումը տեղ ունի նաև **տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններում:**

Հողային օրենսգրքով համայնքին պատկանող հողերի օտարման թույլատրելիությունը հստակեցված չլինելու պատճառով հնարավոր է դարձել համայնքապետերի կողմից ցանկացած տարածք ձևական աճուրդներով կամ մրցույթներով օտարելը: Օրինակ՝ վարձակալման ժամկետը լրացած չլինելու պայմաններում համայնքի բնակչի վարձակալած տարածքը գյուղապետի կողմից դրվել է աճուրդով վաճառքի միայն այն պատճառով, որ վարձակալի հետ անձնական հարաբերությունները լարված են, կամ համայնքի բնակչին մերժվել է տարածքը վարձակալության տրամադրելու հարցում, սակայն նույն տարածքը տրամադրվել է վարձակալության համայնքի հետ կապ չունեցող անձի և այն էլ ձևական մրցույթով: Այս պայմաններում ենթադրվում է կոռուպցիայի առկայությունը, ինչի բացահայտումը իրավապահ մարմինների խնդիրն է: Համայնքի կառավարման մարմնի կոռումպացվածության արդյունքում է, որ համայնքի բնակիչները հայտնվում են տնտեսավարման անհավասար պայմաններում:

Երևանում մեծ թիվ են կազմում դժգոհությունները հողահատկացման, շինարությունների թույլտվությունների տրամադրման, ինքնական կառույցների օրինականացման և նման բնույթի այլ իրավունքների տրամադրման հարցերում տեղ գտած խտրական մոտեցումներից: Նման արատավոր պրակտիկան օրեցօր տարածվում է նաև այլ բնակավայրերի վրա:

* Տե՛ս՝ ՀՀ գործող օրենքներում կոռուպցիա ծնող նորմերի վերլուծություն, Ա. Տոնապետյան, Հ. Ալումյան, Ա. Գրիգորյան, Ահաբեկչության դեմ պայքարի աջակցության կենտրոն, Երևան 2005:

Պաշտպանին տրված բողոքներում ոչ թե ուղղակի խոսվում է կոռուպցիա համարվող փաստի, այլ իրավունքի տրամադրումը մերժելու, իրավունքը սահմանափակելու, բյուրոկրատիզմի և քաշքշուկի մասին: Նման բողոքներով կարելի է իրավունքը խախտող պաշտոնատար անձի գործողությունները ենթադրաբար կապել կոռուպցիոն նպատակների հետապնդման հետ, ինչը սակայն մնում է անապացուցելի:

Պաշտպանի կողմից այդպիսի բողոքները քննարկվում են վատ վարչարություն, խտրականության կիրառում, օրենքի պահանջի անտեսում կամ օրենքի սխալ կիրառում և նման այլ «հատկանիշների» հիման վրա:

Եթե պարզվում է, որ պաշտոնատար անձի կամ մարմնի գործողությունը կամ անգործությունը, որով խախտվել է մարդու իրավունքը, տեղի է ունեցել որոշակի դիտավորությամբ, Պաշտպանը համապատասխան պաշտոնատար անձին, մարմնի ղեկավարին համապատասխան տույժի ենթարկելու հարց է բարձրացնում:

Եթե դիմումատուն խոսում է կոռուպցիայի մասին և պատրաստ է հանդես գալ հայտարարությամբ, ներկայացնել իր տվյալները, ապա նրա համաձայնության դեպքում Պաշտպանը դիմումը և իր ձեռք բերած տվյալները փոխանցում է դատախազություն՝ նկատի ունենալով, որ այս կամ այն հանցագործության վերաբերյալ Պաշտպանը չի կարող և հնարավորություն չունի քննություն իրականացնել: Պաշտպանն ըստ օրենքի պարտավոր է և հսկողություն է իրականացնում իր փոխանցած բողոքի քննության նկատմամբ:

Դիմում-բողոքները, որոնցով ենթադրվում է կոռուպցիոն նպատակների առկայություն, հնարավորություն են տալիս անդրադառնալու կոնկրետ խնդիրը կամ խնդիրները կարգավորող իրավական ակտերին, դրանցում վեր հանել այն բացերը, թերությունները, որոնք առաջ են բերում կոռուպցիոն ռիսկեր: Նման ուսումնասիրությունների արդյունքում է, որ Պաշտպանը մասնակցում է օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններին՝ պատգամավորների, խմբակցությունների, նաև կառավարությունում հարց բարձրացնելու միջոցով:

ՀՀ Մարդու իրավունքների առաջին պաշտպանը գտնում է, որ պայքարը կոռուպցիայի դեմ, պայքար է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, իրական ժողովրդավարության հաստատման համար, հետևաբար նա ակտիվորեն աջակցում է բոլոր կառույցներին, որոնք պայքարում են կոռուպցիայի դեմ օրենքով սահմանված կարգով:

Խոցելի և հատուկ խմբերը, ինչպիսիք են՝ հատուկ կարիքներով անձինք, երեխաները, ազգային փոքրամասնությունները, կանայք, զինված բախման արդյունքում տուժած անձինք՝ փախստականները, բռնի տեղահանվածները, պատանդները, ռազմագերիները, անհայտ կորածները, հաշմանդամ դարձած ազատամարտիկները և նրանց ընտանիքների անդամները, զոհված ազատամարտիկների ընտանիքները, միայնակ, տարեց և սեփական իրավունքները պաշտպանելու անկարող մարդիկ, վերասոցիալիզացման կարիք ունեցող նախկինում ազատագրված անձինք, հոգեկան հիվանդությամբ տառապող անձինք, աղետներից տուժած անձինք, բռնադատված անձինք, ինչպես նաև որոշակի բնակության վայրից զուրկ՝ անտուն, մարդկանց, հասարակության այլ խմբերից առավել են զգում պետության հոգածության և պաշտպանության կարիքը:

Փախստականների, կանանց, երեխաների և հատուկ կարիքներով անձանց հիմնախնդիրներին մանրամասն անդրադարձ է կատարվել Պաշտպանի 2004թ. տարեկան զեկույցում, սակայն, ցավոք, դրանք մնում են չլուծված, իսկ Պաշտպանի առաջարկությունները* համապատասխան բարեփոխումների անհրաժեշտության վերաբերյալ՝ անտեսված: Այստեղ անդրադարձ է արվում Ադրբեջանից փախստականների, հատուկ կարիքներով անձանց, խորհրդային ժամանակաշրջանում բռնադատվածների, չեռնոբիլյան աղետից տուժածների, երեխաների և ազգային փոքրամասնությունների կարևորագույն խնդիրներին:

4.1. Փախստականներ

1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց գույքի վերադարձման, փոխհատուցման և հայրենադարձման հիմնախնդիրները մնում են չլուծված. անձանց այս մեծաթիվ կատեգորիան անգամ ճանաչված չէ, որպես Ադրբեջանի կողմից հրահրված Ղարաբաղյան հակամարտության հիմնական զոհ: Փախստականների այս կարևորագույն հիմնախնդրի կողքին են նաև մի շարք օրհասական խնդիրներ, որոնց թվում են նաև սոցիալականները:

Թեև «Փախստականների մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ով սահմանվել է, որ պետական համապատասխան մարմինները իրենց իրավասությունների շրջանակներում օժանդակում են փախստականներին ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հարցում, այնուամենայնիվ, այս ոլորտում ևս առկա են որոշակի խնդիրներ: Մասնավորապես, **փախստականներին հաճախ մերժվում է ՀՀ անձնագրի տրամադրումը՝ հաշվառման վայր չունենալու պատճառաբանությամբ:** Հաշվի առնելով փախստականների բնակարանային ապահովման ցածր մակարդակը՝ նման մոտեցումը փախստականների ինտեգրման գործընթացում կարող է լուրջ խոչընդոտներ առաջ բերել: Բացի այդ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն անձնագիր ստանալու և հաշվառվելու համար **սահմանված է պետական տուրք՝ յուրաքանչյուր գործողության համար** բազային տուրքի չափով, ինչը, հաշվի առնելով Հայաստանում բնակվող փախստականների ծանր սոցիալական դրությունը, կարող է հանգեցնել ՀՀ **քաղաքացիություն ձեռք բերելու ընթացակարգի բարդացմանը:**

* Տե՛ս՝ 2004թ. ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույց:

Ըստ ՀՀ կառավարության թիվ 747-Ն որոշման՝ **Ժամանակավոր կացարաններում առաջնահերթ բնակարանի կարիքավոր են** համարվում 3470 մարդ, որոնք հաշվառվել են ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների հարցերով վարչության (ՄՓՎ) կողմից մինչև 2003թ. օգոստոսի 1-ը:

Այդ ընտանիքներն ընդգրկված են **ՀՀ կառավարության 20.05.2004թ. «1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մասին» թիվ 747-Ն որոշմամբ** հաստատված շահառուների ցուցակում:

Որոշման համաձայն՝ բացի սահմանված ընդհանուր պայմաններից ծրագրի շահառուների ընտրության չափանիշ է համարվում 2003թ. օգոստոսի 1-ի դրությամբ **Ժամանակավոր կացարաններում և վազոն-տնակներում փախստական ընտանիքների փաստացի բնակությունը:**

Այնուամենայնիվ, Պաշտպանը 2005թ. ընթացքում փախստականներից ստացել է **զգալի թվով դիմումներ՝ նշված ծրագրում ընդգրկված չլինելու վերաբերյալ:**

Դիտարկումները ցույց են տվել, որ միգրացիայի և փախստականների հարցերով վարչությունը, առանց անհրաժեշտ ուսումնասիրություններ կատարելու, բոլորովին անհիմն կերպով բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրում չի ընդգրկել մեծ թվով փախստական ընտանիքների:

Կառավարության որոշմամբ սահմանված ժամանակահատվածում ՄՓՎ աշխատակիցների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները հիմնված չեն փախստականների փաստացի բնակության բազմակողմանի ուսումնասիրության վրա: Սահմանված չէ նաև բնակության վայրից փախստականի փաստացի բացակայությունը հաստատելու համար անհրաժեշտ ժամանակահատվածի չափը, որի արդյունքում վերջինս չի ընդգրկվում ծրագրի շահառուների ցուցակում:

Միաժամանակ, ժամանակավոր կացարաններում և վազոն-տնակներում փախստական ընտանիքների **փաստացի բնակությունը** միգրացիայի և փախստականների վարչության կողմից **ստուգելու մեխանիզմները սահմանված չեն որևէ նորմատիվ ակտով**, ինչն առաջնահերթ խնդիր է:

2005թ. ընթացքում Պաշտպանը ստացել է **մեծ թվով բողոքներ**, որոնք կապված են **բնակարանների գնման վկայագրերի՝ ՀՀ անշարժ գույքի շուկայում ներկայումս ձևավորված գների անհամապատասխանության հետ:** Մասնավորապես դիմումատուները դժգոհում են, որ **հնարավորություն չունեն նույն վարչական տարածքում համապատասխան բնակարաններ գնել:** ՀՀ կառավարության 20.05.2004թ. թիվ 747-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն բնակարանի գնման վկայագրի արժեքը սահմանվել է տվյալ տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների ձևավորված շուկայական միջին գնին համարժեք՝ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2003թ. առաջին 9 ամսվա միջինացված տվյալներով, 1 ք/մ հաշվարկով: Ընդ որում, Երևանում որպես հաշվարկի հիմք է ընդունվել Ավան թաղային համայնքում ձևավորված գինը՝ 1 ք/մ՝ 125 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Նույն մասի 5-րդ կետը սահմանում է, որ 2-րդ կետում նշված տվյալները ծրագրի իրականացման ընթացքում ենթակա են ճշտման՝ ելնելով ծրագրի իրականացմանը նախորդող եռամսյակի ընթացքում ձևավորված բնակարանների շուկայական միջին գներից: ՀՀ կառավարության 24.02.2005թ. թիվ 309 որոշմամբ սահմանված կարգի 9-րդ կետով նշված է, որ վկայագրում նշվող աջակցության չափը որոշվում է սույն կետով սահմանված նորմաներով աջակցություն ստանալու իրավունք ունեցող անձի ընտանիքին (անձանց թվով) հասանելիք բնակարանի (սենյակների թվով) տվյալ բնակավայրում 2005թ. մայիսի 1-ի դրությամբ ձևավորված շուկայական միջինացված արժեքից:

Անշարժ գույքի շուկայում փաստացի ձևավորված գների և տրամադրվող դրամական աջակցության չափերի անհամապատասխանության արդյունքում Ադրբեջանից բռնագաղթված բազմաթիվ փախստական ընտանիքներ կարող են մնալ անօրևան:

Չնայած ՀՀ կառավարության կողմից 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց նկատմամբ որդեգրած ինտեգրման քաղաքականությանը, օրենսդրական հստակ կարգավորման բացակայության հետևանքով, պրակտիկայում **կոպտորեն ոտնահարվում են այն փախստականների իրավունքները, որոնք ձեռք են բերել ՀՀ քաղաքացիություն:**

Օրինակ 88. Երևան քաղաքի Ամառանոցային 123 շենքում բնակվող ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած նախկին փախստականներին շենքից վտարելու վերաբերյալ դատարանի վճիռով որոշվել է վտարել ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած նախկին փախստական ընտանիքներին՝ առանց այլ բնակելի տարածք հատկացնելու:

Փախստականի կարգավիճակ ունեցող անձանց վերաբերյալ նույնպես վտարման վճիռ է կայացվել, սակայն միգրացիայի և փախստականների վարչությանը պարտավորեցվել է նրանց հատկացնել համապատասխան կացարան: **Արդյունքում, շենքի բնակիչներից մեկը՝ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած նախկին փախստականը, մնացել է անօրևան:**

Հարկ է անդրադառնալ նաև պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի օտարման ընթացքում փախստականների հանդեպ թույլ տրվող իրավախախտումներին:

Օրինակ 89. ՀՀ կառավարության 21.04.2005թ. թիվ 590-Ն որոշմամբ Սարալանջի փողոցին և Երիտասարդության պալատին հարող տարածքը ընդգրկվել է պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի օտարման գոտում: Նշված տարածքում բնակվում են 6-ից ավելի փախստական ընտանիքներ, որոնք, ինչպես և մյուս փախստականները, փաստացի հաշվառված են համապատասխան հասցեներով:

Կառուցապատման ծրագրերի իրականացման ընթացքում խախտվել են նշված տարածքում բնակվող փախստականների իրավունքները՝ նրանք չեն ստացել փոխհատուցում կամ այլ կացարան, քանի որ խնդրի կարգավորմանը վերաբերող ՀՀ կառավարության որոշմամբ **հաշվի չի առնվել օտարվող տարածքներում փախստական ընտանիքների առկայությունը:** Փախստական ընտանիքները վտարվել են տարածքից:

Օտարման գոտում ներառված այլ տարածքներում բնակվող փախստականների նկատմամբ նույնպես նման իրավախախտումներ են արձանագրվել:

Երևանի Հյուսիսային պողոտայի և Երևան քաղաքի օտարման այլ գոտիներում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը գնելու, վերցնելու գնային առաջարկի ձևավորման և իրացման կարգը սահմանվում է ՀՀ կառավարության 05.10.2001թ. թիվ 950 որոշմամբ, որի 7-րդ կետի համաձայն՝ մինչև պետության կարիքների համար հողամասը վերցնելու մասին լիազորություն ունեցող պետական մարմնի որոշման հիման վրա պետական գրանցում ստանալու պահը, իրացվող բնակարաններում, այդ թվում՝ ինքնակամ կառույցներում հաշվառված անձանց և նրանց անչափահաս երեխաներին տրամադրվում է աջակցություն՝ որոշմամբ սահմանված չափով՝ հիմք ընդունելով հաշվառման փաստը հաստատող փաստաթուղթը: ՀՀ կառավարության թիվ 950 որոշումը **չի անդրադառնում օտարման գոտիներում տեղակայված բնակարաններում բնակվող փախստականներին, ինչպես նաև ՀՀ քաղաքացիություն ստացած նախկին փախստական ընտանիքներին:**

Ադրբեջանից 1988-1992թթ. բռնագաղթվածները բնակեցվել են մշտական կամ ժամանակավոր կացարաններում ՀՀ կառավարության մի շարք որոշումների հիման վրա՝ լիազորված մարմնի կողմից հաշվառվելով որպես փախստականներ: Բացի այդ, ոստիկանության տարածքային ստորաբաժանումներին կարգադրվել է ՀՀ տարածքում քաղաքացիների հաշվառման գործող կարգին համապատասխան կազմակերպել փախստականների, ըստ բնակության վայրի, հաշվառումը:

Փախստականներին, ինչպես նաև ՀՀ քաղաքացիություն ստացած նախկին փախստականներին վերաբերող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակավոր կացարաններում նրանց մշտապես բնակվելու իրավունքի օրինականությունը երբևէ չի վիճարկվել, այլ ընդհակառակն՝ մշտապես վերահաստատվել է տարբեր նորմատիվ իրավական ակտերով:

Որպես օրինակ, կարելի է նշել ՀՀ տարածքում քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին ՀՀ կառավարության 25.10.2000թ. թիվ 682 որոշումը, որով սահմանվել է քանդման ենթակա պետական և համայնքային բնակելի ֆոնդի սեփականատերերին, վարձակալներին և փախստականներին բնակարաններով ապահովելու՝ պետության պարտավորությունը:

ՀՀ կառավարության 05.10.2001թ. թիվ 950 որոշման մեջ իրացվող բնակարաններում բնակվող փախստականների իրավական պաշտպանության, մասնավորապես, համապատասխան փոխհատուցմամբ ապահովելու վերաբերյալ դրույթն ամրագրված չէ, այն դեպքում, երբ նրանց կողմից զբաղեցրած բնակարանների նկատմամբ բնակօգտագործման իրավունքի օրինականությունն անվիճելի է:

Օրինակ 90. Նորքի այգիներ 227 հասցեով գտնվող նախկին ՀԿԿ Կենտկոմի բարձրագույն դպրոցի շենքում բնակվող փախստականների՝ տասնյակից ավելի ընտանիքներ տեղավորվել են նշված հասցեով դեռևս 1988թ.:

Նրանց զգալի մասն արդեն ձեռք է բերել ՀՀ քաղաքացիություն: Դատարանով ճանաչվել է այս անձանց սեփականության իրավունքը զբաղեցրած բնակտարածքների նկատմամբ, ինչով լուծվում էր նրանց բնակարանային խնդիրը: Սակայն դատախազությունը գտել է, որ փախստականների բնակարանային խնդրի լուծմամբ խախտվել է պետության գույքային շահը, և առաջին ատյանի դատարանների վճիռները բողոքարկել է ՀՀ վճռաբեկ դատարան: **Փաստորեն, դատախազությունը փախստականների բնակկենցաղային խնդիրների լուծումը ստորադաս է համարում պետական գույքային շահի նկատմամբ:**

Դատախազությունը գտել է, որ այդ կառույցում փախստականները միայն ժամանակավոր բնակիչներ են, և որ անթույլատրելի էր այդտեղ նրանց սեփականատեր ճանաչելը: Վճռաբեկ դատարանը դատախազության մոտեցման հետ համաձայնվել է: Ի վերջո, «Շենքը ամրացնելու մասին» թիվ 1640-Ա որոշմամբ ՀՀ կառավարությունը ի կատար է ածել դեռևս 17.04.1991թ. թիվ 0301-1 որոշումը՝ Նորքի այգիներ 227 շենքը ամրացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը, և սահմանվել է, որ վարչությունը մեկ ամսվա ընթացքում պետք է ապահովի անշարժ գույքի կադաստրում իր սեփականության իրավունքի գրանցումը: Այդուհետ պետք է լուծվի շենքում բնակվող ընտանիքների սեփականության իրավունքի գրանցման հարցը: Սակայն դեռևս հարցն իր տրամաբանական ավարտին չի հասել, և լուծումը պարբերաբար հետաձգվում է:

Ծնողների կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում, նրանց 14-18 տարեկան երեխաների իրավական կարգավիճակը մինչ այժմ մնում է անորոշ: Դեռևս

Պաշտպանի 2004թ. տարեկան զեկույցում անդրադարձ է կատարվել այս հարցին: Մասնավորապես ընդգծվել է «Փախստականների մասին» և «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքների վերանայման անհրաժեշտությունը՝ եղած անորոշությունները և հակասությունները վերացնելու և փախստական երեխաների շահերի պաշտպանության վերաբերյալ դրույթներ ամրագրելու նպատակով*:

Պաշտպանի կողմից ներկայացված առաջարկությունները պատկան մարմինների կողմից չեն ստացել համարժեք արձագանք:

4.2. Հատուկ կարիքներով անձինք

Հայաստանում 2005թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվառված է շուրջ 135 հազար հատուկ կարիքներով անձ, այդ թվում՝ մոտ 8 հազար մինչև 18 տարեկան երեխաներ: Կանայք կազմում են ընդհանուր թվի շուրջ 40%-ը: Հատուկ կարիքներով անձանց թվից աշխատունակ տարիքի են (16-63 տարեկան) 55%-ը, այդ թվում աշխատանք ունեցողները՝ 8%-ը:

Հատուկ կարիքներով անձանց վերաբերող «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է հատուկ կարիքներով անձանց սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական և կազմակերպական հարցերը: Հատուկ կարիքներով անձանց իրավունքներ և երաշխիքներ ամրագրող դրույթներ են պարունակվում նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքում, «Բնակչության զբաղվածության մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Կրթության մասին» և «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքներում և մի շարք այլ իրավական ակտերում: Բացի այդ, 03.11.2005թ. ՀՀ կառավարությունն ընդունել է «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարություն»:

Սակայն հատուկ կարիքներով անձանց սոցիալական պաշտպանությանն առնչվող օրենսդրական ակտերի որոշ դրույթներ գործնականում չեն կիրառվում, կամ կիրառվում են ոչ լիարժեք՝ մեխանիզմների ոչ հստակ լինելու և չկիրառվելու դեպքում պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների բացակայության պատճառով, ինչպես, օրինակ, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի դեպքում:

Հատուկ կարիքներով անձանց վերաբերող օրենսդրական դրույթների համաձայն պետությունը երաշխավորում է նրանց որակյալ բուժօգնությունը պետական բյուջեի միջոցների հաշվին: Սակայն ներկայումս բավարար մակարդակի հասցված չեն այդ բուժօգնության կազմակերպումը և դեղորայքով ապահովումը: Իրականում **հատուկ կարիքներով անձանց** համար գրեթե անհնար է ստանալ որակյալ բուժօգնություն պետական պատվերի շրջանակներում:

* Տե՛ս՝ 2004թ. ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույց:

Հատուկ կարիքներով անձանց վերականգնումը իրականացվում է պետական պատվերի շրջանակում: Հանրապետությունում գործում են բժշկական վերականգնման տարբեր ուղղվածության ծառայություններ, սակայն վերականգնողական հիմնարկների տարանջատվածությունը թույլ չի տալիս իրականացնել վերականգնման համար անհրաժեշտ գործընթացների անընդհատությունը և բազմափուլությունը, այսինքն՝ բացակայում է վերականգնման միասնական համակարգը: Վերականգնողական ոլորտում բավարար չափով չի ուսումնասիրվում և ներդրվում միջազգային փորձը:

Հանրային նշանակություն ունեցող շենքերն ու շինությունները հարմարեցված չեն հատուկ կարիքներով անձանց համար, ինչի հետևանքով խոչընդոտվում են հատուկ կարիքներով երեխաների կրթությունը, հատուկ կարիքներով անձանց զբաղվածության ապահովումը, նրանց լիարժեք մասնակցությունը հասարակական, քաղաքական և մշակութային կյանքին:

Տեսողության խնդիրներ ունեցող անձինք ապահովված չեն դասագրքերով, գեղարվեստական գրքերով, թերթերով և ամսագրերով: Լսողության խնդիրներ ունեցող անձինք ապահովված չեն տեղեկատվություն ստանալու հնարավորությամբ, որը ներառում է հեռուստահաղորդումների սուրդոթարգմանություն և «վազող տող», հատուկ հեռախոսի տրամադրում և այլն:

Հատուկ կարիքներով անձանց երթևեկությունը ապահովելու համար չկա որևէ հարմարեցված փոխադրամիջոց, հատկապես, սայլակից օգտվող անձանց համար:

Իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ են համապատասխան օրենսդրական բարեփոխումներ: Այս իմաստով ուշագրավ է «Ունիտն» հասարակական կազմակերպության կողմից մշակված «Հաշմանդամների և սակավաշարժ այլ անձանց համար հասարակական նշանակության վայրերի և հասարակական տրանսպորտի մատչելիության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկայացվել է ԱԺ նախագահին առընթեր Հաշմանդամության խորհրդի նիստում: ԱԺ նախագահը դրական գնահատական է տվել փաստաթղթին և հանձնարարել է սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահին անհրաժեշտ լրամշակումներ կատարել:

Առաջին և երկրորդ խմբի հատուկ կարիքներով անձանց և մինչև 18 տարեկան հատուկ կարիքներով երեխայի կարգավիճակ ունեցողները ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնելու դեպքում ընդունվում են պետական բարձրագույն և միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման համակարգ:

Համաձայն «Կրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքների՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում, հատուկ ծրագրերով:

Ներկայումս իրավիճակը խիստ անբավարար է այն պատճառով, որ միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունները հարմարեցված չեն հատուկ կարիքներով անձանց համար, ինչպես նաև բացակայում են համապատասխան մասնագետները, վերոնշյալ իրավունքները կրում են ձևական բնույթ:

Հատուկ կարիքներով անձանց հավասար իրավունքների ապահովման գնահատման հիմնական չափանիշներից է զբաղվածության ցուցանիշը, որը Հայաստանում խիստ ցածր է, չնայած նրան, որ ՀՀ գործող օրենսդրությունը պարունակում է դրույթներ, որոնք կոչված են երաշխավորելու հատուկ կարիքներով անձանց աշխատանքի իրավունքի ապահովումը:

Մասնավորապես, «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքով սահմանված են հաշմանդամների զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրեր, աշխատանքի տեղավորման նպատակով մասնագիտական ուսուցման իրականացում, գործատուների մոտ առանձնացված ստորաբաժանումների հիմնում: Նշված ծրագրերը լիարժեք չափով չեն իրականացվում, քանի որ գործատուները առաջարկվող պայմաններով մեծ դժվարությամբ են համաձայնում հատուկ կարիքներով անձանց ընդունել աշխատանքի: Այս խնդիրը պահանջում է համակարգային լուծում:

«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսվել են աշխատաշուկայում խոցելի խմբերի մրցունակության բարձրացմանն ուղղված ծրագրեր հատուկ կարիքներով անձանց համար, մասնավորապես՝ աշխատավարձի փոխհատուցման և աշխատանքի տեղավորման աջակցության ծրագրեր: Նշված փոփոխությունները հնարավորություն կտան շահագրգռել գործատուին հատուկ կարիքներով անձանց աշխատանքի ընդունելու հարցում, ավելի մեծ թվով հատուկ կարիքներով անձանց ընդգրկել զբաղվածության ծրագրերում և բարձրացնել նշված ծրագրերի իրականացման արդյունավետությունը:

Այս ոլորտում հատուկ կարիքներով անձանց խնդիրներն են՝ աշխատանքային տարիքի աշխատունակ հատուկ կարիքներով անձանց աշխատանքի տեղավորման ցածր ցուցանիշը, զբաղվածության օրենսդրությամբ հատուկ կարիքներով անձանց տրվող երաշխիքների, իրավունքների և հատուկ կարիքներով անձանց աշխատանքի տեղավորելու դեպքում գործատուներին տրվող երաշխիքի մասին գործատուների տեղեկացվածության ոչ բավարար մակարդակը, հատուկ կարիքներով անձանց պահանջներին աշխատատեղերի հարմարեցված չլինելը, ինչպես նաև ոչ բավարար մասնագիտական ուսուցման և այնուհետև աշխատանքով ապահովման գործընթացը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ առաջին խմբի հատուկ կարիքներով անձանց, հատկապես սայլակ օգտագործող և տեսողության խնդիրներով անձանց համար պետք է ներդնել օգնականի հաստատություն:

Հատուկ կարիքներով անձանց սոցիալական պաշտպանությունը ներառում է կենսաթոշակային ապահովություն, սոցիալական սպասարկում և սոցիալական օգնություն: **Հատուկ կարիքներով անձանց ընտանիքները մեծապես մասամբ սոցիալապես անապահով են:** Կենսաթոշակների չափը ծայրահեղ ցածր է: Մարզերում հատուկ կարիքներով միայնակ անձանց տնային պայմաններում սոցիալական սպասարկման և խնամքի ծառայություններ գրեթե չկան: Հատուկ կարիքներով անձանց բնակարանային պայմաններն անբավարար են, և առկա է նրանց բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը:

Ստացվել են բազմաթիվ բողոքներ, որոնցում դիմումատուները բողոքում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի (ԲՄՓՀ) և դրա մարզային կառույցների կողմից հաշմանդամության խումբը որոշելու հետ կապված քաշքշուկներից և չարաշահումներից:

Օրինակ 91. Թիվ 1-0817 գործով քաղաքացին հայտնել է, որ 2002թ. իր թոռը գորակոչվել է բանակ, սակայն 2003թ. ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից ճանաչվել է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և զորացրվել:

Տավուշի մարզի ԲՄՓՀ-ի կողմից 2004թ. տրված տեղեկանքի համաձայն հաստատվել է հիվանդության պատճառական կապը զինվորական ծառայության հետ: Այդպիսով, համաձայն տրված քաղվածքի, քաղաքացին ճանաչվել է 3-րդ խմբի հաշմանդամ և զինվորական ծառայության համար ոչ պիտանի: Քաղաքացին իրեն

կենսաթոշակ տրամադրելու համար համապատասխան փաստաթղթերը ներկայացրել է Տավուշի մարզի տարածքային զինվորական կոմիսարիատ, սակայն որոշ ժամանակ անց փաստաթղթերը հետ են վերադարձվել՝ պատճառաբանությամբ, որ քաղաքացին ծառայության մեջ է եղել ՀՀ ներքին գործերում: Հետ վերադարձված փաստաթղթերը քաղաքացին ներկայացրել է Տավուշի մարզի ներքին գործերի բաժին, սակայն այնտեղ ևս մերժում է ստացել:

Ըստ Պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի (ԿՌԲՀ) 04.12.2003թ. տրված եզրակացության՝ հիվանդությունն ընդհանուր է և կապված չէ զինվորական ծառայության հետ:

Դիմումատուն նաև նշել է, որ նախքան գորակոչվելը քաղաքացին 4 անգամ ենթարկվել է ռազմաբժշկական ստուգման, և նրա մոտ որևէ հիվանդություն չի հայտնաբերվել: Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով հարցում է ուղղվել Պաշտպանության նախարարության ռազմաբժշկական հանձնաժողովի նախագահ Ա. Մինասյանին: Պատասխանում ասված է, որ ներքին գործերում ծառայած քաղաքացին փորձաքննվել է ԿՌԲՀ-ում 27.11.2003թ. զինվորական դատախազության որոշման համաձայն, որի արդյունքում տրվել է խորհրդատվական եզրակացություն ծառայության հետ նրա հիվանդության կապի և ծառայության պիտանելիության վերաբերյալ: Նշվել է նաև, որ քաղաքացու գորացրման և հիվանդության պատճառական կապի վերջնական եզրակացությունը գտնվում է ՀՀ ոստիկանության ներքին գործերի ռազմաբժշկական հանձնաժողովի իրավասության տակ: Հարցի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ստանալու նպատակով հարցում է ուղղվել ոստիկանության բժշկական հանձնաժողովի նախագահ Է. Մարկոսյանին: Վերջինս 20.12.2005թ. գրությամբ հայտնել է, որ ոստիկանության բժշկական հանձնաժողովում քաղաքացին փորձաքննության չի ենթարկվել, նրա հետագա ծառայության պիտանելիության հարցը չի քննարկվել, հետևաբար չեն որոշվել հիվանդությունները և նրանց պատճառական կապը ծառայության հետ:

Անհրաժեշտ է բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող չափորոշիչների հստակեցում, մատչելիության ապահովում, ինչպես նաև ժամանակակից փորձագիտական, վերականգնողական և սոցիալական տեխնոլոգիաների ներդրում:

Օրինակ 62.2. Երկրորդ խմբի հաշմանդամի հիվանդություն ունեցող դիմումատուն դիմել է Արմավիրի բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով հաշմանդամության երրորդ խումբը փոխելու և իրեն երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչելու խնդրանքով, սակայն մերժում է ստացել (**տե՛ս՝ Գլուխ 3, 3.9.5. Աշխատանքային խեղման դիմաց փոխհատուցման հարցեր, Օրինակ 62.1**):

Պաշտպանը դիմել է Արմավիրի բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի նախագահ Ա. Հմայակյանին պարզաբանումներ ստանալու խնդրանքով: Վերջինս պատասխանել է, որ համաձայն ՀՀ կառավարության թիվ 780 որոշման, հաշմանդամությունը ոչ թե տրամադրվում է դիմողի ցանկությամբ, այլ սահմանվում է բժշկասոցիալական փորձաքննությամբ: Ա. Հմայակյանի պնդմամբ, համաձայն 1989թ. բժշկական տվյալների՝ երբ դիմումատուն վերջին անգամ փորձաքննվել է, և ըստ ներկայումս գործող կարգի, հաշմանդամության 2-րդ խումբ սահմանելու հիմքեր չկան, և կայացված փորձաքննական որոշումը ճիշտ է: Ա. Հմայակյանը նաև հայտնել է, որ Պաշտպանին ուղարկված պատասխանի բովանդակությունը քննարկվել և համաձայնեցվել է ՀՀ բժշկասոցիալական փորձաքննական գործակալության պետ Մ. Վանյանի և պետի տեղակալ Ա. Միմոնյանի հետ:

Մարդու աշխատունակության կորստի չափը և դրանից բխող հաշմանդամության խումբը որոշելու հետ կապված հարցի վերաբերյալ առկա է իրավական կարգավորման կատարելագործման անհրաժեշտություն, մասնավորապես, բացակայում է դիմող կողմի ցանկությամբ այլընտրանքային բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու օրենքով սահմանված հնարավորությունը: Նման այլընտրանքային փորձաքննությունը

հնարավորություն կրնձեռեր պատասխանել, թե որքանով են հաշմանդամության խումբը որոշելու հետ կապված քաղաքացիների բողոքները հիմնավոր կամ անհիմն: Այսօր մենք միայն կարող ենք փաստել, որ առկա են բազմաթիվ բողոքներ, որոնք բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի պատասխանատուները հիմնավոր չեն համարում: Ի դեպ, այլընտրանքային բժշկասոցիալական փորձաքննությունը պետք է որ ցանկալի լինի նաև ՀՀ ԲՄՓՀ պատասխանատուների համար, քանի որ այն հնարավորություն կրնձեռի վերջիններիս գերծ մնալ ավելորդ ու անհիմն մեղադրանքներից:

Հատուկ կարիքներով անձանց բժշկասոցիալական փորձաքննության, բժշկական օգնության և սպասարկման, վերականգնողական աջակցության, հասարակական կյանքում մատչելիության ապահովման, կրթության, զբաղվածության և սոցիալական պաշտպանության ոլորտներում առկա մարդու իրավունքների պաշպանության խնդիրները ուսումնասիրվել են հատուկ կարիքներով անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ Պաշտպանի հանդիպում-քննարկումների ընթացքում:

Ցավոք, պետք է նշել, որ չնայած հատուկ կարիքներով անձանց խնդիրներով զբաղվող մասնագիտացված հասարակական կազմակերպությունների թե՛ ազգային և թե՛ միջազգային հեղինակությանը, այնուամենայնիվ նրանց ձայնն իշխանությունների կողմից չի արժանանում պատշաճ ուշադրության, իսկ պետության կողմից այս խոցելի խմբի լայն պաշպանվածության իրավունքները մնում են բարձիթողի վիճակում:

4.3. Բռնադատվածներ

2005թ. բռնադատվածների և նրանց առաջին հերթի ժառանգների կողմից Մարդու իրավունքների պաշպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վեր է հանում այս ոլորտի իրավական կարգավորման հետևյալ հիմնահարցերը:

Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող բռնադատվածներին և նրանց առաջին հերթի ժառանգներին բնակարանի կառուցման համար հողամաս տրամադրելու խնդիրը առայժմ մնում է չլուծված ՀՀ հողային օրենսգրքի հոդված 64-ով ամրագրված ժամկետային սահմանափակումը վերջնականապես վերացված չլինելու պատճառով:

«Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ի համաձայն՝ ՀՀ տարածքից բռնադատվածներին՝ իրենց նախկին բնակության վայրում, իսկ այլ հանրապետություններից բռնադատվածներին՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված բնակավայրերում, բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում, սեփականության իրավունքով տրամադրվում է սահմանված չափի հողատարածք բնակարանային անհատական շինարարության համար:

«Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքով բռնադատվածների և նրանց առաջին հերթի ժառանգների կողմից հողատարածք ստանալու իրավունքի իրականացումը չի սահմանափակվում որևէ ժամկետով: Սակայն նման սահմանափակում նախատեսվել է ՀՀ հողային օրենսգրքի հոդված 64-ի կետ 5-ով, համաձայն որի պետության սեփականություն հանդիսացող հողամասերի անհատույց տրամադրման ժամկետը նշված հոդվածի կետ 1-ով սահմանված դեպքերում երկու տարի է: Հետևաբար, բռնադատվածների և նրանց առաջին հերթի ժառանգներին պետության սեփականություն հանդիսացող հողատարածքները կարող էին անհատույց տրամադրվել մինչև 01.04.2004թ.:

Բռնադատվածների և նրանց առաջին հերթի ժառանգների կողմից օրենքով սահմանված կարգով հողատարածք ստանալու իրավունքի ժամկետային սահմանափակումը հիմնավորված չէ և հանգեցնում է նրանցից շատերի իրավունքների իրականացման անհնարինությանը: Դիմումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձինք և նրանց առաջին հերթի ժառանգները հաճախ օբյեկտիվ պատճառներով սահմանված ժամկետում չեն կարողացել օգտվել օրենքով սահմանված արտոնություններից: ՀՀ հողային օրենսգրքի հոդված 64-ի կետ 5-ով նախատեսված ժամկետը լրանալու հիմքով նրանց դիմումները մերժվում են:

Հետևաբար, ՀՀ հողային օրենսգրքի հոդված 64-ի 5-րդ կետով սահմանված երկամյա ժամկետի կիրառումը պետք է հանել, և բռնադատվածներին և նրանց առաջին հերթի ժառանգներին հողատարածքների տրամադրումը կատարել առանց ժամկետի սահմանափակման:

Մնում է չլուծված բռնադատվածներին և նրանց առաջին հերթի ժառանգներին բնակարանային շինարարության նպատակներով արտոնյալ վարկ տրամադրելու հարցը: Այդ վարկի տրամադրումն օրենքի իմաստով պարտադիր է, եթե հիմնավորված է հայտատուի պահանջը: Սակայն նման հայտերի բավարարումը աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունը պայմանավորում է բյուջեից տվյալ նպատակների համար ֆինանսական միջոցների հատկացմամբ, և հայտատուները տարիներով մնում են հերթագրված: **Նման վարկ ստանալու հնարավորություն նրանք կարող են ունենալ այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունն արդեն վերացել է:**

«Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ով, ինչպես նաև ՀՀ կառավարության 20.07.2000թ. «Բռնադատվածների կամ նրանց առաջին հերթի ժառանգների կողմից բնակարանային անհատական շինարարության նպատակով կամ անավարտ բնակելի տան շինարարությունն ավարտին հասցնելու, ինչպես նաև բնակարան ձեռք բերելու կամ վերանորոգելու համար ՀՀ պետական բյուջեից արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկ ստանալու համար քաղաքացիների դիմումները հաշվառելու, քննարկելու, ինչպես նաև հայտ ներկայացնելու և վարկ տրամադրելու կարգը հաստատելու մասին» թիվ 410 որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ բնակարանային անհատական շինարարության համար երկարաժամկետ վարկ ստանալու նպատակով նշված անձինք դիմում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, սակայն ստանում են մերժում:

Նույնիսկ մինչև 2002թ. բռնադատվածի կողմից իրավասու մարմիններին դիմումը ներկայացրած լինելու պարագայում, պետական համապատասխան մարմնի անգործության, դանդաղկոտության կամ անփութության պատճառով կարող է վարկը չհատկացվել քաղաքացուն կամ նա կարող է չընդգրկվել հայտատուների ցուցակում:

Օրինակ 92. Թիվ 1-1331 գործով քաղաքացին հայտնում է, որ ինքը համարվում է բռնադատված և բռնադատվածի առաջին հերթի ժառանգ: 1949թ. իրենց ընտանիքը Վրաստանից արտքրվել է ՌԴ Ալթայի երկրամասի Ռուբցովսկ քաղաք և որպես բռնադատված բնակվել մինչև 1957թ.:

Արդարացումից հետո՝ 1957թ., նրանք տեղափոխվել են Հայաստան և բնակություն հաստատել Երևանում՝ Մամիկոնյանց հասցեով գտնվող բնակարանում (ընդհանուր տարածքը 63 ք/մ), որի հատակը հենված է փտած գերանների վրա, գետնից մոտ 1մ բարձրության վրա և համարվում է վթարային:

Հիմք ընդունելով «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ում կատարված փոփոխությունը, ըստ որի սույն օրենքի պահանջները տարածվում են նաև այլ հանրապետությունից բռնադատված և նրանց առաջին հերթի ժառանգների վրա, և ՀՀ կառավարության 20.07.2000թ. վերոնշյալ թիվ 410 որոշմամբ հաստատված կարգի

համաձայն՝ բնակարանային անհատական շինարարության նպատակով երկարաժամկետ վարկ ստանալու նպատակով դիմումատուն 2002թ. դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ ԲՇՏ ճարտարագետի եզրակացությունը:

Սակայն նախարարությունը դիմումի քննարկման արդյունքների մասին նրան տեղեկացրել է 2005թ., ըստ որի նրա հարցը կարող է քննարկվել միայն սեյսմակայունության վերաբերյալ համապատասխան եզրակացության առկայության դեպքում:

Դիմումատուն պահանջվող եզրակացությունը ներկայացրել է նախարարություն, սակայն նախարարությունից ստացել է պարզաբանում, որ «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 20.07.2000թ. թիվ 410 որոշման պահանջների համաձայն՝ նրա ներկայացրած փաստաթղթային փաթեթը թերի է եղել, մասնավորապես բացակայել է վարկ ստանալու համար անհրաժեշտ պայման հանդիսացող հողամաս ստանալու վերաբերյալ որոշման քաղվածքը: Միաժամանակ տեղեկացվել է, որ նա, որպես այլ հանրապետությունից բռնադատված, հողամաս կարող է ստանալ ՀՀ կառավարության սահմանած բնակավայրերից՝ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի մարզերից: Բացի այդ նշվել է, որ օրենքով սահմանված չափանիշներին չեն համապատասխանել նաև դիմումատուի բնակարանային պայմանները (բնակարանային պայմանների կարիքավորության չափանիշ է համարվում, երբ ընտանիքի յուրաքանչյուր անդամին բաժին ընկնող բնակմակերեսը չի գերազանցում 5 ք/մ, ընդ որում՝ առանց ընտանիքի անդամ չհանդիսացող անձանց, իսկ վթարային բնակելի տան դեպքում՝ վթարայնության աստիճանի մասին եզրակացությունը, տրված ՀՀ սեյսմիկ պաշտպանության պետական ծառայության կողմից):

Քանի որ անհրաժեշտ տեղեկանքը, որով էլ նրա գործը հիմնավոր է ճանաչվել, քաղաքացին նախարարություն է ներկայացրել 2005թ., և նախարարությունում գործող համապատասխան հանձնաժողովը վարկավորման հայտ ներկայացնելու առաջնահերթության հիմք է ընդունել փաստաթղթային փաթեթի ամբողջացման օրը, նա չի ընդգրկվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացվող 2006թ. վարկավորման հայտում:

Նկատի ունենալով, որ դիմումատուն իր բնակարանային անհատական շինարարության նպատակով երկարաժամկետ վարկ ստանալու դիմումը նախարարություն է ներկայացրել դեռևս 2002թ., բայց ոչ իր մեղքով դիմումի քննարկման արդյունքների մասին նախարարությունից տեղեկացվել է միայն 2005թ., 25.11.2005թ. բողոքի քննարկման ընթացքում առաջացած հարցի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին: Նախարարությունից պատասխանել են, որ ելնելով նախարարությունում հաշվառված քաղաքացիների մեծաքանակ հերթից, անաչառության սկզբունքը պահպանելու համար, համապատասխան հանձնաժողովը վարկավորման հայտ ներկայացնելու առաջնահերթության հիմք է ընդունում փաստաթղթային փաթեթի ամբողջացման օրը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակիցների անգործության և անփութության պատճառով դիմումատուն գրկվել է օրենքով իրեն վերապահված իրավունքների իրականացումից՝ չընդգրկվելով 2006թ. անհատական բնակարանային շինարարություն իրականացնելու նպատակով վարկավորման հայտում:

4.4. Չեռնոբիլյան աղետից տուժած անձինք

Համաձայն ԱՊՀ երկրների միջև կնքված «Չեռնոբիլյան և այլ ռադիացիոն աղետների ու վթարների, ինչպես նաև միջուկային փորձարկումների արդյունքում ռադիացիայի ներգործության ենթարկված քաղաքացիների սոցիալական

- պաշտպանության և առողջության պահպանության մասին» համաձայնագրի՝ կողմերը, այդ թվում և Հայաստանը, ստանձնել են մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝
1. մշակում են սկզբունքներ և չափանիշներ ռադիացիայի ներգործության ենթարկված անձանց կարգավիճակը սահմանելու համար, այդ անձանց, ինչպես նաև կերակրողին կորցնելու դեպքում նրանց ընտանիքի անդամների համար ապահովվում են սոցիալական պաշտպանության, առողջության վերականգնման և պահպանության փոխհամաձայնեցված հիմքեր,
 2. համադրում են մոտեցումները Չեռնոբիլյան և այլ ռադիացիոն աղետների ու վթարների, ինչպես նաև միջուկային փորձարկումների հետևանքների հետ հիվանդությունների ու հաշմանդամության պատճառական կապի սահմանման համար,
 3. միջոցառումներ են իրականացնում բժշկական, առողջարանային և այլ հաստատությունների ու կազմակերպությունների գործունեության արտոնյալ մեխանիզմների ստեղծման համար, որոնք անմիջականորեն ապահովում են ռադիացիայի ներգործությանը ենթարկված անձանց առողջության պահպանությանն ուղղված միջպետական խնդիրների լուծումը,
 4. համադրում են այդ դասերի քաղաքացիների համար բժշկական և առողջարանային միջոցառումներ՝ ազգային մասնագիտացված հաստատությունների ու կազմակերպությունների հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործման նպատակներով,
 5. միջոցներ են ձեռնարկում ռադիացիայի ներգործությանը ենթարկված անձանց փոխհատուցման և արտոնությունների իրավունքը կարգավորող օրենսդրության միասնականացման համար,
 6. իրականացնում են իրենց տրամադրության տակ գտնվող տեղեկատվության անհատույց փոխանակում, որը վերաբերում է Չեռնոբիլյան և այլ ռադիացիոն աղետների ու վթարների, ինչպես նաև միջուկային փորձարկումների հետևանքներին:

Չեռնոբիլյան աղետի հետևանքների վերացմանը մասնակցած և հաշմանդամություն ստացած անձինք դժգոհում են առանձին օրենքով իրենց սոցիալական իրավունքները պաշտպանված չլինելու հանգամանքից: Ցավով պետք է նշել, որ մինչև օրս այս ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքներ չեն կատարվել:

Օրենսդրությամբ չի սահմանվել Չեռնոբիլի վթարի մասնակիցների իրավական հատուկ կարգավիճակը: Նրանք ստանում են հաշմանդամության կենսաթոշակ այլ հաշմանդամների հետ հավասար պայմաններով և պարտավոր են անցնել բժշկական փորձաքննություն յուրաքանչյուր տարի:

4.5. Երեխաներ

Ինչպես ազգային օրենսդրությունը, այնպես էլ միջազգային մի շարք փաստաթղթեր պարունակում են երեխաների պաշտպանությանն առնչվող դրույթներ, մասնավորապես, հռչակվում է յուրաքանչյուր երեխայի իրավունքը, առանց որևէ խտրականության, իր ընտանիքի, հասարակության և պետության կողմից պաշտպանության այնպիսի միջոցների, որոնք անհրաժեշտ են նրան որպես անչափահասի:

Պետության կողմից ընտանիքի պաշտպանությունն իր մեջ ներառում է նաև երեխաների իրավունքների պաշտպանությունն ընտանիքում: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ արձանագրվել են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ **երեխաներին մուրացկանության հակելը, մուրացկանությամբ զրադվող ծնողի կողմից երեխային այլ նպատակով օգտագործելը:** Նման երևույթների խորքային պատճառներից մեկն այն է, որ համայնքային խնամակալության և հոգաբարձության մարմիններն ինքնուրույն չեն

ուսումնասիրում իրենց տարածքում ապրող անչափահասների սոցիալական պայմանները, չեն միջամտում և հարց չեն բարձրացնում երեխաներին մուրացկանության կամ այլ նպատակներով օգտագործող ծնողներից երեխաներին վերցնելու, ծնողական իրավունքներից զրկելու մասին:

Այս հարցերում պասիվ են նաև ոստիկանության ստորաբաժանումների անչափահասների հարցերով ծառայությունները: Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեությունը համակարգող և անչափահասներին վերաբերող խնդիրների համար պատասխանատու միասնական մարմնի բացակայության արդյունքում երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող մի շարք խնդիրներ մնում են չլուծված:

Ընտանեկան օրենսգիրքն ամրագրել է երեխայի նկատմամբ ծնողների իրավահավասարությունը, ինչը ծնողների անջատ ապրելու դեպքում **հաճախ հակասում է երեխայի շահերին**: Ամուսնալուծված և երեխայից անջատ ապրող ծնողը հաճախ չարաշահում է երեխայի հետ տեսակցություն ունենալու իր իրավունքը՝ **ի հաշիվ երեխայի լավագույն շահերի**:

Անցկացված ուսումնասիրությունները հիմք են տալիս պնդելու, որ այս հարցում **դատական պրակտիկան գնացել է սխալ ուղությամբ**:

Երբ անջատ ապրող ծնողը դատարան է դիմում երեխայի հետ տեսակցելու կարգ սահմանելու խնդրանքով, ծնողների իրավունքների հավասարությունը հաճախակի բացարձակեցնելով, դատարանը անջատ ապրող ծնողի համար սահմանում է երեխային տեսակցելու որոշակի օրեր՝ երեխային իր տուն տանելու, նշանակված ողջ օրը երեխայի հետ լինելու իրավունքով, ինչը նախատեսվում է շաբաթվա մեջ ոչ թե մեկ, այլ երեք օր՝ ծնողների համար գրեթե հավասարեցնելով երեխայի հետ շփման ժամանակամիջոցը: **Այս իրավիճակը խաթարում է երեխայի հիմնական դաստիարակությունը, զրկում է երեխայի խնամքն իրականացնող ծնողին արդյունավետ բաշխելու երեխայի ուսման և դաստիարակության ժամանակը**: Դատարանի կողմից անտեսվում է այն հանգամանքը, որ անջատ ապրող ծնողի համար երեխային տեսակցելը ժամանց է, որի ընթացքում չեն ծրագրվում և իրականացվում երեխայի ուսումնան ու դաստիարակությանն ուղղված միջոցառումներ: Խոսքն այստեղ վերաբերում է այն դեպքերին, երբ դեռևս չի անդրադարձվում անջատ ապրող ծնողի բացասական վարքագծին կամ երեխայի վրա բացասական ազդեցությանը:

Անջատ ապրող ծնողի տեսակցությունը երեխայի հետ ապահովելու մասին դատարանի վճռի կատարումը դրվում է **դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության վրա՝ տեսակցության ապահովման կարգի բացակայության պայմաններում**, անգամ երբ երեխան ցանկություն չունի շփվել այդ ծնողի հետ:

Խնամակալության և հոգաբարձության մարմինը, որի մասնակցությունը նման հարցերով դատաքննությունների ժամանակ պարտադիր է, պետք է նախապես ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրի խնդիրը և ունենա բոլոր հարցերի պատասխանները: Մինչդեռ իրականում այս մարմնի դիրքորոշումը հաճախ պայմանավորված է ծնողներից մեկի նկատմամբ համակրանքով, այլ ոչ թե երեխայի շահերի պաշտպանության պարտականությամբ:

Դատարանի վճռի կատարման ընթացքում երեխայի հետ շփվելու իրավունք ստացած ծնողի վարքագծին և ըստ այդմ երեխայի դաստիարակության վրա ազդեցությանը ոչ ոք չի հետևում, չի վերահսկում, իսկ ազդեցության բացասական լինելու մասին մյուս ծնողի պնդումը գնահատվում է որպես հակակրանքով թելադրված դիրքորոշում:

Ստացված դիմում-բողոքների հիման վրա և սեփական նախաձեռնությամբ անցկացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ծնողների առանձին ապրելու իրավիճակում հայտնված երեխաների շահերի և իրավունքների անտեսման դեպքերը կրում են համատարած բնույթ, նրանց խնամքն ու դաստիարակությունը պատկան մարմինների անտարբերության արդյունքում բարձիթողի վիճակում են:

2005թ. ընթացքում Պաշտպանն ու իր աշխատակիցները այցելություններ և ուսումնասիրություններ են իրականացրել ծնողագուրկ և դժվար իրավիճակներում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանվածության խնդիրների վերհանման նպատակով իրականացված այցելություններին և ուսումնասիրություններին:

Պաշտպանն ու իր աշխատակիցներն այցելել են Երևանի «Մանկան տուն», «Հատուկ տիպի մանկատուն» և «Չատիկ» մանկատուն, «Գյումրու տուն-ինտերնատ» և Շիրակի «Հույս» մանկատուն: Մանկատների ղեկավարների և աշխատակիցների հետ հանդիպումները և ծանոթացումը երեխաների պահման պայմաններին թույլ է տալիս եզրակացնել, որ երեխաների կյանքի և զարգացման համար անհրաժեշտ բավարար պայմաններն ապահովված են:

Այցելություններ են կազմակերպվել նաև կյանքի դժվար իրավիճակներում հայտնված երեխաների՝ Երևանի թիվ 1, 3, 8 և 18 հատուկ տիպի դպրոցներ: Դպրոցների ղեկավարների և աշխատակիցների հետ հանդիպումների, ինչպես նաև դիտարկումների արդյունքում վերհանվել են մի շարք հրատապ լուծում պահանջող խնդիրներ՝ դպրոցների շենքերի ֆիզիկական վիճակը, սանիտարահիգիենիկ և ընդհանուր առմամբ կենցաղային պայմանները անբավարար են և առողջության պահպանման առումով վտանգավոր: Թիվ 3 մանկական հատուկ դպրոցն ընդհանրապես անմխիթար վիճակում է՝ շինությունը մութ և խոնավ է, առկա են կրծողներ: **Այս կապակցությամբ Պաշտպանն իր գնահատականներն է ներկայացրել ՁԼՄ-ների ներկայացուցիչներին:**

4.6. Ազգային փոքրամասնություններ

Ազգային փոքրամասնությունների մասին շրջանակային կոնվենցիան Հայաստանը ստորագրել է 1997թ., երբ դեռ Եվրոպայի խորհրդի անդամ չէր: Այն ուժի մեջ է մտել 1998թ.: Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին ՀՀ առաջին զեկույցը ներկայացվել է 2001թ., ինչին հաջորդել է 2002թ. «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտե. Հայաստանի վերաբերյալ կարծիք» փաստաթուղթը:

Փաստաթղթի եզրափակիչ դիտողություններում ասված է, որ ինստիտուցիոնալ մակարդակով հատուկ կառավարական մարմնի ստեղծումը կօժանդակի իրավասու պետական մարմինների միջև ավելի սերտ համագործակցության հաստատմանը և հնարավոր կղարձնի բնագավառում իրական պետական քաղաքականության զարգացումը:

Բացի այդ, իշխանությունները, որքան հնարավոր է շուտ, պետք է իրականացնեն իրենց նախաձեռնությունները՝ ուղղված ազգային փոքրամասնություններին պետական աջակցության ամրապնդմանը, ներառյալ՝ ազգային փոքրամասնությունների համար մշակութային կենտրոնների հիմնադրումը, աջակցությունը մասնավոր էլեկտրոնային և տպագիր մամուլի ստեղծմանը, լեզվի և մշակույթի զարգացմանը, պատմությանն ու ավանդույթներին իրազեկ լինելու հնարավորությունների, ինչպես նաև իրենց վերաբերյալ որոշումների ընդունման հարցում մասնակցության ապահովումը:

Այս պահանջները հիմնականում բավարարված են, առաջին հերթին, հատուկ կառույցի՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության ստեղծման շնորհիվ, ինչը բերել է ազգային փոքրամասնությունների հանդեպ քաղաքականության որոշակի բարելավման:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից ստացված դիմում-բողոքներն ուսումնասիրելիս Պաշտպանը վերլուծել է դրանք խախտումների առկայության տեսանկյունից ըստ միջազգային պրակտիկայում ընդունված տարանջատման, այն է՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքներ, լեզվական, մշակութային և կրթական իրավունքներ, ինստիտուցիոնալ ինքնակազմակերպում, զարգացման հնարավորություններ և այլն:

Բացի այդ, հաշվի առնելով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հատուկ զգայունությունն իրենց իրավունքների ցանկացած խախտման հանդեպ, այսինքն՝ այն հանգամանքը, որ միշտ առկա է իրենց իրավունքների խախտման և էթնիկ պատկանելիության միջև կապի հոգեբանական ընկալում, Պաշտպանը հատուկ ուշադրություն է դարձրել այդպիսի դեպքերին, առաջին հերթին, խտրականության ցանկացած փորձի կանխարգելման, երկրորդ, կյանքի բոլոր ոլորտներում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հավասարության զգացումը ամրապնդելու և իրավունքը պաշտպանելու նպատակով:

Դիմում-բողոքների ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ դրանցում արժարժված խնդիրների մեծամասնությունը չի պարունակում խտրականության դրսևորումների տարրեր, այլ կրում է ընդհանուր առմամբ մարդու իրավունքների խախտումներին հատուկ բնույթ:

2004թ. համեմատությամբ 2005թ. ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից ստացված դիմում-բողոքների քանակն ավելացել է: Ըստ դիմումատուների՝ պետական պաշտոնատար անձանց կողմից ազգային փոքրամասնության ներկայացուցիչների նկատմամբ կատարված ցանկացած գործողություն կամ անգործությունը ազգային խտրականության արդյունք է:

Պաշտպանը, բազմիցս անդրադառնալով այս խմբի անձանց իրավունքների պաշտպանության վիճակին, արձանագրել է, որ չնայած որոշ դիմումների բովանդակությունն ավելի շատ երկրի սոցիալ-տնտեսական վիճակն է արտացոլում, այնուամենայնիվ, պետությունը պետք է կարողանա ազգային փոքրամասնություններին վերաբերող հարցերը առանձին հոգածության առարկա դարձնել:

Օրինակ 93. Խնամքի տակ 18 հոգի, այդ թվում 6 անչափահաս ունեցող դիմումատուներ շուրջ 38 տարի բնակվել է Իսակովի պողոտային հարող տարածքում գտնվող բնակարանում: Սկսած 2002թ.-ից տարբեր եղանակներով փորձեր են արվել ստիպել դիմումատուին ազատել տարածքը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում դիմումատուի հայցը դիտարկելիս Պաշտպանը նամակ է հղել գործը քննող դատավորին*:

Գրությամբ դատարանի ուշադրությունը հրավիրվել է այն հանգամանքի վրա, որ քաղաքապետարանը տարածքն այլ անձի հատկացնելիս անտեսել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 187-ը, ըստ որի նախապատվությունը պետք է տրվեր դիմումատուի

* Պաշտպանի նամակը դիտվել է որպես միջամտություն դատական վարույթին և ՀՀ Սահմանադրական դատարանում «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ի սահմանադրականությունը որոշելիս ներկայացվել է որպես դատական վարույթին Պաշտպանի միջամտության «ապացույց»:

ընտանիքին: Ի վերջո, վերաքննիչ դատարանը մասնակիորեն բավարարել է դիմումատի պահանջը:

Գործն ուսումնասիրելիս չեն հայտնաբերվել ազգային պատկանելիության հատկանիշով որոշակի խտրական մոտեցման արդյունք հանդիսացող խախտումներ. ավելին, թույլ տրված խախտումները կրում են համընդհանուր բնույթ:

Օրինակ 94. Քրեակատարողական հիմնարկի կալանավոր հանդիսացող դիմումատուն Պաշտպանին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ազգային խտրականության հիմքով նրան ավելի ծանր մեղադրանք է առաջադրվել, քան նախատեսված է օրենքով:

Բողոքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դիմումատուի կողմից կատարված հանցագործությունը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքում ներառված այն հանցակազմին, որի համար նա մեղադրվում էր: Դիմումատուին ներկայացվել են իր իրավունքների պաշտպանության հնարավորությունները և իր իրավիճակի բարելավման հետ կապված այլ հարցեր:

Օրինակ 95. Կոտայքի մարզի բնակիչների մի խումբ ինչպես դիմում-բողոքների, այնպես էլ ցույցերի միջոցով իրենց բողոքի ձայնն են բարձրացրել տեղի իշխանությունների գործողությունների դեմ: Ըստ դիմումատուների, համայնքի ղեկավարը տարբերակված մոտեցում ցուցաբերելով, ամբողջովին անտեսել է թաղամասերից մեկի բնակիչների խնդիրները՝ չիրականացնելով ասֆալտապատման աշխատանքներ, համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ խոչընդոտելով ազգային փոքրամասնության ներկայացուցիչների առաջադրմանը, չկանխելով ազգային փոքրամասնության ներկայացուցիչ հանդիսացող երեխաների նկատմամբ ծաղրական վերաբերմունքը, ավելին, միջոցներ չձեռնարկելով բարձրավոլտ էլեկտրաէներգիայի լարերն իրենց բնակարանների վրայով անցկացնելու գործընթացը դադարեցնելու նպատակով, և այլն:

Այս հարցերն արժանացել են ինչպես Պաշտպանի, այնպես էլ ՀՀ կառավարության ուշադրությանը: ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունից Պաշտպանին են ներկայացվել ՀՀ վարչապետի հանձնարարականները այն նախարարներին, որոնց իրավասության ոլորտում են բարձրացված հարցերը: Նշված հարցերի մի մասը լուծման փուլում են, մյուս մասը՝ քննարկման:

Օրինակ 96. Դիմումատուն հայտնել է, որ իր որդին, ծառայության անցնելով Վանաձոր քաղաքում տեղակայված զորամասերից մեկում, ծառայության առաջին իսկ օրվանից պարբերաբար ծեծի և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի է ենթարկվել ինչպես սպայական կազմի, այնպես էլ ծառայակիցների կողմից: Ըստ դիմումատուի, նման վերաբերմունքի նա արժանացել է այն պատճառով, որ հանդիսանում է ազգային փոքրամասնության ներկայացուցիչ: Դիմումատուն միաժամանակ հայտնել է, որ զինծառայողը մի քանի անգամ ստիպված ինքնակամ լքել է զորամասը, ինչի համար տարվել է ռազմական ոստիկանության վարչություն:

Պաշտպանը պարզաբանումներ ստանալու նպատակով գրություններ է ուղարկել ինչպես զինվորական դատախազին, այնպես էլ բանակային կորպուսի հրամանատարին, որից պատասխան չի ստացվել:

Ձինվորական դատախազությունից ստացված պատասխան գրությամբ հերքվել է ազգային հատկանիշով խտրական մոտեցման դրսևորումը և հայտնվել է, որ ներկայումս դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական գործը կասեցվել է՝ վերջինիս տեղը հայտնի չլինելու պատճառով:

Չնայած նման խուսազրական պատասխանին, նշված դեպքը խտրականության դրսևորում է և տարածված բնույթ է կրում: Նման դեպքերի թիվը տարեցտարի նվազում է,

սակայն քանի դեռ առկա է ըստ բնակավայրի և ազգության տարբերակման սովորությունը, նման դեպքերն անխուսափելի են: Ամենացավալին այն է, որ երբեմն նման քայլերի զինվորներին դրդում են հենց գորամասի հրամանատարական կազմի որոշ սպաներ:

Եղել են նաև այնպիսի դիմում-բողոքներ, որոնք Պաշտպանը չի ընդունել քննարկման, քանի որ դրանցում արծարծվել են ոչ թե հանրային մարմինների կողմից թույլ տրված իրավախախտումներ, այլ անհատների կամ ոչ պետական կազմակերպությունների կողմից կատարված գործողություններ:

Այսպես, օրինակ հրեական համայնքի ներկայացուցիչներ հանդիսացող դիմումատուները հայտնել են, որ մի շարք հասարակական կազմակերպություններ հակահրեական գաղափարախոսություն են տարածում:

Ազգային փոքրամասնություններից ստացված դիմումներից ուշագրավ է նաև քրդական համայնքի դիմումը, որով նրանք հայցել են Պաշտպանի միջամտությունը՝ Թուրքիայի բանտում պահվող իրենց առաջնորդ Աբդուլահ Օջալանի պատժաչափի նվազեցման հարցում:

Նման դեպքերում դիմումատուների համար մանրամասնորեն պարզաբանվել են հնարավոր գործողությունների շրջանակները և կամ ներկայացվել է բարձրացված հարցերի քննարկման համար օրենքով նախատեսված կարգը, որից հետո, որպես կանոն, բողոքատուները դիմել են պատկան մարմիններ և ստացել հուզող խնդիրների շուրջ բավարար տեղեկատվություն:

Ընդհանուր առմամբ, եթե գնահատելու լինենք խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության վիճակը, ապա հարկ է նշել, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանվածության մակարդակը համեմատաբար ավելի բարձր է:

Պաշտպանն ի սկզբանե հետևողական է եղել ազգային փոքրամասնություններին առնչվող գործընթացներում, **ակտիվ դերակատարություն է ունեցել ազգային փոքրամասնությունների մասին մշակվող օրենքի նախագծի մշակմանն ու հետագա քննարկումներին:** Ակտիվ համագործակցություն է հաստատվել Պաշտպանի հաստատության և ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության միջև:

ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Չնայած մարդու իրավունքների պաշտպանության ոլորտը Հայաստան ներմուծվել և զարգանում է արդեն բավական երկար ժամանակ, մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատության գործունեությունը վկայում է, որ մարդու իրավունքներն ինչպես իշխանությունների, անպես էլ լայն հասարակության կողմից ընկալվում են որպես վերացական հռչակագրային կատեգորիաներ, այլ ոչ թե որպես առօրյա գործուն դրույթներ: Դեռևս ձևավորված չեն անհրաժեշտ պատկերացումներն ու իմացությունը մարդու իրավունքների՝ որպես սահմանադրորեն ամրագրված իրավական

նորմերի, իրավունքների ծավալի և կիրառելիության, ինչպես նաև միջազգային պայմանագրերով պետության կողմից ստանձնած պարտավորությունների վերաբերյալ:

Այդ իսկ պատճառով ստորև դիտարկվում են մի շարք իրավունքների և ազատությունների ապահովումն ու պաշտպանությունը և դրանց միջազգայնորեն ընդունված ընկալումներն ու մեկնաբանությունները:

Մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող ցանկացած վերլուծություն առարկայական է դառնում միայն իրավական կարգավորման լայն շրջանակներում:

Դեռևս մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը Հայաստանը, վավերացնելով մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային մի շարք փաստաթղթեր, պարտավորվել է իր ներքին օրենսդրությունը համապատասխանեցնել այդ փաստաթղթերով ամրագրված հիմնարար սկզբունքներին և ձգտել հասնելու մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի ու դրանց պահպանման քաջալերմանը: Հայաստանն անդամակցում է հիմնական միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին՝ ՄԱԿ, ԵԽ, ԵԱՀԿ, ԱՊՀ, որոնց շրջանակներում վավերացրել է բազմաթիվ միջազգային պայմանագրեր: Այսպիսով, Հայաստանը ստանձնել է պարտավորություններ, դրանցում ամրագրված **իրավունքները հարգելու, այդ իրավունքների ճանաչումը, իրականացումը, պահպանությունը և խրախուսումը ապահովելու և պաշտպանելու** ուղղությամբ: Ի կատարումն ստանձնած պարտավորությունների՝ 1995թ. ընդունված ՀՀ Սահմանադրությամբ և ապա 2005թ. կատարված սահմանադրական փոփոխություններով ամրագրվել են հիմնական միջազգային փաստաթղթերով երաշխավորված իրավունքները և ազատությունները:

ՀՀ Սահմանադրության հոդված 6-ի համաձայն՝ Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Ընդգծենք նաև, որ միջազգային պայմանագրի մասնակից պետությունը չի կարող վկայակոչել ներպետական օրենսդրության դրույթները՝ որպես միջազգային պարտավորությունների չկատարման արդարացում: Թեև միջազգային պայմանագրերի նորմերն ունեն անմիջական կիրառություն, դրանց կիրառումը լիարժեք կերպով ապահովելու համար անհրաժեշտ է ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային պայմանագրերի դրույթներին:

1998թ. ընդունված «Դատարանականության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերին համապատասխան իրականացվել են դատական բարեփոխումներ և 1999թ. հունվարից գործում է դատական նոր համակարգը: Ներկայումս դատական բարեփոխումների գործընթացը շարունակվում է:

Չափազանց կարևոր էր քրեակատարողական հիմնարկները ոստիկանության համակարգից դուրս բերելը և արադարադատության նախարարության ենթակայությանը հանձնելը:

Ձևավորված նոր տնտեսական հարաբերությունների կարգավորման առումով կարևոր էր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ընդունումը, որն ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ին: Քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխան՝ ընդունվել են այլ օրենքներ, որոնք կոչված են կարգավորելու տնտեսական, քաղաքացիական հարաբերությունների առանձին բնագավառներ:

Պակաս կարևոր չեն 2003թ. ուժի մեջ մտած քրեական օրենսգիրքը, 2005թ.՝ աշխատանքային և ընտանեկան օրենսգրքերը, քրեակատարողական օրենսգիրքը, ընտրական օրենսգիրքն իր վերջին փոփոխություններով, որը սակայն դեռևս վերջնական քննություն չի անցել, և այլն:

Այնուամենայնիվ, հաճախ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական պայմանագրերի՝ ներպետական օրենսդրության հետ հակասության դեպքում,

գործնականում կիրառվում են ներպետական օրենսդրության նորմերը, ինչն առաջին հերթին պայմանավորված է համապատասխան պաշտոնատար անձանց, իսկ երբեմն մարդկանց կողմից միջազգային պայմանագրերով Հայաստանի ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ իմացությամբ և իրազեկությամբ:

Պետք է նկատի ունենալ, որ եվրոպական դատարանի վճիռները հանդիսանում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի պարտադիր մեկնաբանությունը, ըստ էության, այս մեկնաբանությունները կազմում են կոնվենցիայի անբաժանելի մասը: Նույնը վերաբերում է նաև մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի հիման վրա ստեղծված և այդ փաստաթղթերի պահանջների կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինների մեկնաբանություններին և սահմանված չափորոշիչներին:

Այնուամենայնիվ, ներպետական դատարանները շատ հազվադեպ են անմիջականորեն վկայակոչում կամ կիրառում միջազգային պայմանագրերի նորմերը կամ եվրոպական դատարանի վճիռները: Մինչդեռ, Հայաստանի կողմից համապատասխան միջազգային կազմակերպություններին և մարմիններին զեկույցներ ներկայացնելիս հաճախ է պահանջվում մանրամասն տեղեկությունների տրամադրումը ներպետական դատարանների կողմից մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի նորմերի անմիջական կիրառման վերաբերյալ:

Օրենսդրական համապատասխանեցմանը զուգահեռ, չափազանց կարևորվում է նաև երկրում աղքատության հաղթահարմանը, տնտեսության զարգացմանը, երեխաների իրավունքների պաշտպանությանը, սոցիալական խնդիրների լուծմանը և այլ բնագավառներին վերաբերող համապետական ծրագրերի իրականացումը: Դա հանդիսանում է պետության կողմից միջազգային պայմանագրերով ստանձնած պոզիտիվ պարտավորությունների իրականացման կարևոր եղանակ:

Կարելի է ասել, որ մարդու իրավունքների և ազատությունների պահպանության և պաշտպանության իրավական դաշտը երկրում հիմնականում առկա է, առկա է միջազգային չափանիշներին այն համահունչ դարձնելու ձգտումը, սակայն օրենսդրական այդ դաշտն ու ծրագրերը հաճախակի մնում են թղթի վրա կամ դառնում են զուտ ղեկլարացիա՝ համակարգային դատապարտելի մոտեցումները հաղթահարված չլինելու պատճառով:

2004թ. տարեկան զեկույցում հանգամանորեն վերլուծվել են խտրականության արգելմանը, առանձին խմբերին, աշխատանքային իրավունքներին և մի շարք այլ իրավունքների վերաբերող հարցեր: Ստորև անդրադարձ է արվում կյանքի, խոշտանգումներից ազատ լինելու, անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, օրենքի առջև հավասարության և օրենքով հավասար պաշտպանվածության, արդար դատաքնության, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների, պետական գործերը վարելուն մասնակցելու և ընտրել-ընտրվելու, սեփականության, սոցիալական և մշակութային իրավունքներին, ինչպես նաև մտքի, խղճի և կրոնի, արտահայտվելու և տեղեկատվության, խաղաղ հավաքների ազատություններին իրավունքներին:

Մինչ առանձին իրավունքների և ազատությունների դիտարկմանն անդրադառնալը անհրաժեշտ է նշել մարդու իրավունքների հայեցակարգի երեք կարևորագույն դրույթները, այն է՝ **յուրաքանչյուր իշխանություն սահմանափակ է, յուրաքանչյուր մարդ ունի իր ինքնավար աշխարհը, որին չի կարող խառնվել և ոչ մի իշխանություն, յուրաքանչյուր մարդ իր իրավունքները պաշտպանելիս կարող է պետությանն իր պահանջները ներկայացնել**: Չնայած սահմանափակ ընտրանքին, ներքոբերյալ իրավունքներն ու ազատությունները արտացոլում են հիմնական կատեգորիաները, մասնավորապես, ոլորտային հիմքով՝ քաղաքացիական և քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներ, գործողության հիմքով՝ նյութական և դատավարական իրավունքներ: Ներկայացված են անհատի կյանքը կամ մարդու ինքնավարությունը պաշտպանող և մարդու ազատությունների ոլորտ պետության ներխուժումն արգելող, մարդուն երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք տրամադրող, մարդու նվազագույն սոցիալական անվտանգությունը երաշխավորող, մարդուն հանրային

մարմինների և դրանց ներկայացուցիչների կամայականություններից պաշտպանող մի շարք իրավունքներ:

Կոնկրետ իրավունքի և ազատության դիտարկման ընթացքում բերվում են ձևակերպումներ և հղումներ են արվում ինչպես ՀՀ Սահմանադրությանը, այնպես էլ միջազգային մի շարք փաստաթղթերի:

5.1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում ամրագրված են մարդու դասական իրավունքները, որոնք կոչվում են մարդու իրավունքների առաջին սերունդ: Քաղաքացիական կամ «անհատական» իրավունքները երաշխավորում են պետության միջամտությունից մարդու ազատությունը, այսինքն անձի ինքնավարությունը: Քաղաքական իրավունքները երաշխավորում են անձի մասնակցությունը պետության կառավարմանը: Այս իրավունքները սկսած 18-րդ դարի վերջից ամրագրվել են եվրոպական բոլոր այն երկրների սահմանադրություններում:

5.1.1. Կյանքի իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:
ՀՀ Սահմանադրություն, հոդված 15

Յուրաքանչյուր ոք ունի կյանքի անկապտելի իրավունք: Այդ իրավունքը պաշտպանվում է օրենքով:
Ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել կյանքից:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 6

Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նման պատիժ է նախատեսված:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 2

Կյանքի իրավունքը բնութագրվում է որպես մարդու գերագույն իրավունք, քանի որ առանց այս իրավունքի արդյունավետ երաշխիքների ապահովման, մյուս բոլոր իրավունքները կիմաստազրկվեն*:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն ընդգծել է*, որ կյանքի իրավունքը պետք է մեկնաբանվի լայն իմաստով, որտեղից էլ բխում են այս իրավունքը ապահովելու նպատակով մասնակից պետությունների պոզիտիվ պարտավորությունները:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 6-ի կետ 1-ը, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի հոդված 2-ը պարտավորեցնում են մասնակից պետություններին առաջին հերթին պաշտպանելու կյանքի իրավունքը օրենքով, այդ թվում՝ արգելող քրեական-իրավական նորմերի նվազագույն ծավալ ընդունելու միջոցով:

ՀՀ քրեական օրենսգիրքը պարունակում է անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների սպառիչ ցանկը, սահմանված են նաև համապատասխան պատժատեսակներ: Պետությունը ճանաչել է մարդու համար կյանքի անօտարելի

* Երբեմն միջազգային իրավունքի տեսակետից այն դիտվում է որպես միջազգային jus cogens՝ սովորութային նորմ:

* Տե՛ս՝ Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 6 Ընդհանուր մեկնաբանություն, 16-րդ նստաշրջան, 1982թ., հոդված 6 (կյանքի իրավունք):

իրավունքը և ստանձնել է այդ իրավունքի պաշտպանությունը՝ այդ իրավունքի նկատմամբ ոտնձգության համար քրեական օրենսգրքով սահմանված պատժի կիրառման սպառնալիքով:

Եվրոպական դատարանում ձևավորված պրակտիկայի համաձայն՝ պետության պոզիտիվ պարտավորությունը ենթադրում է, որ երբ տեղի է ունենում ոտնձգություն մարդկային կյանքի նկատմամբ, պետությունն ունի նաև դատավարական բնույթի պարտավորություններ: Դատարանն իր վճիռներում նշել է, որ պետությունների ներկայացուցիչների մեղքով անձանց մահվան կապակցությամբ ներպետական մակարդակով անկախ, լիակատար և արդյունավետ հետաքննություն չանցկացնելը հանդիսանում է պետության կողմից «կյանքի իրավունքն օրենքով պաշտպանելու» իր պարտավորության խախտում**:

Այսպիսով, մարդու այս իրավունքի պաշտպանվածությունը պայմանավորվում է ոչ միայն ոտնձգության համար պատիժ նախատեսող օրենքի առկայությամբ, այլև իրավապահ մարմինների պատրաստակամությամբ և կարողությամբ՝ արձանագրելու նման յուրաքանչյուր դեպք, լիարժեք բացահայտելու և դատարան ներկայացնելու բոլոր մեղավորներին***:

Երբ խոսքը վերաբերում է մարմնական վնասվածքներ հասցնելու կամ սպանության հետ չկապված այլ բնույթի ոտնձգությունների վերաբերյալ հաղորդումներին, երբեմն հաղորդումը ստացող մարմինները խուսափում և օրենքով նախատեսված կարգով չեն գրանցում և հաշվառումից դուրս են թողնում հաղորդումը հատկապես այն դեպքերում, երբ տրված հաղորդմամբ չի երևում հանցավորի ով լինելը: Դրա հետևանքով ոչ միայն աղավաղվում են հանցագործությունների հաշվառման տվյալները, այլև ժամանակին չի հարուցվում քրեական գործ, չեն ձեռնարկվում անհրաժեշտ օպերատիվ քննչական միջոցառումներ, և նվազում է դեպքի բացահայտման հնարավորությունը:

Ընդգծենք նաև, որ կարևոր է ոչ միայն համապատասխան իրավապահ մարմինների կողմից օբյեկտիվ և բազմակողմանի քննության իրականացումը, այլև համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց կողմից այդպիսի քննության իրականացման վերաբերյալ հասարակական ընկալումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր վճիռներում նշել է, որ հետաքննությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի չխաթարվի իրավունքի գերակայությանն իշխանությունների հավատարմության առնչությամբ հասարակության վստահությունը և կանխվի գաղտնի համաձայնության ցանկացած դրսևորում կամ անօրինական գործողությունների նկատմամբ հանդուրժողականությունը*:

Կյանքի իրավունքի պաշտպանությունը ընդգրկում է նաև պաշտպանություն մարդու կյանքին ուղղված այլ սպառնալիքներից, ինչպիսիք են օրինակ՝ թերսնվածությունը, կյանքին սպառնացող հիվանդությունները, միջուկային էներգիան կամ զինված հակամարտությունը: Դաշնագրի հոդված 6-ը մեկնաբանելիս Մարդու իրավունքների կոմիտեն արձանագրել է նաև, որ ցանկալի է, որ պետությունները ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները մանկական մահացությունը նվազեցնելու և կյանքի միջին

** «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը», Միջազգային իրավունքի հայկական ընկերակցություն, Երևան 2005, էջ 15:

*** Անձի դեմ ուղղված հանցագործության դեպքերով Հայաստանում բացահայտման մակարդակը 2005թ. կազմել է մոտ 84%:

* «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը», Միջազգային իրավունքի հայկական ընկերակցություն, Երևան 2005, էջ 17:

տևողությունը բարձրացնելու ուղղությամբ, մասնավորապես միջոցներ ձեռնարկելով՝ թերսնման և համաճարակները վերացնելու ուղղությամբ**:

Նշենք, որ ՄԱԿ-ի հազարամյակի զարգացման նպատակներից մեկը վերաբերում է մանկական մահացության նվազեցմանը: Դրան համապատասխան Հայաստանը պարտավորվել է մինչև 2015թ. հասնել մինչև հինգ տարեկան երեխաների շրջանում մանկական մահացության տոկոսի նվազեցմանը երկու երրորդով: Հազարամյակի զարգացման նպատակների վերաբերյալ 2005թ. ՀՀ առաջին ազգային զեկույցի համաձայն՝ Հայաստանում մինչև հինգ տարեկան երեխաների շրջանում մահացությունը նվազող միտում ունի: 2003թ. մինչև հինգ տարեկան երեխաների մահացության մասնաբաժինը 1000 կենդանի ծնունդների հաշվով կազմել է 13.6, մինչդեռ 1990թ. այն կազմել է 24: Առողջապահության նախարարության տվյալների համաձայն՝ 2003թ. հինգ տարեկանից ցածր երեխաների մահացության 88.3%-ը նորածինների մահացության արդյունք է: Թեև նորածինների մահացության տոկոսը վերջին տարիներին բավականին նվազել է, այնուամենայնիվ այն շարունակում է մնալ բարձր մակարդակի վրա:

Չեկույցով արձանագրվել են առկա խոչընդոտները, որոնք հատկապես հանգում են անբավարար ֆինանսավորմանը և հասարակության սոցիալապես անապահով խավերի համար առողջապահական ծառայությունների անբավարար մատչելիությանը:

Հազարամյակի զարգացման նպատակներից առաջինով, որը վերաբերում է ծայրահեղ աղքատության ու սովի վերացմանը, Հայաստանը պարտավորվել է մինչև 2015թ. կիսով չափ նվազեցնել այն մարդկանց թիվը, ովքեր ապրում են օրը 1 ԱՄՆ դոլարին համարժեք գումարից պակաս գումարով, և կիսով չափ նվազեցնել սովից տառապող մարդկանց թիվը:

Կյանքի իրավունքի հետ առնչվող մյուս հարցը կապված է մահապատժի կիրառման հետ: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 6-ից բխում է, որ անդամ պետությունները պարտավորված չեն վերացնել մահապատիժն ամբողջությամբ, սակայն նրանք պարտավոր են սահմանափակել դրա կիրառումը:

2003թ. սեպտեմբերին Հայաստանը վավերացրել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի արձանագրություն 6-ը, դրանով իսկ պարտավորվելով վերացնել մահապատիժը՝ որպես պատժատեսակ: Արձանագրությունը թույլ է տալիս մահապատիժ նախատեսել միայն պատերազմի ժամանակ կամ պատերազմի անխուսափելի սպառնալիքի դեպքում կատարված զործողությունների համար:

Եվրոպական կոնվենցիայի արձանագրություն 13-ը, որը նախատեսում է մահապատժի վերացում բոլոր հանգամանքներում, բաց է կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար 2002թ. մայիսից:

Հայաստանն այս արձանագրությունը չի ստորագրել, սակայն 2003թ. օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքով մահապատիժը որպես պատժատեսակ նախատեսված չէ, իսկ 2005թ. դեկտեմբերի 6-ին ուժի մեջ մտած սահմանադրական փոփոխություններով մահապատժի արգելման սկզբունքը ստացել է նաև սահմանադրական ամրագրում (հոդված 15):

Պետք է նկատի ունենալ, որ թեև եվրոպական կոնվենցիայի հոդված 2-ի կետ 1-ի 2-րդ նախադասությունը բառացիորեն նախատեսում է մահապատժի կիրառման հնարավորությունը, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում ձևավորված պրակտիկան հիմք է ծառայել այս դրույթի փոփոխության համար: Մասնավորապես, այլևս մահապատիժը հանդիսանում է անթույլատրելի պատժատեսակ նաև եվրոպական կոնվենցիայի հոդված 2-ի ներքո:

Այս թեզի համար հիմք է ծառայում դեռևս 2003թ. փետրվարին «Օջալանն ընդդեմ Թուրքիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կոնվենցիայի հոդված 2-ի նախադեպային մեծ նշանակություն ունեցող մեկնաբանությունը: «Խաղաղ ժամանակներում մահապատժից զրեթե ամբողջական հրաժարումը Եվրոպայում արտահայտվում է այն փաստով, որ բոլոր անդամ պետությունները ստորագրել են արձանագրություն 6-ը և 41 պետություններ վավերացրել են այն, այսինքն բոլորը, բացի

** Տե՛ս՝ Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 6 Ընդհանուր մեկնաբանություն, 16-րդ նստաշրջան, 1982թ., հոդված 6 (կյանքի իրավունք):

Թուրքիայից, Հայաստանից և Ռուսաստանից: Այնուհետև, սա արտահայտվել է նաև Եվրոպայի խորհրդի քաղաքականության մեջ, որը պահանջում է, որ նորանդամ պետությունները վերացնեն մահապատիժը որպես կազմակերպությանը անդամակցելու նախապայման: Այս զարգացումների արդյունքում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների տարածքները դարձել են մահապատիժից ազատ գոտի: Այս հատկանշական զարգացումը կարող է ընդունվել որպես անդամ պետությունների համաձայնության նշան՝ հողված 2-ի կետ 1-ի 2-րդ նախադասությունը վերացնելու կամ առնվազն փոփոխելու վերաբերյալ: Կարող է հարց առաջանալ, թե արդյոք անհրաժեշտ է սպասել մնացած երեք պետությունների կողմից արձանագրության վավերացմանը՝ եզրակացնելու համար, որ կոնվենցիայի հողված 2-ով նախատեսված մահապատիժի բացառումը էական փոփոխության է ենթարկվել: **Այս միանշանակ հիմքերի վրա կարելի է պնդել, որ խաղաղ ժամանակ մահապատիժը այլևս համարվում է անընդունելի, եթե ոչ անմարդկային, պատժատեսակ, որը այսուհետև թույլատրելի չէ կոնվենցիայի հողված 2-ի ներքո»:**

Դատարանը բազմիցս նշել է, որ կոնվենցիան կենդանի փաստաթուղթ է, որը պետք է մեկնաբանվի ժամանակակից պայմաններում, և ընդունել է, որ անդամ պետություններում ձևավորված պրակտիկան կարող է կոնվենցիայի փոփոխության հիմք հանդիսանալ:

Հիշեցնենք, որ մահապատիժի առնչությամբ Հայաստանում առկա է խնդիր՝ կապված նախկին քրեական օրենսգրքի հողված 99-ով մահապատիժի դատապարտված այն անձանց հետ, որոնց նկատմամբ նախկինում նշանակված մահապատիժն ի կատար ածված չի եղել մինչև քրեական նոր օրենսգրքի գործողության մեջ դնելը՝ 2003թ. օգոստոսի 1-ը:

«Քրեական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքով ասված է, որ այս անձանց նկատմամբ սահմանված մահապատիժը ենթակա է փոխարինման ցմահ ազատազրկմամբ, ինչը սակայն կիրառելի չէ առավել ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն կատարած անձանց նկատմամբ, այսինքն՝ սահմանված մահապատիժը ենթակա է պահպանման որոշակի կատեգորիայի դատապարտյալների նկատմամբ:

ՀՀ նախագահի 2003թ. օգոստոսի 1-ի անհատական ներում շնորհելու մասին հրամանագրով մի շարք անձանց մահապատիժը ներման կարգով փոխարինվեց ցմահ ազատազրկմամբ:

Նկատի ունենալով, որ նախկին քրեական օրենսգրքով ցմահ ազատազրկումը որպես պատժատեսակ նախատեսված չի եղել, որ ազատազրկման առավելագույն ժամկետը սահմանված է եղել 15 տարի, իսկ մահապատիժը ներման կարգով փոխելու դեպքում՝ ոչ ավել քան 20 տարի, նախկինում մահապատիժի դատապարտված անձինք գտնում են, որ իրենց նկատմամբ սահմանված մահապատիժը ցմահ ազատազրկմամբ փոխարինելը հակասում է դաշնագրի հողված 15-ի, ՀՀ Սահմանադրության ու քրեական օրենսգրքի սկզբունքներին և գտնում են, որ իրենց նոր պատժաչափը չպետք է գերազանցի ազատազրկման 20 տարին:

Նման տեսակետը պաշտպանում են նաև մի շարք իրավաբան մասնագետներ: Խնդիրը քննարկվել է Պաշպանին կից փորձագիտական խորհրդում շահագրգիռ կառույցների և անկախ իրավաբան մասնագետների մասնակցությամբ: Կարծիքները բաժանվել են, խնդրին որոշակիություն չի տրվել, այն մնացել է օրակարգում:

Այսօր ի հայտ են եկել նաև որոշակի բժշկական, էթիկական և իրավական բնույթի հիմնախնդիրներ, որոնք անմիջականորեն առնչվում են կյանքի իրավունքի հետ և պայմանավորված են գիտական և տեխնոլոգիական առաջընթացով: Խոսքը մասնավորապես գնում է հղիության ընդհատման, էվթանազիայի և գենետիկ ինջեներիայի մասին:

Դրանք մի կողմից կապված են մարդու կյանքի, այսինքն դրա սկզբի և վերջի սահմանման հետ և մյուս կողմից կյանքի իրավունքը ապահովելու պետության պարտավորության սահմանների հետ*:

Կյանքի սկսվելու պահի հարցը (սաղմնավորման, հղիության որոշակի պահից, թե երեխայի ծնվելու պահից) առայսօր մնում է վիճարկելի: Օրինակ՝ Մարդու իրավունքների

* Manfred Nowak, U.N. Covenant on civil and political rights, CCPR Commentary, 2nd revised edition, էջ 153:

ամերիկյան կոնվենցիայի հոդված 4-ով պաշտպանվում է կյանքի իրավունքը սաղմնավորման պահից: Սակայն եվրոպական կոնվենցիան, ինչպես նաև եվրոպական դատարանը միանշանակորեն չեն սահմանում կյանքի իրավունքի պաշտպանության սկսվելու պահը: Իսկ Մարդու իրավունքների հանձնաժողովն ընդգծել է, որ այդպիսի նրբանկատ հարցում կոնվենցիայի մասնակից պետությունները պետք է ունենան ընտրության որոշակի ազատություն**:

ՀՀ կառավարության 05.08.2004թ. թիվ 1116-Ն որոշմամբ սահմանվել են հղիության արհեստական ընդհատման կարգը և պայմանները, որոնց համաձայն բոլոր այն կանանց, ովքեր ցանկանում են ընդհատել հղիությունը և չունեն հակացուցումներ, հղիության արհեստական ընդհատման վիրահատություն թույլատրվում է կատարել մինչև 12 շաբաթական հղիության ժամկետում: Թույլատրվում է նաև բացառություն նշված կարգից՝ հղիության արհեստական ընդհատում կատարել մինչև 22 շաբաթական ժամկետը՝ համապատասխան բուժհանձնաժողովի որոշմամբ:

Նման վիճահարույց հիմնախնդիր է հանդիսանում նաև էվթանազիայի թույլատրելիության հարցը: Այստեղ ևս եվրոպական դատարանը զերծ է մնացել միանշանակ եզրակացություններից, և այս հարցում նույնպես պետություններն ունեն ընտրության որոշակի ազատություն:

Կյանքի իրավունքի հետ անմիջականորեն առնչվող այլ խնդիր են հանդիսանում զենային էնջինիրիան և կլոնավորումը: Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին եվրոպական կոնվենցիան ամրագրում է, որ մարդկային զենը փոփոխելու նպատակ ունեցող միջամտությունը կարող է իրականացվել միայն կանխարգելիչ, դիագնոստիկ և թերապևտիկ նպատակներով: Իսկ այս կոնվենցիայի առաջին արձանագրությունը նպատակ է հետապնդում արգելելու մարդկանց կլոնավորումը: Այս կապակցությամբ խիստ կարևորում է այս փաստաթղթերին Հայաստանի միանալու անհրաժեշտության քննարկումների խթանումը:

5.1.2. Խոշտանգումների արգելում

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Չերբակալված, կալանավորված և ազատագրված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 17

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես, ոչ ոք չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվել բժշկական կամ գիտական փորձերի:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 7

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 3

** «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը», Միջազգային իրավունքի հայկական ընկերակցություն, Երևան 2005, էջ 28:

Խոշտանգումների արգելումը, առանց որևէ սահմանափակման, լայնորեն ճանաչվում է միջազգային իրավական մի շարք փաստաթղթերով, այդ թվում Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով, 1949թ. Ժնևի կոնվենցիաներով, ինչպես նաև Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի տեսակների դեմ կոնվենցիայով, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիայով: Խոշտանգումների արգելքը բխում է միջազգային սովորության իրավունքից:

Խոշտանգումը սահմանվում է որպես՝ ցանկացած գործողություն, որով անձին կանխատեսված ուժեղ ցավ կամ տանջանք է պատճառվում՝ ֆիզիկական կամ բարոյական, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություններ ստանալու, նրա կամ երրորդ անձի կողմից գործողություն կատարելու կամ դրանում կասկածվելու պատճառով նրան պատժելու, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին պատժելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված որևէ պատճառով, երբ այդպիսի ցավը կամ տանջանքը պատճառվում է պատական պաշտոնատար անձի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից, կամ նրանց սադրանքով, կամ նրանց իմացությամբ կամ լուռ համաձայնությամբ*:

Անթույլատրելի վերաբերմունքի վարչական պրակտիկան բնութագրվում է գործողությունների կրկնողականությամբ և պաշտոնական հանդուրժողականությամբ** . պարբերաբար կրկնվող հիմնականում միևնույն իրավունքների խախտումները մնում են անհետևանք՝ չեն ձեռնարկվում պատասխանատուներին պատժելուն ուղղված միջոցներ կամ դրանք կրում են ձևական և սիմվոլիկ բնույթ, իսկ քննությունները, այդ թվում և դատական, անցկացվում են անաչառության և օբյեկտիվության սկզբունքների անտեսմամբ:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 7-ի մեկնաբանությամբ ընդգծել է, որ այս հոդվածի նպատակն է պաշտպանել անձի անձեռնմխելիությունը և արժանապատվությունը, և որ այս հոդվածի պահանջների իրականացման համար բավարար չէ միայն արգելել նման վերաբերմունքը կամ պատիժը կամ այդպիսի արարքները որակել որպես հանցավոր: Խոշտանգումների արգելքը ամրագրված է ՀՀ Սահմանադրության հոդված 17-ում, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության մի շարք հոդվածներում: Խոշտանգումը, որպես կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություն, նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 119-ով:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն ընդգծել է, որ արդյունավետ պաշտպանություն ապահովելու նպատակով մասնակից պետությունները պետք է սահմանեն վերահսկողության որոշակի մեխանիզմներ, մասնավորապես, դաժան վերաբերմունքի դրսևորման վերաբերյալ բողոքները պետք է արդյունավետ կերպով քննվեն իրավասու մարմինների կողմից: Այս կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 17-ի մաս 4-ը սահմանում է, որ կասկածյալի, մեղադրյալի և նրանց պաշտպանի հայտարարությունները իրենց անմեղության, կասկածյալին կամ մեղադրյալին արդարացնող, իրենց պատասխանատվությունը մեղմացնող ապացույցների առկայության մասին, **ինչպես նաև քրեական**

* Տե՛ս՝ Միավորված ազգերի կազմակերպության փաստաթղթեր, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի տեսակների դեմ կոնվենցիա, հոդված 1:

** Տե՛ս, օրինակ, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի 2005թ. գործունեության մասին հաշվետվություն, Երևան 2006:

դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը:

Այնուամենայնիվ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված այս կարևորագույն սկզբունքը հիմնականում անտեսվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից: Խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի վերաբերյալ բողոքներ հիմնականում ներկայացնում են քրեական գործերով անցնող անձինք, ինչը վկայում է նաև, որ իրավապահ մարմինների պրակտիկայում դեռևս պահպանվում է քննությանը խորթ մեթոդներով խոստովանություն կորզելու պրակտիկան:

Պաշտպանին ուղղված բողոքներից մեկով բանակում սպանություն կատարելու մեջ մեղադրվող, 5 ամսից ավելի հացադուլ հայտարարած ամբաստանյալը պնդում էր, որ ինքը մասնակցություն չունի սպանությանը, և որ խոստովանական ցուցմունքներ իրենից կորզվել են բռնությամբ: Հացադուլը ամբաստանյալի հայտարարությունները պատշաճ կարգով քննության չառնելուն հետևանք է:

Սեկ այլ գործով, Վանաձորի քրեակատարողական հիմնարկի կալանավորը Պաշտպանին ներկայացված բողոքում հայտնել է, որ Գուգարքի կայագորի զինվորական դատախազության և ոստիկանության աշխատակիցները ցուցմունքներ կորզելու նպատակով դաժանաբար ծեծի են ենթարկել իրեն, ինչի վկայությունը մարմնի վրա առկա կապտուկներն էին:

1993թ. Հայաստանը վավերացրել է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիան: Կոնվենցիան սահմանում է «խոշտանգում» հասկացությունը, դրա բացարձակ արգելքը, չվերադարձման սկզբունքը (ոչ մի մասնակից պետություն չպետք է որևէ անձի արտաքսի, վերադարձնի կամ հանձնի մեկ այլ պետության, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրան կարող է սպառնալ խոշտանգումների ենթարկվելու վտանգ), նախատեսում է Խոշտանգումների դեմ կոմիտեի ստեղծումը, որը կոչված է քննարկելու կոնվենցիայի պահանջների իրականացման վերաբերյալ մասնակից պետությունների զեկույցները, անելու համապատասխան դիտողություններ, առաջարկություններ: Կոմիտեն կարող է անցկացնել նաև խորհրդապահական քննություն, նման հետաքննությունը, տվյալ մասնակից պետության համաձայնությամբ, կարող է ներառել նաև այցելություն այդ պետության տարածք:

2002թ. ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը ընդունեց Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կանոնադրությունը, որը նախատեսում է կանխարգելիչ այցելությունների համակարգ անձանց հարկադրական պահման վայրեր, ինչպես նաև ազգային մակարդակով կանխարգելիչ մեխանիզմների (մարմնի կամ մարմինների) ստեղծում՝ խոշտանգումների կանխարգելման նպատակով: Ներկայումս Հայաստանը գտնվում է նշված արձանագրությանը միանալու գործընթացում:

1995թ. Հայաստանը ներկայացրել է իր առաջին զեկույցը Խոշտանգումների դեմ կոմիտեին: Չեկույցով ներկայացվել է ՀՀ կողմից Խոշտանգումների դեմ կոնվենցիայի պահանջների իրականացման նպատակով ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն:

Քննարկելով ՀՀ զեկույցը, կոմիտեն 1996թ. հանդես եկավ համապատասխան եզրափակիչ հետևություններով, որոնցով մասնավորապես ընդգծվել է կոմիտեի մտահոգությունը պետական պաշտոնյաների կողմից ձերբակալման և կալանավորման ժամանակ դրսևորված դաժան վերաբերմունքի վերաբերյալ բողոքների թվի, խոշտանգման հանցագործությունը քրեական օրենսդրությամբ նախատեսված չլինելու կապակցությամբ: Ի թիվս այլ առաջարկությունների, կոմիտեն առաջարկել է, որ խոշտանգման սահմանում՝ կոնվենցիայի հողված 1-ին համապատասխան, որպես առանձին հանցագործություն ընդգրկվի ներպետական օրենսդրությունում, նաև որպեսզի ՀՀ իշխանությունները մեծ կարևորություն տան կոնվենցիայի հողված 10-ում թվարկված անձնակազմի վերապատրաստման հարցերին:

2000թ. Խոշտանգումների դեմ կոմիտեն քննարկեց Հայաստանի Հանրապետության երկրորդ զեկույցը: Եզրափակիչ հետևություններում որպես մտահոգության առարկա նշվել են այն հանգամանքները, որ քրեական օրենսգրքի նախագիծը չի ընդգրկում կոնվենցիայի հոդված 1-ով ամրագրված խոշտանգման սահմանման որոշ ասպեկտներ, որ ազատագրված անձանց իրավունքները միշտ չէ, որ հարգվում են, որ մեղադրական դատավճիռներում սխալներ թույլ տված դատավորների համար առկա է քրեական պատասխանատվության ռեժիմ, ինչով կարող են վտանգվել դատարանները, նշվել են նաև քրեակատարողական հիմնարկների ոչ բարվոք պայմանները և ներքին գործերի համակարգում դրանց գտնվելը: Դրական կողմերը առանձնացնելիս կոմիտեն, ի թիվս այլ միջոցառումների, ողջունել է օմբուդմանի ինստիտուտը հիմնադրելու վերաբերյալ ՀՀ իշխանությունների որոշումը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի մասի 1-ի կետ 1-ի համաձայն՝ Պաշտպանն իրավունք ունի անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ՝ զորամիավորումներ, անձանց հարկադրական պահման վայրեր, այդ թվում՝ նաև նախնական կալանքի և ազատագրված վայրեր: Այսպես, Պաշտպանը կարող է անարգել այցելել զորամասեր, զինվորական կալանատներ, կարգապահական գումարտակներ, քրեակատարողական հիմնարկներ, հոգեբուժարաններ, ձերբակալվածների պահման վայրեր, քննչական մեկուսարաններ և այլն: Հարկ է ընդգծել, որ օրենքի հոդված 8-ը հնարավորություն է ընձեռում Պաշտպանին անարգել այցելել զորամիավորումներ և անձանց հարկադրական պահման վայրեր նաև բողոքի բացակայության պայմաններում՝ սեփական նախաձեռնությամբ:

Այս դրույթների նախատեսումը մեծապես նպաստում է Պաշտպանի գործունեության արդյունավետության և օպերատիվության բարձրացմանը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում և բխում է Փարիզյան սկզբունքներով նախատեսված ազգային հաստատություններին քննություն իրականացնելու համար ադեկվատ լիազորություններով ապահովելու պահանջից:

Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար այցելում է ձերբակալվածների պահման վայրեր և անհրաժեշտության դեպքում ստուգում անձին ձերբակալելու հիմնավորվածությունը, այն է՝ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան կազմված ձերբակալման արձանագրության կամ ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշման առկայությունը: Կալանավորվածների պահման վայրերում Պաշտպանը անհրաժեշտության դեպքում պահանջում է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը, ստուգում է արգելանքի կամ կալանքի տակ պահելու ժամկետների համապատասխանությունը քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին, իսկ պատժի իրականացման վայրերում Պաշտպանը ստուգում է դատապարտյալներին պահելու պայմանները և նրանց իրավունքների իրականացման ապահովումը համապատասխան վարչակազմի կողմից:

Պաշտպանի մասին ՀՀ օրենքում ամրագրված այս դրույթը իր արտացոլումն է ստացել նաև 2004թ. դեկտեմբերի 24-ին ընդունված ՀՀ քրեակատարողական օրենսգրքում: Օրենսգրքի հոդված 22-ի մաս 1-ի կետ 5-ով սահմանվել է Պաշտպանի լիազորությունն առանց հատուկ թույլտվության այցելել պատժի իրականացման վայրեր:

Քրեակատարողական օրենսգրքով սահմանվել է նաև դատապարտյալի իրավունքը իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով,

ինչպես անձամբ, այնպես էլ իր պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու Պաշտպանին:

Պաշտպանին հասցեագրած դիքում-բողոքով ցմահ ազատագրկման դատապարտված անձը հայտնել է, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում աշխատակիցների կողմից ինքը ենթարկվել է դաժան և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, բացի այդ, իր դիմումը փոխանցելու մասին համաձայնության մեջ նա նշել էր, որ իր գործի հետ կապված կան հանգամանքներ, որոնք նոր են, դատարանի կողմից երբեք չեն քննվել և կարող են հիմք հանդիսանալ վճռաբեկ բողոք բերելու համար: Դիմումը քննարկման նպատակով փոխանցվել է ՀՀ գլխավոր դատախազին, որից ստացվել է պատասխան այն մասին, որ դատապարտյալը տեղափոխվել է այլ խուց:

Նշենք, որ Հայաստանն առաջինն է Հարավային Կովկասում, որ օրենսդրորեն ամրագրել է քաղաքացիական հասարակության վերահսկողությունը քրեակատարողական հիմնարկների գործունեության նկատմամբ: «Ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան ՀՀ արդարադատության նախարարության կողմից ձևավորվել է քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խումբ, որն ըստ էության հանդիսանում է քրեակատարողական հիմնարկների գործունեության վերահսկման և կալանավորվածների իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմ: Խմբի գործունեությունն ապացուցել է ՀԿ-ների և արդարադատության նախարարության համագործակցության կարևորությունն ու արդյունավետությունը: Ազատագրկման վայրերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության համակարգումը, ազատագրկվածներին պահելու ֆիզիկական պայմանների բարելավմանը և կադրերի նախապատրաստմանը զուգահեռ հանդիսանում է բանտային համակարգի բարեփոխումների բաղկացուցիչ մաս:

Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն, որպես իր պարբերական այցելությունների ծրագրի մաս, 2006թ. նախատեսում է ուսումնասիրել ազատագրկված անձանց նկատմամբ վերաբերմունքը տաս պետություններում, այդ թվում՝ Հայաստանում: Կոնվենցիայի համաձայն կոմիտեն այցելություն կատարելու մտադրության մասին շահագրգիռ կողմի կառավարությանը ծանուցելուց հետո իրավասու է ցանկացած ժամանակ այցելել ցանկացած վայր, որտեղ պահվում են պետական մարմնի կողմից ազատագրկված անձինք:

Դեռևս 2002թ. հոկտեմբերին Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեն առաջին անգամ այցելել է Հայաստան: 2004թ. հուլիսին իր ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կոմիտեն հրապարակել է Հայաստանի վերաբերյալ իր առաջին զեկույցը: Կոմիտեն զեկույցում հանգել է այն եզրակացությանը, որ Հայաստանում ոստիկանության կողմից ձերբակալված անձինք դաժան վերաբերմունքի ենթարկվելու մեծ ռիսկի տակ են գտնվում: Կոմիտեն առաջարկել է առաջնային կարևորություն տալ ոստիկանության աշխատակիցների մասնագիտական թրեյնինգներին, որոնք կներառեն նաև ժամանակակից հարցաքննության մեթոդները: Ընդգծվել են նաև քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածության և դատապարտյալների անբավարար զբաղվածության հարցերը:

2004թ. Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն նույնպես այցելել է Հայաստան՝ ապրիլյան հանրահավաքների ընթացքում կամ դրանցից հետո ազատագրկված անձանց նկատմամբ դրսևորված վերաբերմունքի կապակցությամբ տեղեկատվություն հավաքելու նպատակով:

5.1.3. Անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիություն

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարզվի իր անձնական ու ընտանեկան կյանքը: Առանց անձի

համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով: Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ:

ՀՀ Մահմանադրություն, հոդված 23

Արգելվում է կամայական կամ անօրինական միջամտությունն անձի անձնական, ընտանեկան կյանքին, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիությանը, ինչպես նաև անօրինական ոտնձգությունը նրա պատվի ու հեղինակության դեմ: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգություններից օրենքով պաշտպանվելու իրավունք:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 17

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք: Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 8

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 17-ը երաշխավորում է յուրաքանչյուրի իրավունքը պաշտպանված լինելու կամայական կամ անօրինական միջամտությունից անձնական, ընտանեկան կյանքին, բնակարանին կամ նամակագրությանը, ինչպես նաև անօրինական ոտնձգություններից՝ նրա պատվի և հեղինակության նկատմամբ:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի մեկնաբանությամբ այս իրավունքը պետք է պաշտպանված լինի բոլոր տեսակի ոտնձգություններից՝ անկախ նրանից, թե ում կողմից է ոտնձգությունը իրականացվում՝ պետական մարմինների, թե ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:

Այս հոդվածով պետությունները պարտավորություն են ստանձնում օրենսդրական և այլ միջոցառումներ ձեռնարկել այս իրավունքի պաշտպանությունը ապահովելու նպատակով:

Պետք է նկատի ունենալ, որ «անօրինական» և «կամայական» միջամտություն հասկացությունները չեն նույնացվում: «Անօրինական» նշանակում է, որ միջամտությունը կարող է լինել օրենքից դուրս, օրենքով չսահմանված կարգով:

«Կամայական» միջամտությունը կարող է լինել նաև օրենքի հիման վրա: Սակայն բոլոր դեպքերում այն պետք է լինի ողջամիտ՝ համապատասխան հանգամանքները հաշվի առնելով:

Անդրադառնալով «ընտանիք» հասկացությանը, կոմիտեի կողմից ընդգծվել է, որ այն պետք է մեկնաբանվի լայն իմաստով, բացի այդ, կոչ է արվել դաշնագրի մասնակից պետություններին իրենց զեկույցներում մանրամասնել նաև ներպետական օրենսդրությամբ ամրագրված «ընտանիք», ինչպես նաև «տուն» սահմանումները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բավականին լայն մեկնաբանություն է տալիս «ընտանեկան կյանք» հասկացությանը և երբևէ սպառնիչ կերպով չի թվարկում նրա բոլոր բաղադրիչները:

Միաժամանակ, եվրոպական դատարանը ամուսնությունը չի դիտում որպես ընտանեկան կյանքի իրավունքի իրականացման պարտադիր պայման*:

ՀՀ օրենսդրությամբ «ընտանիք» հասկացությունը սահմանված չէ որևէ իրավական ակտով, այդ թվում ՀՀ ընտանեկան օրենսգրքով, ինչը գործնականում հաճախ բարդություններ է առաջացնում այս եզրույթը մեկնաբանելիս:

Ինչ վերաբերում է «տուն» արտահայտությանը, ապա, ըստ կոմիտեի, այն իր մեջ ներառում է այն վայրը, որտեղ անձը ապրում և աշխատում է: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի մեկնաբանությունից բխում է, որ բնակարան կարող են համարվել նաև ծառայողական շինությունները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով տրված է «բնակարան» հասկացության սահմանումը, ընդ որում, նրան տրված է բավականին լայն իմաստ՝ բնակարանին հավասարեցնելով նաև մասնավոր ավտոմեքենան, ծառայողական անձնական աշխատասենյակը, ավտոմեքենան և արվեստանոցը:

Անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության սկզբունքը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով: Անօրինական խուզարկությունը, նամակագրության և անձնական կյանքի գաղտնիության խախտումը, ոտնձգությունը պատվի և հեղինակության դեմ առաջացնում է նաև քրեական պատասխանատվություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ բնակարանի խուզարկությունը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ: Այնուամենայնիվ, պրակտիկայում քննչական մարմինների կողմից երբեմն փորձ է արվում անօրինական խուզարկությունը քողարկել զննության անվան տակ: Նման ձևով ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները խուզարկություն և առգրավում են իրականացրել Պաշտպանի աշխատակազմի նստավայրում՝ անցկացված խուզարկությունն արձանագրելով որպես զննություն:

Այս բնույթի արձանագրություններով ձեռք բերված մեղադրական ապացույցներն են, որ դատարանների կողմից պետք է ճանաչվեն որպես անթույլատրելի ապացույց, ինչը սակայն դատարանները շրջանցում են չհիմնավորված որոշումներով:

Անձնական կյանքը հարգելու վերաբերյալ եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ներառում է անհատի ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիությունը, նրա նամակագրությունը, հեռախոսագրույցը և այլ հարցեր, ինչպես նաև անդրադառնում է անհատի անձնական կյանքին վերաբերող տեղեկատվության մատչելիությանը, այդ տեղեկությունների հավաքմանը, գրանցմանը, պահպանմանը և օգտագործմանը, խուզարկությունների կիրառմանը*:

«Ռոտարուն ընդդեմ Ռ-ումինիայի» գործի քննության ժամանակ Ռ-ումինիայի կառավարության կարծիքով՝ «անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին միջամտության համար անհրաժեշտ է բավարարել երեք պայման՝ պետք է հավաքված լինեին տեղեկություններ շահագրգիռ անձի վերաբերյալ,

* Օրինակ՝ «Ձոնսթոնը և այլք ընդդեմ Իռլանդիայի» գործով եվրոպական դատարանը գտել է, որ եթե կնոջ և տղամարդու ամուսնությունը գրանցված չէ, սակայն նրանց փոխհարաբերություններն ունեն կայուն և մշտական բնույթ և նրանք ապրում են իրենց երեխաների հետ միասին, ապա դա պետք է համարվի ընտանիք:

* Տե՛ս՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը», Միջազգային իրավունքի հայկական ընկերակցություն, Երևան 2005:

այդ տեղեկությունները պետք է օգտագործված լինեին և շահագրգիռ անձը պետք է զրկված լիներ դրանք հերքելու հնարավորությունից»: Այս գործով եվրոպական դատարանը նշեց, որ՝ «Ե՛վ այդ տեղեկությունը պահելը, և՛ դրա օգտագործումը, դիմողին այդ տեղեկատվությունը հերքելու հնարավորություն տալը մերժելու հետ մեկտեղ, հանդիսանում են միջամտություն նրա անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին, ինչը երաշխավորված է հոդված 8-ի կետ 1-ով»:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ մասնավոր հեռախոսագրույցներ լսելու նպատակով գաղտնի լսող սարքերի օգտագործումը, անկախ դրա բովանդակությունից համարվում է միջամտություն անձնական կյանքին: Ինչպես գործնական, այնպես էլ մասնավոր հեռախոսագրույցները ճանաչվում են որպես «անձնական կյանք» հասկացության բովանդակային մաս, նաև այն դեպքում, երբ այս կամ այն հեռախոսագրույցը վարվել է գրասենյակի հեռախոսով**:

Կոնվենցիայի հոդված 8-ի կետ 2-ով սահմանված է, որ իրավունքների սահմանափակումը կարող է տեղի ունենալ, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության, կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 14-ի համաձայն քրեական դատավարության ընթացքում նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունքի հետ անմիջականորեն առնչվող հարցերից է նաև անհատական տվյալների պաշտպանությունը: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի մեկնաբանության համաձայն՝ անհատական տվյալների հավաքումը և պահպանումը համակարգիչներում, տեղեկատվական բազաներում և այլ կրիչների վրա պետական մարմինների կամ մասնավոր անձանց կողմից պետք է կարգավորվի օրենքով:

Պետության կողմից պետք է ձեռնարկվեն արդյունավետ միջոցներ, որպեսզի մարդու անձնական կյանքի իրավունքին առնչվող տեղեկություններին չկարողանա ծանոթանալ այն անձը, ով օրենքով լիազորված չէ, ինչպես նաև, որ այդ տեղեկությունները երբեք չօգտագործվեն դաշնագրի հետ անհամատեղելի նպատակներով:

2003թ. փետրվարի 14-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները: Օրենքով սահմանվել է «անհատական տվյալ» հասկացությունը, որի մեջ ներառվում է նյութական կրիչի կամ գրավոր կամ այլ կերպ ամրագրված՝ ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ, այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը:

** Տե՛ս՝ «Հալֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով եվրոպական դատարանի վճիռը:

Այդ օրենքը անմիջականորեն կապված է «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի հետ, ինչը հարուցում է մի շարք վիճահարույց խնդիրներ և առանձնահատուկ ուշադրություն է պահանջում*:

5.1.4. Օրենքի առջև հավասարության իրավունք և խտրականության արգելում

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 14.1

Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանության իրավունք: Այդ կապակցությամբ օրենքով պետք է արգելվի ցանկացած խտրականություն և բոլորի համար երաշխավորվի հավասար ու արդյունավետ պաշտպանություն խտրականությունից այնպիսի հիմքերով, ինչպիսին են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքները, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակ:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 26

Սույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 14

Օրենքի առջև հավասարության իրավունքը 19-րդ դարի նվաճումներից է և հանդիսանում է հիմնարար իրավունքներից մեկը: Այս իրավունքը չի պահանջում օրենսդրական ձևակերպում կամ հղում օրենսդրությանը և դրսևորվում է որպես դրա իրականացման հարկադրանք:

Այն ըստ էության նշանակում է, որ դատական և գործադիր իշխանությունների ներկայացուցիչները պետք է գործեն համաձայն օրենքի, այսինքն՝ օրենքի նկատմամբ կամայականություն չպետք է լինի:

Հավասարության սկզբունքը ենթադրում է միանման միջոցների կիրառում օբյեկտիվորեն միանման պայմանների/փաստերի առկայության դեպքում, ինչպես նաև օբյեկտիվորեն ոչ միանման պայմանների/փաստերի առկայության դեպքում ոչ միանման միջոցների կիրառում: Այս իրավունքի խախտումները հիմնականում պայմանավորված են խտրական մոտեցմամբ՝ իրավունքը խախտվում է կամ իրավունքի «տրամադրումը» մերժվում է ի շահ ուրիշի:

Օրենքի առջև հավասարությունը ենթադրում է, որ պետությունն ապահովում է օրենքով երաշխավորված իրավունքից օգտվելու յուրաքանչյուրի հնարավորությունը, օրենքի պահանջն անդառնալի է յուրաքանչյուրի համար, իսկ օրենքի և իրավունքների խախտման դեպքում ապահովված է համարժեք պատժելիության սկզբունքի կիրառումը:

Օրենքի առջև հավասարության պահանջը խախտվում է, երբ գործադիր կամ դատարանի կողմից որոշում է ընդունվում օրենքի կամայական մեկնաբանությունների հիման վրա, որոնք օբյեկտիվորեն արդարացված չեն*:

* Վերջին տարիներին տարբեր պետություններում համակարգվում է անձնական տվյալների պաշտպանությունը: Օրինակ, Հունգարիայում գործում է անձնական տվյալների պաշտպանության օմբուդսման:

* Manfred Nowak, U.N. Covenant on civil and political rights, CCPR Commentary, 2nd revised edition, էջ 606:

Չեկույցում բերված բազմաթիվ օրինակները վկայում են, որ հասարակության որոշ խավերի՝ հիմնականում սոցիալապես անապահովների և «իշխանություններից հեռու» անձանց նկատմամբ հանրային մարմինների ներկայացուցիչների կողմից ցուցաբերվում է վատ վարչարարության, իսկ հաճախ էլ անհարգալից վերաբերմունքի արդյունք հանդիսացող խտրականություն: Ի դեպ, խտրականությունը՝ կապված ազգային կամ ռասայական պատկանելության, լեզվի, կրոնի կամ այլ համոզմունքների, քաղաքական հայացքների հետ, չունի այնպիսի դրսևորումներ, ինչպիսին ունենում է՝ պայմանավորված հասարակական դիրքով, սոցիալական վիճակով:

Չնայած «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված վարչարարության հիմնարար սկզբունքները կոչված են ապահովելու բոլորի հավասարությունն օրենքի առջև և բացառելու խտրականությունը, հասարակական որոշակի դիրք գրավող անձի համար սովորաբար չեն առաջանում բյուրոկրատական այնպիսի քաշքշուկներ, իրավունքի տրամադրման անհիմն մերժումներ, ինչպիսիք առաջանում են նման դիրք չունեցող անձանց համար, ինչը հանգեցնում է սոցիալական բևեռացման և միջին խավի չճակատորման դանդաղության:

Նման դրսևորումներն առավելագույնս ակնառու են բնակարանների բաշխման, հողօգտագործման կամ հողի սեփականության իրավունքի, արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրման, իրավունքի պետական գրանցման և նման այլ խնդիրներին առնչվող բողոքներով: Նման խտրական մոտեցումները հաճախ քողարկվում են օրենքի ձևական պահանջներով, և միշտ չէ, որ հնարավոր է ապացուցել իրավունքի խախտման փաստը:

Քիչ չեն դեպքերը, երբ համայնքապետը համայնքի բնակչին մերժում է հողօգտագործման իրավունք տրամադրելը, իսկ այնուհետև ձևական մրցույթով կամ աճուրդով նույն հողակտորը տրամադրում է համայնքի բնակիչ չհանդիսացող անձին:

Լայն տարածում է ստացել բազմահարկ բնակելի շենքերի վերջին հարկերի բնակիչների կողմից լրացուցիչ հարկ ավելացնելու, առաջին հարկի բնակչի կողմից պատշգամբը դեպի մայթ ընդարձակելու կամ փողոցի կողմից մուտք բացելու միջոցով առևտրի օբյեկտ ստեղծելու և ընդհանրապես բնակիչների կողմից զանազան վերակառուցումներ կատարելու ձգտումը: Այդպիսի խնդիրներով ստացված բողոքների հիմնական մասը վերաբերում է թույլտվություն տվող մարմնի՝ քաղաքապետարանի խտրական մոտեցման: Օրինակ, հաճախ բնակելի շենքի առաջին հարկի բնակիչները պատշգամբներն ընդարձակում են մայթին հարող տարածքի կամ մայթի հաշվին, սակայն նույն շենքերի այլ բնակիչների դիմումները՝ նման կարգով պատշգամբները ընդարձակելու մասին, մերժվում են այն հիմնավորմամբ, որ քաղաքաշինության նախագծերում համապատասխան փոփոխություններ դեռևս չեն կատարվել:

Բազմիցս անդրադարձ է կատարվել Երևանում կառուցապատման նպատակներով տարածքներ հատկացնելու և կառուցապատման թույլտվություններ տրամադրելու հարցերին:

Խտրականությունը տարածում ունի տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, ինչն զգալի վնաս է հասցնում ոչ միայն առանձին անձանց, այլև արգելակում է տնտեսության ազատ զարգացմանը:

Տնտեսավարող որևէ սուբյեկտ ապօրինի ճանապարհով կարողանում է ստանալ անօրինական մաքսային և հարկային արտոնություններ և մենաշնորհային դիրք է գրավում՝ ապրանքների ներմուծման կամ արտահանման որոշակի բնագավառում, կամ ստեղծում է անհավասար մրցակցություն նույն բնագավառի այլ սուբյեկտների համար*:

* Օրինակ՝ հասարակական հնչեցություն ստացած գործը կապված «Ռոյալ Արմենիա» ՍՊԸ հետ:

Անհանգստացնող է խտրականությունն աշխատանքի տեղավորման բնագավառում: Աշխատուժի շուկայի հագեցվածությունը գործատուներին հնարավորություն է տալիս աշխատողին թելադրել իր պայմանները: Աշխատանքի վարձատրության չափը նույնպես գործատուների կողմից սահմանվում է կամայականորեն՝ խախտելով հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրություն ստանալու յուրաքանչյուրի իրավունքը: Աշխատանքի պետական տեսչությունն այս հարցերի լուծման ուղղությամբ առայժմ իրեն չի դրսևորել: Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության փորձագիտական խորհրդի կողմից անցկացված աշխատանքի ընդունման հետ կապված խտրական մոտեցման խնդրին նվիրված քննարկմանը ներկայացուցիչ է հրավիրվել նաև աշխատանքի պետական տեսչությունից, որը, սակայն, քննարկմանը չի ներկայացել:

Ինչ վերաբերում է դատարաններին և նրանց կողմից ընդունվող որոշումներին, ապա պետք է նշել առնվազն մեկ հանգամանք, որն ուղղակի խտրականության դրսևորման լայն հնարավորություններ է ընձեռում դատավորներին: Օրենսդրությամբ չի նախատեսվում դատարանների կողմից օրենքի միատեսակ կիրառումը պարտադրող մեխանիզմ, այսինքն՝ դատարանները միևնույն օրենքի տարատեսակ կամայական մեկնաբանությունների և կիրառման հնարավորություն ունեն և հաճախ օգտվում են այդ հնարավորությունից, դրանով իսկ խախտելով օրենքի առջև բոլորի հավասարության իրավունքը: Օրենսդրական նման թերությունը հիմք է տալիս, որպեսզի ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի նախագահը փորձի հիմնավորել օրենքի միևնույն պահանջը յուրաքանչյուր դեպքում նորովի մեկնաբանելու դատավորի իրավունքը:

5.1.5. Արդար դատաքննության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 19

Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Յուրաքանչյուր ոք իր դեմ ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքների ու պարտականությունների որոշման ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակային քննության իրավունք:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր,

Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննարկման դեպքում, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 6

Մինչ արդար դատաքննության իրավունքի պաշտպանվածության մակարդակի վերլուծությանն անդրադառնալը, անհրաժեշտ է նշել դատական համակարգում տեղ գտած որոշ բարեփոխումներ, մասնավորապես՝ դատական նիստերի ձայնագրումը, որը հարկադրում է նիստը նախագահող դատավորին խստիվ ղեկավարվելու դատավարության օրենքով՝ կատարելու օրենքի բոլոր պահանջներն ամենայն մանրամասնությամբ, հակառակ դեպքում կողմը հնարավորություն է ստանում հենվել նիստի ձայնագրության վրա և բողոքարկել դատավորի գործողությունները: Նիստերի ձայնագրման պրակտիկայի ներդրումից հետո, նկատելի դրական տեղաշարժ է կատարվել դատարանների պահվածքում և մոտեցումներում, առնվազն մայրաքաղաքում:

Դատարանների շենքային պայմանների բարելավմամբ փորձ է արվում նվազեցնել գործով շահագրգիռ անձանց անձնական շփումները դատավորների հետ, մեղադրողի և դատավորի «առանձնացումները», ինչպես նաև պարզապես ապահովել մարդուն արժանավայել ֆիզիկական պայմաններ:

Նման և այլ բնույթի դրական տեղաշարժերը բավարար չեն դատական համակարգում առաջընթացի ապահովման համար, որը ենթադրում է մի շարք հստակ չափորոշիչների համակարգային բարելավում*:

Արդար դատաքննության իրավունքի մասին խոսելիս նախ և առաջ անհրաժեշտ է նշել, որ դատավճռի հրապարակումը պետք է տեղի ունենա դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության մասնակցությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննությանը կամ նրա մի մասին՝ բարոյականության, հասարակական կարգի կամ ժողովրդավարական հասարակության մեջ պետական անվտանգության շահերից ելնելով, եթե դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտի արդարադատության շահերը:

Արդար դատաքննության իրավունքի մեկնաբանությունն ավելի տարածական է, քան կարող է ենթադրվել հոդվածի բովանդակությունից: Օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարան հասկացությունը սերտորեն շաղկապված է կոնվենցիայի 7-14 հոդվածների իմաստի և բովանդակության հետ: Եթե դատարանն ընդունելի է այնքանով, որքանով ստեղծված է օրենքի հիման վրա, սակայն անձին դատապարտում է արարքի կատարման պահին քրեական հանցագործություն չհամարվող արարքի համար, գործի քննության ընթացքում անտեսում և չի ապահովում դատավարության

* Տե՛ս, օրինակ, Դատական բարեփոխումների ինդեքսը Հայաստանի համար, ղեկտեմբեր 2004, հատոր 2-րդ, Ամերիկայի իրավաբանների ընկերակցություն:

մասնակիցների անձնական և ընտանեկան կյանքի հարգման, մտքի, խղճի և կրոնի, արտահայտվելու, հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունքները, արդեն խոսք չի կարող լինել կոնվենցիայի հոդված 13-ի պահանջների՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի ապահովման մասին:

Հետևաբար և չի կարող խոսք լինել արդար և անաչառ դատաքնության մասին: Եթե չի երաշխավորվում արդյունավետ իրավական պաշտպանությունը, ապա դրա պատճառը պետք է փնտրել հոդված 6-ի պահանջներին դատարանի անհամապատասխան լինելու մեջ՝ դատարանն անկախ չէ կամ տվյալ հարցով ունի անձնական շահագրգռություն և չի կարող համարվել անաչառ, չի կարող արդար դատաքնություն իրականացնել:

Բացի այդ, քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի առնվազն հետևյալ իրավունքները՝ անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին, հարցաքննելու իր դեմ ցուցմունքներ տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու իր վկաներին կանչելու ու հարցաքննելու նույն այն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները և այլն:

Այս իրավունքների կողքին իրենց ուրույն տեղն են գրավում պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակն ու հնարավորությունները, ինչպես նաև անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանի միջոցով պաշտպանությունը, իսկ դատապաշտպանի ծառայությունների դիմաց վճարելու համար բավարար միջոցների բացակայության պայմաններում անվճար (այսինքն՝ պետության հաշվին) նշանակված դատապաշտպանի ծառայություններից օգտվելու հնարավորությունը:

Անհրաժեշտ է վերլուծել քրեական հանցագործության մեջ մեղադրվողի վերոնշյալ նվազագույն իրավունքների ապահովումը: Դրանց ապահովումը հատկապես կարևորվում է հետաքննության և նախաքննության ընթացքում: Անձին վերագրվող մեղադրանքի հիմնավորումը, նրա մեղավորության ապացուցումը հետաքննության և նախաքննության խնդիրն է, դատարանն ստուգում է միայն ներկայացված ապացույցների օրինականությունը, հավաստիությունը և մեղադրանքն ապացուցված համարելու համար դրանց բավարարությունը:

Երբ հետաքննության և նախաքննության փուլում մեղադրյալի իրավունքներն ապահովված չեն եղել, երբ ապացույցները ձեռք են բերվել օրենքի խախտումով, դատարանի համար դժվար է խախտված իրավունքները վերականգնելը, օրենքի խախտումով ձեռք բերված ապացույցներից ազատվելը:

Խնդիրը նրանում է, որ երբ դատարանն անդրադառնում է հետաքննության, նախաքննության փուլում թույլ տված դատավարական խախտումներին, պետք է զնահատական տա նաև խախտում թույլ տված պաշտոնատար անձանց մեղավորությանը: Խախտում թույլ տվողներ են՝ ոստիկանության աշխատակիցներ, քննիչ, դատախազ: Ոստիկանության և դատախազության մարմինները մաս են կազմում կառավարման համակարգի, որի դեմ ելնելը կվկայեք դատարանի անկախության մասին:

Որքանով կարող է անկախ համարվել այն դատավորը, որին ՀՀ նախագահի մոտ վարկաբեկելու հնարավորություն ունի ՀՀ գլխավոր դատախազը՝ կոնկրետ գործով դատավորի դատավճիռը ներկայացնելով որպես գործով շահագրգիռ դատավորի դատավճիռ, հօգուտ ամբաստանյալի ցանկացած քայլ ներկայացնելով որպես անձնական շահագրգռություն: Որքանով կարող է անկախ համարվել այն դատավորը, որին հանձնարարվում է դեկավարվել ոչ թե արդարադատության, այլ կոնկրետ բնագավառում իրականացվող պետական քաղաքականության շահերով:

Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացմանը նախորդել է ՀՀ նախագահի մոտ հրավիրված խորհրդակցությունը, որին հրավիրվել և մասնակցել է նաև վճռաբեկ դատարանի նախագահը: Հետագա գործընթացները վկայում են, որ այդ խորհրդատվության մասնակիցների առջև դրվել է մեկ խնդիր՝ տվյալ ծրագրերն իրականացնելիս հաշվի չառնել ոչ Սահմանադրությունը, ոչ ՀՀ սահմանադրական դատարանի 1999թ. որոշումը, և ոչ էլ մարդու իրավունքներին, մասնավորապես՝ սեփականության իրավունքին, առնչվող միջազգային նորմերը:

Նման բնույթի խնդրի քննարկմանը վճռաբեկ դատարանի նախագահի մասնակցությունն էլ հենց բերել է նրան, որ դատավորները տեղեկացվել են այդ գործընթացին վերաբերող պետական քաղաքականությանը՝ իրացնողի, կառուցապատողի շահն առաջնային համարել սեփականատիրոջ շահերի նկատմամբ:

Նման բնույթի գործերով, երբ դատարաններն անտեսում են օտարվող գույքի դիմաց իրացնողի, կառուցապատողի հաշվարկած փոխհատուցման չափի վերաբերյալ սեփականատիրոջ առարկությունները, անկախ գնահատողի միջոցով նոր գնահատում կատարելու, վերցվող տարածքի իրական չափերը ճշտելու վերաբերյալ պահանջները, երբ վճիռ է կայացվում դատարանին անհայտ անձանց (տարածքը զբաղեցնող այլ անձանց) տարածքից վտարելու վերաբերյալ, ակնհայտ է դառնում ՀՀ նախագահի հրավիրած խորհրդակցությանը վճռաբեկ դատարանի նախագահի մասնակցության նպատակը: Այս պայմաններում նախ պետք է խոսել անկախ ու անաչառ դատարանի և ապա իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայության մասին:

Նույնն է նաև քրեական գործերի դեպքում, երբ պաշտպանության կողմը պահանջում է անօգտագործելի ճանաչել օրենքի խախտումով ձեռք բերված ապացույցը, քննության առարկա դարձնել քննության խորթ մեթոդների կիրառումը, անցկացնել փորձաքննություններ և այլն*։ Նման միջնորդությունները մերժվում են առանց բավարար հիմնավորման, ինչը պաշտպանության կողմի համար իրավական պաշտպանությունը դարձնում է անարդյունավետ:

Քրեական գործերի հիմնական մասն սկսվում է նյութերի նախապատրաստումով, որը ձեռնարկվում է հետաքննության մարմնի կողմից: Հանցանք կատարած լինելու մեջ կասկածվողը ոստիկանության կողմից բերման է ենթարկվում և պահվում է անազատության պայմաններում, և ապա նրանից պահանջվում է բացատրություն այն կասկածանքների կապակցությամբ, որի համար բերման է ենթարկվել: Անձին հարկադրում են բացատրություն գրել, նրան չի բացատրվում իր դեմ վկայելու և ապացույցներ ներկայացնելու պարտականությունից ազատ լինելու իրավունքը, չխոսելով այն մասին, որ նաև կիրառվում են քննությանը խորթ մեթոդներ: Հետագայում հենց այս ճանապարհով ստացված խոստովանական բացատրության վրա էլ կառուցվում է տվյալ անձին վերագրվող մեղադրանքը:

Դատաքննության ընթացքում, երբ խոսվում է քննության այդ սկզբնական փուլի մասին, դատարանի համար դժվար չէ պարզելը, որ նման խոստովանական բացատրություն գրելուն նախորդել է անձին 1-2, երբեմն նաև ավելի օրեր ապօրինի անազատության պայմաններում պահելը, որ նման ճանապարհով կորզված բացատրությունը նույնությամբ դարձել է ցուցմունք, այսինքն տվյալ անձը պարտադրվել է եթե ոչ անթույլատրելի, ապա զոնե կասկածելի պայմաններում ստացված

* Տե՛ս՝ ՀՀ գործող օրենքներում կոռուպցիա ծնող նորմերի վերլուծություն, Ա. Տոնապետյան, Հ. Ալումյան, Ա. Գրիգորյան, Ահաբեկչության դեմ պայքարի աջակցության կենտրոն, Երևան 2005:

բացատրությունն արտագրել արդեն որպես ցուցմունք: Հետագայում, երբ տվյալ անձը հնարավորություն է ստանում օգտվելու պաշտպանի ծառայություններից, ազատվում է բարոյական և ֆիզիկական ճնշման ենթարկվելու սպառնալիքներից, փորձում է ուղղում կատարել իր սկզբնական ցուցմունքներում, այն զնահատվում է որպես պատասխանատվությունից խուսափելու փորձ: Այս` դեռևս խորհրդային ժամանակներում արմատավորված, արատավոր պրակտիկան շարունակվում է նաև երկրի անկախացումից հետո, ինչը լուրջ կասկածի տակ է դնում դատական համակարգի բարեփոխումների արդյունավետությունը` առնվազն արդար դատաքննության մասով:

Երբ դատարանն անտեսում է այս հանգամանքները, անձին զրկում է իրավական արդյունավետ պաշտպանության իրավունքից, անպատժելի են դառնում կոնվենցիայի մի շարք հոդվածներով նախատեսված իրավունքների խախտումները:

Արդար դատաքննության իրավունքի հետ անմիջականորեն կապված է անմեղության կանխավարկածի սկզբունքը, այն է` յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

Դատավճիռներից դժգոհությունները հիմնականում հանգում են նրան, որ անձի մեղավորության ապացուցումը չի իրականացվում օրենքին համապատասխան` անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանմամբ:

Եթե մեղադրող ապացույցի օգտագործելիությունը կասկածի տակ է առնված և դատարանը սպառիչ պատասխան չունի ներկայացված կասկածները փարատելու վերաբերյալ, չփարատված կասկածները չի մեկնաբանում հօգուտ ամբաստանյալի, մեղադրող դատավճռի հիմքում նման ապացույց դնելը պետք է որակել որպես կոնվենցիայի հոդված 6-ի կետ 2-ի խախտում:

Քրեական գործերով որպես պաշտպան մասնակցող փաստաբանների բողոքները վերաբերում են հենց այս բնագավառին` դատարաններն անթույլատրելի չեն ճանաչում օրենքի խախտումով ձեռք բերված ապացույցները: Քրեական դատավարության օրենսգրքով հստակ սահմանված է, որ ապացույցի թույլատրելիությունը հիմնավորելու պարտականությունն ընկած է այն ձեռք բերող կողմի վրա (հոդված 105): Սա նշանակում է, որ երբ կողմը միջնորդում է ապացույցը ճանաչել անթույլատրելի, դատարանը պետք է պահանջի մյուս կողմից` հիմնավորելու ապացույցի թույլատրելիությունը:

Գործնականում դատարանները հիմնականում նման պահանջ մեղադրող կողմին ներկայացնելու փոխարեն, միջնորդությունը համարում են վաղաժամ ներկայացված և հետաձգելով հարցի քննարկումը, այնուհետև շրջանցում և դրան չեն անդրադառնում:

Դատական պրակտիկայի վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ դատարանները բացահայտ խախտում են կոնվենցիայի հոդված 6-ի պահանջները կամ եթե նույնիսկ կատարում են դրանք, ապա միայն ձևականորեն: Հենց դա է պատճառը, որ չկա վստահություն դատարանների նկատմամբ, ինչը հիմք է տալիս խոսելու իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից մեկի լուրջ թերությունների մասին:

Կարևորագույն դեր կարող են ունենալ հասարակական վերահսկողությունը դատական համակարգի նկատմամբ և կառուցողական համագործակցությունը Պաշտպանի հաստատության և դատական համակարգի միջև, որոնց արդյունավետությունն ապացուցվում է զարգացած ժողովրդավարությունների փորձը*:

* ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի օմբուդսման-դատական համակարգ համագործակցությանը նվիրված 6-րդ կլոր սեղանի ընթացքում ներկայացվել են օմբուդսման-դատարաններ արդյունավետ համագործակցության բազմաթիվ օրինակներ` հօգուտ մարդու իրավունքների:

5.1.6. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը: Յուրաքանչյուր ոք, ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:

ՀՀ Մահմանադրություն, հոդված 18

Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, նույնիսկ, եթե նման խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 13

Կոնվենցիան ամրագրել է մարդու այն հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնք մասնակից պետությունները պարտավորվել են ճանաչել, պահպանել ու պաշտպանել:

Երբ խոսքը վերաբերում է ամրագրված իրավունքների և ազատությունների պահպանմանն ու պաշտպանությանը, կոնվենցիան օգտագործում է «արդյունավետ» որակումը, ինչը ենթադրում է ներպետական օրենքներով այնպիսի սկզբունքների ամրագրում, այնպիսի կառույցների ստեղծում և մեխանիզմների նախատեսում, որոնց միջոցով հնարավոր կլինի պարտադիր և անարգել վերականգնել խախտված իրավունքը:

Օրինակ, կոնվենցիայի հոդված 2-ով ասված է՝ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով»: Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը չի սահմանափակվում միայն ներպետական օրենքով մահապատժի վերացմամբ: Կյանքի իրավունքը ներառում է նաև խոշտանգումներից, ստրկական վիճակում պահվելուց ազատ լինելու, անձնական անձեռնմխելիությունից օգտվելու, առողջ շրջակա միջավայրում ապրելու, սոցիալապես բավարար կենսապայմաններ ունենալու և մյուս այլ իրավունքները, որոնք կոչված են ապահովելու յուրաքանչյուրի արժանապատիվ գոյությունը:

Կոնվենցիան պարտավորեցնում է՝ նախ ներպետական օրենքով ամրագրել կյանքի իրավունքը, այսինքն՝ ճանաչել կյանքի իրավունքի անօտարելի լինելը յուրաքանչյուրի համար, ապա նաև սահմանել և ամրագրել այնպիսի նորմեր, որոնք կոչված կլինեն արդյունավետ պահպանելու և պաշտպանելու մարդու այդ իրավունքը: Նույնը վերաբերում է մյուս բոլոր իրավունքներին ու ազատություններին:

Կոնվենցիայի հոդված 13-ում ասված է՝ «Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Կոնվենցիայի հոդված 6-ում ամրագրված է օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարանի միջոցով իր գործի քննության յուրաքանչյուրի իրավունքը իրեն ներկայացված քրեական մեղադրանքի առնչությամբ, ինչպես նաև, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները:

Անկախ և անկողմնակալ դատարանի առկայությունը, գործի՝ ողջամիտ ժամկետում և հրապարակային քննության պահանջը՝ սրանք դատական քննության արդարացի լինելն

ապահովելու մեխանիզմներ են, իսկ արդար դատաքննությունն իրավունքի արդյունավետ պաշտպանության միջոցներից է:

Կոնվենցիայի հոդված 13-ի պահանջը չի վերաբերում միայն դատական պաշտպանության իրավունքին: Իրավունքի արդյունավետ պաշտպանությունը սկսվում է իրավունքի ամրագրմամբ, իրավունքի խախտման համար պատասխանատվության պաշտպանության մեխանիզմների սահմանմամբ, պաշտպանությունն իրականացնելու պարտականություն և իրավասություն ունեցող մարմինների, դրանց գործունեության երաշխիքների նախատեսմամբ: Կարևորվում է նաև այդ մարմինների պատասխանատվության նախատեսումը՝ պարտականությունների ոչ պատշաճ կատարման համար:

ՀՀ Սահմանադրությունն ամրագրել է կոնվենցիայով հռչակված իրավունքներն ու ազատությունները, որով ճանաչել է դրանց պահպանման և պաշտպանության պարտադիր լինելը: Այդ իրավունքներին վերաբերող ներպետական օրենքներն են, որ պետք է երաշխավորեն ամրագրված և ճանաչված իրավունքների և ազատությունների խախտումների դեպքերում պետական մարմինների առջև արդյունավետ պաշտպանության իրավունքը:

Օրինակ, «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքը կոչված է նախատեսելու դատական այնպիսի համակարգ, որի գործունեությունը լիովին կհամապատասխանի կոնվենցիայի հոդված 6-ով ներկայացվող պահանջներին՝ կստեղծվի օրենքի հիման վրա, երաշխավորված կլինեն նրա անկախությունն ու անկողմնակալությունը:

Դատավարության օրենսգրքերը, սահմանելով դատավարության իրականացման կարգն ու պայմանները, կոչված են երաշխավորելու դատարան դիմելու իրավունքի և արդար դատաքննության իրականացումը:

Ոստիկանության, դատախազության մարմինների գործունեությունը կարգավորող օրենքներով այս մարմիններին վերապահվում են այնպիսի լիազորություններ, որոնց միջոցով տվյալ մարմինները կարող են և պարտավոր են երաշխավորել յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների պահպանումը և խախտված իրավունքի պաշտպանությունը: Այդ մարմինները պարտավոր են ընդունել, հաշվառել իրավունքի պաշտպանություն հայցող յուրաքանչյուր անձից ստացված դիմումը և համապատասխան որոշում կայացնել: Տվյալ մարմիններին դիմելու իրավունքի երաշխավորված լինելն արդեն իսկ իրավունքի արդյունավետ պաշտպանության հնարավորություն և միջոց է՝ անկախ այն բանից, տվյալ մարմնի որոշմամբ կճանաչվի իրավունքի խախտումը, թե ոչ:

Իրավունքի արդյունավետ իրավական պաշտպանության հաջորդ աստիճանը վարչական մարմնի ընդունած որոշումը բողոքարկելու իրավունքի և բողոքարկվող որոշումը վերանայելու իրավասություն ունեցող մարմնի առկայությունն է:

Իրավունքի խախտումների վերաբերյալ դիմումներով հետաքննության և նախաքննության մարմինների ընդունած որոշումները վերանայելու իրավասություն ունեն դատախազության մարմինները, ստորադաս դատախազի ընդունած որոշումները՝ վերադաս դատախազը:

Իրավունքի արդյունավետ իրավական պաշտպանության ճանապարհին հատկապես կարևորվում է վարչական մարմինների, այդ թվում նաև ոստիկանության ու դատախազական մարմինների որոշումները դատական կարգով բողոքարկելու իրավունքը, այնուհետև նաև դատական հսկողության կարգով վերադաս դատարան բողոքարկելու իրավունքը: Պակաս կարևոր չէ նաև հանրային այլ մարմինների գործողություններն ու անգործությունը, իրավունքը շոշափող որոշումները ինչպես վերադատության, այնպես էլ դատական կարգով բողոքարկելու իրավունքը:

Իրավական դաշտը ձևականորեն ապահովում է իրավունքի իրավական արդյունավետ պաշտպանության հնարավորությունները: Այլ հարց է, թե որքանով արդյունավետ է իրականացվում այդ պաշտպանությունը:

ՀՀ քրեական օրենսգիրքը, վերահաս պատժի սպառնալիքով, պաշտպանության տակ է առնում անձի կյանքն ու առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը, սեփականությունը, աշխատանքի անվտանգ պայմաններ ունենալու և այլ իրավունքները: Քրեական դատավարության օրենսգիրքը երաշխավորում է իրավունքի պաշտպանության համար քննչական մարմիններ և դատարան դիմելու յուրաքանչյուրի իրավունքը, նման դիմումներին ընթացք տալու կարգն ու պայմանները, դիմումով հարուցված վարույթին դիմողի մասնակցելու, իր դիմումով ընդունված որոշումը բողոքարկելու իրավունքները: Նույն կարգով իրավական պաշտպանության հնարավորություններ երաշխավորում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, երբ վիճարկվում է քաղաքացիաիրավական հարաբերություններից բխող իրավունքը:

Վարչարարության հիմնական սկզբունքները՝ անբազրված «Վարչական հիմունքների և վարչարարության մասին» ՀՀ օրենքով, վարչարարության օրինականության, ձևական պահանջները չարաշահելու արգելքի, հայեցողական լիազորությունները սահմանափակելու, կամայականության արգելքի, վարչարարության համաչափության, առավելագույնի սկզբունքի, հավաստիության կանխավարկածի վերաբերյալ հանդիսանում են իրավական այն դաշտը, որի շրջանակներում կարող է իրականացվել իրավունքի արդյունավետ իրավական պաշտպանությունը:

Նույն օրենքով սահմանված վարչական վարույթի կազմման պարտադիր լինելը, վարույթի իրականացման համար սահմանված այնպիսի ընթացակարգերը, ինչպիսիք են՝ դիմողի մասնակցությունը վարչական վարույթին, վարույթն իրականացնող պաշտոնատար անձին բացարկ հայտնելու իրավունքը, վարչական վարույթի նյութերի մատչելիությունը, վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը բողոքարկելու իրավունքը և այլն, իրավունքի արդյունավետ իրավական պաշտպանության մեխանիզմներ են, որոնցից գրագետ ձևով օգտվելը պայմանավորվում է իրավունքի պաշտպանություն հայցողի անձնական կարողություններով:

Վատ վարչարարության, կոռուպցիայի, հովանավորչության, խտրականության կիրառման արդյունքում իրավական պաշտպանության միջոցները դառնում են անարդյունավետ՝ վարչական վարույթով իրականացվում են ձևական գործողություններ, ձևականորեն պահպանվում է վարույթի իրականացման կարգը, և արդյունքում ընդունվում է վարչական ակտ, որը չի արտահայտում օբյեկտիվ իրականությունը:

Կոռուպցիայի և խմբակային շահերի առկայության պայմաններում անարդյունավետ են դառնում վարչական վարույթի օբյեկտիվ իրականացմանն ուղղված մեխանիզմները: Այսպես օրինակ, վարույթն իրականացնող պաշտոնատար անձի դեմ հայտնված հիմնավոր բացարկը չի ընդունվում, կամ եթե ընդունվում է, ապա վարույթը շարունակելը հանձնարարվում է նախկինի հետ ընդհանուր շահ ունեցող մեկ այլ պաշտոնատար անձի: Նույն պայմանների առկայության պատճառով անհեռանկար է դառնում նաև վարչական ակտի բողոքարկումը: Հաճախակի վերադաս վարչական մարմինը, ստորադաս վարչական մարմնի վարչական ակտի դեմ բերված բողոքը քննելիս, մերժում է բողոքի բավարարումը՝ ղեկավարվելով նույն շահով, ինչով ղեկավարվել է ստորադաս մարմինը:

Օրինակ, երբ տարածքային հարկային մարմինն անձին վերագրել է անհիմն հարկային պարտավորություններ, նման ակտի դեմ բերված բողոքները քննելիս հարկային պետական տեսչությունը ղեկավարվում է հնարավորինս շատ հարկեր հավաքագրելու շահով, և իրավունք հայցողը դժվար թե կարողանա իրավունքի արդյունավետ պաշտպանություն ստանալ հարկային վերադաս լիազոր մարմնից: Նույնը կարող է տեղի ունենալ նաև մաքսային մարմիններում:

Վարչական մարմինների համակարգին բնորոշ է որպես առաջնային խնդիր գերատեսչական շահը ցանկացած ճանապարհով պաշտպանելու ձգտումը, ինչը և հանգեցնում է այդ համակարգում վերադասության կարգով իրավունքի պաշտպանության՝ օրենքով ամրագրված սկզբունքների ու մեխանիզմների անարդյունավետությանը:

Ասվածի վկայությունն են ՀՀ արդարադատության նախարարության մոտեցումները դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, քրեակատարողական հիմնարկների, նոտարական գրասենյակների, քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժանմունքների դեմ տրված բողոքներին:

ՀՀ արդարադատության նախարարությունը, պատասխանատու լինելով այդ մարմինների պատշաճ գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելու համար, հակված է քողարկել տեղ գտած թերացումները, հրապարակայնորեն ներկայացնել բարվոք վիճակ, դրական առաջընթաց, ինչը նաև իր աշխատանքի գնահատականն է:

Դատախազական և ոստիկանության մարմինների ընդհանուր գերատեսչական շահն է՝ հանցագործության դեմ պայքարի ուժեղացման պատրանք ստեղծելը, հետևաբար և հանցագործության հատկապես չբացահայտված դեպքերը թաքցնելու, հաշվառումից դուրս թողնելու ճանապարհով բացահայտման տոկոսը բարձր ցույց տալը:

Հաշվետվություններով հանցագործությունների թվի նվազում ներկայացնելը թելադրվում է այդ շահով: Հենց այդ ընդհանուր շահով է պայմանավորված, որ ոստիկանության մարմիններում թույլ տրված դատավարական խախտումները, որոնցով ապօրինաբար սահմանափակվում է մարդու այս կամ այն իրավունքի պաշտպանությունը կամ խախտվում է իրավունքը, դատախազական մարմիններում չեն բացահայտվում և չեն վերացվում: Հանցագործությունը բացահայտելու, խոստովանություն կորզելու նպատակով ոստիկանությունում անձին ապօրինի անազատության մեջ պահելը տարածված երևույթ է, ինչը դատախազությունը չտեսնելու է տալիս:

Այսպիսի երևույթները նկատի ունենալով է, որ արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների շարքում առաջնությունը մշտապես տրվում է դատական պաշտպանությանը:

Անկախության երաշխիքներ ունեցող դատարանը չի կարող կաշկանդված լինել որևէ գերատեսչական շահով: Հետևաբար արդյունավետ իրավական պաշտպանության հնարավորության ապահովման կարևորագույն պայման է դատարանի անկախության երաշխիքը:

Բացակայում է վստահությունը դատարանի նկատմամբ*, ինչը խոսում է այն մասին, որ ապահովված չէ դատարանի անկախությունը՝ դատարանի անաչառությանը խանգարում են և դատարանի վրա ազդեցություն ունեն անձնական և խմբակային շահերը, կոռուպցիան, վարչական մարմինների գերատեսչական շահերը՝ այն դեպքում, երբ վարչական մարմինը լծակներ ունի դատական համակարգի ձևավորման գործընթացին միջամտելու համար:

Ամբողջ ասվածից հետևում է, որ իրավունքի արդյունավետ իրավական պաշտպանության ապահովման ճանապարհին պետք է հաղթահարել կոռուպցիան, խմբակային ու գերատեսչական շահերի ազդեցությունը դատարանների վրա, անդառնալի դարձնել անօրինական վարչական ակտ ընդունելու համար պատասխանատվությունը¹⁵:

* Տե՛ս, օրինակ, Հայաստանի դատարանների մոնիտորինգ. արդյունքներ, վերլուծություն, առաջարկություններ, Երևանի պետական համալսարան, Երևան 2005:

¹⁵ Տե՛ս՝ Հավելված 10՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Բանաձև (2004) 6 հանձնարարական-առաջարկությունը անդամ պետություններին «Իրավական պաշտպանության ներպետական միջոցների բարելավման մասին»:

5.1.7. Մտքի, խղճի և կրոնի ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը: Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 26

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքն ընդգրկում է իր ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը և ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ, հրապարակավ կամ մասնավոր կարգով, իր կրոնը կամ համոզմունքը պաշտամունքի, կրոնական ու ծիսական արարողությունների և վարդապետությունների իրականացման միջոցով արտահայտելու ազատությունը: Ոչ ոք չպետք է ենթարկվի այնպիսի հարկադրանքի, որը նսեմացնում է սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 18

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 9

Մինչ Եվրոպայի խորհրդին անդամակցելը 1991թ. ընդունվել է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որը կոչված է ապահովելու կրոնական ազատության պաշտպանությունը: 1995թ. ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվեց հավատի և համոզմունքների ազատությունը:

Ներկայումս մտքի, խղճի և կրոնի ազատությանն առնչվող դրույթներ են պարունակվում ինչպես վերոնշյալ երկու իրավական ակտերում և մտքի, խղճի ու կրոնի ազատությունն ու կրոնական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերում, այնպես էլ որոշ միջազգային փաստաթղթերում:

Այսպիսով, պետք է հնարավորություն ստեղծվեր կրոնական կազմակերպությունների, համայնքների և խմբերի գործունեության իրականացման համար: Այսօր մեծ ուշադրություն է դարձվում պետություն-կրոնական կազմակերպություններ-հասարակություն հարաբերությունների ապահովման հայեցակարգի վրա:

Դարեր շարունակ, ինչպես և ներկայումս, երկրի բնակչության մեծամասնությունը իրեն դասում է Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդների շարքում: Միաժամանակ, գործում են կաթոլիկ, ուղղափառ, բողոքական, ադվենտիստական, հոգեգալստական, էքյումենիկ, հեթանոսական և այլ եկեղեցիներ, հարանվանություններ, համայնքներ, կազմակերպություններ և շարժումներ: Ազգային փոքրամասնությունների մի մասը պատկանում է տարբեր քրիստոնեական եկեղեցիների և հարանվանությունների (ասորիներ, հույներ, ռուսներ, ուկրաինացիներ, լեհեր, գերմանացիներ, վրացիներ և այլն): Ազգային-կրոնական ուղղությունների շարքում իր ուրույն տեղն է գրավում եզդիականությունը, որը դավանում են եզդիներն ու քրդերը, բացի այդ գորյություն ունեն առանձին եզդիական և քրդական կազմակերպություններ: Գործում է նաև Հայաստանի հրեական կրոնական համայնքը: Միաժամանակ նշենք, որ գործում է մզկիթ, ինչով և մահմեդականների համար ապահովված են իրենց կրոնական ծեսերն ու

արարողությունները, ինչպես նաև ընդհանուր առմամբ դավանանքի հետ կապված միջոցառումներն անցկացնելու հնարավորությունները*:

Այսպիսով, 2004թ. դրությամբ Հայաստանում գործում էր 55, իսկ 2005թ.՝ 56 եկեղեցի, հարանվանություն, համայնք, կազմակերպություն, շարժում և այլ կրոնական միավորում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մտքի, խղճի և կրոնի ազատության պաշտպանվածությունն ու տեղ գտած սահմանափակումները դիտարկելիս ուշադրություն է դարձնում հետևյալ դրույթներին՝ խտրականության բացառում, կրոնական հանդուրժողականություն, մտքի, խղճի և կրոնի ազատության սկզբունքներ, կրոնական համոզմունքները բացահայտորեն դրսևորելու ազատություն և հոգեորսության արգելում, կրոնական ծիսակատարության և գույքին ազատորեն տիրապետելու իրավունք, հավատացյալների և հոգևորների կյանքի և ֆիզիկական բարեկեցության և առողջության իրավունք:

Հայաստանում կրոնական փոքրամասնությունները հիմնականում չեն բախվել իրենց նկատմամբ վերոնշյալ դրույթներից բխող բացասական, այն էլ զանգվածային բնույթ կրող վերաբերմունքի: Այլ է իրավիճակը հնարավորությունների տրամադրման և ընդլայնման ոլորտում, ինչի ուղղությամբ ներկայումս համագործակցություն է ընթանում ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության և կրոնական կազմակերպությունների միջև:

Վերջին տարիներին հասարակական հնչեղություն են ստացել 2004թ. հոկտեմբերի 8-ին պետական գրանցում ստացած «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության հետ կապված խնդիրները, մասնավորապես՝ այլընտրանքային ծառայության հիմնախնդիրը:

Անդամակցելով Եվրոպայի խորհրդին, ի թիվս այլ պարտավորությունների¹⁶ Հայաստանը ստանձնել է անդամակցության երեք տարիների ընթացքում այլընտրանքային ծառայության մասին եվրոպական չափանիշներին համապատասխան օրենքի ընդունման պարտավորությունը և պարտավորվել է ներում շնորհել համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունը մերժելու պատճառով ազատազրկված կամ ուղղիչ աշխատանքի դատապարտված անձանց՝ նրանց հնարավորություն ընձեռելով ընտրություն կատարել չզինված ռազմական կամ այլընտրանքային քաղաքացիական ծառայության միջև, այլընտրանքային ծառայության մասին օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 17-ին և ուժի մեջ է մտել 2004թ. հուլիսի 1-ին: Օրենքի համաձայն՝ այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը սահմանվել է 36 ամիս, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը սահմանվել է 42 ամիս:

Եվրոպայի խորհրդի խորհրդանական վեհաժողովը (ԵԽԽՎ) թիվ 1361 (2004)1 բանաձևով ողջունել է այլընտրանքային զինվորական և քաղաքացիական ծառայության

* Տե՛ս՝ Խղճի, դավանանքի և համոզմունքի ազատություն. իրավունքներ, հնարավորություններ, պարտավորություններ, ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչություն, Երևան 2004:

¹⁶ Տե՛ս՝ Հավելված 5՝ Կարծիք թիվ 221(2000). Հայաստանի դիմումը Եվրոպայի խորհրդին անդամակցելու համար:

մասին օրենքի ընդունումը, որն ընդհանուր առմամբ համապատասխանում է ԵԽԽՎ թիվ 1518 (2001) հանձնարարականին՝ նվիրված Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի կիրառմանը: Սակայն վեհաժողովը անընդունելի և չափազանց երկար է համարել այլընտրանքային քաղաքացիական ծառայության ժամկետը, որը սահմանվել է 42 ամիս, և դիմել է, որպեսզի օրենքը փոփոխության ենթարկվի այս կետով՝ կրճատելով ծառայության ժամկետը մինչև 36 ամիս, նախքան այն ուժի մեջ կմտնի 2004թ. հուլիսի 1-ին: Այնուամենայնիվ, «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը այդ մասով այդպես էլ փոփոխության չի ենթարկվել:

Միաժամանակ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքով լուծվել է զինվորական ստորաբաժանումներում «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության ներկայացուցիչների առանց զենքի ծառայելու կամ զինվորական ստորաբաժանումների հետ չկապված աշխատանքային ծառայություն ընտրելու հարցը:

Օրենքի ընդունումից հետո այլընտրանքային աշխատանքային ծառայություն ընտրած անձինք այդ ծառայությունը պետք է անցնեն ՀՀ կառավարության կողմից հաստատված վայրերում: Այդպիսի վայրեր են սահմանվել հոգեբուժական հիվանդանոցները, ինտերնատները և ծերանոցները, որոնցում և աշխատել են այլընտրանքային աշխատանքային ծառայություն ընտրած անձինք:

Այնուհետև, նման ծառայության անցնելուց կարճ ժամանակ հետո այդ անձինք պահանջ են ներկայացրել իրենց աշխատանքային ծառայության նկատմամբ բացառել զինվորական կոմիսարիատների հսկողությունը, անթույլատրելի համարել հոգեկան հիվանդների հետ իրենց առնչվելը, անընդունելի համարել իրենց վրա սանիտարի պարտականություններ դնելը, իրենց նկատմամբ կիրառելի համարել աշխատանքային օրենսդրության պահանջներն ամբողջապես: Բավարարում չստանալով, այնուհետև լքել են աշխատանքային ծառայության վայրը: Իրենց այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրն ինքնակամ լքելը դատախազական մարմինները դիտել են որպես զինվորական հանցագործություն, հարուցել են քրեական գործեր ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 361-ով և այդ անձանց նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Արարքը զինվորական հանցագործություն որակելով՝ դատախազությունը ղեկավարվել է «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 21-ի մաս 2-ով, ըստ որի՝ «Այլընտրանքային աշխատանքային ծառայողները ծառայության վայրն ինքնակամ լքելու համար պատասխանատվություն են կրում պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներին հավասար՝ օրենքով սահմանված կարգով»: Օրենքը, այնուամենայնիվ, չի հստակեցրել՝ այլընտրանքային աշխատանքային ծառայող զինվորական ծառայող համարվում է, թե ոչ: Օրենքի ընդհանուր տրամաբանությամբ նա զինվորական ծառայող չի համարվում, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 361-ը պատասխանատվություն է նախատեսում զինվորական ծառայողի համար՝ «զինծառայողի կողմից գործաձախ կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը»: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը չէր կարող ՀՀ քրեական օրենսգրքից դուրս քրեական պատասխանատվություն նախատեսել: Հետևաբար օրենքի հոդված 21-ով այլընտրանքային աշխատանքային ծառայողի նկատմամբ նախատեսվող պատասխանատվությունը, համաձայն քրեական օրենսգրքի հոդված 1-ի մաս 1-ի, չի կարող լինել քրեական, քանի դեռ այն չի ներառվել ՀՀ քրեական օրենսգրքում: Օրենսգրքի հոդված 361-ում նման լրացում կատարվել է միայն 2005թ. դետեմբերին, որը հետադարձ ուժ ունենալ չի կարող: Այս խնդիրը նույնպես առայժմ չի լուծված և հարցն օրակարգում է:

5.1.8. Խոսքի և տեղեկատվության ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 27

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի հավատարիմ մնալու իր կարծիքներին՝ առանց միջամտության: Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, լինեն դրանք բանավոր, գրավոր թե տպագիր, գեղարվեստորեն արտահայտված, թե սեփական ընտրությամբ մամուլի ցանկացած միջոցով:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 19

Յուրաքանչյուր ոք ունի սեփական կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է իր կարծիքը պնդելու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից: Այս հոդվածը պետություններին չի խոչընդոտում սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 10

Հայտնի է, որ խոսքի և տեղեկատվության ազատությունը **իրական ժողովրդավարության երաշխիքն է**, որի ապահովմանը, բացի ՀՀ Սահմանադրությունից և միջազգային փաստաթղթերից, կոչված են նաև «Տեղեկատվության ազատության մասին», «Չանգվածային լրատվության մասին», «Հեռուստատեսության և հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքները:

Տեղեկատվության ազատության իրականացումը պայմանավորվում է ոչ միայն օրենքով իրավունքի ամրագրմամբ, այլև տեղեկատվության տրամադրման մշակույթի ներդրմամբ: Տեղեկությունը տնօրինող մարմինները, դրանց պաշտոնատար անձինք հաճախակի, օրենքի պահանջը չիմանալու կամ անձնական դրդումներով, կարող են մերժել անձի պահանջած այս կամ այն տեղեկությունը զանազան ձևական պատճառաբանություններով:

Տեղեկատվության ազատության իրավունքի իրականացումն ապահովելու հարցում չափազանց կարևոր է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ի պահանջը, համաձայն որի՝ «Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում և հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում բոլորի համար տեսանելի տեղում»:

Պակաս կարևոր չեն տեղեկատվություն տնօրինողի կողմից հանրության համար կարևորագույն տեղեկությունները հրապարակելու կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնելու, իր գործունեությանը վերաբերող տեղեկությունները տարեկան հաշվետվությամբ հրապարակելու պարտականությունները, որոնք սահմանված են նույն հոդվածով:

Հաճախ անձին մերժվում է տեղեկության տրամադրումը այն հիմքով, որ պահանջվող տեղեկությունը տեղադրված է տվյալ մարմնի կայքում: Անտեսվում է այն, որ ինտերնետից

օգտվելու մարդկանց հնարավորությունները սահմանափակ են: Բացի այդ, պահանջվող տեղեկությունը կայքում տեղադրվում է զգալի ուշացումով և հաճախ ոչ ամբողջությամբ*:

Եթե այնպիսի մարմիններից, ինչպիսիք են ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, պետական ռեգիստրը, հասցեների բյուրոն և այլ մարմիններ, որոնց կողմից տեղեկության տրամադրման համար նախատեսված է ծառայության վարձավճար, պահանջվող տեղեկությունը տրամադրելու մշակույթ արդեն ունեն, ապա մարդկանց դժվար է տեղեկություններ ստանալ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից՝ օրինակ, բնապահպանական վիճակի, հողային պաշարների, տարածքների օտարման, քաղաքաշինական ծրագրերի և այլնի մասին. այսպես՝ Երևանի քաղաքապետարանից մերժվել է լրագրողին Երևանի կանաչ տարածքների օտարման վերաբերյալ տեղեկություններ տրամադրելը:

Առ այսօր անձը չի կարող իրեն հետաքրքրող տեղեկությունը կամ տեղեկանքը ստանալ համատիրություններից կամ տնային կառավարչություններից, եթե այդպիսիք պահպանված են: Տեղեկությունը անձին իր դիմումի հիման վրա չի տրվում: Եթե պահանջվող տեղեկությունը դիմողի վերաբերյալ չէ, պահանջում են ներկայացնել պաշտոնական հարցում: Օրինակ, երբ անձը դատական վեճ ունի և կարիք ունի տեղեկանք ներկայացնելու դատարան կոնկրետ բնակարանի կարգավիճակի մասին, նրա խնդրանքը հիմնականում մերժվում է, քանի որ դիմողը չի ներկայացնում հարցում դատարանից:

Այս և նման այլ արգելքները տեղեկատվության ազատության ճանապարհին հաղթահարելի են գործող օրենքների պահանջների լիաժեք պահպանման դեպքում:

Ջանգվածային լրատվական միջոցների անկախությունը ժողովրդավարության կայացման կարևորագույն գործոնն է, իսկ լրագրողի անկախության երաշխիքն է նրա անձեռնմխելիությունը, որը պետք է ապահովվի լրագրողի իրավունքի ցանկացած սահմանափակում, նրա դեմ ցանկացած ոտնձգություն օրենքով հետապնդելու և մեղավորներին պատասխանատվության կանչելու ճանապարհով: Այս առումով չափազանց կարևոր է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 164-ի առկայությունը, որով քրեական պատասխանատվություն է նախատեսված լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչնդոտելու համար:

Խոսքի ազատության կապակցությամբ վիճարկվում է քրեական օրենսգրքի՝ զրպարտության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդված 135-ն այն առումով, որ այն կարող է սահմանափակել լրագրողների խոսքի ազատությունը: Այդ վեճում հաղթող է հանդիսացել այն տեսակետը, որ առաջնային պետք է համարել մարդու պատվի և արժանապատվության պաշտպանությունը:

Տեղեկատվության մատչելիությանը խոչընդոտելու և խոսքի ազատության սահմանափակումների շարքում անհրաժեշտ է նշել, մասնավորապես, հետևյալ դեպքերը:

- Երևանում քանդվել են թերթի կրպակներ, դրանց համար նոր տեղեր չտրամադրելու պայմաններում:

* Կարելի է վկայակոչել Պաշտպանի աշխատակազմի գործունեության կասեցմանը վերաբերող ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի որոշումը, որը փետրվարի 1-ի դրությամբ ՀՀ կառավարության կայքում ամբողջական տեքստով չի եղել. ընդամենն առկա էր ՀՀ կառավարության մամուլի հաղորդագրությունը որոշման համառոտ շարադրանքով առանց որոշման համարը նշելու:

- «Առավոտ» օրաթերթի հոկտեմբերի 15-ի համարը Գյումրիի կրպակներից առգրավվել է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախօրեին:
- Հաբերները հարձակում են գործել հետաքննող լրագրողների «Հետք» էլեկտրոնային էջի վրա, ինչպես նաև միջամտել Ա1+ ընկերության էլեկտրոնային էջի քվեարկությանը:
- Ա1+ հեռուստաընկերության մրցութային առաջարկը 10-րդ անգամ մերժվեց ՀՌ-ԱՀ կողմից, այս անգամ ռադիոհաճախականության համար հայտարարված մրցույթում, ինչը առաջ է բերել ազգային ու միջազգային լրագրողական հասարակայնության միանշանակ բացասական արձագանքը:
- Նոյեմբերի 27-ին, 28-ին, 29-ին (սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի օրն ու հաջորդող օրերին) «Ազատություն» ռադիոկայանի հաղորդումներն ուղեկցվել են ուժեղ աղմուկով:
- Մամուլի տարածման գործակալություններին մեծ տուգանքներ են ներկայացվել «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի համաձայն (տպագիր հրատարակությունների տարածումը ենթակա է լիցենզավորման). քանի որ մամուլի տարածման փոքր ձեռնարկությունները ի վիճակի չեն վճարել 5 միլիոն դրամ լիցենզիայի համար, բնականաբար, նրանք կյուծարվեն, իսկ «Հայփոստը» կդառնա այս ոլորտում մոնոպոլիստ:

Ուշագրավ է «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության դատական հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի: 2005թ. մայիսի 24-ին Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը բավարարել է Երևանի քաղաքապետարանի հետ դատական գործընթացում կրած վնասի փոխհատուցման մասին հետաքննողների հայցը: Փետրվարի 10-ին վճարել է դատարանը բեկանեց Երևանի քաղաքապետարանի հայցը, որը բողոքարկել էր վերաքննիչի վճիռը, համաձայն որի քաղաքապետարանի դեմ հայցը բավարարվել էր, և քաղաքապետարանին պարտավորեցրել էին տրամադրել լրագրողական հետաքննության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Սակայն, չնայած 3 ատյանների դատարանների որոշումներին, դեկտեմբերի 20-ի դրությամբ փաստաթղթերը չէին տրամադրվել հետաքննող լրագրողներին:

Լրագրողների իրավունքների պահպանության և պաշտպանության առնչությամբ անհրաժեշտ է նշել, մասնավորապես, ՉԼՄ-ների ներկայացուցիչների նկատմամբ բռնությունների դեպքերը:

- Հարձակում է եղել «Սյունաց երկիր» թերթի գլխավոր խմբագրի վրա, նա ծեծվել է, իսկ նրա մեքենան այրվել է: Քրեական գործը կարճվել է առանց բավարար հիմքերի:
- Նոյեմբերի 24-ին ընդդիմության հանրահավաքի ընթացքում մարմնական ծանր վնասվածք է ստացել «Հայլուրի» թղթակիցը, որը նույն օրը դիմել է Մալաթիա-Մեքաստիա համայնքի ոստիկանության բաժանմունք, հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 258-ով:
- Նոյեմբերի 24-ին Ա1+ ընկերության թղթակցի նկատմամբ ոստիկանության աշխատողի կողմից կոպիտ վերաբերմունք է ցուցաբերվել, ինչը համապատասխան գնահատականի չի արժանացել, ըստ այդմ չի դրվել ոստիկանի կարգապահական պատասխանատվության հարցը:
- Դեկտեմբերի 6-ին իրենց մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում ոստիկանության Նոր Հաճնի բաժանմունք բերման են ենթարկվել «Առավոտ» օրաթերթի թղթակիցը և «Չորրորդ իշխանություն» թերթի լուսանկարիչը: Ոստիկանության բաժանմունքում մեկ ժամ պահելուց հետո նրանց ազատ են արձակել, բերման ենթարկելը պատճառաբանելով սխալմունքով: Այս միջադեպը որևէ իրավական հետևանք չի ունեցել:

2005թ. դեկտեմբերի 14-ին Պաշտպանը հանդես է եկել հայտարարությամբ, մտահոգություն հայտնելով ՉԼՄ ներկայացուցիչների հանդեպ կիրառվող բռնությունների ու հարձակումների հաճախակի դարձած դեպքերի կապակցությամբ¹⁷:

Պաշտպանը նշել է, որ լրագրողների իրավունքների պահպանության և խոսքի ազատության իրավիճակի վատթարացումն արձանագրվել է նաև միջազգային կազմակերպությունների զեկույցներում, մասնավորապես «Լրագրողներ առանց սահմանի» կազմակերպության վարկանիշային ցուցակում Հայաստանը իր դիրքերը նախորդ տարվա համեմատությամբ զիջել է 23 կետով:

Պաշտպանը հույս է հայտնել, որ ՉԼՄ-ների ներկայացուցիչների նկատմամբ կիրառված բռնությունների և մասնագիտական պարտականությունների կատարմանը խոչընդոտելու բոլոր դեպքերը կքննվեն և մեղավորները կկրեն համարժեք պատիժ:

Հեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների վերաբերյալ սահմանադրական փոփոխությունների վերջնական տարբերակում հիշատակվում է միայն մեկ կարգավորող մարմին, չեն սահմանված նրա ստեղծման նպատակները, կարգավիճակն ու գործառույթները: Չեն ընդունվել լրագրողական կազմակերպությունների և Պաշտպանի հայտարարություններում տեղ գտած առաջարկություններն այն մասին, որ հեռարձակման ոլորտում անկախության ապահովման նպատակով անհրաժեշտ է երկու անկախ կարգավորող մարմնի ձևավորում, և որ սահմանադրական փոփոխություններից անմիջապես հետո անհրաժեշտ է այդ մարմինների նոր կազմի ձևավորում: Հաշվի է

¹⁷ Տե՛ս՝ Հավելված 2.1.՝ Պաշտպանի հայտարարությունը լրագրողների իրավունքների խախտումների մասին:

առնվել միայն հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ձևավորման կարգի մասին առաջարկը, ըստ որի անդամների կեսին նշանակում է նախագահը, մյուս կեսին՝ Ազգային ժողովը:

Օրենսդրական քերթյունների առումով անհրաժեշտ է առանձնահատուկ նշել «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը անհանգստացրել է լրագրողական հասարակայնությանը: Նման տեսքով օրենքի ընդունումով հարվածի տակ կդրվեն լրագրողների իրավունքները, ահաբեկչության հետ կապված տեղեկատվության մատչելիությունն ու տարածումը:

Չնայած 2005թ. լրագրողների իրավունքների ոտնահարման, ՉԼՄ ներկայացուցիչների նկատմամբ բռնությունների կիրառման դեպքերը նվազել են, սակայն անկախ փորձագետների կարծիքով Հայաստանում խոսքի ազատության ու տեղեկատվության մատչելիության բնագավառում նկատվում է վատթարացման միտում, ինչի վկայությունն են ազգային և միջազգային լրագրողական կազմակերպությունների գնահատականները:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ միջազգային կազմակերպությունների կողմից իրավիճակի գնահատման չափանիշները մնում են անհասկանալի և անապացուցելի:

Ուղղակի և օբյեկտիվ ցուցանիշների բացակայությունը փորձագետներին ստիպում է իրենց գնահատականներում ավելի շատ հենվել անուղղակի ապացույցների ու չափանիշների վրա, հասարակական կազմակերպությունների կողմից անցկացված հեռուստաալիքների մոնիտորինգի տվյալների վրա:

Այդ մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ Հայաստանում հեռարձակման ոլորտը գտնվում է իշխանական կառույցների հետ սերտ կապեր ունեցող օլիգարխիկ խմբերի անսահմանափակ ազդեցության և վերահսկողության ներքո:

Դա հանգեցնում է իշխող խմբավորումներից հեռուստաընկերությունների կախվածությանը, ինչպես նաև գրաքննության ներթափանցմանը հայկական հեռուստաալիքներ:

Հայաստանի հանրային հեռուստատեսությունը չի կատարում իր անմիջական գործառույթը՝ հասարակության լայն շերտերի շահերի ներկայացում, անաչառ տեղեկատվությամբ բնակչության ապահովում, և գտնվում է իշխանության բարձր օղակների ու նրանց հետ կապված օլիգարխիկ խմբավորումների ազդեցության տակ:

Պաշտպանի օրինակն այս առումով բավականին ակնառու է՝ յոթ ամսից ավելի ոչ մի հեռուստաընկերություն չի հրավիրել Պաշտպանին որևէ հաղորդման, և դեռ ավելին՝ որոշ հեռուստաընկերություններ, հրավիրելով Պաշտպանին հեռուստահաղորդման, մեկ ժամ անց հրաժարվել են հրավերից. 2004թ. ընթացքում այդպիսի հրավերներ Պաշտպանը ստացել է ամսական միջինը 4 անգամ:

Հեռուստաալիքների կախվածության օբյեկտիվ ցուցանիշ կարող են հանդիսանալ նոյեմբերի 27-ի **սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն** ՉԼՄ-ների կողմից լուսաբանելու վերաբերյալ տարբեր ՀԿ-ների կողմից անցկացված մոնիտորինգի արդյունքները: Մոնիտորինգ իրականացնող ՀԿ-ներից մեկի՝ Երևանի մամուլի ակումբի եզրակացության համաձայն, ուսումնասիրված 4 հեռուստաընկերությունները և 7 թերթերից 4-ը սպասվող հանրաքվեն լուսաբանել են՝ նախընտրությունը տալով նախագծի կողմնակիցների տեսակետներին:

Հեռարձակման ոլորտում, իսկ ավելի քիչ տպագիր մամուլում իրավիճակը մնում է բավականին խոցելի, ինչի հիմնական պատճառներն են տնտեսական կախվածությունն ու հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի, հեռուստատեսության և ռադիոյի անկախ հանձնաժողովի (ՀՌ-ԱՀ) և նրա անդամների ընտրության մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը:

Սահմանադրական բարեփոխումները հնարավորություն էին ընձեռում բավականին բարելավել ՀՌ-ԱՀ ձևավորման կարգը, սակայն ընդունված փոփոխությունները քիչ հիմքեր են տալիս հուսալու, որ հեռուստահաճախականությունների տրամադրման կարգը կդառնա ավելի օբյեկտիվ ու պրոֆեսիոնալ:

Պաշտպանը համամիտ է փորձագետների այն կարծիքի հետ, որ խոսքի և տեղեկատվության ազատության ոլորտում իրավիճակը երկրում վատթարանալու միտում ունի:

5.1.9. Հավաքների և միավորումների ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 29

Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 28

Շանաչվում է խաղաղ հանրահավաքների իրավունքը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 21

Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու ազատության իրավունք, ներառյալ արհմիություններ ստեղծելու և իր շահերի պաշտպանության նպատակով դրանց մեջ մտնելու իրավունքը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 22

Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք, ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 11

Հավաքների և միավորումների ազատությունը ժողովրդավարական հասարակության հիմնաքարերից է:

Այս ազատությունը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության: Ընդ որում, օրենքով պետք է սահմանվի «ժողովրդավարական հասարակության մեջ անհրաժեշտ», «ի շահ «պետական կամ հասարակական անվտանգության», «հասարակական կարգի», «անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու», «բնակչության առողջության», «բարոյականության պահպանության», «այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության» հասկացությունների նշանակությունը, այսինքն՝ դրանց բաղադրիչներն ու սահմանները:

Խաղաղ հավաքների իրավունքը (ցույցեր, երթեր և այլ զանգվածային միջոցառումներ, այդ թվում՝ մասնավոր հավաքներ և հանդիպումներ փողոցում) տարածվում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց վրա:

Չուզահեռ այն դեպքերին, երբ իշխանություններին հավաքների անցկացման նկատմամբ սահմանափակումներ կիրառելու լիազորություններ են տրամադրվում, իշխանությունների վրա հավաքների բավարար ոստիկանական պաշտպանության պարտականություն է դրված, հատկապես, երբ հավաքներն անցկացվում են

միաժամանակ՝ տեսանելի մոտիկ կամ միևնույն վայրում հակառակորդ կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հավաքները, որպես կանոն, հանդիսանում են քաղաքական բանավեճերի և հայտարարությունների վայր: Այս իրավունքը պաշտպանելիս ընդգծվում է ազատ քաղաքական բանավեճերի ապահովման անհրաժեշտությունը և նախընտրական արշավների ընթացքում (ներառյալ հանրաքվեները) կարծիքների, գաղափարների և տեղեկատվության անխոչընդոտ տարածումը, որոնք հանդիսանում են ազատ ընտրությունների անցկացման կարևորագույն պայմաններից, ինչպես նաև իշխանության կողմից վարվող քաղաքականության, միջոցառումների և գնահատականների հետ անհամաձայնության հայտնումը: Մովորաբար ընդգծվում է, որ ոստիկանության կողմից լիազորությունների իրականացման ընթացքում իշխանությունները պետք է գործեն բացառապես օրենքի շրջանակներում՝ հասկանալի և մատչելի բոլորին, խուսափելով մարդու իրավունքների խախտումներից:

«Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքն իր հետագա փոփոխություններով պետք է կարգավորի այդ իրավունքի իրականացումը: Օրենքի կիրառման ընթացքում, սակայն, ակնհայտ է դառնում նման միջոցառման մասին նախապես իրազեկելու վերաբերյալ կազմակերպիչների պարտականությունների մասին դրույթների խոցելիությունն այն առումով, որ տեղ է թողնվում ձևական հիմքերով միջոցառումը խափանելու համար:

2005թ. ընդդիմության կազմակերպած հանրահավաքների արգելման վերաբերյալ բողոքներ չեն ստացվել, սակայն Երևանի քաղաքապետարանի կողմից եղել են առարկություններ՝ կապված հանրահավաքների անցկացման տեղի հետ, իսկ նախատեսվող երթերի ժամանակ՝ երթևեկության հնարավոր խափանումների հետ:

Ստացվել է բողոք այն մասին, որ Արմավիրում և Արտաշատում ոստիկանությունը միջամտել և խափանել է սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի անցկացմանը նախապատրաստվելու կապակցությամբ «Արդարության դաշինք» կուսակցության կազմակերպած ուսուցողական պարապմունքները: Բողոքն ուղարկվել է Հանրապետության դատախազին, որի հանձնարությամբ այն քննության են առել մարզային դատախազություններում, և անցկացված քննարկումներով խնդիրը համարել են լուծված:

ՀՀ քրեական օրենսգրքով քրեական պատասխանատվություն է նախատեսված ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելուն կամ դրանց մասնակցելուն խոչընդոտելու համար (հոդված 163): Սակայն դեռևս պահպանվում է նման միջոցառումների օրերին ոստիկանության ուժերով մարզերից մայրաքաղաք եկող մարդատար տրանսպորտի տեղաշարժը սահմանափակելու, ընդդիմության ներկայացուցիչներին նախապես ոստիկանություն հրավիրելու և «նախազգուշացում» հայտարարելու գործելակերպը, ինչը վկայում է, որ քրեական օրենսգրքի հոդված 163-ը համարժեք ընկալված չէ և անհրաժեշտ դեպքերում այն չի կիրառվում:

Պաշտպանը բազմիցս անդրադարձել է այս կարևորագույն հիմնախնդրին, մասնավորապես, ընդգծելով իշխանությունների ոչ իրավաչափ գործողություններն ու ըստ այդմ մարդու իրավունքների խախտումները՝ հղում կատարելով ազգային և միջազգային բազմաթիվ իրավական նորմերի վրա¹⁸:

Հանրապետությունում միավորումների ազատության առնչությամբ խնդիրները կրում են եզակի բնույթ: Հասարակական սեկտորը, ներառյալ ՀԿ-ներն ու դրանց միավորումները, բավական մեծաթիվ և զարգացած է: Այդուհանդերձ, դեռևս ձևավորված չեն ուժեղ և գործուն արհեստակցական միություններ, և իսպառ բացակայում է սոցիալական համագործակցությունը՝ պետություն-ձեռնարկություն-արհեստակցական միություն

¹⁸ Տե՛ս՝ Հավելված 4.8.՝ Պաշտպանի նամակն ուղղված ՀՀ ոստիկանության պետին:

գարգացած փոխհարաբերությունները, ինչպես գործնական, այնպես էլ մշակութային մակարդակով:

Միավորումների ազատության կարևորագույն մաս են կազմում արհեստակցական միությունները, որոնք հիշատակվում են ինչպես Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդված 21) և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայում (հոդված 11), այնպես էլ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում, որի հոդված 8-ում ասված է՝ «Մույն դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել՝ յուրաքանչյուրի՝ իր տնտեսական և սոցիալական շահերի ներկայացման ու պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և իր ընտրությամբ արհեստակցական միության անդամակցելու իրավունքը՝ համապատասխան կազմակերպության կանոնների պահպանման միակ պայմանով, արհեստակցական միությունների ազատորեն գործելու իրավունքը»:

Արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամակցելու իրավունքը ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրությամբ և աշխատանքային օրենսգրքով: Բացի այդ, գործում է նաև «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքը:

Արհեստակցական միությունների դերը հատկապես կարևորվում է կոլեկտիվ աշխատանքային պայմանագրերի կնքման, աշխատանքի ոլորտում սոցիալական գործընկերության հաստատման գործընթացներում՝ աշխատողների շահերը լիարժեք ներկայացնելու և պաշտպանելու նպատակներով:

Արհեստակցական միությունների ստեղծման, դրանց դերի բարձրացման գործընթացներն առայժմ հեռու են բավարար լինելուց: Աշխատողների շահերի ներկայացման և պաշտպանության հարցերում արհեստակցական միություններն առայժմ իրենց զգալ չեն տալիս, ինչն արդյունք է նաև արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների, միավորումների բացակայության, ինչպես նաև արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միության պասիվ գործելակերպի:

Գործադուլ կազմակերպելու և անցկացնելու կապակցությամբ աշխատողի իրավունքների սահմանափակման վերաբերյալ բողոքներ չեն ստացվել: Մակայն, մամուլում հաղորդումներ են եղել Աբովյանի ադամանդի վերամշակման գործարանի, Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատի բանվորների գործադուլների մասին: Այդ գործադուլների հետ կապված Պաշտպանի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արհեստակցական կազմակերպություններն այնուամենայնիվ որոշակի կազմակերպչական դեր ունեցել են, սակայն գործադուլավորներն իրենց պահանջների լիարժեք բավարարմանը հասնել չեն կարողացել՝ բավարար չափով կազմակերպված չլինելու պատճառով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ուսումնասիրված՝ հավաքների և միավորումների ազատության խախտմանն առնչվող բազմաթիվ բողոքներում հաճախ արժարժվում են ցույցերին մասնակցելու համար կարգապահական տուգանքների նշանակման, խաղաղ հանրահավաքի ընթացքի խախտման, այդ թվում և հակառակորդ կողմի հանրահավաքի մասնակիցների կողմից, վարձու աշխատողներին կազմակերպության (ոչ արհեստակցական) անդամակցելու հարկադրանքի, պետական ծառայողի վրա կուսակցության անդամագրվելու նպատակով ճնշում գործադրելու, ինչպես նաև ոստիկանության կողմից հավաքների անվտանգ անցկացման ապահովման խնդիրներ:

Հատուկ ուշադրություն դարձնելով առավելագույնս արդիական հանդիսացող ոստիկանության կողմից հավաքների անվտանգ անցկացման ապահովման խնդրին, անհրաժեշտ է ընդգծել հավաքների ազատության բացասական և դրական տեսանկյուններին վերաբերող որոշ կարևորագույն ուղղություններ և սկզբունքներ (մտքի, խղճի և կրոնի, խոսքի և տեղեկատվության ազատությունների հետ անհրաժեշտաբար զուգորդված): Եվրոպական դատարանը նման հարցերով ընդունված բոլոր որոշումներում անընդմեջ ուշադրություն է հատկացնում ժողովրդավարության և մարդու իրավունքների հարաբերակցությանը, հավասարակշռությանը, իրավական կողմնորոշմանը, համաչափությանը: Ներկայացնենք այս սկզբունքները պարզաբանող որոշ դրույթներ:

Այսպես, եվրոպական կոնվենցիայում շեշտվում է, որ ժողովրդավարական հասարակության հայեցակարգը ճանաչվում է որպես եվրոպական հասարակական կարգի հիմք. ժողովրդավարությունը, ըստ էության, հանդիսանում է կոնվենցիայով դիտարկվող, տվյալ փաստաթղթի դրույթների հետ համատեղելի միակ քաղաքական մոդելը:

Իրավական որոշակիության սկզբունքն ընկած է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի վրա հիմնված իրավահարաբերությունների եվրոպական համակարգի ստեղծման հիմքում:

Եվրոպական կոնվենցիայի 8-11 հոդվածներում արտացոլված այս սկզբունքը ենթադրում է, որ մարդու իրավունքների իրականացման նկատմամբ ցանկացած սահմանափակում պետք է լինի «օրենքին լիովին համապատասխան» կամ «օրենքով նախատեսված»: Այն դեպքերում, երբ ներքին օրենսդրությունը թույլ է տալիս ըստ հայեցողության որոշում ընդունել, պետք է հստակ սահմանվեն համապատասխան հայեցողական լիազորությունների շրջանակները:

Այս սկզբունքը հաճախ իշխանությունների, մասնավորապես, ոստիկանության կողմից մեկնաբանվում է որպես բացառապես ըստ հայեցողության գործելու ազատություն ընձեռող սկզբունք:

Մինչդեռ, համաչափության սկզբունքը նշանակում է, որ ցանկացած սահմանափակիչ միջոց պետք է հիմնված լինի «օրհասական հասարակական անհրաժեշտության» վրա և համակշռված լինի լուծվող խնդիրների հետ: Միաժամանակ, պետք է նախատեսվի հասարակական համապատասխան շահերի պաշտպանության այլընտրանքային միջոցների հնարավորություն՝ առանց հատուկ սահմանափակիչ պատժամիջոցների կիրառման: Բացի այդ, իշխանությունների կողմից սահմանափակիչ միջոցների կիրառման նկատմամբ արդյունավետ վերահսկողության մեխանիզմների առկայությունը հանդիսանում է հավասարաչափ և կշռադատված գործողությունների ապահովման էական գործոն: Վերջապես, կոնվենցիայի դրույթները մեկնաբանվում և կիրառվում են այնպես, որ կոնվենցիայով ամրագրված համապատասխան երաշխիքները դառնան «իրական և գործուն», այլ ոչ թե «տեսական և երևակայական»:

5.1.10. Պետական կառավարմանը մասնակցելու, ընտրել-ընտրվելու իրավունք

Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք: Օրենքով կարող է սահմանվել ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

Յուրաքանչյուր քաղաքացի, առանց որևէ խտրականության ու անհիմն սահմանափակումների, իրավունք և հնարավորություն ունի մասնակցելու պետական գործերը վարելուն՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով, ընտրելու և ընտրվելու իրական պարբերական ընտրություններում, որոնք անցկացվում են համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, և երաշխավորում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը, իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնելու պետական ծառայության:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 25

Բարձր պայմանավորվող կողմերը պայմանավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այլախի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի Արձանագրություն, հոդված 3

Ինչպես Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, ՀՀ Սահմանադրությամբ ևս այս իրավունքն ամրագրվել է լայն շրջանակներով, այսինքն ոչ միայն օրենսդիր իշխանության առնչությամբ, ինչպես արժարժված է եվրոպական կոնվենցիայի արձանագրությունում: Այդուհանձ, Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնաժողովը սահմանել է, որ «օրենսդիր իշխանություն» հասկացությունը պետք է մեկնաբանվի համաձայն կոնկրետ պետության սահմանադրական նորմերով սահմանված կանոններով:

Ընտրելու և ընտրվելու իրավունքը պետական իշխանության իրականացմանը մասնակցելու քաղաքացու քաղաքական իրավասությունների կարևորագույն արտահայտություններից է: Անշուշտ, քաղաքացու այս իրավունքը կանգնած է հանրային մարմինների ձևավորման բոլոր գործընթացների կենտրոնում:

Այս իրավունքի հատուկ նշանակությունն ընդգծվում է նաև նրանով, որ արդեն մի քանի տարի է, ինչ գործածվում է ընտրությունների անցկացման նկատմամբ միջազգային դիտարկումների պրակտիկան, ընդ որում բավական մանրամասն մշակված չափորոշիչների և ձևաչափերի կիրառությամբ: Բացի այդ, շատ երկրներում ընտրական իրավունքի տարաբնույթ խախտումների դեպքում սահմանված է քրեական պատասխանատվություն: Վերջին տարիներին դիտորդական առավել ակտիվ գործունեություն են ծավալում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը, ինչպես նաև Անկախ պետությունների համագործակցությունը՝ հիմնականում ԱՊՀ երկրների նկատմամբ: Ազգային ընտրական գործընթացների հեղինակության բարձրացման նպատակով, ինչպես նաև իշխանության ընտրական մարմինների օրինականության նկատմամբ կասկածանքների բացառման նպատակով ընդունված է, որ ընտրություններ անցկացնող երկիրն ինքն է հրավիրում դիտորդական խմբեր հասարակական կազմակերպությունների, միջազգային կառույցների և այլ երկրների ներկայացուցիչների շարքից:

ԵԱՀԿ մարդկային չափման Կոպենհագենյան խորհրդակցության փաստաթղթով մասնակից պետությունները պարտավորվում են՝ «որպեսզի քվեարկությունն անցկացվի գաղտնի կամ կիրառվի ազատ քվեարկության հավասարաչափ գործընթաց»: Նույն փաստաթղթում պարունակվում է նաև պահանջ՝ «...ոչ մի վարչական գործողություն, բռնություն կամ սպառնալիք... չխանգարեն ընտրողներին... քվեարկել ազատ, առանց պատժից խուսափելու»: Նման պահանջ գետնից է նաև Ազատ և արդար ընտրությունների չափորոշիչների մասին հռչակագրում՝ «Պետությունները պետք է

գործադրեն բոլոր անհրաժեշտ միջոցները գաղտնի քվեարկության սկզբունքի պահպանումն ապահովելու համար, և որպեսզի ընտրողները հնարավորություն ունենան քվեարկել ազատ, առանց վախի և սպառնալիքից չխուսափելով»:

ԱՊՀ մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանշվածքների մասին կոնվենցիան պարունակում է գաղտնի քվեարկության և կամքի ազատ արտահայտման սկզբունքների մանրամասն բնութագիրը: Մասնավորապես՝ «Գաղտնի քվեարկության սկզբունքի պահպանումը նշանակում է ընտրողների ազատ կամքի արտահայտման նկատմամբ ցանկացած վերահսկողության բացառում, ազատ ընտրության համար հավասար պայմանների ապահովում: ...Ընտրություններն անցկացվում են գաղտնի քվեարկության ընթացակարգի օգտագործմամբ» (հոդված 5): «Քաղաքացու մասնակցությունն ընտրություններում ազատ և հոժարական է: Ոչ ոք չի կարող պարտադրել նրան քվեարկել որևէ թեկնածուի (թեկնածուների), թեկնածուների որոշակի ցուցակի «կողմ» կամ «դեմ», ոչ ոք իրավասու չէ ազդեցություն գործել քաղաքացու վրա ընտրություններում մասնակցելու կամ չմասնակցելու հարկադրման նպատակով, ինչպես նաև նրա կամքի ազատ արտահայտման վրա» (հոդված 8): Այսպիսով, «կամքի արտահայտման ազատություն» հասկացությունը ներառում է երկու բաղկացուցիչ՝ գաղտնի քվեարկություն, այսինքն՝ ընտրողների կամքի արտահայտման նկատմամբ վերահսկողության բացակայություն, և կամքի արտահայտման գործընթացում հարկադրման բացակայություն:

Ընտրական իրավունքները մեկնաբանելիս եվրոպական դատարանը շեշտը դնում է ոչ թե որևէ գործողություններից և միջամտությունից ձեռնպահ մնալու պետության պարտականության վրա, այլ ժողովրդավարական ընտրություններ «անցկացնելու» նպատակով պետության կողմից դրական միջոցների ձեռնարկման վրա*:

Միջազգային պրակտիկան կուտակել է բազմաբնույթ փորձ այս իրավունքի խախտման համար նախատեսված պատասխանատվության/պատժի ուղղությամբ, ընդ որում քրեական, որը մասնավորապես սահմանվում է մի շարք կոնկրետ խախտումների համար՝ ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերի կեղծում, ձայների սխալ հաշվարկ և ընտրությունների արդյունքների կեղծում, քվեարկության գաղտնիության խախտում, ընտրողների կաշառում և այլն: Ընտրողների կաշառում հասկացությունն ընդգրկում է ոչ միայն թեկնածուի կողմից ընտրողներին նյութական՝ գույքային և գումարային և այլ բնույթի բարքերի, արժեքների և ծառայությունների տրամադրումը, այլև կաշառման այնպիսի «հատուկ» ձևեր, ինչպիսիք են որոշակի աշխատանքի համար ընտրողների պարզևատրումը, պաշտոն ստանալուն նպաստելը կամ նման խոստում տալը իր թեկնածությանն աջակցելու պայմանով:

Այս դրույթներն ամրագրված են մի շարք առաջադեմ ժողովրդավարությունների քրեական օրենսդրություններում: ՀՀ քրեական օրենսդրությունը 149-154 հոդվածներում պատասխանատվություն է սահմանում, համապատասխանաբար, ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու, ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու, ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելու, ընտրողների ցուցակները կազմելու կարգը խախտելու, մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու, քվեարկության գաղտնիությունը խախտելու համար:

* Европейская конвенция о правах человека и Европейская социальная хартия: право и практика, Д. Гомьен, Д. Харрис, Л. Зваак, Москва 1998, էջ 435:

Սակայն բոլոր վերոնշյալ դրույթները, հատկապես ԱՊՀ երկրներում, այդ թվում և Հայաստանում, չեն իրականացվում, կամ իրականացվում են ոչ պատշաճ կերպով:

Չնայած ԵԽԽՎ կողմից անցկացված բազմաթիվ դիտարկումներին և Ազգային ժողովի պատգամավորների և ՀՀ նախագահի ընտրությունների բավական կոշտ քննադատություններին* և «Ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 19.05.2005թ. ընդունված ՀՀ օրենքով ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգի փոփոխությանը**, 2005թ. նոյեմբերին սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն անցկացվեց նախկինում գրանցված բոլոր խախտումների առավել զանգվածային զուգորդմամբ: Ավելին, իշխանությունները, հրաժարվելով հրավիրել դիտորդների անհրաժեշտ քանակ, լրացուցիչ պայմաններ են ստեղծել ընտրակեղծիքների անցկացման, այդ թվում և արդյունքների կեղծման համար:

Հրավիրված դիտորդական խումբը՝ բաղկացած ընդամենը 14 հոգուց, 1622 ընտրատարածքներից «հասցրել» է այցելել 150 ընտրատարածք: Դիտորդները նշել են, որ իրենք գրանցել են ստորագրությունների կեղծում, ընտրաթերթիկների «ներխցկումներ», զինվորականների քվեարկության ընթացքում՝ ժողովրդավարության հիմք հանդիսացող կամքի ազատ դրսևորման բացակայություն: Նրանք առանձնահատուկ ընդգծել են, որ ընտրողների չափազանց ցածր հայտը չի համապատասխանում ընտրական հանձնաժողովների կողմից ներկայացված բարձր ցուցանիշներին:

Հատկանշական են ԱԺ փոխնախագահ Տ. Թորոսյանի դիտողությունները, որը անդրադառնալով հանրաքվեի ընթացքում տեղ գտած խախտումներին, նշել է, որ Հայաստանը կորցրել է ժողովրդավարական նորմերին համապատասխանող ընտրությունների անցկացման իրական հնարավորությունները, խոստովանելով, որ արդեն կարծիքներ են հնչում, թե արդոք Հայաստանն ի վիճակի է անցկացնել նորմալ ընտրություններ:

ԱԺ փոխնախագահը իրավացիորեն հայտարարել է, որ եթե հանրաքվեն անցներ եվրոպական ստանդարտների համապատասխան, ապա Հայաստանը կունենար ամուր հիմքեր ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին քաղաքական հարցերի լուծման համար, ավելացնելով, որ խախտումների բոլոր մեղավորները պետք է կրեն համապատասխան պատիժ: Սակայն հայաստանյան իրականությունը մինչ օրս չի դրսևորել իր հավատարմությունը նման օրինազանցություններ կատարողների պատժման սկզբունքին:

Հայտնի է, որ եթե տվյալ երկրի քաղաքացուն չի գոհացնում իր ընտրական իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական մարմինների գործունեությունը, նա իրավասու է օգտագործել իրավական պաշտպանության միջազգային մեխանիզմները: Միջազգային իրավական պաշտպանության հիմնական միջոց է հանդիսանում, անշուշտ, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմինների կողմից անհատական բողոքների լուծումը:

Միաժամանակ, մարդու իրավունքների, այդ թվում և ընտրական իրավունքների պաշտպանության միջազգային ժամանակակից պաշտպանությունը ենթադրում է նաև այլ

* Տե՛ս՝ ԵԽԽՎ թիվ 1374 (2004) բանաձևը. Հայաստանի ստանձնած պարտավորությունների և պարտականությունների մասին և թիվ 1405 (2004) Հայաստանի ստանձնած պարտավորությունների և պարտականությունների մասին թիվ 1361 (2004), թիվ 1374 (2004) բանաձևերի կատարումը:

** Ի դեպ, կատարված փոփոխություններն անկախ փորձագետների կողմից ենթարկվել են խիստ քննադատության. տե՛ս, օրինակ, Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների մոնիտորինգ, Չեկոյց 2005թ., էջ 25-38:

միջոցների լայն համալիր, մասնավորապես զանգվածային կոպիտ խախտումների դեպքում նման միջոցներ կարող են կիրառվել առանց պետության համաձայնության:

Օրինակ, որպես ընտրական իրավունքների միջազգային իրավական պաշտպանության բացառիկ միջոց է դիտարկվում զիված ուժի կիրառումը, քանի որ այս իրավունքների զանգվածային խախտումները դիտարկվում են որպես «խաղաղության սպառնալիք»՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության մեջ սահմանված այս հասկացության տարածական մեկնաբանության: Այսպես, 1994թ. թիվ 940 բանալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը որոշում է ընդունել Հաիթիում զինված ուժի կիրառման մասին՝ օրինականորեն ընտրված նախագահի տապալման և զինվորական դիկտատուրայի հաստատման արդյունքում երկրում ոտնահարված ժողովրդավարության վերականգնման անհրաժեշտության կապակցությամբ:

Ընտրական իրավունքների խախտման առնչությամբ անհատական բողոքները դիտարկվում են ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից, որոնց փորձը ընտրական իրավունքների պաշտպանության ուղղությամբ համեմատաբար մեծ չէ, ինչը փորձագետների կողմից արդարացիորեն բացատրվում է այն իրողությամբ, որ ազատ ընտրությունները բավականին վաղուց և հաստատուն մտել են քաղաքակիրթ զարգացած պետությունների ամենօրյա պրակտիկա, և դրանց հիմնական չափանիշները լայն տարածում ունեն և կասկած չեն հարուցում:

Այլ է պատկերը ԱՊՀ երկրներում, մասնավորապես, Հայաստանում, ուր սկսած 1995թ. լայն տարածում են գտել արատավոր ապօրինի մեթոդները, որոնք հանգեցնում են հասարակության անվստահության, որի գնահատականները, հիմնվելով փաստացի գործընթացների վրա, խիստ տարբերվում են պաշտոնապես հնչեցված արդյունքներից:

Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի կազմակերպումն ու անցկացումը ցույց տվեց, որ ազատ և արդար ընտրությունների անցկացումը պայմանավորված է ոչ միայն օրենքի, այլև ընտրություններ կազմակերպելու և անցկացնելու քաղաքական կամքի առկայությամբ: Ընդհանուր առմամբ ընտրություններն ու հանրաքվեները գնահատվում են ոչ միայն քվեարկության օրվա կազմակերպումով, այլև դրանց նախորդող և հաջորդող փուլերով: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ սահմանադրական փոփոխությունների նախագծի վերջնական տարբերակի կազմումն ու տարածումը, ինչպես նաև հասարակության կողմից քննարկումների արդյունքների տրամադրումն Ազգային ժողովին չեն անցկացվել պատշաճ մակարդակով. օրինակ, նախագծի ներկայացման համար պատասխանատու կոնկրետ մարմին չի ստեղծվել, որը պարտավոր կլիներ քննարկել բոլոր ներկայացված առաջարկները և յուրաքանչյուր առաջարկ ներկայացնողին տեղյակ պահել այն ընդունելու կամ մերժելու մասին, իսկ փոփոխություններն իրականացնող աշխատանքային խումբը չի ունեցել պաշտոնական որևէ հասցե:

Հանրաքվեին հաջորդող փուլը բնութագրվել է նրանով, որ չնայած բազմաթիվ ակնհայտ ապօրինությունների առնչությամբ արված ծանրակշիռ մեղադրական գնահատականների, պատկան մարմինների կողմից չի ծավալվել ընտրակեղծիք թույլ տված անձանց բացահայտմանը և նրանց օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկելուն ուղղված գործունեություն:

Քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքը կարևոր է ոչ միայն անցկացվող ընտրությունների, այլև մարդու մյուս հիմնարար իրավունքներին հավատարիմ լինելու առումով: Պատահական չէ ասված՝ ընտրությունները մարդու իրավունքների

տոնակատարությունն են: Ընդունված օրենսդրության համաձայն բաց և թափանցիկ ընտրությունների անցկացումը ժողովրդավարական հասարակության անօտարելի մաս է հանդիսանում: Ցավոք, Հայաստանում ընտրական իրավունքների խոցելիության աստիճանը անհանգստություն է ներշնչում ժողովրդավարական պետության կայացման տեսակետից:

5.2. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ

Չնայած միջազգային իրավունքի տեսանկյունից ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն հնարավորություն ունի աջակցել Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի իրականացմանը, այս փաստաթղթի արդյունավետության աստիճանը կախված է միջազգային իրավական պարտավորությունների գործնական իրականացման նպատակով մասնակից պետությունների իշխանությունների կողմից ձեռնարկվող միջոցներից: Այս կապակցությամբ բացառիկ կարևոր նշանակություն է տրվում պետությունների կողմից անհրաժեշտ օրենսդրական նորմերի ընդունմանը և անհատներին դատական պաշտպանության միջոցներով ապահովելուն՝ որպես տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրական իրավական բնույթի վկայություն:

Ներպետական օրենսդրությամբ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի դրույթների ամրագրման անհրաժեշտությունը պայմանավորված է Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969թ. Վիեննայի կոնվենցիայի հոդված 27-ով, որում ասված է՝ «մասնակիցը չի կարող հղում կատարել իր ներքին իրավունքի դրույթներին որպես իր կողմից պայմանագրի չկատարման արդարացում»: Ավելին, դաշնագիրը հաճախ օրենսդրական նորմերի ընդունում է կարգադրագրում այն դեպքերում, երբ գործող օրենսդրությունը խախտում է դաշնագրով նախատեսված պարտավորությունները:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի իրականացման Լիմբուրգյան սկզբունքներում ընդգծվում է, որ՝ «մասնակից պետությունները պետք է ապահովեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, այդ թվում, անհրաժեշտության դեպքում, դատական պաշտպանություն» (սկզբունք 19): Քանի որ դաշնագիրը դեռևս չի նախատեսում անհատական բողոքների ներկայացման ընթացակարգ, այս փաստաթղթում ամրագրված իրավունքների լիակատար իրականացումը կախված է ազգային մակարդակով համապատասխան օրենքների և իրավական պաշտպանության միջոցների առկայությունից:

5.2.1. Սոցիալական իրավունքների ապահովման և պաշտպանության ոլորտում Հայաստանի ստանձնած պարտավորությունները

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների խորհուրդը իր թիվ 10 Ընդհանուր մեկնաբանությամբ անդրադարձել է տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության ոլորտում մարդու իրավունքների ազգային հաստատությունների դերին:

Մասնավորապես ընդգծվել է, որ ազգային հաստատությունները վճռական դեր են խաղում մարդու իրավունքների ամբողջականությունը և ներդաշնակությունը խթանելու և ապահովելու գործում: «Շատ կարևոր է, որ այս հաստատությունների համապատասխան բոլոր գործողություններում մեծ ուշադրություն դարձվի տնտեսական, սոցիալական և

մշակութային իրավունքներին»*: Բացի այդ խորհուրդը կոչ է արել մասնակից պետություններին ապահովել, որպեսզի ազգային հաստատություններին վերապահված լիազորությունների շրջանակում պատշաճ ուշադրություն դարձվի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին, և առաջարկել է դաշնագրի մասնակից պետություններին խորհրդին ներկայացվող զեկույցներում ներառել ազգային հաստատությունների լիազորությունների և գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ:

1993թ. Հայաստանը վավերացրել է 1966թ. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը: Դաշնագրի համաձայն մասնակից պետությունները պարտավորվում են ներկայացնել զեկույցներ իրենց ձեռնարկած միջոցառումների և դաշնագրով ճանաչվող իրավունքների պահպանման ասպարեզում ձեռք բերված առաջընթացի մասին: Պետությունները պարտավորվում են նախնական զեկույց ներկայացնել դաշնագիրը վավերացնելուց հետո 2 տարվա ընթացքում և այնուհետև յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ: Հայաստանի Հանրապետության առաջին զեկույցը ըստ ժամանակացույցի ենթակա էր ներկայացման 1995թ., սակայն ներկայացվել էր միայն 1997թ.: Հայաստանի երկրորդ զեկույցը համապատասխանաբար պետք է ներկայացվեր 2000թ., սակայն այն մինչ օրս չի ներկայացվել:

Հայաստանի կողմից ներկայացված առաջին զեկույցի կապակցությամբ 08.12.1999թ. խորհուրդը եզրափակիչ հետևություններով տվել է իր գնահատականը և հանդես է եկել համապատասխան առաջարկություններով:

Խորհուրդն իր անհանգստությունն է արտահայտել կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցի շուրջ, մասնավորապես նշվել է, որ չնայած օրենքի առջև կանանց և տղամարդկանց հավասարության հռչակմանը, պրակտիկայում դեռևս առկա են անհավասարություններ կանանց և տղամարդկանց կողմից տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրականացման ոլորտում:

Օրինակ, կանանց կողմից կրթության իրավունքի իրականացման բարձր մակարդակի և պրոֆեսիոնալ որակավորում ունեցող կանանց մեծ թվաքանակի պայմաններում շատ բարձր տոկոս է կազմում կանանց գործազրկությունը, և համեմատաբար փոքր տոկոս կանայք են զբաղեցնում բարձր պաշտոններ, մասնավորապես խորհրդարանում:

Խորհուրդը նաև իր անհանգստությունն է արտահայտել պետության կողմից իրականացվող ոչ բավարար ջանքերի պատճառով երկրում բնակարանային իրավիճակի ճգնաժամի կապակցությամբ, որը վրա է հասել 1988թ. երկրաշարժի և փախստականների ներգաղթի հետևանքով:

Հարկ է նշել, որ աղետի գոտու և 1988-1992թթ. Ադրբեջանից Հայաստան բռնագաղթած փախստականների բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ իրականացվել և իրականացվում են համապատասխան պետական ծրագրեր: Այնուամենայնիվ, այս ոլորտում դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց առանձին անդրադարձ կկատարվի զեկույցում:

Խորհուրդը իր անհանգստությունն է արտահայտել նաև սննդի, բնակարանի, առողջության պահպանման և կրթության իրավունքների իրականացման վերաբերյալ անբավարար վիճակագրության կապակցությամբ:

* Տե՛ս՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների խորհրդի Ընդհանուր մեկնաբանություն, Մարդու իրավունքների ազգային հաստատությունների դերը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության ոլորտում, 19-րդ նստաշրջան, 14.12.1998թ., կետ 3:

Խորհուրդը առաջարկել է Հայաստանի կառավարությանը, ի թիվս այլ միջոցառումների, միջոցներ ձեռնարկել կանանց զբաղվածությունը և նրանց առավել ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքում խթանելու համար:

Պետք է արձանագրել, որ զգալի ջանքեր են գործադրվում այս բնագավառում տիրող իրավիճակը շտկելու ուղղությամբ, մասնավորապես այս ոլորտում իրականացվել և իրականացվում են մի շարք նպատակային ծրագրեր, ինչպիսիք են օրինակ՝ «Կանանց իրավիճակը բարելավելու և հասարակությունում նրանց դերը բարձրացնելու մասին» (1998-2000թթ.), «Կանանց իրավիճակը բարելավելու և հասարակությունում նրանց դերը բարձրացնելու մասին» (2004-2010թթ.), «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր» ազգային ծրագրերը, որտեղ գենդերային քաղաքականության մշակումը հիմնական բաղադրիչներից է:

Այնուամենայնիվ, կանանց զբաղվածության և հասարակական կյանքում նրանց մասնակցության ցուցանիշները շարունակում են մնալ շատ ցածր մակարդակի վրա:

Աղյուսակ 11-ում բերված է զբաղվածների և գործազուրկների բաշխումն ըստ տղամարդկանց ու կանանց 2005թ. Հայաստանի վիճակագրական տարեգրքով սահմանված տվյալների համաձայն:

Աղյուսակ 11. Զբաղվածների և գործազուրկների բաշխումը (1000 մարդ)

	2000	2001	2002	2003	2004
Տնտեսության մեջ զբաղվածների միջին տարեկան թվաքանակը	1277.7	1264.9	1106.4	1107.6	1081.7
տղամարդ	696.8	682.9	582.1	581.8	584.2
կին	580.9	582.0	524.3	525.8	497.5
Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը տարեվերջին	153.9	138.4	127.3	118.6	108.6
տղամարդ	54.4	47.1	41.6	37.0	32.3
կին	99.5	91.3	85.7	81.6	76.3
երիտասարդներ (16-30 տարեկան)	45.5	39.8	36.3	33.9	22.0*

2005թ. փետրվարի 28-ի դրությամբ Հայաստանում աշխատանք փնտրողների թիվը 116 հազար է, իսկ գործազուրկների թիվը՝ 88 հազար**։ Վերջիններիս 70%-ը կանայք են:

Դաշնագրի հոդված 3-ի էությունը կայանում է նրանում, որ դաշնագրում ամրագրված իրավունքները իրականացվեն կանանց և տղամարդկանց կողմից հավասար հիմունքներով: Ձևական հավասարության սկզբունքը կարող է ամրագրվել ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներում և կառավարության քաղաքականությամբ, մինչդեռ հոդված 3-ը պարտավորեցնում է նաև կանանց և տղամարդկանց կողմից դաշնագրով սահմանված իրավունքների հավասար իրականացման ապահովումը պրակտիկայում:

Չի կարելի հասնել կանանց և տղամարդկանց միջև բովանդակային իրավահավասարության՝ միայն այնպիսի օրենքներ ընդունելու և քաղաքականություն մշակելու միջոցով, որոնք գենդերային առումով չեզոք են: Հոդված 3-ը կիրառելիս՝ դաշնագրի մասնակից պետությունները պետք է հաշվի առնեն այն հանգամանքը, որ այդպիսի օրենքները, քաղաքականությունը և պրակտիկան կարող են չլուծել հարցը, կամ նույնիսկ պատճառ դառնալ կանանց և տղամարդկանց միջև անհավասարության ձևավորման համար, քանի որ դրանք հաշվի չեն առնում առկա տնտեսական,

* Տե՛ս՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2005թ., էջ 50:

** Զբաղվածության ծառայության գործակալության պետի կողմից հայտնված տվյալների համաձայն:

սոցիալական և մշակութային անհավասարությունները, որոնց առնչվում են մասնավորապես կանայք^{***}:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների խորհրդի թիվ 16 Ընդհանուր մեկնաբանությամբ ընդգծվել է, որ մասնակից պետությունների կողմից դաշնագրի հոդված 3-ով ստանձնած պարտավորությունները ներառում են նաև ոչ պետական դերակատարների գործողությունների կանոնակարգումը և մոնիտորինգը, որպեսզի ապահովվի նրանց կողմից տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից հավասարապես օգտվելու կանանց և տղամարդկանց իրավունքի պահպանումը: Այս պարտավորությունը կիրառելի է, օրինակ, եթե հանրային ծառայությունները մասնակիորեն կամ ամբողջությամբ սեփականաշնորհվել են:

Աշխատանքային հարաբերությունների ոլորտում պետությունը՝ արդյունավետորեն գործող աշխատանքի պետական տեսչության միջոցով պետք է մոնիտորինգ իրականացնի մասնավոր սեկտորի կողմից ապահովվող աշխատանքային պայմանների վերաբերյալ ներպետական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում 2004թ. Հայաստանը վավերացրել է վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան: 2006թ. մարտի 31-ը Հայաստանի կողմից առաջին զեկույցի ներկայացման վերջնաժամկետն էր: Չեկույցը պետք է վերաբերի ներպետական օրենսդրությունում և պրակտիկայում Սոցիալական խարտիայի դրույթների կիրառմանը: Հակիրճ անդրադառնանք վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայով ամրագրված որոշ դրույթներին:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն, որը և մոնիտորինգ է իրականացնում վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի կիրառման նկատմամբ, հանդես է եկել առանձին հոդվածների մեկնաբանություններով՝ հիմնվելով իր կողմից ուսումնասիրված գործերի վրա:

Հավասար աշխատանքի դիմաց հավասար վճարման սկզբունքը ամրագրված է նաև վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի հոդված 4-ի կետ 3-ում, համաձայն որի մասնակից պետությունները պարտավորվում են ճանաչել կին և տղամարդ աշխատողների նույնարժեք աշխատանքի համար հավասար վճարման իրավունքը: Այս սկզբունքը հռչակված է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքով, ինչն, այնուամենայնիվ, դեռևս բավարար չէ: Պետությունը պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ հավասար վճարման իրավունքը խթանելու համար:

Մասնավորապես Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն առանձնացրել է հետևյալ միջոցառումները, որոնք պետք է ձեռնարկվեն այս իրավունքի արդյունավետ իրականացումը ապահովելու նպատակով՝

- խրախուսել սոցիալական գործընկերներին սահմանելու հավասար վճարման իրավունքը կոլեկտիվ պայմանագրերով,
- կատարելագործել աշխատանքի դասակարգիչները և աշխատանքի գնահատականները՝ որպես վճարման անհավասարությունները նվազեցնելու միջոց,
- կատարելագործել աշխատավարձի վիճակագրության որակը,
- առավել մեծ ուշադրություն դարձնել կանանց և տղամարդկանց հավասար վճարման իրավունքին ազգային զբաղվածության ծրագրերում:

Սոցիալական ապահովության ոլորտում դաշնագրի հոդված 3-ի կիրառման կապակցությամբ խորհուրդը հատկապես նշել է, որ **կանանց և տղամարդկանց կենսաթոշակի անցնելու տարիքը պետք է հավասարեցվի, երաշխավորվի կանանց համար մայրության արձակուրդի և տղամարդկանց համար հայրության արձակուրդի տրամադրումը, ինչպես նաև ծնողական արձակուրդի տրամադրումը և կանանց, և տղամարդկանց:** Պետք է նշել, որ նմանատիպ դրույթ պարունակվում է նաև վերանայված

^{***} Տե՛ս՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների խորհրդի Ընդհանուր մեկնաբանություն, 34-րդ նստաշրջան, 11.08.2005թ., կետ 8:

Եվրոպական սոցիալական խարտիայի հոդված 27-ում: Հոդված 27-ի կետ 2-ի համաձայն՝ կողմերը պարտավորվում են մայրության արձակուրդից հետո ընկած ժամանակաշրջանում երեխայի խնամքի համար ծնողներից մեկին ապահովել արձակուրդ ստանալու հնարավորությամբ, ընդ որում արձակուրդի տևողությունը և պայմանները պետք է որոշվեն ազգային օրենսդրությամբ, կոլեկտիվ համաձայնագրերով կամ գործնականորեն:

Հոդված 2-ը սահմանում է աշխատանքի արդար պայմանների իրավունքը և ներառում է դրույթ նաև անառողջ և վտանգավոր աշխատանքներում վտանգների վերացման վերաբերյալ: Այս հոդվածը մեկնաբանելիս կոմիտեն ընդգծել է խարտիայի մասնակից պետությունների պարտավորությունը՝ սահմանելու վտանգավոր և անառողջ աշխատանքների ցանկը, ինչը և կդառնա կոմիտեի ուսումնասիրության առանձին առարկա:

Հայաստանում այս աշխատանքների ցանկը սահմանված է «Տարիքային արտոնյալ աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների ցուցանիշների ցուցակների հաստատման մասին» 31.03.1993թ. ՀՀ կառավարության թիվ 140 որոշմամբ և ներառում է այնպիսի աշխատանքներ և արտադրություններ, ինչպիսիք են օրինակ՝ հանքային աշխատանքները, մետաղագործական արտադրությունը, քիմիական արտադրությունը, մետաղամշակումը, շինարարական նյութերի արտադրությունը և այլն:

Ուշագրավ է, որ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն խարտիայի հոդված 2-ի մեկնաբանության մեջ, որտեղ սահմանել է այդպիսի աշխատանքների մոտավոր ցանկը, ռադիացիայի, չափազանց բարձր ջերմաստիճանների, աղմուկի հետ կապված աշխատանքների հետ միասին ցանկում ներառել է նաև **կոմպյուտերային էկրանների առջև աշխատանքը**: Հետևաբար, վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի հոդված 2-ի համապատասխան մասնակից պետությունները կոմպյուտերային էկրանների առջև աշխատանքը պետք է ներառեն անառողջ և վտանգավոր աշխատանքների ցանկում:

Խարտիայի հոդված 4-ի համաձայն արդարացի վարձատրման իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով **կողմերը պարտավորվում են ճանաչել աշխատողների վարձատրման իրավունքը, որը նրանց և նրանց ընտանիքների համար կապահովի պատշաճ կենսամակարդակ**:

Այս իրավունքը նախատեսված է նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 6-ում:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների խորհուրդը իր 2005թ. նոյեմբերին ընդունված թիվ 18 Ընդհանուր մեկնաբանությամբ տվել է դաշնագրի հոդված 6-ով ամրագրված աշխատանքի իրավունքի մեկնաբանությունը:

Աշխատանքի իրավունքը էական է մարդու այլ իրավունքներ իրականացնելու համար և կազմում է անձի արժանապատվության անբաժանելի և անօտարելի մասը: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի աշխատելու, ինչը նրան հնարավորություն կտա ապրելու արժանապատվությամբ: Դաշնագիրը հռչակում է աշխատանքի իրավունքը հոդված 6-ում և զարգացնում է աշխատանքի իրավունքի բովանդակությունը հոդված 7-ում՝ ճանաչելով յուրաքանչյուրի աշխատանքի արդարացի և բարենպաստ պայմաններից օգտվելու իրավունքը: Այս իրավունքը իր հերթին ներառում է վարձատրություն, որը բոլոր աշխատողների համար նվազագույնի ապահովում է, սա իր հերթին ներառում է **արդար աշխատավարձ** և հավասարաբեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրություն, իրենց և իրենց ընտանիքների համար բավարար ապրուստ՝ դաշնագրի դրույթներին համապատասխան և այլն:

Խորհուրդը իր թիվ 18 Ընդհանուր մեկնաբանությամբ «աշխատանք» արտահայտությունը դաշնագրի հոդված 6-ի իմաստով մեկնաբանել է որպես «պատշաճ աշխատանք»: Իսկ պատշաճ աշխատանքը, ըստ խորհրդի սահմանման, այն

աշխատանքն է, որը հարգում է մարդու իրավունքները և աշխատողների իրավունքները աշխատանքային անվտանգ պայմանների և աշխատավարձի իմաստով, որը հնարավորություն է տալիս վաստակել իրենց և իրենց ընտանիքների համար բավարար ապրուստ: Կոմիտեն չի մանրամասնում արդար աշխատավարձի հասկացությունը և չի սահմանում արդար աշխատավարձը որոշելու առավել հստակ չափորոշիչներ:

Միևնույն ժամանակ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն արդարացի վարձատրման իրավունքը մեկնաբանելիս սահմանել է որոշակի հստակ չափորոշիչներ:

Հարկ է նշել, որ թեև Հայաստանը չի ստանձնել խարտիայի հոդված 4-ի կետ 1-ով ամրագրված դրույթի կատարումը, այնուամենայնիվ, կոմիտեի մեկնաբանությունները կարող են պարզաբանող նշանակություն ունենալ դաշնագրով ամրագրված «**արդար աշխատավարձ**» արտահայտությունը հասկանալու համար:

Մասնավորապես, եվրոպական կոմիտեն իր մեկնաբանություններում նշել է, որ «արդար» համարվելու համար աշխատավարձը չպետք է էապես ցածր լինի ազգային միջին աշխատավարձից: Որպես սահմանային չափ կոմիտեն սահմանել է 60%-ը: Միջին ազգային աշխատավարձը հաշվարկվում է աշխատանքային շուկայի համեմատ ամբողջությամբ, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա համապատասխան սեկտորի շրջանակներում: Եթե սահմանված է նվազագույն աշխատավարձ, ապա դրա չափը, միջին աշխատավարձի հետ համեմատության մեջ, օգտագործվում է որպես հիմք: Աշխատավարձը, որը միջին աշխատավարձի 60%-ից ցածր է, խարտիայի իմաստով անմիջապես անարդարացի չի համարվում: Եթե աշխատավարձի չափը 50 և 60% միջև է ընկած, ապա մասնակից պետությունը պետք է հիմնավորի, որ այդ աշխատավարձի չափը բավարար է պատշաճ կենսամակարդակ ապահովելու համար: Ամեն դեպքում, աշխատավարձը, որը ցածր է ազգային միջին աշխատավարձի 50%-ից, դիտվում է որպես անարդարացի: Հետևաբար, մասնակից պետությունում իրավիճակը դիտվում է որպես խարտիայի հոդված 4-ի կետ 1-ին չհամապատասխանող: Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն 2005թ. հունվար-հոկտեմբեր ամիսների կտրվածքով մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը Հայաստանում կազմում է 50.665 դրամ: «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հայաստանում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվել է 15.000 դրամ:

Երեխաների և երիտասարդների պաշտպանվածության իրավունքը ամրագրող Սոցիալական խարտիայի հոդված 7-ում սահմանված է, որ աշխատանքի ընդունման համար որպես նվազագույն տարիք պետք է ապահովվի 15 տարեկանը, բացառությամբ այն երեխաների, որոնք զբաղվում են թեթև համարվող աշխատանքով, առանց վնասելու նրանց առողջությանը, բարոյական կերպարին կամ կրթությանը: ՀՀ աշխատանքային օրենսգիրքը որպես աշխատանքի ընդունման համար նվազագույն տարիք սահմանում է 14 տարեկանը, միաժամանակ ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 17-ով ամրագրված է մինչև 14 տարեկան անձանց հետ աշխատանքային պայմանագիր կնքելու կամ նրանց աշխատանքի ներգրավելու արգելքը: Իսկ 14-16 տարեկան աշխատող անչափահաս անձինք կարող են մտնել աշխատանքային հարաբերությունների մեջ ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ:

Խարտիայի հոդված 7-ը մեկնաբանելիս Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն նշել է, որ 15 տարեկանից ցածր երեխաների աշխատանքի ընդունման արգելքը վերաբերում է բոլոր տնտեսական ոլորտներին:

Միևնույն ժամանակ խարտիայի հոդված 7-ի կետ 1-ը բացառություն է սահմանում թեթև աշխատանքի կապակցությամբ, այսինքն՝ այն աշխատանքի, որը չի վնասում երեխաների առողջությանը, բարոյական կերպարին կամ կրթությանը: Հոդվածով

կատարված վերապահումը մեկնաբանելիս կոմիտեն ընդգծել է պետության պարտավորությունը ազգային օրենսդրությամբ նախատեսելու այն կոնկրետ հանձնարարությունները, որոնք երեխաներին թույլատրվում է կատարել, կամ սահմանելու այն աշխատանքները, որոնք համարվում են թեթև այս համատեքստում: ՀՀ օրենսդրությամբ նման աշխատանքների ցանկ սահմանված չէ: Իսկ 14 տարեկանից ցածր երեխաների հետ աշխատանքային պայմանագրի կնքումը ընդհանրապես արգելված է առանց որևէ վերապահում կատարելու:

Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի հոդված 15-ը վերաբերում է հաշմանդամների անկախության, սոցիալական ինտեգրացման և համայնքի կյանքին մասնակցելու իրավունքին:

Այս հոդվածի ներքո խարտիայի մասնակից պետությունների կոնկրետ պարտավորությունների մասին խոսելիս՝ կոմիտեն մատնանշել է առանձին գործողություններ: Մասնավորապես, սոցիալական ինտեգրացման իրավունքը ապահովելու նպատակով պետք է վերացվեն հաղորդակցության և շարժունակության արգելքները և մատչելի դարձվեն տրանսպորտը, բնակատեղին, մշակութային գործունեությունը և ազատ ժամանցը: Նշանների լեզուն պետք է ստանա պաշտոնական կարգավիճակ, իսկ հաղորդակցության և նոր տեղեկատվական տեխնոլոգիաները պետք է լինեն մատչելի: Բոլոր նոր հասարակական տրանսպորտային միջոցները, հասարակության համար բաց բոլոր նոր կառուցված և վերանորոգված շենքերը պետք է լինեն ֆիզիկապես մատչելի: Հաշմանդամների կարիքները պետք է հաշվի առնվեն բնակարանային քաղաքականություն մշակելիս:

Սոցիալական պաշտպանվածության իրավունքը ամրագրող հոդված 23-ը սահմանում է տարեց մարդկանց համապատասխան ռեսուրսներով ապահովելու պահանջը, ռեսուրսներ, որոնք հնարավորություն կտան վարելու վայելուչ կյանք և ակտիվ դեր խաղալու հասարակական, սոցիալական և մշակութային կյանքում: Խոսքը առաջին հերթին գնում է կենսաթոշակների մասին: Կենսաթոշակների և պետական նպաստների չափը պետք է բավարար լինի տարեց մարդկանց պատշաճ կենսակերպ վարելու և հասարակական, սոցիալական և մշակութային կյանքում ակտիվ դեր խաղալու հնարավորություն ընձեռնելու համար:

Ռեսուրսների համապատասխանությունը որոշելիս կոմիտեն համեմատում է կենսաթոշակների չափը միջին աշխատավարձի մակարդակի և ապրուստի զմի հետ, հաշվի է առնում նաև տրանսպորտի, բժշկական սպասարկման և դեղամիջոցների գինը և այլ հանգամանքներ: Հարկ է նկատել, որ թեև Հայաստանը չի ստանձնել խարտիայի հոդված 23-ի դրույթների կատարումը, այնուամենայնիվ, տարեց մարդկանց սոցիալական պաշտպանվածության իրավունքը ապահովելու պարտավորությունը նա ստանձնել է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների խորհուրդը իր թիվ 6 Ընդհանուր մեկնաբանությամբ ընդգծել է, որ դաշնագրի մասնակից պետությունները պարտավոր են առանձնահատուկ ուշադրություն դարձնել տարեց մարդկանց տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների խթանմանն ու

պաշտպանությանը*։ Դաշնագրի հոդված 9-ը սահմանում է, որ մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի սոցիալական ապահովության, ներառյալ սոցիալական ապահովագրության իրավունքը, առանց հստակեցնելու երաշխավորվող պաշտպանության մակարդակը կամ տեսակը։ Այնուամենայնիվ, «սոցիալական ապահովություն» եզրույթը ինքնին ներառում է այն բոլոր ռիսկերը, որոնք կապված են գոյության միջոցների կորստի հետ՝ անձի հսկողությունից դուրս պատճառներով։

Խորհուրդը կոչ է անում մասնակից պետություններին սահմանել կենսաթոշակի ճկուն համակարգ, որը պայմանավորված կլինի իրականացված աշխատանքով և տարեց մարդկանց աշխատանքային ունակություններով, հաշվի առնելով ժողովրդագրական, տնտեսական և սոցիալական հանգամանքները։

Ինչպես խորհուրդը դիտարկել է իր թիվ 3 Ընդհանուր մեկնաբանությունում (5-րդ նստաշրջան, 1990թ.), ռեսուրսների խիստ պակասի պայմաններում, իր հասարակության խոցելի խմբերի ներկայացուցիչներին պաշտպանելու պետության պարտավորությունը ստանում է առավել մեծ, այլ ոչ թե պակաս կարևորություն։

5.2.2. Սեփականության իրավունք

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը։ Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը։ Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում։ Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ։ Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի։ Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով։

ՀՀ Մահմանադրություն, հոդված 31

Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իր գույքից անարգել օգտվելու իրավունք ունի։ Ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններում։

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի Արձանագրություն, հոդված 1

* Տե՛ս՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների խորհրդի թիվ 6 Ընդհանուր մեկնաբանություն, 13-րդ նստաշրջան, 08.12.1995թ., կետ 13։

Սեփականության իրավունքի հիմնական նշանակությունը սեփական գույքից անխոչընդոտ օգտվելու անձի իրավունքի ապահովումն է: Չնայաց այս իրավունքը պարունակվում է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, այնուամենայնիվ դրա ամրագրումը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի արձանագրությամբ առաջացրել է որոշ երկրների (Միացյալ Թագավորություն և Շվեդիա) դժգոհությունը, որոնք անհանգստացած էին, որ այդ իրավունքը կարող է սահմանափակել պետության հնարավորությունները քաղաքական և սոցիալական նպատակներով արդյունաբերական ձեռնարկությունների ազգայնացման հարցում: Այնինչ, արձանագրության հոդված 1-ը ամրագրում է ոչ թե բացարձակ, այլ պայմանավորեցված սեփականության իրավունք, սահմանելով պետության հայեցողության բավական լայն շրջանակներ: Ընդգծենք, որ «սեփականության» ներքո ենթադրվում է տնտեսական իրավունքների լայն տարրապատկեր, ինչը հիմնականում համապատասխանում է «գույք» հասկացությանը:

Նյութական և ոչ նյութական շահերը (բաժնետոմսեր, արտոնագրեր, միջնորդ դատարանի հայցալին որոշում, կենսաթոշակի իրավունք, վարձավճար գանձելու տնատերի իրավունք, գործարարության հետ կապված տնտեսական շահեր, շարժական և անշարժ գույք, ցանկացած մասնագիտությամբ զբաղվելու իրավունք և այլն) մեկնաբանելիս եվրոպական դատարանն առանձնացնում է երեք հստակ նորմ` անձն օգտվում է իր սեփականությունից առանց որևէ խոչընդոտի, սեփականությունից զրկելը պետության համար սահմանափակ է պարտադիր մի շարք պայմաններով, պետությունն իրավունք ունի վերահսկել սեփականության օգտագործումը` հասարակության շահերին համապատասխան, ընդունելով այնպիսի օրենքներ, որոնք նա անհրաժեշտ է համարում այդ նպատակի համար*:

Պետության միջամտության հիմնավորվածության կարևորագույն սկզբունքն է հանդիսանում հասարակական շահերի պահանջների և անձի հիմնական իրավունքների պաշտպանության անհրաժեշտ պայմանների միջև արդարացի հավասարակշռության պահպանումը: Այս սկզբունքը կոչված է ամրագրելու հռչակագրային պահանջը` սեփականության իրավունքին ցանկացած միջամտություն պետք է հետապնդի հասարակական շահերից բխող, համընդհանուր շահերին հարիր, օրինական նպատակ**:

Նույն նպատակով ձևակերպվել է իրավական որոշակիության կամ օրինականության պահանջը, որը պետության վրա սեփականությունից զրկելիս հստակ սահմանափակում է դնում` նման զրկում իրականացնել բացառապես օրենքով նախատեսված պայմաններով: Վերջապես, Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը դեռևս 1982թ. հստակեցրել է, որ չնայած արձանագրության հոդված 1-ում անմիջականորեն չի հիշատակվում «սեփականության օտարում» բառակապակցությունը, հոդվածից պարզորոշ երևում է, որ այդ էլ ի նկատի ունեցվում: Սեփականության օտարման, այսինքն` հասարակական շահերց բխող ցանկացած նպատակով սեփականության կոնկրետ տեսակի ձեռքբերման կամ երրորդ կողմին ձեռքբերման լիազորության ուղղությամբ պետության գործողության առնչությամբ, օրենքը չի կարող (այսինքն` չպետք է) ստեղծի անհավասարություն, որի պայմաններում անձը զրկվում է սեփականությունից հօգուտ մյուսի*:

Հայաստանում սեփականության իրավունքի հետ կապված իրավիճակի գնահատման համար կարևորագույն նշանակություն ունի սեփականության իրավունքին պետության միջամտության համաչափության սկզբունքը: Միջամտությունը թույլատրելի է համարվում, եթե այն ոչ միայն հասարակության շահերից բխող օրինական նպատակի է ծառայում, այլև համապատասխանում է մարդու իրավունքների պահպանությանը:

* Право на собственность, Прецеденты и комментарии, М. Карос-Фриск, А. Жеребцов, В. Меркулов, А. Эртель, Российская академия правосудия, Совет Европы, Москва 2002, էջ 46:

** Տե՛ս` «Բրեյմփիդն ու Մալսթրոմն ընդդեմ Շվեդիայի» գործով եվրոպական դատարանի վճիռը:

* Տե՛ս` «Փիթգոուն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով եվրոպական դատարանի վճիռը:

Վերոնշյալ սկզբունքների տեսանկյունից հատակ երևում է, որ Երևանի կառուցապատման ծրագրերի շրջանակներում իրականացվող սեփականության օտարումը կամ գրկումը վկայում են իշխանությունների, առաջին հերթին, գործադիր և նրան հնազանդ դատական իշխանությունների կողմից սեփականության իրավունքի աննախադեպ խախտումների մասին, ինչպես նաև դեռևս մի քանի տարի առաջ սկսված և մինչ օրս շարունակվող, գույքի բոլոր տեսակների վրա տարածվող սեփականության իրավունքի զանգվածային խախտումների նկատմամբ խորհրդարանի մեծամասնության անտարբերության մասին:

Չեկույցում բերված բողոքների օրինակները վկայում են սեփականությանն առնչվող այնպիսի իրավունքների խախտումների մասին, ինչպիսիք են՝ կենսաթոշակի, աշխատավարձի, մասնագիտությամբ զբաղվելու, բաժնետոմսերի տիրապետումից բխող և այլ իրավունքներ: Որպես կանոն, մարդու իրավունքների նման լայնածավալ խախտումներին նախորդում է իրավական ակտերի, հաճախ կառավարության, ինչպես նաև նրա օրինակին հետևող տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների ընդունումը: Մինչդեռ, եվրոպական դատարանի եզրակացությունների համաձայն՝ իրավական որոշակիության սկզբունքը չի սահմանափակվում միայն ներքին օրենսդրությանը պետության կողմից ձեռնարկվող գործողությունների համապատասխանությամբ, այլ ենթադրում է, որ հենց ներքին օրենսդրությունը պետք է համապատասխանի «օրենքի» էական պահանջներին, որոնք ներառում են պետության լիազորությունների անհարկի օգտագործման դեմ արդարացի և պատշաճ կարգը դատավարական երաշխիքների առկայության պայմաններում:

Սեփականության իրավունքի խախտումները գործադիր իշխանության ողջ ուղղահայացով, իրավաչափ գործողություններ կատարելու մեջ շահագրգիռ և անկախ լինելու կոչված դատական և օրենսդիր իշխանությունների «հնազանդությունը» հանգեցրել են սեփականատերերի ստվար խմբի սեփականության սահմանադրական իրավունքի ոտնահարման և շարունակում են սպառնալ այլ սեփականատերերի իրավունքներին:

Սահմանադրությանը Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերին վերաբերող ՀՀ կառավարության որոշումների համապատասխանության առնչությամբ Պաշտպանի դիմումը Սահմանադրական դատարան կոչված էր վերջ դնել սեփականության իրավունքի սուրբեկտիվ և կամայական մեկնաբանություններին, վերականգնել այս իրավունքի զանգվածային խախտումներից արդեն տուժած անձանց իրավունքները, ինչպես նաև կանխել հետագա անխուսափելի խախտումները:

5.2.3. Մշակութային իրավունքներ

Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 40

Սույն դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի իրավունքը՝ մասնակցելու մշակութային կյանքին, օգտվելու գիտական առաջընթացի արդյունքներից և դրանց գործնական կիրառումից, օգտվելու այն բարոյական և նյութական շահերի պաշտպանությունից, որոնք առաջանում են իր հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական ցանկացած երկի կապակցությամբ: Սույն դաշնագրի մասնակից պետությունների կողմից այդ իրավունքի լիարժեք իրականացման նպատակով ձեռնարկվող միջոցներին դասվում են նրանք, որոնք անհրաժեշտ են կրթության ու մշակույթի նվաճումների պահպանման, զարգացման և տարածման համար: Սույն դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել գիտական հետազոտությունների և ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ ազատությունը: Սույն դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են գիտական ու մշակութային բնագավառներում միջազգային կապերի և համագործակցության խրախուսումից ու զարգացումից բխող օգուտը:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 15

Համաձայն ՀՀ Սահմանադրության հոդված 48-ի, մշակութային ոլորտում պետության հիմնական խնդիրներն են՝ նպաստել երիտասարդության մասնակցությանը երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին, նպաստել անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացմանը, նպաստել գիտության և մշակույթի զարգացմանը, նպաստել ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը: Պետությունը պարտավոր է իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել սույն հոդվածում ամրագրված խնդիրների իրականացման համար: Մշակութային իրավունքներին առնչվող միջազգային փաստաթղթերը՝ վերոնշյալ դրույթներին զուգահեռ, պարունակում են նաև հասարակության այլ խմբեր, ինչպես նաև պետության համար այլ պարտականություններ նախատեսող դրույթներ:

Մշակույթի և գիտության նվաճումներից օգտվելն ու մասնակցությունը հասարակության մշակութային կյանքին՝ ծայրահեղ կարևորագույն նշանակություն ունեն հավասարության սկզբունքի, խոսքի և տեղեկատվության ազատության, մարդու անհատականության լիարժեք զարգացման իրավունքի տեսակետից:

Միջազգային պրակտիկան վկայում է մշակութային իրավունքների նկատմամբ առանձնահատուկ ուշադրության անհրաժեշտության մասին, առավել ևս, երբ մեծ է պետության կողմից մշակութային առանձնահատկությունների ոտնահարման կամ անտեսման հավանականությունը: Անհրաժեշտ է նշել, որ մշակութային իրավունքները ներառում են մասնակցությունը հասարակական կյանքին՝ «մշակույթ» հասկացության տարածական մեկնաբանությամբ: Բացի այդ, մշակութային իրավունքներն անմիջականորեն կապված են զարգացման և մտավոր սեփականության իրավունքների հետ:

Մշակութային իրավունքների լիարժեք իրականացման խնդիրը սերտորեն կապվում է մշակութային արժեքների պահպանման և պաշտպանության խնդիրների հետ, ինչը չի հասցված պատշաճ մակարդակի, հատկապես, երբ խոսքը վերաբերում է պատմամշակութային արժեքներին:

Հայստանը միացել է Չինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին և Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պահպանության մասին կոնվենցիաներին, դրանով իսկ ստանձնելով դրանցում նախատեսված պետության պարտավորությունները:

Մշակութային և բնության արժեքներին վերաբերող այս և այլ միջազգային փաստաթղթեր նախ և առաջ արժևորվում են այն առումով, որ դրանցում մանրամասն սահմանվում են «մշակութային արժեքներ», «մշակութային ժառանգություն», «բնության ժառանգություն», «մշակութային արժեքների պաշտպանություն» և այլ հասկացություններ: Բացի այդ, փաստաթղթերը պարունակում են պետության հանդեպ բավականին խիստ պահանջներ, որոնցով մեծ նշանակություն է տրվում ինչպես մշակութային արժեքների պահպանությանը, այնպես էլ հասարակության բոլոր խմբերի, այդ թվում խոցելի և հատուկ խմբերի համար դրանց մատչելիության ապահովմանը:

Մշակութային և բնության արժեքներին առնչվող մի շարք փաստաթղթեր սահմանում են կոնկրետ գործողություններ, որոնց իրականացմամբ պետությունը կարող է երաշխավորել, որ իր տարածքում գտնվող մշակութային և բնության ժառանգության պաշտպանության, պահպանության և հանրամատչելի դարձնելու համար ձեռնարկվում են արդյունավետ և ակտիվ միջոցառումներ: Այս պարագայում անգործությունը գնահատվում է որպես պարտավորությունների չկատարում:

Այս առումով անհրաժեշտ է դարձյալ անդրադառնալ Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք հանդիսացող ճարտարապետական կառույցների պահպանումն անտեսելուն: Ծրագրի հեղինակները պնդում են, որ նման կառույցները տեղափոխվում և վերականգնվում են այլ վայրերում:

Սակայն դա արվում է ոչ միշտ, և ոչ բոլոր կառույցների տեղափոխումն է հնարավոր: Նոր տեղում կառույցը կորցնում է իր շրջակա կոլորիտը, իսկ քանդման ընթացքում քարերի մեծ մասը կոտրվում և ոչնչանում է: Նման տեղափոխմամբ ճարտարապետական

կառույցը զգալիորեն կորցնում է իր պատմամշակութային արժեքը: Բացի այդ, բազմաթիվ նման շինություններ պարզապես ոչնչացվել են: Նույն իրավիճակում են հայտնվել նաև բնության որոշ եզակի արժեքներ:

Ամիրյան 4/16 հասցեի 19-րդ դարի պատմաճարտարապետական կառույցն արժեքավոր էր ոչ միայն արտաքին ճարտարապետական ձևավորումով, այլև ներքին կառույցներով և դեպի հանրապետության հրապարակ ստորգետնյա անցումով: Կառույցի արտաքին պատը ներդաշնակում էր տվյալ շարքի և դիմացի մայթի երկայնքով եղած շինությունների ընդհանուր ճարտարապետական ֆոնին:

Կառույցը ներառված էր պետության կողմից պահպանվող պատմամշակութային անշարժ արժեքների ցուցակում, և շինության պատին փակցված էր «պահպանվում է պետության կողմից» ցուցանակը: Սակայն 2004թ. նորացված ցուցակներից անհայտ պատճառներով կառույցը հանվել և ներառվել է «պետության կարիքների համար» օտարվող տարածքների ցուցակում:

Երբ տվյալ շինության վերաբերյալ վեճը պետք է քննվեր վճռաբեկ դատարանում, Պաշտպանը դատարանին առաջարկել է քննարկման առարկա դարձնել նաև շինության պատմամշակութային արժեք լինելու հանգամանքը: Առաջարկությունը մնացել է անպատասխան: Անպատասխան է մնացել նաև Երևանի քաղաքապետին արված առաջարկը՝ հարցը Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման գրասենյակի կառավարման խորհրդում քննարկելու և շինությունը որպես պատմամշակութային արժեք պահպանելու խնդիրը լուծելու մասին:

Այս իրավիճակին տեղյակ էին ինչպես ՀՀ մշակույթի նախարարությունը, անպես էլ ՀՀ կառավարությունը, սակայն նրանց կողմից պատմամշակութային արժեքը պահպանելու ուղղությամբ բավարար քայլեր չեն ձեռնարկվել: Ի վերջո, ի կատարումն վճռաբեկ դատարանի կողմից անփոփոխ թողնված դատական վճռի, շինությունը քանդվել է:

Բնության եզակի արժեքներ հանդիսացող Դալմայի այգիները, Խոսրովի արգելոցը, ինչպես նաև անտառային հիմնական զանգվածները հայտնվել են ոչնչացման սպառնալիքի ներքո:

Անընդունելի է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց համայնքների տարածքներում գտնվող պատմամշակութային արժեքների պահպանման նկատմամբ ցուցաբերվող անտարբեր, հաճախ նաև հանցավոր վերաբերմունքը:

- Ավան համայնքում մի քանի հարյուրամյակի պատմություն ունեցող գերեզմանոցին անմիջականորեն հարող տարածքը հանձնվել է կառուցապատման նպատակներով:
- Բուժական գյուղի մոտ գտնվող Թեղենիս վանքային համալիրը վեր է ածվել արոտավայրի:
- Արարատի մարզի Լանջանիստ գյուղի տարածքում գտնվող 16-րդ դարի եկեղեցու քարերը հանվել, տարվել են անհայտ ուղղությամբ:

Մշակույթի մատչելիության, ինչպես նաև գիտության նվաճումներից օգտվելու հնարավորության հետ անմիջական կապված են գրադարանների հետ կապված մի շարք խնդիրներ: Նախ և առաջ անհրաժեշտ է նշել, որ գրադարանների թիվը համատարած նվազել է՝ ավելի քան կիսով չափ, իսկ պահպանված, ինչպես նաև դպրոցական գրադարանները վերջին 15 տարվա ընթացքում չեն համալրվել գրականությամբ:

Ազգային գրադարանում գրականությունից օգտվելը դարձել է վճարովի, ինչն արդեն իսկ գիտության և մշակույթի մատչելիության խոչընդոտ է, մանավանդ ուսանողների համար: Ավելին, բնակավայրերի ճնշող մեծամասնությունը, այդ թվում է և մարզկենտրոնները, չունեն գրախանութներ, այնտեղ չեն գործում մշակույթի պալատներ, քատրոններ և կինոթատրոններ:

Այս ամենը ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի, կրթության և գիտության, բնապահպանության նախարարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այլ պատկան հանրային մարմինների անտարբերության և անգործության արդյունք է:

Այսպիսով, չեն իրականացվում տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում մի շարք միջազգային փաստաթղթերով պետության կողմից ստանձնած պարտավորությունները: Մարդու իրավունքների դիտարկմամբ և խրախուսմամբ զբաղվող

մարմինները, ինչպիսիք են մարդու իրավունքների պաշտպանության հաստատությունները, պետք է հավասարաչափ հետևողական և ակտիվ զբաղվեն ինչպես քաղաքացիական և քաղաքական, այնպես էլ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներով: Պետությունը պետք է մշակի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ցանկացած խախտման հնարավորության կանխարգելման արդյունավետ միջոցներ և երաշխավորի, որ յուրաքանչյուր ոք, ով կարող է թույլ տալ իրավունքների խախտում, չի ազատվի նման գործողությունների համար նախատեսված պատասխանատվությունից:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի իրականացման Լիմբուրգյան սկզբունքներում ընդգծվում է, որ մասնակից պետությունները պետք է ապահովեն յուրաքանչյուրի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները առկա ռեսուրսների սահմաններում: Տվյալ պահանջը պարտավորեցնում է մասնակից պետությանն ապահովել կենսաապահովման նվազագույն իրավունքները՝ անկախ երկրի տնտեսական զարգացվածության մակարդակից:

Ինչպես նշված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների խախտումներին վերաբերող Մահաստրիխթյան ղեկավար սկզբունքներում՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների սիստեմատիկ խախտումները վտանգում են իրական պետական անվտանգությունը և կարող են սպառնալիք ներկայացնել միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը: Նման խախտումների համար պատասխանատվություն կրող պետությունը չպետք է հղում կատարի պետական անվտանգության շահերին՝ որպես նման խախտումների դեմ ուղղված դիմադրության ճնշման միջոցների կիրառման կամ սեփական բնակչության նկատմամբ ճնշամիջոցների քաղաքականության անցկացման արդարացում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով 2004թ. մարտի 1-ին հիմնվեց մարդու իրավունքների ազգային հաստատությունը: Համաձայն օրենքի հոդված 27-ի՝ առաջին Պաշտպանի նշանակումը իրականացվել է ՀՀ նախագահի կողմից, ԱԺ խումբ/խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո: Դա ինքնին ընկալվել է (այդ թվում՝ միջազգային կառույցների կողմից), որպես Պաշտպանի անկախությունն ու ինքնուրույնությունը գրեթե անհնարին դարձնող հանգամանք:

Այդուհանդերձ, գործունեությունը սկսելով մինչև սահմանադրական մարմնի կարգավիճակ ունենալը և պաշտպանված չլինելով բարձրագույն իշխանությունների սուբյեկտիվիզմից, Պաշտպանը գործել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի և Փարիզյան սկզբունքների համաձայն, իր գործունեությամբ հիմք է դրել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատության հետագա զարգացման համար:

Պաշտպանի հաստատության գործունեությունը՝ ոչ միանշանակ, երբեմն էլ ուղղակի անբարենպաստ պայմաններում, նպաստել է մարդու իրավունքների պաշտպանության գաղափարների տարածմանն ինչպես հանրային մարմինների, այնպես էլ լայն հասարակության շրջանում, և կարճ ժամանակահատվածում հաստատությունը դարձել է պահանջված՝ բնակչության մեծ թվով անպաշտպան խմբերի և անհատների համար, որոնց իրավունքները խախտվում են հանրային մարմինների և դրանց ներկայացուցիչների կողմից:

2004-2005թթ. Պաշտպանն իր աշխատանքներում հիմնվել է օմբուդսմանի գործունեությանը ներհատուկ միջազգայնորեն ճանաչված սկզբունքների վրա, որոնցից են անաչառությունը, անկախությունը, արդարությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Հրամայական գործառույթների բացակայությունը մարդու իրավունքների պետական պաշտպանության այս մեխանիզմի ոչ թե թուլությունն է, այլ առանձնահատկությունը: Հենց այս առանձնահատկությունն է հնարավորություն ընձեռում վերհանել մարդու իրավունքների ոլորտում և իրավական պետության կայացման գործընթացում իշխանության իրական քաղաքականությունը: Մարդու իրավունքների պաշտպանության այս հատուկ մեխանիզմի գործունեությունը խթանում է իրավագիտակցության, օրինականության և իրավակարգի մակարդակի բարձրացումը՝ որպես ընդհանուր առմամբ հասարակության ներքին պահանջ, այլ ոչ թե լոկ արտաքին միջազգային կազմակերպությունների առջև պետության ստանձնած պարտավորությունների կատարում, առավել ևս՝ կատարման նմանակեղծում:

Պաշտպանի գործունեության ուղղությունների նկարագրությունը տալիս է լոկ սխեմատիկ պատկերացում Պաշտպանի հաստատության ամենօրյա գործունեության մասին, որը հազեցած էր ինչպես բողոքատուների, այնպես էլ հանրային մարմինների ներկայացուցիչների, ՁԼՄ-ների և ՀԿ-ների հետ համագործակցությամբ, ինչպես նաև մասնակցությամբ միջազգային կառույցների միջոցառումներին:

Անշուշտ, զեկույցում նկարագրված չէ այն ամենը, ինչ իրագործվել է Պաշտպանի հաստատության կողմից խախտված իրավունքների վերականգնման, խախտումների կանխարգելման, մարդու իրավունքների պաշտպանության և իրազեկման ուղղությամբ:

Ավելին, կան գործունեության այնպիսի ուղղություններ, որոնք չեն ներկայացվել զեկույցում: Այսպես, զեկույցում զետեղված չեն առողջապահության, հեղինակային իրավունքների, հատուկ խոցելի խմբերի ներկայացուցիչների՝ տարեցների, հոգեկան հիվանդությամբ տառապողների, բնակտարացքից զուրկ անձանց իրավունքների վերաբերյալ նյութեր:

ՀՀ Մարդու իրավունքների առաջին պաշտպանի 2005թ. տարեկան զեկույցը առանձնահատուկ ընդգծում է մարդու իրավունքների խախտումներն ըստ առանձին մարմինների և կամ դրանց ներկայացուցիչների:

- **Հանրային մարմինները** խախտում են մեծաթիվ խմբերի ներկայացուցիչների իրավունքներ՝ իրենց գործունեությունն ու մարդկանց հետ փոխհարաբերությունները կանոնակարգող անկատար օրենքների և այլ իրավական ակտերի և նորմերի ընդունմամբ, որոնք հակասում են ինչպես սահմանադրական, այնպես էլ միջազգային իրավական նորմերին և մարդու իրավունքների ոլորտում երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին, ունեն կանխորոշելի բացասական հետևանքներ, որոնք հակասում են ընդունված ազգային ծրագրերին, մասնավորապես աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին և հակակոռուպցիոն ծրագրին:

- **Հանրային մարմինների ներկայացուցիչները** մարդու իրավունքների խախտումներ են թույլ տալիս վատ վարչարարության դրսևորման և ժողովրդավարական մեխանիզմները վարչահրամայականներով փոխարինելու արդյունքում, երկրի օրենսդրության ուղղակի խախտումներով կամ անգործությամբ:

Մարդու իրավունքների խախտումների վերլուծությունն ըստ հանրային մարմինների թույլ է տալիս **առարկայորեն հաստատել խախտումների համակարգային բնույթի վերաբերյալ դրույթը**: Մարդու իրավունքների խախտումները կրում են կրկնվող բնույթ, տարածված և հատուկ են հանրային մարմիններին և դրանց տարածքային ստորաբաժանումներին, ունեն արմատացած և խորքային պատճառներ և վերաբերում են

պետության կենսագործունեության տնտեսական, քաղաքական և հասարակական ոլորտներին:

- **Տնտեսական իրավունքների ոլորտում** կամայական մեկնաբանությունների արդյունքում սպառնալիքի տակ է շուկայական տնտեսության և ժողովրդավարական արժեքների անկյունաքար հանդիսացող սեփականության իրավունքը: Սեփականության իրավունքի ոտնահարումները հիմնականում վերաբերում են մասնավորեցման գործընթացներին և բնակելի տարածքների ու հողատարածքների օտարմանը, ինչը, սկիզբ առնելով Երևանի կենտրոնից, նույն սխեմայով ընթանում է մայրաքաղաքի մյուս մասերում և այլ բնակավայրերում: Կամայական մեկնաբանությունները սեփականության իրավունքի ոչ միայն ներկա ոտնահարումների խորքային պատճառ են հանդիսանում, այլև հետագայում նոր խախտումների անվիճելի նախադրյալներ են:

- **Քաղաքական իրավունքների ոլորտում** անթաքույց և կազմակերպված ձևով, այդ թվում՝ օգտագործելով հանրային մարմինների վարչական ռեսուրսները, խախտվում է համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքը, այսինքն՝ անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով երկրի կառավարմանը մասնակցելու իրավունքը:

Խորանում է «սովորական» մարդու և իշխանությանը չմասնակցող հասարակության օտարման գործընթացը ընդհանրապես պետության կառավարման մասնակցությունից, կասկածի տակ դնելով ժողովրդավարության համար ամենաարժեքավորը՝ կառավարման մարմինների կազմավորումը ազատ և արդար ընտրությունների միջոցով, ինչը փոխարինվում է իշխանության թաքնված կամ բացահայտ վերարտադրությամբ իշխանությանը մասնակից այն անձանց նեղ շրջանակի կողմից, որոնք գտնվում են կոշտ հիերարխիկ հարաբերությունների մեջ, ինչը իրավունքի և օրենքով պաշտպանված լինելու տեսանկյունից ստորադասին դարձնում է խոցելի:

- **Հասարակական ոլորտում** դիտվում է զգալի հետընթաց, մասնավորապես խոսքի ազատության և տեղեկատվության մատչելիության առումով. տեղեկատվությունը գնալով էլ ավելի է վերածվում քարոզարշավի, բնակչության համար ամենամատչելի զանգվածային լրատվական միջոցներով՝ հեռուստատեսությամբ և ռադիոյով, տարածվում է իշխանություններին անհրաժեշտ և ձեռնտու, միակողմանի և ոչ օբյեկտիվ, հաճախ նաև աղավաղված տեղեկատվություն:

Խոսքի իրական ազատությունը և տեղեկատվության մատչելիությունը սահմանափակվում են «ներքին գրաքննությամբ» և ՉԼՄ-ների, մասնավորապես էլեկտրոնային միջոցների, տնտեսական կամ վարչական մեթոդներով բացահայտ կամ պոտենցիալ ճնշումների միջոցով, բոլորին դաս մատուցելով «Ա1+» և «Նոյյան տապան» ընկերությունների օրինակով:

- Բացակայում է հանրային մարմինների ընթացիկ պարբերական հաշվետվողականությունը հասարակության առջև, այդ թվում՝ իրավախախտ և օրինազանց պաշտոնյաների պատժվածության դեպքերի և այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցների առնչությամբ, որոնք հետագայում ներառվում են տարեկան հաշվետվություններում հիմնականում վիճակագրական տվյալների տեսքով:

- Չի իրագործվում համարժեք պատժելիության սկզբունքը, դեռ ավելին, հանրային մարմինների ստորադաս ներկայացուցիչները ոչ միայն չեն պատժվում մարդու իրավունքների կամ օրենքի խախտումների համար, այլև խրախուսվում, հաճախ նաև պարտադրվում են նման գործողությունների կատարման՝ վերադասների կողմից:

Համարժեք պատժելիության սկզբունքի հազվադեպ կիրառությունը կրում է ոչ հետևողական և ընտրողական բնույթ, ինչը բերում է բնակչության անվստահության աճի՝ իշխանությունների նկատմամբ ընդհանրապես, և օրինական ճանապարհով մարդու խախտված իրավունքների վերականգնման և հանրային մարմինների ներկայացուցիչների հանդեպ պատժելիության կիրառման նկատմամբ, մասնավորապես:

- Կոռուպցիան ավելի շուտ հանդիսանում է հետևանք, քան պատճառ բացասական իրավակիրառական պրակտիկայի, որը որոշ ուղղություններով խորանում և ընդլայնվում է, զանգվածաբար խախտելով տարբեր հասարակական խավերին պատկանող անձանց իրավունքները, բայց ավելի ցավոտ է անդրադառնում սոցիալապես անապահով և չպաշտպանված անձանց և խմբերի վրա:

Ինչպես ցույց է տալիս միջազգային և ազգային փորձը, ելնելով ռեսուրսների սղությունից, մարդու իրավունքների խախտումների զանգվածայնությունից և բազմազանությունից, Պաշտպանը պետք է սահմանափակի հետազոտությունների և սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրությունների շրջանակը: Պաշտպանը հաճախ չի կարողանում մարդու իրավունքների խախտման առնչությամբ սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրություն սկսել կամ ուսումնասիրությունը շարունակել ՉԼՄ-ների կամ ՀԿ-ների նյութերով:

Ասվածը նշանակում է, որ մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ է, որպեսզի հանրային մարմինները պատշաճ ուշադրություն դարձնեն առանձին խնդիրների և մարդու իրավունքների խախտումների առնչությամբ ՉԼՄ-ների հաղորդումներին և ՀԿ-ների կողմից բարձրացված հարցերին:

Պատահական չէ, որ մարդու իրավունքների պաշտպանության պետական մեխանիզմների շարքում դատարանների և Պաշտպանի հաստատության կողքին դասվում են ՀԿ-ները և ՉԼՄ-ները:

Կարելի է վստահաբար ասել, որ հասարակական սեկտորը, ի դեմս ակտիվ գործունեություն իրականացնող ոչ կառավարական կազմակերպությունների և դրանց միավորումների, չորրորդ իշխանության՝ ՉԼՄ-ների հետ միասին գտնվում են Հայաստանը իրավական ժողովրդավարական պետություն դարձնելու պայքարի առաջին շարքում: 2005թ. ընթացքում ՉԼՄ-ների և ՀԿ-ների միջոցով պարբերաբար վերհանվել և հասարակական հնչելություն են ստացել մարդու իրավունքների խախտման մի շարք զանգվածային և ցայտուն դրսևորումների դեպքեր:

- Չնայած ոչ կառավարական կազմակերպությունների և հատկապես միջազգային կազմակերպությունների ջանքերին, շարունակվում է կասկածյալների և կալանավորվածների նկատմամբ դաժան վերաբերմունքի պրակտիկան, ամենից հաճախ ցուցմունքներ և խոստովանություններ կորզելու նպատակով, որոնք այնուհետև դրվում են դատարանների դատավճիռների հիմքում:

Արդարադատության նախարարությանն առընթեր քրեակատարողական մարմինների հասարակական դիտորդական խմբի անկասկած դրական գործունեությունը և ՀՀ քրեակատարողական հիմնարկների առանձին ներկայացուցիչների ջանքերը նպաստում են անազատության վայրերում դաժան վերաբերմունքը արմատախիլ անելուն:

Այնուամենայնիվ, նման հիմնարկների աշխատակիցների կողմից որպես պատժի «յրացուցիչ» ձև կիրառվող դաժան և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը վերադասի կողմից պատշաճ գնահատական չի ստանում, դեռ ավելին՝ արժանանում է հանդուրժողական վերաբերմունքի: Չնայած ազատագրկման վայրերում ինքնասպանության դեպքերի առնչությամբ հարուցվող քրեական գործերի, չեն բարձրացվում պատասխանատուներին պատասխանատվության կանչելու և տուժաժի

հարազատների փոխհատուցման հարցերը, ինչը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հանձնարարականներից է:

- Նման իրավիճակ է տիրում նաև բանակում. դաժան վերաբերմունքի, ինքնասպանությունների և սպանությունների դեպքերը չեն արժանանում համարժեք գնահատականի, իսկ պատասխանատուներին պատասխանատվության կանչելու և տուժածի հարազատների փոխհատուցման խնդիրները մնում են չլուծված: Այսինքն, արմատավորված չէ այն դրույթը, որ մարդու կյանքի պահպանության պատասխանատվությունը դրված է պետության վրա՝ ի դեմս կոնկրետ ոլորտներում գործող հանրային մարմինների:

Պաշտպանության նախարարությանն առընթեր հասարակական կազմակերպությունների խորհրդի, ինչպես նաև բանակում մարդու իրավունքների պաշտպանության ոչ կառավարական առաջատար կազմակերպությունների փորձը ինքնին ոչ միայն հասարակության դրական ներդրում է իրականացնում քաղաքացիական հասարակության կայացման գործում, այլև բացահայտում է այն բացասական երևույթները և փաստերը, որոնք կապված են ինչպես բանակի և դրա հետ անմիջականորեն առնչվող կառույցների հետ, այնպես էլ այլ բնագավառների հետ, ինչպիսիք են օրինակ՝ կրթությունը, առողջապահությունը, սոցիալական ապահովությունը: Բացահայտված է, օրինակ, որ զինակոչիկների շրջանում պահպանվում է անգրագետների, անառողջների, իսկ հաճախ նաև զինվորական ծառայության համար ոչ պիտանի անձանց բարձր տոկոսը, որոնք առողջության առավել վատթարացման կամ կորստի դեպքում չեն կարողանում հասնել համապատասխան փոխհատուցման և սոցիալական աջակցության:

- Բարձր գնահատականի է արժանի հասարակական կազմակերպությունների, հատկապես՝ կանանց, սահմանափակ հնարավորություններով անձանց, ազգային և կրոնական փոքրամասնությունների, խոսքի և տեղեկատվության ազատության և լրագրողների իրավունքների, սպառողների և էկոլոգիական հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների և դրանց միավորումների գործունեությունը: Անհրաժեշտ է ընդգծել սպառողների և էկոլոգիական իրավունքների պաշտպանությանը զբաղվող ՀԿ-ների ակտիվ համագործակցությունը հանրային մարմինների հետ, այդ թվում՝ օրենսդրական դաշտի և իրավակիրառական պրակտիկայի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման առումով: Այնուամենայնիվ, չնայած ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում այս կազմակերպությունների ակտիվության, բարձր հեղինակության և արդյունավետ գործունեության, հանրային մարմինները պատշաճ կերպով չեն արձագանքում ՀԿ-ների առաջարկություններին և չեն ձեռնարկում անհրաժեշտ գործողություններ իրավիճակը բարելավելու նպատակով:

Իրավապաշտպանության վերոնշյալ կարևորագույն ուղղություններին զուգահեռ անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել խոշտանգումների և դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի արմատախիլ անելուն: Մարդու իրավունքների միջազգային օրվա կապակցությամբ ամենամյա ուղերձում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը 2006թ. հայտարարել է խոշտանգումների և դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ պայքարի տարի: Նման ուշադրությունը մարդու՝ այս անգամ ծայրահեղ պայմաններում անսահմանափակելի իրավունքի նկատմամբ բացատրվում է ոչ միայն այս իրավունքի հինարարությամբ, այլև շատ երկրներում դրա

արդիականությամբ: Այս խնդիրն արդիական է նաև ԱՊՀ երկրներում, այդ թվում և Հայաստանում:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որպեսզի իշխանություններն ու հասարակայնությունը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ուղերձն ընկալեն որպես կոչ բոլոր նրանց, ում համար թանկ է երկրի պատիվն ու արժանապատվությունը, և յուրաքանչյուրին, ով պատասխանատվություն է կրում այս ոլորտում իրավիճակի համար, երկրի նախագահից և պաշտպանից մինչև առանձին պետական և հասարակական գործիչներ՝ վճռականորեն ստեղծել մարդու հետ նման վերաբերմունքի նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտ:

Անշուշտ, ասվածն առաջին հերթին վերաբերում է իրավապահ մարմիններին, որոնք շարունակում են խախտել ոչ միայն այս իրավունքը, այլև կյանքի, անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքները, ինչպես նաև օրենքի առջև հավասարության և խտրականության արգելման սկզբունքները և այլն: Հանրային այս մարմինների, ինչպես նաև ընդհանուր առմամբ դատարանների և արդարադատության համակարգի հանդեպ վստահության բացակայությունը կասկածի տակ են դնում իրավական պետության ստեղծման և զարգացման հնարավորությունը: Համալիր մոտեցումն այս խնդրին կնպաստի ոչ միայն իրավապաշտպանվածության մակարդակի բարձրացմանը, այլև իրապես կարող է անդրադառնալ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունքների վրա:

Այս ոլորտներում կարգուկանոնի հաստատումը անշուշտ կբարձրացնի իշխանության տարբեր ճյուղերի և շերտերի կամայականությունից մարդու իրավական պաշտպանվածության մակարդակը և իրական ներդրում կհանդիսանա պետության կողմից հռչակված նպատակների նվաճման գործում՝ պետության միասնություն և անվտանգություն, ժողովրդի բարեկեցություն, երկրի բարգավաճում, օրենքի զերակայություն, եվրոպական ինտեգրում և այլն:

Մարդու իրավունքների առավել կոպիտ դրսևորումների կատեցումը, ինչը չի պահանջում որևէ ֆինանսական ներդրում կամ օրենսդրական բարեփոխումներ, կբազմապատկի ազգային ծրագրերի, ինչպես նաև միանգամյա (բավականին ծախսատար) միջոցառումների և միջազգային կոնֆերանսների արդյունքը: Հարգանքը ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված մարդու իրավունքների հանդեպ և իշխանությունների կողմից գործողություններով կամ անգործությամբ դրանց խախտման պրակտիկայի դադարեցումը, վստահություն կներշնչեն իշխանությունների և նրանց կողմից իրականացվող քաղաքականության նկատմամբ:

Երկրում մարդու իրավունքների հետ կապված հիմնախնդիրները լայնորեն լուսաբանվում են, ինչը սակայն հազվադեպ է թողնում իր ազդեցությունը բարեփոխումների վրա: Նույնը վերաբերում է նաև միջպետական և միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակվող մարդու իրավունքների վիճակի գնահատականներին, որոնք պետական մարմինների կողմից ընկալվում են որպես իջեցված և իրական վիճակին չհամապատասխանող, թեև, անկասկած, պետական մարմինները հակված են ավելի շատ արձագանքել միջպետական կազմակերպությունների եզրակացություններին, քան ազգային ոչ կառավարական կազմակերպությունների կարծիքներին և գնահատականներին:

Հասարակական կազմակերպություններն իրենց հերթին գտնում են, որ միջազգային և միջկառավարական կազմակերպությունները ժամանակի ընթացքում ավելի հաշտվողական են դառնում Հայաստանում մարդու իրավունքների խախտումների փաստերի կամ երևույթների նկատմամբ:

Ազգային ծրագրերի դիտարկումները և հասարակական կազմակերպությունների կողմից անցկացված բազմաթիվ ուսումնասիրություններն ու հարցումները վկայում են, որ բացահայտված բացասական երևույթները, իսկ մասամբ նաև դրանց հաղթահարման մեթոդները, փաստացի համընկնում են, այսինքն՝ տեսականորեն, վերացական մակարդակում կարևորագույն հարցերի և խնդիրների առնչությամբ արդեն համաձայնություն է ձեռքբերված: Այնուամենայնիվ, եթե ձևակերպումներից անցում ենք կատարում ձեռնարկվող գործողությունների վերլուծությանը, ապա հայտնաբերվում է դրանց ուղղվածության և արդյունքների անհամապատասխանությունը հռչակված նպատակներին և խնդիրներին, ինչը վկայում է իշխանությունների և հասարակության դիրքորոշումների խորքային տարբերության մասին:

Ասվածից հետևում է, որ մարդու իրավունքների ոլորտում իրավիճակի ընդհանուր բարելավման հիմնական խոչընդոտներից է, մի կողմից՝ իշխանության, մյուս կողմից՝ հասարակության ընկալումների, մոտեցումների և գնատականների տարբերությունը փաստերի և բացասական երևույթների վերաբերյալ: Բացի այդ, հասարակական վերահսկողության, ինչպես նաև պետական պատշաճ հսկողության բացակայության պայմաններում, իշխանության ներկայացուցիչների խմբակային կամ անձնական և հասարակական շահերի տարբերությունը, իսկ հաճախ նաև հակադրությունը, բերում են պաշտոնական դիրքի չարաշահումների, և դրանով իսկ մարդու իրավունքների խախտման: Հենց այս հակասությունների արդյունքում հասարակության ներուժը չի վերածվում իրական քաղաքականության և գործողությունների՝ հանուն մարդու իրավունքների ոլորտում արմատական փոփոխության և ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կայացման:

ՀՀ Մարդու իրավունքների առաջին պաշտպանի գործունեությունը հաստատում է, որ Հայաստանում առկա են անհրաժեշտ պայմաններ մարդու իրավունքների պահպանության և պաշտպանության որակական նոր մակարդակի անցնելու համար:

Հասարակության պահանջն ու ձգտումը դեպի ժողովրդավարություն և իրավական պետություն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առանձնահատուկ պարտավորություններ է սահմանում իշխանությունների համար և նրանց առջև խնդիր է դնում վերացնել սուբյեկտիվ բնույթ կրող այն խոչընդոտները և արմատախիլ անել այն երևույթները, որոնք հակասում են Հայաստանի բոլոր հասարակական խմբերի և ընդհանուր առմամբ ժողովրդի հոգեկերտվածքին հարազատ, միջազգայնորեն ճանաչված մարդասիրության նորմերին և մարդու իրավունքներին:

Անհետևողականությունը կամ քաղաքական կամքի պակասը կարող է և պետք է լրացվի հասարակական կամքով: Տարբեր հասարակական խավերի շահերի և կարողությունների հակասությունն ու տարբերությունը չպետք է վերաբերի մարդու իրավունքներին, որոնք հանդիսանում են բնական համաձայնության ոլորտ, ինչն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, այն է՝ **բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով, նրանք օժտված են բանականությամբ և խղճով, և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով:**

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1.

**Պաշտպանի դիմումը Սահմանադրական դատարան
Սահմանադրությանը Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերին վերաբերող
ՀՀ կառավարության որոշումների համապատասխանության առնչությամբ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

Դիմող՝ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան

Պատասխանող՝ Հայաստանի Հանրապետության կառավարություն

Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերին վերաբերող՝ ՀՀ կառավարության 16.07.2001թ. թիվ 645 որոշման 1-ին կետի և 4-րդ կետի «բ» ենթակետի, 05.10.2001թ. թիվ 950 որոշումն ամբողջապես և 01.08.2002թ. թիվ 1151-Ն որոշման 1-ին կետի և 2-րդ կետի «ա», «գ» կետերի ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին, 44 հոդվածին և 87 հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցը որոշելու մասին

**ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին մասի հիմքերով
և 101 հոդվածի 8-րդ կետի կարգով՝**

Գ Ի Մ Ո Ի Մ

ՀՀ կառավարության 2001-2005թթ. ընդունած որոշումներով Երևան քաղաքում իրականացվել և իրականացվում է քաղաքացիներին պատկանող անշարժ գույքի հարկադիր օտարում «Պետական կարիքների համար» հիմնավորմամբ:

Մեր կարծիքով Երևան քաղաքի կառուցապատման ծրագրերի իրականացման գործընթացը կարգավորող կառավարության որոշումները հակասում են ՀՀ Սահմանադրության 31, 44 և 87 հոդվածների պահանջներին հետևյալ պատճառներով:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և կտակելու իր սեփականությունը:

Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ»:

Սահմանադրության այս սկզբունքների կապակցությամբ առկա է ՀՀ Սահմանադրական դատարանի «Ազգային ժողովի կողմից 1995 թվականի դեկտեմբերի 27-ին ընդունված «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի երրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ մասերի ՀՀ Սահմանադրության 8 հոդվածին և 28 հոդվածի երկրորդ մասին համապատասխանության վերաբերյալ հարցը որոշելու վերաբերյալ գործով» 1998 թվականի փետրվարի 27-ի որոշումը, որով արված հետևությունները և տրված պարզաբանումներն ամբողջովին վերաբերում են նաև ՀՀ գործող Սահմանադրության 31 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին:

Համաձայն Սահմանադրական դատարանի հիշյալ որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետի 2-րդ և 3-րդ պարբերությունների՝ «Անձի սեփականությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 28 հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերով (գործող Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի հիմքերով) կարող է օտարվել, իսկ նրա համաձայնության բացակայության դեպքում՝ պետության կողմից սեփականության իրավունքը դադարեցվել միայն կոնկրետ անշարժ գույքի վերաբերյալ օրենք ընդունելու միջոցով, որում կհիմնավորվի օտարման բացառիկ կարևորությունն ու նշանակությունը և կնշվի, թե օտարվող անշարժ գույքը հասարակության և պետության որ կարիքների բավարարմանն է ուղղվելու:

Օրենքը միաժամանակ կառավարությանը կպարտավորեցնի, համապատասխան ֆինանսատնտեսական հաշվարկի հիման վրա, շուկայական գների հաշվառմամբ, կառավարության և օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատիրոջ միջև բանակցությունների արդյունքի և վերջինիս գրավոր համաձայնության հիման վրա սահմանել փոխհատուցման չափը, որը սեփականատիրոջ կողմից ենթակա է դատական վիճարկման»:

«Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 4-րդ մասով ասված է եղել՝ «Մինչև դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը հասարակության և պետության կարիքների համար օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատերը պարտավոր է ձեռնպահ մնալ անշարժ գույքին վնաս հասցնելուց»:

Սահմանադրական դատարանի որոշման 3-րդ կետով օրենքի այդ դրույթը գնահատվել է որպես Սահմանադրության 8, 28 և 44 հոդվածներին (գործող Սահմանադրության 31, 44 հոդվածներին) հակասող:

«Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 5-րդ մասով ասված է եղել՝ «Հասարակության և պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման ընթացակարգը սահմանում է ՀՀ կառավարությունը՝ ելնելով սույն հոդվածի դրույթներից»:

Սահմանադրական դատարանի որոշմամբ օրենքի այդ դրույթը ճանաչվել է որպես Սահմանադրության 8 և 28 հոդվածներին (գործող Սահմանադրության 31 հոդվածին)

հակասող՝ գտնելով, որ «Հայաստանի Հանրապետության կառավարությունը չի կարող հասարակության և պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման այնպիսի ընթացակարգ սահմանել, որը նրան կլիազորի նման անշարժ գույքի օտարման իրավունք»:

ՀՀ կառավարությունը, ընդունելով Երևան քաղաքի կառուցապատման ծրագրեր, որոնցով նախատեսել է նաև քաղաքացիների սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի օտարման անհրաժեշտություն, ընդունել է որոշումներ, որոնք հակասում են ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի և Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման պահանջներին:

1. ՀՀ կառավարության 16.07.2001թ. թիվ 645 «Երևանի Հյուսիսային պողոտայի կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» որոշման 1-ին կետով, փոփոխված 01.08.2002թ. թիվ 1150-Ն որոշմամբ, ասված է՝ «Հաստատել Երևանի Հյուսիսային պողոտայի հատվածում գտնվող՝ պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի (հողամասեր, շենքեր և շինություններ) օտարման գոտին 82.7 հազար ք/մ տարածքով»:

Համաձայն որոշման 4-րդ կետի «բ» ենթակետի՝ «Օտարման գոտում գտնվող հողամասերը վարձակալության իրավունքի վաճառքի ձևով տրամադրել նաև առանց մրցույթի՝ ուղիղ բանակցությունների միջոցով»: Այնուհետև այդ սկզբունքն ամրագրվել է կառավարության 04.03.2004թ. թիվ 399-Ն «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող՝ օտարման գոտիներում առանց մրցույթի հողամասեր տրամադրելու մասին» և 17.06.2004թ. «Երևան քաղաքի գլխավոր պողոտայում քաղաքաշինական ծրագրերի իրականացման նպատակով պետության կարիքների համար վերցված տարածքում կառուցապատման ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով առանց մրցույթի հողամասեր տրամադրելու մասին» որոշումներով:

Գտնում ենք, որ կառավարության այս որոշման 1-ին կետը և 4-րդ կետի «բ» ենթակետը հակասում են ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասին և Սահմանադրական դատարանի որոշման 2-րդ կետի 2-րդ և 3-րդ պարբերություններին, ըստ որոնց՝ օրենքով է միայն, որ պետք է հիմնավորվեր պետության կարիքը և հանրային գերակա շահը: Միջոցով կառավարության որոշմամբ սահմանվել է պետության կարիքը, և արդեն իսկ թույլատրվել է քաղաքապետին՝ դեռևս սեփականատերերից չվերցված տվյալ տարածքների վարձակալման իրավույթը վաճառքի ձևով տրամադրել այլ անձանց:

2. ՀՀ կառավարության 05.10.2001թ. թիվ 950 «Երևանի Հյուսիսային պողոտայի և Երևան քաղաքի օտարման այլ գոտիներում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը գնելու, վերցնելու, գնային առաջարկի ձևավորման և իրացման կարգը հաստատելու մասին» որոշումն իր հետագա 01.08.2002թ. թիվ 1169-Ն, 29.01.2004թ. թիվ 57-Ն, 15.05.2005թ. որոշումներով կատարված փոփոխություններով հակասում է ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին, Սահմանադրական դատարանի որոշման 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերին:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 85 հոդվածի 2-րդ մասի՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների կամ Հանրապետության նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա և դրանց կատարումն ապահովելու նպատակով կառավարությունն ընդունում է որոշումներ, որոնք ենթակա են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում»:

Կառավարության թիվ 950 որոշումը կարող էր ընդունվել ի կատարումն օրենքի, մինչդեռ օրենք, որով ճանաչված լիներ սեփականության օտարման անհրաժեշտությունը, սահմանված լիներ օտարման գոտին և գերակա շահը, գոյություն չունի: Կառավարությունն ինքն է սահմանել նման գոտիներ և մեկ այլ որոշում է ընդունել ի կատարումն իր իսկ ընդունած որոշման՝ իրացնողին իրավունք վերապահելով սահմանելու և սեփականատիրոջն առաջարկելու հատուցման չափը և ապա հենց իր առաջարկը, և ոչ թե բանակցություններով ձևավորված գինը, վիճարկել դատական կարգով:

Գործնականում հենց այդպես էլ եղել է՝ իրացնողն ինքն է իր ընտրած գնահատողի միջոցով միակողմանի գնահատել սեփականատիրոջ գույքը, ապա երբ դատական վեճ է առաջացել գնի շուրջը, դատարանները ղեկավարվել են կառավարության այս որոշմամբ և դրանով հաստատված կարգով:

Նման որոշումներ ընդունելիս կառավարությունը վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218, ՀՀ հողային օրենսգրքի 104 հոդվածները: Մինչդեռ Օրենսգրքերի այդ հոդվածները կառավարությանը նման լիազորություններ չեն տալիս: Քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի 2-րդ կետով ասված է՝ «Պետության կամ համայնքի կարիքների համար հողամասը վերցնելու մասին որոշում ընդունում է պետական մարմինը:

Պետության կամ համայնքի կարիքների համար հողամասը վերցնելու լիազորություն ունեցող պետական մարմինը, ինչպես նաև այդ որոշման նախապատրաստման և ընդունման կարգը սահմանվում են օրենքով»:

Այստեղից նույնպես հետևում է, որ կառավարության նման ցանկացած որոշմանը պետք է նախորդեր այդ հարցով ընդունված օրենք, ի կատարումը որի կառավարությունը կրնա որոշում:

Այս որոշմամբ հաստատված կարգով սահմանափակվել են օտարման գոտիներում ներառված անշարժ գույքի սեփականատերերի իրավունքները՝ գոտիները պետական կադաստրում գրանցելու պահից՝ սեփականատիրոջ կողմից այնուհետև գույքի բարելավումներ կատարելու դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքի բացառման միջոցով, ինչը հակասահմանադրական է համարված Սահմանադրական դատարանի որոշման 3-րդ կետով:

Այս որոշմամբ սահմանված կարգով նախատեսվել է խրախուսման գումարի տրամադրում, եթե գնային առաջարկ ստանալուց հետո սեփականատերը 10 օրվա ընթացքում կազատի տարածքը: Սահմանված 10-օրյա ժամկետը խախտելու դեպքում զրկվում է խրախուսման գումարից:

Նման կարգ սահմանելով, կառավարությունը սահմանափակել է գնային առաջարկը դատական կարգով վիճարկելու սեփականատիրոջ իրավունքը, ինչը նույնպես հակասում է Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի սկզբունքներին, քանի որ սահմանափակվում է փոխհատուցման համարժեքությունը վիճարկելու հնարավորությունը խրախուսման գումարը ստանալուց զրկվելու սպառնալիքով:

3. ՀՀ կառավարության 01.08.2002թ. թիվ 1151-Ն «Երևանի Կենտրոն քաղախին համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» որոշման 1-ին կետով ասված է՝ «Հաստատել Երևանի Կենտրոն քաղախին համայնքի վարչական սահմանում պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի (հողամասեր, շենքեր, շինություններ) օտարման գոտիները՝ 345 հազար ք/մ ընդհանուր մակերեսով»:

2-րդ կետի «ա» ենթակետով Երևանի քաղաքապետին հանձնարարված է՝ «Երկամյա ժամկետում ճշտել պետության կարիքների համար վերցվող հողամասերի սահմանները և դրանց օտարման գոտիները գրանցել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում»:

Համաձայն 2-րդ կետի «գ» ենթակետի՝ «Օտարման գոտիների տարածքներում լիցենզավորված համապատասխան կազմակերպությունների միջոցով կազմակերպել և իրականացնել անշարժ գույքի գնահատման աշխատանքները»:

Այս որոշմամբ նույնպես, հակառակ Սահմանադրության 31 հոդվածի և Սահմանադրական դատարանի որոշմամբ ամրագրված սկզբունքների, կառավարությունը սահմանել է օտարման ենթակա տարածքն ըստ քառակուսի մետրերի և հանձնարել է քաղաքապետին՝ ճշտել սահմանները և գրանցել կադաստրում արդեն իսկ որպես պարտադիր վերցման ենթակա տարածք:

Հենց որոշման 2-րդ կետի «գ» ենթակետով էլ ամրագրվում է սեփականատիրոջ գույքն իրացնողի կողմից միակողմանի գնահատելու իրավունքը:

Գտնելով, որ ՀՀ կառավարության հիշյալ որոշումները հակասում են ՀՀ Սահմանադրությանը և նկատի ունենալով, որ համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի՝ Կառավարության որոշումների սահմանադրականության հարցի որոշումը ՀՀ Սահմանադրական դատարանի իրավասությունն է, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 8-րդ կետով և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, **դիմում եմ Սահմանադրական դատարան՝ ՀՀ կառավարության 16.07.2001թ. թիվ 645 որոշման 1-ին կետի և 4-րդ կետի «բ» ենթակետի, 05.10.2001թ. թիվ 950 որոշումն ամբողջապես, 01.08.2002թ. թիվ 1151-Ն որոշման 1-ին կետի և 2-րդ կետի «ա» և «գ» ենթակետերի ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին, 44 հոդվածին և 87 հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցը որոշելու համար:**

Հավելված 2. Պաշտպանի հայտարարությունները

Հավելված 2.1. Պաշտպանի հայտարարությունը լրագրողների իրավունքների խախտումների մասին

Վերջին շրջանում հաճախակի են դարձել զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքների խախտումների դեպքերը:

Հարձակումները, ծանր մարմնական վնասվածքներ հասցնելը, բռնությունները, լրագրողների աշխատանքին խոչընդոտելը, նրանց բերման ենթարկելը դառնում են արատավոր պրակտիկա՝ լրջորեն հարվածելով երկրի հեղինակությանը:

Այս ամենը սպառնում է Հայաստանում խոսքի ազատության ու տեղեկատվության մատչելիության իրավունքների լիարժեք ապահովմանը: Պատահական չէ, որ խոսքի ազատության հետ կապված իրավիճակի վատթարացում են արձանագրում նաև միջազգային կազմակերպությունները: Մասնավորապես, «Լրագրողներ առանց սահմանի» կազմակերպության վարկանիշային ցուցակում Հայաստանը 23 կետով զիջել է իր դիրքը նախորդ տարվա համեմատությամբ:

Ակնկալում եմ, որ լրագրողի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու ցանկացած դեպք, առավել ևս ցանկացած բռնություն լրագրողի նկատմամբ, պատկան մարմինների կողմից կրացահայտվի մինչև վերջ, և մեղավորները կկրեն համարժեք պատասխանատվություն:

Հավելված 2.2. Պաշտպանի հայտարարությունը կամերային երաժշտության տան հարակից տարածքի օգտագործման մասին

Վերջին մի քանի տարիների ընթացքում Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը հարակից կանաչ տարածքների հաշվին մեծ թափով կառուցվում են

զվարճանքի օբյեկտներ, որոնց առաջացրած աղմուկը խիստ խանգարում է կամերային երաժշտության տան նորմալ գործունեությանը:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը, ընդունելով մշակութային իրավունքների կարևորագույն դերը իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացման գործում, հայտնում է իր մտահոգությունը հասարակական հնչեղություն ստացած այդ հարցի վերաբերյալ:

Այդ կապակցությամբ Պաշտպանը դիմում է բոլոր իրավասու պետական մարմիններին և պաշտոնատար անձանց՝ կասեցնել ընթացող շինարարական աշխատանքները, օրենքով նախատեսված բոլոր միջոցներով բացառել այդպիսի երևույթները և ապահովել «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայով (1993թ. դեկտեմբերի 5) և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրով (1993թ. դեկտեմբերի 13) ստանձնած պարտավորությունների կատարումը:

Հավելված 2.3. Պաշտպանի հայտարարությունը հեռախոսային կապի սակագները բարձրացնելու անթույլատրելիության մասին

Հայտնի է դարձել, որ «Արմենթել» ընկերությունը հեռախոսային կապի թանկացման հայտ է ներկայացրել ՀՀ կառավարությանը:

Այդ կապակցությամբ հարկ են համարում հայտարարելը: Հեռախոսակապի սակագների բարձրացման «Արմենթել»-ի կողմից արված առաջարկը հիմնավորված չէ և անընդունելի է:

Առաջարկը հիմնավորված չէ տնտեսագիտական առումով, քանի որ Հայաստանում լարային հեռախոսակապի որակը չի բարելավվել: Այն հիմնավորված չէ սոցիալական առումով, քանի որ երկրի բնակչության գրեթե հիսուն տոկոսի կենսամակարդակը մնում է ցածր:

Հարկավոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ քաղաքային հեռախոսակապի ոլորտում մենաշնորհը բաժանորդներին զրկում է հեռախոսակապ տրամադրող ընկերության ընտրության հնարավորությունից:

Կասկածից վեր է, որ սակագնի բարձրացումն առաջին հերթին կհարվածի բնակչության ամենաանապահով խավին, ընդ որում բազմաթիվ ընտանիքների համար հեռախոսակապը կարող է դառնալ անթույլատրելի շռայլություն:

Սակագների բարձրացման հետևանքով հեռախոսակապից օգտվելու էական սահմանափակումը հարվածի տակ կդնի մարդու ազատ հաղորդակցության իրավունքը: Բացի այդ, սակագնի բարձրացումը խոչընդոտ կհանդիսանա Հայաստանում գործող հասարակական և այլ կազմակերպությունների, զանգվածային լրատվական միջոցների գործունեության համար:

Ես ամբողջովին կիսում եմ ՀՀ կապի և տրանսպորտի նախարարի նախնական տեսակետը, այն է՝ անհամաձայնությունը «Արմենթել»-ի առաջարկին:

Համոզված եմ, որ հավատարիմ մնալով աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի պահանջներին՝ ՀՀ կառավարությունը կներժի հեռախոսակապի սակագները բարձրացնելու մասին «Արմենթել»-ի հայտը:

Հավելված 2.4. Պաշտպանի հայտարարությունը երթևեկության վարձավճարը բարձրացնելու անթույլատրելիության մասին

Նկատի ունենալով՝

- երկրում առկա աղքատության բարձր տոկոսը,
- հանրային ուղևորատար տրանսպորտային միջոցների աննշան քանակը,
- երթուղային տաքսիների ծառայություններից հարկադրաբար օգտվող բնակչության վճարունակության ծայրահեղ ցածր մակարդակը,

- այն, որ ՀՀ ԱԺ կողմից հաստատված, կառավարության կողմից իրականացվող աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում հատուկ տեղ է հատկացված քաղաքային ուղևորատար տրանսպորտային պարկի զարգացմանը, դրանից օգտվելը յուրաքանչյուրին հասանելի դարձնելուն, և ուղևորների փոխադրման վարձավճարների ցանկացած բարձրացում հակասում է ռազմավարական այդ ծրագրի խնդիրներին ու կարող է առավել խորացնել աղքատությունը, քանի որ ընդգրկման մեծ շրջանակից բացի, վերաբերում է հատկապես բնակչության անապահով խավին,

- այն, որ քաղաքային ուղևորատար տրանսպորտի հասանելիությամբ է պայմանավորված աշխատատեղ հասնելու, աշխատանքից վերադառնալու համար նյութական և ժամանակային ծախսը,

անընդունելի են համարում երթուղային տաքսիների և ընդհանրապես ուղևորատար ցանկացած տրանսպորտի ուղեվարձերի բարձրացումը, երբ չկա կենսաաթոշակների, նպաստների, աշխատավարձերի որևէ բարձրացում, չկա ձևավորված հանրային ուղևորատրանսպորտային պարկ:

Ուղեվարձի բարձրացումը, իմ գնահատմամբ, ոչնչով չի հիմնավորված և չի արդարացված, ստեղծում է լրացուցիչ սոցիալական լարվածություն և սահմանափակում է քաղաքացիների՝ իրենց մի շարք իրավունքներից (ազատ տեղաշարժման իրավունք, աշխատանքի և հանգստի իրավունք, սոցիալապես ապահով լինելի իրավունք) օգտվելու հնարավորությունները:

Գտնում են, որ ՀՀ կառավարությունը պետք է պարտավորեցնի կապի և տրանսպորտի նախարարությանը, Երևանի քաղաքապետին՝ վերականգնել նախկին ուղեվարձը և հետագայում ձեռնպահ մնալ ուղևորափոխադրման վարձավճարները բարձրացնելուն ուղղված ձեռնարկումներից:

**Հավելված 2.5. Պաշտպանի հայտարարությունը
հեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների սահմանադրական
փոփոխություններով նախատեսված ձևավորման կարգի վերաբերյալ**

Ժողովրդավարության և եվրոպական արժեքների ուղին ընտրած երկրում չափազանց կարևորվում է հավատարմությունը խոսքի և մամուլի ազատության սկզբունքներին: Այս առումով անառարկելի է սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը, և ես ողջունում եմ Վենետիկի հանձնաժողովի հետ երկարատև համագործակցությունը, որի նպատակն էր առավել կատարելագործել սահմանադրական փոփոխությունների նախագիծը:

Սակայն տարակուսանք են առաջացնում Վենետիկի հանձնաժողովին ուղղված սահմանադրական փոփոխությունների վերջին տարբերակում տեղ գտած այն դրույթները, որոնք առնչվում են հեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների ձևավորման կարգին: Անցումային շրջանում գտնվող երկրի համար հեռուստատեսությունը՝ որպես լրատվության ամենատարածված ու մատչելի միջոց, առանձնակի կարևորություն ունի, այդ իսկ պատճառով էլեկտրոնային լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող մարմինների՝ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) և հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի (ՀՀԽ) ձևավորումը առանցքային նշանակություն է ձեռք բերում: Անհրաժեշտ է գտնել կարգավորող մարմինների ձևավորման այնպիսի սկզբունքներ, որոնք կնպաստեն երկրում ազատ ու անկախ լրատվամիջոցների կայացմանն ու զարգացմանը: Մինչդեռ այդ մարմինների ձևավորման՝ սահմանադրական փոփոխությունների նախագծում առաջարկվող մեխանիզմները ամենևին չեն նպաստում խնդրի լուծմանը:

Սահմանադրական փոփոխությունների նախագծով անդրադարձ կատարվել է միայն ՀՌԱՀ անդամների նշանակման կարգին, մինչդեռ պակաս կարևոր չէ նաև ՀՀԽ կազմավորման հարցը, որն ի սկզբանե նույնպես եղել է օրակարգում:

Այս առումով անհրաժեշտ են համարում շեշտել իմ մոտեցումները այս սկզբունքային հարցին, այն է՝

1. ՀՀ Սահմանադրությամբ պետք է ամրագրվեն էլեկտրոնային լրատվամիջոցների դաշտը կարգավորող առնվազն երկու մարմնի վերաբերող դրույթները:

2. Այս երկու մարմինների ձևավորման հարցում պետք է ակտիվ մասնակցություն ունենա ՀՀ Ազգային ժողովը՝ որպես ընտրովի և հասարակության տարբեր շերտերի շահերը ներկայացնող մարմին: Ներկայացվածներից ամենաընդունելին են համարում այն տարբերակը, ըստ որի ՀՀ նախագահը հաստատում է Ազգային ժողովի կողմից ներկայացված ինչպես ՀՌ-ԱՀ, այնպես էլ ՀՀԽ անդամության թեկնածուներին:

3. Կարգավորող մարմինների նոր կազմերը պետք է հաստատվեն սահմանադրական փոփոխությունների ընդունումից անմիջապես հետո:

Համոզված եմ, որ վերոհիշյալ սկբունքների սահմանադրորեն ամրագրումը հիմք կդառնա Հայաստանում ազատ ու անկախ մամուլի կայացման ու զարգացման համար, ինչն էլ իր հերթին երաշխիք կհանդիսանա մարդու՝ խոսքի ազատության և օբյեկտիվ, բազմակողմանի տեղեկատվություն ստանալու իրավունքի լիարժեք ապահովման համար:

Հավելված 3.

Պաշտպանի որոշումները Մարդու խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ առաջարկ ներկայացնելու մասին

Հավելված 3.1. Գործ թիվ 2-0340 ՈՐՈՇՈՒՄ

Մարդու խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ առաջարկ ներկայացնելու մասին

15.12.2005թ.

ք. Երևան

Դիմումի համառոտ բովանդակությունը

Չնայած իր և իր որդու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու բազմաթիվ հայցերին (վերջին անգամ որդին դիմել է 2005թ. սեպտեմբերի 22-ին), ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից 2002թ. ի վեր իր մուտքը Հայաստանի Հանրապետություն, առանց որևէ բացատրության, կտրականապես արգելվում է:

Դիմումի քննարկմամբ ձեռք բերված տվյալները

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուին նախկինում ՀՀ Կրթության և գիտության, ՀՀ Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությունների միջնորդությունների հիման վրա 2 անգամ տրվել են ՀՀ-ում կացության սովորական և ժամանակավոր կարգավիճակներ: Չնայած առկա են դիմումատուին առաջնահերթ կացության սովորական կարգավիճակ տալու հիմքեր, այն է՝ ՀՀ նախկին քաղաքացի կամ ՀՀ քաղաքացու մերձավոր ազգական լինելը, 2002 թվականից ի վեր ՀՀ-ում կացության կարգավիճակի և ՀՀ մուտքի թույլտվության տրամադրումն առանց հիմնավորման մերժվում է նպատակահարմար չլինելու պատճառաբանությամբ:

Իմ նամակին ի պատասխան ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետը 2005թ. հուլիսի 11-ի թիվ 25/01-8577 նամակով հայտնել է, որ ՀՀ

քաղաքացին դիմել է ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն Ֆրանսիայի քաղաքացուն ՀՀ հրավերի փաստաթուղթ ձևակերպելու խնդրանքով: Գործող կարգի համաձայն, քաղաքացու վերաբերյալ նյութերն ուղարկվել են համապատասխան մարմիններ՝ համաձայնեցման: Ըստ ստացված պատասխանի, դիմումատուի Ֆրանսիայից ՀՀ ժամանակավոր բնակության ժամանելը գտնվել է ոչ նպատակահարմար:

Համամիտ չլինելով վարչության պետի կողմից տրված նման պարզաբանման հետև հրահանում տեսնելով «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները, բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ նախկին օրենքի 4-րդ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ, 57-րդ հոդվածների պահանջների, այն է՝ վարչական ակտը պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի ու դրա բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում, խախտում, 2005թ. հուլիսի 25-ին ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետին առաջարկվել է վերանայել Ֆրանսիայի քաղաքացուն ՀՀ-ում կացության կարգավիճակ տրամադրելու հարցը և, եթե այն ենթակա է մերժման, նրան ներկայացնել մերժման օրենսդրական հիմքերը:

ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը մինչ օրս Պաշտպանի առաջարկին չի արձագանքել, որով խախտվել է նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը:

Հետևություն

Դիմումի քննարկման արդյունքները թույլ են տալիս գտնել, որ քննարկվող դեպքով դիմումատուին Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակի տրամադրումը և ՀՀ հրավերի փաստաթղթերի ձևակերպումը մերժելիս ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունն իրավասու չէր ղեկավարվել նպատակահարմարությամբ, և սահմանված կարգի համաձայն՝ դիմումատուին պետք է ներկայացվեին իր խնդրանքի մերժման օրենսդրական հիմքերը:

Ղեկավարվելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝

Առաջարկել ՀՀ Ոստիկանության պետին դիմումատուի խախտված իրավունքները վերականգնելու նպատակով վերանայել նրան Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ տրամադրելու և ՀՀ հրավերի փաստաթղթեր ձևակերպելու հարցը, և եթե այն ենթակա է մերժման, դիմումատուին ներկայացնել մերժման օրենսդրական հիմքերը:

Որոշման մեկական օրինակներ ուղարկել ՀՀ ոստիկանության պետին և դիմումատուին:

**Հավելված 3.2. Գործ թիվ 1-0872
ՈՐՈՇՈՒՄ**

**Մարդու խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ
առաջարկ ներկայացնելու մասին**

05.12.2005թ.

ք. Երևան

Դիմումի համառոտ բովանդակությունը

Դիմումատուն բողոքում հայտնել է, որ ունի բռնադատվածի կարգավիճակ: «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքին և ՀՀ Հողային օրենսգրքին համապատասխան բնակելի տուն կառուցելու համար սեփականության իրավունքով անհատույց հողամաս տրամադրելու խնդրանքով 2003թ. փետրվարի 5-ին դիմել է Երևանի քաղաքապետին,

ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթեր: Պատրաստվել է Երևանի քաղաքապետի որոշման նախագիծ, սակայն գործին ընթացք չի տրվել քննարկվող տարածքի գոտևորման սխեմաների մշակման պատճառով, և մինչ օրս քաղաքապետարանի կողմից իրեն հողամաս չի հատկացվել: Դիմումի բովանդակությունից ենթադրվում է, որ խախտվել է քաղաքացու՝ իր և իր ընտանիքի կենսապայմանները բարելավելու համար օրենքի ընձեռած հնարավորություններից օգտվելու իրավունքը:

Քննարկմամբ ձեռք բերված տվյալները

Բողոքի քննարկմամբ հաստատվել է, որ դիմումատուն ունի բռնադատվածի կարգավիճակ և «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված արտոնություններից օգտվելու իրավունք՝ անհատական բնակարանի կառուցման համար ստանալու հողատարածք և արտոնյալ վարկ: Հողատարածք հատկացնելու խնդրանքով դիմումատուն դեռևս 2003թ. փետրվարի 5-ին դիմել է Երևանի քաղաքապետին և քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն է ներկայացրել պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Երկու տարի հարցի լուծումը ձգձգելուց հետո Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետը 2005թ. մայիսի 24-ին դիմումատուին հայտնել է, որ ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ բռնադատվածներին պետության սեփականություն հանդիսացող հողամասերի անհատույց տրամադրման ժամկետը 2 տարի է, որը լրացել է, հետևաբար խնդրանքը հնարավոր չէ բավարարել:

Խնդիրը կարգավորող իրավական ակտերը

ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ պետության և համայնքների սեփականության հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում են գյուղատնտեսական գործունեության և որպես տնամերձ կամ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար բռնադատվածներին կամ նրանց առաջին հերթի ժառանգներից մեկին, որոնք չեն օգտվել հողի սեփականաշնորհումից, նախկինում չեն ստացել տնամերձ կամ բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար հողամաս այն բնակավայրերում, որտեղ նրանք բնակվել են բռնադատման պահին: Նույն հոդվածի 1-ին կետով սահմանված դեպքերում պետության սեփականություն հանդիսացող հողամասերի անհատույց տրամադրման ժամկետը երկու տարի է:

«Բռնադատվածների մասին ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով փոփոխություն և լրացում է կատարվել օրենքի 6-րդ հոդվածում, որի համաձայն բռնադատվածներին սեփականության իրավունքով հողամասերը անհատույց տրամադրվում են մինչև 2005թ. դեկտեմբերի 31-ը:

Հետևություն

Այսպիսով, բռնադատված դիմումատուի՝ անհատական շինարարություն իրականացնելու նպատակով անհատույց հողամաս տրամադրելու վերաբերյալ դիմումը պատշաճ կարգով քաղաքապետարան է ներկայացվել 2003թ. փետրվարի 5-ին, այսինքն՝ ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ժամկետի ընթացքում: Մինչդեռ այդ հարցով զբաղվող քաղաքապետարանի աշխատակիցների անգործության հետևանքով արհեստականորեն ձգձգվել է հարցի վերջնական լուծումը, և 2005թ. մայիսի 24-ին դիմումատուին պատասխանվել է, որ նրա խնդրանքը հնարավոր չէ բավարարել, քանի որ ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ պետության սեփականություն հանդիսացող հողամասերի անհատույց տրամադրման ժամկետը 2 տարի է, և այն լրացել է 2004թ. ապրիլի 1-ին:

Նման պատճառաբանությամբ հողամաս տրամադրելու մերժումն անհիմն է, քանի որ երկու տարվա ժամկետը վերաբերում է միայն դիմումի տրմանը, իսկ պետական մարմնի կողմից դիմումի ընթացքը ժամանակին չլուծելը չի կարող հիմք հանդիսանալ դիմումը մերժելու համար:

Իմ տրամադրության տակ եղած փաստաթղթերը և քաղաքացու դիմումի քննարկումը հիմք է տալիս գտնելու, որ քաղաքացու դիմումի մերժումն անհիմն է, որով խախտվել է «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի» 11-

րդ և ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածներով նախատեսված քաղաքացու ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունքը: Քաղաքացու պահանջը ենթակա է բավարարման:

Հետևաբար, ելնելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներից՝

Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ դիմումատուի խախտված իրավունքները վերականգնելու նպատակով վերանայել բռնադատվածի դիմումն անհատույց հողամաս տրամադրելու վերաբերյալ, նկատի ունենալով, որ այն տրվել է սահմանված ժամկետում և նախկինում տրված մերժումը եղել է անհիմն:

Որոշման մեկական օրինակներն ուղարկել Երևանի քաղաքապետին և դիմումատուին:

Հավելված 4. Պաշտպանի նամակները

Հավելված 4.1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հանրապետության մեծարգո Նախագահ

Մեզ մոտ քննարկվել և քննարկվում են քաղաքացիներից ստացված բողոքներ՝ Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման գործընթացով իրենց սեփականության իրավունքները խախտվելու մասին:

Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման իրավական հիմքերը սահմանվել են ՀՀ կառավարության հետևյալ որոշումներով.

1. 16.07.2001թ. թիվ 645 «Երևանի Հյուսիսային պողոտայի կառուցապատման ծրագրերի իրականացման մասին»,
2. 05.10.2001թ. թիվ 950 «Երևանի Հյուսիսային պողոտայի և և Երևան քաղաքի օտարման այլ գոտիներում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը գնելու, վերցնելու գնային առաջարկի ձևավորման և իրականացման կարգը հաստատելու մասին»,
3. 01.08.2002թ. թիվ 1150-Ն « Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 16-ի թիվ 645 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»,
4. 01.08.2002թ. թիվ 1151-Ն «Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին»,
5. 01.08.2002թ. թիվ 1169-Ն, 29.09.04թ. թիվ 57-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հոկտեմբերի 5-ի թիվ 950 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
6. 04.03.2004թ. թիվ 399-Ն « Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող՝ օտարման գոտիներում առանց մրցույթի հողամասեր տրամադրելու մասին»,
7. 17.06.2004թ. թիվ 909-Ն «Երևան քաղաքի Գլխավոր պողոտայում քաղաքաշինական ծրագրերի իրականացման նպատակով պետության

կարիքների համար վերցված տարածքում կառուցապատման ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով առանց մրցույթի հողամասեր տրամադրելու մասին»:

ՀՀ կառավարության թվարկված որոշումներով սահմանվել են պետական կարիքների համար Երևան քաղաքում քաղաքացիների սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի օտարման գոտիները, օտարման անհրաժեշտությունը, օտարման կարգն ու պայմանները:

ՀՀ Սահմանադրության 28 հոդվածով ամրագրված է. «Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ»:

ՀՀ կառավարությունը հենվել է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 218 և Հոդային օրենսգրքի 104 հոդվածների վրա, մինչդեռ Քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերությամբ ասված է. «Պետության կամ համայնքի կարիքների համար հողամասը վերցնելու մասին որոշում ընդունելու լիազորությունը, ինչպես նաև այդ որոշման նախապատրաստման և ընդունման կարգը սահմանվում են օրենքով»:

ՀՀ Հոդային օրենսգրքի 104 հոդվածը Քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածին ոչինչ չի ավելացնում:

Ինչպես Սահմանադրության 28 հոդվածը, այնպես էլ Քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածներն ամրագրել են պետության և հասարակության կարիքների համար սեփականության օտարման բացառիկ անհրաժեշտություն լինելը, վերցման կարգն ու պայմանները օրենքով սահմանելու անհրաժեշտությունը:

ՀՀ կառավարությունը թվարկված որոշումներն ընդունելու իրավասություններ չի ունեցել, քանի որ օրենք չի ընդունվել, որով պետք է սահմանվեր գույքի օտարման անհրաժեշտության բացառիկությունը, օտարման գոտին, վերցման կարգն ու պայմանները: Նույն օրենքով է, որ կառավարությունը կարող էր լիազորվել, որպես օրենքի պահանջները կատարող մարմին, ընդունելու օրենքի պահանջների կատարմանն ուղղված որոշումներ:

Քանի որ ՀՀ կառավարության թվարկված որոշումներն անմիջականորեն առնչվում են քաղաքացիների սեփականության իրավունքներին և դրանցով խախտվել ու խախտվում են քաղաքացիների այդ իրավունքները, առաջարկում են՝ օգտվել Սահմանադրության 101 հոդվածով ՀՀ Նախագահին տրված լիազորություններից և դիմել ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ կառավարության 16.07.2001թ. թիվ 645 որոշման՝ իր հետագա փոփոխություններով, 05.10.2001թ. թիվ 950 որոշման՝ իր հետագա փոփոխություններով և լրացումներով, 01.08.2002թ. թիվ 1151-Ն որոշման, 04.03.2004թ. թիվ 399-Ն որոշման և 17.06.2004թ. որոշման ՀՀ Սահմանադրության 8 և 28 հոդվածներին համապատասխանության վերաբերյալ եզրակացություն ստանալու համար:

Հավելված 4.2.

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՌՈՔԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Նախագահ

Կոչված լինելով իրականացնելու պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից մարդու

խախտված իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը մեծ ուշադրություն է դարձնում ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների համապատասխանությանը ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին: Օրենքների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին, անկասկած, երկրում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կարևորագույն գործոններից մեկն է:

Այս տեսանկյունից չափազանց կարևոր է, որպեսզի ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը հնարավորություն ունենա դիմելու ՀՀ Սահմանադրական դատարան՝ այս կամ այն օրենքի համապատասխանությունը Սահմանադրությանը որոշելու հարցով: Պատահական չէ, որ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների բոլոր քննարկվող նախագծերում նախատեսվում են համապատասխան լրացումներ, որոնցով կսահմանվի ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունը:

Հայտնի է, որ Ձեր կողմից նույնպես հավանության էր արժանացել Սահմանադրության փոփոխությունների այն նախագիծը, որում նախատեսվում էր Պաշտպանի՝ Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը նույնպես նախատեսում է, որ Պաշտպանը իրավունք է ունենալու դիմել ՀՀ Սահմանադրական դատարան՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարցով: Օրենքի այս դրույթը նույնպես արժանացել է Ձեր հավանությանը, դրա մասին դրական կարծիք են հայտնել նաև միջազգային փորձագետները: Այսպիսով, հանրաճանաչ է, որ Պաշտպանի կողմից իր լիազորություններն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի նա կարողանա դիմել Սահմանադրական դատարան՝ այս կամ այն օրենքի համապատասխանությունը Սահմանադրությամբ նախատեսված մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին որոշելու հարցով:

Ներկայումս գործող Սահմանադրությունը դեռևս հնարավորություն չի տալիս Պաշտպանին դիմելու Սահմանադրական դատարան, մինչդեռ հենց այս պահին գործող մի շարք օրենքներում կան այնպիսի դրույթներ, որոնց համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը և, մասնավորապես, դրանում ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, լուրջ կասկածների տեղիք է տալիս: Այդ իսկ պատճառով, ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, մինչև Սահմանադրական փոփոխությունների իրականացումը ցանկալի կլինեք կոմպենսացնել այս բացը՝ օգտագործելով Սահմանադրությանը և օրենքներին չհակասող մեխանիզմներ: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածից բխում է, որ այդպիսի մեխանիզմներից մեկը Պաշտպանի դիմումն է ՀՀ Նախագահին, որպեսզի երկրի նախագահը դիմի ՀՀ Սահմանադրական դատարան՝ Պաշտպանի կողմից մատնանշված օրենքի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը որոշելու համար:

Այդպիսի օրենքներից մեկը «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքն է, որի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը ստանում է բազմաթիվ բողոքներ:

Մասնավորապես, Օրենքի 1-ին կետի 1-ին ենթակետում ասված է, որ **սոցիալական քարտի համարը կիրառվում է քաղաքացիների անհատական տվյալները մշակելիս՝ քաղաքացուն աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտ վճարելու, սոցիալական ապահովության և ապահովագրության պետական և ոչ պետական ծրագրերով նախատեսված կենսաթոշակ, նպաստ, հատուցում նշանակելու և վճարելու ժամանակ:**

Օրենքի այս դրույթի կիրառման պրակտիկան ցույց է տվել, որ բազմաթիվ քաղաքացիների, ում մինչ այս կենսաթոշակներ էին վճարվում, ներկայումս կենսաթոշակ

չի վճարվում այն պատճառաբանությամբ, որ նրանք չունեն սոցիալական քարտ: Սոցիալական քարտ չունեցող քաղաքացիները չեն կարող աշխատանքային պայմանագրեր կնքել, ստանալ աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտներ:

Գտնում են, որ օրենքի վերը նշված դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով ամրագրված այն դրույթին, որ **յուրաքանչյուր քաղաքացի ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք, ինչպես նաև՝ արդարացի աշխատավարձի իրավունք, ինչպես նաև 31-րդ հոդվածի այն դրույթին, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի իրավունք:**

Աշխատանքային պայմանագիր կնքելը, աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ ստանալը կախման մեջ դնելով սոցիալական քարտի առկայությունից, օրենքը, փաստորեն, այնպիսի վերապահում է անում, որը չկա Սահմանադրության մեջ, ինչով հակասության մեջ է մտնում Սահմանադրության հետ:

Գտնում են, որ Օրենքի վերը նշված դրույթը հակասում է նաև ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածին, որում ամրագրված է, որ **յուրաքանչյուր քաղաքացի ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:** Մինչդեռ, բազմաթիվ ծերեր, հաշմանդամներ, գրկված լինելով տեղաշարժման հնարավորությունից, ֆիզիկապես ի վիճակի չեն եղել ստանալ սոցիալական քարտ, կամ նույն պատճառով չեն կարողացել ու չեն կարողանում նույնիսկ փոխանակել նախկին խորհրդային անձնագիրը:

Քաղաքացու սոցիալական ապահովության իրավունքը բացարձակ իրավունք է, Սահմանադրությունը այս իրավունքի իրականացման համար որևէ վերապահում չի նախատեսում, և քաղաքացու այս իրավունքը չի կարող կախման մեջ դրվել նրա կողմից այս կամ այն պարտականության կատարումից:

ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն **պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:** Հայաստանի Հանրապետությունը, միանալով «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրին, ինչպես նաև վավերացնելով «Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան», դրանով իսկ ճանաչել է այդ փաստաթղթերում առկա՝ յուրաքանչյուր անձի համար երաշխավորվող կարևորագույն սոցիալ-տնտեսական իրավունքները, և պարտավորվել է նպատակաուղղված քաղաքականություն վարել դրանցում նշված իրավունքների արդյունավետ իրականացմանը նպաստող պայմաններ ստեղծելու համար: «Վերանայված սոցիալական խարտիան» պետություններին լիազորում է որոշ բացառիկ հանգամանքներում սահմանափակել այդ փաստաթղթով երաշխավորվող իրավունքները, այն է՝ իրավունքի հնարավոր սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքի հիման վրա և եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության և հասարակական շահերի, ազգային անվտանգության, հասարակության առողջության և բարոյականության պաշտպանության համար: Մինչդեռ, սոցիալական քարտերի ներդրումը վերը թվարկված խնդիրներից և ոչ մեկի լուծմանը նպատակաուղղված չէ:

Որպես մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված հանրաճանաչ նորմ, հարկ է վկայակոչել նաև «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», որի 22-րդ հոդվածի համաձայն **յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, ունի սոցիալական ապահովության իրավունք և, ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով, ինչպես նաև՝ յուրաքանչյուր պետության կազմակերպմանն ու ռեսուրսներին համապատասխան օգտվում է իր արժանապատվության և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից:**

Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Փորձագիտական խորհրդի անդամների մեծամասնությունը գտնում է, որ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ խախտվում է կամավորության սկզբունքը, ինչպես նաև բազմաթիվ անձանց սոցիալական ապահովության իրավունքը՝ երկրում խորացնելով աղքատությունը: Օրենքի 13-րդ հոդվածում նշված է, որ սոցիալական քարտ ստանալը քաղաքացու իրավունքն է: Մինչդեռ օրենքի ողջ իմաստից, ինչպես և կիրառման պրակտիկայից բխում է հակառակը. սոցիալական քարտ ստանալը դիտվում է որպես քաղաքացու պարտականություն: Ավելին, սոցիալական քարտ չստանալու հետևանքով քաղաքացիները զրկվում են իրենց սահմանադրական այնպիսի կարևորագույն իրավունքներից, ինչպիսիք են աշխատանքի և սոցիալական ապահովության իրավունքները:

Չեր ուշադրությունը հրավիրելով վերը շարադրվածին, ակնկալում են, որ Դուք, օգտվելով ՀՀ Սահմանադրությամբ Չեզ վերապահված լիազորություններից, կդիմեք ՀՀ Սահմանադրական դատարան՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

Հավելված 4.3.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆԻՆ**

Մեծարգո պարոն Նախագահ

Հայատանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքով, ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի, մահապատիժը որպես պատժատեսակ չի նախատեսվում:

Չեր 2003թ. օգոստոսի մեկի հրամանագրով անհատական կարգով ներում է շնորհվել այն անձանց, որոնց նկատմամբ մահապատիժն իրականացված չի եղել նոր Քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու պահին: Ներման հրամանագրերով այդ անձանց նկատմամբ սահմանված մահապատիժը փոխարինվել է ցմահ բանտարկությամբ:

Նման կարգով ներում ստացած և ցմահ ազատազրկում կրող դատապարտյալները գտնում են, որ խախտվել է հանցագործության կատարման պահին գործող օրենքով նախատեսված պատժից ավելի ծանր պատժի դատապարտվելուց ազատ լինելու սահմանադրական իրենց իրավունքը, քանի որ նախկին Քրեական օրենսգրքով ազատազրկման առավելագույն չափը սահմանված է եղել 15 տարի, իսկ մահապատիժը ներման կարգով փոխվելու դեպքում՝ 20 տարի, որ ՀՀ Սահմանադրությամբ և Քրեական օրենսգրքով ամրագրված է պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքին հետադարձ ուժ տալու անթույլատրելիության սկզբունքը, որն իրենց դեպքում անտեսվել է, քանի որ նախկին օրենքով ցմահ ազատազրկումը որպես պատժատեսակ նախատեսված չի եղել:

Տվյալ հարցով մեր անցկացրած քննարկումների ընթացքում դատապարտյալների նման տեսակետը իրավունքի բնագավառի մասնագետները հիմնականում պաշտպանել են:

Որպես խնդրի լուծման տարբերակներից մեկը, կարելի է դիտարկել կրկին անգամ անհատական կարգով ներում շնորհելու հնարավորության կարգը՝ ելնելով ստեղծված հանգամանքներից:

Հավելված 4.4.

**ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Թումանյան

Նկատի ունենալով, որ ես հանդիպում եմ խնդրել ՀՀ նախագահի հետ, Չեզ եմ ներկայացնում նախագահի հետ հանդիպման ժամանակ իմ կողմից քննարկման համար առաջարկվող հարցերը և դրանց կապակցությամբ արվելիք առաջարկները:

1. Երևան քաղաքում, հատկապես կանաչ տարածքներից, հողհատկացումներ կատարելու հետ կապված խնդիրներ:

Երևանի զբոսայգիներից և դրանց հարող տարածքներից Երևանի քաղաքապետի որոշումներով հողհատկացումներ են կատարվում զանազան սրճարանների, ռեստորանների, խաղատների և կրպակների կառուցման նպատակներով: Զբոսայգիները, եթե նույնիսկ տարածքը չի զբաղեցված այս կամ այն բնույթի կառույցով, շրջափակված են անճաշակ տեսքով կրպակների շարքերով:

Օղակաձև զբոսայգում գտնվող Կամերային երաժշտության տան անմիջական հարևանությամբ կատարվել է ապօրինի հողհատկացում՝ խաղատուն կառուցելու նպատակով: Նման հատկացմամբ և նման գործունեության թույլտվությամբ անտեսվել է Կամերային երաժշտության տան աշխատանքների խաթարումը:

Այստեղ սկսված շինարարական աշխատանքներն արդեն կասեցված են Երևանի քաղաքապետի որոշմամբ, սակայն փաստն առկա է, և նման ապօրինի հատկացումները հետագայում չեն բացառված:

Խնդրի լուծման տարբերակ է քաղաքապետին հանձնարարելը՝ չեղյալ հայտարարելու այդ հողհատկացումը, արգելելու հետագայում նույնպես զբոսայգիներից և կանաչ գոտիներից, դրանց անմիջականորեն հարող տարածքներից շինարարական նպատակներով հողհատկացումներ կատարելը:

2. Գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի գիտահետազոտական ինստիտուտի օտարված տարածքների խնդիրը:

Ինստիտուտի սեփականությունը հանդիսացող տարածքներից մի զգալի հատված քաղաքապետի որոշմամբ աճուրդով վաճառվել է քաղաքացիներին այն պատճառաբանությամբ, որ ինստիտուտի սեփականության սահմանները ճշտված և գրանցված չեն պետական կադաստրում: Մինչդեռ, մինչև նման աճուրդի անցկացումը, ՀՀ կառավարության որոշմամբ Երևանի քաղաքապետին և անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պետին հանձնարարված է եղել ճշտել ինստիտուտի սահմանները և կատարել գրանցում:

Հիշյալ հողհատկացմամբ անտեսվել է ինստիտուտի գործունեության հետ կապված անվտանգության գոտի ապահովելու անհրաժեշտությունը, իրացվող տարածքով թունավոր նյութերի հեռացման համար անհրաժեշտ խողովակաշարի ամկայությունը:

Իրացված տարածքներում բնակարաններ են կառուցվել թունավոր նյութերի ազդման և պայթուցավտանգ համարվող գոտում: Հարցի կապակցությամբ կայացված դատական ակտերով անտեսվել են այդ հանգամանքները:

Որպես խնդրի լուծման տարբերակ, աճուրդով վաճառված տարածքները կարող են հետ վերցվել՝ հատուցելով գնորդների վնասները: Կա նաև տարբերակ՝ վաճառված տարածքները դիտել որպես պետության կարիքների համար վերցվող տարածքներ և հետ վերցնելով դրանք, վերականգնել նախկին վիճակը:

3. ՀՀ մուտքի թույլտվությունների տրամադրման հետ կապված խնդիրներ:

Ազգությամբ հայ Ֆրանսիայի քաղաքացուն մերժվել է հանրապետության մուտքի թույլտվություն տրամադրելը և մերժումը ոչնչով չի հիմնավորվել:

Դա օգտագործելով, դիմումատուն բողոքներ է ներկայացրել և շարունակում է ներկայացնել միջազգային տարբեր կառույցների, ինչը վարկաբեկիչ է հանրապետության միջազգային հեղինակության համար:

Առաջարկվում է, եթե կան մուտքի թույլտվության տրամադրումը մերժելու օրինական հիմքեր, դիմողին տրամադրել այդ հիմքերը:

4. Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման ընթացքում թույլ տրվող իրավունքի խախտումներ:

Այս բնագավառում տեղ գտած խախտումների մասին մանրամասն գրված է իմ արտահերթ զեկույցում:

Հարկ կա հանձնարարել համապատասխան մարմիններին՝ անդրադառնալու բարձրացված հարցերին և գտնելու անհրաժեշտ լուծումներ:

5. Նախկինում մահապատժի դատապարտված անձանց հետ կապված խնդիրներ:

Այս կատեգորիայի անձանց ՀՀ նախագահի հրամանագրով ներում է շնորհվել՝ մահապատժի փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ: Այս կապակցությամբ խնդիր է առաջացել «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» 18.04.2005թ. ՀՀ օրենքի հոդված 3-ի մաս 4-ի և ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 13-ի մաս 1-ի ու պատժի նշանակման ընդհանուր սկզբունքների միջև հակասություն լինելու շուրջ:

Հարցը նրանում է, որ նախկին քրեական օրենսգրքով ցմահ ազատազրկումը որպես պատժատեսակ նախատեսված չի եղել, ազատազրկման առավելագույն ժամկետը նախատեսված է եղել 15 տարի, իսկ մահապատժի ներման կարգով փոխելու դեպքում՝ 20 տարի:

Հետևաբար, եթե մի կողմ թողնելու լինենք «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» օրենքի հոդված 3-ի մաս 4-ը օրենսգրքի ընդհանուր սկզբունքների հետ հակասության մեջ լինելու հանգամանքը, նախկինում մահապատժի դատապարտված անձանց անհատական կարգով ներում շնորհելու դեպքում նրանց պատժի ժամկետը չի կարող գերազանցել 20 տարին:

Խնդրի լուծման տարբերակ է նախկինում մահապատժի դատապարտված անձանց ներում շնորհելու վերաբերյալ հրամանագիրը նախկին քրեական օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելը:

6. Խոսքի ազատության հետ կապված խնդիրներ:

Հանրապետությունում, ըստ միջազգային կառույցների գնահատման, խոսքի ազատության դրական գնահատականի չափանիշն զգալիորեն նվազել է: Նման նվազեցումը հիմնականում պայմանավորված է հանրային ռադիոյի և հեռուստատեսության կողմից հանրապետության տարբեր քաղաքական ուժերին ոչ հավասարաչափ եթերաժամ տրամադրելու արդյունքում: Ընդդիմադիր կուսակցությունները չեն օգտվում կամ գրեթե չեն օգտվում հանրային ռադիոյի և հեռուստատեսության եթերաժամերից: Հենց միայն այն փաստը, որ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանն ընթացիկ տարում ոչ մի անգամ չի հրավիրվել հանրային հեռուստատեսությամբ հանդես գալու, մինչդեռ տրվել են մի շարք հաղորդումներ՝ Պաշտպանի գործունեության բացասական գնահատականներով, ինքնին խտրական մոտեցման փաստ է և կարող է գնահատվել որպես խոսքի ազատության սահմանափակում:

Խնդիրը կարող է լուծվել, եթե հանրային ռադիոյի և հեռուստատեսության պատասխանատուները պարտավորեցվեն ապահովել եթերից օգտվելու հավասար հնարավորություններ քաղաքական բոլոր ուժերի համար:

Հավելված 4.5.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Վարչապետ (Ազգային ժողովի նախագահ)

Տեղյակ եմ պահում, որ ՀՀ Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո, երբ անհրաժեշտ լրացումներ չեն կատարվել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում, առաջանում է իրավիճակ, որի արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունն անորոշ ժամանակով գործելու իրավասություն չի կարող ունենալ:

Այսպես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին Պաշտպանի պաշտոնավարման ժամկետը լրանում է սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո 30-րդ օրը: Դա նշանակում է, որ իմ՝ որպես առաջին Պաշտպանի, պաշտոնավարման ժամկետը լրանում է 2006թ. հունվարի 5-ին, և եթե դադարեցվում են իմ լիազորություններն առանց նոր Պաշտպան նշանակելու, հաստատությունը չի ունենում գործելու լիազորություն, քանի որ Պաշտպանի աշխատակազմը, համաձայն օրենքի 23-րդ հոդվածի, ապահովում է Պաշտպանի գործունեությունը և ինքնուրույն լիազորություններ չունի:

Ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ օրենքով նոր Պաշտպանի նշանակման ժամկետը չի սահմանված:

Պաշտպանի տեղակալը, համաձայն օրենքի 22-րդ հոդվածի, իրականացնում է Պաշտպանի լիազորությունները նրա հանձնարությամբ, նրա բացակայության ժամանակ և լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում: Օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված կարգով Պաշտպանի լիազորությունների դադարելը չի կարող համարվել վաղաժամկետ դադարեցում, հետևաբար և տեղակալը նույնպես իրավասու չէ նրան փոխարինել, քանի որ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի իմաստից հետևում է, որ տեղակալի լիազորությունները դադարում են Պաշտպանի լիազորությունների հետ միաժամանակ, եթե դա լիազորությունների վաղաժամկետ դադարեցում չէ:

Ուշադրության է արժանի նաև այն, որ Սահմանադրությամբ Պաշտպանի տեղակալ չի նախատեսված և հակառակ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված սկզբունքի, Ազգային ժողովը Պաշտպանի տեղակալ նշանակելու իրավասություն չունի:

Մարդու իրավունքների պաշտպան ընտրելու համար Ազգային ժողովը դեռևս պետք է լրացումներ կատարի «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում և փոփոխություններ ու լրացումներ՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքում, որից հետո միայն կարող է լուծվել նոր Պաշտպանի ընտրության հարցը:

Պաշտպանի կառույցի գործունեության անընդհատությունը և շարունակականությունը ապահովելու նպատակով, ստեղծված իրավիճակից ելքը տեսնում ենք նրանում, որ Ազգային ժողովի արտահերթ նիստով լրացում կատարվի օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում, ըստ որի գործող Պաշտպանի լիազորությունները կպահպանվեն մինչև նոր Պաշտպանի նշանակման հաջորդ օրը:

Ստեղծված պայմաններում կարևոր է ճշտելը, թե արդյոք 2006թ. հունվարի 5-ից հետո, մինչև նոր Պաշտպանի նշանակվելը, երբ աշխատակազմը մատնված է լինելու հարկադիր պարապուրդի, «Մարդու իրավունքների պաշտպան» պետական հիմնարկը ֆինանսավորվելու է, թե ոչ:

Հավելված 4.6.

**ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ
ՊԱՐՈՆ Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ**

Հարգելի գլխավոր դատախազ

Իմ, որպես Մարդու իրավունքների պաշտպանի, տարեկան գեկույցը նպատակ է հետապնդել հանրության և պատկան մարմինների ուշադրությունը հրավիրելով, լայն քննարկման առարկա դարձնել այն խնդիրները, որոնք առաջ են բերում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտումներ:

Այն, որ Գլխավոր դատախազությունում զեկույցն ուսումնասիրվել է, արդեն իսկ վկայում է, որ ես մասամբ հասել եմ իմ նպատակին:

Ծանոթանալով Ձեր, թեկուզ բացասական շեշտադրումներով կազմված և չափազանց կոշտ կարծիքին, այն արժեքավոր եմ համարում նախ որպես մասնագիտական և ապա որպես այն գերատեսչության գնահատականը, որի հետ, կարծում եմ, համագործակցության հիմքերը դրված են, և մարդու իրավունքներին ու հիմնարար ազատություններին վերաբերող որոշ խնդիրներ հնարավոր է եղել լուծել այդ համագործակցության շնորհիվ:

Համաձայնվելով, որ, իրոք, զեկույցում տեղ են գտել նաև անճշտություններ, այնուամենայնիվ դատախազության ամփոփ կարծիքով ներկայացված մի շարք դիտողություններ և գնահատականներ ընդունելի չեմ համարում հետևյալ նկատառումներով.

Այն, որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի վկայակոչմամբ Պաշտպանը Ձեր կողմից մեղադրվել է որոշ գործառույթներ իրականացնելիս իր լիազորությունները գերազանցելու մեջ այն հիմնավորմամբ, որ քննարկման համար իր ուղարկած բողոքներով «փորձել է վերահսկողություն սահմանել դատախազության նկատմամբ՝ անտեսելով կոնկրետ պետական մարմնի կարգավիճակին վերաբերող սահմանադրական դրույթները և համապատասխան օրենսդրական ակտերը», վկայում է, որ Մարդու իրավունքների պաշտպանը մեզանում չի ընկալվել որպես մարդու իրավունքների խթանման և պաշտպանության խնդիրներ իրականացնելու կոչված ազգային հաստատություն, և ձգտում կա նվաստացնելու այդ հաստատության դերն ու նշանակությունը:

Մեր հանրապետությունում մնան հաստատություն ստեղծվել է ի կատարումն պետության ստանձնած միջազգային պարտավորությունների, և բնական է, որ հաստատության իրավասությունները պետք է համապատասխանեն մնան հաստատությունների համար սահմանված միջազգային չափանիշներին: Այդ չափանիշները սահմանվել են ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի 20.12.93թ. թիվ 48/134 բանաձևով, որը հայտնի է «Փարիզյան սկզբունքներ» անվանումով:

Վեհաժողովի այդ բանաձևում ասված է. «Ազգային հաստատության վրա է դրվում մարդու իրավունքները **խթանելու և պաշտպանելու** խնդիրը: Ազգային հաստատությունն օժտվում է **հնարավորինս լայն** իրավասություններով, որոնք հստակ շարադրվում են նրա կազմը և իրավասությունների շրջանակը որոշող սահմանադրական կամ օրենսդրական ակտով»:

Մինչդեռ Ձեր կողմից որպես լիազորությունների գերազանցում է գնահատվել այն, որ բողոքը դատախազության քննարկմանն ուղարկելով, Պաշտպանը նաև խնդրել է իրեն **տեղյակ** պահել քննարկման արդյունքների մասին:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է իր կողմից այլ մարմին ուղարկված բողոքի քննարկման նկատմամբ «**վերահսկողություն իրականացնելու**» Պաշտպանի **պարտականությունը**: Օրենքի օգտագործած այս «վերահսկողություն» արտահայտությունն է, որ համարվել էք անընդունելի:

Դատախազությանը հասցեագրած մեր գրությունները և հարցումները երբեք չեն պարունակել այնպիսի **դարձվածքներ կամ արտահայտություններ**, որոնք տեղիք տալին դրանք գնահատելու որպես բառի իսկական իմաստով վերահսկողության իրականացում:

Որպես վերահսկողություն է գնահատվել այն, որ Պաշտպանը ձգտել է հետևել մարդու այս կամ այն իրավունքի խախտմանը վերաբերող բողոքի քննարկման ընթացքին՝ համաձայն օրենքի 7-րդ հոդվածի, պարտավորություն ունենալով երաշխավորելու դատավարության իրավունքների պատշաճ ի կատար ածումը:

Մարդու իրավունքների պաշտպանը խնդիր ունի հետևելու, վեր հանելու և վերականգնելու հատկապես քննչական մարմինների կողմից թույլ տրված իրավունքների

խախտումները, նպաստելու երկրում մարդու իրավունքների պաշտպանվածության աստիճանի բարձրացմանը:

Իսկ նա դա կարող է անել հատկապես դատախազության միջոցով: Հետևաբար Պաշտպանը խնդիր ունի հասնելու այն բանին, որ գլխավոր դատախազն արձագանքի իր ցանկացած ահազանգին՝ այդպիսի ահազանգերը գնահատելով ոչ թե որպես անթույլատրելի և դատախազությանը վիրավորող վերահսկողություն, այլ որպես անաչառ գնահատականը մի մարմնի, որը շահագրգիռ է նպաստել քննչական համակարգում օրինականության հաստատմանն ու ամրապնդմանը՝ ի շահ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների:

Պաշտպանը շահագրգիռ է հետաքննության և նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության ուժեղացման հարցում, գտնելով, որ այստեղ իրավունքի խախտման բացառումը հնարավոր է միայն այդպիսի հսկողության ուժեղացման ճանապարհով:

Հանդիսանալով քրեական հետապնդման մարմին, օրենքով նախատեսված դեպքերում դատախազությունն իրականացնում է նաև առանձին անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակման գործառույթներ: Իսկ Մարդու իրավունքների պաշտպանի խնդիրը հենց նման սահմանափակումների օրինականությանը հետևելն է: Հետևաբար Դատախազությունը չի կարող և չպետք է դուրս դրվի «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 2-րդ հոդվածով մատնանշված պետական մարմինների շարքից:

Այնուամենայնիվ Պաշտպանն ընդունում է դատախազության առանձնահատուկ դերը և ձգտում է հանդես գալ ոչ թե դատախազության նկատմամբ վերահսկողություն իրականացնողի դերում, այլ մարդու իրավունքների պաշտպանության հարցերում դատախազությանն աջակցողի, իր գործունեության բնագավառում դատախազությունից աջակցություն ստացողի դերում:

Սրանում է Պաշտպանի և դատախազության համագործակցության էությունը, և եթե դատախազությունը ճիշտ գնահատի Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնի ու խնդիրների առանձնահատկությունները /չունի որևէ վարչակառավարչական լիազորություն, իրավունքի պաշտպանության զինանոցում ունի միայն բարոյական ազդակը/, ապա կարիք չի ունենա վկայակոչելու ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը, որն արդեն սկսել են վկայակոչել նաև պետական այլ մարմիններ՝ դատարանից սկսած մինչև քաղաքապետարան ու տեղական ինքնակառավարման մարմիններ: Բոլորն էլ վկայակոչում են իրենց լիազորությունները կարգավորող օրենքը և Սահմանադրությունը: Այսպիսի մոտեցմամբ հակասահմանադրական է դառնում Պաշտպանի մասին օրենքն ամբողջապես, անօրինական է դառնում Պաշտպանի գործունեությունը և մարդու իրավունքների պաշտպանությունն ընդհանրապես:

Հանրության պահանջը, որ զեկույցը պետք է պարունակեր ավելի շատ կոնկրետ տեղեկություններ, փաստեր և անուններ, հասկանալի է: Մակայն տարօրինակ է, որ նման պահանջ ներկայացնում է նաև դատախազությունն այն դեպքում, որ ժամանակին դատախազությանը ներկայացվել են այդպիսի փաստեր, և դրանց մի մասին լուծում է տրվել աշխատանքային քննարկումների կարգով, իսկ մի մասի վերաբերյալ տրվել են միայն խուսափողական պատասխաններ: Արդյոք ցանկալի^o է դրանց կրկին անդրադառնալը և հանրության քննարկման առարկա դարձնելը: Այսօր էլ կարող ենք վկայակոչել վարչական իրավախախտումների քննության արատավոր պրակտիկան, որը զուգակցվում է ապօրինի բերման ենթարկելու, անազատության պայմաններում ապօրինի պահելու, կեղծ արձանագրություններ կազմելու և այլ անօրինականությունների հետ:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ նաև, որ գնահատականներ տալն ու եզրահանգումները կատարվել են ոչ միայն դիմում-բողոքների ստուգման տվյալներով, ինչպես ասված է կարծիքում, այլ նաև առանձին դիտարկումների, անհատական հանդիպումների, հասարակական քննարկումների արդյունքում:

Այն, որ զեկույցի 3.2 կետում ասվել է, որ հաճախակի չի պահպանվում անձին քննչական մարմին կանչելու դատավարական կարգը՝ նա բերման է ենթարկվում առանց բերման ենթարկելու որոշման, պահվում է անազատության պայմաններում առանց

համապատասխան ձևակերպման, Դուք համարել եք մերկապարանոց հայտարարություն այն դեպքում, որ զեկույցի 3.3 կետում վկայակոչված է Գրիշա Վիրաբյանի գործը, որը հենց անձին ապօրինի բերման ենթարկելու և անազատության պայմաններում պահելու ոչ եզակի օրինակ է, 3.4 կետում վկայակոչված են վարչական կարգով կալանավորումները, որոնց վերաբերյալ ժամանակին Չեզ ուղարկվել է մանրամասն հաղորդում՝ նման կալանավորումների փաստերով քրեական գործ հարուցելու առաջարկով /տես՝ դատախազություն ուղարկած մեր գրություններն ու հաղորդումները՝ 08.04.04թ. թիվ 00322, 13.04.04թ. թիվ 3-0035, 18.04.04 թ. թիվ3-0083, 3-0085, 3-0086, 10.06.04թ. թիվ 0482, 23.06.04թ. թիվ 1-0444 և այլն/:

Հարկ կա՞ր արդյոք այդ դեպքերը կրկին թվարկել, կրկին վերլուծել, որպեսզի մեր պնդումները չդիտվեին որպես **մերկապարանոց**:

Չեկույցի՝ Չեր մատնանշած 3.2 կետում չի ասված, թե նախաքննական մարմնի կողմից կալանքը որպես խափանման միջոց նախաձեռնելն իբր Սահմանադրության 18-րդ հոդվածի խախտում է: Այդտեղ խոսվել է այն մասին, որ խափանման միջոցը կալանք ընտրելիս, ոչ միշտ են հիմնավորվում դրա անհրաժեշտությունը և անձին վերաբերող մեղադրանքը, որ որպես նախնական կալանքին փոխարինող այլընտրանքային խափանման միջոց գրավը լայն կիրառում չունի:

Որպես ասվածի ապացույց, կարելի էր մատնանշել մեր ուսումնասիրած կամ դատաքննության ընթացքում դիտարկված գործերը: Դրանց մի մասով առաջարկներ ենք ներկայացրել նաև դատախազություն: Ըստ մեր ուսումնասիրությունների, նման գործերի մեծ մասով խափանման միջոցը կալանք ընտրելու հիմք է ծառայել միայն տվյալ անձին վերագրվող հանցանքի ծանրությունը, և չի եղել որևէ փաստ, որը տեղիք տար կասկածելու, թե տվյալ անձը կթաքնվի վարույթն իրականացնող մարմնից, կխոչընդոտի գործի քննությանը, դատարանի վճռի կատարմանը, կարող է կատարել օրենքով արգելված արարք, աշխիքն՝ այն, ինչ թվարկված է ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 135 հոդվածի 1-ին մասի 1-5 կետերով:

Համաձայն են, որ այդ կետում շարադրանքն անհաջող է և տեղիք է տալիս ենթադրելու, թե նախաքննության մարմինը մեղադրվում է խափանման միջոցը կալանք ընտրելը նախաձեռնելու մեջ:

Դատարանի որոշումը՝ «Խափանման միջոցը կալանք ընտրելու մասին», ըստ էության անձին **կալանավորելու թույլտվություն** է, և կարծում են տեղին չէ հեզմանքը՝ զեկույցում այդպիսի արտահայտություն օգտագործելու կապակցությամբ:

Խափանման միջոցը կալանք ընտրվում է միայն մեղադրյալի նկատմամբ, և վեճն այն մասին, որ դատարանը մեղադրյալի կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս մեղադրանքի հիմնավորվածությանը պետք է անդրադառնա թե ոչ, դարձել է տեսական, քանի որ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածով այդ հարցը չի որոշակիացվել, սակայն, մեր կարծիքով, կալանավորման օրինականությունը պայմանավորված է նաև մեղադրանքի հիմնավորվածությամբ, և դատարանը պետք է ստուգի կալանավորման պահին անձին վերագրված մեղադրանքի ճիշտ որակված և բավարար չափով հիմնավորված լինելը, հակառակ դեպքում, եթե դատարանը չանդրադառնա մեղադրանքի էությանը, կալանավորման ժամկետի երկարացման համար բավարար կլինի միայն այն, որ արդեն իսկ խափանման միջոցն ընտրված է կալանքը: Խոսքը չի վերաբերում ապացույցների արժանահավատության ստուգմանը, այլ միայն մեղադրանքը հաստատող ապացույցների բավարար լինելն ստուգելուն:

Արդարացման դատավճիռները, քրեական գործերի կարճումը, երբ գործով կալանավորվածներ կան, եզակի են կամ գրեթե չկան, ինչը, իմ կարծիքով, պետք է վկայակոչել ոչ թե որպես նախաքննության որակի դրական ցուցանիշ, այլ միակողմանի մեղադրական թեքումով նախաքննություն և դատաքննություն նույնպես:

Իրոք, զեկույցի 3.7 կետում տեղ է գտել սխալ՝ հանցագործության վերաբերյալ տրված հաղորդմամբ որոշում ընդունելու ժամկետը «անհապաղ» նշելու փոխարեն, նշվել է «եռօրյա ժամկետում», ինչը նախատեսված է եղել նախկին քրեական դատավարության օրենսգրքով: Այդ սխալն ուղղված է եղել զեկույցի նախնական տեքստում, սակայն ուղղումը վերջնական տեքստում տեղ չի գտել տեխնիկական պատճառներով: Այդ սխալը

Չեր կողմից լայնորեն օգտագործելը կարելի է գնահատել որպես իրավական ակտերին անհրազեկ լինելու մեջ Պաշտպանին մեղադրելու, զեկույցն ամբողջապես վարկաբեկելու միտում:

Այն, որ հանցագործության մասին տրված հաղորդմամբ որոշում կայացնելու համար օգտագործվել է «եռօրյա ժամկետ» արտահայտությունը, բոլորովին չի փոխում ասվածի էությունը: Խոսքն այն մասին է, որ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված ժամկետները խախտվում են:

Այդտեղ նկատի է առնվել հանցագործության մասին տրված հաղորդումներով որոշում կայացնելու հանգամանքը միայն, և չի քննարկվել պետական շահերի պաշտպանության նպատակով հայց հարուցելու համար նյութեր նախապատրաստելու դրվածքը: Հետևաբար հիմք չունի այն պնդումը, թե իբր նույնացվել են երկու հանգամանքները:

Ինչ վերաբերում է Քրեական օրենսգրքի 225, 300 և 301 հոդվածներին, ապա այստեղ տվյալ հանցակազմերը արդի մոտեցումներին համապատասխանեցնելու խնդիր կա: Այդ հոդվածների կիրառման նկատմամբ դատախազությունն իրոք ներկայացրել է իր հիմնավորումները՝ հղում կատարելով քրեական գործով ձեռք բերված ապացույցներին:

Քանի որ Պաշտպանն իրեն իրավասու չի համարում քրեական գործերով մտնել ապացույցների գնահատման բնագավառը, անդրադարձ չի կատարել դատախազության հիմնավորումներին: Պաշտպանի գնահատականները, հատկապես քրեական գործերով, բոլոր դեպքերում վերաբերում են ոչ թե ապացույցներին, այլ ընդհանուր մոտեցումներին և գործով անցնող անձանց դատավարական իրավունքների ապահովմանը:

Նախկինում մահապատժի դատապարտված անձանց պատիժը ցմահ ազատազրկմամբ փոխարինելը նույնպես վիճարկելի է և իրավաբան մասնագետների գերակշիռ մասը գտնում է, որ նման փոխարինումը հակասում է պատասխանատվությունը մեղմացնող օրենքի հետադարձ ուժ ունենալու սկզբունքին: Այս հարցը, իմ կարծիքով, պետք է քննարկման առարկա դարձնի Սահմանադրական դատարանում:

Չեկույցի 3.11 կետում խոսվել է հերթական գորակոչից խուսափելու համար մեկ անգամ դատապարտված լինելու և մինչև 27 տարեկան դառնալը գորակոչից կրկին խուսափելու մասին: Այստեղ վիճարկելի է այն, թե դա պետք է դիտել որպես նոր հանցագործություն, թե հանցագործություն, որի համար անձն արդեն դատապարտվել է:

Իրոք, կրկին դատապարտման այդպիսի դեպքեր չկան, սակայն հարցը մնում է վիճարկելի և կարևորում ենք դատախազության մոտեցումներն այդ հարցին:

Նորքի այգիներ-227 հասցեում գտնվող շենքի վերաբերյալ վճիռների բողոքարկման հարցով ես շարունակում եմ մնալ իմ կարծիքին, գտնելով, որ պետության շահը չի կարող հակադրվել բռնազաղթվածի սոցիալական պաշտպանության շահին:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ը չի առանձնացրել հանրապետության դատախազությունն այլ պետական մարմիններից, սակայն Պաշտպանն ինքն է առանձնացրել դատախազությունը՝ որպես իր համար կարևոր այն պետական մարմինը, որի աջակցության կարիքը մշտապես ունի՝ երբ հարկ կա այլ իրավապահ մարմինների կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ բողոքներով բացահայտումներ կատարելու: Եզակի չեն դեպքերը, երբ նման բողոքներն ուղարկվել են դատախազություն, որոնց ընթացքին հետևելը Պաշտպանի համար պարտականություն է և չպետք է գնահատվի որպես հսկողություն դատախազության նկատմամբ:

Ինչ վերաբերում է օրենքի 13-րդ հոդվածին, ապա այն կիրառելի չէ զեկույցի նկատմամբ, քանի որ զեկույցում ընդհանրացված տվյալներ են, և չեն կարծում, թե յուրաքանչյուր հետևություն պետք էր ուղարկել շահագրգիռ մարմնին՝ պարզաբանում ստանալու և ապա նոր զեկույցում շարադրելու համար:

Ավելորդ չեն համարում կրկնել, որ Պաշտպանի համար ամենակարևորն այն է, որ դատախազությունն անհանդուրժողական վերաբերմունք ցուցաբերի ոստիկանության և քննչական մարմինների կողմից մարդու իրավունքների ցանկացած խախտման

նկատմամբ: Հենց դա կլինի այն ամենամեծ աջակցությունը Պաշտպանին, ինչին, ըստ Ձեզ, դատախազությունը պատրաստակամ է:

Ցանկանում եմ նաև իմ գոհունակությունն արտահայտել այն կապակցությամբ, որ Ձեր 14.06.05թ թիվ 5.10/12-05 հանձնարականով հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի համայնքների դատախազները պարտավորեցվել են հանցագործությունների վերաբերյալ հաղորդումները քննելիս խստորեն ղեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176, 180,182, 185 և 187 հոդվածների պահանջներով:

Հավելված 4.7.

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի նախարար

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցի վերաբերյալ Ձեր 05.05.05թ. ներկայացրած **նկատառումներն** այն տպավորությունն են թողնում, որ Արդարադատության նախարարությունը պատրաստ չէ մեր երկրի դատական համակարգում առկա թերություններն ընդունելու որպես իրողություն և խրախուսելու նման թերությունների վեր հանմանն ու վերացմանն ուղղված դիտարկումներն ու քննարկումները:

Ես հակված եմ ենթադրելու, որ Արդարադատության նախարարն այդ կարծիքին չէ և **նկատառումներում** ուղղակի ճիշտ չեն կատարվել շեշտադրումները, որից և տպավորություն է առաջանում, թե երկրում առկա է իդեալական դատական համակարգ, կա իդեալական արդարադատություն և Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը ոտնձգություն է այդպիսի արդարադատության նկատմամբ՝ խախտում է դատարանի անկախությունը, խախտում է կողմերի հավասարության սկզբունքը, որ Պաշտպանի տարեկան զեկույցը դրա վկայությունն է:

Կարծում եմ, որ իդեալական դատական համակարգ և իդեալական արդարադատություն ունենալը Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու այն երազանքն է, որն այսօր մնում է անհասանելի, և հարկ չկա ապացուցելու, որ չկա դատարանի և դատավորի իրական անկախություն, որ համակարգում տեղ ունեն կոռուպցիան, անօրինական միջամտությունը, որ կա անվստահություն դատարանի և դատավորի նկատմամբ:

Մեր երկրի Սահմանադրությունն ամրագրել է դատական պաշտպանության և արդար դատաքննության յուրաքանչյուրի համար: Մարդու իրավունքների պաշտպանի առաջնային խնդիրներից է՝ աջակցել այդ իրավունքների լիարժեք իրականացմանը, միջամտել այդ իրավունքների խախտման յուրաքանչյուր դեպքի և հասնել խախտված իրավունքի վերականգնմանը: Սա Պաշտպանի համար ոչ միայն իրավունք, այլ նաև պարտականություն է և նման միջամտությունների հետ կապված Պաշտպանը կարող է մեղադրվել ոչ թե լիազորությունների սահմանն անցնելու, այլ պարտականությունների կատարման մեջ թերանալու համար միայն:

Մարդու իրավունքների պաշտպանության, մարդու խախտված իրավունքների վերականգնման իր առաքելությունը Պաշտպանը կարող է հաջողությամբ իրականացնել այն դեպքում միայն, երբ երկրում առկա է իրոք կայացած անկախ և անկողմնակալ դատական համակարգ, երբ այդ համակարգը վայելում է համընդհանուր վստահություն:

Բոլորովին չկասկածելով, որ Արդարադատության նախարարությունն իր առջև խնդիր է դրել և ձգտում է հասնել դատական նման համակարգի կայացմանը, Պաշտպանը կարևորում է հատկապես այդ հարցում նախարարության հետ համագործակցելը, նախարարությանն աջակցելը և անկախ դատական համակարգի կայացմանը նպաստելը:

Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքին, որ Պաշտպանի տարեկան զեկույցի վերաբերյալ ինձ ներկայացված նկատառումները բոլորովին չեն

վկայում առողջ և անաչառ քննադատության, ինչպես նաև այդ հաստատության դերի և նշանակության ըմբռնման մասին: Ընտրվել է պաշտոնական գրագրությունների համար անընդունելի տոն և նկատելի է ձգտումը՝ ամեն կերպ վարկաբեկել զեկույցը և հաստատությունը նույնպես:

Անդրադարձ կատարելով Ձեր նկատառումներին նույն հերթականությամբ, ինչ հերթականությամբ դրանք ներկայացված են, հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

1. Կարծում եմ տեղին չէ Սահմանադրության 5-րդ հոդվածի վկայակոչումը, երբ մեջբերվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, որով Պաշտպանն անվանված է «ինքնուրույն և անկախ պաշտոնատար անձ»: Այստեղ խոսքը ոչ թե իրավասությունների շրջանակի մասին է, այլ պաշտոնի առանձնահատկության: Չեկույցում ասվածը վերաբերում է օրենսդրի այն մոտեցմանը, որ Պաշտպանի պաշտոնն ըստ էության լինելով պետական պաշտոն, միաժամանակ դուրս է դրված, առանձնացված է պետական պաշտոնների շարքից իր ֆունկցիաների առանձնահատկությամբ:

2. Դուք լավատեղյակ եք մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների մասին Փարիզյան սկզբունքներին, որով կարևորված է նման հաստատությունները ձևավորելիս լայն ներկայացուցչության ապահովումը: Դա բոլորովին չի նշանակում, թե դրանից տուժում է հաստատության աշխատակիցների պրոֆեսիոնալիզմը:

3. Քննադատելով Պաշտպանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների համար օգտագործված անվանումները, պատահական չէ, որ ցույց չեն տրվել այն օրենքները կամ օրենքը, որոնցով կամ որով արգելված է հաստատությունում ունենալ խումբ որպես ստորաբաժանում:

4. Պաշտպանի լիազորություններին վերաբերող հարցերում ՀՀ
Սահմանադրության

5-րդ հոդվածին հաճախակի անդրադառնալը փորձ է ամեն կերպ նեղացնելու Պաշտպանի իրավասությունների շրջանակը: Հենց այդպիսի փորձի վկայություն է այն, որ մեջբերում է կատարվել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասից և հոդվածի այդ մասում օգտագործված «հատկապես» արտահայտությունը փոխարինվել է «միայն» արտահայտությամբ, որով հոդվածի իմաստն աղավաղվել է:

Նկատառումների այս կետում մեջ է բերվել Չեկույցի 2.5 կետում գրված հետևյալ միտքը. «Պաշտպանը որդեգրել է այն սկզբունքը, որ մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ ցանկացած ոտնձգության դեպքում միջամտությունը պարտադիր է՝ անկախ երևույթի մասին բողոքի առկայությունից»: Այս միտքը սխալ հայտարարելու նպատակով է, որ մեջ է բերվել օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը և «հատկապես» բառը փոխարինվել է «միայն» բառով և բողոքի բացակայության դեպքում խախտման երևույթին Պաշտպանի միջամտելը գնահատվել որպես իր իրավասությունների զերազանցում:

Հոդվածի 4-րդ մասում ասված է. «Պաշտպանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ սկսել հարցի քննարկումը, **հատկապես այն դեպքերում, երբ...**»:

Չեմ կարծում, թե հարկ կա ապացուցելու, որ օրենքի այս հոդվածը ոչ թե սահմանափակել է Պաշտպանի նախաձեռնությունը, այլ թվարկել է այն հանգամանքները, որոնց դեպքում այդ նախաձեռնությունը պարտադիր է:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ իրավունքին վերաբերող հարցերի նկատմամբ Պաշտպանի իրավասությունները սահմանելիս օրենքում միայն մեկ դեպքով է, որ սահմանված է Պաշտպանի միջամտության կատեգորիկ արգելք՝ «Պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին» /հոդ. 7/: Մնացած դեպքերում Պաշտպանի համար ոչ թե սահմանված է խախտված իրավունքը վերականգնելուն միջամտելու արգելք, այլ չմիջամտելու Պաշտպանի իրավունքը: Օգտվել այդ իրավունքից, թե ոչ, Պաշտպանի որոշելիք հարցն է /օրինակ, հոդված 9՝ «Բողոքը

պետք է Պաշտպանին տրվի մեկ տարվա ընթացքում», հոդված 10՝ «Չի քննարկում այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով», «Դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումն սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան» և այլն/:

Կրկնում են, որ այս կարգով սահմանված է բողոքը չքննարկելու Պաշտպանի իրավունքը, և չի կարող Պաշտպանի համար լիազորությունների սահմանների անցում համարվել այն, որ նա քննարկման է ընդունել բողոքը, որով մեկամյա ժամկետը բաց է թողնված, սակայն կա հնարավորություն վերականգնելու խախտված իրավունքը: Օրենքը չի պարտավորեցնում Պաշտպանին դադարեցնել բողոքի քննարկումը, եթե դատարան հայց կամ բողոք է ներկայացվել, և դիմումատուն քննարկման դադարեցում չի պահանջել: Օրենքն իրավունք է տալիս դադարեցնել քննարկումը, սակայն Պաշտպանը կարող է չդադարեցնել, եթե բողոքի բնույթով թելադրված անհրաժեշտություն կա հետևելու դատաքննության ընթացքին:

Այնուհետև **նկատառումներում** մեջ է բերվել նաև զեկույցի նույն կետում հետևյալ ասվածը. «Իր նախաձեռնությամբ /Պաշտպանը/ իրականացնում է նաև հասարակական հնչեղություն ստացած գործերով դատական նիստերի դիտարկումներ»:

Սա նույնպես **նկատառումներով** գնահատվել է որպես Պաշտպանի կողմից իր լիազորությունների սահմանների անցում հետևյալ պնդմամբ. «**ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ Օրենքով, Պաշտպանը «դիտարկումներ» անցկացնելու իրավասությամբ օժտված չէ: Փաստորեն, Պաշտպանի կողմից, առանց որևէ իրավական հիմքի, անցկացվել են դիտարկումներ, որն ակնհայտորեն դուրս է գալիս Պաշտպանի՝ ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության շրջանակից**»:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը և Պաշտպանի հաստատությունը իմաստավորված են հենց նրանով, որ չի սահմանափակված մարդու իրավունքների պաշտպանության ցանկացած հարցով Պաշտպանի միջամտելու իրավունքը, և մեկընդմիջտ պետք է նկատի ունենալ, որ ՀՀ Սահմանադրության 117 հոդվածներից առնվազն 34-ը վերաբերում են Պաշտպանի իրավասություններին և Պաշտպանի համար նաև սահմանում են պարտականություն՝ միջամտել և երաշխավորել Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների իրականացումը:

Սա նշանակում է, որ Պաշտպանին պետք է տեղեկացնել, թե Սահմանադրության երկրորդ գլխում ամրագրված իրավունքներն ու ազատություններն ինչպես և ինչքանով են երաշխավորված, մասնավորապես 38-րդ հոդվածի 2-րդ մասով և 39-րդ հոդվածով ամրագրված դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը, եթե այնքան հեռուն ենք գնում, որ Պաշտպանի համար իրավասությունների սահմանների անցում ենք գնահատում նույնիսկ դատական նիստերի դիտարկումներ իրականացնելը՝ մոռանալով, որ դիտարկումը ոչ այլ ինչ է, քան դռնբաց դատական նիստին ներկա գտնվելը, որի իրավունքն ունի ոչ միայն Պաշտպանը, այլ նաև յուրաքանչյուր ոք:

5. Տարօրինակ է, որ Դուք հարց եք տալիս, թե ԴԱՀԿ ծառայության որ ապօրինի գործողություններն են կանխվել՝ այն դեպքում, որ նման դեպքերի մասին Չեզ ուղարկվել են մի շարք հաղորդումներ՝ մեղավորներին պատժելու առաջարկով:

Պաշտպանը միջամտում է ԴԱՀԿ ծառայության կատարողական այն գործողություններին միայն, որոնք իր գնահատմամբ պարունակում են անօրինականության տարրեր՝ պարտապանը չի զգուշացվել հարկադիր կատարման օրվա և ժամի մասին, պարտապանին ժամկետ չի տրվել պարտավորությունը կամավոր կատարելու համար, կատարողական գործողություն է իրականացվում անձի նկատմամբ, որի վերաբերյալ նշում չկա դատական ակտում և այլն:

6. Համաձայն օրենքի 26-րդ հոդվածի, խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով, Պաշտպանը կարող է ստեղծել փորձագետների խորհուրդ: Անհասկանալի է՝ հոդվածի այդ որ իմաստից և օրենքի այդ որ տրամաբանությունից է հետևություն արվում, թե իբր Պաշտպանն իրավունք չունի իր աշխատակազմին վերաբերող հարցեր քննարկել տվյալ խորհրդում:

Նկատառումներում սա ասված է Ձեկույցով տրված այն տեղեկության կապակցությամբ, որ փորձագիտական խորհրդում քննարկվել է Պաշտպանի աշխատակազմը քաղաքացիական ծառայության մեջ ներառելու անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը:

Հիշեցնենք, որ Պաշտպանն ինքն է որոշում, թե ինչ հարց քննարկել խորհրդում, ինչ հարցի վերաբերյալ կարծիք լսելու կարիք ունի:

7. ԴԱՀԿ ծառայության աշխատանքները դիտվում են որպես դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ մաս, և լիովին համաձայն են, որ զեկույցում այն չպետք է առանձնացվեր որպես առանձին իրավունք, այլ պետք է միացվեր արդար դատաքննությանը վերաբերող տվյալներին: Այդ հարցի վերաբերյալ դիտողությունը տեղին է և ընդունելի:

8. Այս կետում մեջբերում է արված զեկույցի 3.2 կետից. «դատարանները կալանավորման թույլտվություններ տալիս չեն ստուգում մեղադրանքի հիմնավորվածությունը, անտեսում են խափանման միջոցը կալանք ընտրելու հիմք տվող տվյալների բացակայությունը, հազվադեպ են կիրառում գրավը, որպես նախնական կալանքին փոխարինող այլընտրանքային խափանման միջոց»:

Այս կապակցությամբ **նկատառումներում** ասված է. «**Պաշտպանի նման եզրահանգումներն անընդունելի են և անհիմն, քանի որ բարձրացված հարցը բացառապես դատարանի վերահսկողության ներքո գտնվող խնդրի մասին է**»: Այնուհետև վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 6-րդ մասը, հետևություն է արված. «**դատարանների որոշումները, ներառյալ՝ կալանքը, որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, կարող են վերանայվել միայն վերադաս դատարանի կողմից: Բնականաբար, որոշման հիմնավորվածությունը և օբյեկտիվությունը կարող է վիճարկվել միայն վերադաս դատարան, ընդ որում՝ այդ որոշումը վերջինիս կողմից բեկանվելու դեպքում միայն հնարավոր կլինի պնդել, որ դատարանը խափանման միջոցը ընտրելիս չի ստուգում մեղադրանքի հիմնավորվածությունը, անտեսում է խափանման միջոցը կալանք ընտրելու հիմք տվող տվյալների բացակայությունը**»:

Ձեկույցը երբեք էլ նպատակ չի հետապնդել ժխտելու դատական ակտը վերադաս դատարանի կողմից վերանայելու օրենսդրական սկզբունքը: Ձեկույցի 3.2 կետում խոսվել է նախնական կալանքի կիրառման ընդհանուր պրակտիկայի մասին և խոսքն այն մասին է, թե քրեական հետապնդման մարմինը և դատարանը խափանման միջոց կիրառելիս որքանով են պահպանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջները և խափանման միջոցը կալանք ընտրելիս, որքանով է հիմնավորված լինում նույն 135-րդ հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերում թվարկված հիմքերի առկայությունը, որքանով են հաշվի առնվում հոդվածի 3-րդ մասի 1-9-րդ կետերով նշված հանգամանքները, դատարանը որքանով է անդրադարձ կատարում դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածին՝ գրավի կիրառման հնարավորությանը: Դա վերաբերում է ոչ միայն առաջին ատյանի, այլ նաև հաջորդ ատյանի դատարաններին, որոնք նույնպես չեն վերացնում խափանման միջոցը կալանք ընտրելու մասին չհիմնավորված որոշումը: Եթե հաջորդ դատական ատյանի կողմից հիմնականում ուղղվել են նախորդ ատյանի դատարանների սխալները, զեկույցում այդ մասին խոսելու հարկ ընդհանրապես չէր լինի:

Այս խնդիրը կա, այն քննարկման առարկա է դարձել նաև տարբեր հասարակական կազմակերպությունների անցկացրած սեմինարներում:

9. Ձեկույցի 3.7 կետի վերաբերյալ քննադատությունը դարձյալ կապվում է այն հանգամանքի հետ, որ վերադաս դատարանը դատական ակտը չի բեկանել, հետևաբար անարդար վճռի մասին խոսելը սխալ է: Մինչդեռ զեկույցի այդ կետում վկայակոչվել են պետական կարիքների համար տարածքներ վերցնելու վերաբերյալ վեճերով վճիռները և նման վեճերով վճիռների հիմնական մասի անարդարացի լինելը /թեկուզև դրանք չեն բեկանված/, սակայն դրանց անարդար լինելն ակնհայտ է, ինչը կարելի է ապացուցել ցանկացած պահի:

Պետք է նկատի ունենալ նաև, որ զեկույցում խոսվում է ընդհանուր դատական համակարգի մասին ընդհանրապես, այսինքն՝ որպես մեկ միասնական օրգանիզմի և դժգոհությունը վերաբերում է նաև վերադաս դատարանին:

10. ԴԱՀԿ ծառայության աշխատանքներին զեկույցում տրված գնահատականները հիմնավորելու համար կարող է բավարար համարվել հենց միայն հասանելիք աշխատավարձերը բռնագանձելու վերաբերյալ վճիռների չկատարումը: Դա վերաբերում է ոչ միայն «Նաիրիտ»-ի աշխատողների աշխատավարձին, այլ նաև Վանաձորի մանրաթելերի գործարանի, ուղևորատրանսպորտային ձեռնարկության, «Դվին» հյուրանոցի և այլ հաստատությունների աշխատողների աշխատավարձերին:

11. «Նաիրիտ» գործարանից ԴԱՀԿ ծառայության կողմից գումարներ չգանձելու վերաբերյալ զեկույցում ասվածի իմաստը Ձեր նկատառումներում աղավաղվել է: Չեկույցում ասված է, որ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ կետը հակասում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածով ամրագրված սկզբունքին: Ասված է նաև, որ 38-րդ հոդվածի 3-րդ կետով հարկադիր կատարողի համար սահմանված է կատարողական վարույթը կասեցնելու իրավունք և ոչ թե պարտականություն: Հարկադիր կատարողը չարաշահել է այդ իրավունքը, քանի որ հաշվի չի առել կասեցվող կատարողական վարույթները աշխատավարձի դիմաց հասանելիք գումարների գանձմանը վերաբերելու հանգամանքը:

Այդպիսի չարաշահումները բացառելու նպատակով է, որ առաջարկվում է 38-րդ հոդվածի 3-րդ կետի վերացումը:

12. Չեկույցի 3.7 կետում խոսվել է նաև պետական տուրքը չվճարելու հիմքերով հայցադիմումների վերադարձման օրենքով ամրագրված կարգի մասին՝ նկատի ունենալով, որ ոչ միշտ է հնարավոր տուրքից ազատման կամ տուրքի վճարումը հետաձգելու համար դատարանին բավարար հիմքեր ներկայացնել: **Նկատառումներում** գուր է ամենայն լրջությամբ հետևություն արվել, թե իբր Պաշտպանը հաշվի չի առել «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված արտոնությունները:

13. **Նկատառումների** 13-րդ կետում դարձյալ նույն պնդումներն են «կայացած» դատական համակարգի վերաբերյալ, ինչի մասին խոսվել է 8-րդ և 9-րդ կետերում:

14. **Նկատառումների** ամբողջ տեքստում հատկապես նկատելի է իրավական անտեղյակության մեջ Պաշտպանին մեղադրելու անթաքույց ձգտումը: Հավանաբար նման անթաքույց ձգտմամբ է պայմանավորված այն, որ **Նկատառումների** 14-րդ կետում ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի իմաստին տրվել է տարածական մեկնաբանություն՝ գտնելով, որ իբր քրեական դատավարությունում տուժողը նույնպես կարող է **պաշտպան** ունենալ: Անտեսվել է այն, որ Սահմանադրության նույն հոդվածում **իրավաբանական օգնություն** ստանալու իրավունքն առանձնացվել է **պաշտպան** ունենալու իրավունքից: ՀՀ քրեական դատավարությունում պաշտպան ունենալու իրավունքից օգտվում են միայն կասկածյալը, մեղադրյալը և ամբաստանյալը: Տուժողը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը կարող են ունենալ ոչ թե պաշտպան, այլ ներկայացուցիչ:

Սահմանադրությամբ ամրագրված իրավաբանական օգնություն ստանալու յուրաքանչյուրի իրավունքը դատավարության օրենսդրությամբ չի ամրագրված և իմաստը չի բացահայտված: Դատավարական ընթացակարգին ծանոթ յուրաքանչյուր ոք կարող է վկայել այդ սկզբունքի վերացական լինելու մասին:

Քրեական դատավարության ընթացակարգին ծանոթ յուրաքանչյուրը կարող է նաև բացատրել, թե ինչ է նշանակում «փաստացի» կասկածյալ: Չեկույցում նկատի է առնվել այն, որ քրեական գործը հաճախակի հարուցվում է ոչ թե կոնկրետ փաստի առթիվ, որով ապագա կասկածյալը, մեղադրյալը դեռևս հայտնի չէ, այլ կոնկրետ անձի նկատմամբ և քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ ուղղակի գրվում է. «Քաղաքացի «Իքսի» կողմից առանձնապես խոշոր չափերի հափշտակություն կատարելու վերաբերյալ»: Այդ «Իքսը» նման որոշմամբ փաստացի դրված է լինում կասկածյալի իրավիճակում, սակայն կասկածյալի դատավարական կարգավիճակ չի կարող ունենալ,

քանի դեռ չի ձերբակալվել կամ նրա նկատմամբ չի ընտրվել խափանման միջոց և նա ամիսներով պարբերաբար կանչվում է քննչական մարմին և հարցաքննվում որպես վկա:

Այսպիսի անձանց մասին է, որ ասված է, թե փաստացի դրված են կասկածյալի վիճակում, սակայն չեն օգտվում կասկածյալի իրավունքներից:

15. Այս կետում բերված մեջբերումը չի համապատասխանում զեկույցի 3.14 կետի վերջին պարբերությանը, և որտեղից է վերցված, հայտնի չէ:

16. **Նկատառումների** 16-րդ կետում Աշխատանքային պետական տեսչության մասին արված դիտողության հետ կարելի է համաձայնվել: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ մասին օրենքը ստորագրվել է ՀՀ նախագահի կողմից 19.04.05թ. և հրապարակվել է 24.04.05թ.՝ զեկույցը կազմելուց հետո:

17. ԱրմենՏելի հարցով ես շարունակում եմ մնալ իմ տեսակետին և կարծում եմ, որ հեռահաղորդակցության ներկա վիճակը հակառակը չի ապացուցում:

18. Նոտարական ծառայությունը մեր դիտարկումներով դարձել է ամենաշատ կամայական զանձումներ կատարող ծառայություններից մեկը: Այդ զանձումները կանոնակարգելու անհրաժեշտությունը, իմ կարծիքով, առկա է, և ես պատրաստ եմ Ձեզ հետ քննարկել խնդիրը:

19. Նկատառումների 19-րդ կետի կապակցությամբ բավարար կլինեք ընդունելը, որ Պաշտպանն ինքն է որոշում, թե ինչ պետք է ներառել իր տարեկան զեկույցում և չեմ կարծում, թե Պաշտպանին սովորեցնելը նաև այդ հարցում, տեղին էր:

20. Վերջապես ինչ մեծ հայտնագործություն է, որ հայոց լեզվի բառապաշարից դեն է նետվել «ձեռնարկություններ» բառը, մոռանալով, որ «ձեռնարկատեր» անվանումը պահպանվել է հենց նոր ուժի մեջ մտած աշխատանքային օրենսգրքում: Նախկին աշխատանքային օրենսգիրքը, որը գործել է մինչև 2005թ. հունիսի 21-ը, լայնորեն օգտագործել է այդ հասկացությունը՝ անկախ ՀՀ քաղաքացիական օրենսգրքից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 227 հոդվածի 4-րդ մասում ասված է. «**Ձեռնարկություններին, հիմնարկներին, կազմակերպություններին, զորամասերին պատկանող շինություններում առգրավումը և խուզարկությունը կատարվում է...**»: Դրա համար քրեական դատավարության օրենսգրքի հեղինակները չեն քննադատվել:

Ամփոփելով ամբողջ ասվածը, կարելի է հետևություն անել, որ **նկատառումներով** անհաջող փորձ է արվել վարկաբեկել և արժեզրկել Պաշտպանի տարեկան զեկույցն ամբողջապես:

Սակայն ես գտնում եմ, որ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրներն աշխատանքային կարգով համատեղ քննարկելու միջոցով հնարավոր կլինի ստեղծել Պաշտպանի և Արդարադատության նախարարության արդյունավետ համագործակցություն, որը կարող է բարձրացնել մարդու իրավունքների պաշտպանության դրվածքը ցանկալի աստիճանի: Ձեզ հետ ունեցած մեր վերջին հանդիպման ժամանակ անցկացված համատեղ քննարկումը դրա վկայությունն է:

Հավելված 4.8.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ
ՊԱՐՈՆ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Հարությունյան

Ձեր 17.05.2004թ. թիվ 35/321 գրությամբ, ի պատասխան ՀՀ Վարչապետին մեր հասցեագրած միջնորդության, փորձ է արվել ցանկացած ճանապարհով արդարացնել ՀՀ ոստիկանության ստորաբաժանանումների ս/թ մարտ-ապրիլյան հանրահավաքները կանխելուն ուղղված բոլոր այն գործողությունները, որոնք, իմ կարծիքով, հեռու են օրինական լինելուց:

Ինձ համար անընդունելի է նամակում օգտագործված ոճը, որով ճիգ է արվում պաշտպանել գերատեսչական շահը՝ քողարկված պետական շահով:

Գրությամբ օրենքին տրված Ձեր սուբյեկտիվ մեկնաբանությունները, որոնք չքողարկված հեզմանքով և առարկություն չհանդուրժող տոնով ներկայացվում են որպես բացարձակ ճշմարտություններ, կասկածի տակ են դնում հավատը, որ ոստիկանությունում կվերանայվեն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակումների թույլատրելիության սահմանների նկատմամբ նրանց մոտեցումները: Այդպիսի մեկնաբանություններն ինքնին վկայում են, որ մեր գրության մեջ նկարագրված գործողությունները, որոնք գնահատել ենք որպես ոստիկանության կողմից թույլ տրված օրենքի խախտումներ, ձեռնարկվել և իրականացվել են առնվազն ոստիկանության հանրապետական մարմնի գիտությամբ:

Գրությունից և նրա մեջ պարունակվող իրավական դասերից հետևում է, որ ոստիկանությունը ղեկավարվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988թ. «ՄՍՀՄ-ում ժողովների, միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի կազմակերպման և անցկացման կարգի մասին» հրամագրով՝ անտեսելով, որ «Հայաստանի անկախության մասին» Հոչակագրի հոդված 2-ի մաս 2-ի համաձայն՝ «Հայաստանի ամբողջ տարածքում գործում են միայն ՀՀ Սահմանադրությունը և օրենքները», որ 1995թ. ընդունված ՀՀ Սահմանադրության «Անցումային դրույթներ» գլխի հոդվածի 116-ի կետ 2-ով հռչակված է՝ «ՀՀ օրենքները և մյուս իրավական ակտերը գործում են այնքանով, որքանով չեն հակասում Սահմանադրությանը», դրանով իսկ բացառելով ԽՍՀՄ օրենքների գործելը Հայաստանի Հանրապետությունում:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նույն 1988թ. հրամանագրով սահմանվել է միայն պատասխանատվություն՝ ժողովների, միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի կազմակերպման ու անցկացման սահմանված կարգը խախտելու համար, իսկ նման կարգ ՀՀ որևէ օրենքով սահմանված չի եղել: Հետևաբար «Հայաստանի անկախության մասին» Հոչակագրի ընդունումից հետո ՀՀ ԳԽ նախագահության 1988թ. հրամանագիրը չէր կարող կիրառվել, քանի դեռ օրենքով դրանց անցկացման կարգ չէր սահմանվել:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ի վրա հենվելով, տրանսպորտային միջոցների տեղաշարժի նկատմամբ կիրառված արգելքներն արդարացնելը հարկ չեն համարում նույնիսկ քննարկել, հիշատակելով միայն «Իրավակարգի պահպանման նպատակով պաշտոնատար անձանց վարքի կողքսի բովանդակության» հոդված 2-ը, ըստ որի՝ իրավակարգի պահպանման նպատակով իրենց պարտականությունները կատարելիս, պաշտոնատար անձինք պետք է հարգանք դրսևորեն մարդկային արժանապատվության նկատմամբ, պահպանեն և պաշտպանեն մարդու իրավունքները բոլոր անձանց նկատմամբ:

Դուք օրինական եք հայտարարում վարչական իրավախախտումների վերաբերյալ կազմված բոլոր արձանագրություններն այն դեպքում, երբ իմ ձեռքի տակ են նման տասնյակ գործերի կրկնօրինակները, որոնցով թույլ տրված կեղծիքները, անձերին վերագրված խախտման հորինված լինելը հեշտ է ապացուցել:

Հարկ են համարում շեշտել, որ Մարդու իրավունքների պաշտպանի առաքելությունը ես տեսնում եմ երկրում օրենքի գերակայության հաստատման ճանապարհով մարդու իրավունքների պաշտպանվածությունը: Այդ նպատակով ես և իմ աշխատակազմը անում ենք հնարավոր ամեն ինչ երկիրը իրավական դարձնելու գործընթացին նպաստելու համար:

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՍԱՀՍԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Տ. ԹՈՐՈՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Թորոսյան

Ձեզ ուղարկելով ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը վերաբերող լրացուցիչ դրույթներ ավելացնելու, ինչպես նաև նախատեսված դրույթները վերախմբագրելու վերաբերյալ մեր առաջարկները, խնդրում եմ դրանց նույնպես անդրադառնալ նախագծի հետագա քննարկումների ընթացքում:

Առդիր՝ առաջարկը 5 թերթից:

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծում
Մարդու իրավունքների պաշտպանին վերաբերող
լրացուցիչ հոդվածներ նախատեսելու մասին**

ՀՀ Սահմանադրությամբ և սահմանադրության փոփոխությունների նախագծով կարևորված են մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը հիմնադրվում է ի պաշտպանություն այդ իրավունքների և ազատությունների: Հետևաբար, այն պետք է կարևորվի որպես սահմանադրական հաստատություն՝ Պաշտպանի նշանակման և հետևանքալի կարգը, լիազորություններն ու անկախության երաշխիքները Սահմանադրությամբ ամրագրելու միջոցով: Մինչդեռ Սահմանադրության փոփոխությունների նախագծով մարդու իրավունքների պաշտպանը հոլովված է հպանցիկ:

Սահմանադրության փոփոխությունների արդեն 2-րդ ընթերցմամբ ընդունված նախագծում Պաշտպանի մասին ասված է հետևյալը.

1. Փոփոխությունների նախագծի 17-րդ հոդվածով որպես Սահմանադրության 18-րդ հոդվածի 2-րդ մաս ամրագրված է.«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալ Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը»:

2. Նախագծի 85-րդ հոդվածով որպես Սահմանադրության 83-րդ հոդվածի 4-րդ կետ /ԱԺ լիազորությունները նշանակումներ կատարելու հարցում/ ամրագրվում է. «Նշանակում է Մարդու իրավունքների պաշտպանին: Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների դադարեցման հիմքերը սահմանվում են օրենքով»:

3. Նախագծի 107-րդ հոդվածով որպես Սահմանադրության 101-րդ հոդվածի 8-րդ կետ /Սահմանադրական դատարան դիմելու իրավունքի մասով/ ամրագրված է. «Մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթների համապատասխանության հարցերով»:

Այս երեք կետից բացի նախագիծը Պաշտպանի հաստատության մասին այլ դրույթներ չի նախատեսում:

Սահմանադրության 18-րդ հոդվածում, ամրագրելով իրավունքի պաշտպանության համար Պաշտպանի աջակցությունն ստանալու յուրաքանչյուրի իրավունքը և այն ստանալու հիմքերն ու կարգը թողնելով օրենքի կարգավորմանը, տեղ է թողնվում այդ հիմքերի ու կարգի մշտական փոփոխությունների, քանի որ օրենքը փոփոխելի է:

Կարող է, օրինակ, Պաշտպանի միջամտության ոլորտից դուրս թողնվել մարդու իրավունքների և ազատությունների հարցերով պետական իշխանության այս կամ այն մարմնի գործունեությունը:

Առաջարկվում է՝ Սահմանադրության 18-րդ հոդվածի 2-րդ մասը, նախագծով առաջարկվածի փոխարեն, ձևակերպել հետևյալ բովանդակությամբ.

«Յուրաքանչյուր ոք, համաձայն օրենքով սահմանված սկզբունքների, իրավունք ունի աջակցություն ստանալու նպատակով դիմել Մարդու իրավունքների պաշտպանին, երբ կարիք ունի իր իրավունքները կամ հիմնարար ազատությունները պաշտպանելու հանրային իշխանության մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց խախտումներից»:

Նախագծով Սահմանադրության 83-րդ հոդվածի 4-րդ կետով առաջարկվող լրացումը վերաբերում է միայն Մարդու իրավունքի պաշտպան նշանակելու ԱԺ իրավունքին և այն բանին, որ լիազորությունների դադարեցման հիմքերը սահմանվում են օրենքով: Հարկ չի համարվել նույնիսկ ասելու, թե Ազգային ժողովն ինչ կարգով է նշանակում Պաշտպանին: Խոսք չկա նրա տեղակալի մասին ընդհանրապես, այն դեպքում, որ ըստ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի, Պաշտպանի տեղակալին նույնպես նշանակում է ԱԺ-ն՝ պաշտպանի ներկայացմամբ:

Առաջարկվում է Սահմանադրության 83-րդ հոդվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Նշանակում է Մարդու իրավունքների պաշտպանին: Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացմամբ, նշանակում է նրա տեղակալին»:

Այնուհետև հարկ կա Մարդու իրավունքների պաշտպանին Սահմանադրությամբ հատկացնել առանձին գլուխ՝

ԳԼՈՒԽ 6-1

Մարդու իրավունքների պաշտպանը

Հոդված 103-1. Մարդու իրավունքների պաշտպանը ինքնուրույն և անկախ պաշտոնատար անձ է, որը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի համաձայն, իրականացնում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները, գործունեության բնագավառները և կարգը սահմանվում են օրենքով:

Հոդված 103-2.

1/ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության 35 տարին լրացած այն քաղաքացին, ով ունի բարձրագույն կրթություն, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, հասարակության մեջ վայելում է բարձր հեղինակություն:

2/ Մարդու իրավունքների պաշտպանին նշանակում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների 3/5-ից ավելիով՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի 1/5-ի կողմից առաջադրված թեկնածուներից 6 տարի ժամանակով:

Նույն անձը Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում չի կարող նշանակվել միմյանց հաջորդող երկու ժամկետից ավելի:

3/ Պաշտոնի նշանակվելիս Մարդու իրավունքների պաշտպանն Ազգային ժողովի պատգամավորների առջև տալիս է հետևյալ երդումը.

«Ստանձնելով մարդու իրավունքների պաշտպանի պարտականությունները՝ երդվում եմ, հավատարիմ լինելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ու օրենքներին, հասարակական համակեցության ու արդարության սկզբունքներին, պաշտպանել մարդու ու քաղաքացու իրավունքներն ու հիմնարար ազատությունները»:

Հոդված 103-3. Մարդու իրավունքների պաշտպանը չի կարող զբաղեցնել պետական կամ այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Նա չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ հանրային իշխանության մարմինների ընտրություններում առաջադրել իր թեկնածությունը, մասնակցել նախընտրական քարոզչությանը:

Հոդված 103-4. Մարդու իրավունքների պաշտպանն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին: Նա չի ենթարկվում պետական կամ տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի:

Մարդու իրավունքների պաշտպանը պարտավոր չէ բացատրություններ տալ, այդ թվում նաև հարցաքննվել որպես վկա իր մոտ գտնվող բողոքի կամ փաստաթղթի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթանալու այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Նախորդ տարվա իր գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտումների մասին Մարդու իրավունքների պաշտպանը Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին ներկայացնում է զեկույց: Հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաև խախտումները զանգվածաբար չվերացվելու դեպքերում Պաշտպանը կարող է հանդես գալ արտահերթ հրապարակային զեկույցներով:

Հոդված 103-5. Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետը լրանալուց հետո նոր Պաշտպանի նշանակմանը հաջորդող օրվանից:

Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են միայն, եթե նա՝

- ա/ կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
- բ/ խախտել է Սահմանադրության 103-3 հոդվածի պահանջները,
- գ/ օրինական ուժի մեջ է մտել դատարանի մեղադրական դատավիճիռը նրա նկատմամբ,
- դ/ հրաժարական է ներկայացրել Ազգային ժողովին իր լիազորությունները վայր դնելու մասին,
- ե/ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած,
- զ/ առողջական վիճակի պատճառով ոչ պակաս, քան 6 ամիս անընդմեջ իր լիազորությունները չի կատարել,
- է/ մահացել է:

Սույն հոդվածի ա, բ և գ կետերով նախատեսված հիմքերով Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցն Ազգային ժողով ներկայացնելու իրավունք ունեն Հանրապետության Նախագահը և պատգամավորների ընդհանուր թվի 1/5-ը: Այս դեպքում Ազգային ժողովը Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի 3/5-ից ավելիով:

Սույն հոդվածի գ, ե, է կետերով սահմանված հիմքերով Ազգային ժողով բացի Հանրապետության Նախագահից կարող է դիմել նաև ցանկացած պատգամավոր: Այս հիմքերի առկայության դեպքում, Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների դադարեցման մասին միայն կազմվում է արձանագրություն և կայացվում է որոշում:

«դ» կետի հիմքերով հարցն ԱԺ քննարկմանը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահը և որոշումն ընդունվում է քվերակությանը մասնակցած պատգամավորների ձայների պարզ մեծամասնությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում նոր Պաշտպան պետք է նշանակվի նախորդի լիազորությունների դադարման օվանից մեկ ամսվա ընթացքում: Սույն հոդվածի «ա», «բ» և «դ» կետերի հիմքերով լիազորությունները դադարեցված Մարդու իրավունքների պաշտպանը պաշտոնավարում է մինչև նոր Պաշտպանի նշանակման հաջորդ օրը: Մնացած դեպքերում, մինչև նոր Պաշտպանի նշանակումը, Պաշտպանի պարտականությունները կատարում է նրա տեղակալը:

Հոդված 103-6. Մարդու իրավունքների պաշտպանն իր լիազորությունների ողջ ժամանակի ընթացքում օժտված է անձեռնմխելիությամբ: Նրա նկատմամբ քրեական հետապնդում չի կարող հարուցվել, նա չի կարող կալանավորվել կամ ձերբակալվել: Պաշտպանը, նրա բնակարանը չեն կարող խուզարկվել առանց Ազգային ժողովի համաձայնության: Պաշտպանի անձեռնմխելիությունը տարածվում է նաև նրա ուղեբեռների, նամակագրության, նրա օգտագործած կապի միջոցների, ինչպես նաև նրան պատկանող փաստաթղթերի վրա:

Մարդու իրավունքների պաշտպանին հանցանքի վայրում բռնելու դեպքում ձերբակալումն իրականացնող պաշտոնատար անձն անմիջապես այդ մասին պարտավոր է տեղեկացնել Ազգային ժողովին, որը պետք է որոշում ընդունի դրա հետագա կիրառման համար համաձայնություն տալու մասին: 24 ժամվա ընթացքում նման համաձայնություն չտալու դեպքում Պաշտպանն անհապաղ պետք է ազատ արձակվի:

Հոդված 103-7 Մարդու իրավունքների պաշտպանի տեղակալը նշանակվում է Ազգային ժողովի կողմից Պաշտպանի առաջարկած թեկնածուներից Պաշտպանի նշանակման համար նախատեսված կարգով ու պայմաններով և ունի անկախության նույն երաշխիքները՝ Պաշտպանի հանձնարությամբ նրա լիազորություններն իրականացնելիս կամ օրենքով նախատեսված դեպքերում նրան փոխարինելիս:

Տեղակալի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերն ու կարգը սահմանվում է օրենքով:

Հոդված 103-8. Մարդու իրավունքների Պաշտպանի գործունեությունն ապահովելու համար Պաշտպանն ինքնուրույն ձևավորում է իր աշխատակազմը:

Մարդու իրավունքների պաշտպանն ու իր աշխատակազմը ֆինանսավորվում են պետական բյուջեից առանձին տողով: Բյուջետային հայտը կազմում և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում Պաշտպանը, որն առանց փոփոխության ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում:

Կառավարությունը Պաշտպանի ներկայացրած ծախսերի չափի վերաբերյալ իր առարկությունները պետք է հիմնավորի բյուջեի քննարկման ընթացքում:

Պաշտպանն ինքնուրույն է մշակում և իրագործում իրեն վերապահված միջոցների ծախսման հաշվարկը:

Թվարկված նորմերը հիմնականում նույնությամբ ամրագրված են նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում: Սակայն, քանի որ Պաշտպանի հաստատությունն ինքնին Սահմանադրական հաստատություն է, դրանք Սահմանադրությամբ չամրագրելը նսեմացնում է Պաշտպանի դերն ու նշանակությունը:

Ասվածին զուգահեռ, կարիք ունի լրացման նաև նախագծով Սահմանադրության 101-րդ հոդվածի 8-րդ կետով առաջարկվող լրացումը: Ըստ առաջարկվող լրացման, Պաշտպանը Սահմանադրական դատարան կարող է դիմել միայն Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցով, այսինքն՝ օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության, վարչապետի տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների որոշումների՝ Սահմանադրությանը համապատասխան լինելու խնդրով միայն: Պաշտպանը փաստորեն իրավունք չի ունենում վիճարկելու դատական ակտը, եթե այդ ակտով խախտվել է մարդու սահմանադրական իրավունքը՝ չի պահպանվել անմեղության կանխավարկածի սկզբունքը, չի ապահովվել պաշտպան ունենալու իրավունքը, կիրառվել է պատիժ սահմանող օրենք, որը հանցանքի կատարման պահին գոյություն չի ունեցել կամ հրապարակված չի եղել և այլն:

Նման հիմքերով դատական ակտը հակասահմանադրական ճանաչելու միջնորդությամբ Սահմանադրական դատարան դիմելու Պաշտպանի իրավունքը կլինի կարևորագույն երաշխիք դատական սխալներով իրավունքների և ազատությունների խախտումներից մարդուն պաշտպանելու համար:

Այս հիմնավորմամբ առաջարկվում է Սահմանադրության 101-րդ հոդվածի 8-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Մարդու իրավունքների պաշտպանը Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի, ինչպես նաև քրեական, քաղաքացիական և վարչական իրավախախտումներով ընդունված դատական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով»:

Կարծիք թիվ 221 (2000)*
Հայաստանի դիմումը Եվրոպայի խորհրդին անդամակցելու համար**

1. Հայաստանի Հանրապետությունը դիմեց Եվրոպայի խորհրդի անդամակցության համար 1996թ. մարտի 7-ին: 1996թ. մայիսի 15-ին ընդունված թիվ (96) 21 որոշմամբ նախարարների կոմիտեն Խորհրդարանական վեհաժողովին հրավիրեց կարծիք հայտնել սույն խնդրանքի վերաբերյալ՝ համաձայն կանոնադրական թիվ 51 (30A) որոշման:

2. Հայաստանի խորհրդարանը հատուկ հյուրի կարգավիճակ ձեռք բերեց Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում 1996թ. հունվարի 26-ին: Այս դիմումը քննարկվեց Եվրոպայի խորհրդի ընդլայնման վերաբերյալ 1994թ. ընդունված թիվ 1247 հանձնարարականի ընդունման լույսի ներքո, որում վեհաժողովը մատնանշում էր, որ «Եվրոպայի հետ իրենց ունեցած մշակութային կապերի պարագայում Հայաստանը, Ադրբեյջանն ու Վրաստանը հնարավորություն կունենան դիմել անդամակցության համար, եթե նրանք ակնհայտ մատնանշեն Եվրոպայի մաս համարվելու իրենց ցանկությունը»:

3. Վեհաժողովի պատվիրակությունները հետևել են 1998թ. մարտի նախագահական և 1995թ. հուլիսի և 1999թ. մայիսի ընդհանուր ընտրություններին:

4. 1996թ. ի վեր Հայաստանը մասնակցություն է ցուցաբերել Եվրոպայի խորհրդի տարբեր գործունեություններին միջկառավարական համագործակցության և օժանդակության ծրագրերի, իսկ վեհաժողովի ու նրա հանձնաժողովների աշխատանքներին՝ հատուկ հյուրի կարգավիճակ ունեցող պատվիրակության միջոցով:

5. Հայաստանը Եվրոպայի խորհրդի մշակութային կոնվենցիայի, Եվրոպայի խորհրդի ազգային փոքրամասնությունների շրջանակային կոնվենցիայի ստորագրող կողմ է, Տարերային և տեխնոլոգիական աղետների կանխարգելման, նրանցից պաշտպանվածության և օգնության կազմակերպման մասին բաց մասնակի համաձայնագրի կողմ և Վենետիկյան հանձնաժողովի թեկնածու անդամ, որի հետ սերտ համագործակցություն է ծավալել: Վեհաժողովը նաև նկատի է առնում այն փաստը, որ Հայաստանը դիմում է ներկայացրել Հանձնման մասին եվրոպական կոնվենցիային և Տարածքային համայնքների կամ իշխանության մարմինների միջև անդրսահմանային համագործակցության եվրոպական շրջանակային կոնվենցիային անդամակցության վերաբերյալ, նաև վերջերս ստորագրել է Եվրոպայի խորհրդի վեց այլ կոնվենցիաներ:

6. Վեհաժողովը համարում է, որ Հայաստանը շարժվում է դեպի ժողովրդավարական, բազմակարծ հասարակություն, որտեղ հարգում են մարդու իրավունքներն ու օրենքի գերիշխանությունը, և համաձայն Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 4-րդ հոդվածի, կարող է և ցանկություն ունի հետամուտ լինել ժողովրդավարական բարեփոխումների նախաձեռնմանը, որպեսզի իր ողջ օրենսդրությունը և գործառույթները համապատասխանեցնի Եվրոպայի խորհրդի սկզբունքներին և չափանիշներին:

7. Վեհաժողովին խնդրելով կարծիք տրամադրել անդամակցության դիմումի վերաբերյալ, նախարարների կոմիտեն վերստին նշեց, որ Եվրոպայի խորհրդի և Կովկասի

* Վեհաժողովի քննարկումը 2000թ. հունիսի 28-ին (21-րդ նստաշրջան) (տե՛ս փաստաթուղթ Թիվ 8747, Քաղաքական հարցերով հանձնաժողովի զեկույցը. զեկուցող՝ պրն. Վուլչիկ, և փաստաթուղթ Թիվ 8756, Իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողովի կարծիքը, զեկուցող՝ պրն. Սպինդեկեզեր: Տեքստն ընդունվել է վեհաժողովի կողմից 2000թ. հունիսի 28-ին (21-րդ նստաշրջանին):

** Ոչ պաշտոնական թարգմանություն:

երկրների միջև առավել սերտ փոխհարաբերությունները պահանջում են ոչ միայն էական ժողովրդավարական բարեփոխումներ, այլև հակամարտությունները խաղաղ ճանապարհով հանգուցալուծելու պատրաստակամություն:

8. Խորհրդարանական վեհաժողովը հավատում է, որ Հայաստանի և Ադրբեջանի անդամակցությունը կարող է նպաստել վստահության միջավայրին, որն անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հանգուցալուծման համար:

9. Վեհաժողովը համարում է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը ամենաօպտիմալ կառույցն է հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունների համար:

10. Վեհաժողովը նկատի է առնում ՀՀ նախագահի նամակը, որում վերջինս պարտավորվում է հարգել հրադադարի համաձայնությունը՝ նախքան հակամարտության վերջնական հանգուցալուծումը, և շարունակել խաղաղ բանակցության ճանապարհով հակամարտության կարգավորումը բոլոր ներգրավված կողմերի համար ընդունելի փոխզիջումներով:

11. Երկու երկրների նախագահների միջև հանդիպումների հաճախականությունն ավելացել է: Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի խորհրդարանների խոսնակները որոշել են տարածաշրջանային խորհրդարանական համագործակցություն ծավալել, որը կներառի մասնավորապես խորհրդարանների խոսնակների հանդիպումներ և խորհրդարանական սեմինարների անցկացում վերոնշյալ երեք երկրների մայրաքաղաքներում և Ստրասբուրգում: Տարածաշրջանում առաջին հանդիպումը, որն անցկացվեց Թբիլիսիում 1999թ. սեպտեմբերին, հնարավոր դարձրեց Հայաստանի և Ադրբեջանի խորհրդարանական պատվիրակությունների միջև ստեղծել լարվածության բուլացման և վստահության մթնոլորտ:

12. Վեհաժողովը կոչ է անում Հայաստանի և Ադրբեջանի իշխանություններին շարունակել երկխոսությունը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ հանգուցալուծման և տարածաշրջանային համագործակցության խթանման նպատակով:

13. Խորհրդարանական վեհաժողովը նկատի է առնում ՀՀ նախագահի, խորհրդարանի խոսնակի, վարչապետի և խորհրդարանում ներկայացված քաղաքական կուսակցությունների նախագահների նամակները և նշում է, որ Հայաստանը ստանձնում է հետևյալ պարտավորությունները՝

i. կոնվենցիաներ

ա. անդամակցություն ստանալու պահին ստորագրել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) և նրան լրացնող թիվ 2 և թիվ 11 արձանագրությունները, ինչպես նաև թիվ 1, 4, 6 և 7 արձանագրությունները,

բ. վավերացնել ՄԻԵԿ և նրան լրացնող թիվ 1, 4, 6 և 7 արձանագրությունները անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում,

գ. ստորագրել և վավերացնել Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիան և դրա արձանագրությունները անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում,

դ. ստորագրել և վավերացնել Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում,

ե. ստորագրել և վավերացնել Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում,

զ. ստորագրել և վավերացնել անդամակցություն ձեռք բերելուց հետո երկու տարվա ընթացքում Տարածքային համայնքների կամ իշխանության մարմինների միջև անդրսահմանային համագործակցության եվրոպական շրջանակային կոնվենցիան և դրա լրացուցիչ արձանագրությունները, ինչպես նաև հանձնման, քրեական հարցերում

փոխադարձ օժանդակության, հանցագործ գործունեությունից ստացված եկամուտների լվացման, որոնման, զավթման և բռնագրավման և բանտարկված անձանց փոխանցման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի կոնվենցիաները՝ միաժամանակ կիրառելով դրանցում առկա հիմնարար սկզբունքները,

է. ստորագրել Եվրոպական սոցիալական խարտիան անդամակցություն ձեռք բերելուց հետո երկու տարվա ընթացքում և վավերացնել այն անդամակցություն ձեռք բերելուց հետո երեք տարվա ընթացքում՝ ջանալով կիրառել Խարտիայի սկզբունքներին համապատասխան քաղաքականություն,

ը. ստորագրել Եվրոպայի խորհրդի արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին գլխավոր համաձայնագիրը և համապատասխան արձանագրությունները անդամակցություն ձեռք բերելու պահին և վավերացնել դրանք անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում,

iii. հակամարտությունը Լեռնային Ղարաբաղում

ա. հետամուտ լինել այս հակամարտության միայն խաղաղ ճանապարհով հանգուցալուծմանը,

բ. օգտագործել Լեռնային Ղարաբաղի հայերի նկատմամբ ունեցած զգալի ներգործությունը հակամարտության հանգուցալուծմանը նպաստելու նպատակով,

գ. միջազգային և ներքին հակասությունները կարգավորել խաղաղ միջոցներով և միջազգային իրավունքի սկզբունքների համաձայն (պարտավորություն, որը պարտադիր է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար)՝ վճռականորեն մերժելով հարևանների նկատմամբ ուժի սպառնալիքի որևէ դրսևորում,

iii. ներպետական օրենսդրություն

ա. անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում ընդունել քրեական օրենսգրքի երկրորդ (հատուկ) մասը՝ de jure վերացնելով մահապատիժը և ապաքրեականացնելով փոխադարձ համաձայնությամբ միասեռ փոխհարաբերությունները չափահասների միջև,

բ. անդամակցություն ձեռք բերելուց հետո վեց ամսվա ընթացքում ընդունել օմբուդսմենի մասին օրենքը,

գ. անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում ընդունել նոր օրենք լրատվամիջոցների մասին,

դ. անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում ընդունել նոր օրենք քաղաքական կուսակցությունների մասին,

ե. անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում ընդունել նոր օրենք ոչ կառավարական կազմակերպությունների մասին,

զ. անդամակցություն ձեռք բերելուց հետո վեց ամսվա ընթացքում ընդունել օրենք ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարություններից բանտային համակարգի, այդ թվում նաև նախնական կալանքի վայրերի և աշխատանքային գաղութների նկատմամբ պարտականությունները (հրավասությունները) արդարադատության նախարարությանը փոխանցելու մասին՝ դրանով ապահովելով համակարգի հանգամանալի բարեփոխումները և ապառազմականացումը, և երաշխավորել նշված օրենքի արդյունավետ կիրառումը՝ այն ընդունելուց հետո վեց ամսվա ընթացքում, բացառությամբ նախնական կալանքի վայրերի և աշխատանքային գաղութների արդյունավետ փոխանցման, ինչը պետք է կատարվի նշված օրենքի ընդունումից հետո մեկ տարվա ընթացքում,

է. անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում ընդունել օրենք քաղաքացիական ծառայության մասին,

ը. նախքան հաջորդ տեղական ընտրությունները փոփոխել տեղական իշխանությունների լիազորությունները կառավարող ներկա օրենսդրությունը, որպեսզի նրանց առավել մեծ պարտականություններ և անկախություն վերապահվի՝ այս ոլորտում

Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի (ԵՏՏԻԿ) հանձնարարականների համաձայն,

թ. վերացնել ընտրական նոր օրենսգրքի թերությունները մինչև հաջորդ ընտրությունները՝ մասնավորապես ուշադրություն դարձնելով ընտրական հանձնաժողովների ընթացակարգային ասպեկտներին և ընտրամատյանների ստեղծման համար պատասխանատու իշխանությունների աշխատանքին,

iv. մարդու իրավունքներ

ա. դատախիզական համակարգի համալիր բարեփոխում inter alia երաշխավորելու դատախիզական համակարգի լրիվ անկախություն և քրեական դատավարություններում դատապաշտպանի լրիվ և անմիջական մատչելիություն (անչափահասների համար՝ պարտադիր). անհրաժեշտության դեպքում ծախսերը պետք է հոգա պետությունը,

բ. երաշխավորել, որ բոլոր եկեղեցիները կամ կրոնական համայնքները, մասնավորապես նրանք, որոնց անվանում են «ոչ ավանդական», կարող են դավանել իրենց կրոնը առանց խտրականության,

գ. սերտ համագործակցել ՈԿԿ-ների հետ՝ երաշխավորելու բանտարկյալների և դատապարտվածների իրավունքների նկատմամբ հարգանքը,

դ. անդամակցության երեք տարիների ընթացքում ընդունել այլընտրանքային ծառայության մասին եվրոպական չափանիշներին համապատասխանող օրենք և միևնույն ժամանակ ներում շնորհել հանգստությունների հիմնավորմամբ զինվորական ծառայությունը մերժելու պատճառով ազատագրված կամ ուղղիչ աշխատանքի դատապարտված անձանց՝ նրանց հնարավորություն ընձեռելով ընտրություն կատարել չզինված ռազմական կամ այլընտրանքային քաղաքացիական ծառայության միջև, այլընտրանքային ծառայության մասին օրենքի ուժի մեջ մտնելուց հետո,

ե. պետական հեռուստակայանը դարձնել հանրային կայան, որը կկառավարի անկախ վարչական խորհուրդը,

v. պարտավորությունների մոնիտորինգը

ա. սերտ համագործակցել Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից իրենց ստանձնած պարտավորությունների կատարման՝ վեհաժողովի հանձնաժողովի (Մոնիտորինգային հանձնաժողով) ստեղծման մասին վեհաժողովի թիվ 1115 (1997) որոշման կիրառման համատեքստում,

բ. սերտ համագործակցել մոնիտորինգային գործընթացին, որը սկսվել է համաձայն 1994թ. նոյեմբերի 10-ին (95-րդ նստաշրջանին) նախարարների կոմիտեի ընդունած հայտարարագրի:

14. Խորհրդարանական վեհաժողովը մատնանշում է, որ Հայաստանը լիովին համաձայն է 13-րդ պարբերությունում սահմանված իր պարտավորությունների ընկալմանը և մեկնաբանությանը և նպատակ է հետապնդում՝

i. ապահովել, որ Խորհրդարանը լրիվ տեղեկացված լինի 1999թ. հոկտեմբերի 27-ի դեպքերի հետաքննությանը՝ համաձայն գործող օրենսդրության,

ii. Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը շնորհել նաև կառավարությանը, դատախազությանը, բոլոր ատյանների դատարաններին և հատուկ դեպքերում նաև անհատներին, անդամակցություն ձեռք բերելուց հետո երկու տարվա ընթացքում,

iii. բարեփոխել արդարադատության խորհուրդը՝ վերջինիս անկախությունը մեծացնելու նպատակով, անդամակցություն ձեռք բերելուց հետո երեք տարվա ընթացքում,

iv. անհապաղ հիմնել ոստիկանությունում, նախնական կալանքի վայրերում, բանտերում և բանակում վատ վերաբերմունքի մասին բողոքների գնահատման ընթացակարգ, որը համապատասխանում է Եվրոպայի խորհրդի չափանիշներին, և ապահովել, որ նման գործողություններում մեղավոր ճանաչվածները պատժվեն օրենքով,

v. կարգապահական գումարտակում գտնվելու ժամանակահատվածը առնվազն մասամբ համարել պարտադիր զինվորական ծառայության հատված և նախատեսել այդ ժամկետի կրճատման հնարավորությունը զինվորի լավ վարքի դրսևորման դեպքում,

vi. հատուկ ուշադրություն դարձնել անտուն և օրինախախտ երեխաների ճակատագրին:

15. Այս պարտավորությունների հիման վրա վեհաժողովը կարծում է, որ համաձայն Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 4-րդ հոդվածի, Հայաստանը կարող է և պատրաստակամ է կատարելու Կանոնադրության 3-րդ հոդվածի դրույթները, որոնք սահմանում են Եվրոպայի խորհրդի անդամակցության նախապայմանները:

«Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի օրենքի գերակայության և իր իրավասության ներքո բոլոր անձանց՝ մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ ունենալու սկզբունքները, ինչպես նաև պետք է անկեղծորեն և արդյունավետ համագործակցի (Եվրոպայի) Խորհրդի նպատակների իրագործման համատեքստում»:

16. Այս պարտավորություններին համապատասխանություն ապահովելու նպատակով վեհաժողովը որոշում է խիստ վերահսկել իրավիճակը Հայաստանում անդամակցություն ձեռք բերելու պահից անմիջապես հետո՝ համաձայն իր թիվ 1115 (1997) որոշման:

17. Հասկանալով, որ վերը նշված պարտավորությունները հաստատուն են և կկատարվեն սահմանված ժամանակահատվածում՝ վեհաժողովը նախարարների կոմիտեին հանձնարարում է՝

i. հրավիրել Հայաստանին անդամակցել Եվրոպայի խորհրդին,

ii. Հայաստանին հատկացնել չորս տեղ Խորհրդարանական վեհաժողովում, և խնդրում է, որ մատչելի դարձվեն անհրաժեշտ լրացուցիչ միջոցները:

18. Բացի այդ, Հայաստանին, որպես անդամ պետություն, իր պարտավորությունները կատարելու հարցում օգնելու նպատակով, վեհաժողովը նաև առաջարկում է, որ նախարարների կոմիտեն ընդլայնի Հայաստանի իշխանություններին իր աջակցությունը ժողովրդավարության զարգացման և ամրապնդման գործունեությունների շրջանակներում: Բացի այդ, վեհաժողովն առաջարկում է, որ Եվրոպայի խորհրդի զարգացման բանկը անհրաժեշտության դեպքում օժանդակություն տրամադրի :

Հավելված 6.

Լյուբլյանայի եզրակացությունները

Մենք՝ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների, այդ թվում Օմբուդսմանների հաստատությունների, ներկայացուցիչներս, նոյեմբերի 12-ին և 13-ին հավաքվելով Լյուբլյանայում, «Օմբուդսմանների և դատական մարմինների փոխհարաբերությունները» թեմայով կոնֆերանսին, փոխանակեցինք մեր փորձը և հայացքները դատական մարմինների հետ հարաբերություններում Օմբուդսմանի դերի վերաբերյալ: Մենք կարծում ենք, որ անցումային երկրների համար, որոնց մի մասը կարող է ունենալ անկայուն իրավական համակարգ, դատական իշխանությունների անկախացման կարճ ժամանակահատված և պետական մարմինների ընթացող բարեփոխումներ, առանձնապես կարևոր է, որ դատական և ոչ դատական մեխանիզմների օգտագործմամբ մարդու իրավունքների առաջընթացի և պաշտպանության վերաբերյալ պետական քաղաքականությունը ծրագրվի (i) N^oR(85)13 և (ii) N^oR97(11) հանձնարարականներին համապատասխան, որոնք մշակված են Եվրոպական խորհրդի նախարարների կոմիտեի կողմից մասնակից երկրների համար (i) Օմբուդսմանի հաստատության և (ii) մարդու իրավունքների առաջընթացի և պաշտպանության անկախ ազգային հաստատությունների ստեղծման վերաբերյալ, ինչպես նաև դատարանների անկախության, արդյունավետության և դերի վերաբերյալ N^oR(94)12 հանձնարարականին և Մարդու իրավունքների գծով Եվրոպական դատարանի արդարադատությանը համապատասխան:

Մենք ընդունում ենք հետևյալը:

Հետևություններ

1. Իրենց դատական գործառույթներն իրականացնելիս դատավորներն անկախ են և նրանց որոշումները ենթակա չեն որևէ փոփոխության, բացի օրենքով հաստատված բողոքարկման ընթացակարգերից: Գործադիր և օրենսդիր իշխանությունները պարտավոր են ապահովել դատավորների անկախությունը և բացառել այն քայլերը, որոնք կարող են սպառնալ դատավորների անկախությանը: Նաև անհրաժեշտ է ընդգծել, որ դատավորների անկախությունը բխում է նաև հասարակության շահերից:
2. Իշխանությունների տարաբաժանման կայունացած համակարգ ունեցող ժողովրդավար երկրներում, և առավել ևս այն երկրներում, որոնք ունեն ժողովրդավարության և օրենքի գերակայության առավել նոր ավանդույթներ, դատարանների անկախությունը կարևոր է, քանի որ դատարաններն առավել զգայուն են մյուս պետական մարմինների ոտնձգությունների նկատմամբ, քան իշխանության մյուս թևերը: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է դատարանների ոչ դատական գործառույթություններին, հնարավոր է, որ անհրաժեշտություն կա բարձրացնել դրանց արդյունավետությունը՝ միաժամանակ լրիվ պահպանելով դատարանների անկախությունը: Դա միայն կամրապնդի հասարակության վստահությունը դատական իշխանության և իշխանության դատական թևի օրինականության նկատմամբ: Այդ տեսակետից այնպիսի մարմինների աջակցությունը, ինչպիսին է Օմբուդսմանի հաստատությունը, որը չի մտնում դատական համակարգի մեջ, կարող է խաղալ կարևոր դեր:
3. Մեր երկրներում դատաքննությունների թիվը աճում է, ինչը խոսում է դատավորների և դատարանների հետ քաղաքացիների շփումների թվի ավելացման մասին: Այսպիսով, մարդիկ առավել շատ են գիտակցում դատավորների կատարած գործողությունների և նրանց ընդունած որոշումների կարևորությունը, հատկապես, մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված:

Այդ գործընթացում Օմբուդսմանները դատական իշխանության դաշնակիցներն են, քանի որ նրանք կարող են նպաստել մարդու իրավունքների պաշտպանության հարցերում քաղաքացիների իրազեկության բարձրացմանը և դատական վարչարարության որակի բարելավմանը:

4. Իշխանության դատական թևի նկատմամբ Օմբուդսմանի լիազորությունները կարող են լինել միայն այն սահմաններում, որոնցում դրանք չեն վտանգում դատարանների

անկախությունը և նրանց անկողնակալությունը դատավճիռ կայացնելիս: Օմբուդսմանի՝ օրենքով թույլատրված միջամտությունը դատարանների կողմից քննվող առանձին հարցերին պետք է պահպանի դատարանների լրիվ անկախությունը դատարանների դատական գործառույթների վրա որևէ արտաքին ազդեցությունից, սակայն կարող է դիտարկել առանձին գործերի վարման գործառնական կողմերը: Մենք բարձր ենք գնահատում այն փաստը, որ մի քանի երկրներում օմբուդսմանները հնարավորություն ունեն ներկայացնելու իրենց կարծիքը դատարաններում որպես դատարանի խորհրդակցանք (amicus curiae):

5. Այն դեպքում, երբ օրենքը Օմբուդսմանին չի ընձեռում որևէ հատուկ լիազորություն դատարանների նկատմամբ, իր հիմնական լիազորությունների շրջանակներում Օմբուդսմանը, այնուամենայնիվ, իրավունք ունի արտահայտել իր կարծիքը դատական համակարգի գործունեության վերաբերյալ:

6. Օմբուդսմանի դերակատարության մեջ չի մտնում դատարանում առանձին անձի անունից հանդես գալը: Դատական պաշտպանության միջոցները առաջին հերթին և ամենից առաջ պետք է օգտագործվեն այն անձանց կողմից, որոնց իրավունքները ոտնահարված են: Սակայն, եթե որևէ անձ ինչ-որ պատճառով չի կարող արդյունավետ կերպով օգտվել պաշտպանության այդպիսի միջոցներից, Օմբուդսմանը հնարավորություն ունի որոշել՝ եղել է արդյոք մարդու իրավունքների խախտում: Որոշ երկրներում այդպիսի հնարավորություն ընձեռնվում է սահմանադրական բողոք ներկայացնելու միջոցով:

7. Անցողիկ շրջանում գտնվող երկրներում, որտեղ հանդիպում են հնացած, թերի և ոչ ներդաշնակ օրենսդրական դրույթներ, ինչպես նաև հաստատված ժողովրդավարություն ունեցող երկրներում, կարևոր է, որպեսզի Օմբուդսմանը կարողանա իր ավանդը բերել իրավական կարգի զարգացմանը: Այդ նպատակով կարևոր է, որ Օմբուդսմանը հնարավորություն ունենա դիմել Սահմանադրական դատարան օրենսդրական դրույթների սահմանադրականության կամ օրինակության գնահատման նպատակով: Այս կերպ Օմբուդսմանները կարող է օժանդակել օրենսդրական դրույթների մեջ այն համակարգային թերությունների վերացմանը, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ անհատների իրավունքների վրա կամ նույնիսկ խախտել դրանք:

8. Կարևոր է պահպանել և ամրապնդել Օմբուդսմանների անկախ կարգավիճակը իշխանության այլ թևերի նկատմամբ: Այս տեսակետից պակաս կարևոր չէ Օմբուդսմանի ֆինանսական անկախությունը, մինչդեռ որոշ երկրներում Օմբուդսմանի արդյունավետ աշխատանքը սահմանափակ ֆինանսավորման հետևանքով փաստորեն դառնում է անհնար: Այդ պատճառով կարևոր է, որպեսզի Օմբուդսմանը անկախ կերպով առաջարկի Օմբուդսմանի հաստատության բյուջեն: Բյուջեի բաշխման սկզբունքներին, այդ թվում՝ Օմբուդսմանի աշխատավարձին, վերաբերող օրենսդրական դրույթները պետք է ընդգրկված լինեն Օմբուդսմանի վերաբերյալ օրենսդրության մեջ՝ հաստատության կայունությունը երաշխավորելու համար:

Լյուբյանա, 13 նոյեմբերի 2001թ.

Հավելված 7.

ԲԱՆԱՉԵՎ

«Հանուն հանդուրժողականության և ընդդեմ խտրականության ու քսենոֆոբիայի՝
միջազգային ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում
(Կովկասյան տարածաշրջան)»
UNESCO-ի երևանյան միջազգային կոնֆերանսի

2005թ. մայիսին Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում կայացած միջազգային կոնֆերանսի մասնակիցները, որոնք ներկայացնում էին Ադրբեջանը, Հայաստանը, Ռուսաստանի Դաշնությունը և Վրաստանը՝

- հանդես գալով իրենց երկրների պետական և ոչ պետական հաստատությունների անունից,
- մտահոգություն արտահայտելով Կովկասում մարդու իրավունքների պահպանության բնագավառում եղած իրավիճակի, խտրականության, քսենոֆոբիայի և անհանդուրժողականության հաճախակի դարձած դեպքերի առիթով,
- ընդունելով ռասիզմի, խտրականության, քսենոֆոբիայի և դրանց հետ կապված անհանդուրժողականության դեմ պայքարի վերաբերյալ միջազգային կոնֆերանսի Գործողությունների ծրագրում ընդգրկված միջոցների հրատապությունը և կիսելով դրանց անհրաժեշտության վերաբերյալ կարծիքը,
- Ուշադրության առնելով մարդու իրավունքների և տեռորիզմի դեմ պայքարի վերաբերյալ 2002թ. հուլիսի 11-ին Եվրոպայի խորհրդի մինիստրների կոմիտեի 804-րդ նիստում հաստատված Դեկլար սկզբունքները,
- ելնելով «Հանդուրժողականություն, մարդու իրավունքներ և պայքար խտրականության ու քսենոֆոբիայի դեմ (Կովկասյան տարածաշրջան)» (Թբիլիսի, 2004թ.) միջազգային կոնֆերանսի առաջարկներից,
- համագործակցության պատրաստակամություն հայտնելով,
- ազգային մակարդակով միջոցներ մշակելու, կրթության և սոցիալական ու մարդասիրական գիտությունների բնագավառում միջազգային համագործակցության ծրագրերի շրջանակներում առաջարկություններ մտցնելու նպատակով ընդունեցին հետևյալ առաջարկները.
- Ընդունել որոշումների կայացման գործընթացում գիտական և մանկավարժական հասարակության, մասնավորապես՝ UNESCO-ի մասնագիտացված ամբիոնների, համալսարանների առավել լայն ընդգրկման անհրաժեշտությունը:
- Որպես հետագա աշխատանքի հեռանկարային ուղղություն դիտարկել տարբեր մակարդակներով (ազգային, տարածաշրջանային, տեղական՝ դպրոցներ, համալսարաններ, իրավապաշտպան կազմակերպություններ և այլն) օմբուդսմանների ցանցի զարգացումը՝ քաղաքացիական կրթության ապահովման առավել համակարգային մոտեցման նպատակով:
- Հանդես գալ ընդդեմ բռնության ու անհանդուրժողականության, ինչպես նաև հանդուրժողականության վերաբերյալ ծրագրերի իրականացմանն ուղղված միջոցների ակտիվացման օգտին՝ ՄԱԿ-ի կողմից հայտարարված՝ ի շահ մոլորակի երեխաների, «Աշխարհի մշակույթի և ընդդեմ բռնությունների տասնամյակի» շրջանակներում, մասնավորապես՝ Կովկասում իրենց գործունեությունն իրականացնող տարածաշրջանային ցանցային հասարակական կազմակերպությունների աջակցության միջոցով:
- Խտրականության դեմ պայքարի համալիր մոտեցումների մշակման ժամանակ նպատակահարմար համարել հաշվի առնել միջէթնիկական և մեծամասնության ու փոքրամասնության միջև հարաբերությունների պատմականորեն առաջացած պատճառներով պայմանավորված յուրահատկությունը:
- Ընդունել այն սկզբունքը, որ միջազգային համաձայնությունները և ոչ թե առանձին պետությունների իրավական ակտերը պետք է կարգավորեն առանձին վերցրած երկրում մարդու իրավունքների պահպանության մոնիտորինգի միջոցներն ու մեխանիզմները, և օժանդակել այդ սկզբունքի հաստատմանը:
- Պաշտպանել այն կարծիքը, որ տեռորիզմի դեմ պայքարը ցանցային կառույցների միջոցով առավել արդյունավետ կդառնա պայքարի միջոցների մշակման գործընթացին քաղաքացիական հասարակության ցանցային կառույցների համապատասխան պետական մարմիններին մասնակից դարձնելու դեպքում:

- Նպատակահարմար համարել սոցիալական գիտությունների բնագավառում UNESCO-ի՝ ժողովրդավարության և մարդու իրավունքների հարցերով զբաղվող ամբիոնների աշխատանքի արդյունավետության չափանիշների սահմանումը, որոնց թվում անհրաժեշտ է հաշվի առնել օմբուդսմանների հաստատությունների հետ փոխգործակցության մակարդակը և մարդու իրավունքների գծով կրթական ծրագրերի ներդրումը:
 - ՉԼՄ-ների ուշադրությունը հրավիրել միջէթնիկական հարաբերությունների հետ կապված հարցերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ձևերի ու եղանակների կշռադատված ընտրության անհրաժեշտությանը, հաշվի առնելով ՉԼՄ-ների հատուկ դերը լայն հասարակության և, մասնավորապես, երիտասարդության հանդուրժողական գիտակցության ձևավորման գործում, նախաձեռնել այդ նպատակներով տարածաշրջանի ՉԼՄ-ների համար էթիկայի և հանդուրժողականության կանոնագրքի մշակում:
 - UNESCO-ի հովանավորությամբ և աջակցությամբ միավորել այդ տարածաշրջանում գործող և հասարակությանը խաղաղության, հանդուրժողականության և մարդու իրավունքների մշակույթի ոգով դաստիարակելու գործով զբաղված կրթական հաստատությունների և գիտական կենտրոնների, քաղաքացիական հասարակության հաստատությունների ջանքերը համագործակցության ոչ կառավարական ցանցի շրջանակներում:
 - «Կովկաս» ծրագրի շրջանակներում նախատեսել չորս երկրների գործողությունների պլան՝ UNESCO-ի «Կրթություն բոլորի համար» ծրագրի ստուգողական ցուցանիշների կատարումն ապահովելու նպատակով:
 - Ձեռնարկել հատկապես փախստականների և այլ խոցելի խմբերի, կանանց և երեխաների քաղաքացիական-իրավական կրթության ասպարեզում աշխատող կազմակերպությունների ցանցի նախագծի ստեղծումը:
 - Տարածաշրջանի երկրների համապատասխան հաստատություններին հանձնարարել համալարանների հետ համագործակցելով անկախ փորձագետների օգնությամբ ուսումնասիրություններ կատարել այդ երկրներում ռասիզմի, խտրականության և քսենոֆոբիայի աղբյուրների վերաբերյալ:
 - Միջոցներ ձեռնարկել այլ մշակույթների և կրոնների պատմա-ճարտարապետական հուշարձանների ու հիշողության վայրերի պահպանության և այլ ազգերի մշակութային ժառանգության նկատմամբ ծայրահեղականության ցանկացած դրսևորմանը հակահարված տալու նպատակով:
 - Շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետության կառավարությանը այս կոնֆերանսի անցկացմանը աջակցելու համար, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին և UNESCO-ի Մոսկովյան գրասենյակին՝ միջոցառման կազմակերպման համար, ինչպես նաև երկրների ներկայացուցիչներին՝ մասնակցելու և արժեքավոր առաջարկությունների համար:
- Մասնակիցները հաստատականորեն կոչ են անում կոնֆերանսին ներկայացված երկրների կառավարություններին և քաղաքացիական հասարակությանը կիրառել այս առաջարկները և համակողմանիորեն աջակցել դրանց իրականացմանն ուղղված գործունեությանը:**

Հավելված 8.

**Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարգավիճակի տեսանկյունից
«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագծի
մասին ակնարկ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, 15.02.2005թ.**

I. ՆԱԽԱԲԱՆ

1. 2005թ. հունվարի 31-ին, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը /ԺՀՄԻԳ/ Երևանում ԵԱՀԿ գրասենյակից առաջարկ ստացավ գնահատել Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքում փոփոխությունների նախագծի համատեղելիությունը մարդու իրավունքների ազգային հաստատության անկախության և անաչառության սկզբունքի հետ, նկատի ունենալով մասնավորապես Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական կարգավիճակը և կառավարության դիրքորոշումը աշխատակազմի աշխատակիցներին քաղաքացիական ծառայողի կարգավիճակ տալու վերաբերյալ:

II. ԱՍՓՈՓՈՒՄ

2. Խորհուրդ չի տրվում, որ Մարդու իրավունքների պաշտպանի հանրային աշխատակազմը ունենա քաղաքացիական ծառայողի կարգավիճակ այն երկրներում, որտեղ քաղաքացիական ծառայության համակարգը հիմնված է սահմանափակող հայեցակարգի վրա /քաղաքացիական ծառայությունը չի նույնանում հանրային ծառայության հետ, այլ հանդիսանում է վերջինիս ենթակատեգորիա/:

III. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՆՆԱՐԿՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

3. Սույն դիտողություններով նպատակ չի հետապնդում ներկայացնել համապարփակ ուսումնասիրություն, այլ վեր է լուծվում իրավական դաշտը՝ կապված մարդու իրավունքների պաշտպանի /այսուհետ՝ օմբուդսման/ հաստատության և զուտ դրա հետ կապված քաղաքացիական ծառայության հետ:

2. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

2.1 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

4. Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքում¹⁹ հստակ նշվում է, որ «Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ չեն և աշխատում են ժամկետային աշխատանքային պայմանագրերով»:²⁰ Օրենքի փոփոխությունների նախագիծը, նպատակ ունենալով մարդու իրավունքների ազգային հաստատության աշխատակազմի անդամներին տրամադրել աշխատանքային ապահովության լրացուցիչ երաշխիքներ, ավելացրել է դրույթ այն մասին, որ «Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները պահպանում են պայմանագրի ժամկետը լրանալուց հետո նախկին ծառայությանն անցնելու երաշխիքը, եթե աշխատակազմում աշխատանքի անցնելուց առաջ քաղաքացիական ծառայողներ են եղել: Աշխատակազմում նրանց աշխատանքը հավասարեցվում է քաղաքացիական ծառայությանը»: Փոփոխությունները մերժվել են Նախագահի կողմից, հետևելով կառավարության այն դիրքորոշմանը, որ օմբուդսմանի աշխատակազմին պետք է տրվի քաղաքացիական ծառայողի կարգավիճակ:

2.2 ՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՉԱՌՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ՀԵՏ

5. Որպեսզի համարժեք պատասխան տրվի քննարկվող հարցին, թե արդյոք օմբուդսմանի հաստատության աշխատակազմին քաղաքացիական ծառայողի կարգավիճակ տրամադրելը համատեղելի է անկախության և անաչառության սկզբունքի հետ, որը ամրագրված է Ազգային հաստատությունների կարգավիճակին վերաբերող

¹⁹ Ընդունվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2003թ. հոկտեմբերի 21-ին:

²⁰ Հոդված 23, պարբերություն 4:

սկզբունքներում /Փարիզյան սկզբունքներ /²¹, մասնավորապես Սկզբունք 5-ում²², պետք է հաշվի առնել դրան վերաբերող մի շարք հարցեր:

2.2.1 “Հանրային ծառայություն” և “քաղաքացիական ծառայություն” հասկացությունների սահմանումը

6. Նախ և առաջ, խիստ էական է պարզորոշ հասկանալ, թե ինչ է ընկած “հանրային ծառայություն” /կամ “պետական պաշտոնյա”/ և “քաղաքացիական ծառայություն” հասկացությունների հիմքում: Իրականում միջազգային իրավունքում այս հասկացությունները սահմանվել են կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում: “Հանրային ծառայություն” հասկացության պարագայում միջազգային ստանդարտները տրամադրում են բավականին հստակ ուղեգիծ: Մասնավորապես, կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան տալիս է հետևյալ սահմանումը.

ա/ “Պետական պաշտոնյա” նշանակում է. /i/ Պետության օրենսդիր, գործադիր, վարչական կամ դատական որևէ պաշտոն զբաղեցնող անձ, որը նշանակվել կամ ընտրվել է, մշտապես կամ ժամանակավորապես, վճարովի կամ անվճար հիմունքներով, անկախ այդ անձի ավագությունից; /ii/ ցանկացած այլ անձ, որն իրականացնում է հանրային գործառույթ, ներառյալ հանրային գործակալության կամ հանրային ձեռնարկության համար, կամ տրամադրում է հանրային ծառայություն, ինչպես սահմանված է պետության ներքին օրենքներով և ինչպես ներկայացված է այդ պետության օրենսդրության համապատասխան բաժնում; /iii/ ցանկացած այլ անձ, որը սահմանվում է որպես “պետական պաշտոնյա” պետության ազգային օրենսդրությամբ:²³

7. Կոռուպցիայի մասին Եվրոպայի Խորհրդի Քրեական իրավունքի կոնվենցիան տալիս է պետական պաշտոնյայի հետևյալ սահմանումը.

“Պետական պաշտոնյա” հասկացությունը վերաբերում է “պաշտոնյա”, “պետական ղեկավար”, “քաղաքապետ”, “նախարար” կամ “դատավոր” սահմանումներին այն պետության ազգային օրենսդրության մեջ, որի տարածքում տվյալ անձը կատարում է իր գործառույթները, և այն իմաստով, որով դրանք կիրառվում են պետության քրեական օրենսգրքում:²⁴

8. Վերջապես, Անդամ երկրներին Նախարարների Կոմիտեի Եվրոպայի Խորհրդի թիվ R /2000/ 6 հանձնարարականը Եվրոպայում պետական պաշտոնյաների կարգավիճակի մասին սահմանում է այդ հասկացությունը հետևյալ կերպ.

Պետական պաշտոնյաները աշխատակազմի այն բոլոր՝ օրենսդրությամբ նախատեսված կամ պայմանագրային աշխատակիցներն են, ովքեր ծառայության են ընդունված պետական իշխանությունների կամ վարչությունների կողմից, որոնց աշխատավարձը վճարվում է պետական բյուջեից, բացառությամբ ընտրովի

²¹ Ընդունվել է Միացյալ Ազգերի Գլխավոր Ասամբլեայի 1993թ. դեկտեմբերի 20-ի 48/134 որոշմամբ: /Սկզբունքների ամբողջական տեքստը կարելի է գտնել <http://www.ohchr.org/english/law/parisprinciples.htm> կայքում: Վերջին անգամ հեղինակը այս կայքից օգտվել է 2005թ. փետրվարի 16-ին/:

²² Սկզբունք 5-ում ասվում է, որ “ազգային ինստիտուտը պետք է ունենա այնպիսի ենթակառուցվածք, որն ապահովում է նրա գործունեության սահուն իրականացում, մասնավորապես պատշաճ ֆինանսավորում: Այս ֆինանսավորման նպատակը պետք է լինի ապահովել, որ այդ կառույցն ունենա իր աշխատակազմը և գրասենյակային տարածքը, որպեսզի անկախ լինի կառավարությունից և չենթարկվի ֆինանսական վերահսկման, որն էլ կարող է ազդել նրա անկախության վրա:”

²³ Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի Կոնվենցիա /Ընդունված Գլխավոր Ասամբլեայի 2003թ. հոկտեմբերի 31-ի 58/4 Որոշմամբ. դեռևս ուժի մեջ չէ/, Հոդված 2 /Կոնվենցիայի ամբողջական տեքստը կարելի է գտնել http://www.unodc.org/unodc/en/crime_convention_corruption.html կայքում: Վերջին անգամ հեղինակն այս կայքից օգտվել է 2005թ. փետրվարի 16-ին/:

²⁴ Կոռուպցիայի մասին Եվրոպայի Խորհրդի Քրեական օրենքի Կոնվենցիա /Ստրասբուրգ, 1999 թ. հունվարի 27, ուժի մեջ է մտել 2002թ. հուլիսի 1-ից, Հայաստանը դրան միացել է 2003թ. մայիսի 15-ին/, Հոդված 1 /Կոնվենցիայի ամբողջական տեքստը կարելի է գտնել <http://conventions.coe.int/treaty/en/Treaties/Html/173.htm> կայքում: Հեղինակը վերջին անգամ օգտվել է կայքից 2005թ. փետրվարի 16-ին/:

ներկայացուցիչների և աշխատակազմի որոշակի կատեգորիաների, որոնց վերաբերյալ գործում է հատուկ կարգավորում:

9. Ինչ վերաբերում է երկրորդ հասկացությանը, պատասխանն այդ դեպքում առավել բարդ է: Չկա քաղաքացիական ծառայության համընդհանուր ճանաչում ստացած սահմանում, և կախված օրենսդրությունից՝ մոտեցումը էապես տարբերվում է: Քաղաքացիական ծառայության բոլոր համակարգերը ընդհանուր առմամբ կարող են դասակարգվել որպես երկու տեսակի. նրանք, որոնք հետևում են ներառնող մոտեցմանը /բոլոր հանրային ծառայողները համարվում են քաղաքացիական ծառայող²⁵/, և նրանք, որոնք հետևում են սահմանափակող մոտեցմանը /քաղաքացիական ծառայությունը հանդիսանում է հանրային ծառայության հիմնական ենթակատեգորիան/:

10. Սակայն, անկախ օրենսդրությունից, քաղաքացիական ծառայությունը, այնուամենայնիվ, առնվազն երկու հատկանշական առանձնահատկություն ունի, որոնք ներառված են բոլոր երկրների քաղաքացիական ծառայության համակարգերում.

ա/ Քաղաքացիական ծառայությունը կարևոր դեր է խաղում կառավարության քաղաքականության և ծրագրերի կյանքի կոչման և/կամ հանրային ծառայությունների կառավարման գործում: Քաղաքացիական ծառայության օրենսդրության նպատակն է գործող կառավարությանը պատասխանատու լինելու անհրաժեշտությունը զուգահեռ ապահովել պետական կառույցները պահպանելու անհրաժեշտությունը: Այդ նպատակով քաղաքացիական ծառայության պաշտոններն ընկալվում են որպես չեզոք և անաչառ իրենց էությամբ, ուստի և հստակորեն սահմանազատված քաղաքական նշանակումներից և քաղաքական իշխանություն պարունակող հայեցողական պաշտոններից:

բ/ Քաղաքացիական ծառայության պաշտոնները տարանջատվում են նաև պայմանագրային պաշտոններից: Քաղաքացիական ծառայողները նշանակվում են լիազորված պետական հիմնարկության որոշմամբ՝ քաղաքացիական ծառայության մասին օրենսդրության համաձայն և աշխատանքի ընդունման գործընթացի սահմանված կարգին համապատասխան:

Կան նաև աշխատանքից հեռացման մի շարք արգելքներ, որոնք հիմնավորված են քաղաքացիական ծառայողների վերոհիշյալ դերով և նպատակ ունեն ստեղծել աշխատանքի լրացուցիչ ապահովություն, որպեսզի քաղաքական կարճաժամկետ ճնշումները չբերեն աշխատակազմերի անցանկալի փոփոխությունների:

11. Քաղաքացիական ծառայության հիմնական գործառույթը՝ ծառայել գործող կառավարությանը, իրականություն դարձնելով վերջինիս քաղաքական դիրքորոշումներն ու ծրագրերը, դժվարությամբ կարելի է համաձայնեցնել օմբուդսմանի հիմնական վերահսկողական դերի հետ: Սակայն այս գործոնը չպետք է ընկալվի որպես խորհուրդ՝ օմբուդսմանի հաստատության աշխատակազմին քաղաքացիական ծառայողի կարգավիճակ տալը չքննարկելու վերաբերյալ: Իրականում խորհուրդ է տրվում, որպեսզի քաղաքացիական ծառայողների նկատմամբ քաղաքական անպատեհ ճնշումները կանխելուն նպատակաուղղված նախազգուշական միջոցների ընդհանուր համակարգը

²⁵ Սա, օրինակ, առկա է Ֆրանսիայում և Գերմանիայում: Սակայն այս երկրները դեռևս տարանջատում են քաղաքացիական ծառայողների հիմնական խումբը հանրային սեկտորի ծառայողների այլ խմբերից, ինչպիսիք են՝ դատավորները, երկրի կառավարության աշխատակազմը, կրթական կամ հասարակական առողջապահական անձնակազմը /օրինակ, ֆրանսիական մոդելը տարբերակում է պետության քաղաքացիական ծառայությունը (fonction publique de l'Etat; որը հիմնականում կանոնակարգվում է Loi no 84-16 du 11 janvier 1984 portant dispositions statutaires relatives a la fonction publique de l'Etat), տեղական կառավարման համակարգերի քաղաքացիական ծառայությունը (fonction publique territoriale, որը կանոնակարգվում է Loi no 84-53 du 26 janvier 1984 portant dispositions statutaires relatives a la fonction publique territoriale), և հանրային հիվանդանոցների քաղաքացիական ծառայությունը (fonction publique hospitaliere, որը կանոնակարգվում է Loi no 86-33 du 9 janvier 1986 portant dispositions statutaires relatives a la fonction publique hospitaliere), մի կողմից, իսկ մյուս կողմից հատուկ կարգավիճակը, որը կիրառվում է "magistrature"-ի (որը կարգավորվում է Ordonnance no 58-1270 du 22 decembre 1958 portant loi organique relative au statut de la magistrature) և ռազմական ծառայության նկատմամբ/:

կիրառելի լինի օմբուդսմանի հաստատության աշխատակազմի համար, անկախ այն բանից՝ նրանք ունենան քաղաքացիական ծառայողի կարգավիճակ, թե՞ ոչ: Լավագույն լուծումը մեծապես կախված կլինի տվյալ երկրի օրենսդրական համակարգից, և քաղաքացիական ծառայողի կարգավիճակի վերաբերյալ բացասական մոտեցումը բնականաբար առավել ուժեղ կլինի իրավական այնպիսի դաշտի դեպքում, որը հիմնվում է քաղաքացիական ծառայության վերաբերյալ սահմանափակող մոտեցման վրա:

2.2.2 «Հանրային ծառայության» և «քաղաքացիական ծառայության» միջև եղած կապը Հայաստանում

12. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը²⁶ քաղաքացիական ծառայությունը դիտում է որպես հանրային ծառայության որոշակի ենթակատեգորիա²⁷ և սահմանում է այն որպես “մասնագիտական գործունեություն, որն անկախ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից, կատարվում է սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված պետական մարմիններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այդ մարմիններին վերապահված խնդիրների և գործառնությունների իրականացման նպատակով:”²⁸ Այնուհետև, օրենքի 4-րդ հոդվածի առաջին պարբերությունը ներկայացնում է պետական մարմինների հետևյալ ցուցակը.

ա) Նախագահի աշխատակազմ.

բ) կառավարության աշխատակազմ.

գ) հանրապետական գործադիր մարմինների աշխատակազմեր.

դ) մարզպետարանների (ներառյալ՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմեր.

ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ստեղծված մշտապես գործող հանձնաժողովների՝ ծառայությունների, խորհուրդների, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության խորհրդի, աշխատակազմեր, բացառությամբ կենտրոնական բանկի:

13. Օրենքը քաղաքացիական ծառայողների թվաքանակը սահմանափակում է հիմնարար վարչական գործառնություններ իրականացնող անձանցով, դրանով այս կատեգորիայից բացառելով այն անհատներին, ովքեր նշանակված են քաղաքական պաշտոնների կամ ներկայացնում են տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ²⁹:

14. Ինչպես երևում է այս ենթավերնագրի նախորդ պարբերություններից, Հայաստանի մոդելը հիմնված է սահմանափակող մոտեցման վրա՝ քաղաքացիական ծառայությունը ներկայացնում է զուտ որպես առանձնահատուկ ենթակատեգորիա հանրային ծառայության առավել լայն կատեգորիայի ներսում: Այս գործոնը նույնպես նպաստում է օմբուդսմանի հաստատության աշխատակազմը հանրային ծառայողների առանձին ենթակատեգորիայում դիտարկելուն՝ նրանց քաղաքացիական ծառայողի կարգավիճակ տրամադրելու փոխարեն:

2.2.3 Աշխատակազմի աշխատակիցների նշանակման և պաշտոնների կարգավորման անկախությունը

15. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը օմբուդսմանին տրամադրում է ինքնավարության առավել բարձր աստիճան՝ աշխատակազմի

²⁶ Ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 4-ին

²⁷ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 1, պարբերություն 3՝ “Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ներքին գործերի, հարկային, մաքսային, արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր մարմիններում, ինչպես նաև դիվանագիտական և օրենքով նախատեսված այլ ծառայությունները:”

²⁸ Նույն օրենքում, հոդված 3, պարբերություն 1

²⁹ Նույն օրենքում, հոդված 4, պարբերություն 2

ընտրության վերաբերյալ որոշումներ կայացնելիս:³⁰ Այս մտտեցումը խիստ ողջունելի է, քանի որ օգնում է ապահովել այդ կառույցի անկախությունն ու անաչառությունը: Սակայն Հայաստանում քաղաքացիական ծառայության նկատմամբ սահմանափակող մոտեցման պատճառով, ինչպես արդեն նշվել է, օմբուդսմանի աշխատակազմի աշխատակիցներին քաղաքացիական ծառայողներ դարձնելն անխուսափելիորեն կհանգեցնի ինքնավարության կրճատման:

16. ԵԱՀԿ-ին անդամակցած այլ երկրներում կիրառվող աշխատանքի ընդունման /աշխատակազմը համալրելու/ մոդելների համեմատությունը օգտակար կարող է լինել հայ օրենսդիրի համար՝ լուծման լավագույն տարբերակի որոնման գործում: Օրենսդրությունների բացարձակ մեծամասնությունը օմբուդսմանին տալիս է աշխատակիցներին աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու իրավասություն:³¹ Ուշադրության արժանի բացառություն է Նորվեգիան, որտեղ օմբուդսմանը /կամ հատուկ նշանակումների խորհուրդը/ միայն առաջարկություններ է ներկայացնում աշխատակազմի նշանակումների մասին, սակայն այդ նշանակումներն իրականացվում են «Մթորթինգի» /պառլամենտի/ նախագահության կողմից:³² Այս մտտեցումը, սակայն, նպատակ ունի գործադիր իշխանության ազդեցության դեմ պայքարելու համար տրամադրել մույնիսկ ավելի մեծ երաշխիքներ և պաշտպանում է այն սկզբունքը, որ օմբուդսմանի աշխատակազմի կարգավիճակն առանձնանում է քաղաքացիական ծառայողի կարգավիճակից:

2.2.4 Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գործառույթները, բացի վարչական օժանդակությունից

17. Պաշտպանի աշխատակազմը չի բավարարվում պարզապես վարչական օժանդակություն տրամադրելով: Փաստորեն, նրանց գործառույթները կարող են պարզապես մի փոքր ավելի սահմանափակ լինել, քան հենց իր՝ Պաշտպանի

³⁰ Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք, հոդված 23՝ "Պաշտպանի գործունեությունն ապահովելու համար Պաշտպանը ստեղծում է աշխատակազմ", նաև հոդված 25՝ "1. Պաշտպանը հաստատում է աշխատակազմի կառուցվածքը, նրա կանոնակարգը եւ անմիջականորեն ղեկավարում է աշխատակազմի աշխատանքները: 2. Ծախսերի հաշվարկի շրջանակներում Պաշտպանը որոշում է իր աշխատակազմի աշխատողների թվաքանակը եւ հաստիքացուցակը: 3. Աշխատակազմի ղեկավարման հետ կապված հարցերով Պաշտպանն արձակում է հրամաններ", ինչպես նաև հոդված 5՝ "Պաշտպանն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին: Պաշտպանը չի ենթարկվում պետական կամ տեղական ինքնակառավարման որեւէ մարմնի կամ պաշտոնատար անձի:"

³¹ Տե՛ս Դանիայի օմբուդսմանի մասին հրամանագիր, հոդված 26՝ "Օմբուդսմանն աշխատանքի է ընդունում և աշխատանքից հեռացնում է իր աշխատողներին", Ֆրանսիա, Loi no 73-6, du 3 janvier 1973 instituant un Mediateur, Article 15՝ "Les collaborateurs du Mediateur de la Republique sont nommes par celui-ci pour la duree de sa mission", Պորտուգալիա, Օմբուդսմանի կանոնադրություն, հոդված 10՝ "Օմբուդսմանը իրավասու է աշխատանքի ընդունել և պարտականությունների կատարումից հեռացնել գրասենյակի աշխատողներին, եթե նպատակահարմար է գտնում", Սլովենիա, Մարդու իրավունքների պաշտպանի մասին որոշում, հոդված 52՝ "Օմբուդսմանը կարող է, ըստ անհրաժեշտության, աշխատանքի ընդունել և աշխատանքից հեռացնել իր գրասենյակի փաստաբաններին և այլ աշխատակիցներին: Օմբուդսմանն աշխատանքի է ընդունում գլխավոր քարտուղարին, որը ղեկավարում է Օմբուդսմանի բյուրոն:"

³² Storting-ի պետական վարչարարության օմբուդսմանի մասին որոշում, հոդված 14:

գործառույթները, հատկապես այնպիսի համակարգ ունեցող երկրներում, ինչպես Հայաստանը, որտեղ Պաշտպանի հաստատությունը իրենից չի ներկայացնում աշխատակազմից անջատ առաջատար աշխատակիցների խորհուրդ: Հաստատության աշխատակազմն ընդունում է բողոքներ և հետամուտ է լինում մարդու իրավունքների ոտնահարման ենթադրյալ դեպքերի ուսումնասիրմանը, ինչը նրա պաշտպանությունը արտաքին ճնշումներից դարձնում է նույնքան կարևոր, որքան օմբուդսմանի և նրա տեղակալի պաշտպանությունը: Ավելին, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին»³³ ՀՀ օրենքը հնարավորություն է տալիս ստեղծել օմբուդսմանի հաստատության մարզային ներկայացուցչություններ: Երբ ստեղծվում են նման գրասենյակներ, նրանց գլխամասային գրասենյակի աշխատակազմի անկախությունն ու անաչառությունն ապահովելը առավել մեծ կարևորություն է ստանում:

2.2.5 Անկախություն պահանջող այլ հաստատությունների աշխատակազմի հետ համեմատությունը

18. Առաջնային կարևորության մեկ այլ հարց է առաջանում այնպիսի գործակալությունների աշխատակազմերի իրավական կարգավիճակի հետ կապված, որոնք կոչված են լինել անկախ, որպեսզի արդյունավետորեն իրականացնեն իրենց գործառույթները: Նման գործակալությունների օրինակ կարող են լինել դատական համակարգը՝ օրինակաչություն ապահովելու իր հիմնական գործառույթով, կամ գլխավոր աուդիտորի գրասենյակը, որպես կարևոր վերահսկիչ գործակալություն: Ուստի, դատական համակարգին օժանդակող աշխատակազմի կամ գլխավոր աուդիտորի գրասենյակի աշխատակազմի կարգավիճակը կարող է նշաձող լինել իդեալական լուծման որոնման գործում: Այսպիսի աշխատակազմը կարող է քաղաքացիական ծառայողներից կազմված լինել, սակայն պրակտիկայում կան տարբեր դրսևորումներ: Հարկ է, սակայն, նշել, որ Հայաստանի դեպքում դատական համակարգին օժանդակող աշխատակազմի աշխատակիցները չեն համարվում քաղաքացիական ծառայողներ, այլ կազմում են հանրային ծառայության մի առանձին ենթակատեգորիա: Այս փաստը ևս մեկ անգամ խոսում է այն մոտեցման օգտին, որ օմբուդսմանի հաստատության աշխատակազմին չի տրվում քաղաքացիական ծառայողի կարգավիճակ:

2.2.6 Վատ վարչարարությունից պաշտպանվելու այլընտրանքային մեխանիզմներ

19. Թեև օմբուդսմանի հաստատությունը խիստ կարևոր դեր է խաղում բոլոր երկրներում վատ վարչարարությունից պաշտպանվելու հարցում, Հայաստանում այն հատուկ կարևորություն է ձեռք բերում այն փաստի պատճառով, որ չկա վարչական դատարանների առանձին համակարգ: Սա ավելի է մեծացնում օմբուդսմանի հաստատության արդյունավետությունը բարձրացնելու կարևորությունը, ինչի էական նախապայման է դրա անկախությունն ու անաչառությունը:

Հավելված 9.

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՆ
ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ
/Փարիզյան սկզբունքներ/**

³³ Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը, հոդված 23, պարբերություն 3՝ "Մարզերում կարող են ստեղծվել մարդու իրավունքների պաշտպանի մարզային ներկայացուցչություններ:"

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ազգային հաստատությունը պետք է օժտված լինի մարդու իրավունքները խթանելու և պաշտպանելու լիազորություններով:
2. Ազգային հաստատությանը տրվում են հնարավորինս լայն իրավասություններ, որոնք հստակ սահմանվում են նրա կազմը և լիազորությունների շրջանակները ամրագրող սահմանադրական կամ օրենսդրական ակտում:
3. Ազգային հաստատությունը պետք է ունենա, մասնավորապես, հետևյալ պարտականությունները՝
 - ա) կառավարությանը, խորհրդարանին կամ ցանկացած այլ լիազոր մարմնի, խորհրդատվական հիմունքով՝ կամ շահագրգիռ մարմինների խնդրանքով, կամ առանց վերադաս ատյանին դիմելու ցանկացած հարց քննարկելու իր իրավունքի իրականացման կարգով, ներկայացնել կարծիքներ, եզրակացություններ, առաջարկներ և զեկույցներ մարդու իրավունքների խթանմանն ու պաշտպանությանը վերաբերող ցանկացած հարցով. ազգային հաստատությունը կարող է որոշել հրապարակել դրանք. այդ կարծիքները, եզրակացությունները, առաջարկություններն ու զեկույցները, ինչպես և ազգային հաստատության ունեցած ցանկացած բացառիկ իրավունք, վերաբերում են հետևյալ բնագավառներին՝
 - ցանկացած օրենսդրական և վարչական, ինչպես նաև դատական մարմիններին վերաբերող դրույթներ, ուղղված մարդու իրավունքների պաշտպանության ապահովմանն ու ընդլայնմանը. այդ կապակցությամբ ազգային հաստատությունը պետք է ուսումնասիրի գործող օրենսդրությունն ու վարչական դրույթները, ինչպես նաև օրինագծերն ու առաջարկները, և մշակի այնպիսի առաջարկություններ, որոնք նպատակահարմար է համարում այդ դրույթները մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին համապատասխանեցնելը ապահովելու համար. անհրաժեշտության դեպքում հաստատությունը պետք է առաջարկի նոր օրենքի ընդունում, լրացումների և փոփոխությունների կատարում գործող օրենսդրության մեջ և վարչական միջոցների ընդունում կամ բարեփոխում,
 - մարդու իրավունքների խախտման ցանկացած դեպք, որը հաստատությունը որոշում է քննարկել,
 - զեկույցների նախապատրաստում երկրում տիրող իրավիճակի մասին՝ ընդհանրապես մարդու իրավունքների առնչությամբ, ինչպես նաև առավել կոնկրետ հարցերի վերաբերյալ,
 - կառավարության ուշադրության հրավիրում երկրի ցանկացած մասում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտման դեպքերին, այդպիսի խախտումների վերացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկների ներկայացում և, անհրաժեշտության դեպքում, կառավարության դիրքորոշման ու վերաբերմունքի վերաբերյալ կարծիքի արտահայտում:
 - բ) խթանել և երաշխավորել ազգային օրենսդրության և իրավակիրառական պրակտիկայի ներդաշնակեցումը մարդու իրավունքների ոլորտի միջազգային փաստաթղթերին, որոնց որպես կողմ միացել է պետությունը, և դրանց արդյունավետ կիրառումը,
 - գ) խրախուսել վերոնշյալ փաստաթղթերի վավերացումը կամ դրանց միանալը և ապահովել դրանց կիրառումը,
 - դ) մասնակցել այն զեկույցների նախապատրաստմանը, որոնք, ի կատարումն իրենց պայմանագրային պարտավորությունների, պետությունները պետք է

ներկայացնեն ՄԱԿ-ի մարմիններին ու կոմիտեներին, ինչպես նաև տարածաշրջանային հաստատություններին, և, անհրաժեշտության դեպքում, այդ հարցով ներկայացնել իր կարծիքը՝ արժանի հարգանքով վերաբերվելով նրանց անկախությանը,

ե) համագործակցել Միավորված Ազգերի Կազմակերպության և այդ համակարգի այլ մարմինների, տարածաշրջանային և այլ երկրների ազգային հաստատությունների հետ, որոնք իրավասություններ ունեն մարդու իրավունքների խթանման և պաշտպանության բնագավառում,

զ) աջակցել մարդու իրավունքների բնագավառում հետազոտական և կրթական ծրագրերի մշակմանը և մասնակցել դրանց իրականացմանը դպրոցներում, համալսարաններում և մասնագիտական շրջանակներում,

է) հրապարակայնացնել մարդու իրավունքները և խտրականության բոլոր ձևերի՝ մասնավորապես, ռասայական խտրականության դեմ մղվող պայքարում կիրառվող ջանքերը հասարակության իրազեկության բարձրացման միջոցով, իրականացնելով, հատկապես, տեղեկատվական ու կրթական աշխատանքներ և օգտագործելով լրատվական բոլոր միջոցները:

ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱԶՄԱԿԱՐԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

1. Ազգային հաստատության կազմավորումը և նրա անդամների նշանակման կարգը՝ ընտրությամբ կամ այլ կերպ, պետք է հաստատվի ըստ համապատասխան ընթացակարգի, որը մարդու իրավունքների խթանման ու պաշտպանության ոլորտում ընդգրկված հասարակական ուժերի /քաղաքացիական հասարակության/ բազմակարծիք ներկայացուցչության ապահովման համար կրնձեռի բոլոր հնարավոր երաշխիքները, մասնավորապես, լիազորություններից օգտվելու միջոցով, ինչը հնարավոր կդարձնի արդյունավետ համագործակցություն հաստատել հետևյալ հաստատությունների հետ կամ նրանց ներկայացուցիչների մասնակցության միջոցով.

ա/ մարդու իրավունքների և ռասայական խտրականության դեմ պայքարի հարցերով զբաղվող ոչ կառավարական կազմակերպություններ, արհմիություններ, շահագրգիռ հասարակական և մասնագիտական կազմակերպություններ, օրինակ՝ իրավաբանների, բժիշկների, լրագրողների միություններ և անվանի գիտնականներ,

բ/ տարբեր փիլիսոփայական և կրոնական հոսանքներ,

գ/ համալսարաններ և որակյալ փորձագետներ,

դ/ խորհրդարան,

ե/ կառավարության ստորաբաժանումներ /այդ դեպքում նրանց ներկայացուցիչները մասնակցում են հարցերի քննարկմանը միայն որպես խորհրդատուներ/:

2. Ազգային հաստատությունը պետք է ունենա իր ենթակառուցվածքը, որը կապահովի նրա անխափան գործունեության իրականացումը, մասնավորապես՝ բավարար ֆինանսավորումը: Այդպիսի ֆինանսավորման նպատակն է հնարավորություն տալ ազգային հաստատությանը ունենալու իր սեփական աշխատակազմն ու շենքը, որպեսզի այն կառավարությունից անկախ լինի և չենթարկվի ֆինանսական հսկողության, ինչը կարող է ազդել հաստատության անկախության վրա:

3. Հաստատության անդամների կայուն մանդատ ապահովելու համար, առանց որի իրական անկախություն չի կարող լինել, նրանց նշանակումը պետք է կատարվի պաշտոնական որոշումով, որը պետք է սահմանի մանդատի գործողության կոնկրետ ժամկետը: Մանդատը կարող է վերահաստատելի լինել՝ ազգային հաստատության կազմի բազմակարծությունն ապահովելու պայմանով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Իր գործունեության շրջանակներում ազգային հաստատությունը պետք է՝

ա/ ազատ քննարկի իր իրավասության շրջանակներում գտնվող բոլոր հարցերը, անկախ նրանից՝ դրանք ներկայացված են եղել կառավարության կողմից, թե քննարկման են ընդունվել հաստատության անդամների կամ ցանկացած դիմորդի առաջարկով՝ առանց առավել բարձր ատյանի դիմելու,

բ/ ունկնդրի ցանկացած անձի և ստանա ցանկացած տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են իր իրավասության ոլորտին վերաբերող իրավիճակների գնահատման համար,

գ/ անմիջականորեն կամ ցանկացած լրատվական միջոցով դիմի հասարակայնությանը՝ հատկապես իր կարծիքների և եզրակացությունների հրապարակայնացման համար,

դ/ կանոնավոր կերպով հանդիպումներ անցկացնի, անհրաժեշտության դեպքում նաև իր բոլոր անդամների մասնակցությամբ՝ նրանց նախօրոք պատշաճ կերպով տեղեկացնելով,

ե/ կազմի աշխատանքային խմբեր, ըստ անհրաժեշտության, իր անդամներից և ստեղծի տեղական կամ տարածաշրջանային բաժանմունքներ՝ իր գործառույթների իրականացմանն աջակցելու համար,

զ/ խորհրդատվություններ անցկացնի այլ՝ դատական և ոչ դատական, մարմինների հետ, որոնք պատասխանատու են մարդու իրավունքների խթանման և պաշտպանության համար /մասնավորապես՝ օմբուդսմաններ, միջնորդ դատավորներ և այլ համանման հաստատություններ/,

է/ հաշվի առնելով այն հիմնարար դերը, որ կատարում են ոչ կառավարական կազմակերպությունները ազգային հաստատությունների գործունեության ընդլայնման հարցում, զարգացնի կապերը այն ոչ կառավարական կազմակերպությունների հետ, որոնք զբաղվում են մարդու իրավունքների խթանումով և պաշտպանությամբ, սոցիալական ու տնտեսական զարգացմամբ, ռասիզմի դեմ պայքարով, առավել խոցելի խմբերի պաշտպանությամբ /մասնավորապես՝ երեխաներ, միգրանտ աշխատողներ, փախստականներ, ֆիզիկական և մտավոր թերություններ ունեցող անձինք/ և այլ հատուկ հարցերով:

ՔՎԱԶԻԴԱՏԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕԺՏՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ազգային հաստատությունը կարող է լիազորված լինել ունկնդրելու և քննարկելու անհատական դիմումներ և բողոքներ: Դրանք կարող են հաստատությանը հանձնվել առանձին անհատների, նրանց ներկայացուցիչների, երրորդ կողմերի, ոչ կառավարական կազմակերպությունների, արհմիությունների կամ այլ ցանկացած ներկայացուցչական կազմակերպությունների կողմից: Այդպիսի դեպքերում և առանց վերը շարադրած ու

հանձնաժողովների այլ լիազորություններին վերաբերող սկզբունքները խաթարելու, նրանց վստահված գործառույթները կարող են հիմնվել հետևյալ սկզբունքների վրա.

ա/ խաղաղ կարգավորման որոնում՝ հաշտեցման կամ, օրենքով նախատեսված սահմաններում, պարտադիր որոշումների կայացման միջոցով կամ, անհրաժեշտության դեպքում, կոնֆիդենցիալ հիմունքով,

բ/ տեղեկացնել դիմող կողմին իր իրավունքների, մասնավորապես, իր տրամադրության տակ գտնվող իրավական պաշտպանության միջոցների մասին և նպաստել դրանց հասու լինելուն,

գ/ ունկնդրել ցանկացած բողոք կամ դիմում կամ դրանք ուղարկել ցանկացած այլ պատկան մարմին՝ օրենքով նախատեսված սահմաններում,

դ/ առաջարկություններ տալ պատկան մարմիններին, մասնավորապես, օրենքներում, կանոնակարգերում և վարչական պրակտիկայում ուղղումներ և փոփոխություններ առաջարկելու միջոցով, հատկապես, եթե դրանք են այն դժվարությունների պատճառը, որոնց առնչվել են իրենց իրավունքների պաշտպանության նպատակով դիմում ներկայացրած անձինք:

Հավելված 10.

**Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Բանաձև (2004) 6
հանձնարարական-առաջարկությունը անդամ պետություններին
«Իրավական պաշտպանության ներպետական միջոցների բարելավման մասին»
(ընդունված է 2004թ. մայիսի 12-ին, 114-րդ նստաշրջանի ընթացքում)**

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի «բ» կետի համաձայն,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է իր անդամների միջև առավել սերտ միասնության հասնել և որ այդ նպատակին հասնելու համար ամենակարևոր միջոցներից է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը և հետագա զարգացումը,

Վերահաստատելով իր համոզմունքը, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (այսուհետ՝ կոնվենցիա) պետք է մնա Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում էական վկայակոչման կետը և հիշեցնելով իր հանձնառությունը միջոցնոր ձեռնարկել՝ կոնվենցիայով հիմնված վերահսկողության համակարգի երկարաժամկետ արդյունավետությունն ապահովելու նպատակով,

Հիշեցնելով կոնվենցիայով հիմնված վերահսկողության համակարգի օժանդակ (սուբսիդիար) բնույթը, որը, վերջինիս 1-ին հոդվածին համապատասխան, ենթադրում է, որ կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները առաջին հերթին պետք է պաշտպանվեն ազգային մակարդակում և կիրառվեն ազգային մարմինների կողմից,

Ողջունելով այս կապակցությամբ այն, որ կոնվենցիան բոլոր անդամ պետությունների ներպետական իրավական համակարգի մաս է կազմում,

Ընդգծելով, որ ինչպես կոնվենցիայի 13-րդ հոդվածն է պահանջում, անդամ պետությունները պարտավորվում են ապահովել, որ յուրաքանչյուր ոք, որը բողոքում է կոնվենցիայով ճանաչված իր իրավունքների և ազատությունների խախտման առիթով, ազգային որևէ ատյանի առջև արդյունավետ իրավական պաշտպանության իրավունք ունենա

Հիշեցնելով, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի («դատարան») դատական նախադեպի իմաստով իրավական պաշտպանության մասն արդյունավետ միջոցի գոյությունը ապահովելու պարտավորությունից բացի, Պետությունները ընդհանուր պարտավորություն ունեն հարթել հաստատված խախտումների հիմքում ընկած խնդիրները,

Ընդգծելով, որ անդամ պետություններն իրենք պետք է ապահովեն, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները արդյունավետ լինեն ինչպես իրավունքում, այնպես էլ պրակտիկայում, և որ այդ միջոցները հանգեցնեն ըստ էության որոշման կայացման և հաստատված խախտման համարժեք հատուցման,

Նշելով, որ դատարան ներկայացված գանգատները և դատարանի կողմի կայացված վճիռները ցույց են տալիս, առավել քան երբևիցե, որ անդամ պետությունները պետք է արդյունավետ և կանոնավոր կերպով ապահովեն, որ իրավական պաշտպանության մասն միջոցները գոյություն ունենան բոլոր հանգամանքներում, և մասնավորապես, դատավարության գերազանցող տևողության դեպքում,

Գտնելով, որ կոնվենցիայի ենթադրյալ խախտումների համար իրավական պաշտպանության ներպետական միջոցների առկայությունը թույլ կտա կրճատել դատարանի աշխատանքի ծանրաբեռնվածությունը, մի կողմից, դատարանում հարուցվող գործերի կրճատման պատճառով, մյուս կողմից, այն փաստի պատճառով, որ գործերի հանգամանալի քննարկումը ազգային մակարդակում կոլյուրացնեն դրանց հետագա քննարկումը դատարանի կողմից,

Ընդգծելով, որ իրավական պաշտպանության միջոցների բարելավումը ազգային մակարդակում, մասնավորապես կրկնվող գործերի առումով, կնպաստի նաև դատարանի աշխատանքի ծանրաբեռնվածության կրճատմանը, առաջարկում է անդամ պետություններին, հաշվի առնելով հավելվածում նշված լավ գործելակերպը,

I. ապահովել, մշտական վերահսկողության միջոցով, դատարանի դատական նախադեպի լույսի ներքո, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները գոյություն ունենան յուրաքանչյուր անձի համար, որ բողոքում է կոնվենցիայի ենթադրյալ խախտման առիթով և որ միջոցները հանգեցնեն ըստ էության որոշման կայացման և հաստատված խախտման համարժեք հատուցման,

II. վերանայել, Պետության իրավունքում կամ գործելակերպում կառուցվածքային կամ ընդհանուր թերություն հայտնաբերած դատարանի վճիռների հիման վրա, գոյություն

ունեցող իրավական պաշտպանության ներպետական միջոցների արդյունավետությունը և, նհրաժեշտության դեպքում, ներդնել իրավական պաշտպանության ներպետական միջոցներ, կրկնվող գործերը դատարան ներկայացնելը բացառելու նպատակով,

III. հատուկ ուշադրություն դարձնել վերոհիշյալ I և II կետերի շրջանակում, դատավարության երազացող տևողության համար պաշտպանելի հայտարարությունների դեպքում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների գոյությանը:

Հանձնարարում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին անհրաժեշտ միջոցներ հատկացնել անդամ պետություններին համապատասխան աջակցություն տրամադրելու համար, որոնք սույն հանձնարարական-առաջարկությունը իրականացնելու համար նման աջակցություն կխնդրեն:

Հավելված Բանաձև (2004) 6 հանձնարարական-առաջարկության Ներածություն

1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի («կոնվենցիա») 50-րդ տարեդարձը նշելու համար Հռոմում 2000թ. նոյեմբերի 3-4-ը կայացած նախարարական կոնֆերանսը (1) ընդգծել է կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների պահպանումն ապահովելու անդամ պետությունների առաջնային պատասխանատվությունը, որոնք պարտավոր են ունենալ անհրաժեշտ իրավաբանական գործիքներ, որպեսզի կանխեն խախտումները և անհրաժեշտության դեպքում վերականգնեն խախտված իրավունքները: Դա, մասնավորապես, պահանջում է, կոնվենցիայի հոդված 13-ին համապատասխան, ներդնել կոնվենցիայի բոլոր խախտումների համար իրավական պաշտպանության արդյունավետ ներպետական միջոցներ (2):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի («դատարան») դատական նախադեպը (3) զարգացրել է կոնվենցիայի անդամ պետությունների համար պարտադիր այս պահանջի կիրառման շրջանակը, հատկապես նշելով.

- Հոդված 13-ն ապահովում է ներպետական իրավունքում պաշտպանության միջոցների գոյությունը, որը թույլ է տալիս կոնվենցիայում ամրագրված իրավունքների և ազատությունները պաշտպանել.

- Այս հոդվածը, հետևաբար, պահանջում է, որ լինի իրավական պաշտպանության միջոց, որը հնարավորություն է տալիս ըստ էության քննարկել կոնվենցիայի վրա հիմնված բողոքը և համարժեքորեն վերականգնել խախտված իրավունքը: Այս պարտավորության շրջանակը տարբերվում է կախված դիմողի հայցի (դիմումի) բնույթից: Այնուամենայնիվ, իրավական պաշտպանության պահանջվող միջոցը պետք է արդյունավետ և իրական լինի ինչպես իրավունքում, այնպես էլ պրակտիկայում:

- Մա ենթադրում է, հատկապես, որ այդ միջոցները խոչընդոտեն կոնվենցիային չհամապատասխանող միջոցառումների կատարմանը, որի հետևանքները պոտենցիալ անուղղելի են:

- Մարմինը, որի մասին խոսվում է հոդված 13-ում, պարտադիր չէ, որ լինի դատական մարմին, բայց նրա լիազորությունները և նրա կողմից տրամադրվող երաշխիքները պետք է համապատասխան լինեն գնահատելու համար, թե ինչքանով է նրա կողմից տրամադրված իրավական պաշտպանության միջոցն արդյունավետ:

- Հոդված 13-ի իմաստով «իրավական պաշտպանության միջոցի» «արդյունավետությունը» կախված չէ այն բանից, թե ինչքանով է այն դիմումատուի համար նպաստավոր որոշման հանգեցնելու, ընդհակառակը, այն նվազագույնս պահանջում է, որ գործը արագ քննարկվի:

2. Մոտ անցյալում, հատուկ շեշտվել է դատավարության գերազանցող տևողության կապակցությամբ պաշտպանության միջոց ունենալու կարևորությունը (4), հիմնախնդիր, որը դատարան ներկայացված բազմաթիվ գանգատների հիմքում է, նույնիսկ, եթե այն միակ հիմնախնդիրը չէ :

3. Դատարանն առճակատվում է մշտապես աճող գանգատների հետ: Այս իրավիճակը վարկաբեկում է համակարգի արդյունավետությունը երկարաժամկետ կտրվածքով, ուստի և պահանջում է անդամ պետություններից ուժեղ հակազդեցություն (5): Հենց հստակորեն այս համատեքստում է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի առակայությունը հատուկ կարևորություն ստանում: Իրավունքի պաշտպանության առկա ներպետական միջոցների բարելավումը մեծ հավանականությամբ դատարանի աշխատանքի վրա կունենա թե քանակական, թե որակական ազդեցություն՝

(1) Մարդու իրավունքների վերաբերյալ նախարարական կոնֆերանսի թիվ 1 Բանաձևի 14 (i) կետ («Ազգային և եվրոպական մակարդակներում մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ իրականացումը»), Բաժին A («Բարելավել կոնվենցիայի իրականացումը անդամ պետություններում»)

(2) Հոդված 13-ը նշում է «Յուրաքանչյուր ոք, ում կոնվենցիայով ճանաչված իրավունքները խախտվել են, իրավունք ունի որևէ ազգային ատյանում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի»։ Հարկ է նշել, որ սույն հավելվածը չի պարունակում հատուկ ... ընթացակարգային երաշխիքները, որոնք բխում են կոնվենցիայով երաշխավորված նյութական իրավունքներից, ինչպիսին օրինակ 2 և 3 հոդվածները

(3) Տես, օրինակ, Կոնկան ընդդեմ Բելգիայի գործով 2002 թվականի պետրվարի 5-ի վճիռը (64 և հաջորդող կետերը)։

(4) Կուդլան ընդդեմ Լեհաստանի գործով՝ 2000 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռ։

(5) Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003 թվականի մայիսի 14-ի Հռչակագիրը «Ապահովել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի երկարաժամկետ արդյունավետությունը»

- Մի կողմից, քննարկման ենթակա գանգատները պետք է որ պակասեն, ավելի քիչ դիմումատուներ ստիպված կլինեն դատարան գանգատներ ներկայացնել, եթե նրանց բողոքները բավարար չափով խորապես քննարկված լինեն ազգային ատյաններում,

- Մյուս կողմից, դատարանի կողմից գանգատների քննարկումը կոյուրացվի, եթե նրան ներկայացված գործերը նախօրոք ըստ էության քննարկված լինեն ազգային որևէ ատյանի կողմից՝ շնորհիվ իրավական պաշտպանության ներպետական միջոցների բարելավման:

4. Սույն հանձնարարական-առաջարկությունը հետևաբար խրախուսում է անդամ պետություններին ուսումնասիրել իրենց համապատասխան իրավական համակարգերը՝ դատարանի դատական նախադեպի լույսի ներքո և, կարիքի դեպքում, անհրաժեշտ և համարժեք միջոցներ ձեռնարկել՝ օրենսդրության կամ դատական պրակտիկայի զարգացման միջոցով հոդված 13-ով պահանջված՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցն ապահովելու համար: Այս ուսումնասիրությունը, սկզբունքորեն, կարող է լինել պարբերական, բայց կարող է հետևել դատարանի վճռին:

5. Սկզբնական շրջանում անդամ պետությունները կարող են դիմել փորձագետների, որպեսզի նրանք համապատասխան ոլորտներում գոյություն ունեցող իրավական պաշտպանության ներպետական միջոցների արդյունավետությունը գնահատելու համար ուսումնասիրություն կատարեն՝ բարելավում առաջարկելու նպատակով: Մարդու իրավունքների խթանման ազգային հաստատությունները և ոչ կառավարական կազմակերպությունները նույնպես կարող են մասնակցել այդ աշխատանքներին: Այնուհետև, իրավական պաշտպանության ներպետական միջոցների առկայության և

արդյունավետության վերաբերյալ քննարկումը պետք է իրականացվի մշտապես, և մասնավորապես, կոնվենցիայով պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա ազդեցություն ունեցող օրենքի նախագծերի քննարկման ժամանակ: Այստեղ ակնհայտ կապ կա սույն Հանձնարարական-առաջարկության և «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված չափանիշների հետ օրենքի նախագծերի, գործող օրենքների և վարչական գործելակերպի համապատասխանության ստուգման մասին» հանձնարարական-առաջարկության միջև:

6. Վերը շարադրվածից ելնելով, հետևյալ նկատառումները կարող են հաշվի առնվել կոնվենցիան որպես ներպետական իրավական համակարգի անբաժանելի մաս

7. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի գոյության համար առաջին պահանջն է, որ կոնվենցիայով նախատեսված իրավունքները երաշխավորված լինեն ներպետական իրավական համակարգում: Այս առումով, հաճելի է հաստատել, որ ներկայումս կոնվենցիան բոլոր անդամ պետությունների իրավական համակարգի անբաժանելի մասն է կազմում: Այս զարգացումը նպաստել է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների առկայությանը: Այն ուղեկցվել է այն փաստով, որ դատարանները և իրավակիրառ մարմինները ավելի ու ավելի են պահպանում դատարանի դատական նախադեպը ներպետական իրավունքի կիրառման ընթացքում և գիտակցում են իրենց պարտականությունը՝ ուղղակիորեն կատարել իրենց պետությանը վերաբերող դատարանի վճիռները (կոնվենցիայի 46-րդ հոդված): Միտումը ամրապնդվել է այն հնարավորությունների բարելավմամբ, համապատասխան (2000)2 Հանձնարարական-առաջարկության (6), որ իրավասու ազգային մարմինները վերաքննարկում և վերաբացում են որոշ գործեր, որոնք դատարանի կողմից հաստատված խախտումների հիմքում են եղել:

8. Իրավական պաշտպանության միջոցների բարելավումը պահանջում է նաև, որ լրացուցիչ գործողություններ կատարվեն, որպեսզի ազգային մարմինները, ներպետական իրավունքը կիրառելիս, կարողանան հաշվի առնել կոնվենցիայի և, հատկապես, իրենց պետությանը վերաբերող դատարանի վճիռներից բխող պահանջները: Հատկապես, խոսքը վերաբերում է դատարանի դատական նախադեպի հրապարակման և տարածման բարելավմանը (անհրաժեշտության դեպքում տվյալ պետության ազգային լեզվով կամ լեզուներով) և այս պահանջներին համապատասխան դատավորների և պետության այլ ծառայողների պատրաստմանը: Սույն հանձնարարական-առաջարկությունը, այսպիսով, սերտորեն կապված է նաև այս ոլորտում Նախարարների կոմիտեի երկու հանձնարարական-առաջարկությունների հետ (7):

Նախարարների կոմիտեի Բանաձև (2000) 2 հանձնարարական-առաջարկությունը անդամ պետություններին «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ազգային մակարդակում որոշ գործերի վերաքննարկման և վերաբացման մասին», ընդունված 2000 թվականի հունվարի 19-ին նախարարների պատվիրակների 694-րդ ժողովի ընթացքում Նախարարների կոմիտեի Բանաձև (2002) 13 հանձնարարական-առաջարկությունը անդամ պետություններին «Անդամ պետություններում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և մարդու իրավունքների եվրոպական

Իրավական պաշտպանության հատուկ և ընդհանուր միջոցներ

9. Կոնվենցիայի խախտմանը վերաբերող իրավական պաշտպանության ներպետական միջոցների մեծ մասը ներդրվել են կոնկրետ կիրառման ոլորտով: Փորձը ցույց է տալիս, որ այս «իրավական պաշտպանության հատուկ միջոցները» (օրինակ, դատավարության խելամիտ ժամկետների առումով) կարող են շատ արդյունավետ լինել,

եթե դրանք ընկալվում և ներդրվում են համապատասխան ձևով: Դրանք կարող են սահմանափակել, այսպիսով, դատարան ներկայացվող գանգատների քանակը և դատարանի կողմից երկարատև քննարկում պահանջող գործերի քանակը:

10. Բազմաթիվ անդամ պետություններ ներդրել են նաև իրավական պաշտպանության ընդհանուր միջոցներ (օրինակ, սահմանադրական դատարան դիմելու միջոցով), որոնք կարող են օգտագործվել իրավական պաշտպանության հատուկ միջոցներով չքննարկված բողոքների համար:

Որոշ անդամ պետություններում, իրավական պաշտպանության այս ընդհանուր միջոցը կարող է օգտագործվել զուգահեռաբար կամ նույնիսկ մինչև այլ իրավական պաշտպանության միջոցների սպառումը: Որոշ պետություններ պահանջ են ավելացնում, որ միջոցը վիճարկվի այն հիմքով, որ այն լրջորեն խախտում է սահմանադրական իրավունքները և գանգատարկուի համար լուրջ և անդառնալի, անհարթելի հետևանքներ են առաջանում նման գանգատը քննարկելը մերժումից:

Հարկ է նշել, որ այն պետությունները, որոնք ունեն իրավական պաշտպանության այդպիսի հատուկ միջոց, դատարանի առջև ավելի քիչ գործեր ունենալու միտում ունեն:

11. Այսպիսով, անդամ պետություններն իրենք պետք է որոշեն, թե որ համակարգն է ավելի հարմար կոնվենցիայով պաշտպանվող իրավունքների անհրաժեշտ պաշտպանությունը ապահովելու համար, հաշվի առնելով իրենց սահմանադրական ավանդույթները և առանձնահատկությունները:

12. Ինչպիսին էլ որ լինի ընտրված համակարգը, փորձը ցույց է տալիս, որ դեռևս շատ անդամ պետություններում գոյություն ունեն իրավական պաշտպանության ներպետական միջոցների առկայության և/կամ արդյունավետության թերություններ, և որպես հետևանք, դա դատարանի համար աշխատանքի լրացուցիչ ծանրաբեռնվածություն է առաջացնում:

Իրավունքի պաշտպանության միջոց «պիլոտային» վճռից հետո

13. Այն բանից հետո, երբ կայացվել է դատարանի վճիռ, որ բացահայտել է պետության իրավունքում և պրակտիկայում կառուցվածքային կամ ընդհանուր թերություն («պիլոտային» վճիռ) և երբ նույն հիմնախնդրին վերաբերող բազմաթիվ գանգատներ առկախ են դատարանում կամ ենթակա են ներկակայացման դատարան («կրկնվող գործեր»), պատասխանող պետությունը պետք է ապահովի, որ պոտենցիալ գանգատարկուները ունենան իրավական պաշտպանության ներպետական միջոց, որը թույլ կտա դիմել իրավասու ազգային մարմնին, մի միջոց, որը կարող է օգտագործվել նաև ներկա գանգատարկուների կողմից: Նման արագ և արդյունավետ միջոցը նրանց թույլ կտար արդեն փոխհատուցում ստանալ ազգային մակարդակում՝ կոնվենցիայի համակարգի սուբսիդիարության սկզբունքին համապատասխան:

14. Իրավական պաշտպանության նման ներպետական միջոցը կկարողանար նաև զգալիորեն նպաստել դատարանի ծանրաբեռնվածության կրճատմանը: Թեև պիլոտային վճռի կատարումը էական է մնում կառուցվածքային հիմնախնդիրը լուծելու համար և, ըստ այդմ, նույն հարցի վերաբերյալ հետագա գանգատների ներկայացումը կանխելու համար, կարող է գոյություն ունենալ անձանց կատեգորիա, որը վնաս է կրել այս հիմնախնդրից մինչև դրա լուծումը: Այս անձանց համար ազգային մակարդակում հատուցում ապահովելուն ուղղված իրավական պաշտպանության միջոցի գոյությունը թույլ կտար դատարանին՝ նրանց հրավիրել օգտագործել այս նոր միջոցը և անհրաժեշտության դեպքում, նրանց գանգատները հայտարարել անընդունելի:

15. Դրան հասնելու համար հնարավոր են բազմաթիվ տարբերակներ, ի թիվս այլոց, կախված խնդրո առարկա կառուցվածքային հիմնախնդրի բնույթից և այն բանից, թե այդ պրորլեմից ազդված անձը դիմել է, թե ոչ դատարան:

16. Մասնավորապես, հատուկ կառուցվածքային հիմնախնդիր բացահայտած վճռից հետո, կարելի կլինի ընդունել, օրինակ ժամանակավոր մոտեցում, որով տվյալ

պետությունը կքննարկեր դատարանի դատական նախադեպի հրապարակման և տարածման մասին, ընդունված 2002 թվականի դեկտեմբերի 18-ին նախարարների պատվիրակների 822-րդ ժողովի ընթացքում Նախարարների կոմիտեի Rec(2004) 4 հանձնարարական-առաջարկությունը անդամ պետություններին «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան համալսարանական ուսուցման և մասնագիտական պատրաստման մեջ», ընդունված 2004 թվականի մայիսի 12-ին նախարարների կոմիտեի 114-րդ նստաշրջանի ընթացքում իրավական պաշտպանության հատուկ միջոց ներդնելու կամ գոյություն ունեցող միջոցների ընդարձակման հնարավորությունը օրենսդրական կամ դատական նախադեպի ճանապարհով:

17. Այդպիսի դեպք առ դեպք քննարկման ժամանակ, պետությունները կարող են նախատեսել, երբ դա տեղին լինի, կոնվենցիայի խախտում արձանագրած պիլոտային գործին նմանվող դատավարությունների վերաբացումը, որպեսզի թույլ տրվի դատարանին այդ գործերը չքննել և, անհրաժեշտության դեպքում, արագ շտկել շահագրգիռ անձի խախտված իրավունքը: Այս առումով, նախարարների կոմիտեի (2000)2 Հանձնարարական-առաջարկության մեջ նշված չափանիշները կարող են ծառայել որպես վկայակոչման աղբյուր:

18. Երբ իրավական պաշտպանության նման միջոց ներդրվի պիլոտային վճռից հետո, կառավարությունները պետք է անհապաղ տեղեկացնեն դատարանին, որպեսզի նա դա կարողանա հաշվի առնել կրկնվող գործերը քննարկելիս:

19. Այնուամենայնիվ, անհրաժեշտ կամ տեղին չի լինի ստեղծել իրավական պաշտպանության միջոց յուրաքանչյուր գործի համար, որում դատարանի վճիռը բացահայտել է կառուցվածքային հիմնախնդիր կամ դրանց տալ որոշակի հետադարձ ուժ: Որոշ դեպքերում, կարող է նախընտրելի լինել դատարանին թողնել գործերը քննելու հոգսը, որպեսզի, հատկապես բացառվի գանգատարկուին՝ կրկին ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառելու պարտականության պարտադրումը, որը ավելին, կարող է կյանքի կոչվել օրենսդրական փոփոխությունների ընդունումից հետո միայն:

Դատական ընթացակարգերի գերազանցող տևողության համար վիճարկելի հայտարարության դեպքում պաշտպանության միջոցը

20. Իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի հարցը ներկայումս հատկապես արդիական է դատավարության ոչ խելամիտ տևողության վերաբերյալ դիմումների դեպքում, որոնք դատարան ներկայացված գանգատների մեծ մաս են կազմում: Այսպես, իր՝ Կուդլան ընդդեմ Լեհաստանի գործով 2000 թվականի հոկտեմբերի 26-ին կայացրած վճռով դատարանը ընդգծել է նման հայցերի դեպքում պաշտպանության արդյունավետ միջոցի գոյությունը ապահովելու կարևորությունը, ինչպես պահանջում է կոնվենցիայի 13-րդ հոդվածը:

Դատարանի կողմից այս վճռով տրված իմպուլսին ի հետևանք, անդամ պետություններն առաջարկեցին բազմաթիվ լուծումներ, որպեսզի այս ոլորտում ևս նախատեսեն արդյունավետ պաշտպանության միջոց, որը թույլ է տալիս արձանագրել խախտումը և տրամադրել համապատասխան հատուցում:

- Խելամիտ ժամկետներ

21. Բազմաթիվ պետություններ իրենց ներպետական իրավունքում տարբեր ուղիներով (առավելագույն ժամկետ, դատավարության արագացման վերաբերյալ խնդրանքի հնարավորություն) նախատեսում են, որ դատավարության ժամկետը մնա խելամիտ: Որոշ պետություններ քրեական, քաղաքացիական և վարչական գործերով դատավարության յուրաքանչյուր փուլի համար նախատեսում են առավելագույն ժամկետներ: Կոնվենցիայի ներմուծումն անդամ պետությունների իրավական համակարգ, մասնավորապես խելամիտ ժամկետներում դատավարության վերաբերյալ 6-րդ հոդվածով նախատեսված պահանջը, ամրապնդել և լրացրել է ներպետական իրավունքի այս պահանջները:

- Կանխել ուշացումները և արագացնել ընթացակարգերը

22. Եթե օրինական ժամկետները, մասնավորապես քրեական գործերով, չեն պահպանվում կամ եթե տևողությունը գնահատվում է ոչ խելամիտ, մի շարք

պետությունների ներպետական իրավունքը նախատեսում է, որ շահագրգիռ անձը կարողանա դիմում ներկայացնել դատավարությունը արագացնելու համար: Եթե խնդրանքն ընդունվում է, այն կարող է հանգեցնել մի որոշման, որը ամրագրում է այն ժամկետը, որի ընթացքում դատարանը, կամ դատախազը կախված դեպքից, պետք է ձեռնարկի սահմանված դատավարական միջոցը, ինչպիսիք են մինչդատական վարույթի ավարտը կամ դատական քննության ժամկետի նշանակումը: Որոշ պետություններում դատարանները կարող են որոշել, որ դատավարությունը պետք է ավարտվի մինչև որոշակի ժամկետը: Այն պետություններում, որոնք ունեն իրավական պաշտպանության ընդհանուր միջոց սահմանադրական դատարանում, բողոքը կարող է ներկայացվել, որոշ հանգամանքներում, նույնիսկ մինչև իրավական պաշտպանության ներպետական այլ միջոցները սպառելը:

- Խախտված իրավունքի վերականգնման տարբեր ձևերը

23. Անդամ պետությունների մեծ մասում գոյություն ունեն դատավարության ոչ խելամիտ ժամկետների հատուցման պահանջով հայցերի հնարավորություն, ինչպես ընթացքի մեջ գտնվող դատավարության, այնպես էլ արդեն ավարտված դատավարության առումով: Խախտված իրավունքի վերականգնման ընդհանուր կերպով կիրառվող ձևերից մեկն է, հատկապես արդեն ավարտված գործերով, դրամական փոխհատուցումը: Որոշ դեպքերում, պետական մարմնի կողմից որոշում կայացնելու սահմանված ժամկետները չպահպանելը ինքնին հանգեցնում է գանգատարկուի համար նպաստավոր որոշման կանխավարկածին: Այլ դեպքերում, քրեական գործերով, պատիժը կարող է ավելի մեղմ լինել, որպեսզի հատուցվի խելամիտ ժամկետներն անցած քրեական դատավարության հանգամանքը:

Իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցների ներդրման համար լրացուցիչ կամընտիր աջակցություն

24. Հանձնարարական-առաջարկությունը հանձնարարում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին անհրաժեշտ միջոցներ ծավալել աջակցություն տրամադրելու այն անդամ պետություններին, որոնք կոնվենցիայով պահանջվող իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի ներդրման համար աջակցություն կխնդրեն: Խոսքը վերաբերում է, հատկապես, խորհրդատու փորձագետների կողմից իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունը բարելավելու նպատակով իրավական պաշտպանության առկա ներպետական միջոցների ուսումնասիրությունների իրականացմանը:

Հավելված 11.

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ

Սեփականության, արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների խախտումների մասին

1. Արտահերթ զեկույցի անհրաժեշտությունը

Պաշտպանի 2004 թվականի տարեկան զեկույցում անդրադարձ է կատարվել իրավունքների և ազատությունների այնպիսի խախտումներին և դրանք ծնող պատճառներին, որոնք լայն տարածում ունեն և որոնց կանխման, վերացման համար անհրաժեշտ է իշխանությունների հանձինս ՀՀ նախագահի, կառավարության և Ազգային ժողովի անմիջական միջամտությունը:

Պաշտպանի տարեկան զեկույցն այն փաստաթուղթն է, որում բարձրացված խնդիրները չեն կարող և չպետք է անտեսվեն: Պետական մարմինները, որոնց կողմից թույլ տրված խախտումները բերված են զեկույցում, համաձայն «Մարդու իրավունքների

պաշտպանի մասին» օրենքի՝ պետք է որ ձեռնամուխ լինեին դրանց վերացմանը՝ կատարման մասին իրազեկելով հանրությանը, կամ ներկայացնելին հիմնավորումներ գեկույցում նշված գնահատականների հետ անհամաձայնության մասին:

Տարեկան գեկույցում զգալի տեղ է հատկացված քաղաքացիների սեփականության իրավունքի խախտումներին՝ կապված պետական կարիքների համար սեփականության հարկադիր օտարմամբ Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման գործընթացի հետ:

Նկատի ունենալով, որ քաղաքացիների նշված իրավունքի, դրա հետ կապված արդար դատաքնության և դատական պաշտպանության իրավունքների խախտումները ոչ միայն չեն վերացվել և դրանց վերացմանն ուղղված միջոցներ չեն ձեռնարկվում, այլև շարունակվում են, անհրաժեշտություն է առաջացել կրկին անդրադառնալ այդ խնդրին՝ իշխանություններին և հանրությանն ուղղված այս հատուկ գեկույցով:

Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան գեկույցի կապակցությամբ հիմնականում քննադատվել է այն առումով, որ գեկույցում, խոսելով իրավունքների խախտումների մասին, քիչ են վկայակոչվել կամ ընդհանրապես չեն վկայակոչվել կոնկրետ փաստեր: Այս գեկույցում փորձ է արվում լրացնել այդ բացը:

Ստացված և քննարկված բողոքներով ձեռք բերված տվյալներին ներկա գեկույցում գնահատականներ են տրվել՝ ելնելով մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող և Հայաստանի Հանրապետության ստորագրած միջազգային պայմանագրերով ու հռչակագրերով, ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և քննարկվող խնդրին վերաբերող իրավական այլ ակտերով ամրագրված սկզբունքներից:

2. Իրավունքի խախտումների վերաբերյալ բողոքներ

Երևանի «Հյուսիսային պողոտա և կասկադ» ծրագրի իրականացման հետ կապված՝ քաղաքացիների սեփականության հարկադիր օտարման կապակցությամբ **2004 թվականին** բողոք է ստացվել **176 քաղաքացիներից**: Դրանք ինչպես համատեղ, այնպես էլ անհատական բողոքներ են, որոնք վերաբերում են սեփականությունը հարկադիր վերցնելու բացառիկ անհրաժեշտությունը հիմնավորող օրենքի բացակայությանը, հատուցման չափի ոչ համարժեք լինելուն, գնահատողի մենաշնորհային դիրքին, հատուցման գումարից եկամտահարկ հաշվարկելուն և գանձելուն, վերցվող տարածքի և շինության փաստացի սեփականատիրության իրավունքով պատկանելությունն անտեսելուն, դատարանների ոչ արդարացի վճիռներին:

Բողոքատուները Երևան քաղաքի Աբովյան փողոցի 1/2, 1/4, Լալայանց փողոցի 4/2, 5, 11, 12, 13, 17, 18, 25, 27, 29, 31, 33, 35, Տերյան փողոցի 12, 14, 16, 18, 20, 24, Պուշկինի փողոցի 4, 9, 10, 12, 13, 22, 24, 30, 34 հասցեների՝ հիմնականում արդեն վտարված բնակիչներն են, որոնց համատեղ և անհատական բողոքների կապակցությամբ առ այսօր առկախ է քննարկման ընդունված թիվ 1-0629 գործը: Նույն հասցեների բնակիչների բողոքներով շարունակվում են քննարկվել նաև թիվ 1-0744, 1-0776, 1-1096, 1-0967, 1-1240 գործերը՝ որոնցում նշված իրավունքի խախտումների վերացման վերաբերյալ Պաշտպանի ներկայացրած առաջարկները քաղաքապետարանի կողմից չեն կատարվել:

2005 թվականի անցած 6 ամիսների ընթացքում նույնաբովանդակ բողոքներ ստացվել են **239 քաղաքացիներից**, որոնցից 62-ը նախորդ տարվա բողոքատուներն են և շարունակում են պայքարել արդեն իսկ կորցրած սեփականության դիմաց համարժեք փոխհատուցում ստանալու համար:

177 բողոքատուները Փ. Բուզանդի փողոցի 4, 11, 15, 17, 25, 41, Ֆրունզեի փողոցի 6, Արամի փողոցի 16, Ամիրյան փողոցի 4/16, Աբովյան փողոցի 4 հասցեների բնակիչներ են: Այդ բողոքների կապակցությամբ առկա են և քննարկվում են թիվ 1-0108, 1-0325, 1-0413, 1-0460, 1-0462, 1-0463, 1-0464, 1-0526, 1-0551, 1-0585, 1-0628, 1-0705, 1-0752, 1-0874 գործերը:

Հաշվի առնելով որոշ բողոքների նույնաբովանդակ և խնդրի նույնաբնույթ լինելու հանգամանքը, այդ բողոքները քննարկվում են մեկ ընդհանուր գործով, ինչով և պայմանավորված է գործերի թիվը բողոքատուների թվից պակաս լինելը:

Բողոքատուներն արձանագրում են իրենց իրավունքների խախտումները հետևյալ ձևակերպումներով.

1. Սեփականության հարկադիր օտարումն իրականացնելուց առաջ **օրենքով** չի հիմնավորվել պետության կարիքի առկայությունը և նման կարիքը բավարարելու անհրաժեշտության բացառիկ լինելը:

2. Օտարվող տարածքները չեն օգտագործվում պետության՝ օրենքով սահմանված կարիքների բավարարման նպատակներով: Դրանք օտարվում են մասնավոր անձանց, ինչը բերում է սեփականության անարդարացի վերաբաշխման գործընթացի:

3. ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի պահանջն անտեսվել է, և սեփականության հարկադիր օտարումը կատարվում է առանց այդ մասին օրենք ընդունելու՝ կառավարության որոշումներով: Վկայակոչվում են **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ և հողային օրենսգրքի 104-րդ** հոդվածներն այն դեպքում, երբ այդ հոդվածներով ՀՀ կառավարությանը նման որոշումներ ընդունելու լիազորություններ չեն վերապահված:

4. Կառավարության որոշումները պարունակում են անընդունելի և սեփականության իրավունքի սկզբունքների հետ անհամատեղելի պահանջներ:

5. Գործընթացն սկսելուց առաջ չի անցկացվել հատուկ հաշվառում, չի ճշտվել սեփականատերերի և բնակարանի օգտագործման իրավունք ունեցող անձանց շրջանակը, չի որոշակիացվել իրավական որևէ կարգավիճակ չունեցող գույքի պատկանելության հարցը, հնարավորություն չի տրվել օգտվելու **«Ինքնակամ կառուցված շենքերի ու շինությունների, ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին»** ՀՀ օրենքով սահմանված իրավունքներից:

6. Վերցվող շինությունը և տարածքը գնահատվում են միակողմանի՝ **իրացնողը** չի բանակցում սեփականատիրոջ հետ, նրան չի տրամադրում գնահատման ակտը, հաշվի չի առնում սեփականատիրոջ առարկությունները: **Սեփականատերը լիովին մեկուսացված է գնահատման գործընթացից:**

7. Բազմաբնակարան շենքերում հաշվի չեն առնվում ընդհանուր օգտագործման տարածքները, և սեփականատերերը փոխհատուցում չեն ստանում ընդհանուր օգտագործման տարածքում ունեցած իրենց մասնաբաժնի դիմաց:

8. Իրացնողը սեփականատիրոջը ներկայացնում է անընդունելի պայմաններ՝ պայմանագիրը կամավոր կնքելուց հրաժարեցնելու և խրախուսման համար նախատեսված գումարները չվճարելու նպատակով:

9. Դատարաններն անտեսում են իրացնողի ներկայացրած պայմանագրերի միակողմանի կազմված լինելը, միանշանակ բավարարում են պայմանագիր կնքելուն հարկադրելու և զբաղեցրած տարածքից վտարելու վերաբերյալ իրացնողի ներկայացրած հայցերը:

10. Հարկադիր կատարման ծառայության կողմից միանգամից իրականացվում է միայն դատարանի վճռի 2-րդ մասը՝ վտարել բնակարանից: Մինչդեռ վտարմանը պետք է նախորդեր պայմանագիր կնքելուն հարկադրելը՝ **«Դատական ակտերի հարկադիր**

կատարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ և 72-րդ հոդվածների կարգով՝ կատարման համար ժամկետի տրամադրում, չկատարելու դեպքում տուգանքի նշանակում և զանձում դատական կարգով:

11. Պայմանագիր կնքելու դեպքում տրվող հատուցման գումարից, անկախ պայմանագրի անվանումից, պահվում է եկամտահարկ հաշվարկված գումարի 10 տոկոսի չափով:

3. Քննարկվող իրավահարաբերություններին վերաբերող իրավական ակտեր

Իրավունքի խախտումների վերաբերյալ բողոքներով ներկայացված հիմնավորումները ենթակա են գնահատման՝ ելնելով տվյալ խնդիրներին վերաբերող իրավական ակտերում ամրագրված սկզբունքներից:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանում ասված է.

«Անդամ պետությունները պարտավորվել են, Միավորված ազգերի կազմակերպության հետ համագործակցելով, հասնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համընդհանուր հարգանքի ու դրանց **պահպանման քաջալերմանը**»:

Այնուհետև **Հռչակագիրը** մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների շարքում ամրագրել է նաև **սեփականության պաշտպանության**, ընտանիքի համար բավարար կենսամակարդակի ապահովման և **բնակարան ունենալու** իրավունքները /հոդվածներ 17, 25/:

Մարդու իրավունքներին վերաբերող կարևորագույն այդ սկզբունքները վերարտադրվել և ամրագրվել են **ՀՀ Սահմանադրության** 2-րդ գլխում.

«Բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով» /հոդված 16/:

«Յուրաքանչյուր ոք ունի սեփականության և ժառանգման իրավունք...»

Սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը՝ **օրենքով նախատեսված դեպքերում**:

Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն **բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ**» /հոդված 28/:

«Յուրաքանչյուր քաղաքացի ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում նաև **բնակարանի**, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: **Պետությունը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում այս իրավունքի իրականացման համար**» / հոդված 31/:

ՀՀ Սահմանադրական դատարանի 27.02.98 թ. «Ազգային ժողովի կողմից 27.12.95թ. ընդունված «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածին և 28-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» որոշման **«ՈՐՈՇԵՑ»** մասի 2-րդ կետի 2-րդ և 3-րդ պարբերություններում ասված է. «Անձի սեփականությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 28-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերով կարող է օտարվել, իսկ նրա համաձայնության բացակայության դեպքում՝ պետության կողմից սեփականության իրավունքը դադարեցվել միայն **կոնկրետ անշարժ գույքի վերաբերյալ օրենք ընդունելու միջոցով**, որում կհիմնավորվի օտարման

բացառիկ կարևորությունն ու նշանակությունը և կնշվի, թե օտարվող անշարժ գույքը հասարակության և պետության **որ կարիքների բավարարմանն է ուղղվելու:**

Օրենքը միաժամանակ կպարտավորեցնի կառավարությանը, համապատասխան ֆինանսական հաշվարկի հիման վրա, շուկայական գների հաշվառմամբ, կառավարության և օտարման ենթակա անշարժ գույքի **սեփականատիրոջ միջև բանակցությունների արդյունքի և վերջինիս գրավոր համաձայնության հիման վրա** սահմանել փոխհատուցման չափը, որը սեփականատիրոջ կողմից ենթակա է դատական վիճարկման»:

Որոշման 4-րդ կետի 2-րդ պարբերությամբ ասված է. «**ՀՀ կառավարությունը չի կարող հասարակության և պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման այնպիսի ընթացակարգ սահմանել, որը նրան կլիազորի նման անշարժ գույքի օտարման իրավունք**»:

Չնայած այն բանին, որ ուժը կորցրած է ճանաչվել «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքը, Սահմանադրական դատարանի այս որոշումը, որը վերաբերում է Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասին, իր իմաստն ու նշանակությունը չի կորցնում: Այս որոշումն ուժը կորցրած կարող է ճանաչվել միայն այն բանից հետո, երբ կվերացվի կամ կփոփոխվի Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասը:

1999թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածով** սահմանված է.

1. Հողամասը սեփականատիրոջից կարող է վերցվել պետության կամ համայնքի կարիքների համար՝ դրա գինը հատուցելու միջոցով:

Կախված այն բանից, թե ում կարիքների համար է վերցվում հողամասը, դրա գինը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը:

2. Պետության կամ համայնքի կարիքների համար հողամաս վերցնելու մասին որոշում ընդունում է **պետական մարմինը:**

Պետության կամ համայնքի կարիքների համար հողամասը վերցնելու լիազորություն ունեցող պետական մարմինը, ինչպես նաև այդ որոշման նախապատրաստման և ընդունման կարգը սահմանվում են օրենքով:

Քաղաքացիական օրենսգրքի այս հոդվածը **հարմարեցվել է** Սահմանադրական դատարանի վերևում հիշատակված որոշմանը՝ **հարմարեցվել, սակայն չի համապատասխանեցվել**, քանի որ հողամաս վերցնելու յուրաքանչյուր առանձին դեպքի համար օրենքի ընդունում չի սահմանվել, «**Որոշման նախապատրաստման և ընդունման կարգը**» ընդհանուր ոչինչ չունի Սահմանադրական դատարանի որոշման հետ:

2001թ. մայիսի 2-ին ընդունված **ՀՀ հողային օրենսգրքի 104-րդ հոդվածով** սահմանված է.

1. Պետության և համայնքների կարիքների համար քաղաքացիներից և իրավաբանական անձանցից հողամասեր վերցնելու վերաբերյալ որոշումներ ընդունելու համար հիմք են հանդիսանում հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները, բնակավայրերի գլխավոր հատակագծերը:

2. - - -

3. Պետության և համայնքների կարիքների համար վերցվող հողամասի համար վճարը /գնման գինը/, ժամկետները, պայմանները որոշվում են սեփականատիրոջ հետ համաձայնությամբ, իսկ անհամաձայնության դեպքում՝ դատական կարգով:

4. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները /Երևանում Երևանի քաղաքապետը/ կառուցապատման համար հողամասեր տրամադրելու մրցույթ կամ աճուրդ կարող են հայտարարել **ոչ շուտ, քան կհաստատվի և**

անշարժ գույքի պետական միասնական կադաստրում կգրանցվի պետության կամ համայնքի կարիքների համար վերցվող հողամասի և այլ անշարժ գույքի օտարման գոտին, և ոչ շուտ, քան օտարման գոտում գտնվող անշարժ գույքը վերցնելը:

Պետության կամ համայնքների կարիքների համար վերցվող հողամասերի և այլ անշարժ գույքի օտարման գոտին պետք է հայտարարվի հողամասերը վերցնելուց առնվազն մեկ տարի առաջ:

5. Մինչև մեկ տարին լրանալը հողամասը կարելի է վերցնել միայն դրա սեփականատիրոջ համաձայնությամբ:

Այս հոդվածի կետ 4-ն ուժի մեջ է մտել միայն մեկ տարի անց՝ 2002 թ. հունիսի 6-ից:

Նույն օրենսգրքի 108-րդ հոդվածով սահմանված է.

1. Պետության կամ համայնքների կարիքների համար քաղաքացիների և իրավաբանական անձանց հողամասերը կարող են վերցվել քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով՝ **նախնական համարժեք փոխհատուցմամբ:**

2. Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով է իրականացվում նաև համայնքային սեփականության իրավունքով պատկանող հողամասեր վերցնելը պետության կարիքների համար:

3. Հողամասերի սեփականատերերը, **հողամասերը վերցնելուց առնվազն մեկ տարի առաջ, պետք է այդ մասին ծանուցվեն հողամասը վերցնելու որոշում ընդունած մարմնի կողմից:** Մինչև այդ ժամկետը լրանալը հողամասը վերցնելը թույլատրվում է միայն հողամասի սեփականատիրոջ, օգտագործողի համաձայնությամբ:

4. Հողամասը վերցնելու մասին սեփականատիրոջ, օգտագործողի՝ հողամասի կառուցապատման և այլ միջոցառումների անցկացման համար սահմանված կարգով ծանուցելուց հետո գույքի անբաժանելի **բարելավումների համար կատարած ծախսերը չեն հատուցվում:**

Մեջբերված հոդվածներն ամրագրում են, որ հողամասը կարող է վերցվել **պետական մարմնի որոշմամբ:** Սակայն որևէ տեղ չի ասված, թե որն է նման որոշում ընդունելու լիազորություն ունեցող պետական մարմինը: Հետևաբար կարևորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածը, որով պարտադիր է համարվում որոշում ընդունելու լիազորություն ունեցող պետական մարմնին օրենքով սահմանելը: Նման օրենք չի ընդունվել, հետևաբար քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի իմաստով նույնպես **ՀՀ կառավարությունը լիազորություն չունի** քաղաքացիներին պատկանող անշարժ գույքի օտարման վերաբերյալ որոշումներ ընդունելու:

Ուշագրավ է, որ եթե քաղաքացիական և հողային օրենսգրքերով փորձ է արված կանոնակարգելու պետության և համայնքների կարիքների համար հողամաս վերցնելը, ապա բնակելի տների, շենքերի, շինությունների օտարման վերաբերյալ առկա է միայն քաղաքացիական օրենսգրքի 283-րդ հոդվածը, որը շինություններ վերցնելը պայմանավորում է վերցվող հողամասի նպատակային օգտագործմամբ:

Հոդվածում ասված է.

1. Այն դեպքերում, երբ պետության կամ համայնքների կարիքների համար հողամասը վերցնելն անհնար է առանց դրա վրա գտնվող շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը դադարեցնելու, պետությունն այդ գույքը կարող է վերցնել սեփականատիրոջից՝ դրա զինը հատուցելու միջոցով:

2. Անշարժ գույքը վերցնելու մասին պահանջը բավարարվում է, եթե այդ պահանջով դատարան դիմած պետական մարմինն ապացուցում է, որ հողամասն օգտագործելն այն նպատակներով, որի համար դա վերցվում է, անհնար է առանց տվյալ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը դադարեցնելու:

Քանի որ խոսքը վերաբերում է վերցվող հողատարածքների վրա գտնվող բնակարանները վերցնելուն, տեղին է վկայակոչել **ՀՀ բնակարանային օրենսգրքը**, որը թեկուզ և ուժը կորցրած չի ճանաչվել, սակայն մոռացության է մատնվել և անտեսվում են հատկապես օրենսգրքի այն հոդվածները, որոնցով ամրագրված են մարդու՝ բնակարանով ապահովված լինելու իրավունքները:

Օրենսգրքի 87-93, 102, 132-134 հոդվածները նվիրված են բնակտարածությունից քաղաքացիների վտարմանը՝ այլ բնակտարածություն հատկացնելու պայմանով:

132-րդ հոդվածում ասված է. «Պետական կամ հասարակական կարիքների համար հողամասը վերցնելու կապակցությամբ քաղաքացիների անձնական սեփականությունը հանդիսացող բնակելի տները քանդելու դեպքում, **հիշյալ քաղաքացիներին, նրանց ընտանիքներին անդամներին, ինչպես նաև այդ տներում մշտապես բնակվող մյուս քաղաքացիներին** սահմանված նորմերով **բնակարաններ են հատկացվում** պետական կամ հանրային բնակարանային ֆոնդի տներում: Բացի դրանից, բնակելի տների սեփականատերերին, ըստ նրանց ընտրության, կամ **վճարվում է քանդվող տների, շինությունների և կառուցվածքների արժեքը**, կամ իրավունք է տրվում իրենց հայեցողությամբ օգտագործելու այդ տները, շինությունները և կառուցվածքները քանդելուց հետո մնացած նյութերը»:

134-րդ հոդվածի համաձայն, նման քաղաքացիների ցանկությամբ, կարող է այլ տեղում **կառուցվել բնակարան և հանձնվել քաղաքացուն որպես սեփականություն**:

Բնակարանային օրենսգրքով հարցը դրված է այնպես, որ բոլոր դեպքերում **քաղաքացին և նրա ընտանիքը չպետք է դառնան անօթևան**: Դա վերաբերում է նաև սեփականատեր չհանդիսացող մշտական բնակչին:

4. Նախապատրաստական փուլի անհրաժեշտության մասին

Հայտնի է, որ մայրաքաղաքի այն տարածքները, որոնք հայտարարված են «օտարման գոտիներ», հիմնականում սեփական բնակարաններով զբաղեցված տարածքներ են, և դեռևս խորհրդային ժամանակներում սեփականատերերի կողմից այդ բնակարաններում գրանցվել են հարազատներ, բարեկամներ, ծանոթներ, նաև օտարներ, ստեղծվել են օրինական և ինքնակամ լրացուցիչ կառույցներ՝ երբեմն նաև շրջանցելով խորհրդային օրենքներով հաճախակի չարդարացված սահմանափակումները, շինությունները փոխանցվել են մեկը մյուսին առուվաճառքի ներքին կարգով կնքված պայմանագրերով: Այդ ճանապարհով տվյալ տարածքները դարձել են չափազանց խիտ բնակեցված: Բնակիչների համար դա համարվել է թեկուզ և ոչ բարեկարգ, բայց այնուամենայնիվ կացարան, ընտանիքն իրեն չի համարել անօթևան:

Նման բնակեցումները, կառուցումները, փոխանցումները հիմնականում ունեն մի քանի տասնյակ տարիների վաղեմություն: Քաղաքացիների գրանցումներն այդ տարածքներում կատարվել են հաճախ միայն մեկ հասցեի տակ՝ անտեսելով և այդպես էլ չօրինականացնելով հետագայում իրականացված կառույցները: Տեղական իշխանությունները ձևացրել են, թե չեն տեսնում և տեղյակ չեն այդ կառույցներից, դրանք չեն հաշվառվել նաև որպես ինքնակամ կառույցներ:

Նույն տարածքի նախկին բնակիչներից շատերը նաև բնակարաններ են ստացել որպես բնակտարածության կարիքավորներ և վերաբնակվելով նոր ստացած բնակարանում, մնացել են հաշվառված նախկին հասցեում՝ դարձյալ բնակարանի կամ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցողի կարգավիճակը պահպանելու և մեկ այլ ընտանիքի հետ բնակարան ստանալու նպատակով: Հաշվառումից

դուրս չեն գրվել հատկապես ամուսնացած և ամուսնու բնակարան տեղափոխված դուստրերը, որոնց ծնողները բնակվելիս են եղել տվյալ հասցեում:

Բնականաբար, Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացումը ձեռնարկելուց առաջ տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքապետարանը, ինչպես նաև կառավարությունը տեղյակ են եղել, որ շինությունների, ինչպես նաև քաղաքացիների հաշվառումներում տեղ գտած նման խառնաշփոթն արդյունք է պետական համապատասխան մարմինների թողությունների, անտարբերության, հաճախակի նաև բյուրոկրատական մոտեցման, որ քաղաքացին հաճախակի անգոր է եղել նման պայմաններում օրինական կարգով ձևակերպելու իր իրավունքը:

Հետևաբար անհրաժեշտ էր, ելնելով նաև ԱՀՌԾ պահանջներից, նախօրոք հստակեցնել բոլոր տեսակի հաշվառումները, օժանդակել քաղաքացիներին ձևակերպելու և գրանցելու իրենց այն իրավունքները, որոնց գրանցումը ժամանակին չի կատարվել, ոչ միայն հնարավորություն տալ, այլ նաև օժանդակել օգտվելու **«Ինքնական կառուցված շենքերի, շինությունների և ինքնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին»** օրենքի ընձեռած հնարավորություններից: Դրան զուգահեռ, պատկան մարմինները կարող էին դատական կարգով կորցրած ճանաչել այն անձանց բնակօգտագործման իրավունքը, որոնք արդեն մի քանի տասնյակ տարիներ տվյալ վայրում չեն բնակվել:

Սա հնարավորություն կտար հստակ պատկերացնել, թե որքան սեփականատերերի, բնակօգտագործման իրավունք ունեցողների հետ պետք է գործ ունենան, որքան քաղաքացի է բնակարանից զրկվելու, և ինչ կարգի հատուցում կարող է պահանջվել:

Այս գործողություններից ոչ մեկը չի կատարվել, և հենց նման պայմաններում ՀՀ կառավարությունը, որը, համաձայն Մահմանադրական դատարանի 27.02.98թ. հիշատակված որոշման՝ **«իրավասու չէ հասարակության և պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման այնպիսի ընթացակարգ սահմանել, որը նրան կլիազորի անշարժ գույքի օտարման իրավունք»**, ընդունել է մի շարք որոշումներ, որոնցով իրականացվել և իրականացվում են քաղաքացիների անշարժ գույքի օտարումներն առայժմ միայն Երևան քաղաքում:

5. ՀՀ կառավարության որոշումները

ՀՀ կառավարությունը 16.07.01թ. ընդունել է **թիվ 645** որոշումը **«Երևանի Հյուսիսային պողոտայի կառուցապատման ծրագրի իրականացման միջոցառումների մասին»**, որով հաստատել է 82.700 քմ տարածքով օտարման գոտի, նախատեսել է Երևանի քաղաքապետին առընթեր ստեղծել **«Հյուսիսային պողոտա և կասկադ ծրագրերի իրականացման գրասենյակ» /ԾԻԳ/** պետական հիմնարկությունը, որը պետք է ֆինանսավորվեր պետական բյուջեից:

Առաջարկվել է Երևանի քաղաքապետին՝ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի համաձայն **ծանուցել օտարման գոտում գտնվող անշարժ գույքի բոլոր սեփականատերերին և օգտագործողներին** նրանց գույքը վերցնելու մասին:

Որոշման մեջ ոչինչ չի ասված հաշվառումները կանոնակարգելու, սեփականատերերին ճշտելու, օգտագործողների իրավունքները որոշակիացնելու անհրաժեշտության մասին:

05.10.01թ. կառավարությունն ընդունել է **թիվ 950** որոշումը **«Երևանի Հյուսիսային պողոտայի օտարման գոտում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը գնելու, վերցնելու գնային առաջարկի ձևավորման և իրացման կարգը հաստատելու մասին»**:

Այս որոշումն ընդունվել է ի փոփոխումն և ի լրումն **թիվ 645** որոշման, և այս որոշումն է, որ հետագա փոփոխություններով հանդերձ մնում է որպես տվյալ խնդիրը կարգավորող հիմնական իրավական ակտ:

Որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով Հյուսիսային պողոտայի կառուցապատման գոտում գտնվող անձանց անշարժ գույքը գնելու, վերցնելու և իրացնելու հետ կապված աշխատանքների, գնային առաջարկների կազմակերպումն իրականացնում է Երևանի **քաղաքապետը ԾԻԳ-ի միջոցով**, պայմանագրի համաձայն:

ԾԻԳ-ը դիտվում է որպես իրացնող և լիազորվում է պայմանագրեր կնքելու սեփականատերերի հետ:

Համաձայն այդ կարգի, սեփականատերերին տրվում է վերցվող գույքի շուկայական արժեքը կամ այլ անշարժ գույք՝ այն հաշվարկելով հատուցման գնի մեջ:

Նախատեսվում է նաև խրախուսման գումար, եթե սեփականատերն անշարժ գույքի պայմանագիրը կնքելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ազատում է բնակարանը, չազատելու դեպքում պայմանագրով սահմանված գումարը նվազեցվում է յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար մեկ տոկոսի չափով:

Այս որոշմամբ բնակարանի օգտագործման իրավունք ունեցող անձանց հարցը չի կարգավորված:

ՀՀ կառավարությունը 01.08.02թ. թիվ 1150-Ն որոշմամբ փոփոխություն կատարելով 16.07.01թ. թիվ 645 որոշման մեջ, վերահաստատել է օտարման գուտին 82.700 քմ տարածքով ըստ հավելվածի, ապա նաև ներկայացվել է որոշման 4-րդ կետը հետևյալ խմբագրությամբ. «Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևանի Հյուսիսային պողոտայի աշխատանքները խթանելու նպատակով օտարման գոտում գտնվող հողամասերն ու անշարժ գույքն իրացնելու, գնելու և վերցնելու փոխհատուցման առաջարկում նախատեսել նաև հողամաս տրամադրելն առանց մրցույթի՝ ուղիղ բանակցությունների միջոցով»:

Այնուհետև հաջորդել է կառավարության 01.08.02թ. թիվ 1151-Ն որոշումը՝ «Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին»:

Այս որոշմամբ Երևանի քաղաքապետին հանձնարվել է՝ ճշտել վերցվող անշարժ գույքի սահմանները և գրանցել Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում, գույքի սեփականատերերին և օգտագործողներին սահմանված կարգով **հայտարարել** օտարման գոտու և նրանց անշարժ գույքը **վերցնելու ժամկետների, ֆինանսավորման աղբյուրների և կարգի մասին**: Այս «**հայտարարել**» արտահայտությանը հետագայում տրվել է յուրահատուկ մեկնաբանություն, և ոչ ոք գործընթացի մասին պատշաճ չի ծանուցվել:

Որոշման «գ» կետով քաղաքապետին հանձնարվել է նաև լիցենզավորված համապատասխան կազմակերպությունների միջոցով կազմակերպել և իրականացնել անշարժ գույքի գնահատման աշխատանքները:

Որոշման հենց այսպիսի ձևակերպումն էլ հիմք է հանդիսացել վերցվող անշարժ գույքի միակողմանի /առանց սեփականատիրոջ մասնակցության/ գնահատման և այդպիսի գնահատականով ձևավորված գինը նրան պարտադրելու համար:

01.08.02թ. ՀՀ կառավարությունն ընդունել է նաև 1169-Ն որոշումը՝ թիվ 950 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

Ըստ այս որոշման, վերցվող գույքի դիմաց տրվող փոխհատուցման գումարի մեջ նախատեսվում է ներառել նաև օրենսդրությամբ սահմանված **հարկերը**, որի հիման վրա հետագայում բոլոր տեսակի փոխհատուցումներից պահվել է եկամտահարկ:

Այստեղ նաև խստացված են պայմանները՝ օտարման պայմանագիրը կնքելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում տարածքը չազատելու համար նախատեսվում է տույժ՝ հատուցման գնի նվազեցում ուղացված յուրաքանչյուր օրվա համար 2 տոկոսի չափով մինչև խրախուսման գումարի չափը:

Նախատեսվում է նաև այլ **բնակարանի հատկացում՝ սեփականատերերին Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմաններում, օգտագործողներին և վարձակալներին Երևան քաղաքի վարչական տարածքում:**

ՀՀ կառավարության 29.01.04թ. թիվ 57-Ն որոշմամբ հիմնովին փոփոխվել է թիվ 950 որոշումը: Այն վերանվանվել է «Երևանի Հյուսիսային պողոտայի և Երևան քաղաքի օտարման այլ գոտիներում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը գնելու, վերցնելու գնային առաջարկի ձևավորման և իրացման կարգը հաստատելու մասին»:

Ուղղորդության արժանի է որոշման 1.2 կետը, որը սահմանում է. «ՀՀ կառավարության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին՝ 10-օրյա ժամկետում

օտարման գոտում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի վերաբերյալ, որոնք ենթակա չեն փոխհատուցման, **սահմանել գրանցման առանձնահատկությունները**»:

Ով և ինչ չափանիշներով պետք է որոշի նման շինությունների, զբաղեցրած տարածքի փոխհատուցման ենթակա չլինելը, ինչ բնույթ պետք է ունենան **գրանցման առանձնահատկությունները**, որոշմամբ չի սսված:

Այս որոշմամբ սահմանված կարգի 1-ին կետում բնակելի և ոչ բնակելի ինքնակամ կառուցված շենքերը, շինությունները, ինքնակամ զբաղեցված հողամասերն անվանված են **ինքնակամ գույք** և հատուցման ոչ ենթակա: Որևէ վերապահում չի կատարվել դրանց նկատմամբ 28.12.02թ. ընդունված «**ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին**» օրենքի դրույթները կիրառելու մասին, ինչը ենթակա է գնահատման որպես **խտրական մոտեցում**, քանի որ հենց այս «**ինքնակամ գույքն**» է, որ դուրս է մնացել պետական հաշվառումներից հիմնականում պետական մարմինների մեղքով:

Թիվ 57-ն որոշմամբ հաստատված փոխհատուցման կարգի 7-րդ կետի «գ» ենթակետով սահմանվել է. «Մինչև պետության կարիքների համար հողամասը վերցնելու մասին լիազորություն ունեցող պետական մարմնի որոշման հիման վրա պետական գրանցում ստանալու պահը /28.08.01թ./, այդ թվում ինքնակամ կառույցներում հաշվառված /գրանցված/ անձանց և նրանց անչափահաս երեխաներին տրամադրվում է աջակցություն յուրաքանչյուր անձին 2000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով՝ հիմք ընդունելով հաշվառման փաստը հաստատող փաստաթղթերը /անձնագիր, ծննդյան վկայական կամ հաշվառումը վարող լիազոր մարմնի կողմից տրվող տեղեկանք/»:

Այս որոշմամբ հաստատված կարգով նույնպես նախատեսվում է խրախուսման գումարի տրամադրում ինչպես սեփականատերերին, այնպես էլ օգտագործողներին և վարձակալներին, եթե գնային առաջարկ ստանալուց հետո **5 աշխատանքային օրվա** ընթացքում կազատեն տարածքը: Բնակօգտագործողների խրախուսման գումարը նախատեսվում է 1500 ԱՄՆ դոլար, միայնակ անձանցը՝ 4000 դոլար:

Փաստորեն, եթե նախկին կարգով տարածքի խրախուսման գումար ստանալու համար տարածքն ազատելու պարտավորությունն առաջանում էր պայմանագիրը կնքելուց հետո **10 աշխատանքային օրվա** ընթացքում, **ապա այս կարգը սահմանում է իրացնողի կողմից գնային առաջարկ ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում տարածքի ազատման պարտավորություն**, որը չկատարելու դեպքում խրախուսման գումարը չի վճարվում:

Հենց այս կետն է լայնորեն օգտագործում իրացնողը՝ սեփականատիրոջը հնարավորություն չտալով վիճարկել գնային առաջարկը, նրան հարկադրում է պայմանագիր կնքել դատական կարգով և գրկում խրախուսման գումարից:

Այս որոշումների իմաստից հետևում է, որ տարածքը որպես օտարման գոտի գրանցվելուց հետո, սեփականատերերը գրկվում են իրենց սեփականությունը տնօրինելու իրավունքից՝ անբաժանելի բարելավումներ կատարել, այլ անձանց բնակեցնել, կառուցապատել և այլն: Այդ ամենի դիմաց, ըստ հիշյալ որոշումների և ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 221-րդ հոդվածի 2-րդ կետի, սեփականատերը փոխհատուցում չի կարող ստանալ, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածին և հակասահմանադրական է ճանաչվել Սահմանադրական դատարանի արդեն հիշատակված որոշմամբ:

ՀՀ կառավարության 04.03.04թ. թիվ 399 որոշմամբ թույլատրվել է Երևանի քաղաքապետին՝ առանձին դեպքերում փոխհատուցման առաջարկում նախատեսել նաև կառուցապատման իրավունքի տրամադրումն առանց մրցույթի:

Այստեղից հետևում է, որ սեփականատիրոջը ևս կարող էր առաջարկվել կառուցապատման իրավունք, ինչը սակայն երբևէ չի արձանագրվել:

Նույն որոշմամբ թույլատրված է քաղաքապետին՝ առանձին դեպքերում կառավարության որոշմամբ, առանց մրցույթի վաճառքի ձևով տրամադրել նաև հողերի վարձակալության իրավունք:

Դրան հաջորդել է կառավարության 17.06.04թ. թիվ 909-ն որոշումը, որով բավարարվել է **Երևանի քաղաքապետի միջնորդությունը** և թույլատրվել է քաղաքապետին՝ կնքել կառուցապատման իրավունքի պայմանագրեր առանց մրցույթի, ուղիղ բանակցությունների միջոցով, 3 տարի ժամանակով՝ ա/ «**Էլիտ փրոջեքտ շին**», բ/ «**Գլենդել հիլ**», գ/ «**Գրիար**», դ/ «**Ավանտուր**», ե/ «**Գապրնակշին**» **ՍՊԸ-ների** և գ/ **Մելիք Գասպարյանի** հետ: Ըստ որոշման, վերոհիշյալ ՍՊԸ-ներն ու անձը, իրացման աշխատանքներն ավարտելուց հետո, ձեռք են բերում այդ հողամասերի **վարձակալության իրավունք 99 տարի** ժամանակով՝ հողի հարկի դրույքաչափին հավասարեցված վարձավճարով, **զմնան նախապատվության** իրավունքով՝ սույն որոշման ընդունման պահին գործող կադաստրային արժեքի չափով: Զաղաքապետը նրանց է զիջել նաև տարածքները վերցնելու վերաբերյալ բանակցություններ վարելու և պայմանագրեր կնքելու իրավունքը: Այնուհետև նրանք են ձեռնարկում և իրականացնում քաղաքացիների սեփականության հարկադիր օտարումը: Փաստորեն երկու կողմերը՝ կառուցապատողը և պատվիրատուն նախնական պայմանագիր են կնքում երրորդ անձանց իրավունքների վերաբերյալ, ինչն անթույլատրելի է համարվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (հոդված 346):

ՀՀ կառավարությունը, փորձելով ինչ-որ չափով մեղմել Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման հետ կապված դժգոհությունների ալիքը, 19.05.05թ. ընդունել է թիվ 759-ն որոշումը «**ՀՀ կառավարության 05.10.01թ. թիվ 950 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**»:

Այս որոշումով փոխվում է թիվ 950 որոշման վերնագիրը և դառնում է «**Երևան քաղաքի օտարման գոտիներում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը վերցնելու, փոխհատուցելու, գնային առաջարկը ձևավորելու և իրացնելու կարգը հաստատելու մասին**»:

Այստեղ կարևոր նորույթ է այն, որ վերնագրում չի օգտագործվում «**զմնելու**» հասկացությունը, ինչը նշանակում է, որ այլևս չեն կարող գույքի հարկադիր վերցնելը ձևակերպել որպես առուվաճառքի պայմանագրով վերցված՝ ինչպես հիմնականում ձևակերպվել են մինչ այդ կնքված պայմանագրերը, որի հիման վրա և տրված փոխհատուցումներից պահվել են եկամտահարկեր: Այս որոշմամբ հաստատված կարգով, ի տարբերություն նախկին կարգի, տրվող հատուցման գումարներից **հարկերի զանձում չի նախատեսվում**:

Թիվ 759-ն որոշմամբ հաստատված կարգում նորույթ է և այն, որ վերցվող գույքը **զնահատողը պետք է ընտրվի մրցույթով**՝ զնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված կազմակերպությունների թվից:

Նորույթ են առաջարկի ընդունման, պայմանագրի կնքման և տարածքն ազատելու համար **սահմանված ժամկետները**: 7-րդ կետի 2-րդ պարբերության մեջ ասված է. «Անշարժ գույքի իրացման աշխատանքները սեղմ ժամկետում կատարելու նպատակով կիրառվում են ֆինանսական խրախուսումներ՝ պայմանով, որ սեփականատերերը **զնային առաջարկ ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կտան համաձայնություն մեկամսյա ժամկետում կնքելու պայմանագիր և պայմանագրով սահմանված ժամկետում քանդման նպատակով տարածքն ազատելու մասին**»:

Այսպիսով, դարձյալ **բաց են մնացել գույքի զնահատմանը սեփականատիրոջ մասնակցության, զնահատման փաստաթղթի օրինակը ստանալու, զնահատումը վիճարկելու, զնահատողին բացարկելու, զնահատման վերանայման կարգին վերաբերող այնպիսի հարցեր, որոնցով պետք է պաշտպանված լինեին սեփականատիրոջ իրավունքները**: Պայմանագիր կնքելու համաձայնություն տալուց հետո այն կնքելու համար տրվող մեկամսյա ժամկետը հարցը չի լուծում, քանի որ առաջարկված գնի շուրջը բանակցելու պարտականություն իրացնողի համար, և իրավունք՝ սեփականատիրոջ համար, այս փաստաթղթով չեն սահմանվում, սեփականատիրոջ իրավունքը դարձյալ չի պաշտպանվում:

Վերցվող տարածքում հաշվառված անձանց տրվող աջակցության գումարը սահմանվել է 2 միլիոն դրամ յուրաքանչյուր անձին և խրախուսման գումար մեկ միլիոն դրամ, ընդհանուրը կազմում է մոտ 7 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումար, սակայն դարձյալ պահպանվել է այն սկզբունքը, որ աջակցություն չի տրվում այն անձանց, որոնք հաշվառվել /գրանցվել/ են տարածքի վերաբերյալ սահմանափակումների գրանցումից հետո: Ստացվում է, որ որևէ իրավունք ձեռք չեն բերել այն անձինք, որոնք 2001 թվականից հետո ամուսնացել են տվյալ տարածքի բնակիչների հետ և բնակություն են հաստատել այդ տարածքում որպես ամուսիններ: 2001 թվականից հետո այս տարածքներում հաշվառված փախստականները նույնպես վտարվում են առանց որևէ փոխհատուցման:

Որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետի 2-րդ պարբերությամբ բացառվում է աջակցության գումար տրամադրելը սեփականատերերին և նրանց ընտանիքի անդամներին /ամուսնուն, անչափահաս կամ չափահաս, սակայն իրենց ընտանիքը չկազմած երեխաներին/, չամուսնացած սեփականատիրոջ ծնողներին:

ՀՀ կառավարության այս և նախորդ որոշումներն օրենքի ուժ ունեցող որոշումներ են և սահմանում են իրավունքներ և պարտականություններ պետական մարմինների ու քաղաքացիների համար: Համաձայն ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի, նման որոշում ընդունելու համար կառավարությունը պետք է լիազորված լիներ Ազգային ժողովի կողմից: Սահմանադրական այդ սկզբունքն ամրագրված է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի օրենսդրական ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը կարող է կառավարությանը լիազորել ընդունելու օրենքի ուժ ունեցող որոշումներ, որոնք գործում են Հանրապետության Ազգային ժողովի սահմանած ժամկետում»: ՀՀ Ազգային ժողովը կառավարությանը նման որոշումներ ընդունելու լիազորություն չի տվել:

Կառավարության վերոհիշյալ որոշումներով քաղաքացիների համար սահմանվել է պարտավորություն՝ պետական մարմնի սահմանած հատուցմամբ օտարել իրենց սեփականությունը և հարկադրաբար ընտրել այլ բնակավայր: Այդ որոշումները քաղաքացիների իրավունքների պաշտպանությունն ապահովող բավարար չափով նորմեր չեն պարունակել, որի հետևանքով որոշումներով նախատեսված գործընթացներն իրականացնող պետական մարմնի կողմից անտեսվել են քաղաքացիների այդ իրավունքները:

6. Ծրագիրն իրականացնելու ընթացքում թույլ տրված խախտումներ

Քաղաքացիներից տարածքներ վերցնելը, բնակարաններից սեփականատերերի և օգտագործողների վտարումն իրականացվել են իրավունքի հետևյալ խախտումներով.

1. Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 108-րդ հոդվածի 3-րդ կետի. «Հողամասերի սեփականատերերը, հողամասը վերցնելուց առնվազն մեկ տարի առաջ, պետք է այդ մասին ծանուցվեն հողամասը վերցնելու որոշում ընդունած մարմնի կողմից: Մինչև այդ ժամկետի լրանալը հողամասը վերցնել թույլատրվում է միայն հողամասի սեփականատիրոջ, օգտագործողի համաձայնությամբ»:

Այսինքն՝ յուրաքանչյուր սեփականատեր կամ օգտագործող անհատապես պետք է ծանուցվեր իր տարածքը պետության կարիքների համար վերցնելու վերաբերյալ որոշման մասին:

ՀՀ կառավարության թիվ 645, թիվ 950 և այս հարցին վերաբերող մյուս որոշումներով սեփականատերերին և օգտագործողներին «սահմանված կարգով» ծանուցելու պարտականությունը դրվել է Երևանի քաղաքապետի վրա: Սակայն նման ծանուցում որևէ մեկը սահմանված ժամկետում (մեկ տարի առաջ) չի ստացել: Օտարման գոտին սահմանելու վերաբերյալ կառավարության որոշումը հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում, ինչը չի կարող պատշաճ ծանուցում համարվել, քանի որ այն անվանումներ

և օտարման կոնկրետ ժամկետներ չի պարունակել՝ որոշմամբ նշվել են օտարման գոտու սահմանները, որոնցում ներառված այս կամ այն տարածքը հետագայում կարող էր դիտվել օտարման ոչ ենթակա, կամ մեկ այլ չնախատեսված տարածք կարող էր ներառվել տվյալ գոտում: Բացի այդ, պետական մարմնի կողմից անհատապես չձանուցված անձն իրավունք ձեռք չի բերում հանդես գալու որպես իրավահարաբերության կողմ և վիճարկելու մյուս կողմի գործողությունները: Դրա վկայությունն է այն, որ այսօր այդ նույն գոտում կան հողի և բնակարանի սեփականատերեր, որոնց որևէ առաջարկ առ այսօր չի ներկայացվել, մինչդեռ շրջակա տարածքները վերցվել և բնակարանները քանդվել են:

2. Ծրագրերի իրականացման գրասենյակը պայմանագիր է կնքել անշարժ գույքի գնահատման լիցենզիա ունեցող միայն մեկ՝ «Արթին Էնթերփրայս» կազմակերպության հետ, որին մենաշնորհային կարգավիճակ տալով, դարձրել է շահագրգիռ կազմակերպություն իրացնողի կողմում և բոլոր գնահատումները կատարել է այդ կազմակերպության միջոցով: Վերջինս գնահատել է վերցվող տարածքը և, գնահատման փաստաթղթերը սեփականատիրոջը չտրամադրելով, նրան գրկել է կատարված հաշվարկներին ծանոթանալու և իր առարկությունները ներկայացնելու հնարավորությունից: Իրացնողը ներկայացրել է գնային առաջարկ այդպիսի հաշվարկներով կազմված գնահատմամբ:

Հիմնականում, սեփականատերերի կամ օգտագործողների առարկությունները կատարված գնահատման դեմ չեն քննարկվել, նրա հետ բանակցություններ չեն վարվել, գնահատումները չեն վերանայվել, ներկայացված առարկությունները դիտվել են որպես հրաժարում պայմանագիր կնքելուց, և հայց է ներկայացվել դատարան՝ պայմանագիր կնքելուն հարկադրելու և տարածքից, բնակարանից «թվարկված անձանց և տարածքն զբաղեցնող այլ անձանց» վտարելու պահանջով:

Այս ամբողջ գործընթացում հատկապես կարևորելով **դատական պաշտպանության և արդար դատաքննության** իրավունքի իրականացումը, կատարված ընդհանրացումները հաստատող օրինակները ներկայացվում են 7-րդ բաժնում:

3. Բողոք ներկայացրած սեփականատերերը և օգտագործողները, հանդիսանալով պատասխանողներ, դատարանում առարկել են ինչպես ՀՀ կառավարության որոշումների սահմանադրականության, այնպես էլ հայցվորի կողմից իրենց իրավունքների խախտումների դեմ, նշելով տարածքն ամբողջապես հաշվարկում չներառելը, շուկայական գինը ճիշտ չհաշվարկելը, գնահատողի կողմնակալ լինելը, սեփականատիրոջը որպես օգտագործող դիտելը, այլ օգտագործողների իրավունքներն անտեսելը և նման այլ հարցեր:

Չգալի թիվ են կազմում այն գործերը, որոնցով ներկայացվել են հակընդդեմ հայցեր սեփականության իրավունքը կամ բնակօգտագործման իրավունքը ճանաչելու մասին, միջնորդություններ՝ վերցվող գույքը չեզոք գնահատողի միջոցով վերագնահատելու կամ ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու և այլ պահանջների մասին:

Դատարանները չեն անդրադարձել կառավարության որոշումների սահմանադրականությունը վիճարկելու հարցին՝ օգտվելու քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված իրավունքից և այդ նպատակով դիմելու դատարանների նախագահների խորհրդին:

Որպես կանոն, դատարանները չեն բավարարել չեզոք գնահատողի միջոցով վերցվող գույքը վերագնահատելու կամ ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունները, անտեսել են իրացնողի կողմից Պաշտպանին բողոք ուղարկած անձանց սեփականության միակողմանի գնահատման վերաբերյալ նրանց առարկությունները, նրանց հետ պատշաճ բանակցություններ չվարելը: Հակընդդեմ հայցերը՝ սեփականության իրավունքը ճանաչելու մասին, մերժվել են այն հիմքով, որ այդ իրավունքը **պետական գրանցում չի ստացել**:

Բոլոր գործերով իրացնողի հայցերը բավարարվել են՝ սեփականատերերի, օգտագործողների առարկությունները որակվել են որպես անհիմն, ընդունվել է իրացնողի այն պնդումը, որ պատասխանողները խոչնդոտում են կառուցապատման ծրագրերի

իրականացմանը: Դատարաններն այդ ծրագրերը սեփականատերերի, օգտագործողների սահմանադրական իրավունքների նկատմամբ դիտել են որպես առաջնային, և պատասխանողներին վճռով պարտավորեցրել են պայմանագիր կնքել իրացնողի առաջարկած պայմաններով առանց խրախուսման գումարի, և զբաղեցրած տարածքից վտարել են ինչպես նրանց, այնպես էլ տարածքն զբաղեցնող **այլ անձանց**:

Առաջին ատյանի դատարանի այսպիսի վճիռները թողնվել են անփոփոխ ինչպես վերաքննիչ, այնպես էլ վճռաբեկ դատարաններում:

4. Դատարանների նման մոտեցումները Պաշտպանին դիմած սեփականատերերին, օգտագործողներին բերել են այն համոզման, որ դատական պաշտպանության դիմելու դեպքում նրանք կկորցնեն նաև, այսպես կոչված, **խրախուսանքի** ձևով տրվող գումարները, որ իրացնողի նպատակն է այդ գումարից իրենց գրկելու համար հիմքեր ստեղծելը: Ուստի հարկադրված են եղել ստորագրել իրացնողի կազմած և ներկայացրած պայմանագիրը: **Կառավարության որոշումներով նախատեսված խրախուսանքի գումարը ծառայեցվել է որպես պայմանագիր կնքելուն հարկադրելու միջոց**, և պայմանագիր չստորագրած անձինք գրկվել են խրախուսման գումար ստանալու իրավունքից: Իրացնողն ինքը նույնպես սեփականատիրոջը մղել է պայմանագիր կնքելուց հրաժարվելուն, հատկապես այն դեպքերում, երբ խոսք է եղել որպես խրախուսանք առավել մեծ գումար վճարելու մասին: Այսպիսով, անընդունելի պայմաններ առաջարկելով՝ իրացնողը հարկադրել է կողմին հրաժարվել պայմանագիր կնքելուց, ապա դատարանի միջոցով կողմին գրկել է տրվելիք խրախուսման գումարներից:

Պայմանագրերը հիմնականում անվանվել են **«առուվաճառքի»**, թեև սեփականատերերից գույքը վերցվել է նրանց կամքին հակառակ, և խոսք կարող էր լինել միայն փոխհատուցման մասին, որից եկամտահարկ պահվել չէր կարող, համաձայն **«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «դ» և «ե» կետերի**: Տրվող գումարներից եկամտահարկ հաշվարկվել և պահվել է ոչ միայն նման պայմանագրերով, այլ նաև այն պայմանագրերով, որոնք անվանված են «փոխհատուցման»: Դատարաններն այս հարցը նույնպես չեն քննարկել, պայմանագրերի «առուվաճառք» անվանումները սխալ չեն համարել, եկամտահարկ հաշվարկելը չեն գնահատել որպես անօրինական:

5. Հարկադիր կատարման ծառայությունը, ունենալով դատարանից տրված կատարողական թերթ՝ պայմանագիր կնքելուն հարկադրելու և բնակարանից վտարելու մասին, հիմնականում ձեռնարկել է միայն բնակարանից վտարումը, չապահովելով դատական վճռի 1-ին մասի կատարումը:

7. Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի խախտումների օրինակներ

Ստորև անդրադարձ է կատարվում մի քանի դատական վճիռների, որոնցով կարելի է պատկերացում կազմել նման հարցերով դատարանների ընդհանուր մոտեցումների մասին: Դրանք Պաշտպանին ուղղված բողոքներով ներկայացված վճիռների մի մասն են և վերցված են պատահական ընտրությամբ.

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի /հետագայում դատարան, նկատի ունենալով, որ բոլոր քննարկվող վճիռները կայացվել են նույն համայնքների դատարանի կողմից/ 26.12.03թ. վճռով /նախագահող դատավոր՝

Ռ. Ներսիսյան/ բավարարվել է ԾԻԳ կազմակերպության հայցն ընդդեմ Պուշկինի փողոցի 11/4 հասցեի տան սեփականատերերի՝ գույքը պետական կարիքների համար վերցնելու մասին պայմանագիր կնքելուն հարկադրելու և տարածքից վտարելու վերաբերյալ:

Պատասխանողները դատարանին հայտնել են, որ համաձայն են ազատել տարածքը և հայցվորին տրամադրել իրենց սեփականությունը, սակայն պահանջում են, որ Կենտրոն համայնքի սահմաններում իրենց տրամադրվի բնակարան՝ համաձայն ՀՀ կառավարության 05.10.01թ. թիվ 950 որոշման 5-րդ կետի, որով ասված է. «Իրացվող բնակարանի նկատմամբ իրավունք ունեցող քաղաքացիների՝ **այլ բնակտարածությանը փոխհատուցում ստանալու ցանկությունը կիրականացվի** ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափով բնակտարածության հատկացմամբ, սեփականատերերին՝ Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմաններում, օգտագործողներին և վարձակալներին՝ Երևան քաղաքի վարչական տարածքում»:

Պատասխանողները նաև վիճարկել են առաջարկվող փոխհատուցման չափը, որը ներկայացվել է ըստ «Արթին էնթերփրայս» կազմակերպության գնահատման, պահանջել են վերագնահատում անկախ գնահատողի միջոցով:

Պատասխանողների ոչ մի պահանջ չի բավարարվել, ընտանիքը 9 անդամներով վտարվել է բնակարանից:

Դատարանն անտեսել է, որ կառավարության որոշման միանշանակ խոստումը բնակտարածությանը փոխհատուցման վերաբերյալ՝ «**կիրականացվի**», մերժվել է: Դատարանը չի անդրադարձել նաև գնահատման ճշտությանը՝ այն վիճարկելու բավարար հիմք չի տեսել:

Դատարանի այս վճռով սեփականատերերը զրկվել են նաև նախատեսվող խրախուսման 9850 ԱՄՆ դոլարին համարժեք գումարից:

Վճիռն անփոփոխ է թողնվել վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից:

2. Դատարանի 24.12.03թ. վճռով /նախագահող դատավոր՝ Հ. Հովհաննիսյան/ բավարարվել է ԾԻԳ կազմակերպության հայցը՝ Պուշկինի փողոցի 11/4 հասցեի մեկ այլ ընտանիքի պայմանագիր կնքելուն հարկադրելու և 92.3 քմ տարածքի դիմաց 23.660 դոլարի փոխհատուցմամբ վտարելու մասին:

Այս ընտանիքը նույնպես պահանջել է կառավարության թիվ 950 որոշմամբ խոստացված կարգով իրեն տրամադրել այլ տարածք վերցվողի փոխարեն, սակայն իրացնողն այդ պահանջը չի բավարարել: Դատարանը չի քննարկել մերժման պատճառները և վճռել է հարկադրել պայմանագիր կնքելու գնահատման ակտի համաձայն՝ «պատասխանողներին և տարածքն զբաղեցնող **այլ անձանց** վտարել Պուշկինի 11, բնակարան 4-ից»:

«Վճռեց» մասի ձևակերպումը նույնությամբ վերցված է հայցադիմումից և վճռում չի ասված, թե ովքեր են այդ «այլ անձինք», ինչու դատաքննության մասնակից չեն դարձվել, ինչու է դատաքննությանը մասնակից չդարձված անձանց իրավունքներին վերաբերող վճիռ կայացվում:

Նույնը կրկնվել է վերաքննիչ դատարանում: Վճիռն անփոփոխ է թողնվել նաև վճռաբեկ դատարանի որոշմամբ:

Ընտանիքը 11 անդամներով վտարվել է տարածքից, զրկվելով նաև 14.820 դոլարին համարժեք դրամի խրախուսման գումարից:

3. Դատարանի 26.01.04թ. վճռով /նախագահող դատավոր՝ Գ. Կարախանյան/ բավարարվել է ԾԻԳ կազմակերպության հայցն ընդդեմ Տերյան փողոցի 16 հասցեի սեփականատերերի: Պատասխանողները հայտնել են, որ հայցվորն իրենց առաջարկել է գտնել վաճառվող բնակարաններ, որոնք կգնվեն նրանց համար որպես վերցվող

բնակարանի դիմաց տրվող փոխհատուցում: Իրենք նման բնակարաններ առաջարկել են, սակայն հայցվորը չի համաձայնվել գնել դրանք տարբեր պատճառաբանություններով: Վերջին անգամ իրենք համապատասխան բնակարան են մատնանշել 20.12.03թ., սակայն հայցվորը հայտարարել է, որ արդեն ուշ է, ինքը դիմել է դատարան:

Դատարանով չեն ժխտվել պատասխանողների նման պնդումները: Չնայած դրան, դատարանը գտել է, որ պատասխանողները խուսափում են պայմանագիր կնքելուց, վճռով պարտավորեցրել է կնքել պայմանագիր առանց նախատեսված 14.486 ԱՄՆ դոլարին համարժեք խրախուսման գումարի և նրանց ու **այլ անձանց** վտարել է 98.4 քմ. տարածքից՝ 21.850 դոլարի չափով փոխհատուցմամբ:

4. Դատարանի 29.01.04թ. վճռով /նախագահող դատավոր՝ Պ. Օհանյան/ Լալայանց փողոցի 5 հասցեի սեփականատերերին 217.8 քմ մակերեսով տնից և 571 քմ մակերեսով հողամասից վտարելու պահանջի մասին հայցը բավարարելիս, շրջանցվել է պատասխանողների հակընդդեմ հայցով ներկայացրած այն պնդումը, որ հայցվորը գնալին առաջարկ ներկայացրել է 09.01.04թ.՝ պայմանագրի կնքման ժամկետ սահմանելով 30.12.03թ.: Պատասխանողների հակընդդեմ հայցը մերժվել է, նրանք դիտվել են որպես պայմանագիր կնքելուց խուսափողներ և զրկվել են 50.028 ԱՄՆ դոլարի չափով խրախուսման գումարից:

5. Դատարանի 04.04.04թ. վճռով /նախագահող դատավոր՝ Վ. Լալայան/ պայմանագիր կնքելուց խուսափողներ են դիտվել և զրկվել են 13.600 դոլարի չափով խրախուսման գումարից ու տնից վտարվել են Աբովյան փողոցի 1/2 հասցեի տան սեփականատերերն այն դեպքում, որ հենց դատարանում հայցվորին առաջարկել են իրենց տրամադրել համապատասխան մակերեսով բնակարան Կենտրոն թաղային համայնքի վարչական տարածքում: Դատարանը հայցվորին չի պարտադրել բավարարելու պատասխանողի պահանջը՝ հիմնված ՀՀ կառավարության թիվ 950 որոշման վրա:

6. Դատարանի 13.04.04թ. վճիռը /նախագահող դատավոր՝ Ռ. Ներսիսյան/ վերաբերում է Աբովյան փողոցի 1/2 հասցեի սեփականատերերին և օգտագործողներին: Այստեղ հետաքրքիրն այն է, որ հայց է ներկայացվել օգտագործողներից չորսի հետ կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով՝ նրանց խրախուսման գումարից զրկելու և միայն աջակցության գումարով պայմանագիր կնքելուն հարկադրելու համար, քանի որ չեն ազատում տարածքը:

Պայմանագիր կնքած պատասխանողները պնդել են, որ չեն ազատում տարածքը, քանի որ պայմանագրով նախատեսված գումարի նախապես վճարման ենթակա 30 տոկոսը չվճարելով՝ հայցվորը խախտել է պայմանագիրը, որի պատճառով իրենք դուրս չեն գալիս: Դատարանը գտել է, որ պատասխանողների այդ պատճառաբանությունն անհիմն է, քանի որ **հայցվորի կողմից 30 տոկոսը վճարված չլինելու մասին որևէ ապացույց պատասխանողները չեն ներկայացրել**: Այն, որ պատասխանողն ինքը որևէ ապացույց չի ներկայացրել վճարած լինելու մասին, դատարանը չի կարևորել:

Ակնհայտ է, որ երբ հայցվորի կատարած գործողության մասին է խոսքը, **հայցվորից** էր պետք պահանջել այդ գործողությունները հաստատող, տվյալ դեպքում՝ վճարման, փաստաթղթերը: Պատասխանողն ինչ պետք է ներկայացներ, ասված չէ:

Վճռով անվավեր է ճանաչվել նախկին պայմանագիրը, պատասխանողները պարտավորեցվել են պայմանագիր կնքել 2710 դոլարին համարժեք դրամով, և հենց նման փոխհատուցմամբ 4 անձ վտարվել են բնակարանից:

7. Դատարանի 20.05.04թ. վճռով /նախագահող դատավոր՝ Հ. Հովհաննիսյան/ Պուշկինի նրբանցքի թիվ 10 հասցեի սեփականատերերի դեմ ներկայացված հայցը բավարարելիս չի հիմնավորվել, թե վերցվող գույքի գնահատման համար

փորձաքննությունն նշանակելու մասին միջնորդությունը ինչու է մերժման ենթակա: Պատասխանողներն այս վճռով զրկվել են 12.705 դոլար խրախուսում համարվող գումարից:

8. Դատարանի 20.07.04թ. վճռով /նախագահող դատավոր՝ Հ. Հովհաննիսյան/ չի ընդունվել Պուշկինի փողոցի 34 հասցեի թիվ 2 տան բնակիչների հակընդդեմ հայցն իրենց սեփականատեր ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ «Բնակարանների սեփականաշնորհման մասին» օրենքից իրենք չեն կարողացել օգտվել այն պատճառով, որ շենքը համարվել է վթարային, իսկ հետագայում պատճառաբանվել է, որ այն ներառված է օտարման գոտում: Հայտնել են նաև, որ նույն շենքում այլ անձինք այնուամենայնիվ կարողացել են սեփականաշնորհել իրենց բնակարանները:

Սա հենց այն դեպքն է, որ դատարանը պարտավոր էր ելնել օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքից: Գործի տվյալներից ակնհայտ է, որ պատասխանողները դարձել են խտրականության գոհեր, քանի որ վթարային ճանաչված բնակարանում նրանց սեփականատեր չճանաչելով, պետական մարմինը պարտավոր էր նրանց դուրս բերել վթարային շինությունից և հատկացնել այլ բնակարան, որն էլ նրանք իրավունք կունենային սեփականաշնորհելու: Բնակելի այդ շինության կարգավիճակը հետագայում փոխվել է, համարվել է բնակության համար պիտանի: Այս անգամ էլ չեն սեփականաշնորհել, քանի որ որպես օտարման գոտում գտնվող շինություն՝ դա անթույլատրելի են համարել:

Այս շինությունում գտնվող բնակարանների վարձակալները գտնվել են հանրապետության այլ քաղաքացիների հետ անհավասար պայմաններում՝ զրկվել են իրենց վարձակալած բնակտարածությունը որպես սեփականություն պետությունից ստանալու իրավունքից:

Հենց միայն այդ հիմքերով դատարանը պարտավոր էր ճանաչել նրանց որպես սեփականատերեր, ինչը չի արվել: Դրան հակառակ, նրանք 7 անձով դիտվել են որպես պայմանագիր կնքելուց խուսափողներ և զրկվել են նաև յուրաքանչյուրը 1500 դոլարի չափով խրախուսման գումարից:

9. Առանձնահատուկ են 1-ին ատյանի դատարանի 03.04.05թ. քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 14.04.05թ. վճիռները և վճռաբեկ դատարանի 27.05.05թ. որոշումը Բուզանդի փողոցի թիվ 11 հասցեի տան և հողամասի վերաբերյալ:

1898թ. գոյություն ունեցող այս տունը չունի որևէ կարգավիճակ՝ կադաստրում հաշվառված չէ որպես ինքնակամ կառույց, նախկին շրջգործկոմի բալանսում հաշվառված չի եղել և որևէ մեկի անվամբ գրանցված չի եղել որպես սեփականություն: Մինչդեռ Պապյանները, որոնք այն զբաղեցնում են ավելի քան 78 տարի, որպես սեփականատերեր գույքահարկ, ապահովագրական գումարներ են մուծել, որպես սեփականատերեր նաև վերակառուցումներ կատարելու թույլտվություններ են ստացել:

1990 թվականից հետո, երբ Պապյանները փորձել են օրինականացնել շինությունը և տարածքը՝ իրենց սեփականատիրական իրավունքը գրանցելու միջոցով, բախվել են և օրենսդրական, և բյուրոկրատական անհաղթահարելի արգելքների: Նրանց սեփականության իրավունքը չի ճանաչվել ոչ տիրապետման վաղեմության ուժով, ոչ որպես տիրագուրկ գույք, ոչ որպես ինքնակամ կառույց: Այնուհետև տունը հայտնվել է օտարման գոտու տարածքում, և տվյալ շինության ու տարածքի 78 տարվա բնակիչը դիտվել է միայն որպես օգտագործող, այնուհետև ընտանիքով վտարվել տնից՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամին 2000 դոլար օժանդակություն տրամադրելու պայմանով:

Արդյոք դատաքննության նպատակը չէր՝ լուծել հենց նման խնդիրները, ելնել փաստական իրավիճակից, ճանաչել և վերականգնել մարդու, քաղաքացու այն իրավունքը, որը նրան մերժվել էր ձևական հիմքերով:

10. Կառուցապատման ծրագրերի իրականացմանը վերաբերող ՀՀ կառավարության թվարկված որոշումներով տարբերակված են իրացնողի և կառուցապատողի իրավունքները: Որպես իրացնող, համաձայն այդ որոշումների, լիազորված է Երևանի

քաղաքապետը հանձինս ԾԻԳ ոչ առևտրային կազմակերպության, որն իրացումը պետք է կատարի կառուցապատողի հաշվին: Կառուցապատողը պետք է իրացնողից ստանա երրորդ անձանց իրավունքներից ազատված տարածք: Մինչդեռ իրացնողը, հանձինս Երևանի քաղաքապետի, կնքելով կառուցապատողների հետ նախնական պայմանագիր, նրանց զիջել է նաև տարածքը երրորդ անձանց իրավունքներից ազատելու իրավունքը՝ նախնական երկկողմ պայմանագրով պարտականություններ ստեղծելով պայմանագրի կողմ չհանդիսացող երրորդ անձանց համար:

Կառուցապատողը, որի միջոցների հաշվին պետք է իրականացվի տարածքի իրացումը, դարձել է սեփականատերերի և օգտագործողների իրավունքները ցանկացած ճանապարհով սահմանափակելուն շահագրգիռ անձ:

Առկա է Ամիրյան փողոցի 4/18 հասցեի բնակիչների դեմ ներկայացված հայցը՝ կառուցապատողի հետ նման նախնական պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով:

Որքան էլ տարօրինակ է, դատարանը ոչ միայն անվավեր չի ճանաչել այդ նախնական պայմանագիրը, այլև սեփականատիրոջը վտարելու պահանջով հայց ներկայացրած կառուցապատողին չի դիտել որպես ոչ պատշաճ հայցվոր:

Այստեղ թվարկված, ինչպես նաև մի քանի տասնյակի հասնող չթվարկված և նման հայցերով կայացված բոլոր այլ վճիռները նույնաբովանդակ են և դրանց նկարագրական ու պատճառաբանական մասերը վերաբերում են ոչ թե փաստերի, իրողությունների շարադրանքին, դրանց վերլուծությանն ու գնահատականին, այլ կառավարության որոշումների ու քաղաքացիական օրենսգրքի 218-րդ, 461-րդ հոդվածների վկայակոչմանը, մոռանալով, որ քաղաքացիական օրենսգրքում կա նաև 462-րդ հոդված, որի իմաստից հետևում է, որ դատարանը պետք է քննարկի նախապայմանագրային վեճին վերաբերող հանգամանքները և որոշի պայմանագրի պայմանները ոչ թե միայն մեկ կողմի թելադրանքով, այլ օբյեկտիվ և անկողմնակալ գնահատականով՝ կողմերի օրինական շահերին հավասար պաշտպանություն տրամադրելու սկզբունքով:

Ավանդը հաստատելու համար բավարար է հենց այն փաստը, որ բազմաբնակարան շենքերի բնակարանները գնահատվել են առանձին-առանձին և միայն սեփականության վկայականով ցույց տրված չափերով: Երբեք անդրադարձ չի կատարվել ընդհանուր օգտագործման տարածքներից բնակչի բաժնեմաս ունենալու իրավունքին: Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքը կառուցապատողը, որը հաճախակի հանդես է եկել նաև որպես իրացնող, վերցրել է անհատույց:

Համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի. «Բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են շենքը կրող կառուցվածքները, շենքի միջհարկային ծածկերը /առաստաղները, հատակները/, նկուղները, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը, ինչպես նաև մեկից ավել շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակները, աստիճանները, վերելակները, վերելակային և այլ հորերը, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումներն ու տարածքները, որոնք օրենքով նախատեսված կարգով չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն:

Բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով կարող է պատկանել նաև տվյալ կամ այլ շենքում բնակարան կամ ոչ բնակելի տարածք, ինչպես նաև հողամաս, շարժական, անշարժ կամ ցանկացած այլ գույք»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ գլխի ընդհանուր սեփականությանը վերաբերող նորմերը «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով

կատարված վերապահումներով կիրառելի են նաև բազմաբնակարան շենքի շինությունների հարկադիր օտարման դեպքերում:

Բազմաբնակարան շենքի շինության սեփականատերերի տվյալ շենքում ունեցած ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ոչ միայն անտեսվում է, այլև իրացնողի կողմից արվում է ամեն ինչ՝ գույքը մասնատելու և գնահատելու որպես առանձին մեկուսացված միավոր ընդհանուր օգտագործման տարածքներն արհեստականորեն մեծացնելու և անհատույց վերցնելու նպատակով:

Այսօրվա դրությամբ դատարանում առկա է քաղաքացիական գործ, որով վիճարկվում է շինության միևնույն մուտքում գտնվող և նույն ընտանիքին պատկանող, սակայն ընտանիքի տարբեր անդամների անունով որպես սեփականություն հաշվառված բնակարանները որպես մեկ ամբողջական շինություն գնահատելու հարցը: Առկա է դատարանի վճիռ՝ բնակարանները միավորելու մասին: Դատարանի այդ վճիռը կադաստրի կողմից չի կատարվում այն պատճառաբանությամբ, որ «Երևանի Հյուսիսային պողոտա և Երևան քաղաքի օտարման այլ գոտիներ» **ԾԻԳ-ի կառավարման խորհուրդը** (նախագահ՝ Ե. Չախարյան) 30.07.04թ., անտեսելով դատարանի վճռի պահանջը, կայացրել է դատարանի վճռին հակառակ որոշում. «Հաշվի առնելով որպես առանձին միավորներ գրանցված 3 բնակարանների միավորումը մեկի, տարբեր քաղաքացիների անվամբ հավասար բաժիններով, առաջարկել ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին մերժել պետական գրանցում կատարելը»:

Որոշմամբ այլ հիմնավորում չի բերված: Չնայած դրան, կադաստրի համար տվյալ խորհրդի որոշումը գերակա է համարվել դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի նկատմամբ: Այդ երեք բնակարանը հրաժարվում են միավորելուց, քանի որ իրացնողն ստիպված պետք է լինի տվյալ մուտքի բոլոր ընդհանուր տարածքները ներառել փոխհատուցման ենթակա տարածքների մեջ, ինչը ոչ միայն թույլատրելի, այլև պարտադիր է:

Ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի անտեսմամբ է, որ կառուցապատողը սկսում է բազմաբնակարան շինության քանդումը, երբ դեռևս ոչ բոլոր բնակիչներն են վտարված: Շինությունում, բնակիչների առկայության պայմաններում, սկսվում են քանդման աշխատանքները՝ քանդվում են ընդհանուր սպասարկման տարածքները, կրող կառույցները, շինության ծածկը, անջատվում են ջրի և էլեկտրականության մատակարարման համակարգերը, և շինությունը դառնում է բնակության համար ոչ պիտանի՝ բնակօգտագործման իրավունքը չկորցրած ընտանիքների առկայության պայմաններում:

Այս և նման այլ գործընթացներին է, որ սեփականատերերին գույքի օտարման վերաբերյալ պայմանագիր կնքելուն պարտավորեցնելուց առաջ պետք է անդրադառնար դատարանը: Նման հարցերին դատարանները երբևէ չեն անդրադարձել, փորձ չի արվել կանխելու մարդու իրավունքների ոտնահարման շարունակվող դեպքերը: Դատարանները չեն պաշտպանել և պետական մարմնին չեն պարտավորեցրել վերականգնելու մարդու խախտված իրավունքը՝ դատական ակտով խրախուսելով իրավունքի խախտումը: Իրացնողների նման գործողությունների դեմ բողոքներ են ներկայացվել նաև դատախազական և ոստիկանության մարմիններին, սակայն այդ գործողությունները պատշաճ գնահատականի չեն արժանացել:

8. Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արված առաջարկները

Մարդու իրավունքների պաշտպանը 10.09.04թ. թիվ 3-237 գրությամբ դիմել է ՀՀ վարչապետին՝ նշելով «Հյուսիսային պողոտա և կասկադ» ծրագրերի իրականացման ընթացքում թույլ տրվող իրավունքների խախտումները, և նպատակ ունենալով վերականգնել այդ իրավունքներն ու հետագայում կանխել նման դեպքերը, առաջարկել է կառավարության նիստում քննարկել քաղաքացիների սեփականության օտարման պայմանագրերը վերանայելու և համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու հարցը:

Հարցի քննարկումը հանձնարարվել է Երևանի քաղաքապետին, որն իր 26.10.04թ. թիվ 2-0212 գրությամբ հայտնել է, որ գործընթացն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ, 219-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

Ավելացնենք նաև, որ քաղաքապետը՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավարին հասցեագրած 14.06.05թ. թիվ 01/38-ն-409 գրությամբ, ի պատասխան Բուզանդի փողովի թիվ 25 հասցեի բնակիչների բողոքի, հայտնում է, որ քաղաքացիների գույքի օտարումը Երևան քաղաքում իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-221, հողային օրենսգրքի 104-108 հոդվածներին համապատասխան և ՀՀ կառավարության 950, 1151-ն որոշումներով սահմանված կարգով, որ այդ **իրավական ակտերի նախագծերն** ու դրանց փոփոխություններն ու լրացումները, մինչև կառավարության կողմից ընդունվելը, սահմանված կարգով **ՀՀ արդարադատության նախարարության կողմից ենթարկվել են պետական իրավական փորձաքննության:**

Ըստ ՀՀ արդարադատության նախարարի՝ կառավարության հիշյալ որոշումները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածին, ՀՀ կառավարությունն իրավասու է նման որոշումներ ընդունել՝ համաձայն ՀՀ քաղաքացիական և հողային օրենսգրքերի, Սահմանադրական դատարանի 1998 թվականի որոշումը վերաբերել է միայն «Անշարժ գույքի մասին» օրենքին, որն այլևս չի գործում («Գոլոս Արմենիի» թերթ, 21.07.05թ.):

Պաշտպանն իր 07.01.05թ. 2-001 գրությամբ դիմել է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին որպես դատարանների նախագահների խորհրդի նախագահի՝ քաղաքացիների գույքը պետության կարիքների համար վերցնելու հետ կապված վեճերով դատական պրակտիկան ամփոփելու, դրանց քննության ընթացքում կառավարության որոշումների սահմանադրականության հարցին անդրադառնալու և դատարաններին արդար դատաքննության ապահովմանն ուղղված պարզաբանումներ տալու առաջարկով:

Պաշտպանի այդ առաջարկը վճռաբեկ դատարանի նախկին նախագահ Հ. Դանիելյանի կողմից թողնվել է անպատասխան, դրա փոխարեն Պաշտպանի տարեկան զեկույցի վերաբերյալ դատարանների նախագահների խորհրդի անունից 11.05.05թ. ստացվել են **նկատառումներ**, որոնցում նշվել է, որ Պաշտպանի տարեկան զեկույցում ընդհանրացվել են դատական պրակտիկայում տեղ գտած **եզակի թերացումները** կամ արվել են **մերկապարանոց** հայտարարություններ դատական համակարգի վերաբերյալ՝ «տուրք տալով առանձին քաղաքացիների և նրանց պաշտպանների չբավարարված հավակնություններին»:

22.04.05թ. իր թիվ 2-0233 գրությամբ Պաշտպանը դիմել է ՀՀ նախագահին՝ քաղաքացիների գույքի օտարման վերաբերյալ ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշումների ՀՀ Սահմանադրությանը համապատասխան լինելու հարցը որոշելու համար Սահմանադրական դատարան դիմելու առաջարկով, որը մերժվել է՝ «պաշտպանն իրավասու չէ նման միջնորդությամբ դիմելու ՀՀ նախագահին» պատճառաբանությամբ: Նախագահի աշխատակազմի պետաիրավական վարչության 10.05.05թ. թիվ ՊՎ-6 գրության մեջ մերժվել են նաև Պաշտպանի կողմից բերված հիմնավորումները այն փաստարկներով, որ կառավարության հիշյալ որոշումները կայացվել են օրենքի հիման վրա և համապատասխանում են սահմանադրությանը:

9. Հետևություններ

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկմամբ ձեռք բերված տվյալները վկայում են, որ Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման գործընթացում խախտվել և խախտվում են մարդու՝ սահմանադրությամբ ամրագրված մի շարք իրավունքներ:

1. Քաղաքացիների սեփականության հարկադիր օտարումը կատարվում է առանց սեփականության հարկադիր օտարման բացառիկությունը և պետական կարիքի

առկայությունը հիմնավորող օրենքի առկայության, ինչը, համաձայն ՀՀ Սահմանադրական դատարանի 27.02.98թ. որոշման, հակասում է ՀՀ **Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասով** ամրագրված սկզբունքներին:

2. Քաղաքացիների սեփականության օտարման գործընթացը կարգավորող սույն զեկույցի 5-րդ բաժնում թվարկված կառավարության որոշումները, ելնելով Սահմանադրական դատարանի 27.02.98թ. որոշմամբ սահմանված սկզբունքներից, հակասում են ՀՀ Սահմանադրության 8-րդ, 28-րդ և 78-րդ հոդվածներին:

3. ՀՀ կառավարության հիշատակված որոշումներով սեփականատերերը զրկված են իրենց սեփականությունն ազատ տնօրինելու իրավունքից **/Սահմանադրության 8-րդ, 28-րդ հոդվածներ/**, նրանք և օգտագործողները օտարվող բնակարանների դիմաց չեն ստանում համարժեք հատուցում:

4. Տրվող բոլոր տեսակի հատուցումները ծանրաբեռնվում են օրենքով չնախատեսված հարկային պարտավորություններով:

5. Ուսումնասիրված դեպքերում խախտվում է բնակարան ունենալու անհատի և ընտանիքի իրավունքը՝ պետությունը ոչ միայն չի օժանդակում ընտանիքի բնակարանային պայմանների բարելավման իրավունքի իրականացմանը **/Սահմանադրության 31-րդ հոդված/**, այլև զրկում է բնակարանից:

6. Փոխհատուցումներ տրամադրելիս իրականացվում է խտրական մոտեցում՝ քաղաքացիների մի մասը զրկվում է այլ օրենքներով սահմանված արտոնություններից օգտվելու հնարավորություններից:

7. Օրենքի առջև բոլորի հավասարության իրավունքի խախտմամբ տեղի է ունենում սեփականության անարդար վերաբաշխում՝ առանձին անհատներ անհամեմատ նվազ վճարումներով դառնում են Երևան քաղաքի կենտրոնական հատվածի սեփականատերեր, առավել անապահով խավը դուրս է մղվում դեպի քաղաքի ծայրամասեր:

8. Խախտվում է դաժան կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու մարդու իրավունքը **/Սահմանադրության 19-րդ հոդված/**՝ նրա բնակարանը բնակության համար ոչ պիտանի դարձնելու, կենցաղային հարմարություններից նրան զրկելու և այնուհետև նրան իր բնակարանից բռնի վտարելու ճանապարհով:

9. Ուսումնասիրված գործերով դատարանները չեն պաշտպանում և չեն վերականգնում քաղաքացիների խախտված իրավունքները: Խախտվում է արդար դատաքննություն ապահովելու միջոցով դատական պաշտպանություն ստանալու քաղաքացիների իրավունքը **/Սահմանադրության 38-րդ, 39-րդ հոդվածներ/**:

Այս խնդիրները կրկին բարձրացվում են՝ ակնկալելով, որ.

ա/ Կվերանայվեն պետական կարիքների համար Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման հետ կապված քաղաքացիների սեփականության հարկադիր օտարման գործընթացին վերաբերող կառավարության որոշումները՝ օրենսդրական դաշտը կներդաշնակեցվի ՀՀ Սահմանադրությանը և միջազգային նորմերին: Կձեռնարկվեն բոլոր հնարավոր միջոցառումները դիմումատուների խախտված իրավունքները վերականգնելու համար:

բ/ Դատարանների նախագահների խորհրդի կողմից կամփոփվի քաղաքացիների գույքի հարկադիր օտարման վերաբերյալ քաղաքացիական գործերով դատական

պրակտիկան՝ բնագավառը կարգավորող իրավական ակտերի կիրառման վերաբերյալ դատարաններին համապատասխան պարզաբանում տալու նպատակով:

Սույն զեկույցը մի փորձ է ՀՀ իշխանության բոլոր օղակների ուշադրությունը ևս մեկ անգամ հրավիրելու մարդու իրավունքների ճանաչմանը, պահպանմանը, խրախուսմանը, պաշտպանությանը և խախտված իրավունքների վերականգնմանը, ինչը կրերի մեր երկրում օրենքի գերակայությանը, պետության բարգավաճմանն ու հզորացմանը: